ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXIV

[illegible]

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ПА26

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST

XXIV

This publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc. - USA

YEREVAN – 2005

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА

XXIV

Спонсор – "Фонд Армен и Берсабе Джереджян", США

ЕРЕВАН – 2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՄ 26

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXIV

Մեկենասությամբ
Արմէն և Բերսաբէ Ճերեճեան Հիմնադրամի - ԱՄՆ

ԵՐԵՎԱՆ – 2005

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 950
ԳՄԴ 63.3(5)
Մ 663

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Հովհաննիսյան Ն.Հ. *(նախագահ)*,
Բայբուրդյան Վ.Ա., Կարամանուկյան Շ.Լ., Հարությունյան Ն.Վ.,
Չոբանյան Պ.Ա., Սաֆրաստյան Ռ.Ա.

Տեխնիկական համակարգող՝ Ն. Վ. Կարախանյան

Մ 663 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXIV).-
Եր., Զանգակ-97, 2005, 536 էջ:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի XXIV հատորը բաղկացած է չորս բաժիններից, որոնք ընդգրկում են Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նոր և նորագույն, հին և միջին դարերի պատմության, ինչպես նաև մշակույթի և բանասիրության հարցեր: Զգալի տեղ է հատկացված տարածաշրջանի ներքաղաքական զարգացումների, միջազգային և տարածաշրջանային, ցեղասպանագիտության և հարակից հիմնախնդիրների լուսաբանությանը:

Նախատեսվում է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբանների, մշակույթի հարցերով զբաղվողների, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

Մ $\frac{0503000000}{0003(01)-2005}$ 2005 թ. ԳՄԴ 63.3(5)

ISBN 99941-1-088-8

© Հեղինակներ, 2005 թ.

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ԱՎԴԱԼՅԱՆ

ՂՊՏԻԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1911Թ. ԱՍՅՈՒՏԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

1882թ. նվաճելով Եգիպտոսը՝ բրիտանացիները հիմնովին վերակազմավորեցին երկրի կառավարման համակարգը: Բրիտանացիները պետական ծառայության ասպարեզում սկսեցին պաշտոններ վստահել մահմեդականներին, հայերին ու սիրիացիներին, որոնք, ըստ նրանց, առավել հարմարված էին ժամանակի վարչարարության պահանջներին: Արդյունքում, շատ ղպտիներ[1] ազատվեցին իրենց զբաղեցրած պաշտոններից: Խնդիրն այն է, որ դեռևս Եգիպտոսի մամլուք կառավարիչների օրոք ղպտիներին ավելի մեծ տեղ էին տալիս՝ բարձր պետական պաշտոնների նշանակման հարցում: Նրանց էին հիմնականում վստահում երկրի վարչական կառավարումն ու հարկահավաքությունը[2]: Ավելի ուշ Մուհամմեդ Ալիի կառավարման տարիներին ղպտիները, ինչպես նաև հայերը, հույները և սիրիացիները, հասան ավելի բարձր դիրքերի և մեծ դերակատարում ունեին երկրի կառավարման համակարգում[3]:

Բրիտանացիների վարած քաղաքականությունը դժվար ընտրության առաջ կանգնեցրեց ղպտիներին: Մի կողմից նրանց ոգևորում էր այն փաստը, որ երկար դարերի մահմեդական տիրապետությանը եկել էր փոխարինելու հավատակիցների իշխանությունը, մյուս կողմից բրիտանացիներն առանձնակի աշխուժություն չէին ցուցաբերում ղպտիների վիճակի բարելավման հարցին: Երբ ակնհայտ դարձավ, որ հասարակական ծառայության ասպարեզում մահմեդականներին և մյուս փոքրամասնություններին տրվող նախապատվությունը պետական քաղաքականություն էր, ղպտիները, հաղթահարելով լուրջ դժվարություններ, սկսեցին քայլեր ձեռնարկել՝ իրենց նախկին դիրքերը վերականգնելու ուղղությամբ: Առանձին դեպքերում ղպտիներին հավաստիացնում էին, որ նրանց հետ կապված հարցերը կուսումնասիրվի կառավարության կողմից, իսկ որոշ դեպքերում նրանց տեղեկացնում էին, որ որևէ հարց այդ կապակցությամբ քննարկման ենթակա չէ[4]: Ղպտիները սկսեցին մեղադրել բրիտանացիներին իրենց նկատմամբ խտրականություն բանեցնելու մեջ:

Համայնքային շահերը պաշտպանելու համար ղպտի մի խումբ մեծահարուստներ, որոնք նաև Մաջլիս ալ-Միլլիի՞ անդամներ էին, 1908թ. հիմնեցին «Ղպտիական բարենորոգումների» կազմակերպությունը, ինչը հետագայում փորձ արվեց ձևափոխել «Ղպտիական ազատական կուսակցության»: Սակայն այս փաստը հանդիպեց թե՛ բրիտանացիների, և թե՛ մահմեդականների բուռն հակազդեցությանը[6]: Ղպտիական համայնքի մի շարք ներկայացուցիչներ, որոնց մեջ էին նաև հարուստ հողատերեր Վիսա Վասիֆն ու Մարկուս Հաննսն, միացան 1907թ. Մուստաֆա Քամիլի (1874-1908) հիմնած Հիզբ ալ-վատանիին (Ազգային կուսակցություն): Կուսակցությունը մեծ ժողովրդականություն սկսեց վայելել, քանի որ պահանջում էր Եգիպտոսից բրիտանական զորքերի անմիջապես ու առանց նախապայմանների դուրսբերում: Քամիլը մեծ կարևորություն էր տալիս մահմեդականների և ղպտիների միասնությանը. «Ղպտիները և մահմեդականները մի ժողովուրդ են՝ իրար անբաժանելիորեն կապված ազգությամբ, ավանդույթներով, բնավորությամբ և հոգեկերտվածքով: Մենք՝ եգիպտացիներս, կրոնի մասին խոսում ենք միայն եկեղեցում և մզկիթում»[7]: Մուստաֆա Քամիլն ու Վիսա Վասիֆը փորձում էին ավելի մեծ թվով ղպտիներ ներգրավվել կուսակցության մեջ և կարևոր դերակատարում տալ նրանց: Սակայն կուսակցության հիմնումից մի քանի ամիս անց՝ 1908թ., Քամիլի մահից հետո, ղպտիների և մահմեդականների միջև լուրջ հակասություններ առաջացան, քանի որ կուսակցության ղեկավարությունն անցավ Մուհամմեդ Ֆարիդի և շեյխ Աբդ ալ-Ազիզ ալ-Ջավիշի ձեռքը, որոնք ծայրահեղ իսլամական քարոզչություն էին վարում[8]: Որպես հակազդեցություն ղպտիական ալ-Վատան թերթում հրատարակված այն հոդվածի, որում քննադատվում էր Եգիպտոսի իսլամական նվաճումը, ալ-Լիվայի[9] գլխավոր խմբագիրը՝շեյխ Աբդ ալ-Ազիզ ալ-Ջավիշը, ղպտիների դեմ վիրավորական մի հոդված գրեց, որը վերնագրված էր «Իսլամն օտար է իր երկրում և անհրաժեշտ է երևան հանել ղպտիների պահանջներն այդ գործում»[10]: Ղպտիների և մահմեդականների հարաբերություններում լարվածությունը մեծանում էր: Դա հատկապես ցայտուն էր երևում գյուղական շրջաններում, որտեղ ղպտիները հաճախ հարձակումների թիրախ էին դառնում: Մահմեդական և ղպտիական լրատվամիջոցներում սովորական երևույթ էր վոխադարձ մեղադրանքները, վիրավորանքները, ինչպես նաև կրոնական անհանդուրժողականության դրսևորումները[11]: Ղպտիական համայնքի որոշակի հատվածի աջակցությունն էր վայելում նաև Հիզբ ալ-ումման (Ժողովրդական կուսակցություն), որի գործունեությունն ու գաղափարախոսությունը կապված էր նրա առաջնորդներից մեկի՝ Ահմադ Լուտֆի ալ-Սայիդի անվան հետ: Ալ-Սայիդի կարծիքով՝ երկիրը բրիտանացիների գերիշխանությունից ազատագրելու համար անհրաժեշտ են բարենորոգումներ անցկացնել, քաղաքական անկախ կառույց-

ներ ստեղծել, և միայն դրանից հետո, հնարավոր է. բանակցություններ սկսել բրիտանացիների հետ: Այս կուսակցությունը չէր հետևում իսլամական, պանօսմանական ուղղություններին, այլ հիմնվում էր աշխարհիկ բարեփոխումների վրա և թերևս այդ պատճառով էլ ստանում էր երկրի քրիստոնյա բնակչության որոշակի աջակցությունը[12]:

1910թ. սկզբներին մի քանի ղպտի մեծահարուստներ, որոնց մեջ էին Ջորջա Վիսան, Բիշարա Հաննան, Թաուֆիկ Դուսը, Ախնուխ Ֆանուսը, ինչպես նաև Ասյուտի նշանավոր Խայատների և Վիսաների ընտանիքները, առաջարկեցին ղպտիական համաժողով գումարել՝ քննարկելու համար ղպտիների նկատմամբ խտրական քաղաքականությունը, որ իրականացնում էր բրիտանական իշխանությունը: Ղպտիները ցանկանում էին հավասար իրավունքներ ունենալ եգիպտացի մահմեդականների հետ, այնպես որ դավանանքը չխոչընդոտեր հասարակական ծառայությունների ասպարեզում առաջխաղացման համար[13]:

Ղպտիական թերթերում տեղ գտան նյութեր այն մասին, որ համաժողովի նպատակը ղպտիների հետ կապված հիմնահարցերի քննարկումն էր և դրանք կառավարությանը ներկայացնելը: Նշվում էր, որ համաժողովի նպատակը բացառապես խաղաղ էր, որը նկատի չէր առնում ղպտիների ընդվզում՝ ո՛չ մահմեդականների և ո՛չ էլ կառավարության դեմ[14]:

Ինչ վերաբերում էր բրիտանացիներին, ապա նրանք դեմ էին համագումարի անցկացմանը: Նրանք հայտարարում էին, որ իրենք մեծ դեր են ունեցել եգիպտացի ժողովրդի տարբեր տարրերի միջև համաձայնության եզրեր գտնելու հարցում, և որ միջհամայնքային հարաբերություններում ստատուս քվոյի փոփոխությունը կարող էր բերել անկանխատեսելի հետևանքների[15]: Այստեղ նշենք, որ XX-րդ դարի սկզբներին ղպտիները, տարբեր գնահատումներով կազմելով Եգիպտոսի բնակչության 7-10 տոկոսը, զբաղեցնում էին Ներքին գործերի նախարարության պաշտոնների 62,3 տոկոսը, որից հարկահավաքների 93-98 տոկոսը, փոստի և երկաթգծի նախարարության՝ 48,08 տոկոսը, ֆինանսների նախարարության՝ 44,24 տոկոսը, արդարադատության նախարարության՝ 14,85 տոկոսը, կրթության և մշակույթի նախարարության՝ 6,14 տոկոսը, ռազմական նախարարության՝ 30,55 տոկոսը, հասարակական ծառայություններում՝ 29,36 տոկոսը: Այսպիսով ղպտիները զբաղեցնում էին կառավարության պաշտոնների 45,31 տոկոսը[16]: Վարչական պաշտոններում իրենց մեծ թվով ներկայացված լինելը ղպտիները բացատրում էին այն փաստով, որ իրենք կազմում էին կրթված եգիպտացիների 30 տոկոսը, ինչպես նաև վերահսկում էին տնտեսության 19 տոկոսը[17]: Միևնույն ժամանակ պետք է նշել նաև, որ 1908թ.-ին Եգիպտոսում վարչապետ նշանակվեց ղպտի, հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Բուտրոս Ղալին: Մինչև վարչապետի պաշտոնը ստանձնելը նա ակ-

տիվորեն ներգրավված էր երկրի քաղաքական կյանքում: Սակայն Ղալիի վարչապետի պաշտոնում նշանակվելը բերեց միջհամայնքային և միջկրոնական նոր լարվածության, ինչն ավելի սրվեց վարչապետի սպանությունից հետո[18]: Բուտրոս Ղալին սպանվեց 1910թ. փետրվարի 21-ին երիտասարդ ազգայնական, Ազգային կուսակցության անդամ Իբրահիմ ալ-Վարդանիի ձեռքով, որը դատավարության ընթացքում հայտարարեց, որ չէր կարող հանդուրժել քրիստոնյայի կողմից նման բարձր պաշտոն զբաղեցնելը[19]: Ազգայնականները Ղալիին մեղադրում էին Սուեզի ջրանցքի կոնցեսիայի պայմանագրի երկարացման, Դինշուվայի բնակիչներին մահվան դատապարտող տրիբունալը[20] ղեկավարելու և երկրում գրաքննությունը վերականգնելու մեջ: Իրենց հերթին ղպտիները Ազգային կուսակցությանը մեղադրում էին մոլեռանդության մեջ: Բուտրոս Ղալիի սպանությունից հետո անորոշ ժամանակով հետաձգվեց համաժողովի անցկացումը, քանի որ և՛ Բրիտանիայի արտգործնախարարը, և՛ խեդիվ Աբաս Հիլմի II-ը դեմ էին համագումարի անցկացման գաղափարին[21]:

1911թ. հունվարի 26-ին Reuter's գործակալության միջոցով հաղորդագրություն տարածվեց, որում ծաղրանքի էին ենթարկված ղպտիական պահանջները: Հաղորդագրության մեջ նշվում էր, որ Մեծ Բրիտանիայի Գերագույն Կոմիսար Սըր Էլդոն Գորսթն այցելել է այն գավառները, որտեղ հիմնականում բնակվում էին ղպտիները: Գորսթը, ուսումնասիրելով ղպտիների դժգոհությունների հետ կապված հարցերը, բացահայտել էր, որ նրանք չունեն դժգոհության որևէ լուրջ առիթ, իսկ նրանց բարձրացրած հարցերը գավառական խորհուրդների կողմից պատշաճ կերպով քննարկվել էին[22]: Այս հաղորդագրությունը նոր լարվածության պատճառ դարձավ: 1911թ. փետրվարին Ղալիի մահվան տարելիցի նշումից հետո ղպտիները մարտի 6-8-ը համաժողովի անցկացման հրավեր տարածեցին, սակայն Գորսթը չթույլատրեց համագումարի անցկացումը: Սաադ Զաղլուլը[23] Գորսթի դիրքորոշման մասին իր հուշերում գրել է. «Իմացանք, որ Գորսթը շատ է բարկացել ղպտիների շարժման դեմ, իսկ Սաջիդն էլ իր հերթին ավելի է բորբոքում Գորսթին: Նա (Գորսթը-Ա.Ա.) իսկապես ջանք չի խնայում արգելելու Ասյուտի համաժողովը և նույնիսկ սպառնում է ուժով խոչընդոտել դրա կայացմանը: Սակայն իմացանք, որ արտգործնախարարությունից (Մեծ Բրիտանիայի-Ա.Ա) հրահանգներ են եկել, որոնք կոչ էին անում հանգիստ թողնել ղպտիներին և նրանց գործերը»[24]:

Բուտրոս Ղալիին փոխարինած Մուհամմեդ Սայիդ փաշան նույնպես ցանկանում էր արգելել Ասյուտի համաժողովը՝ պատճառաբանելով, որ այն խանգարում է անվտանգության ապահովմանը և կարող է գրգռել մահմեդականների զգացմունքները[25]:

1911թ. մարտի 2-ին եգիպտական կառավարությունը հայտարարություն տարածեց, որում ասվում էր, որ համաժողովը կարող է նոր խռովություն բարձրացնել ժողովրդի շրջանում և առաջարկեց, որ համաժողովը գումարվի Կահիրեում և ոչ թե Ասյուտում, որտեղ բնակչության գերակշիռ մեծամասնությունը ղպտիներ էին: Իսկ հաջորդ օրը Եգիպտոսի Ներքին գործերի նախարարությունը հրապարակեց կառավարության պաշտոնական հայտարարությունը՝ հետևյալ բովանդակությամբ. «Պատրիարքը (ղպտիների) ղպտի եպիսկոպոսներին և գլխավոր հոգևորականներին հասցեագրված մի շրջաբերական լույս ընծայեց՝ հրամայելով նրանց, որ տեղեկացնեն իրենց միաբանություններին, որպեսզի ձեռնպահ մնան համաժողովին մասնակցելուց, ինչը կարող է նոր խռովություններ առաջացնել Եգիպտոսում»[26]:

1911թ. իր զեկույցում Էլդոն Գորսթը, խստորեն քննադատելով ղպտիներին և Ասյուտի համաժողովը, հիշատակում է, որ համաժողովը ներկայացուցչական չէր և նզովված էր պատրիարքի կողմից: Գորսթը նշում էր, որ համաժողովը կազմակերպվում է մի քանի հարուստ հողատերերի կողմից, որոնք էական թիվ չեն կազմում ղպտիների շրջանում: Նա հատուկ նշանակություն էր տալիս ղպտիների մեծ տնտեսական հնարավորություններին, ինչն ավելի զգալի էր, քան իրենց համերկրացի մահմեդականներինը: Ըստ Գորսթի սա էր պատճառը, որ հարուստ հողատերերը շահագործում էին հասարակ մարդկանց և հատկապես չքավոր գյուղացիներին, որոնք տառապում էին ղպտի վաշխառուների ձեռքերում: Գորսթը մեղադրում էր ղպտիներին այն հարցում, որ վերջիններս բրիտանացիների կողմից ղպտիների և մահմեդականների հանդեպ անաչառ վերաբերմունքը մեկնաբանում էին ղպտիների տեսանկյունից կործանարար: Մյուս կողմից ղպտիները կարծում էին, որ համաժողովի դեմ հանդես գալու հարցում պատրիարքի վրա ճնշում գործադրելու կառավարության փորձերը ձախողվել են[27]:

Այս հարցում ինչ-որ չափով հստակություն մտցնելու համար հարկ ենք համարում մեջբերել պատրիարքի հայտարարությունն ամբողջությամբ. «Մեր բոլոր սիրելի զավակներին, Եգիպտոսի ուղղափառ ղպտիներին, որոնց աստված պահպանում է: Մենք լսել ենք, որ մեր սիրելի զավակները մտադիր են հանդիպում անցկացնել Ասյուտում՝ ղպտի ժողովրդի բոլոր պատվիրակների մասնակցությամբ՝ պետական գործերի շուրջ խորհրդակցություն անցկացնելու նպատակով, և լսել ենք, որ դրան մասնակցելու հրավերներն արդեն ուղարկվել են: Շատ հաճելի է տեսնել, որ մեր հարգարժան զավակները հավաքվել են ընդհանուր նպատակի շուրջ: Այնուամենայնիվ, նման ժողովը, որը նախատեսվում է անցկացնել ղպտի ժողովրդի մի մասի կողմից այնպիսի քաղաքում, ինչպիսին Ասյուտն է, մեզ անհանգստացնում է, և քանի որ այդ մասերի ժողովուրդը ոչինչ չգիտի ժողովնիրի մասին և ավանդույթ չունի դրանք անցկացնելու

գործում, ուստի այն կարող է առիթ տալ անհեռատես մարդկանց գործել անցանկալի ձևով: Ուստի մեր հայրական բարությամբ և ձեր հանդեպ ունեցած մեր մեծ սիրով խորհուրդ ենք տալիս մեր սիրելի զավակներին մտածել դպտիների մասին մեկ այլ ձևով: Ներկայացուցիչների մեծ հավաք կարող է լինել մի այնպիսի քաղաքում, որը կնպաստի դպտիների բարեկեցությանը և ոչ թե հակառակը: Մենք նաև խորհուրդ ենք տալիս նրանց հեռատես լինել և լավ հավասարակշռել, թե ինչ են անում և ինչ կլինի իրենց մտահղացման վերջը: Մենք աստծուն խնդրում ենք օգնել նրանց և տալ ողորմածություն, օրհնանք և խաղաղություն»[28]:

Եվ իրականում պատրիարքը հանձնարարեց Ասյուտի դպտի համայնքի հոգևոր առաջնորդ, սրբազան Մակարիոսին, սրպեսզի համագումարն անցկացվի իր վերահսկողության ներքո: Իր հերթին Մակարիոսը նամակ ուղարկեց պատրիարքին՝ հավաստիացնելով, որ ամեն ինչ հանդարտ է ընթանում, և համաժողովը կանցկացվի նրա հովհանավորությամբ և վերահսկողությամբ[29]: Կառավարության կողմից փորձ արվեց նաև դպտիների վրա ազդել օտարերկրյա հյուպատոսական գործակալների միջոցով: Վերին Եգիպտոսում շատ դպտիներ օտարերկրյա պետությունների հյուպատոսական ներկայացուցիչներ էին, և նրանցից շատերը հետաքրքրվում էին համաժողովի հարցերով: Կառավարության խնդրանքով Կահիրեում գործող գլխավոր հյուպատոսները հարցը քննարկեցին այդ գործակալների հետ, սակայն ապարդյուն, քանի որ նրանցից շատերը ուղղակի մերժեցին խզել իրենց կապերը համաժողովի հետ և հայտնեցին, որ իրենց վրա ճնշում գործադրելու դեպքում կհեռանան պաշտոններից[30]:

Երկար քննարկումներից հետո, 1911թ. մարտի 4-ին, կառավարությունը վերջապես որոշեց համագումարն անցկացնել Ասյուտում: Որոշման մեջ նշված էր. «Հակառակ դպտիների պատրիարքի և մի խումբ հավասարակշռված դպտիների խիստ ընդդիմության և կառավարության խորհուրդներին, որոշ դպտիներ պնդում են Ասյուտում համաժողով հրավիրելու թույլտվություն ստանալու պահանջը: Նրանք արդեն անհրաժեշտ նախապատրաստություններ են տեսել և խոստացել են, որ ոչ մի բան չի պատահի, որ կխաթարի անվտանգությունը: Կառավարությունը գտնում է, որ այդ համաժողովը էական չէ, և չկա որևէ էական բան, որ կարգելի այն»[31]:

1911թ. մարտի 6-ին Ասյուտում իր աշխատանքները սկսեց դպտիական համաժողովը, որին մասնակցում էր 1150 պատվիրակ՝ Եգիպտոսի տարբեր նահանգներից: Համաժողովը գլխավորում էր Բիշարա Հաննան: Ինչպես և սպասվում էր, բացման խոսքով հանդես եկավ սրբազան Մակարիոսը, որը մեկ անգամ ևս հորդորեց համաժողովի մասնակիցներին՝ խոհեմություն ցուցաբերել իրենց քննարկումներում և չանել այնպիսի քայլեր, որ կհակասի խեդիվի և նրա կառավարության ցան-

կությունններին: Այնուհետև, բոլոր ելույթ ունեցողներն իրենց խոսքում շեշտում էին մահմեդականների և ղպտիների միջև փոխադարձ վստահության կարևորությունը[32]: Բոլոր ելույթները, որոնք արծարծում էին ղպտիների պահանջները, շեշտադրում էին մահմեդականների և ղպտիների հավասարության և մեկ միասնականության անհրաժեշտությունը, քանի որ բոլոր եգիպտացիներն ապրում էին Եգիպտոսի հողի վրա, ուստի պետք է ունենային նույն իրավունքներն ու պարտականությունները:

Համաժողովի ընթացքում քննարկվեց և հինգ կետից կազմված դիմում-բողոք ներկայացվեց եգիպտական կառավարությանը և բրիտանացիներին.

1.Որպես քրիստոնյա ժողովուրդ՝ ղպտիները ստիպված են խախտել իրենց կրոնի պատվիրանները՝ կապված կիրակնօրյա աշխատանքի հետ, քանի որ կառավարական գրասենյակները և պետական դպրոցները բաց են կիրակի օրերին, և անհնար է պետական պաշտոնյաների և դպրոցների աշակերտների համար հանգստանալ կիրակի օրը, ինչը նախատեսված է քրիստոնեությամբ:

Համաժողովը պահանջում է, որ ղպտի պետական պաշտոնյաներն ու աշակերտները ազատվեն իրենց պարտականություններից կիրակի օրերին:

2.Շատ կառավարական պաշտոններ ամբողջովին անհասանելի են ղպտիների համար և ակնհայտ է, որ ընդհանուր առմամբ նրանց պաշտոնները չեն համապատասխանում իրենց կարողություններին և արժանիքներին: Նրանք գիտակցում են, որ գոյություն ունեցող պայմաններում իրենց կրոնական պատկանելությունը արգելք է պետական պաշտոններում արդյունավետ առաջընթացի համար:

Նրանք խնդրում են, որ մասնագիտական կարողություններն ընդունելի լինեն՝ պետական ծառայության ոլորտում աշխատելու և առաջխաղացում արձանագրելու համար:

3.Եգիպտոսում գոյություն ունեցող ընտրական համակարգի պայմաններում նրանք չեն ներկայացվում նահանգային խորհուրդներում:

Նրանք խնդրում են, որ ներկայումս Բելգիայում գործող համակարգի նման համակարգ ներմուծվի, որպեսզի պաշտպանվեն փոքրամասնությունների իրավունքները:

4. Ղպտիները հավասար իրավունքներ չունեն նոր նահանգային խորհուրդների տված կրթական արտոնություններից օգտվելու համար: Եգիպտական կառավարությունը լիազորել է նահանգային խորհուրդներին ընդհանուր հողի հարկի հինգ տոկոսի չափով հատուկ հարկ գանձել՝ գլխավորապես կրթական նպատակների համար: Ղպտիները վճարում են այդ հարկի մոտ 16 տոկոսը, և ենթադրվում է, որ դրան ի պատասխան պետք է նրանց երեխաների կրթության համար օգնություն տրամադրվեր: Սակայն ստեղծված համակարգում նրանց երեխաները չեն կարող

հաճախել քոլթթաբներ կամ տարրական դպրոցներ, որոնք պահվում են հիշյալ հատուկ հարկով, քանի որ, ինչպես պաշտոնապես հայտարարել է կրթության նախարարությունը. այս քոլթթաբները, ինչպես նաև միջնակարգ դպրոցները, զուտ իսլամական հաստատություններ են: Գործնականում այս հարկից ստացված եկամուտներից ոչինչ չի հատկացվում ղպտիների կրթության գործին: Աղքատ ղպտիների երեխաները կրթություն ստանալու համար կախված են մասնավոր նախաձեռնությունից:

Պահանջվում է, որ քոլթթաբներ և միջնակարգ դպրոցներ բացվեն բոլոր եգիպտացի երեխաներ համար՝ անկախ նրանց կրոնական պատկանելությունից, այն պայմանով, որ կրոնական ուսուցում ապահովվի բոլոր համայնքների համար:

5.Ղպտիները պահանջում են, որ կառավարական պարգևները տրվեն արժանավոր հաստատություններին՝ առանց ազգային և կրոնական վիրավորական խտրականության[33]:

Համաժողովն այս պահանջները քննարկեց ըստ կարգի, փակ քվեարկությամբ հաստատեց իր հավատարմությունը Նորին Գերազանցություն Եգիպտոսի խեդիվին, ինչն էլ անմիջապես ուղարկվեց հեռագրով:

Համաժողովի ավարտին Եգիպտոսի բոլոր նահանգներից 70 ներկայացուցիչների մասնակցությամբ հանձնաժողով ստեղծվեց՝ անհրաժեշտության դեպքում հանդիպելու և գործերը կազմակերպելու նպատակով: Հանձնաժողովի նախագահ ընտրվեց Ջորջ բեյ Վիսան, փոխնախագահներ՝ Խալիլ բեյ Իբրահիմը և Ախնուխ Ֆանուսը: Այնուհետև հանձնաժողովը փակ գաղտնի քվեարկությամբ 12 անդամից կազմված գործադիր կոմիտե ընտրեց, որն էլ զբաղվելու էր ղպտիների հարցերով[34]:

Առաջին հայացքից անգլիացիների կողմից միջհամայնքային հակամարտության գրգռումը ձեռնտու չէր գաղութարարներին, քանի որ վերջինս կարող էր ուղղվել ոչ միայն ղպտիների, այլև երկրի այլ փոքրամասնությունների և հենց բրիտանացիների դեմ: Սակայն, նման լարվածության պայմաններում Մեծ Բրիտանիան առավել հեշտությամբ կարող էր հիմնավորել իր զորքերի ներկայությունը երկրում և Եգիպտոսին անկախություն տրամադրելու վաղաժամ լինելը[35]:

Այսպիսով, բրիտանական գաղութացման առաջին շրջանում ղպտիները շարունակաբար արտահայտում էին իրենց դժգոհությունը կառավարության նկատմամբ: Բրիտանացիներն, իրենց հերթին, փորձում էին լծակներն օգտագործել ղպտիների դժգոհությունները մեղմելու հարցում՝ ընդսմին շարունակելով սիրաշահել Եգիպտոսի մահմեդականներին: Նշենք, որ բացարձակ մեծամասնություն հանդիսացող եգիպտացի մահմեդականներն, իրենց հերթին, զգուշություն էին ցուցաբերում Եգիպտոսում ղպտիների դերի բարձրացման նկատմամբ՝ փորձելով էլ ա-

վելի ամրապնդվել կառավարական օղակներում և ինչ-որ առումով համագործակցության եզրեր գտնել բրիտանացի գաղութարարների հետ:

Անգլիացիների վարած քաղաքականությունն ի վերջո հիասթափեցրեց ղպտիներին բրիտանական իշխանությունից, որոնք չստացան իրենց բարձրացրած հարցերի պատասխանները: Մեծ թվով ղպտիներ անդամակցեցին 1918թ. Սաադ Զաղլուլի ստեղծած ալ-Վաֆդ ալ-միսրիին (Եգիպտական պատվիրակություն)[36]: Զաղլուլը կարևորում էր ժողովրդի բոլոր հատվածների մասնակցությունը հակաբրիտանական շարժմանը: Նա փորձում էր շարժման մեջ ներգրավվել հատկապես քրիստոնյաներին և հերքել բրիտանացիների այն պնդումները, թե Եգիպտոսում քրիստոնյաների անվտանգությունը վտանգված է: Հարկ ենք համարում նշել, որ բրիտանացիները մեկ անգամ ևս փորձեցին իրենց կողմը գրավել ղպտիներին: 1919թ. վարչապետի պաշտոնում նշանակվեց ղպտի Յուսուֆ Վահբան: Սակայն ղպտիները խիստ բացասաբար վերաբերվեցին Վահբայի պաշտոնավարմանը, և նա ստիպված էր հրաժարական տալ, քանի որ ծանր վիրավորվեց մի ղպտի ազգայնականի կողմից[37]:

Վաֆդի կառավարման տարիներին ղպտիներն էական տեղեր զբաղեցրեցին թե՛ կառավարությունում և թե՛ խորհրդարանում: 1924թ. անցկացված ընտրություններում ղպտիները զբաղեցրեցին խորհրդարանական տեղերի 8 տոկոսը: Խորհրդարանի փոխնախագահն էր Վիսա Վասիֆը, որը հետագայում դարձավ խորհրդարանի նախագահ[38]: Ղպտիները 2 տեղ ստացան Զաղլուլի կառավարությունում. արտգործնախարար նշանակվեց Վասիֆ Բուտրոս Ղալին, իսկ հասարակական աշխատանքների նախարար՝ Մարկուս Հաննան[39]: 1927-46թթ. Վաֆդի գլխավոր քարտուղարն էր Մակրամ Ուբեյդը[40], իսկ 1923թ. կուսակցության վարչության 14 անդամներից 6-ը ղպտի էին[41]:

Փաստենք, որ բրիտանական գաղութացման շրջանում, ի տարբերություն մամլուքների և Մուհամմեդ Ալիի կառավարման շրջանների, բրիտանացիները, պետական ծառայության ասպարեզում ավելի մեծ տեղ հատկացնելով մահմեդականներին, նպաստեցին ղպտիների շրջանում դժգոհության ի հայտ գալուն: Պատահական չէր, որ 1911թ. Ասյուտի համաժողովի հրավիրման հիմնական պատճառներից մեկն էլ հենց բրիտանացիների կողմից ղպտիների նկատմամբ վարվող խտրական քաղաքականությունն էր: Թեև Ասյուտի համաժողովում ընդունվեցին մի քանի որոշումներ, որոնք արտահայտում էին ղպտիների պահանջները, որոնք այդպես էլ չարժանացան բրիտանական իշխանությունների ուշադրությանը, ինչի արդյունքում էլ հետագայում ղպտիներն ավելի մեծ թափով սկսեցին համագործակցել Եգիպտոսի հակաբրիտանական ուժերի՝ մասնավորապես Սաադ Զաղլուլի գլխավորած ալ-Վաֆդ ալ-միսրիի հետ:

ARTHUR AVDALYAN

THE COPTIC QUESTION IN 1911 ASYUT CONFERENCE

In the period of British occupation as distinct from Mamluk's and Muhammed Ali's government periods, the British occupants gave more attention to Muslims in state affairs than Copts. This fact rose dissatisfaction among them – organizing Asyut conference in 1911. In spite of some decisions made in Asyut, British government didn't pay any attention to the demands of Copts. As the result the Copts began more intensively cooperate with anti-British forces of Egypt especially with al-Wafd al-Misri headed by Saad Zaghlul.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Եգիպտոսի բնիկներ, որոնք արևելաքրիստոնեական միաբնակ եկեղեցիներից մեկի հետևորդներն են:
2. Mordechai Nisan, Minorities in the Middle East: A History of Struggle and Self-Expression, London, 1985, p. 120.
3. Otto F. A. Meinardus, Two Thousand Years of Coptic Christianity. Cairo, 1999, p.68.
4. Kyriakos Mikhail, Copts and Moslems under British Control. A Collection of Facts and a Resume of Authoritative Opinions on the Coptic Question, London, 1911, p. 20.
5. 1874թ., ստանալով կառավարության օժանդակությունը, համայնքի աշխարհիկ ներկայացուցիչները եկեղեցուն կից ստեղծեցին աշխարհականների խորհուրդ, որը գլխավորեց Բուտրոս Ղալին: Մանրամասն տես՝ A. J. Arberry, Religion in the Middle East: Three Religions in Concord and Conflict, Vol. 1, Christianity and Judaism, Cambridge 1969, p. 431.
6. Barbara Lynn Carter, The Copts in Egyptian Politics, London, 1986, p. 10-11.
7. З.И.Левин, Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, Москва, 1972, стр.172.
8. Vatikiotis P. J., The History of Egypt, London, 1985, p. 228.
9. Հիզբ ալ-Վատանիի պաշտոնաթերթը:
10. أمير نصر. المشاركة ألوطنية للأقباط في العصر ألحديث. ألجزء ألأول. ألقاهرة. بدون سنة. ص 89.
11. Vatikiotis P. J., նշվ. աշխ., էջ 208
12. З.И.Левин, նշվ. աշխ., էջ 160.
13. Kyriakos Mikhail, նշվ. աշխ., էջ 22.
14. سميرة بحر. ألأقباط في الحياة ألسياسية المصرية. بدون مكان. 1984. ص 57.
15. Նույն տեղում, էջ 58:
16. Kyriakos Mikhail, նշվ. աշխ., էջ 44.

17. Doris Behrens-Abouseif, The Political Situation of the Copts, 1798-1923, Christians and Jews in the Ottoman Empire, Vol. 2, New York, 1982, p. 199.
18. Barbara Lynn Carter, նշվ. աշխ., էջ 16:
19. Vatikiotis P. J., նշվ. աշխ., էջ 208:
20. Այս մասին մանրամասն տե՛ս Ф. А. Ротштейн, Захват и закабаление Египта, Москва, 1959, стр. 268, В. Б. Луцкий, Новая история арабских стран, Москва, 1965, сс.213-214.
21. سميرة بحر . նշվ. աշխ., էջ 63:
22. Kyriakos Mikhail, նշվ. աշխ., էջ 20-21:
23. Եգիպտացի հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Սաադ Զաղլուլը (1860-1927թթ.) զբաղեցրել է մի շարք պետական պաշտոններ. 1906-1910թթ. եղել է լուսավորության նախարար, 1910-12թթ.զբաղեցրել է արդարադատության նախարարի պաշտոնը, 1918թ. գլխավորել է ալ-Վաֆդ ալ-միսրին, ապա 1923թ. հիմնադրել Հիզբ ալ-վաֆդ կուսակցությունը: 1924թ. հունվարից մինչև նոյեմբեր զբաղեցրել է Եգիպտոսի վարչապետի պաշտոնը:
24. أبو سيف يوسف. ألأقباط و ألقومية ألعربية. بدون مكان و سنة. ص 118
25. أمير نصر, նշվ. աշխ., էջ 90:
26. Kyriakos Mikhail, նշվ. աշխ., էջ 24-25:
27. يوسف منقر يوس. تاريخ الامة القبطية في عشرين سنة. بدون مكان. 1912. ص 425
28. Kyriakos Mikhail, նշվ. աշխ., էջ 26-27:
29. أمير نصر. նշվ. աշխ., էջ 91:
30. Kyriakos Mikhail, նշվ. աշխ., էջ 27-28:
31. سميرة بحر. նշվ. աշխ., էջ 62:
32. أمير نصر, նշվ. աշխ., էջ 92:
33. Kyriakos Mikhail, նշվ. աշխ., էջ 28-30:
34. أمير نصر. նշվ. աշխ., էջ 96:
35. Ա. Հովհաննիսյան, «Եգիպտոսի ազգային և կրոնական փոքրամասնությունները (1907-1967 թվականներ)», ատենախոսություն՝ պաշտպանված ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում, Երևան, 2002, էջ 66:
36. 1918թ. կազմավորված և Սաադ Զաղլուլի ղեկավարած ալ-Վաֆդ ալ-միսրին պետք է Փարիզի խաղաղության կոնֆերանսում ներկայացներ Եգիպտոսի անկախացման պահանջները: 1923թ. այդ պատվիրակությունը դարձավ այն միջուկը, որի շուրջ ձևավորվեց Հիզբ ալ-վաֆդ կուսակցությունը, որն էլ հայտնվեց հակաբրիտանական գաղութացման դեմ ուղղված շարժման կիզակետում՝ դրական դերակատարում ունենալով պայքարի առաջին փուլում: Այս մասին մանրամասն տե՛ս А.М.Голдобин, Национально-освободительная борьба народа Египта 1918-1936гг., Москва, 1989,

стр.103, Новейшая история арабских стран (1917-1966гг.), Москва, 1968, стр. 361.

37. Barbara Lynn Carter, նշվ. աշխ., էջ 68.
38. Otto F. A. Meinardus, նշվ. աշխ., էջ 90:
39. А. М. Голдобин, նշվ. աշխ., էջ 182:
40. Otto F. A. Meinardus, նշվ. աշխ., էջ 86:
41. Barbara Lynn Carter, նշվ. աշխ., էջ 161:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԷՋԵՐ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ XIX ԴԱՐՈՒՄ

XVIII դ. վերջին Իրանը վերածվեց միջավատական արյունոտ մրցակցության դաշտի: Պայքարի ասպարեզ էին իջել իրանալեզու զենդերը և թյուրքալեզու ղաջարները, Նադիր-շահ Աֆշարի իշխանատենչ ժառանգորդները, խոշոր ցեղերի՝ շահսևենների, քրդերի, թուրքմենների առաջնորդ խաները, որոնք հույս ունեին զավթել եթե ոչ շահական գահը, ապա գեթ առանձին նահանգների՝ Ատրպատականի, Երևանի խանության, Խորասանի, Քրդստանի, Ֆարսի նկատմամբ տիրապետության իրավունքը: Այդ պայքարում բոլոր միջոցները համարվում էին ընդունելի՝ ռազմական ուժը, ահաբեկչությունը, զանգվածային սպանությունները, բնակչության անսանձ կողոպուտը, ուխտադրժությունը, դավաճանությունը, կաշառքը, մարդկանց գերևարությունը, բարոյական խեղումը, կրոնական մոլեռանդությունը և այլն: Հիրավի, իր դարավոր պատմության ողջ ժամանակահատվածի ընթացքում Իրանը չէր տեսել երկրի բնակչության այնպիսի ոչնչացում և արտադրողական ուժերի ահարկու կործանում, ինչպես նշված շրջանում:

Այդ իրադարձությունների ժամանակ իրանահայությունը օրորվում էր քաղաքական վայրիվերումների հորձանուտում, որպես կանոն գտնվերով կրավորական դիտորդի դերում: Նա չէր կարող հանդես գալ որպես քաղաքական ինքնուրույն գործոն և ինչ որ չափով ազդել իրադարձությունների ընթացքի վրա, հանդիսանալով նախ չնչին փոքրամասնություն, իսկ ապա շարիաթական օրենքը նրան դիտում էր որպես այլադավան ու անհավատ, օրենքի հովանավորությունից դուրս գտնվող իրավազուրկ ռայա, որը ձայնի իրավունք չուներ երկրի քաղաքական գործերում:

Հայ եկեղեցին, Էջմիածնի կաթողիկոսի գլխավորությամբ, իրավասու չէր միջամտելու իրանահայ թեմի ու նրա հոտի աշխարհիկ-քաղաքական գործերին: Ուստի աշխատում էր գեթ ուժի մեջ թողնել նախկին ժամանակներում իրանական շահերից ստացած հայերի վերաբերյալ իրավունքներն ու արտոնությունները: Իսկ Իրանի հայ համայնքի հոգևորականությունը, ինչպես նաև կրոնական այլ փաքրամասնությունների

հոգևոր դասը (քրիստոնյա-նեստորականներ, զրադաշտականներ և հուդայականներ) ազդեցություն ուներ միայն իր հոտի շրջանակներում և զուրկ էր պետական գործերի վրա ներգործության իրավունքից:

Զենդերի և ղաջարների երկարատև գոտեմարտն ի վերջո ավարտվեց ղաջարների հաղթանակով, որոնց առաջնորդ Աղա-Մոհամմադ խանը 1796թ. մայիսին Մուղանի դաշտավայրում տեղի ունեցած ղուռուլթայում հռչակվեց Իրանի շահնշահ, հիմք դնելով ղաջարական դինաստիային, որը 130 տարի անընդմեջ կառավարեց Իրանը:

Աղա-Մոհամմադ շահը Իրանում հաստատեց արյունոտ բռնատիրության վարչակարգ: Նրա արշավանքները Ատրպատական, Արևելյան Հայաստան, Վրաստան, Ղարաբաղ, Նախիջևան, Կասպից ծովի հարակից շրջանները և այլն, որտեղ ամենուրեք առկա էր հայ հոծ բնակչություն, ուղեկցվում էին անօրինակ դաժանություններով, քաղաքների և գյուղերի կործանմամբ, բնակչության զանգվածային ոչնչացմամբ, գերևարություններով ու ստրկացմամբ:[1] Միայն Թիֆլիս քաղաքից, որտեղ հայերը կազմում էին մեծ զանգված, 1795թ. արշավանքի ժամանակ գերևարվեց և Իրան քշվեց ավելի քան 15 հազար մարդ: Կանանց և աղջիկներին ուղարկում էին հարեմները, իսկ պատանիներին ներքինացնում էին և դարձնում հարեմների վերակացուներ, ընդգրկում պետական ծառայության մեջ, բանակի շարքերը և այլն: Այս ճանապարհով ղաջար իշխանավորները ոչ միայն օգտագործում էին հպատակ ժողովուրդների մտավոր և ֆիզիկական ներուժը, այլև գլխավորապես հայ և վրացի ժողովուրդների հաշվին նորոգում, թարմացնում էին Իրանի բնակչության գենոֆոնդը:[2] Ուստի մարդորսությունը, գերիներ ձեռք բերելու և «եսիր բազարներում» (ստրկավաճառանոցներում) նրանց վաճառքի միջոցով եկամուտ ստանալու «արհեստը» այդ մութ և անապահով ժամանակներում դարձել էր ամենօրյա զբաղմունք:

Աղա-Մոհամմադ շահի անագորույն վարչակարգն ավարտվեց նրա սպանությամբ (1797թ.): Սկսվեց գահը ժառանգած Ֆաթհ-Ալի շահի (1798-1834) կառավարման փոթորկուն ժամանակաշրջանը, երբ Իրանը երկու անգամ՝ 1804-1813 և 1826-1828թ.թ. պատերազմի մեջ մտավ Ռուսաստանի հետ և ճաշակեց պարտության դառնությունը: Արևելյան Հայաստանը դարձավ պատերազմող բանակների մարտի դաշտ, անասելի տառապանքներ պատճառելով հայությանը: Երևանի խանությունից մեծ թվով հայ ընտանիքներ տարագրվեցին բուն Իրանի տարածքը, բազմաթիվ հայ աղջիկներ ու տղաներ վաճառվեցին իրանական իշխանավորներին և ունևոր անձանց՝ որպես հարեմների հարճեր և ներքինիներ: Գերյալներին պարտադրվում էր իսլամը:

Քրիստոնյա պետության դեմ պատերազմների ժամանակ կրոնական չափանիշներով առաջնորդվող մահմեդական զանգվածի համար հայերը դիտվում էին որպես իրենց թշնամի ռուսների դավանակից-կողմ-

նակիցներ: Այդ մտայնությունը նրանց մոտ ամրակայվում էր Ռուսաստանի նկատմամբ հայության դրսևորված անսքող համակրանքի բազմակի հարկի ու անհարկի ցուցադրումների պատճառով:

Թուրքմենչայի ռուս-իրանական պայմանագրի (1828թ.) 15-րդ - հոդվածով բուն Իրանի տարածքում ապրող հայերին իրավունք էր տրվում, ցանկության դեպքում, իրենց ընտանիքներով անցնել «ռուսական մարզերը», այսինքն Արևելյան Հայաստան[3]: Սկսվեց հայ բնակչության զանգվածային ներգաղթը հայրենիք: Թավրիզից, Խոյից, Սալմաստից, Ուրմիայից, Մարաղայից և պատմական «Պարսկահայք» նահանգի հայաշատ այլ վայրերից Երևանի և Նախիջևանի նահանգներ տեղափոխվեց շուրջ 40.000 հայ բնակչություն[4]: Նրանց մեծագույն մասը դիմեց այդ քայլին, քանի որ նրանց մեջ դարերի ընթացքում չէր մեռել հայրենիքի կարոտը: Շատերը սրտնեղած ու տառապած պարսկական լծից, ապահով ու բարեկեցիկ կյանքի երազանքներ էին փայփայում քրիստոնյա Ռուսաստանի հովանու: Իսկ մի մասն էլ հարկադրված էր բռնել գաղթի ճամփան, որովհետև «խաչով էր դիմավորել» ռուսական զորքերին և վախենում էր մահմեդականների վրիժառությունից, թեև Թուրքմենչայի պայմանագրի համաձայն, բոլոր բնակիչներին շնորհված էր «բացարձակ ու կատարյալ ներում»:

1828-1830 թվականներին տեղի ունեցած իրանահայության գաղթը նշանավոր է նրանով, որ դա հայ ժողովրդի պատմության մեջ առաջին ներգաղթն էր և առաջին հայահավաքը, որը կոչված էր նոր շունչ ու կենսունակություն հաղորդել XVII դարում շահ Աբբաս Ա-ի կողմից կազմակերպված հայերի բռնի տարագրության հետևանքով հայությունից դատարկված Արևելյան Հայաստանին, որտեղ անցած երկու հարյուրամյակների ընթացքում բազմացել ու արմատներ էին նետել թյուրքալեզու և իրանալեզու բազմաթիվ վաչկատուն ու կիսաքոչվոր ցեղեր:

Քանի որ «ռուսական մարզեր» ներգաղթողների ջախջախիչ մեծամասնությունը Ատրպատականի հայերն էին, ուստի այդ նահանգի հայ բնակչության թվաքանակը կտրուկ կրճատվեց: Դա տեղի ունեցավ այնպիսի չափերով, որ ըստ էության Ատրպաաականը, որը հանդիսանում էր հայ աչքի ընկնող գաղթօջախներից մեկը, հայաթափ եղավ: Հարավային Իրանի, մասնավորապես Նոր Ջուղայի հայությունը, մասնակից չեղավ այդ գաղթին, գլխավորապես տեղի հեռավորության, նաև այն պատճառով, որ իր գաղթավայրը Հնդկաստանն էր և ավելի արևելք՝ Ճավան, Սինգափուրը, Սիամը, Բիրման, Չինաստանը, մասամբ նաև Մերձավոր Արևելքի երկրներն ու Եվրոպան:

Իրանական իշխանությունները և հատկապես գահաժառանգ Աբբաս Միրզան, որին պատկանում էր Ատրպատականի դոմենը, լրջորեն մտահոգված էր նրանով, որ իր ժառանգական կալվածքը զրկվում է աշխատող, հարկատու և օրինապահ տարրից: Ուստի նա փորձում էր ha-

մոգել հայերին «չգայթակղվել ռուսների խոստումներով» և «չլքել երկիրը», խոստանալով լրացուցիչ արտոնություններ և իրավունքներ[5]: Իսկապես, նա շտապեց Թավրիզի հայ վաճառականներին շնորհել մի շարք լրացուցիչ առանձնաշնորհումներ, իսկ իրանահայ հոգևորականությանը՝ նոր արտոնություններ: Թագաժառանգը միջոցներ հատկացրեց Ատրպատականի հայոց թեմի առաջնորդանիստ կենտրոն Սբ. Թադեի (Սբ. Թադևոս Առաքյալ) վանքի վերանորոգման համար: Նա հույսեր էր փայփայում, որ իր այդ քաղաքականության շնորհիվ Ատրպատականի և Նոր Ջուղայի հայկական թեմերի առաջնորդարանները ձեռք կբերեն ինքնավար կարգավիճակ և կվերանա նրանց անմիջական կախումը Ռուսաստանին անցած տարածքում գտնվող Էջմիածնից[6]: Առհասարակ Աբբաս-Միրզան, որն անկասկած XIX դ. առաջին քառորդի Իրանի ականավոր քաղաքական դեմքերից մեկն էր[7], հանդիսանում էր տարածաշրջանում ռուսական ազդեցության ամենաեռանդուն հակառակորդներից մեկը[8]: «Ռուսական մարզում» Ռուսաստանի համակիր հայության թվաքանակի ստվարացման մեջ նա տեսնում էր Իրանի պետական շահերի տեսակետից անցանկալի բան: Նրա հետ այդ հարցում կատարելապես համակարծիք էին անգլիացիները, որոնք հորդորում էին գահաժառանգին կանոնակարգել ու նվազեցնել հայերից գանձվող հարկերի չափը, պահպանել հայկական եկեղեցիների հարկային իմունիտետը, ավելի ուշադիր լինել «քրիստոնյա հպատակների» նկատմամբ և այլն: Անգլիացիների այդ մտահոգությունների պատճառները միայն տարածաշրջանում մրցակից ու ախոյան Ռուսաստանի դիրքերի թուլացումը չէր: Անգլիան եռանդուն ջանքեր էր գործադրում իրանահայությանը վերցնելու իր հովանավորության տակ, ձգտելով այդ հարցում կանխել Ռուսաստանին: Պատահական չէ, որ արդեն XIX դ. 20-ական թվականներին Հյուսիսային Իրանի հայության շրջանում անգլիկանյան և բողոքական միսիոներները եռանդուն գործունեություն էին ծավալել հայերի շրջանում, նրանց բրիտանական հոգևոր ու քաղաքական ազդեցության տակ դնելու համար[9]: Եվրոպական ու ամերիկյան միսիոներական կենտրոնների կարծիքով սկսվում էր արևելքում քրիստոնեությունը տարածելու նոր դարաշրջան:

Ուշագրավ է նշել, որ Ատրպատականի հայ գաղթօջախում ևս կային գործիչներ, պանք մտահոգված լինելով այդ երկրամասի հայ համայնքի ապագայի հարցով և միաժամանակ չցանկանալով սրել պարսկական իշխանությունների մոտ հպատակ հայ բնակչության նկատմամբ գոյացած բացասական նստվածքը, դեմ էին հայերի զանգվածային գաղթին դեպի ռուսների կողմից «գրավյալ հողերը»: Նման գործիչներից մեկն էր նաև Ս. Բարթուղմեոս վանքի վանահայր Իսրայել եպիսկոպոսը[10]:

Չնայած այն հանգամանքին, որ այլադավանների գործունեության ասպարեզը Իրանում խիստ սահմանափակ էր, նրանք չէին կարող զբաղեցնել զինվորական ու վարչական պաշտոններ, քանի որ օրենքը արգելում էր այլադավանին իշխել մահմեդականի նկատմամբ, Աբբաս-Միրզան երբեմն շրջանցում էր այդ կարգը: Այսպես, առաջին ռուս-իրանական պատերազմից հետո, երբ ռուսական բանակից փախած ռազմագերիներից ու դասալիքներից մոտ 300 զինվորներ որոշեցին մնալ Իրանում և ծառայել Աբբաս-Միրզայի բանակում, վերջինս հրամայեց ստեղծել հատուկ քրիստոնեական գումարտակ Սամսոն Մակինցևի (Սակինցյանի) գլխավորությամբ: Գահաժառանգը հրամայեց Սալմաստի հայ համայնքին, այդ ռազմագերիներին կնության տալ հայ աղջիկներ: Ի դեպ, Սամսոն Սակինցևին խիզախության ու ռազմական ծառայությունների համար շնորհվեց խանի տիտղոս[11]:

Կասկածից վեր է, որ ռուս-իրանական պատերազմները հայ ժողովրդի հետագա պատմական ճակատագրի համար անուրանալի դրական ձեռքբերումներից բացի ունեցան նաև բացասական լիցք պարունակող հետևանքներ: Այդ պատերազմներում Ռուսաստանի տարած հաղթանակների հետևանքով իրանահայության և Անդրկովկասի հայության միջև անմիջական շփումները ընդհատվեցին և հայությունը Արաքս գետով բաժանվեց երկու առանձին հատվածների՝ «Պարսկահայաստանի» և «Ռուսահայաստանի»: Եթե դրան ավելացնենք նաև «Թուրքահայաստանի» գոյությունը, ապա պարզ կդառնա, թե դա ինչպիսի անջրպետ էր հայ ժողովրդի քաղաքական զարգացման, նրա ազգային ինքնագիտակցության հասունացման և ազգային համախմբման (կոնսոլիդացման) ճանապարհին:

Սակայն պատմության առեղծվածների թվին կարելի է դասել այն իրողությունը, որ նույնիսկ նման արտառոց ու հակաբնական պայմաններում անգամ, հայ ժողովրդի տարբեր հատվածների միջև հոգեկան, բարոյական ու մշակութային կապերը երբեք չխզվեցին և հայությունը դրսևորեց զարմանալի կենսունակություն, ապրելու, հաբատևելու բացառիկ կամք: Հայության այդ երեք հատվածները, անշուշտ, տարբերվում էին մեկը մյուսից տնտեսական, քաղաքական, բարոյա-հոգեբանական և այլ հատկանիշներով և յուրաքանչյուր խմբի ինտելեկտուալ և քաղաքական առաջնորդները յուրացրել էին իրենց բնակության վայր հանդիսացող պետությունների արժեքներն ու սովորույթները, դրանց մեջ դնելով իրենց սեփականը, ազգայինը: Անկասկած հայության երեք հատվածներին միավորող հզոր գործոններ էին նրանց լեզվական, մշակութային, կրոնական և այլ բնույթի ընդհանրությունները, իսկ ամենակարևորը պատմական միասնական հեռանկարի զգացողությունը:

Ուշագրավ է նաև, որ Կովկասյան Հայաստանի և Իրանի հայության միջև կապող օղակի դեր էր խաղում թուրքալեզու բնակչություն ունե-

ցող Ատրպատականը և հայերի ու ազերի թուրքերի միջև ազգամիջյան շփումների լեզուն էլ հանդիսանում էր թուրքերենը:

Հենց անտի, Իրանի հայ համայնքը օգտվել է իրանական կառավարության հովանավորությունից և իրանական ժողովրդի հյուրընկալ, ասպնջական վերաբերմունքից: Ֆաթհ-Ալի շահը ևս հայերին համարում էր պետության համար օգտավետ տարր, ուստի աշխատում էր նրանց բնակության համար ստեղծել տանելի ու բնականոն պայմաններ: Պետության ղեկը իր ձեռքը վերցնելուց հետո նա սկսեց վարչական խստություններ բանեցնել ինքնագլուխ ու անսանձ տարրերի դեմ հայերի իրավունքներն ու պատիվը պաշտպանելու համար, հայկական եկեղեցիներն ու վանքերը ազատում էր հարկերից, դրամական նպաստներ էր շնորհում նրանց, հրովարտակներ հրապարակում նախորդ շահերի կողմից հայկական կղերին հատկացված իրավունքներն ու արտոնությունները վերահաստատելու ուղղությամբ և այլն: «Ի ժառանգել Ֆաթալիշահի զթագաւորութիւնն պարսից անդորրացաւ և Ջուղայ, և հաստահաւութիւնք՝ կեղեքմունք՝ տուգանք տարապարտուց և վիշտք ի կողմանէ Տերութեան տեղի տուեալ հեռացան յաւերակաց Ջուղայու: Քաղցր ականակութիւն ունեցաւ Արքայն առ ազգն հայոց և յամի 1832թ. շնորհեաց Ամենափրկչեան վանին զհրովարտակ շնորհելոյ յամի 262 թումանս պարգև, որով ամենայն վանքական կալուածք զերծ ի հարկացն եղեն»,- գրում է Նոր Ջուղայի պատմիչը[12]:

Ընդհանրապես քրիստոնյա բնակչության մեջ իրենց թվաքանակի մեծ լինելու, ավելի լավ նյութական պայմաններ ունենալու (հարուստ վաճառականների ու արհեստավորների խավը հայերի մոտ կազմում էր նշանակալի տոկոս), համեմատաբար ազդու քաղաքական կշռի (շահին օգնում էին դրամով, ինչպես սեղանավոր-ամիրաները Արևմտյան Հայաստանում, կատարում էին արքունիքի դիվանագիտական և այլ կարգի հանձնարարությունները), հայ եկեղեցու կողմից ինչ-որ չափով պաշտպանություն գտնելու, մահմեդականություն ընդունած նշանավոր ու ազդեցիկ հայերի (Մանուչեհր-խան և ուրիշներ) և այլ պատճառների հետևանքով Իրանում հայերը գտնվում էին ավելի բարվոք վիճակում, քան մյուս ազգային փոքրամասնությունները[13]:

Սակայն իրողություն է նաև այն, որ ընդհանուր առմամբ Իրանի ոչ մահմեդական բնակչությունը՝ քրիստոնյաները (հայերն ու ասորիները), վայաերը (գյաբրերը կամ զրադաշտականները) և հուդայականները գտնվում էին նվաստացուցիչ վիճակում: Նրանց համար կային շարիաթական օրենսդրությունից բխող բազմաթիվ սահմանափակումներ: Օրինակ, հայը չէր կարող հագնել պարսկական զգեստ (աբու), չէր կարող տանից դուրս գալ անձրևոտ օրերին, որպեսզի իր վրայի ջրով «չպղծի» մահմեդականներին, փողոցով անցնել ձի հեծած, շուկայում դիպչել մի քանի սննդամթերքների (շարիաթի օրենքով մահմեդականը իրավունք

չունեի ուտելու այն սննդամթերքը, որին «անհավատ քրիստոնյայի» ձեռք էր կպել, հայերին արգելված էր մսագործությամբ և թաց մշակման հետ կապված մյուս մասնագիտություններով զբաղվել, սակայն նրանք կարող էին զբաղվել Իրանում արգելված կամ հարգանք չվայելող արհեստներով՝ գինեգործությամբ, անասունների մաշկազերծ անելու գործով, կաշեգործությամբ և այլն):

Մահմեդականի հանդիպելիս հայը պետք է ողջուներ նրան և զիջեր ճանապարհը, հայերը իրավունք չունեին կառուցել ավելի բարձր տներ, քան իրենց հարևան մահմեդականների տներն էին, իրավունք չունեին մզկիթներից բարձր եկեղեցիներ կառուցել, նրանք կարող էին ազատորեն դավանել իրենց կրոնը, սակայն «լուռ ու հանգիստ» ձևով, այսինքն չէին կարող կոչնակ հնչեցնել (ուստի զանգի փոխարեն օգտագործում էին փայտի մի կտոր), կազմակերպել աղմկալից կրոնական արարողություններ և այլն:

Այլադավաններին արգելված էր մեկ հավատից անցնել մյուսին, բացի իսլամից: Եթե մահմեդականին թեկուզ սխալմամբ անվանեին «մասիհի» (քրիստոնյա) կամ «յահուդի» (հրեա, հուդայական), վիրավորանքի համար հարուցվում էր քրեական գործ: Բռնի հավատափոխության դեպքերը XIX դարում ևս շարունակում էին գոյություն ունենալ, սակայն չէին կրում զանգվածային բնույթ: Անհրաժեշտության դեպքում ոչ մահմեդականները դիմում էին իրենց իսկական հայացքները թաքցնելու Իրանում օրինականացված սկզբունքին («թաքիյա»), որը լայնորեն կիրառվում էր շիիթ-մահմեդականների շրջանում: Որպեսզի մահմեդական միջավայրում կարողանան պահպանել իրենց կյանքն ու գույքը, քրիստոնյաներն ու հուդայականները ստիպված էին վերին աստիճանի ճկունորեն վերաբերվել դավանական խնդիրների նկատմամբ: Նրանք ապրում էին փակ, մեկուսացված կյանքով: Նրանց շփումները մահմեդականների հետ սահմանափակ էր՝ միայն աշխատանքի բերումով: Այլադավանի և մահմեդականի միջև վեճ առաջանալու դեպքում այն լուծվում էր մահմեդական դատավորի՝ ղադիի միջոցով՝ ըստ շարիաթի: Սովորական երևույթ էր, երբ մահմեդականները քրիստոնյա կանանց հետ ամուսնանալու համար նրանց պարտադրում էին իսլամը:

Այլադավանները բանակում ծառայելու և զենք կրելու իրավունք չունեին, չէին կարող զբաղեցնել զինվորական ու վարչական պաշտոններ, քանի որ օրենքը արգելում էր այլադավանին իշխել մահմեդականի նկատմամբ: Մեկ պետության տարածքում համատեղ կյանքը մշակել էր մահմեդականների ու այլադավանների միջև հարաբերությունների որոշակի նորմեր, որոնք պահպանվում էին և՛ իշխանությունների և՛ բնակչության կողմից: Ուստի ազգային-կրոնական փոքրամասնությունները (այլադավանները) աշխատում էին ապրել հավաքական կյանքով, միևնույն բնակավայրերում ու թաղամասերում, որպեսզի անհրաժեշ-

տության դեպքում կարողանան պաշտպանվել հալածանքներից ու ջարդերից: Օրինակ, Թավրիզում հայությունը հավաքվել էր քաղաքի կենտրոնում և բերդի վերածել իրենց թաղամասը՝ այն անվանելով «Բերդաթաղ» կամ «Ղալա» (թուրքերեն բերդ Վ.Բ.): Թշնամի վտանգից ազատ պահելու համար ձեռնակվել էին ապահովության զանազան միջոցներ, մասնավորապես կառուցվել էին ամրակուռ պատեր և երկաթյա դարպասներ: Հայ համայնքին սպառնացող վտանգի դեպքում այդ դարպասները փակվում էին: Ուշագրավ է նշել, որ Բերդաթաղ թաղամասում էին հաստատվել նաև օտարերկրյա հյուպատոսները և առհասարակ եվրոպացիները, որպես առավել անվտանգ վայր:

Հետագայում Թավրիզի հայ բնակչությունը աստիճանաբար աճելով դուրս է գալիս Բերդաթաղի սահմաններից և տարածվում հարևան Լիլավա թաղում, որտեղ 1845թ. կառուցվում է Ս. Սարգիս եկեղեցին: Իսկ մինչ այդ՝ 1782թ. կառուցվել էր Ղալայի Ս. Աստվածածին մայր եկեղեցին:

XIXդ. ընթացքում, չնայած կառավարության կողմից հայերի նկատմամբ իրականացվող հովանավորողական քաղաքականությանը, պարբերաբար բռնկում էին քրիստոնյա բնակչության ջարդեր, որոնց պատճառը կարող էր լինել նախանձը հայ հաջողակ վաճառականների նկատմամբ, նրանց ունեցվածքին տիրանալու ձգտումը, կամ պարզապես մահմեդականի և քրիստոնյայի միջև դատարկ վեճը, որը ճարպկորեն ուռճացվում ու օգտագործվում էր շիիթական հոգևորականության ու տեղական իշխանությունների կողմից:

Ինչպես հարևան Օսմանյան կայսրությունում, որտեղ հայ ամիրաները կառավարության գիտությամբ ու հանձնարարությամբ զբաղվում էին բնակչությունից հարկահավաքման գործով, XIX դարում Իրանում ևս մի խումբ հայեր ներգրավված էին նման զբաղմունքի մեջ: Սակայն իսլամական կրոնական աստիճանակարգի բարձրագույն ներկայացուցիչները (մոջթեհիդները) շահին ուղղված հեռագրերում գանգատվում էին, որ մահմեդականների շրջանում «անահավատների» հարկահավաքման գործով զբաղվելը հակասում է իսլամի օրենքներին[14]: Որպես կանոն, նման բողոքների անպատասխան թողնելուն հետևում էին իսլամական մոլեռանդության պոռթկումները:

Առկա էր մի օրինաչափություն, երբ մահմեդականների բախումները քրիստոնյաների հետ ավելի հաճախակի տեղի էին ունենում երաշտի ու սովի տարիներին: 1807թ. Թավրիզում մոլեռանդ ամբոխը մոլլաների գլխավորությամբ հարձակում գործեց հայկական եկեղեցիների և հայերին պատկանող վաճառատների վրա: Շնորհիվ թագաժառանգ Աբբաս-Միրզայի վճռական միջամտության, այդ միջադեպը արագ արմատախիլ արվեց[15]: 1815թ. մեծ երաշտի տարին Թեհրանի շեյխ-ուլ-իսլամը իր շուրջը հավաքեց մոլեռանդ ամբոխին և ասելով, որ երաշտի պատճառը հայերի բաց արած սրճարաններն ու գինետներն են, հարձակումներ

կազմակերպեց հայերի վրա. կողոպուտի մատնելով նրանց տներն ու խանութները, այրելով եկեղեցիները և այլն[16]: Հաճախ հայերին, ասորիներին, փարսերին ու հրեաներին հալածանքների ենթարկելու համար օգտագործում էին նաև քաղաքների ապաղասակարգայնացված տարրերին՝ «լոթիներին» (պարսկերեն «լութի») այս կամ այն անձին ունեզրկելու համար[17]: Լութիները ահավոր աղմուկ-աղաղակով հարձակվում էին այլադավանների թաղամասերի վրա, կողոպտում և այրում տները, սպանում նրանց բնակիչներին:

1848թ. հունիսի 4-ին Թավրիզի փողոցային տականքները և «բազարի» ամբոխը ահավոր գոռում-գոչումով և հայերի հասցեին սպառնալիքներով, որոնք իբր թե վիրավորել են ուղղադավան մահմեդականների կրոնական զգացմունքները, շարժվեցին հայկական թաղամասերը կործանելու համար: Դա XIX դարի կեսերին Իրանում հակաքրիստոնեական ամենախոշոր ելույթներից մեկն էր: Եղան նաև սպանվածներ: Գահաժառանգի արքունիքի ռազմական մինիստր Միրզա Թաղի խան Ամիր Նեզամը ստիպված էր ռազմական ուժով ճնշել այդ խռովությունը[18]: Հակահայկական մի նոր պայթյուն տեղի ունեցավ 1850թ. ապրիլին, դարձյալ Թավրիզում: Սկսեցին հնչել սպառնալիքներ բոլոր քրիստոնյաներին սպանելու մասին: Եղան հայերի բռնի մահմեդականացման դեպքեր:

Նմանատիպ հակահայկական ելույթներ տեղի էին ունենում նաև Իրանի այլ քաղաքներում: Այսպես, 1848-1849թ.թ. Սպահանում իշխանությունը հափշտակած ոմն Միրզա Աբդոլ Հոսեյին լոթիների ու ավազակախմբերի գլուխ անցած սկսեց ահաբեկել քաղաքի հայ բնակչությանը, կողոպտել հայ վաճառականներին և այլն: 1851թ. Թեհրանում լոթիները տակն ու վրա արեցին հայկական թաղամասը, որն ուղեկցվեց հայ բնակչության ջարդով[19]: 1828թ. մի մահմեդական Նոր Ջուղայում գինարբուքից հետո մահանում է: Անմիջապես հայերը մեղադրվում են նրա սպանության մեջ: Ստեղծվում է հայկական ջարդի սպառնալիք: Հայերը ստիպված են լինում Նոր Ջուղայի Ամենափրկչյան վանքին պատկանող Մշարբյուր կոչված գյուղը նվիրել «իմամջոմա դենպետին», որպեսզի նա դատական հետապնդման չենթարկի ջուղայեցիներին և ամբոխին չհրահրի հայերի դեմ[20]: 1890թ. Շիրազում հաջի Սեյյեդ Ալի Աքբար անունով մի մոլլա կոչ է անում քրիստոնյաներին վռնդել երկրից[21]:

Կարելի է բերել նս բազմաթիվ նման փաստեր: Պարսից շահերը աշխատում էին զսպել անսանձ տարրերին և պաշտպանել իրենց այլադավան հպատակներին: Այսպես, 1842թ. Ֆաթհ-Ալի շահը անձամբ բանակի գլուխ անցած մի ամբողջ ռազմական արշավանք կազմակերպեց դեպի Սպահան՝ հայ բնակչությանը հարստահարող ու նեղող այդ տարրերին պատժելու համար: Ձերբակալելով ավազակներին և անկարգությունների գլխավորներին, շահը հրամայում է չարաչար պատժել նրանց խեղդելով, գլխատելով, շղթայակապ ուղարկելով Թեհրան: Նա հրամա-

յում է խռովարար ավազակ հաջի Հաշիմի աչքերը հանել: Երբ վերջինս խոստանում է տասը հազար թուման ընծայել շահին, որ իրեն չկուրացնեն, Ֆաթհ-Ալի շահը պատասխանում է. «Հաջի Հաշիմ խան, ես քեզ սպանել կտայի, որ մեկ անգամ ընդմիշտ ազատվեիր աշխարհիս ցավերից... Բայց ավելի լավ է աչքերդ բրել տամ, որ մնացյալ օրերդ աշխարհի վրա վշտով, դառնությամբ և ապաշխարհությամբ անց կացնես և մեղքերդ քավես, որ էլ այն կյանքում դժոխքը չերթաս»:

Հայերին հովանավորելու քաղաքականություն էր վարում նաև Մուհամմադ շահը (1834-1848): Ընդառաջելով Նոր Ջուղայի թեմակալ առաջնորդ արքեպիսկոպոս Հովհաննեսի բողոքին, 1844թ. նա հրամայեց հայերին վերադարձնել նրանցից բռնագրավված եկեղեցին և պետական միջոցներով վերանորոգել այն[22]: s

XIXդ. երկրորդ կեսին, Նասը-էդ-Դին (1848-1896) և Մոզաֆֆարէդ-Դին (1896-1906) շահերի կառավարման շրջանում իրանահայության վիճակում տեղի ունեցան դրական առումով կարևոր փոփոխություններ: Իրանի այդ երկու տիրակալները աշխատում էին մղում տալ հայության գործարար և հոգևոր եռանդին ու ակտիվությանը: Երկիրը տնտեսական լճացման վիճակից դուրս բերելու, արհեստներն ու առևտուրը խթանելու նպատակով նրանք հրապարակեցին մի շարք ֆիրմաններ (հրամանագրեր), որոնցով վերջ էր տրվում հայերի նկատմամբ եղած մի շարք սահմանափակումներին, արգելվում էր նրանց բռնի հավատափոխությունը, կանոնավորվում էր հայ քաղաքային և գյուղական բնակչությանից գանձվող հարկահավաքման գործը, օրինականացվում էին հայ եկեղեցիների կալվածքները և այլն: Հայերին նորից վստահվեցին արքունի և պետական բարձր պաշտոններ: Մի խոսքով օրենսդրական կարգով հայերը վերցվեցին պետության հովանավորության տակ և ձեռք բերեցին «հավատարիմ ժողովրդի» կարգավիճակ: Նասր-էդ-Դին շահը հրապարակեց մի հրովարտակ, որտեղ ասվում էր, որ «հայերը լավ հպատակներ են, տերության հավատարիմ քաղաքացիներ»: Նա նաև միջոցներ տրամադրեց Նոր Ջուղայի հայկական դպրոցները վերանորոգելու համար, 1858թ. հրապարակեց հրամանագիր, որով պահպանվում էին նախկին շահերի կողմից Իրանի հայ համայնքին հատկացված իրավունքներն ու արտոնությունները, 1879թ. 100 հազար թուման հատկացրեց Նոր Ջուղայի հայոց Առաջնորդարանին, և այլն[23]:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հոգևորականության դիրքորոշման մեջ ևս դեպի հայերը տեղի ունեցավ որոշակի շրջադարձ: Հակառակ նրան, որ առհասարակ Իրանում բարձր շիիթական հոգևորականությունը բուռն պայքարի մեջ էր արքունիքի դեմ, որը ջանքեր էր գործադրում թուլացնելու կղերի տիրապետող ազդեցությունը, վերջինը հայության հանդեպ ցույց տված իր վերաբերմունքով կատարելապես համերաշխ էր ընթանում պալատի հետ: Այսինքն՝ նա էլ հովանավորում ու

պաշտպանում էր հայությանը, մինչդեռ պալատի դեմ մղած իր պայքարի մեջ նա կարող էր շահերի և կառավարության այդ քաղաքականությանը կրոնական գունավորում տալով՝ հատուկ մի զենք դարձնել իր համար, ինչպես դա անում էր, օրինակ. XIXդ. առաջին երեսնամյակին:

Բարձրագույն շիիթական հոգևորականության այս դիրքը նախ կարելի է բացատրել նրանով, որ նա իր իսկական իմաստով էր գործադրում Ղուրանի հրահանգները հարգանքով վերաբերվելու վերաբերյալ Սուրբ Գիրք («Քիթաբ») ունեցող ժողովուրդների նկատմամբ: Եվ երկրորդ, ամբոխից բարձր կանգնած, ավելի կրթված ու զարգացած շիիթական բարձր հեղինակությունները գնահատում էին հայության մատուցած ծառայությունները Իրանին և հաճախ չեզոքացնում նրա դեմ նյութված դավադրությունները ու հակահայ շարժումները և դրանով իսկ համեմատաբար դրացիական խաղաղ մթնոլորտ ստեղծում հայերի ու պարսիկների միջև: Հատկանշական է, որ այդ երևույթը բնորոշ է նաև Ատրպատականում:

Ճշմարիտ է նաև, որ հայ և իրանական ժողովուրդների միջև մերձեցման պայմաններ էր ստեղծում նաև հայությունը, իր վերին աստիճանի օրինապահ ընթացքով և գնահատելի ծառայություններով երկրի տնտեսական, կրթական-մշակութային և քաղաքական մարզերում:

Միաժամանակ տեղին է նշել, որ իրենց հերթին հայերը անդադրում կերպով պայքարում էին իրենց իրավունքների համար, ջանալով գեթ ինչ-որ չափով կրճատել իրենց համար սահմանված սահմանափակումները: Օրինակ, Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Գևորգ եպիսկոպոսը 1855թ. հուլիսի 27-ին Նասր-էդ-Դին շահին ներկայացնում է մի բողոքագիր՝ իրանահայ համայնքների ծանր դրության մասին, առաջարկելով մի շարք միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են կիրառել իրանահայ գաղթօջախները անկումից դուրս բերելու համար: Մասնավորապես նա խնդրում էր վերացնել «Իմամ Ջաֆար»-ի օրենքը, ըստ որի հավատափոխ հայը դառնում էր քրիստոնյա հարազատների ունեցվածքի միակ ժառանգորդը, արգելել հայերի հավատափոխությունը, վերջ տալ կալվածատերերի բռնություններին ու անօրինականություններին հայ գյուղացիության նկատմամբ, արգելել մահմեդականների կողմից հայ աղջիկների փախցնելը և առևանգողներին պատժել, սիրով վարվել հպատակ հայերի հետ, արգելել անզավակ հայ մարդկանց գույքի գրավումը, թույլ տալ, որ հայ եկեղեցիները զանգակ հնչեցնեն, օրինականացնել հայ եկեղեցիների կալվածքները, թույլ չտալ ամերիկյան միսիոներներին քարոզչությամբ զբաղվելու Իրանում, օգնել Թավրիզի հայկական դպրոցին 250 թուման նպաստով և այլն[24] :

Շահն ընդառաջել է Գևորգ եպիսկոպոսի խնդրանքին և խոստացել բավարարելու նրա առաջադրած բոլոր պահանջները, բացառությամբ մեկի, եկեղեցիների զանգահարության թույլտվություն տալը, մտա-

վախություն ունենալով, որ մոլեռանդ ամբոխը կարող է գրգռվել հայերի դեմ[25]:

Իրանահայության դրությունը բարելավելու նպատակով Նասր-էդ-Դին շահին է դիմել նաև Նոր Ջուղայի թեմի առաջնորդ Թադեոս վարդապետ Բեկնազարյանը (1851-1863): Նա կարողացել է համոզել արքունիքին, որ պարսկահայերը ազատվեն զորակոչից, նվազեցվեն Նոր Ջուղայի և Փերիայի հայ բնակչության հարկերը, վերջ տրվեն պարսկական տեղական իշխանությունների շահատակություններին, որոնք «կանոնավորյալ» տուրքերից բացի շորթում էին նաև «տուրս զանկանոնատրելս», այսինքն սահմանված հարկերից ավելին[26]: Իրանական արքունիքը ընդառաջ է գնացել այդ խնդրանքներին:

XIX դ. 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում սուլթան Աբդուլ Համիդի կողմից կազմակերպած հայերի զանգվածային ջարդերի ժամանակ, իրանական կառավարությունը անարգել թույլատրում էր հայ փախստականներին անցնելու իրանական սահմանը և ապաստան գտնելու Իրանի հյուրընկալ հողում: Թեև դա թուրքական և իրանական իշխանությունների միջև տեղիք էր տալիս սուր քաղաքական վեճերի ու առճակատման և թուրքերը նույնիսկ սահմանային մի քանի կետերում կենտրոնացրին զորքեր Իրանի տարածքը ներխուժելու սպառնալիքով, բայց դա հետ չկանգնեցրեց իրանական կառավարությանը, որը թուրքերին պատասխանեց իրանա-թուրքական սահմանների մոտ խոշոր ռազմական ուժեր կենտրոնացնելով: Պարսիկ պատմաբան Խոսրով Չաքերին իրավացիորեն նշում է, որ Իրանում այդ ժամանակ պետությունը հովանավորում ու պաշտպանում էր հայերին նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք Իրանի տարածքն օգտագործելով «հայդուկային պատերազմ էին մղում թուրքերի դեմ»[27]:

Պատահական չէ, որ 1900 թ. թվով 20 լոնդոնաբնակ իրանահայեր Մոզաֆֆար-էդ-Դին շահի անունով գրում են մի նամակ, որտեղ իրենց երախտագիտությունն ու շնորհակալությունն էին հայտնում իրանական կառավարության կողմից հայության նկատմամբ ցուցաբերած համակիր դիրքորոշման և առհասարակ իրանահայ համայնքի նկատմամբ հովանավորողական քաղաքականություն վարելու համար[28]:

XIXդ. երկրորդ կեսին իրանական կառավարության հայանպաստ քաղաքականության խոսուն վկայությունը կարող է հանդիսանալ նաև Իրանի հայ բնակչության արագ աճը: Եթե XIX դ. 50-60-ական թվականներին Իրանում կար շուրջ 20 հազար հայ բնակիչ, ապա 1890 թ. այն արդեն կազմում էր 80 հազար[29]:

XIXդ. սկզբին իրանահայերի հոգևոր-հասարակական կյանքը կենտրոնացված էր երկու թեմերում՝ Ատրպատականի (կենտրոնը Ս. Թադեոսի կամ Թադեի վանքը, որտեղ հաստատված էր Ատրպատականի թեմակալի աթոռանիստը): 1833 թվականից Ատրպատականի թեմի

կենտրոնը փոխադրվում է Թավրիզ (դա իրագործվել է Սահակ եպիսկոպոս Սաքունյանի օրոք):

Մյուս թեմը դա Իրանա-Հնդկաստանի թեմն էր Նոր Ջուղա կենտրոնավ: Այն ընդգրկում էր նաև Հնդկաստանում, Աֆղանստանում և Հեռավոր Արևելքում գտնվող հայկական գաղթօջախները: Հարկ է նշել, որ եթե հյուսիսային իրանահայությունը գտնվում էր ռուսական, ֆրանսիական, մասամբ նաև գերմանական մշակութային ազդեցության ներքո, ապա հարավային իրահայությունը բացառապես անգլիական[30]:

Իրանի հայ համայնքի ինքնավարության մարմինները են հանդիսացել թեմական առաջնորդները: Հայկական թեմերը ենթարկվում էին Էջմիածնի կաթողիկոսին (մինչև 1828թ. Էջմիածինը գտնվում էր ղաջարների իշխանության ներքո): Ճիշտ է, ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո Էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսությունը այլևս նախկինի պես չէր կարող անմիջականորեն զբաղվել Իրանի հայ համայնքի գործերով, սակայն դրանով հանդերձ, իրանական իշխանությունները հարգանքով էին վերաբերվում Էջմիածնի նկատմամբ և ընդունում էին նրա հոգևոր իշխանությունը Իրանի հայ գաղութի նկատմամբ: Վերջինս իր դատաիրավական հարցերը լուծում էր հայ Առաքելական եկեղեցու իրավական նորմերի և Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հիման վրա: Հոգևոր առաջնորդը իրավունք ուներ դատել համայնքի անդամներին, պատժել կրոնազանցներին (բայց ոչ մահմեդականություն ընդունածներին): Ամուսնական, ամուսնալուծական, ժառանգական և կրոնական խնդիրների լուծման իրավասությունը ևս պատկանում էր Հայոց Առաջնորդարանին:

Հայ համայնքները Իրանի բոլոր վայրերում լայն ազատություն ունեին հիմնելու իրենց կրթական և մշակութային հիմնարկությունները, մշակելու իրենց դպրոցների ծրագրերը, կազմելու ներքին կանոնադրությունները և այլն: Ազատ էին մշակութային ամեն կարգի ձեռնարկներ իրագործելու: Դպրոցներում դասավանդումը ամբողջովին հայերեն էր: Հայկական ազգային դպրոցներին իրավական երաշխիք էր տրված շահերի մի քանի ֆիրմաններով: Հայերի իրավական դրությունը ապահովված էր ոչ միայն շահական հրովարտակներով, այլև ավանդությունների ու սովորությունների ուժով:

Հայ համայնքներից յուրաքանչյուրը կարողանում էր նաև այն չափով օգտվել իր առանձնաշնորհումներից, որ չափով որ ուժեղ, վճռական ու գործունյա էր լինում իր թեմակալ առջնորդը, փոխանորդ վարդապետը, կամ հայության ներկայացուցիչ հանդիսացող մարմինը: Օրինակ, Ատրպատականի թեմակալ Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարյանի ժամանակ (1886-1892) այդ աթոռի ղեկավարը տեղական հայ կյանքի կատարյալ իշխանություն էր հանդիսանում: Վճռական ու կորովի այդ առաջնորդի օրոք պետական իշխանությունները ու մասնավորապես

«քարգզարները»[31] ստիպված էին հայ բնակչության գործերի վարումը թողնել «խալիֆեին» (թեմակալ առաջնորդին Վ.Բ.): Ստեփաննոս եպիսկոպոսի «թեմակալության օրոք Թավրիզի առաջնորդարանը հանդիսանում էր հար և նման օտար հյուպատոսություններին: Իսկ «խալիֆեն» էլ տեղական իշխանությունների կողմից ընդունվում էր օտար հյուպատոսներին հավասար աստիճանով, հարգանքով ու իրավունքներով»[32]: Առաջնորդարանում էին դատում ոչ միայն վեճ ու տարաձայնություն ունեցող հայ համայնքի անդամներին, այլև նույն վայրում էին վճռահատվում հայերի ու օտարազգիների միջև եղած դատերի մեծ մասը[33]:

Ստեփաննոս եպիսկոպոսը իր պաշտոնավարության ամբողջ շրջանում մոտիկ հարաբերությունների մեջ է եղել Ատրպատականի նահանգապետերի ու պետական բարձր պաշտոնեության հետ: Նրանք հաճախ այցելություններ են ավել հայոց «խալիֆեին» և անթերի կատարել նրա բոլոր առաջարկները: Նրան հաջողվել է նույնպիսի հարգալից դիրք ստեղծել իր համար նաև կենտրոնական կառավարության մոտ: Եվ այնքան հեղինակավոր դիրքը, որ տեղական պաշտոնյաներից ոմանք նրա միջնորդությանն են դիմելիս եղել, որպեսզի վկայի կենտրոնական կառավարության մոտ: Եվ այնքան հեղինակավոր դիրք, որ տեղական պաշսանյաննիրից ոմանք նրա միջնորդությանն են դիմելիս եղել, որպեսի վկայի կենտրոնական կառավարության մոտ իրենց՝ պարտաճանաչ պաշտոնյա լինելու մասին:

Խորհրդային շրջանում գիտության մեջ զարգացվում էր իրականությանը չհամապատասխանող և այն թյուր տեսակետը, որ իբր եվրոպական պետությունները և արևմտյան կապիտալը կասեցրել են Իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումը: Մինչդեռ ընդհակառակը, դրանք նպաստել են Իրանի առաջընթացին: Եվրոպական կապիտալը մղում հաղորդեց իրանական կապիտալիզմի զարգացմանը: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեցավ նաև եվրոպական պետությունների քաղաքական և մշակութային ներգործության գործոնը: Այդ ազդեցության ներքո Իրանում սկսեց ձևավորվել ոչ միայն կապիտալիստական կացութաձևը, այլև երկիրը թևակոխեց իր «արևմտականացման» («վեստերնիզացման») ուղին:

Հավասարապես գիտնականների ուշադրությունից դուրս է մնացել նաև այն հսկայական դերը, որ խաղացել են հայերը Իրանի տնտեսական, քաղաքական և մշակութային առաջընթացի գործում: Այդ առթիվ Խոսրով Չաքերին առաջ է քաշում մի ուշագրավ թեզ, որը նա ձևակերպում է հետևյալ կերպ. «Փոքրամասնությունների պաքողաքսային դերը տիրապետող մշակույթի մեջ»: Տվյալ դեպքում նա նկատի ունի այն իրողությունը, որ հայերը թեև մահմեդական բնակչության ծովում կազմում էին չնչին փոքրամասնություն, սակայն չնայած դրան, անչափ մեծ ավանդ, դերակատարություն ու ներդրում են ունեցել Իրանի հասարա-

կական զարգացման, մշակութային առաջընթացի և առհասարակ ինտելեկտուալ ու քաղաքական կյանքի բնագավառում: Առաջին հայացքից հենց այդ անհասկանալի երևույթը պարսիկ հեաազոտողը անվանում է արտառոց ու պարադոքսային: Սակայն ընդհանուր գծերով հենց ինքն էլ ցույց է տալիս, որ դրա մեջ ոչ մի պարադոքսային բան չկա, որ իսկապես բացառիկ մեծ է հայերի դերը Իրանում ժամանակակից եվրոպական քաղաքական ու սոցիալական գաղափարների ու դոկտրինների տարածման, եվրոպական քաղաքակրթության ձեռքբերումները և տեխնոլոգիական նվաճումները Իրանի հողում արմատավորվելու, գիտությունը ու մշակույթը զարգացնելու, իրանական քաղաքական կուլտուրայի ձևավորմանը նպաստելու գործում և այլն: Չաքերին գտնում է, որ իրանահայության ներգրավվածության մասշտաբները Իրանի քաղաքական կյանքում ուղղակի զարմանք են առաջացնում: Ընդորում անկախ նրանից, թե այդ հայերը ծնվել են բուն Իրանում, թե նրա սահմաններից դուրս:

Չաքերին նաև վճռականորեն մերժում է ավանդապաշտ գաղափարներով տարված իրանցիների, իր իսկ արտահայտությամբ «պարսկա-իսլամական մտավորականության» այն տեսակետը, որ քրիստոնյաները երբեք չեն կարող լինել իսկական իրանցիներ, որ իբր նրանք հանդիսանում են մի տեսակ արտերկրացի խորթ տարր (quasi-foreign element) իրանական հասարակության մեջ:Նա հանգում է այն եզրակացության, որ իրանահայերի քաղաքական ակտիվության կարևորագույն շարժառիթը այն էր, որ նրանք հայրենասիրական կապվածությամբ (patriotic attachment) կապված են եղել այն երկրի հետ, որ նրանք համարել են իրենց հայրենի տունը կամ երկրորդ հայրենիքը (considered their own)[34]:

Չաքերիի խմբագրությամբ հրատարակված այդ նույն գրքում Գ-Լորգ Բոնոթյանը զետեղել է «Հայերը XIX դարում Իրանում» վերատառությամբ ուշագրավ հոդվածը, որտեղ նա շեշտադրում է հետևյալ հանգամանքը. հայերը Ռուսաստանում քաղաքականապես ու տնտեսապես նշանակալից չափով առաջ շարժվեցին Ալեքսանդր Բ-ի (1855-1881) կառավարման տարիներին, մինչդեռ իրանահայությունը արձանագրում էր հաջողություններ ողջ XIX դարի ընթացքում: Սակայն նա անում է վերապահում, նշելով, որ լինելով այլադավան-քրիստոնյաներ մահմեդական հասարակութան մեջ, հայերը ստաջ էին շարժվում ավելի դանդաղ:

Ուշագրավ դիտում է կատարել նաև ռուս հետազոտող Ն.Կուզնեցովան: Նա գրում է, որ Իրանում մահմեդական բնակչության ճնշող մեծամասնության անգրագիտության պայմաններում, հայերի շրջանում գրագետների թիվը կազմում էր 70 տոկոս[35]:

Այն հանգամանքը, որ իրանահայությունը հանդես է եկել որպես իր միջավայրի քաղաքակրթության զարգացմանը նպաստող ուժ, ինչ-

պես տեսնում ենք, ապացուցման կարիք չունի: Սակայն արժե թեկուզ թռուցիկ ձևով անդրադառնալ այդ հարցին, բերելով կոնկրետ տվյալներ:

Դեռևս 1833թ. մադյասաբնակ Նոր Ջուղայեցի Գրիգոր Սամյանի կտակած գումարով Նոր Ջուղայում բացվել է մի դպրոց, որտեղ երկու տարի դասավանդել է Մեսրոպ Թաղիադյանը: 1843թ. կալկաթաբնակ Հարություն Աբգարյանը դարձյալ Նոր Ջուղայում հիմնել է մի դպրոց՝ «Հայկական հայրենասիրական» անունով, որը գործել է 40 տարի: 1853թ. Բաթուայից երկու քույրեր՝ Մարիամ Հարությունյան և Թագուհի Մանուկյան, Նոր Ջուղայի Դավրեժ թաղում բաց են անում մի դպրոց, որը գործել է 30 տարի շարունակ:

1845թ. Նոր Ջուղայում բացվել է գաղթօջախում առաջին իգական կամ օրիորդաց դպրոցը: Այն կառուցված էր Կատարինյան վանքին կից, ճավացի հայտնի վաճառական Մ. Հովդանանյանի նյութական աջակցությամբ: 1829թ. այն միացվեց տղաների դպրոցների հետ և կազմվեց կրթական մեկ հաստատություն՝ «Նոր Ջուղայի Ազգային երկսեռ դպրոցներ» անունով: 1880թ. Ճավայից, Բիրմայից և Հնդկաստանից հանգանակած միջոցներով Նոր Ջուղայում կառուցվում է դպրոցական մի խոշոր շենք և 1883թ. այնտեղ կենտրոնացվում է տեղի մանր երեք դպրոցներ՝ անվանելով այն «Ազգային կենտրոնական դպրոց»: Նոր Ջուղայում դպրոցներ են ունեցել նաև հայ կաթոլիկները և հայ բողոքականները:

Ատրպատականում առաջին հայկական դպրոցը հիմնադրվել է 1835թ. Թավրիզում, որը հայտնի է «Արամյան» անունով: Այս դպրոցում երկու տարի պաշտոնավարել է Մեսրոպ Թաղիադյանը: Ավելի ուշ՝ 1890-1891թ.թ. այնտեղ դասավանդել է նաև Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության հիմնադիրներից Ռոստոմը, իսկ ապա Նիկոլ Դումանը և ժամանակի այլ հայտնի մտավորականներ:

XIX դ. 50-ական թվականներին Ատրպատականի թեմական առաջնորդ էր Սահակ եպիսկոպոս Սաթունյանը՝ գործունյա, եռանդուն, նախաձեռնության ու շինարարական ոգով օժտված այդ եպիսկոպոսը, որը «Արամյան» դպրոցի նոր շենքում մտցնում է եվրոպական կարգեր:

Այդ շրջանի ուսուցիչների թվում աչքի է ընկնում Մեսրովբ քահանա Փափազյանը (գրող Վրթանես Փափազյանի հայրը), որը Թավրիզի կրթա-մշակութային կյանքում վերին աստիճանի գնահատելի գործունեություն է ծավալում: Նա Թավրիզում դնում է նաև թատրոնի հիմքը և կազմակերպում ներկայացումներ:

Թավրիզի առաջին իգական դպրոցը հիմնադրվել է 1879թ.: Մի վկայության համաձայն, օրիորդաց դպրոց հիմնելու միտքը արծարծել է Րաֆֆին «Արամյան» դպրոցում ուսուցիչ եղած ժամանակ: Սակայն հետադեմ պահպանողականները դիմադրում են և արգելք հանդիսանում օրիորդաց դպրոցի գործունեությանը: Ուստի օրիորդաց դպրոցի պաշտոնական բացումը կատարվում է 1887թ., «Արամյան» դպրոցին կից մի

շենքում, որը Աննա Թումանյանի հիշատակին այդ նպատակով նվիրել էին Թումանյան եղբայրները:

1870թ. Թավրիզի Լիլավա թաղում բացվում է նաև տղայոց մի դպրոց «Հայկազյան» անունով: Մի քանի տարուց հետո Թավրիզի Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում բացվում է օրիորդաց մի նոր դպրոց «Թամարյան» անունով:

«Արամյան» դպրոցն ունեցել է նաև թատերասրահ, որտեղ կազմակերպվել են թատերական ներկայացումներ, դպրոցական ու ազգային հանդեսներ, հասարակական ընդհանուր ժողովներ և այլն: Այդ թատերասրահը կնքվել է «Արամեան թատրոն» անունով: Եղել է նաև «Արամեան գրադարան-ընթերցարան»:

Թավրիզում «Լսարանական» ընկերությունը կազմակերպում էր ազգային, մշակութային և ընկերային հարցերի շուրջ հրապարակային դասախոսություններ:

Արդեն XIXդ. վերջին Թավրիզը իր մշակութային-կրթական և հասարակական-տնտեսական կյանքով մեծաքայլ առաջ է անցնում Նոր Ջուղայից, որն աստիճանաբար թուլանում էր և ամփոփվում իր մեջ:

Թեհրանում անդրանիկ հայ դպրոցը բացվել է 1870թ.: Այն կոչվում էր «Հայկազեան» և գտնվում էր Դարվազե Ղազվին թաղում, ուր խմբված է եղել փոքրաթիվ հայությունը, Սուրբ Գևորգ անունով եկեղեցու շրջափակում: «Հայկազեան» դպրոցը իր տեսակի մեջ առաջինն է լինում Թեհրանում այն առումով, որ նա եվրոպական տիպի էր: Նասր-էդ-Դին շահը տարեկան երկու հարյուր թուման նպաստ էր հատկացնում այդ դպրոցին: Այն իր վրա էր հրավիրում ոչ միայն պարսկական կառավարության, այլև օտար դեսպանների, Թեհրանում եվրոպական գաղութի և առհասարակ հանրության ուշադրությունը: Այս դպրոցից հետո են բացվում ամերիկյան և ֆրանսիական միսիոներական դպրոցները և հազիվ կես դար հետո պարսկական նոր ձևի դպրոցները:

1871թ. Թեհրանում ստեղծվում է «Հայուհիների ընկերություն»՝ աղջիկների դպրոց բաց անելու նպատակով: Հենց նույն տարեշրջանում Թեհրանի արվարձան Վանագ հայկական գյուղում հիմնվում է աղջկանց դպրոց, որը նույնպես առաջինն է լինում իր տեսակի մեջ: Սակայն այն կարճ կյանք է ունենում, քանի որ ժամանակի մտայնությունը չէր հանդուրժում այդպիսի դպրոցների գոյությունը: Թեհրանում իգական դպրոց վերստին հիմնվում է 1891-1892թ.թ.: 1891թ. Թեհրանի Դարվազե Ղազվին թաղում բացվում է «Ազգային դպրոց»:

Ուսումնական գործը հետ չէր մնում նաև գավառներում, ուր սկսած XIXդ. վերջից բացվեցին տասնյակ դպրոցներ: 70-ական թվականներին արդեն դպրոցներ կային Սալմաստի Հաֆթվան, Փայաջուկ, Ղալասար գյուղերում: Դարի վերջին և XXդ. սկզբին դպրոցներ բացվեցին Մարաղայում, Ուրմիայի, Մակուի, և Ղարադաղի մի քանի գյուղե-

րում, Համադանում, Ղազվինում, Միշհեդում. Սուլթանաբադում. Ռաշտում, Էնզելիում և այլուր:

Իրանի հայկական դպրոցները իրենց վրա կրում էին Կովկասի կրթական կենտրոնների ազդեցությունը: Հայկական դպրոցների օրինակին հետևելով, պարսկական առաջին եվրոպական տիպի դպրոցը հիմնվում է Թավրիզում 1888թ.: Սակայն տգետ ամբոխը հարձակվում է դպրոցի վրա և ավերում շենքը: Ուստի նոր տիպի (եվրոպական) դպրոցներ Իրանում բացվում են միայն 1898 թվականից:

XIXդ. երկրորդ կեսին հայերի կողմից բացվում են նաև առաջին գրադարանները: 1847թ. Թավրիզի մի խումբ մտավորականների ջանքերով և դրսի հայերի օժանդակությամբ հիմնադրվում է Իրանում առաջին հայկական գրադարան- ընթերցարանը: Այնուհետև իրար հետևից գրադարաններ բացվեցին Նոր Ջուղայում, Ռաշտում, Թեհրանում և այլ քաղաքներում:

XIXդ. 70-80-ական թվականներին Թավրիզում, Թեհրանում և Նոր Ջուղայում սկսում է ձևավորվել նաև հայ թատերական կյանքը: 1881թ. Թեհրանում կազմակերպվել է «Թատերասիրաց ընկերությունը»: Կովկասից, Պոլսից և այլ վայրերից հաճախակի Իրան են այցելել հայ թատերախմբեր: Թավրիզի հայոց դպրոցի տեսուչ-ուսուցիչ Մեսրոպ քահանա Փափազյանը մի խումբ սիրողների մասնակցությամբ. մասնավոր տներում ներկայացումներ է տալիս «ժողովրդի մտավոր զարգացմանն աջակցելու նպատակով»: XIXդ. վերջին քառորդին Թավրիզում բեմադրվում է նույնիսկ Շեքսպիրի թատերկներից: Թավրիզի և Թեհրանի դպրոցների սրահներում, հայ սիրողների կողմից բեմադրվում են թուրքերենի և ֆրանսերենի թարգմանված թատերկներ՝ թագաժառանգի և բարձր պաշտոնեության համար[38]: Հայ սիրողները ներկայացումներ էին կազմակերպում նաև պալատականների համար: Այսպիսով հայ սիրողների կողմից դրվում է նաև պարսկական թատրոնի հիմքը, որը մինչ այդ ներկայանում էր «թաքիաների» միջոցով:

XVII դ. վերջին Նոր Ջուղայի տպարանը իր տպագրական գործունեությունը դադարեցնելուց հետո, շուրջ երկու դար իրանահայ տպագրությունը լռում է: Պարսկահայ տպագրությունը վերստին վերակենդանանում է 1844 թվականից սկսած, երբ Նոր Ջուղայի Ս. Կատարինյան օրիորդաց դպրոցի հիմնադիր, Ճավայում վերաբնակված Մանուկ Հորդանանյանը տպագրական մի սարք է ուղարկում իր ծննդավայրը՝ Նոր Ջուղա: Շուրջ երեսուն տարի անգործ մնալուց հետո, 1872-1873թ.թ. տպարանը սկսում է տպագրել գրքեր: 1880-ական թվականներին հայկական տպարաններ են բացվում նաև Ռաշտում, Թավրիզում, Թեհրանում և այլուր:

XIXդ. վերջին և XXդ. սկզբին ծնունդ առան իրանահայ պարբերականները: Թեհրանում, Թավրիզում ու Նոր Ջուղայում հրատարակվե-

ցին մի շարք թերթեր: 1894 թվականից Թեհրանում սկսեց հրատարակվել «Շավիղ» շաբաթաթերթը: Սկզբում այն հրատարակվում է Հովհաննես Սասեհյանի խմբագրությամբ, հետո նրան փոխարինում է գրող Վրթանես Փափազյանը: «Շավիղը» դադարում է 1896թ., սակայն մեկ տարի հետո սկսում է լույս տեսնել «Աստղ Արևելյան» շաբաթաթերթը:

Իրանի մշակութային կյանքում հայության խաղացած ակնառու դերը հիմք է տվել այդ երկիրն այցելած եվրոպացիներին հայերին անվանել «Արևելյան քաղաքակրթության ջահակիրներ»:

Մեծ է իրանահայության դերը նաև Իրանի ներքին և արտաքին առևտրի մեջ: Դարերի ընթացքում իրանահայ վաճառականները առաջատար դիրքեր են ունեցել Իրանի միջազգային առևտրում[39]: Երբ Իրանը երկու ռուս-իրանական պատերազմների հետևանքով հայտնվեց համաշխարհային շուկայի շրջապտույտի մեջ, ձեռնարկատիրությամբ ու առևտրով զբաղվող իրանահայերը, Խոսրով Չաքերիի արտահայտությամբ «լավ պաշտպանված էին» (Weel entrenched) ղաջարական պետության կողմից: Իսլամը, Ղուրանը խրախուսում են առևտրով զբաղվելը, գործունեության այդ բնագավառը համարելով պատվավոր: Ղաջարները ավանդաբար իրենց պարտականությունն էին համարում առևտրի ծաղկմանը նպաստելը: Վաճառականները Իրանում պատկանում էին հասարակության արտոնյալ մասին: Նրանք հարգված մարդիկ էին (հատկապես առևտրական գիլդիաների գլխավորները՝ «թաջերբաշիները», «մալեք օթ-թուջարները»), իսկ երբեմն դառնում էին իրենց քաղաքների, նահանգների, նույնիսկ ողջ պետության մեջ քաղաքական աչքի ընկնող դեմքեր[40]:

XIX դարում առևտրական կապիտալը սկսել էր ավելի նշանակալից դեր խաղալ Իրանի տնտեսական ու քաղաքական կյանքում:

XIXդ. կեսերին հայ վաճառականների բաժինը իրանական արտահանման մեջ կազմում էր 30-35 տոկոս, իսկ ներմուծման մեջ 30-60 տոկոս: Երկրի հյուսիսային շրջաններում նրանք համարյա մենաշնորհացրել էին մեծածախ առևտուրը, իրենց ձեռքերում կենտրոնացնելով արևմտաեվրոպական և հնդկական ապրանքների առևտուրը: XIXդ. սզբներից հայ վաճառականները եռանդուն առևտրական գործունեություն էին ծավալել Իրանի համարյա բոլոր քաղաքային կենտրոններում[41]: Իրանահպատակ հայ վաճառականներից բացի Իրանում առևտուր էին անում նաև հայ վաճառականներ Ռուսաստանից, Արևմտյան Եվրոպայից, Օսմանյան կայսրությունից, Հնդկաստանից և այլ երկրներից:

Իրանում հայ վաճառականները իրենց անձի և գույքի ապահովության նպատակով աշխատում էին Թեհրանի արքունիքում ձեռք բերել հովանավոր: Նկատի ունենալով շիիթական հոգևորականության մեծ ազդեցությունը, շատերը գերադասում էին հովանավոր ձեռք բերել ազդեցիկ մուջթեհիդների և ուլեմների շրջանում: Ի դեպ, այդ ժամանակներում

հոգևոր դեմքերի աջակցությանն էին դիմում նաև անգլիական վաճառականներն ու դիվանագետները:

Առհասարակ Իրանում հայերի նյութական ու սոցիալական վիճակը ավելի բարվոք էր, քան մյուս կրոնական փոքրամասնություններինը: Իսկ հայ վաճառականները շարժում էին մահմեդական բնակչության նախանձը[42]:

XIXդ. երկրորդ կեսից հայ բուրժուազիան ամուր դիրքեր էր նվաճել ոչ միայն Իրանի ներքին և արտաքին առևտրի, այլև ֆինանսների բնագավառում և արդյունաբերության մեջ[43]:

Հայ վաճառականները, արդյունաբերողները, ֆինանսական գործիչները և այլն իրենց երեխաներին ուղարկում էին եվրոպական երկրներ բարձրագույն կրթություն ստանալու: Հենց նրանք էլ նպաստում էին, որ եվրոպական առևտրական, բանկային և տրանսպորտային ընկերությունները ներգրավվեն Իրանի արտաքին առևտրի և տնտեսության մեջ: Ընդորում նրանք Եվրոպայից իրենց հետ Իրան էին բերում ոչ միայն գիտելիքներ, այլև եվրոպական առաջավոր գաղափարներ:

Չափազանց մեծ է եղել հայերի դերը նաև Իրանի արհեստագործության մեջ: Հայ արհեստավորները, հատկապես ոսկերիչները, մետաղի մշակմամբ զբաղվողները, «զառնշանչիները» (երկաթի և պողպատի վրա դրվագներ գրող կամ քանդակող վարպետներ), քարտաշները և այլն փառանքանված էին Իրանում: Իրանում առաջին լուսանկարիչները ևս եղել են հայեր[44]:

Հայերը Իրան էին ներմուծում նաև եվրոպական նկարչության և կերպարվեստի ոճն ու նորույթները: Նկարիչ Հակոբ Հովնաթանյանը նկարել էր Նասր-էդ-Դին և Մոզաֆֆար-էդ-Դին շահերի դիմանկարները[45]: Հայերը իրենց խոշոր ներդրումն ունեն նաև Իրանի շինարարական-ճարտարապետական վերելքին, արվեստների զարգացմանը և այլն:

Հայությունը նպաստել է նաև Իրանի բնակչության քաղաքական արթնացմանը, քաղաքական-ընկերային կյանքի բարեփոխմանը և այլն: Տոգորված լինելով իրենց ծննդավայրի վերածննդի գաղափարներով, իրանահայերը ամբողջովին նվիրվել են այդ նպատակի իրագործմանը, ուղիներ հարթելով երկրի վերելքի առաջ:

Իրանահայ խոշոր բարենորոգչական գործիչ էր միրզա Մելքոմ խանը (Մելքումյան Հովսեփ Հակոբի): Նա միաժամանակ իրանական պետական գործիչ էր, դիվանագետ, լուսավորիչ, հրապարակախոս, գրող[46]: Եղել է Իրանի արտակարգ և լիազոր դեսպանը Մեծ Բրիտանիայում, Վիեննայում և Բեռլինում, Իրանի դեսպանորդը Հռոմում: Արդեն XIXդ. 50-ական թ.թ. սկսվում է Մելքոմ խանի լուսավորչական գործունեությունը: Նա հանդիսացել է Իրանում մշակութային-լուսավորչական շարժման առավել արմատական թևի ներկայացուցիչը: Մելքոմ խանի պատմական ծառայությունը կայանում է նրանում, որ նա որպես Իրանի

առաջին լուսավորիչ, դաստիարակեց այդ երկրի առաջադիմական զարգացման համար պայքարող մի ամբողջ սերունդ: 1890-1893թ.թ. Լոնդոնում Մելքոմ խանը տպագրել է պարսկերեն լեզվով «Ղանուն» («Օրենք») թերթը, որը կարևոր դեր է խաղացել իրանական հասարակության զարթոնքի գործում:

Մելքոմ խանը նաև պարսկական նոր գրականության հիմնադիրներից է: Հիմք է դրել սոցիալական դրամատուրգիային: Բազմաթիվ գրական-գեղարվեստական գործերի հեղինակ է:

Իր գրական երկերում և հրապարակախոսական գործերում նա առաջ է մղում այն գաղափարը, որ անհրաժեշտ է Իրանում արմատավորել ժողովրդապետության սկզբունքների վրա խարսխված սահմանադրություն: Իրանական մտավորականությունը և առաջադեմ քաղաքական գործիչները նրան մեծարել են անվանելով «Իրանի սահմանադրության սերմնացան», «սահմանադրական գաղափարի դրոշակակիր», «Իրանի լուսավորիչ», «ազատության շարժման առաջնորդ», «քաղաքակրթության տարածման Ռահվիրա» և այլն: Իրանական պատմագրության մեջ արտահայտվել է այն կարծիքը, որ «Մելքոմ խանի դերը Իրանում նույնն է, ինչ Վոլտերի, Ժան Ժակ Ռուսսոյի և Վիկտոր Հյուգոյի դերը ֆրանսիական ժողովրդի մոտ»:

Մելքոմ խանը նաև Արևելքի երկրների պատմության, տնտեսության ու մշակույթի փայլուն գիտակ էր: Նրա այդ վաստակը նկատի ունենալով Փարիզում նրան ընտրել են Ֆրանսիական Արևելյան ընկերության անդամ:

Ի դեպ, Մելքոմ խանը 1878թ. որպես Իրանի ներկայացուցիչ մասնակցել է Բեռլինի կոնգրեսին, իր վրա դրված պարտականությունները կատարելով մեծ հմտությամբ: Նա կարողացել է հաստատել Իրանի բացարձակ իրավունքները սահմանամերձ Ղոթուրի շրջանի նկատմամբ, որը բռնազավթվել էր Օսմանյան կայսրության կողմից: Թուրքերը ստիպված էին հեռանալ այդ շրջանից և Ղոթուրը վերստին միացավ Իրանին: Այդ ծառայության համար շահը Մելքոմ խանին շնորհեց «Նազիմ-էդ-Դոուլե» («Պետության մեծ դեսպան») և «Ջանաբ-ե Աշրաֆ» բարձր տիտղոսները, իսկ ապա, նաև «Շահզադե մոլհի» («Բարեփոխիչ իշխանազուն») կոչումը:

Բեռլինի կոնգրեսի ժամանակ Մելքոմ խանը սերտ առնչություններ է ունեցել «Հայոց ազգային պատվիրակության» ղեկավար Պողոս Նուբարի և Խրիմյան Հայրիկի պատվիրակության հետ, նրանց տալով օգտակար խորհուրդներ:

XIX դարում Իրանում իր պետական, հասարակական-քաղաքական, գրական և դիվանագիտական գործունեությունը ծավալել է նաև Հովհաննես Մասեհյանը (խան-Մասեհյան)[47]: Եվրոպայում ստանալով փայլուն կրթություն, նա վերադառնում է Իրան և անմիջապես հրավիր-

վում պետական պաշտոնի, նշանակվելով շահի պալատական թարգմանիչ: Եվրոպական և արևելյան մի քանի լեզուների նրբին և փայլուն իմացությունը (տիրապետել է ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, հունարեն, պարսկերեն և թուրքերեն լեզուներին), ինչպես նաև խորը գիտելիքներն ու լայն աշխարհայացքը արքունիքում նրա համար ստեղծում են մեծ հեղինակություն: Մասեհյանը, սակայն, որոշում է ամբողջովին չկլանվել պետական գործունեությամբ, այլ իր գիտելիքները ի սպաս դնել հայ մանուկ սերնդի կրթության և դաստիարակության գործին: Նա սկսում է ուսուցչություն անել Թեհրանի «Հայկազյան» դպրոցում, որն իր տեսակի մեջ առաջին էր Թեհրանում որպես եվրոպական տիպի դպրոց:

1887թ. երբ Նասր-էդ-Դին շահը ուղևորության մեկնեց Եվրոպա, եվրոպական քաղաքակրթության նորույթներին ծանոթանալու և Իրանում դրանք արմատավորելու համար, Հ. Մասեհյանը որպես ավագ թարգմանիչ ընդգրկվեց շահի բազմանդամ պատվիրակության մեջ և նրա հետ մեկնեց Լոնդոն: 1894թ. Նասր-էդ-Դին շահի երկրորդ ուղևորության ժամանակ Եվրոպա, որպես շահի պատվիրակության թարգմանիչ Հ. Մասեհյանը մեկնեց Պետերբուրգ: Իսկ 1897թ. նա Լոնդոն է մեկնում պատվիրակության առաջին քարտուղարի պաշտոնով, ընդգրկվելով իրանական դիվանագիտական ծառայության մեջ և զբաղեցնելով տարբեր պաշտոններ, այդ թվում նաև Իրանի արտաքին գործերի նախարարությունում: (Ավելի ուշ նա եղել է Իրանի արտակարգ և լիազոր դեսպանը Բեռլինում, Մեծ Բրիտանիայում և Ճապոնիայում):

Հայ իրականության մեջ Հ. Մասեհյանը հայտնի է ամենից առաջ որպես Շեքսպիրի ամենախոշոր թարգմանիչ: 1890-ական թ.թ. սկզբներից ձեռնամուխ է եղել Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանությանը: Մասեհյանը թարգմանություններ է կատարել նաև Գյոթեի, Շիլլերի, Բայրոնի, Օմար Խայամի, Ռաբինդրանաթ Թագորի, Սաադիի և եվրոպական ու իրանական այլ բանաստեղծների ու գրողների ստեղծագործություններից, որոնք տպագրվել են ինչպես առանձին գրքերով, այնպես էլ հայ պարբերականներում:

Հայ իրականության մեջ Հ.Մասեհյանը իրավամբ համարվում է թարգմանական արվեստի ճանաչված դասականներից մեկը: Նա ստեղծել է թարգմանական դպրոց:

Մասեհյանը նաև փայլուն հրապարակախոս էր: Նրա այդ բնույթի բազմաթիվ հոդվածները, որոնք հրապարակվել են հայկական, եվրոպական մամուլում ու պարբերականներում, աչքի են ընկնում նաև չեշտված ազգային ոգով:

Բազմատաղանդ այդ մարդը և գործիչը նաև նվիրյալ մանկավարժ էր: Մեծ է նրա երախտիքը Իրանում հայկական դպրոցների հիմնադրման, ընդարձակման և որակական առաջընթացի գործում: 1892թ. ընտրվել է Թեհրանի «Ուսումնասիրաց ընկերության նախագահ»:

1899թ. նրա նախաձեռնությամբ Թեհրանում բացվել է քաղաքական գիտությունների դպրոցը, որտեղ Սասեհյանը եղել է միջազգային իրավունքի և համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ և դասախոս: 1894թ. նա հիմնել և խմբագրել է պարսկահայ առաջին տպագիր օրգանը՝ «Շավիղ» շաբաթաթերթը, որն անգնահատելի ծառայություններ է մատուցել իրանահայ գաղթօջախի ազգային-մշակութային զարթոնքի և առաջադիմության գործում:

Նկատի ունենալով, որ իրանահայերը տիրապետում էին եվրոպական լեզուների և Եվրոպայում ունեին առևտրական և անձնական լայն կապեր, ղաջարական միապետները նրանց որպես դեսպաններ, դեսպանորդներ, դիվանագիտական հանձնակատարներ և այլն, ուղարկում էին տարբեր երկրներ: XIX դարում իրանական պետության դիվանագիտական ծառայության մեջ գտնված անվանի գործիչներից են եղել նաև հայազգի (մի մասը մահմեդականացած) Նարիման խանը, Ջհանգիր խանը, Միրզա (Ջան) Դավութը, Դավիթ Մելիք-Շահնազարյանը և ուրիշներ:

Հատկապես վերջինս հանդիսացել է ղաջարական դիվանագիտության կարկառուն դեմքերից մեկը: Երբ օսմանցիները Բայազեդում ձերբակալում են Իրան մեկնող Նապոլեոն Բոնապարտի դեսպան Ժոբերին, ֆրանսիայում կայսրը դիմում է փարիզաբնակ մտավորական Հակոբ Շահան-Ջրպետյանին, հարցնելով, թե հնարավոր է արդյոք Փարիզում գտնել մեկին, որը տիրապետեր հայերեն, պարսկերեն և ֆրանսերեն լեզուներին, որպեսզի որպես դեսպան նրան ուղարկեն Թեհրան, Ֆաթհ-Ալի շահին նամակ հանձնելու համար: Ջրպետյանը ներկայացնում է Դավիթ Մելիք-Շահնազարյան անունով մի հայի, որին Նապոլեոնը զանազան նամակներ է հանձնում և իբրև վաճառական ուղարկում է Բաղդադ, այնտեղից Թեհրան մեկնելու համար: Հաջողությամբ ավարտելով իր դիվանագիտական առաքելությունը, Մելիք-Շահնազարյանը վերադառնում է Փարիզ: Այդ ծառայության համար շահը նրան պարգևատրում է «Շիր-օ-խորշիդ» («Առյուծ և արև») բարձրագույն շքանշանով, իսկ Նապոլեոնը նրան պարգևատրում է սրով:

Ֆրանսիայի կայսրը Մելիք-Շահնազարյանին կրկին հանձնարարական նամակներով ուղարկում է Թեհրան: Ճանապարհին դեսպանը 1814թ. այցելում է Էջմիածին: Թեհրանում իր դիվանագիտական հանձնարարությունը կատարելուց հետո, Մելիք-Շահնազարյանը մտնում է պարսկական ծառայության մեջ արքունիքի գլխավոր թարգմանի պաշտոնով և ստանում խանության տիտղոս: Այս անգամ նա կատարում է շահի դիվանագիտական հանձնարարությունները և դեսպանի պաշտոնով գործուղվում է Ֆրանսիա[48]: Նա Իրանի և Ֆրանսիայի միջև քաղաքական բանակցություններում սկսում է խաղալ միջնորդի դեր: Այդ բա-

նակցությունների հետևանքով 1807թ. կնքվում է Ֆինկենշտեյնի ֆրանս-իրանական պաշտպանողական-հարձակողական պայմանագիրը[50]:

XIX դ. կեսերին հայազգի Միրզա (Ջան) Դավուդ խանը հիանալի գիտեր Եվրոպան, քան իր մահմեդական հայրենակիցներից որևէ մեկը: Այդ պատճառով նա 1850թ. Նասր-էդ-Դին շահի և Միրզա Թաղի խան Ամիր Քաբիրի կողմից գործուղվում է Ավստրիա և Պրուսիա Թեհրանում նորաբաց պոլիտեխնիկական դպրոցի՝ «Դար-օլ-Ֆոնուն»–ի համար մի քանի ուսուցիչներ հրավիրելու նպատակով: Նա լիազորված էր նաև Եվրոպայում Իրանի համար ձեռք բերել մի քանի նավեր, տեքստիլ ֆաբրիկաներ և այլն:

Ղաջարական Իրանում քիչ չեն եղել նաև բարձր պետական պաշտոններ զբաղեցրած հայազգի (ճիշտ է դավանափոխ) գործիչները[51]: Օրինակ, հայկական ծագում է ունեցել Աթաբեկ Ամին ալ-Սոլթանը, որը 1885թ. նշանակվել է «վազիր ազամի» (կանցլեր) պաշտոնում, իսկ 1895-1896 և 1907թ.թ. զբաղեցրել է «սադր-ազամի» (վարչապետի) պաշտոնը:

XIXդ. 20-40-ական թվականներին իրանական բարձրագույն վարչության կազմում խոշորագույն դեմքերից մեկն էր մահմեդականացված հայ Մանուչեհր-խան Մոաթամեդ-օդ-Դոուլեն, որի հայկական ազգանունը եղել է Ենիկոլոփյանց: Նա Աղա Մոհամմադ խանի կողմից Թիֆլիսից գերևարված հայ պատանիներից էր: Ի դեպ, որպես կանոն, պարսիկները գերևարված հայ պատանիներին մահմեդականությունը պարտադրելուց առաջ ներքինիացնում էին:

Մանուչեհր-խանը սկզբում դառնում է Ֆաթհ-Ալի շահի հարեմի գլխավոր ներքինին, որը արքունական վարչության մեջ համարվում էր չափազանց բարձր պաշտոն: Մանուչեհր-խանը փայլուն կերպով կարողանում էր հարեմի ազդեցիկ կանանց միջոցով դուրս գալ երկրի քաղաքական ուժերը ներկայացնող կարևորագույն գործիչների վրա և նրանց օգնությամբ լուծել բազմապիսի պետական ու անձնական բնույթի կարևորագույն հարցեր: Մանուչեհր-խանը, օրինակ, օգնել էր Ֆաթհ-Ալի շահի որդուն՝ Մոհամմադ-միրզային բարձրանալ իրանական գահին և երախտապարտ շահը այդ ծառայության դիմաց նրան նշանակել էր Սպահանի նահանգի նահանգապետ: Իսկ մինչ այդ, 1830-ական թվականներին, Մանուչեհր-խանը Գիլյանի նահանգի նահանգապետն էր: Միաժամանակ նա մեծ հարստության տեր մարդ էր, որը նա օգտագործում էր իր քաղաքական կարիերայի նպատակների համար:

Թիֆլիսից գերևարված մեկ այլ հայ՝ Ջոհրաբ անունով, Ֆաթհ-Ալի շահի պալատում բարձրանում է մինչև սենեկապետության աստիճանի և ստանում խանի տիտղոս: Շահը նրան վստահում է պետության գանձապահի պաշտոնը, ստանալով Ջոհրաբ-խան խազնի-շահրիար անվանումը: Մեկ այլ Ջոհրաբ-խան (Վարդ Պատրիկյան կամ Պար-Վարդյան

հայկական ազգանունով) հանդիսանում էր Սպահանի զորահրամանատարի զանձապետը:

Մեկ այլ նշանավոր հայ Միրզա Յաղուբ Մարգարյանը Ֆաթհ-Ալի շահի ժամանակ եղել է արքունական «մոսթոուֆի», այսինքն բյուջեն կազմող և պետական հաշիվները պահող աստիճանավոր: Ի դեպ, Միրզա Յաղուբը սաղր-ազամ (վարչապետ) Ալլայար-խանի հարեմի երկու հայ գերուհիների հետ մտնում է Թեհրանի ռուսական դեսպանատուն, դեսպանորդ Գրիբոեդովից խնդրելով պաշտպանել իրենց և Թուրքմենչայի պայմանագրի համաձայն ուղարկել հայրենիք: Ինչպես հայտնի է, դրան հետևում է ողբերգական մի իրադարձություն. հոգևորականության ու Ալլայար-խանի հրահրումով ամբոխը հարձակվում է ռուսական դեսպանատան վրա և սպանում Միրզա-Յաղուբին, Գրիբոեդովին և դեսպանատան ողջ անձնակազմին[52]:

Չափազանց մեծ է եղել ծագումով հայ գործիչների դերը նաև Ղաջարական Իրանի բանակում և ռազմական կառույցներում: Միրզա Թաղի խան Ամիր Նեզամը, նույնիսկ խախտելով դարերով սրբագործված իսլամական օրենքները, 1851թ. Սալմաստի և Ուրմիայի հայ բնակչությունից կազմակերպեց հատուկ հայկական զորամաս[53]:

Ինչպես հայտնի է թագաժառանգ Աբբաս-Միրզան հանգել էր այն եզրակացության, որ իր անկանոն զորքով Իրանը ի վիճակի չէ չափվել ռուսական կանոնավոր բանակի հետ: Ուստի բանակը վերակազմակերպելու նպատակով նա աշխատում էր հրավիրել մարզիչ սպաներ: 1805-1806թ.թ. թիֆլիսեցի Ռոստոմ Ենիկոլոփյանցը իր երկրացի մահմեդականացած հայ Յուսուֆ-խանի (Հովսեփի) միջոցով տեղեկացնում է գահաժառանգին, որ ինքը տեղյակ է եվրոպական «զինվորական կրթությանը» և իրանական բանակը մարզելու համար առաջարկում է իր ծառայությունները: Իրանական բանակում նա ստանում է «թուվանգչի» կամ «ջեզայիր» կոչված զորքի հրամանատարի բարձր պաշտոնը: Երբ 1807թ. ֆրանսիացի գեներալ Գարդանի զինվորական առաքելությունը Նապոլեոն Բոնապարտի կողմից ուղարկվում է Թեհրան, իրանական բանակը եվրոպական ձևով մարզելու համար, վերոհիշյալ Յուսուֆ-խանը իր ռազմական գիտելիքները ֆրանսիացիների մոտ կատարելագործելուց հետո շահի կողմից ստանում է «Սըփահդար-ե Աբաղստան» տիտղոսը (Աբաղստանի ռազմական շրջանի զորքերի հրամանատար- «սըփահսալար»)[54]:

Նկատի ունենալով, որ 70 տարուց ավել հարուստ, արգավանդ ու բազմամարդ Արաղստանը (ներկայումս Արաք նահանգը) դարձել էր ամեն տեսակի բռնավորների ու անսանձ տարրերի պատերազմների ու ասպատակությունների ասպարեզ և նրա քաղաքները, ավաններն ու գյուղերը դարձել էին կիսավեր ու համարյա անմարդաբնակ, Յուսուֆ-խան Սըփահդարը եռանդուն ջանքեր էր գործադրում տեղական բնակ-

չության կյանքն ու կայքը անվտանգ դարձնելու համար: Նրա այդ քաղաքականության հետևանքով Արաղստանի գյուղերը սկսում են բազմամարդ դառնալ ու շենանալ, երկրագործությունը, այգեգործությունը և անասնապահությունը սկսում է վերակենդանանալ, արհեստներն ու վաճառականությունը ծաղկել: Յուսուֆ-խանը հատուկ հովանավորողական քաղաքականություն է վարել Արաղստանի հայերի նկատմամբ:

Ֆաթհ-Ալի շահը մեծ համարում է ունեցել Յուսուֆ-խանի նկատմամբ: Շատ դեպքերում նրանից հարցրել է խորհուրդներ, ուղարկել ամենավտանգավոր ապստամբությունները ճնշելու համար և այլն: Երբ շահը տվել է այս կամ այն հանձնարարությունը, սովորաբար ասել է, թե «գնա այս գործը կատարիր, ինչպես քո հանճարը քեզ ցույց կտա»[55]:

Աղա-Մոհամմադ և Ֆաթհ-Ալի շահերի կառավարման տարիներին իրանական բանակում եղել են նաև բազմաթիվ հրետանու հրամանատարներ («Թոփչի բաշի») կամ «Սիր թոփխանե», այսինքն թնդանոթներ ձուլող գործարանների ղեկավարներ: Մեզ են հասել դրսանցից մի քանիսի անունները՝ Մուսիս կամ Մոսես խան թոփչի բաշի, Յուսուֆ թոփչի բաշի, Վարդան-բեկ, Ղարագյոզ-բեկ, Ֆառռուխ-բեկ (երևանցի), Ջանի-բեկ (ղարաբաղցի), Խոսրով-խան Ղայթմազյանց՝ մականվանյալ «շիր», այսինքն առյուծ, Յաղուբ-խան սուլթան (կապիտան) և ուրիշներ[56]:

XIX դարում արքունի և պետական բարձր պաշտոններ են զբաղեցրել նաև մի շարք մահմեդականացած կամ քրիստոնյա հայեր. Սեթ-խան Աստվածատուրը (Ծատուրը), Հովհաննես-խան Ագչալյանը, Դավիթ-խան Դավթյանը, Ջհանգիր Էնիկոլոփ Մամիկոնյանը (մեծ ծառայություններ ունի ինչպես Իրանի ռազմական գործում, այնպես էլ քաղաքացիական վարչության մեջ, եղել է նաև Իրանի գեղարվեստի նախարարը), Աղա-Բահրամը (Մելիք-Շահնազարյան) եղել է Գերագույն դիվանի անդամ, ինչպես նաև Քերմանշահի ռազմական շրջանի զորքերի հրամանատար, Ջոհրաբ-խան ղոլամ փիշ-խեդմաթ բաշին (1835թ. Աբբաս-Միրզայի կողմից նշանակվել է Խորասանի նահանգի կուսակալ), Դավիթ-խան Մկրաչյանը (Հնդկաստանում և Եվրոպայում բժշկական կրթություն ստանալուց հետո Մոհամմադ-շահի կառավարման տարիներին դառնում է արքունի բժիշկ):

Հիշատակություն կա նույնիսկ այն մասին, որ դավանափոխ եղած մի ոմն հայ՝ Տեր-Գրիգորյանց ազգանունով, հասնում է կրոնական նվիրապետության բարձր աստիճանի՝ դառնալով «մոլլա-բաշի» (Մոլլա-բաշի հաջի մոլլա Քյարիմ)[57]:

Այսպիսով, Իրանի հայ գաղթօջախը, որը սփյուռքի ամենահին գաղութներից մեկն է, նոր ժամանակներում ավելի գործուն, ծանրակշիռ ու ազդեցիկ դերակատարություն է ունեցել այդ երկրի տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքում: Չափազանց մեծ է նրա դերը նաև Իրանի արդիականացման ու եվրոպականացման

գործու: Անկասկած այդ գործում իրենց որոշակի լուման են ներդրել նաև պարսկական պետական, հասարակական-քաղաքական ու զինվորական ծառայության մեջ գտնված հայ բազմաթիվ գործիչներ, որոնց մի մասը իրերի բերումով, դավանափոխ լինելով և ընդունելով իսլամը, անմիջական մասնակցություն չի ունեցել իրանահայերի համայնքային կյանքին: Սակայն մեր խորին համոզմամբ, չի կարելի այդ գործիչներին կտրել մեր պատմությունից, առավել ևս, որ նրանցից շատերը զուրկ չեն եղել ազգային զգացումներից և փորձել են պահպանել իրենց ազգային դիմագիծն ու նկարագիրը և օգտակար լինել սեփական ժողովրդին:

VAHAN BAIBOURTIAN

PAGES OF 19TH CENTURY IRANIAN-ARMENIAN HISTORY

Armenians have lived in Iran since ancient times. However, a well-organized Armenian Community with national and religious institutions emerged only in the 17th century. During the 19th century, Armenians continued to play an important role in the social, political, commercial, economic, and cultural life of Iran. Armenians have made a vast contribution to the modernization and westernization of Iran.

The Armenian Community in Iran has enjoyed the Iranian Government's patronage and the Iranian people's hospitality. The Government saw Armenians as a useful element for the state and tried to create favorable conditions for their stay, despite various restrictions and obstacles faced by people of other religions on the background of Shariah laws otherwise found in this Islamic country.

As law-obedient citizens, Armenians themselves created favorable grounds for the Armenian and Iranian peoples to become closer.

During the 19th century, spiritual and public life of Iranian Armenians focused in two dioceses—the Atrpatakan Diocese and the Iranian-India Diocese. These two Armenian dioceses enjoyed internal autonomy. Armenian communities enjoyed vast freedom to found their educational and cultural institutions. School classes were taught in Armenian.

Though Armenians were a negligible minority compared to the abundant Muslim population, they played an enormous role in Iran's intellectual life, facilitating the dissemination of modern European political and social ideas and doctrines, promoting the achievements of technology and the European civilization, and supporting the development of political and other culture in Iran. A key motive for the political activity of Iranian Armenians was their patriotic attachment to Iran, which they have deemed their second fatherland.

The crucial contribution of Armenians to Iran's cultural life enabled Europeans visiting Iran to call Armenians "the torchbearers of Oriental civilization."

Iran's Armenian population also contributed to the political wakening of Iran's population and reforms in political and public spheres, inspired by ideas of reviving their birthplace.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Histori of Persia under Qajar Rule. Transl. From the Persia of Hasan-e Fasai's "Farsnameye Naseri", New York-London. 1972: Emeneh Pakrevan. Agha Mohammad Qhajar. Tehran. 1953.
2. Տե՛ս Նիւթեր ազգային պատմութեան համար: Երեւելի հայկազունք ի Պարսկաստան, աշխատասիրութեամբ Գալուստ Շերմազանեանի, Ռոստով (Դոնի վրա), 1891: Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002.
3. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 65-73.
4. Երիցյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք, Թիֆլիս, 1894, էջ 338.
5. Բայբուրդյան Վ., Իրանն այսօր(տեղեկատու), Երևան, 1999, էջ 280.
6. Գորոյանց Ն.,Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968, էջ 94-95.
7. Տե՛ս նաև Աճեմյան Հ., Սուրբ Թադեի Վանքը, Թեհրան, 1960.
8. Նրա մասին տե՛ս Biographical Sketch of His Late Royal Higness Abbas Mirza. Prince Royal of Persia, JRAS, Vol. I, 1834, p.p. 322-325; Abol Qhascm Lachini. Abbas Mirza Nayeb os-Saltaneh. Tehran, 1947.
9. Ալի Ասղար Շեմիմ, Իրան դար դոուրե-ե սալթանաթ-ե ղաջարիա, Թեհրան, 1963, էջ 95 (պարսկերեն լեզվով).
10. Տե՛ս Waterfield R., Christians in Persia. Assirians, Armenians, Roman Catholics and Protestants, London, 1973, p.80, Fraser J.B., Travels and Adventurcs in the Caspian Sea, London, 1826, p.307.
11. Աճառյան Հ., նշվ. աշխ, էջ 243.
12. Տե՛ս Նասեր Նաջմի, Իրան դար միյան-ե թուֆան յա զենդեգանի-ե Աբբաս Միրզա, նայեբ ալ-սալթանե, վա ջանգհա-ե Իրան վա ռուս, Թեհրան, 1957(պարսկ. լեզվով).
13. Հարություն Տեր-Հովհանեանց, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հատ.Ա, Նոր Ջուղա, 1880,էջ 397: Տե՛ս նաև Ռային Իսմայիլ, իրանյան-ե արմանի, Թեհրան, 1970, էջ 119 (պարսկ. լեզվով).
14. Кузнецова Н.А., Политическое и социально-экономическое положение Ирана в конце XVIII-первой половине XIX в. В кн. Очерки новой истории Ирана, Москва, 1978, стр. 62.
15. George A. Bournoutian, Armenians in Nineteenth-Century Iran. The Armenians of Iran. The Paradoxical Role of a Minority in a Dominant Culture: Articles and Documents, edited by Cosroe Chaqueri, Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1998, p.57,72.
16. Տե՛ս Myr-Davoud-Zadour de Melik Schahnazar, Envoye' de perse en France, Notice sur L'etat actuel de la Perse, Paris, 1818, s.65-75.
17. "Вестник Европы", 1815, май, стр. 61-65.
18. Arasteh Reza, The Character, Organisation and Social Role of the Lutis (Javanmardan) in the Traditional Iranian Society of the Nineteenth Century.-

"Journal of Economic and Sicial History of the Orient", 1961, Februarv. p.p.47-52.

19. Архив Внешней политики Росии, ф. Миссия в Персии, оп.528а, є 422, л. 2,4.
20. Кузнецова Н.А., Политическое и социально-экономическое..., стр.59.
21. Հարություն Տեր-Հովհանյանց, նշվ.աշխ., հատ.Ա., էջ 399.
22. Curzon G. N., Persia and Persian Question. London, 1892, Vol. I, p. 507.
23. George A. Bournoutian, նշվ. աշխ., էջ 56.
24. Ռային Ի., Իրանյան-ե արմանի, Թեհրան, 1970, էջ 119-120 (պարսկերեն լեզվով).
25. Հայաստանի Պետական Պատմական Արխիվ, ֆ.57, ²224, էջ 13-18.
26. Նույն տեղում.
27. Հարություն Տեր-Հովհանյանց, նշվ.աշխ., h.II, էջ 83-85.
28. Cosroe Chaqueri, Introduction to the Armenians of Iran: A Historical Perusal. "The Armenians of Iran", գրքում, p.4.
29. Brown E.G., The Persian Revolution of 1905-1909. London, 1910, p 100.
30. Jssawi Ch., The Economic History of Iran, 1800-1914, Chicago-London, 1971, p.p.22,60.
31. George A. Bournoutian, նշվ. աշխ., էջ 57-58.
32. «Քարագոզարները» այն պետական հիմնարկության ներկայացուցիչներն էին, որոնք մինչև XX դ. 20-ական թվականները, այսինքն կապիտուլյացիոն իրավունքի վերացումը, իրավունք ունեին դատելու և լուծելու քրիստոնյայի և մահմեդականի միջև եղած վեճերը: Ըստ էության, դա իր կոչումով հաշտարար դատարան էր:
33. Յովհաննիսեան Յովսեփ, Յուշեր, հատ. Ա., Երևան, 1995, էջ 71-72.
34. Նույն տեղում, էջ 72.
35. Տե՛ս The Armenians of Iran. The Paradoxical Role..., p. XVII..
36. Кузнецова Н.А., Об участии немусульман в торговле Ирана. "Ближний и Средний Восток. Товарно-денежные отношения при феодализме", Москва, 1980, стр.119 .
37. Տե՛ս Պատմութիւն Ատրպատականի հայոց-թեմական կենտրոնական դպրոցի, Թեհրան, 1981.
38. Էլմար Յ., Եփրեմ, Թեհրան, 1964, էջ 73.
39. Նույն տեղում, էջ 74.
40. Տե՛ս Baibourtian V., International Trade and tha Armenian Merchants in the Seventeenth Century, New Delhi, 2004.
41. Տե՛ս Lambton A. K., The Case of Hajii Abd al-Kazim. A Study of the Role the Mcrchant in Mid-nineteenth Century. Persia-Iran an Islam. Edinburgh, 1971.
42. MacDonald J. Kinneir, A Geographical Memoir of the Persian Empire, London, 1813, p. 36.
43. Кузнецова Н.А., Об участии немусульман...,стр.118.
44. Տե՛ս Ստեփանյան Ս. Խ., Հայ առևտրական բուրժուազիան Իրանի տնտեսական կյանքում, Երևան, 1992.
45. Տե՛ս Bosworth E., and Hillenbrand C., Qajar Iran: Political, Social and Cultural Change 1800-1925, Costa Mesa, California, 1992, p.p. 271-272.

46. Տե՛ս Казарян М., Художники Овнатанян, Москва, 1968.
47. Տե՛ս Algar H., Mirza Malkam Khan: The Study in the History of Iranian Modernizm. Berkeley. 1973.
48. Տե՛ս Դարֆի Գ., Հովհաննես Մասեհյան (1864-1931), մահվան 30-ամյակի առթիվ, Թեհրան, 1963: «Շեքսպիրական», Հ.6, Երևան, 1980: Զարյան Ռ., Մասեհյան, «Հայկական սովետական հանրագիտարան», Հ.7.
49. Տե՛ս Myr-Davoud-Zadour de Melik Schahnazar. Envoye' de perse en France. Notice sur L'etat actuel de Perse. Paris. 1818.
50. Տե՛ս Ռային Ի., Մալաք Շահնազար Միրդավուդ Զադուրյան, Նախուսթին Ֆերեսթադի-ե Նապոլեոն բե Իրան, Թեհրան, 1973 (պարսկերեն լեզվով).
51. Polak J. E.. Persien. Das land und seine Bewohner. V.I, Leipzig. 1865. s.298..
52. Մանրամասն տե՛ս Նիւթեր ազգային պատմութեան համար..., էջ 90.
53. Նույն տեղում, էջ 91-93.
54. The Armenians of Iran…, p.59.
55. Նիւթեր ազգային պատմութեան համար..., էջ 20-21.
56. Նույն տեղում.
57. Նույն տեղում, էջ 37-38.
58. Նույն տեղում, էջ 91-93, 118-122, 168.

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՂԵՐՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ
(Առաջին աշխարհամարտից մինչև Լոզանի կոնֆերանսը)

Փոքր ժողովուրդների ազատագրումը ինքնորոշման սկզբունքի հիման վրա այն կարգախոսներից մեկն էր, որի ներքո ընթանում էր առաջին համաշխարհային պատերազմը: Ըոլակ համաձայնության դաշինքի անդամ պետությունների ռազմաքաղաքական ծրագրերի առաջնահերթ խնդիրներից մեկը հռչակվեց Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազատագրումը: Դեռևս պատերազմի հենց սկզբին, 1914թ. հոկտեմբերի 27-ին, անգլիական ականավոր քաղաքական գործիչներից մեկը՝ Հենրի Ասքվիթը հայտարարեց. «... Օսմանյան կառավարությունը պատյանից հանեց սուրը, և հենց ինքն էլ, համարձակվում եմ կանխատեսել, կոչնչանա սրով: Հնչեց Օսմանյան կայսրության հուղարկավորության ղողանջը ոչ միայն Եվրոպայում, այլև Ասիայում, և ոչ թե մենք, այլ հենց ինքը Օսմանյան կառավարությունն է դրանում մեղավոր: Թուրքական տիրապետության չքացումից հետո, ես հավատում եմ, որ այն խոցը, որը կրծում է երկրագնդի չքնաղ շրջաններ, նույնպես կչքանա... թուրքական կայսրությունը ինքնասպանություն գործեց և սեփական ձեռքերով փորեց իր գերեզմանը»[1]: Քիչ ավելի ուշ, իր գործակցությունը հայտնելով ողջակիզման ենթարկված հայ ժողովրդին, Հ. Ասքվիթը հայտարարեց. «Որոշված է, որ պատերազմից հետո ազատության ու վերկության մի դարաշրջան է բացվելու այդ հինավուրց ժողովրդի համար»[2]:

1916թ. կնքված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրի ստորագրողներից մեկը՝ անգլիացի Մարկ Սայքսը, Պետրոգրադում բրիտանական դեսպան Ջորջ Բյուկենենին գրած իր 1916թ. մարտի 12-ի թվակիր նամակում հանգամանորեն մեկնաբանում էր հայերին վերաբերող բաժինը: «Ինձ թվում է,- գրում էր նա,- որ մենք պետք է ընդունենք, որ, հայկական վերջին կոտորածների ծայրահեղ դաժանության և անգթութ-

յան հետևանքով, չի կարելի հանդուրժել բուն Հայաստանը օսմանյան իշխանության տակ թողնելու հնարավորությունը»:[3]

Իսկ 1917թ. դեկտեմբերի 23-ին պատերազմի նպատակների մասին իր հայտարարության մեջ Անգլիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջը Թուրքիայի առնչությամբ նշեց. «Մենք չենք վիճարկում թուրքական կայսրության պահպանումը թուրքերով բնակեցված երկրներում՝ Կոստանդնուպոլիս մայրաքաղաքով. նեղուցները պետք է չեզոքացվեն ու միջազգայնացվեն, բայց և այնպես մենք գտնում ենք, որ պետք է ճանաչվի Արաբիայի, Հայաստանի և Միջագետքի ազգային անկախությունը... Հայաստանը այլևս երբեք չի դրվի թուրքերի ճողկալի տիրապետության տակ»:[4]

1917թ. հունվարի 10-ին դաշնակիցները հանդես եկան հավաքական մի հայտարարությամբ, որտեղ պատերազմի նպատակներից մեկն էր հռչակվում «Թուրքերի արյունոտ բռնապետությանը ենթակա ժողովուրդների ազատագրումը»:[5]

Այդ տեսակետը հավասարապես բաժանվում էր նաև ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից, որն ի դեպ, մշակել էր «թուրքական հարցի» լուծման իր սեփական ծրագիրը: Այդ մասին նախագահի խորհրդական, գնդապետ Հաուզը գրում է. «Պրեզիդենտի կարծիքով Թուրքիան պետք է ջնջվի որպես պետություն և նրա բախտի տնօրինումը պետք է դրվի խաղաղության կոնֆերանսի վրա: Ես պահանջեցի սահմանել, որ Թուրքիան չպետք է մասնատվի պատերազմի մասնակիցների միջև, այլ նրա տարբեր մասերը պետք է վերածվեն ինքնավարության, համաձայն ռասայական պատկանելության: Նա դրան համաձայնվեց և իր տեսակետը ձևակերպեց հետևյալ կերպ. «Ժամանակակից Թուրքիայի կայսրության թուրքական մասը պետք է ունենա ապահովված ինքնուրույնության երաշխիք, մյուս ազգերին, որոնք այժմ գտնվում են թուրքական կառավարման ներքո, պետք է ապահովվի լրիվ հնարավորություն բարեբեր զարգացման համար»:[6]

1918թ. հունվարի 8-ին Կոնգրեսում արտասանած «Համընդհանուր հաշտության մասին» ճառում Վուդրո Վիլսոնը հատուկ անդրադարձավ Հայկական հարցին, այն դիտարկելով նոր աշխարհակարգի ստեղծման տեսանկյունից:

Ի դեպ, արևմտահայոց ցեղասպանությունը Անտանտի պետությունների, հատկապես Մեծ Բրիտանիայի համար, մի միջոց էր սեփական երկրների պատերազմական ճիգը խթանելու և իրենց հակառակորդ Գերմանիային ու Թուրքիային վարկաբեկելու համար: Լոնդոնը, օրինակ, ձգտում էր հանրային կարծիքի վրա ազդել այն ոգով, որ ինքը պատերազմ է մղում արժանավոր դատերի համար, իր թշնամիների անարդարության, անգթության ու վայրագության դեմ:

Եռյակ համաձայնության անդամ պետությունների ծրագրերում նախատեսվում էր Օսմանյան կայսրությունը անդամահատել հինգ հիմնական էթնիկական գոտիների՝ Թուրքական Անատոլիայի, Հայաստանի, Սիրիայի, Քրդստանի և Արաբիայի: Այսպիսով, եթե Հայկական հարցը 1878թ. Բեռլինի կոնգրեսից հետո դարձել էր միջազգային դիվանագիտության քննարկումների առարկա, ապա քրդերին վերաբերող խնդիրը առաջին անգամ էր արծարծվում տերությունների քաղաքական ծրագրերում, ընդ որում քրդական առանձին պետականություն ստեղծելու, կամ ծայրահեղ դեպքում քրդերի համար ինքնուրույն քաղաքական կյանքով ապրելու հնարավորություն ստեղծելու հարցադրումով: Դա անշուշտ վկայում է այն մասին, որ այսպես կոչված «քրդական հարցը» XX դարի սկզբին աստիճանաբար բարձրանում էր քաղաքական իրողությունների մակերես՝ իր վրա հրավիրելով տերությունների ուշադրությունը:

Դաղտնիք չէ, որ ընդհուպ մինչև XX դարի սկիզբը քրդերի մոտ ըստ էության բացակայում էր ազգային զգացումը: Նրանց մոտ տիրապետող ցեղային կազմակերպությունը լուրջ արգելք էր ազգային գաղափարների ծննդի, համաքրդական հայրենասիրության և քրդերի՝ որպես ժողովուրդ ձևավորվելու գործընթացի համար:[7] Հետևաբար քրդերին բնորոշ էր ռասայական, բայց ոչ ազգային զգացումը: Քրդական նացիոնալիզմը, որպես գաղափարական-քաղաքական հոսանք ձևավորվել է հենց XX դարի սկզբին, որպես վերջնական նպատակ առաջ քաշելով «էթնիկական Քրդստանի» տարածքում քրդական ազգային պետության ստեղծման պահանջը: Ինչ՞ էին հասկանում քուրդ ազգայնականները «էթնիկական Քրդստանի» տակ: Հանրահայտ իրողություն է, որ առհասարակ Քրդստան հասկացողությունը գործածվել է ոչ որպես որոշակի քաղաքական սահմաններ ունեցող պետական կազմավորման իմաստով, այլ որպես աշխարհագրական մի տարածք, ուր բնակվել է քրդական էթնոսը: Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ իր անցած պատմական զարգացման ընթացքում քուրդ ժողովրդին ոչ մի անգամ չի հաջողվել ստեղծել սեփական պետականություն: Ուստի և Քրդստանի տարածական չափերը տարբեր ժամանակներում նկատի են առնվել տարբեր մոտեցումներով: Օրինակ, XIX դարում, առաջնորդվելով իրենց որդեգրած հակահայ քաղաքականության շահերով, թուրքական կառավարող շրջանները Արևմտյան Հայաստանը սկսեցին անվանել «Քրդստան»: Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի անունից պահանջ ուղարկվեց Կ.Պոլսի Ներսես Վարժապետյան պատրիարքին, որ պաշտոնական գրագրության մեջ այլևս չգործածվի Հայաստան բառը, քանի որ «այդպիսի անունով երկիր գոյություն չունի»: «Այն պահից, երբ Հայկական հարցը դրվեց Բ. Դռան առջև իբրև միջազգային պարտավորության ակտ,- գրում է Նիկողայոս Ադոնցը,- օսմանյան պատասխանողներն ա-

մեն կերպ խուսափում էին «Հայաստան» բառից և, փակելով մտքի աչքերը, հայտարարում էին, որ այդպիսի երկիր չկա, որ այն վաղուց է անհետացել, կլանվելով քրդերի կողմից»:[8]

Անգլիական քաղաքագետները, որոնք մտահոգված էին արևմտահայության ռուսասիրական ձգտումների հարաճուն վերելքից, սիրով ընդօրինակեցին թուրքական դիվանագիտության այդ հնարքը: Բրիտանական դիվանագիտությունը առաջինը հավանության արժանացրեց Հայաստանի՝ թուրքերին հաճելի վերանվանումը և Էրզրումի իր հյուպատոսին այլ կերպ չէր անվանում, եթե ոչ Քրդստանի հյուպատոս:[9]

Այսպիսով թուրքերին հաջողվեց Հայաստան բառը հանել միջազգային շրջանառությունից: Հայտնվեցին թուրքական, անգլիական և ռուսական քարտեզներ, որոնցում Արևմտյան Հայաստանը նշված էր որպես «Քրդստան»: Ընդ որում թուրքական կառավարող շրջանները տանում էին եռանդուն ու ծրագրավորված աշխատանք, որպեսզի Հայաստանի նոր անվանման տակ դրվի համապատասխան էթնիկական շերտ, կամ ուժեղացվի առկա օտար տարրը: «Դրան նրանք հասնում էին փորձված միջոցառումներով՝ բնիկ հայ ազգաբնակչության կոտորածով, նրա արտաքսմամբ, հողերի բռնի զավթումով և նրանց հայրենի օջախներում օղերի և ուրիշ ցեղերի բնակեցմամբ, որոնք հաճախ բերվում էին հեռավոր վայրերից: Իշխանությունները ղաղթականներին այն միտքն էին ներշնչում, որ նրանք պետք է իրենց համար ապրուստի միջոցներ հայթայթեն սրով: Ուստի նրանց զինում էին մինչև ատամները և նետում անզեն հայ ազգաբնակչության վրա, որպեսզի վերջնականապես քայքայեն ու կործանեն նրան»[10],- գրում է Ն. Աղոնցը:

Առաջնորդվելով պատմական, էթնիկական, տնտեսական, մշակութային և այլ գործոններով, քուրդ ժողովրդի բնօրրան պետք է համարել այն տարածքը, որը ներկայումս ընդունված է անվանել Իրանական և Իրաքյան Քրդստան: Հենց այդ շրջաններից է, որ XVI դարից սկսած տեղի է ունեցել քրդական ցեղերի ներհոսքը կամ «էթնիկական ներխուժումը» դեպի Արևմտյան Հայաստան, որտեղ մինչ այդ քրդական տարր գոյություն չի ունեցել: Նշված տարածքում քրդերի առկայության մասին տեղեկություններ չկան ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում:[11]

Առաջին համաշխարհային պատերազմը Մերձավոր Արևելքի երկրների համար քաղաքական շրջանառության մեջ դրեց մի շարք նոր իրողություններ, որոնք իրենց մարմնավորումը ստացան 1916թ. Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրում: Օսմանյան կայսրության տիրույթները կանխավ բաժանվեցին Եռյակ համաձայնագրի անդամ պետությունների միջև: Այդ կապակցությամբ անգլիացիներին «հաճելի էր վտխադրել քրդական հարցը հայկական սարահարթ և այստեղ փնտրել նրա լուծումը»:[12] Այդպիսի մի առաջարկով, օրինակ, 1917թ. դեկտեմբերի

18-ին հանդես եկավ անգլիացի դիվանագետ Ֆ. Քերրը (հետագայում լորդ Լոտիան): Իրավացիորեն նշելով, որ թուրքական կառավարումը Հայաստանում «վերին աստիճանի անհաջող է», որ «թուրքերի կատարած սպանությունները ու դաժանությունները առաջ են բերում ամոթի խորը զգացում», որ «Հայաստանի ճակատագրի լուծումը ամբողջապես պետք է հանձնել եվրոպական պետություններին» և այլն, բրիտանացի դիվանագետը հանգում էր արտառոց եզրահանգման, առաջարկելով քրդերին առանձնացնել հայկական վիլայեթներից մի առանձին վիլայեթի մեջ:[13] Այլ կերպ ասած, անգլիացի դիվանագետը առաջ էր քաշում բուն Հայաստանի տարածքում քրդական պետություն ստեղծելու մի ծրագիր: Որքան էլ որ անհավատալի ու հակաբնական էր այդ առաջարկությունը, հետագայում այն աստիճանաբար մտցվեց շրջանառության մեջ և ինչպես կտեսնենք, նույնիսկ ընկավ Սևրի դաշնագրի հիմքում:

Ի՞նչն էր դրդում Ֆորին Օֆիսին Քրդստան ստեղծել Հայաստանի տարածքում: Նախ, Սայքս-Պիկոյի համաձայնագրով Միջագետքին (այդ թվում նաև նրա հյուսիսային մասը կազմող այսպես կոչված Իրաքյան Քրդստանը) անցնում էր Անգլիային, հետևաբար Լոնդոնը երբեք չէր համաձայնվի, որ ենթադրյալ Քրդստանը կյանքի կոչվի այդ տարածքում: Այդ առթիվ Լլոյդ Ջորջը նշում է, որ թուրքերը ավելի հետամուտ էին ձեռք գցելու Արևելյան Անատոլիան, քան վերատիրանալու Միջագետքին կամ Պաղեստինին: Այս վերջին երկրամասերից թուրքերին հեռացնելու համար Մեծ Բրիտանիայի վարչապետը պատրաստ էր շատ հեշտությամբ լքելու Հայաստանը, որն ինքը հրապարակավ անվանել էր «անմեղների արյունով թրջված երկիր»:[14]

Իսկ ամենակարևորը թերևս այն էր, որ հայկական նահանգները կամ Արևմտյան Հայաստանը երբեք չէին մտնում բրիտանական հողային շահագրգռության շրջանակների մեջ: Անգլիայի հողային բաղձանքները գտնվում էին Անատոլիայից հարավ, Միջագետքում, Պարսից ծոցի ավազանում և այլն: «Բրիտանիան,- գրում է սփյուռքահայ հետազոտող Ագապի Նասիբյանը,-տրամադիր չեղավ դրամ վատնելու կամ մարդ զոհելու՝ հեռավոր և անմատչելի երկրի մը վրա, որ գինք ոչ ռազմական և ոչ ալ տնտեսական տեսակետով կը շահագրգռեր: Ամայացած երկիր մըն էր ան, որ միայն թշվառությամբ էր հարուստ: Ուրեմն պատերազմի վերջավորության Հայկական հարցը թվեցավ ըլլալ ավելորդ պարտավորություն մը Բրիտանիո պետական մարդոց համար»:[15]

Սա անշուշտ չէր նշանակում, որ բրիտանական դիվանագիտությունը անտեսում կամ հրաժարվում էր «հայկական խաղաքարտը» օգտագործելու հնարավորությունից: Լլոյդ Ջորջը, արտաքին գործերի նախարար Բալֆուրը, նրա տեղակալ Ռոբերտ Սեսիլը և ուրիշներ հավաստիացնում էին հայերին, որ «Հայաստանի ազատագրումը դաշնակիցների պատերազմական նպատակներից մեկն է»: Լլոյդ Ջորջը նույնիսկ

խնդրում էր Մանչեստրի հայերին հավատալ, որ «նրանք, ովքեր պատասխանատու են այս երկրի կառավարման գործին՝ անտարբեր չեն ձեր մարտիրոսացած ժողովրդի նկատմամբ և այդ առնչությամբ կատարելապես գիտակցում են իրենց պատասխանատվությունը»:[16]

Սակայն նույն Լլոյդ Ջորջը խոստովանել է, որ թշնամական պետությունների մեջ բնակվող ժողովուրդներին ազատագրելու մասին հայտարարությունները նպատակ ունեին քարոզչական ազդեցություն ունենալ: Նրանք կոչված էին նաև խարխլել ու քանդել թշնամի երկրների համերաշխությունը և նրանց մեջ առաջ բերել պառակտում: Ավելին, Լլոյդ Ջորջը ռազմական հարցերով Գերագույն խորհրդի նիստերից մեկի ժամանակ հայտարարել էր, որ «ոչ ոք իր ասած խոսքերի համար որևէ պատասխանատվություն չի կարող կրել»:[17]

Այսպիսով, իրենց թշնամիներին հաղթելու համար անգլիացիները միջոցների մեջ ոչ մի խտրություն չէին դնում: Դրա մեջ անշուշտ ոչ մի հակաբնական բան չկար: Հակաբնականը այն էր, որ հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը տնօրինող գործիչները չեն գիտակցել դա, կամ պատշաճ կերպով հաշվի չեն նստել այդ իրողության հետ:

Պատերազմի ողջ տևողության ընթացքում բրիտանական դիվանագիտությունը խոստումներով օրորում էր նաև քուրդ ազգայնականներին և քրդական քիչ թե շատ աչքի ընկնող առաջնորդներին, որ աշխարհամարտի ավարտից հետո իրենց ժողովուրդը ոչ միայն կազատագրվի թուրքական լծից, այլև կատարյալ գոհացում կտրվի նրա քաղաքական իղձերին, այսինքն կստեղծվի անկախ կամ ինքնավար Քրդստան: Միաժամանակ անգլիացիները հուշում էին քրդերին նախաձեռնություն հանդես բերել քուրդ-հայկական լարված հարաբերությունները մեղմելու համար, քանի որ նրանց կարծիքով հայկական և քրդական հարցերը փոխկապակցված են: «Հայկական հարցը դա նաև քրդական հարց է», այսպիսին էր բրիտանական տեսակետը:

Քրդական կողմից առաջինը այդ հարցադրմանը արձագանքեց Շերիֆ-փաշան, որն առաջարկեց Լոնդոնում ստեղծել մի կոմիտե, որի առաքելությունն էր լինելու հայ-քրդական «հաշտեցման» գործը: Այդ առթիվ բրիտանական պատկան իշխանություններին նրա ներկայացրած հուշագրում զետեղված էր նաև հետպատերազմյան Քրդստանի կարգավիճակի վերաբերյալ մի նախագիծ: Նրանում մասնավորապես առաջարկվում էր ստեղծել անգլո-քրդական մի հանձնաժողով Քրդստանի տարածքը որոշելու համար:

Սակայն Լոնդոնը չարձագանքեց Շերիֆ-փաշայի առաջարկներին: Հարցը միայն այն չէր, որ քրդական առաջնորդը Լոնդոնում համարում չուներ, քանի որ բրիտանական գաղտնի ծառայությունների կողմից բնութագրվում էր որպես տեղական քրդական արմատներից կտրված և ցեղային վերնախավի շրջանում հեղինակություն չվայելող մեկը:[18] Մեր-

ծավոր Արևելքի հիանալի գիտակ, ընդունակ ու շրջահայաց Գերտրուդա Բելլը, օրինակ, տեղեկացրել էր Լոնդոնին, որ «Շերիֆ-փաշայի հայացքները կրում են չափից ավելի ակադեմիական բնույթ»:[19] Անգլիացիները նաև լուրջ կասկածներ ունեին, որ Շերիֆ-փաշան խաղում է երկակի խաղ և սերտորեն կապված է թուրքերի հետ:

Փաստերը վկայում են, առհասարակ անգլիացիները թերահավատ էին, որ քուրդ ազգայնականների ձեռքում առկա են իրական լծակներ Արևելյան Անատոլիայի քրդաբնակ շրջանների իրավիճակի վրա ազդելու համար: Զգույշ, կասկածամիտ ու հաշվենկատ բրիտանացի դիվանագետները իրենց կառավարությանը խորհուրդ չէին տալիս հույսեր կապել այդ մարդկանց հետ, որոնց քաղաքական վարքագիծը անկանխատեսելի էր, իսկ իրենք անկառավարելի: Նրանց կարծիքով նման մարդկանց հետ չափից ավելի սերտ քաղաքական կապերը կարող էին ունենալ անցանկալի հետևանքներ Մերձավոր Արևելքի առանց այն էլ ամենաանհանգիստ ու պայթյունավտանգ շրջաններից մեկում:

Սակայն այդ բոլորը, ի վերջո, ածանցյալ նշանակություն ունեցող խնդիրներ էին: Կարևորն այն էր, որ բրիտանական դիվանագիտության թղթածրարում չէր նախատեսված քրդական անկախ կամ ինքնավար պետության ստեղծման կոնկրետ ծրագիր: Բրիտանական պաշտոնական տեսակետը «քրդական պրոբլեմի» վերաբերյալ, որը ժամանակ առ ժամանակ սպրդում էր նաև մամուլի էջերը, հանգում էր նրան, որ քրդական հայցը անլուծելի մի պրոբլեմ է, քանի որ քրդերի մոտ տիրապետում է ցեղային համակարգը, ցեղերը կատարելապես տարաբաժանված են, ունեն ներհակ շահեր, նրանց մոտ բացակայում է ազգային զգացումը և միասնական հայրենիքի գաղափարը, որ առհասարակ նրանց չի համախմբում ու միավորում քաղաքական մի ընդհանուր գաղափար կամ ծրագիր, ցեղերի միջև առկա են սուր հակասություններ, իսկ հաճախ նաև խորը ատելություն ու թշնամանք և այլն:[20] Այդ բոլորից եզրակացվում էր, որ քրդերի քաղաքական համախմբման ու պետականություն կերտելու հարցը իրական հիմքեր չունի: Ուստի անգլիացի դիվանագետները, որպես կանոն, քրդերի քաղաքական ապագան գնահատում էին որպես խիստ անորոշ և մշուշապատ: Բայց դրանով հանդերձ նրանք Ֆորին Օֆիսի կողմից հանձնարարություն ունեին հանուն բրիտանական կենսական շահերի «խաղացնել» քրդերին և նրանց կեբակրել հույսերով:

Քրդական հարցի վերաբերյալ նմանատիպ տեսակետներ ունեին նաև Անգլիայի դաշնակից ֆրանսիացիները, թեև նրանց «խաղացնելու» վարպետությունը ակնառու կերպով զիջում էր իրենց բրիտանացի գործընկերների վարպետությանը: Պատերազմի հենց սկզբից Մարսելում Շերիֆ-փաշան բանակցություններ էր վարում ֆրանսիացիների հետ: Թեման նույնն էր՝ քրդական պետություն ստեղծելու հարցը: Ֆրանսիա-

ցիները ոչ միայն խուսափում էին տալ որևէ կոնկրետ պատասխան. այլև լուրջ չընդունեցին քաղաքական համագործակցության վերաբերյալ քրդական առաջնորդի հարցադրումներն ու առաջարկները:[71] Միանգամայն ակներև էր, որ Ֆրանսիան ևս չուներ քրդական պետություն ստեղծելու մտադրություններ: Այդ թեմայով Շերիֆ-փաշայի հետ բանակցությունները պարզապես կրում էին նախնական զոնդաժի բնույթ, այսինքն Փարիզը ցանկանում էր տեղեկանալ քրդերի կողմից փայփայվող քաղաքական ծրագրերին:

1918թ. աշնանը թուրքական ռազմաշունչ միլիտարիզմը արդեն գտնվում էր հոգևարքի մեջ: Հոկտեմբերի 30-ին կնքվեց Մուդրոսի զինադադարը: Թուրքիան ընդունում էր իր պարտությունը: Երիտթուրքական վարչակարգը տապալվեց: Զինադադարը, սակայն, շրջանցում ու լռության էր մատնում Հայկական հարցը և ընդհանրապես չէր անդրադառնում հայ ժողովրդի հետագա ճակատագրի խնդիրներին: Ուրիշ ճակատներում ջախջախված ու պարտված Թուրքիան մնում էր հայկական վեց վիլայեթների փաստական տերը: Տեղի չունեցավ այնքան բաղձալի հայկական հողերի ազատագրում: Զինադադարը չհանգեցրեց Արևմտյան Հայաստանում թուրքական զորքերի իրական զինաթափմանը: Թուրքերը հնարավորություն ստացան վերազինվելու և ի վերջո հենց հայկական նահանգներում սկսեց զարգանալ թուրքական միլլի-ազգայնական կամ քեմալական շարժումը:

Մուդրոսի զինադադարը հայ ժողովրդի համար աղետալի էր նաև այն պատճառով, որ պատասխան չուներ այն օրախնդիր ու կարևոր հարցին, թե ո՞վ պետք է հանձն առնի հայերի պաշտպանությունը, եթե առաջիկայում գումարվելիք խաղաղության վեհաժողովի օրակարգում դրվեր Արևմտյան Հայաստանի անջատման հարցը:

Մարկ Սայքսը լորդ Ռոբերտ Սեսիլին ուղղված հեռագրում անդրադառնալով այդ խնդիրներին գրում էր, որ զինադադարի պայմանները հայկական տեսանկյունից դավաճանության հավասարազոր մի բան էր:

Հայ հետազոտողներից շատերը այդ բոլորը բացատրում են միայն պատերազմում հաղթանակ տարած պետությունների անտարբերությամբ Հայ Դատի նկատմամբ: Սակայն դա միակողմանի մոտեցում է: Չի կարելի չընդունել, որ զինադադարի մեջ Հայաստանի կացության արդյունավետ ապահովումը որոշակի դժվարությունների էր հանդիպում աշխարհագրական ու ռազմական առումով: Եթե Պաղեստինում և Միջագետքում անգլիացիները վճռական պարտության էին մատնել թուրքերին, ապա իրավիճակը բոլորովին այլ էր հայկական նահանգներում, ուր դաշնակիցների զորքերը ըստ էության ոտք չէին դրել, իսկ ռուսական զորքերի զանգվածային դասալքությունը և ճակատի մերկացումը թուրքերին տվել էր իրենց առիթը:

Սուլթանի զինադադարը կնքելու պահին Օսմանյան կայսրության բոլոր ազգային փոքրամասնություններից միայն հայերն էին հանդիսանում միջազգային իրավունքի սուբյեկտ: Դա թուրքերի հետ հավասարապես նյարդայնացնում էր նաև քրդերին, որովհետև նրանք ենթադրում էին, որ հայկական հարցի լուծումը օրերի խնդիր է, իսկ քրդերի ազգային խնդիրը արհամարհվում և անտեսվում են: Իրենց քաղաքական շահերի համար քրդերի այդ անցանկալի տրամադրությունները փարատելու համար, անգլիացիները նոր ձևավորված Դամադ Ֆերիդ փաշայի կառավարության բերանով շտապեցին քրդերին հանգստացնել, նրանց խոստանալով ինքնավարություն՝ թուրքական ինքիշխանության ներքո:[22] Սակայն դա անմիջապես առաջ բերեց թուրքական հասարակության քաղաքական այն շրջանակների բուռն դժգոհությունն ու հակազդեցությունը, որոնց ոգեշնչում էր անսանձ կայսերապաշտությունը և հին թուրքական շովինիզմը: Դրանք մեծ մասամբ պանթյուրքիստ-իթթիհատականներն էին, որոնց ազդեցությունը դեռևս չափազանց մեծ էր ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ արևելյան նահանգներում: Նրանք կտրականապես մերժում էին քրդերի ազգային պահանջները և լի էին վճռականությամբ թույլ չտալու, որ հայերից դատարկված նահանգներում կազմվի քրդական մեծամասնություն, որը կարող էր լուրջ կռվան հանդիսանալ նրանց անկախության կամ ինքնավարության պահանջների համար: Թուրքական այդ շրջանակները, լինելով քուրդ ժողովրդի ինքնորոշման ոխերիմ թշնամիներ, միաժամանակ չէին խորշում նրանց խղճերը և մանավանդ կրոնական զգացումները դարձնել իրենց քաղաքական խաղերի առարկա: Նրանք ահաբեկում էին քրդերին, որ Արևմտյան Հայաստանի տարածքում Անտանտի տերությունները ծրագրել են ստեղծել «մի ծավալուն Հայաստան», որի իրականացումից հետո քրդերին ոչինչ չի մնա, եթե ոչ վերցնել գաղթականի ցուպը կամ դառնալ հայերի ստրուկ-ռայան ու նրանց վրիժառության զոհը:

Այդ սադրանքը անվրեպ ազդեցություն էր գործում քրդական առաջնորդների և քուրդ զանգվածի վրա, որոնք բնական մղումով դարձյալ շրջվում էին իրենց դավանակից թուրքերի կողմը, նրանցից սպասելով իրենց ազգային իղձերի իրականացում, մանավանդ որ թուրքերի հակահայկական քարոզչությունը ամբողջապես ներծծված էր իսլամական համերաշխության ու պանիսլամիզմի գաղափարներով: Այդ ներշնչումների ներքո բնականաբար քրդերի մոտ գնալով ուժգնանում էին հակահայկական տրամադրությունները:[23] Դրանք խախուռն մղում էին ստանում նաև Եվրոպայից եկող լուրերով, որ Հայկական հարցը, որը դարձել էր միջազգային քննարկումների հրատապ խնդիր, շուտով ստանալու է իր լուծումը:

Էթնիկական նախապաշարմունքներով ու մահմեդական շովինիզմով համակված քրդական ցեղային ու հոգևոր վերնախավին, որի ձեռքե-

րում էր գտնվում քրդերի ազգային շարժումը ղեկավարելու գործը. ծանր մտորումների մեջ էր գցում նաև այն իրողությունը, որ հայոց ցեղասպանության ժամանակ քրդերը գործիք էին դարձել թուրք ջարդարարների ձեռքին: Նրանք ենթադրում էին, որ ոչ միայն հայերը, այլնն առհասարակ «քրիստոնյա պետությունները» վաղ թե ուշ այդ արյունոտ արարքների համար հաշիվ են պահանջելու ոչ միայն թուրքերից, այլև քրդերից: Այստեղից ենթադրվում էր, որ հայերի և քրդերի միջև այլևս բոլոր կամուրջները այրվել են և փոխադարձ հասկացողության գալու բոլոր հնարավորությունները սպառվել:

Քուրդ ազգայնականները ի սկզբանե (ընդհուպ մինչև մեր օրերը), փայփայել են «Միացյալ անկախ Քրդստանի» գաղափարը,[24] որը ենթադրում էր Իրանական, Իրաքյան և այսպես կոչված «Թուրքական Քրդստանի» միավորում մեկ քրդական պետական կազմավորման մեջ: Սակայն առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտությունը և Անտանտի կողմից նրա մասնատման ծրագրերը քուրդ ազգայնականներին բերել էին այն համոզման, որ «Միացյալ Քրդստանի» գաղափարի իրագործումը տվյալ պահին անհնարին է, քանի որ ուղղակի բախվում է Մերձավոր ու Միջին Արևելքում Եռյակ համաձայնության պետությունների աշխարհաքաղաքական կենսական շահերի հետ: Քուրդ ազգայնականներին թվում էր, թե «թույլ օղակը», որից կարելի էր կառչել, դա Արևելյան Անատոլիայում քրդական պետության ստեղծման հնարավորությունն էր, քանի որ այդ տարածքը, նրանց համոզմամբ, չէր մտնում բրիտանական շահերի գոտու մեջ: Դա էական խնդիր էր այն առումով, որ քուրդ ազգայնական գործիչները «Անկախ Քրդստանի» գաղափարի իրագործումը կապում էին Անգլիայի հետ:

Այս բոլորի հետևանքով, քրդական գործիչների քաղաքական երազանքների օբյեկտ էր դառնում Արևմտյան Հայաստանը, որը հայերի ցեղասպանության հետևանքով դարձել էր մարդաթափ ու ամայի դարձած մի երկիր, մինչդեռ թուրքական հոծ բնակչություն ունեցող բուն Անատոլիայում, նրանց մտայնության համաձայն, անհնարին էր կերտել քրդական պետություն: Քուրդ ազգայնականների կողմից Արևմտյան Հայաստանի նկատմամբ մտասևեռումը հիմնավորվում էր նաև նրանով, որ իբր Թուրքիայում բնակվող քրդերի քաղաքական հասունացման մակարդակը ավելի բարձր էր, քան Իրանական կամ Իրաքյան Քրդստանում, հետևաբար պետականություն ստեղծելու օբյեկտիվ նախապայմանները ևս առկա են հենց այդ տարածքում:

Թերևս այդ բոլորը նկատի ունենալով, Փարիզի վեհաժողովի նախօրյակին, Հայկական հարցի նկատմամբ մեծ հետաքրքրություն դրսևորող ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը, հանգել էր այն տեսակետին, որ Արևմտյան Հայաստանում ցեղասպանություն ապրած ժողովրդի վրա

դեռևս կախված է վերջնական ոչնչացման սպառնալիքը: Ուստի նա գտնում էր. որ եթե դաշնակցային զորամասեր չուղարկվեն Հայաստան, ապա «հայերը կթողնվեն քրդերի ողորմածությանը»:[25] Այդ պատճառով, երբ Վուդրո Վիլսոնը 1918թ. դեկտեմբերի 13-ին ժամանեց Փարիզ, խաղաղության վեհաժողովին մասնակցելու համար, Լլոյդ Ջորջը և Ա. Բալֆուրը նրան հարցրին. «ո՞վ է իր վրա վերցնելու այն բեռը, որ մի զույգ դիվիզիա կամ այլ անհրաժեշտ զորքեր ուղարկվեն հայերին կոտորածներից պաշտպանելու համար»: Վիլսոնը պատասխանեց, որ անհրաժեշտ է սպասել մինչև Ազգերի լիգայի ստեղծումը: «Այն ժամանակ,- ասաց նա,- Միացյալ Նահանգները, հավանաբար, կդրսևորեն մեծ պատրաստակամություն մանդատի հիմքի վրա այդ երկրի գործերին միջամտելու համար»:[26]

1919թ. հունվարի 18-ին Փարիզի խաղաղության վեհաժողովը սկսեց իր աշխատանքը: Ինչպես հայտնի է, հայերը Փարիզ էին ուղարկել երկու պատվիրակություն: Ավետիս Ահարոնյանը ներկայացնում էր Հայաստանի Հանրապետությունը, իսկ Պողոս Նուբար փաշան («Ազգային պատվիրակություն») արևմտահայությանը: Թեև Հայաստանը վեհաժողովում չդիտվեց որպես համապատերազմիկ (belligerant) կողմ և չընդունվեց իբրև խաղաղության վեհաժողովի մասնակից, սակայն Հայկական հարցը դարձավ ակտիվ քննարկումների առարկա, հանդիսանալով վեհաժողովի օրակարգային հարցերից մեկը:

Քրդական հարցի մասին վեհաժողովում առաջին անգամ խոսակցություն գնաց 1919թ. հունվարի վերջին: Նշված ամսի 29-ին վեհաժողովի այսպես կոչված «տասի խորհրդին» ներկայացվեց բրիտանական պատվիրակության անդամ, հարավաֆրիկյան ականավոր ռազմական ու քաղաքական գործիչ, գեներալ Յան Խ. Սմեթսի կողմից մշակված բանաձևը, որտեղ ասվում էր, որ իրենց ողջ պատմության ընթացքում թուրքերը չափազանց վատ են կառավարել իրենց իշխանության ներքո գտնվող ժողովուրդներին: Իսկ ոչ վաղուցվա անցյալում նրանք ահավոր կոտորածների են ենթարկել հայերին: Ուստի «դաշնակից ու չմիացված տերությունները համաձայնվեցին, որ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը և Քրդստանը, Պաղեստինը և Արաբիան պետք է կատարելապես անջատվեն թուրքական կայսրությունից»:[27] Ընդ որում Պաղեստինը և Հայաստանը Սմեթսը առանձնացնում էր որպես յուրահատուկ տեսակի տարածքներ, «քանի որ նրանց բնակչությունը խիստ տարասեռ ու բազմազան է և ընդունակ չէ համագործակցության: Ուստի,- նշում էր բանաձևի հեղինակը,- տվյալ դեպքում նրանց ինքնավար կառավարումը բառի ամբողջական իմաստով բացառվում է և այն կարող է իրականացվել միայն որևէ արտաքին իշխանության կողմից»:[28]

1919թ. փետրվարի 8-ին բանաձևը դրվեց քննարկման: Այդ նիստում ներկա գտնված Դ. Միլլերը նշում է, որ քննարկման մասնակիցնե-

րը, մասնավորապես Իտալիայի վարչապետ Վ. Օռլանդոն, հայտնել են այն կարծիքը, որ Հայաստանի և Քրդստանի մասին հիշատակումը կարող է տեղիք տալ մեծ դժվարությունների:[29] Ուշագրավ է նշել, որ նախնական նախագծում «Քրդստան» բառը չի եղել: Լլոյդ Ջորջը այն հետո է մտցրել նախագծի մեջ, ցավ հայտնելով, որ ինքը բաց է թալել Թուրքիայի մեջ մտնող մի երկիր: Միաժամանակ նա նշել է Քրդստանի գտնվելու վայրը, այն է «Միջագետքի և Հայաստանի միջև»: Այդ բոլորից հետո բրիտանական վարչապետը առաջարկել է, որ եթե առարկություններ չկան, նախագծի մեջ կմտցվի նաև Քրդստանը:[30] Այդ ոգով 1919թ. հունվարի 30-ին Վիլսոնի առաջարկով ընդունվեց որոշում: «Այսպիսով,- գրում է ամերիկյան պատմաբան Հ. Հովարդը,- 1919թ. հունվարի 30-ին եվրոպական պետությունների կողմից հայտարարվեց թուրքական կայսրության վերջը»:[31]

Փարիզի վեհաժողովի «տասի խորհրդի»1919թ. փետրվարի 26-ի նիստում լսվեց Ավետիս Ահարոնյանի ելույթը: Նրա բերանով Հայաստանը Թուրքիային ներկայացնում էր իր տարածքային պահանջները: Ուշագրավ է, որ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը ներկայացրեց նաև այն տարածքները (Հաքյարիի քրդական շրջանները, Դիարբեքիրի վիլայեթի հարավային մասը և այլն), որոնց վրա Հայաստանը դեմ չէր, որ ստեղծվի Քրդստան:[32]

Վեհաժողովում քրդական տեսակետը ներկայացրեց Շերիֆ-փաշան իր 1919թ. մարտի 22-ի հուշագրով: Այն պահանջում էր անկախ քրդական պետության ստեղծում Վուդրո Վիլսոնի հռչակած «14 կետերի» սկզբունքներին համապատասխան: Հուշագրում առաջարկվում էր Քրդստանի սահմանները գծել «ազգության» սկզբունքով՝ ներառելով նրա մեջ բոլոր այն տարածքները, որտեղ քրդերը կազմում էին մեծամասնություն: Միանգամայն ակներև է, որ շահարկվում էր այն հանգամանքը, որ 1915թ. ցեղասպանությունից հետո հայկական վեց վիլայեթներում հայ ազգաբնակչության թիվը կտրուկ նվազել էր և այդ տարածքներում քրդերը արդեն կազմում էին մեծամասնություն:[33]

Ըստ էության Շերիֆ-փաշայի հուշագիրը դա «Մեծ Քրդստանի» մի նախագիծ էր: Այն աչքի էր ընկնում բացահայտ հակահայկական ուղղվածությամբ:[34] Այդ հուշագիրը, սակայն, ոչ միայն չդրվեց քննարկման, այլև առհասարակ լուրջ չընդունվեց վեհաժողովի մասնակիցների կողմից:

Փարիզում Շերիֆ-փաշան անսքող կերպով ցուցադրում էր քրդերի համակրանքը Մեծ Բրիտանիայի նկատմամբ, շեշտելով, որ քրդերը իրենց անկախության հույսերը կապում են այդ պետության հետ: 1919թ. հունվարին նա ուղղակի դիմեց Անգլիային, խնդրելով ստեղծել քրդական պետություն՝ բրիտանական հովանու ներքո:[35] Անշուշտ դա նրա անձնական դիրքորոշումը չէր: Առհասարակ քուրդ ազգայնականները ծրագր-

վող Քրդստանը տեսնում էին որպես բրիտանական պրոտեկտորատ: Նրանց կարծիքով միայն Անգլիան, որին քուրդ ազգայնականները համարում էին հայկական հարցի նախաձեռնողն ու ոգեշնչողը, ի վիճակի էր ձախողել այդ նույն հարցի լուծումը:

Կասկածից վեր է, որ Փարիզում Շերիֆ-փաշան համոզվելու էր, թե որքան թույլ են քրդերի քաղաքական դիրքերը վեհաժողովում: Կամա թե ակամա, նրա մոտ հասունանալու էր այն գաղափարը, որ անհրաժեշտ է շփումների մեջ մտնել հայերի հետ, փորձելով ընդհանուր ճակատ հարդարելու միջոցով ամրապնդել իրենց դիրքերը: Դրան նրան մղում էր նաև այն հանգամանքը, որ փաշան ակնառու կերպով տեսնում էր, որ Փարիզում Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ համակրանքը կրում էր համընդհանուր բնույթ: Նա սկսում է ակտիվ շփումների մեջ մտնել հայ պատվիրակների, հատկապես Պողոս Նուբար փաշայի հետ:

Այդ շփումների հետևանքը հանդիսացավ այն, որ 1919թ. աշնանը մի կողմից Շերիֆ-փաշայի, մյուս կողմից՝ Պողոս Նուբար փաշայի և Համո Օհանջանյանի միջև ստորագրվեց մի համատեղ հայտարարություն, որը դիմումի ձևով 1919թ. նոյեմբերի 20-ին ներկայացվեց Փարիզի վեհաժողովին:[36] Թեև լորդ Քերզընը Ավետիս Ահարոնյանի հետ զրույցի ժամանակ իր գոհունակությունն էր հայտնում, որ հայերը «քուրք են ստորագրել» քրդերի ներկայացուցիչ Շերիֆ-փաշայի հետ, սակայն անմիջապես ավելացրել է, որ ինքը «չի հավատում ու չի վստահում նրան» (Շերիֆ-փաշային Վ.Բ.):[37]

Փարիզի վեհաժողովը որևէ դրական տեղաշարժ չարձանագրեց Հայկական հարցի լուծման գործում: Սակայն այդ հարցը շարունակում էր մնալ որպես միջազգային քննարկումների առարկա: 1920թ. մարտի սկզբին, օրինակ, Անտանտի Գերագույն խորհուրդը կայացրեց որոշում, որտեղ նախատեսվում էր ստեղծել անկախ Հայաստան: Այդ որոշման մեջ միաժամանակ նշվում էր, որ «հնարավոր է անկախ Քրդստանի ճանաչումը»,[38] թեև պետք է նշել, որ դաշնակիցները և առաջին հերթին անգլիացիները, «մեծ կասկածներ» ունեին Քրդստանի անկախության կամ ինքնավարության հնարավորության մասին: Բոլոր փաստերը վկայում են, որ Լոնդոնը ծրագրեր չուներ քրդական պետություն ստեղծելու վերաբերյալ, թեև բրիտանական դիվանագիտությունը մեծ վարպետությամբ շրջանառության մեջ էր դնում «քրդական խաղաքարտը»:

Ինչ վերաբերում է ֆրանսիացիներին, ապա նրանք ևս քրդական հարցի վերաբերյալ ոչ միայն չունեին հատուկ մշակված ծրագրեր, այլև կոնկրետ նկատառումներ: Ավելին, 1919թ. դեկտեմբերին Ֆրանսիայի արտգործնախարարության քաղաքական և տնտեսական բաժնի վարիչ Բերտելոյի կողմից պատրաստված նոտայում, որը կազմվել էր Անգլիայի արտաքին գործերի մինիստրին ներկայացնելու համար, քրդերը անվանվում էին «ավազակներ» աֆղանների կամ Ռիֆի մարոկկացիների տիպի

«ռազմաշունչ լեռնականներ»: Նռայում առաջարկվում էր Քրդստանի ճակատագրի հարցը հետաձգել մինչև Հայաստանի և Մոսուլի կարգավիճակի հարցի լուծումը:[39]

Այդ բոլորի ֆոնի վրա հետաքրքիր է ծանոթանալ քրդական հարցի վերաբերյալ հայկական պաշտոնական տեսակետի հետ: 1920թ. մարտի 20-ին Լոնդոնում հայկական պատվիրակությունը Կ.Պոլսի Զավեն պատրիարքի, Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի մասնակցությամբ հանդիպում է ունենում «Հայաստանի սահմանները որոշող հանձնախմբի» հետ: Հանդիպման ժամանակ հանձնախմբի անդամ, անգլիացի դիվանագետ Ռոբերտ Վանսիտարտը հարց է տալիս, թե ապագա հայկական պետության մեջ ինչպիսի վերաբերմունք է լինելու քրդերի նկատմամբ, «որոնց վիճակված կլինի ապրել» Հայաստանում որպես փաքրամասնություն: Այդ հարցին Ավ. Ահարոնյանը, տալիս է հետևյալ պատասխանը. «Հայաստանում ներկա պահին շատ քիչ են հայերի դեմ անհաշտ, ըմբոստ մնացած քուրդ աշիրեթները, մանավանդ որ նրանց թիվն էլ պատերազմի պատճառով զգալիորեն նվազել է: Հեռավոր կասկած իսկ չունենք, որ այն օրը, երբ քյուրտերը ազատ կմնան թյուրքական ապականող ազդեցությունից, նրանք ևս մեզ հետ խաղաղ ապրելու ճամփան կնախընտրեն: Անշուշտ փոքրամասնությունն էլ երևի կամ կերթա դեպի Թուրքիա, կամ Քուրդիստան»: [40]

1920թ. ապրիլի 18-ից-26-ը Սան-Ռեմոյում տեղի ունեցած միջդաշնակցային կոնֆերանսում, որտեղ մշակվեց Թուրքիայի հետ Անտանտի խաղաղության պայմանագրի կնքման հարցը, հայկական և քրդական պրոբլեմները կրկին հանդիսացան քննարկումների առարկա: Հայկական հարցի առթիվ Լլոյդ Ջորջը հայտարարեց. «Ես չեմ կարող ինձ վրա պատասխանատվություն վերցնել և համաձայնություն տալ Մեծ Հայաստանի ստեղծման համար, եթե ԱՄՆ-ը չընդունի մանդատը: Այն պահից, երբ Ամերիկան դեն նետեց Հայաստանի նկատմամբ մանդատն ընդունելու վերաբերյալ ամեն մի միտք, ես խիստ կասկածում եմ, որ հնարավոր է ստեղծել ու պահպանել ծովից ծով անկախ հայկական պետություն»:[41]

Իսկ ապրիլի 19-ի նիստում հատուկ քննարկման դրվեց Քրդստանի հարցը, որի հանգամանալից վերլուծությամբ հանդես եկավ լորդ Քերզոնը: Նա նշեց, որ դա դժվարին ու բարդ խնդիր է, քանի որ Օսմանյան կայսրության մի մասը կազմող Քրդստանը բնակեցված է ռազմաշունչ ցեղերով, որոնք թշնամաբար են տրամադրված իրենց հարևանների և թուրքական կառավարության նկատմամբ: Այդ պրոբլեմը առնչվում է նաև եվրոպական տերությունների հետ, քանի որ Քրդստանը Հայաստանի հարևանն է: Միաժամանակ նրա ճակատագիրը կապված է նեստորական կամ քաղդեական քրիստոնյաների հետ:

Լորդ Քերզոնը այնուհետև առաջարկեց քրդական հարցի լուծման մի քանի տարբերակներ. ա. նրա մի մասը դնել Անգլիայի և Ֆրանսիայի

հովանավորության տակ. բ. Քրդստանը անջատել Թուրքիայից և նրան հատկացնել ինքնավարություն. գ. քրդերին թողնել թուրքական կառավարման ներքո, որին նրանք «վարժվել» են: Հանգամանորեն կանգ առնելով այդ տարբերակների վերլուծության վրա, Քերզոնը հենց ինքը սկսեց հիմնավորել, որ անկախ կամ ինքնավար Քրդստանի գոյությունը հնարավոր չէ մի քանի պատճառներով. քրդերի մտադրությունները անորոշ են. հայտնի չէ, թե նրանք կկարողանան արդյոք հասնել այնպիսի «կայունության», որը նրանց հնարավորություն տար հիմնելու «ինքնավար պետություն». քրդերի շրջանում գոյություն չունեն հեղինակավոր գործիչներ, Շերիֆ-փաշան նս չի կարող դիտվել որպես Քրդստանի ներկայացուցիչ, «յուրաքանչյուր քուրդ իրենց ներկայացնում է միայն իր կլանը. քրդերը չեն կարող գոյություն ունենալ առանց մեծ պետությունների աջակցության:[42]

Սան-Ռեմոյի կոնֆերանսում ընդունվեց անգլիացիների կողմից կազմած մի փաստաթուղթ, որտեղ Քրդստանի վերաբերյալ ասվում էր հետևյալը. Ստամբուլում պետք է աշխատի Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներից բաղկացած մի հանձնաժողով, որը պետք է թուրքական խաղաղության պայմանագրի ուժի մեջ մտնելուց վեց ամիս անց մշակի «տեղական ինքնավարությունների» մի սխեմա այն տարածքների համար, որոնք ընկած են Եփրատից արևելք, Հայաստանի հարավային սահմաններից հարավ, Սիրիայի և Միջագետքի հյուսիսային սահմաններից հյուսիս, որոնք բնակեցված են քրդերով: Այնուհետև ասվում էր, որ եթե թուրքական խաղաղության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո նշված տարածքի «քուրդ ժողովուրդը» դիմի Ազգերի լիգայի խորհրդին, մեծամասնության անունից պահանջելով իրեն տրամադրել Թուրքիայից անկախություն և եթե Խորհուրդը որոշի, որ այդ ժողովուրդը «ընդունակ է նման անկախության» և երաշխավորում է այն, ապա Թուրքիան պարտավոր է իրագործել այդ երաշխավորությունը, զիջելով հիշյալ տարածքի նկատմամբ բոլոր իրավունքները:[43]

Նման հարցադրումը վկայում է այն մասին, որ Եռյակ համաձայնության ծրագրերում քրդական պետության ստեղծման հարցը շարունակում էր գտնվել անորոշ դատողությունների մակարդակում: Նախ այդ տերությունները կասկած էին հայտնում, որ քրդերը ընդունակ են անկախ գոյության: Անգլիացիները, օրինակ, չէին հավատում «քրդական ազգային գաղափարի» առկայությանը, առանց որի, նրանց կարծիքով, հնարավոր չէ ստեղծել պետականություն: Նրանք գտնում էին, որ քրդերը միջնադարյան սովորույթներով ապրող մարդիկ են, նրանց մեծ մասը չի ձերբազատվել ցեղային մտածողությունից, որ նրանք չեն պատկերացնում այլ իշխանություն, բացի աղաների և շեյխերի իշխանությունից, ուստի նրանց նկատմամբ կիրառելի չէ «ժամանակակից դեմոկրատական չափանիշները»: Անգլիացիները քրդերին անվանում էին «ալբանա-

ցիների ասիական տեսակը», նկատի ունենալով նրանց վերոհիշյալ հատկանիշները: Իսկ կրթված այն քրդերը, որոնց մոտ առկա է Թուրքիայից «անջատման» ձգտումներ, անգլիացիների կարծիքով զուրկ էին նշանակալից ազդեցությունից:

1920թ. օգոստոսի 10-ին կնքվեց Սևրի դաշնագիրը, որն այսպես կոչված Վերսալյան համակարգի պսակն էր: Ըստ էության այդ պայմանագիրը մահվան դատավճիռ էր Օսմանյան կայսրության համար, եթե այն իհարկե գործնականում իրագործվեր կյանքում: Պայմանագիրը Հայաստանը դե-յուրե ճանաչեց որպես ազատ, անկախ և ինքնիշխան պետություն: ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին թողնվեց Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների որոշումը Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի վիլայեթների շրջանակում: Մոտ երեք ամիս հետո պրեզիդենտը որոշեց սահմանները (հրապարակվեց 1921թ. նոյեմբերի 22-ին և Հայաստանը քարտեզի վրա ստացավ մի տարածք, որը հավասար էր մոտ 127.000 քառ. կմ-ի):[44]

Սակայն այդ տարածքները գտնվում էին թուրքերի հսկողության տակ և դաշնակիցները չասացին, թե ինչպես էին հայերը ստանալու թղթի վրա իրենց տրված հողերը (Ֆ. Նանսեն), մանավանդ որ իրենց դեմ կանգնած էր ոչ թե քայքայված ու նսարացած սուլթանական բանակը, այլ ազգայնական ներշնչանքներով ոգևորված քեմալականների նորաստեղծ զինված ուժերը:

Կարևոր է նշել, որ Սևրի պայմանագրով հայկական վեց վիլայեթներից երեքը դուրս նետվեցին նրա տարածքից: Մերժված վիլայեթների մի մասը մնաց Թուրքիային, իսկ մյուս մասը՝ Եփրատից արևելք, ամրակցվեց Քրդստանին: Այսպիսով քրդական հարցը ընդգրկվեց Սևրի պայմանագրի մեջ (Երրորդ բաժին, «Քրդստան», հոդվածներ 62-64): Դա նշանակում էր, որ առաջին անգամ միջազգային-իրավական պայմանագրային պրակտիկայում դրվում էր քրդական հարցը: Ընդ որում, այդ պայմանագիրը ըստ էության վերաբերում էր միայն Թուրքիայում ապրող քրդերին: Սակայն ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ Քրդստանը այնտեղ չէին ստեղծում, որտեղ պետք էր ստեղծել: Օրինակ, Քրդստանին հատկացվող Դերսիմի և Խարբերդի սանջակները էթնիկական և աշխարհագրական ստումով կազմում էին Հայկական բարձրավանդակի անբաժանելի մասը: Դա «բացահայտ քայլ էր, ուղղված Հայաստանի կենսական շահերի դեմ,-գրում է Ն. Ադոնցը: Իհարկե հայերը դաշնակիցներից պակաս շահագրգռված չեն անկախ Քրդստանի ստեղծմամբ,-շարունակում է նա: Այդ ուղիով անգիտակից քուրդ ցեղապետերը կդադարեն, վերջապես թուրքական քաղաքագետների ձեռքին չար գործիք լինելուց... Օտար հողում նման արհեստական կառույցի գաղափարը ավելի շատ կվայելեր ծեր մոլլա Իդրիսին կամ թուրքական կառավարողներից նրան ընդօրինակողներին, ովքեր երազում են հայկա-

կան շրջանների քրդացման մասին: Բայց որ եվրոպական դիվանագետները ընկալեին և սրբագործեին հայկական կոտորածների ոգեշնչողների ստոր քաղաքականությունը, ապշեցուցիչ ու անսպասելի բան էր: Այդ ակտի քաղաքական աստառը, ըստ երևույթին, այլ է, և կարելի է հասկանալ, եթե հիշեք 1916թ. Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կայացած գաղտնի համաձայնությունը Հայաստանի բաժանման մասին ճիշտ և ճիշտ խարբերդի գծով»:[45]

Անշուշտ Սևրի դաշնագիրը ճանաչում էր Թուրքիայի Արևելյան նահանգների՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի ունեցած իրավունքները, ընդ որում դա կատարվում էր մի այնպիսի ժամանակ, երբ դրանք ամբողջությամբ ամայացվել ու դատարկվել էր իր վաղեմի բնակիչներից: Սակայն ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ Անտանտի գծով դաշակիցները «ավելի լավ բան չմտածեցին, քան Հայաստանը խցկելը մահմեդական պետությունների շղթայի մեջ, վանել նրան իրենցից հարավում, կտրելով նրան Ռուսաստանից հյուսիսում: Հայերը ջանում էին ձեռք բերել ազատ անկախ հայրենիք, բայց ոչ լույսից կտրված բանտ, որը պահպանում են թուրքերը, թաթարները, քրդերը և նրանց նմանները»,-նշում է Ն. Ադոնցը:[46]

Սևրի պայմանագրի հոդվածները Քրդստանի մասին, սակայն լրջորեն չընդունվեցին տերությունների կողմից:[47] Այդ պայմանագրի քրդական հոդվածների մասին Լլոյդ Ջորջը արտահայտվել է հետևյալ կերպ. «Քրդստանին տրամադրվում էր տեղական ինքնավարություն, մեկ տարուց հետո Թուրքիայից անջատվելու իրավունքով»:[48] Սակայն ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով պետք է իրականացվեր այդ անջատումը, ոչինչ չէր ասվում:

Բոլոր դեպքերում, թեև Սևրի պայմանագիրը շուտով կորցրեց իր իրավաբանական ուժը, սակայն այն խորհրդանշում էր միջազգային իրավունքի կողմից քուրդ ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Ինչ վերաբերվում է հայերին, ապա նախ այդ պայմանագրի ստորագրումով Հայաստանը մտնում էր միջազգային դաշնագիր ստորագրողների շարքը իբրև անկախ պետություն: Այնուհետև, տերությունները ճանաչեցին հայ ժողովրդի պետականություն ունենալու անկապտելի իրավունքը: Նույնիսկ այն բանից հետո, երբ պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները կորցրին իրենց իրավաբանական ուժը, դրանք երբեք չկորցրին իրենց նշանակությունը և այսօր էլ շարունակում են մնալ որպես հայկական հարցի միջազգային ճանաչման խորհրդանիշ, իսկ Հայաստանը որպես միջազգային հարաբերությունների համակարգում ինքնուրույն սուբյեկտ: Այլ կերպ ասած, Սևրի պայմանագրի բարոյական ուժը մնում է ընթացքի մեջ: Այդ պայմանագրի գաղափարական և բարոյական գործոնները ուժի մեջ են նաև այն պատճառով, որ

այդ պայմանագիրը Թուրքիայից բացի ոչ մի պետություն չեղյալ չի հայտարարել:

Սևրի դաշնագիրը Հայաստանի համար միաժամանակ եղավ, Հովհաննես Քաջազնունու արտահայտությամբ, «մի տեսակ կապույտ թռչուն», «անշոշափելի ու անհասանելի»:[49] Սևրի պայմանագիրը բորբոքեց թե՛ քեմալական Թուրքիային և թե՛ Խորհրդային Ռուսաստանին: Երկու պետություններն էլ Հայաստանը դիտեցին իբրև իրենց ամենավտանգավոր թշնամու՝ Մեծ Բրիտանիայի արբանյակը: Մեջլիսի նիստում Մուստաֆա Քեմալը սուլթան Վահիդեդդինին, մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշային և մի շարք այլ աստիճանավորների, որոնք մասնակից էին Սևրի պայմանագրի ստորագրմանը, անվանեց դավաճան: Նրա առաջարկությամբ մեջլիսում օրենք ընդունեց հեռակա կարգով նրանց դատապարտելու պետական դավաճանության համար:[50]

1921թ. գարնանը Մեծ Բրիտանիայի գաղութների գծով նախարար Ուինստոն Չերչիլը հետևյալ կերպ էր գնահատում միջազգային իրադրությունը Անատոլիայում Ինենյու վայրի մոտ քեմալականների կողմից հունական բանակին հասցված ծանր հարվածից հետո. «Մեզ համար դրա հնարավոր հետևանքները ծայրահեղ կերպով անբարենպաստ են: Թուրքերը կհայտնվեն բոլշևիկների գրկում. Միջագետքում կբռնկեն հուզումներ ճիշտ այն ճգնաժամային պահին, երբ մեր բանակը այդ շրջաններում կրճատվում է. ամենայն հավանականությամբ մեզ չի հաջողվի պահել Մոսուլն ու Բաղդադը առանց մեծ ու ծախսատար բանակի... Հայերը ստիպված են ենթարկվելու նոր փորձությունների»:[51]

Նման իրադրության պայմաններում 1921թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 14-ը Լոնդոնում տեղի ունեցավ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կառավարությունների ղեկավարների և արտաքին գործերի նախարարների խորհրդաժողովը: Վերջինս «արդյունք էր այն դիմադրության, զոր Թուրքիա ցույց տվավ Սևրի դաշնագրի պայմաններուն ենթարկվելու դեմ»,- գրում է Ալեքսանդր Խատիսյանը:[52] Լոնդոնի խորհրդաժողովի քննարկումների գլխավոր առարկան էր Սևրի դաշնագրի պայմանների վերաքննությունը: Անկարան և Ստամբուլը փաստորեն խորհրդաժողովին ներկայացան միացյալ պատվիրակությամբ, որը գլխավորում էր Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի արտաքին գործերի նախարար, ծագումով չերքեզ Բեքիր Սամի-բեյը: Վերջինս պահանջեց վերականգնել 1914թ. Թուրքիայի սահմանները, վերադարձնել Իզմիրը և Կիլիկիան: Լոնդոնի խորհրդաժողովում հայկական հարցի հետ միաժամանակ քննարկման առարկա դարձավ նաև քրդական հարցը: Բրիտանական պատվիրակության ղեկավար լորդ Քերզոնը հայտարարեց, որ թուրքերը պետք է ինքնավարություն տրամադրեն քրդերին: Փետրվարի 24-ին Բեքիր Սամի-բեյը իր ծավալուն ելույթում հանգամանորեն շարադրեց թուրքական միացյալ պատվիրակության դիրքորոշու-

մը հայկական և քրդական հարցերի կապակցությամբ: Նա հայտարարեց, որ «մենք գտնում ենք, որ հողային խնդիրների ուշադիր ուսումնասիրությունը, մասնավորապես Հայաստանի և Քրդստանի վերաբերմամբ, հնարավորություն է տալիս արդարացի լուծում գտնելու էական կետերի մեջ»: Այնուհետև նա ավելացրեց, որ Թուրքիան ճանաչում է Հայաստանի հետ իր ունեցած սահմանը, որը որոշվել է 1920թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով: Ինչ վերաբերում է քրդական հարցին, ապա ըստ Բեքիր Սամի-բեյի, քրդերը ոչինչ չեն ցանկանում բացի նրանից, որ թուրքերի հետ ապրեն ինչպես եղբայրներ:[53] Այլ կերպ ասած, թուրքական պատվիրակությունը հանդես եկավ քրդերի ազգային ինքնորոշման դեմ, իսկ դա նշանակում էր, որ Անկարան փաստորեն պահանջում է չեղյալ հայտարարել քրդերին վերաբերող Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածները: Միաժամանակ մեջտեղ բերելով թուրքական ավանդական «փափուկ բարձը» Բեքիր Սամի-բեյը հայտարարեց, որ «Թուրքիայի համար Հայաստանի և Քրդստանի ապագա ճակատագրերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ նրանք հարում են նրա արևելյան սահմաններին»: Միաժամանակ թուրքական պատվիրակության ղեկավարը հասկացրեց, որ քրդական հարցը իրենք դիտում են որպես Թուրքիայի ներքին հարց:[54]

Սակայն լորդ Քերզոնը համառ հետևողականությամբ պահանջեց Սևրի պայմանագրի հայկական և քրդական հոդվածները ենթարկել նոր քննարկման, ընդ որում շեշտելով, որ Անտանտի տերությունները դրանով գնում են Թուրքիայի նկատմամբ որոշակի զիջման, համաձայնվելով, որ Հայաստանի և Քրդստանի ապագայի հարցերը ենթարկվեն կրկնակի քննարկման: Հնարավորին չափ շրջանցելով Հայկական հարցը, Բեքիր Սամի-բեյը կաշվից դուրս էր գալիս խորհրդաժողովի մասնակիցներին համոզելու համար, որ քրդերը հավուր պատշաճի ներկայացված են ԹԱՄԺ-ում, որ քրդերը միշտ հայտարարել են, որ իրենք միշտ Թուրքիայի հետ կազմել են անբաժան մաս, որ երկու ռասաները միավորված են ընդհանուր զգացումներով, ընդհանուր մշակույթով և ընդհանուր կրոնով»: Այնուհետև վերապահում անելով, Բեքիր Սամի-բեյը նշեց, որ ճիշտ է, զինադադարից հետո ոչ մեծ թվով քրդեր ցանկություն են հայտնել անջատվել Թուրքիայից և նրանց ջանքերով Կ.Պոլսում ստեղծվել է մի «ոչ մեծ կոմիտե» օսմանյան երկու սենատորների գլխավորությամբ, որոնցից մեկը եվրոպացիներին ոչ անհայտ Շերիֆ-փաշան է: Սակայն այդ կոմիտեն ինքնակոչ մի մարմին էր և ոչ մեկին չէր ներկայացնում և առաջնորդվում էր ավելի շուտ անձնական, քան ազգային մոտիվներով: Դրան թուրքական պատվիրակության ղեկավարը ավելացնում է, որ հիշյալ կոմիտեի անդամներին ներկայումս չեն ճանաչում նույնիսկ Կ.Պոլսի քրդերը, որոնք չեղյալ են հայտարարել կոմիտեի անդամ լինելու նրանց իրավունքները: Իր այդ հայտարարությունը ճշմարտության տեղ

դաշնակիցներին մատուցելու համար, Բեքիր Սամի-բեյը չի խորշում նաև հայտարարել, որ Անկարայի կառավարությունը պատրաստ է Քրդստանում ընդունելու մի հանձնաժողովի, որն իրավասու է կազմակերպելու հետաքննություն և նույնիսկ հանրաքվե: Վիլայեթների համար Թուրքական Ազգային Մեծ Ժողովի կողմից մշակված նոր «օրգանական ստատուտը», քրդերին հատկացնում է տեղական ինքնավարություն,-ստում է Բեքիր Սամին: Նման ինքնավարություն կստանան գերակշիռ քրդական տարր ունեցող շրջանները: Սակայն Սևրի պայմանագրի 62-րդ հոդվածում նշված Քրդստանի սահմանները, ավելացնում է նա,- «չեն համապատասխանում ռեալ ազգագրական իրադրությանը»: Մամուրեթ-էլ-Ազիզ և Դիարբեքիր վիլայեթների արևմտյան և հարավային մասերը, հատկապես Սիվերեք սանջակը մաքուր թուրքական են,-նշեց նա: Դիարբեքիր վիլայեթում միայն Դերսիմի գավառն է քրդական: Քրդերը առավել խիտ զանգվածներով բնակեցված են Բիթլիս, Վան և մասամբ Մոսուլ վիլայեթներում: Նրանք գերակշռում են նաև իրանական սահմանների երկայնքով և ապա դեպի հյուսիս ուղղությամբ: Մոսուլի վիլայթում Էրբիլի, Ալթինքյոփրուի և Տուզ-Խուրմաթլիի շրջանները գերազանցապես բնակեցված են քրդերով:

Երբ լորդ Քերզոնը պահանջեց կոնկրետ փաստեր բերել քրդերին ինքնավարություն տրամադրելու վերաբերյալ թուրքական կառավարության մտադրությունների մասին, ստույգ նշել այդ ինքնավար Քրդստանի սահմանները և այլն, Բեքիր Սամի-բեյը խուսափելով պատասխանից, սկսեց ճամարտակել այն մասին, որ Անկարայի կառավարությունը որոշել է վարել ապակենտրոնացման քաղաքականություն, որ քրդերի և թուրքերի միջև տարբերությունը մեծ չէ, քան անգլիացիների և շոտլանդացիների միջև և այլն:[55]

Թուրքական պատվիրակության նման գործելակերպը անկասկած վկայում է այն մասին, որ Լոնդոնում թուրքական փորձված դիվանագետները եկել էին այն համոզման, որ Եռյակ համաձայնության երկրներն արդեն նախապատրաստված են թուրքերի նկատմամբ զիջումների գնալու հայկական և քրդական հարցերի կապակցությամբ և վերանայման ենթարկելու Հայաստանի և Քրդստանի վերաբերյալ Սևրի դաշնագրի համապատասխան կետերը: Չի բացառվում նաև, որ քեմալական հետախուզությունն այդ առթիվ ուներ նաև հավաստի տեղեկություններ: Իսկ որ այդպիսի տրամադրություններ գոյություն ունեին Լոնդոնում և Փարիզում, վկայված են բազմաթիվ փաստերով:[56] Այսպես, օրինակ, 1921թ. մարտի 9-ին Լոնդոնում Բեքիր Սամի-բեյը Ֆրանսիայի աբտգործնախարար Բրիանի հետ ստորագրեց անջատ ռազմական, քաղաքական ու տնտեսական մի համաձայնագիր, ըստ որի Ֆրանսիան Կիլիկիայում և նրան հարող Անատոլիայի հարավ-արևելյան շրջաններում իր ռազմական ներկայությունը դադարեցնելու դիմաց Կիլիկիայում, Դիար-

բեքիրում և Սեբաստիայում ձեռք էր բերում գերակշիռ տնտեսական դիրքեր: Հարավային և Հարավ-Արևելյան Անատոլիային վերաբերող նմանատիպ պայմանագիր մարտի 12-ին Լոնդոնում կնքվեց նաև Թուրքիայի և Իտալիայի միջև:[57] Այն ստորագրեցին Իտալիայի արտգործնախարար կոմս Սֆարցան և Բեքիր Սամի-բեյը: Ճիշտ է, Լոնդոնում Բեքիր Սամի-բեյի կողմից կնքված այդ համաձայնագրերն ու պայմանագրերը չվավերացվեցին ԹԱՄԺ-ի կողմից, որպես Սևրի ոգով կնքված փաստաթղթեր և ինքը՝ Բեքիր Սամի-բեյը հեռացվեց իր պաշտոնից, սակայն այդ բոլորը այնուամենայնիվ վկայում էր այն մասին, որ Անտանտի մայրաքաղաքներում Թուրքիայի նկատմամբ հովերը սկսել էին փչել այլ ուղղությամբ: Դա հատկապես ցայտուն կերպով սկսեց նկատվել 1921թ. մարտի 16-ին Թուրքիայի և ՌՍՖՍՀ-ի միջև «բարեկամության ու եղբայրության պայմանագրի» ստորագրումից հետո, ինչպես նաև նույն օրը կնքված Անգլիա-Խորհրդային Միություն համաձայնագրից հետո, որով Մոսկվան պարտավորվում էր դադարեցնել իր հակաանգլիական քարոզչությունը բրիտանական գաղութներում, իսկ Լոնդոնը պարտավորվում էր չպաշտպանել նախկին ռուսական կայսրության երկրներից ստեղծված նորակազմ պետություններին: Դա մահացու հարված էր Հայաստանի համար, որովհետև Անգլիան դադարեցնելու էր իր օգնությունը հայերին:

Լոնդոն մեկնած հայկական պատվիրակությունը բազմամարդ էր: Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահն էր Ավետիս Ահարոնյանը: Ազգային պատվիրակությունը գլխավորում էր Պողոս Նուբար փաշան: Այս զույգ պատվիրակություններին անդամակցում էին գեներալ Բագրատունին, դաշնակցություն կուսակցության գործիչներ Մ. Վարանդյանը, Գ. Փաստրմաճյանը (Արմեն-Գարո), Սեպուհը և Ս. Արարատյանը: ՀՀ պատվիրակության խորհրդականն էր Հովհաննես խան Մասեհյանը: Հայկական երկու պատվիրակությունները կատարելապես համերաշխորեն պահանջում էին Սևրի դաշնագրի Հայաստանին վերաբերող կետերի անփոփոխ պահպանում: Ա. Ահարոնյանը հայտարարեց, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը մատնացույց արեց Բեքիր Սամի-բեյը, ստորագրվել է սպառնալիքի և ճնշման տակ և այն վավերացված չէ:

Ի վերջո Լոնդոնի խորհրդաժողովում ընդունված փաստաթղթում Հայաստանի մասին ընդունվեց առանձին հոդված, (9-րդ հոդվածը), որտեղ Սևրի պայմանագրի Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու մասին 88-րդ հոդվածը փոխարինվում էր հայերի համար «Ազգային օջախ» ստեղծելու մի կետով: «Ի՞նչ էր օջախը, և ուրկե առաջ եկավ» այն,- գրում է Ալ. Խատիսյանը:[58] Ճիշտ է, 1921թ. սեպտեմբերի 21-ին Ազգերի լիգան միաձայն որոշեց, որ ինքը գտնում է, որ այդ Օջախը պետք է միանգամայն անկախ լինի Թուրքիայից,[59] սակայն դա բնավ չէր վախում հարցի էությունը: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Օջա-

խի գաղափարին վերաբերվեց թշնամաբար, գանելով, որ ինքը, ինչպես և բոլոր հայերը, պարտավոր են շարունակել պաշտպանել Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը: Մինչդեռ Ազգային պատվիրակությունը հաշտվում էր Օջախի գաղափարի հետ և ընդունում էր այն:[60]

Ինչ վերաբերում է քրդական հարցին, ապա 1921թ. մարտի 11-ին դաշնակիցները հայտարարեցին, որ իրենք պատրաստ են ընդունելու Սևրի պայմանագրի փոփոխությունները այն «գոյություն ունեցող իրադրության փաստերին հարմարեցնելու իմաստով»:[61] Դա նշանակում էր, որ Եռյակ համաձայնության քաղաքական ծրագրերից իսպառ հանվում էր անկախ կամ ինքնավար Քրդստան ստեղծելու հարցը:

Վերին աստիճանի ուշագրավ է Լլոյդ Ջորջի և Բեքիր Սամի-բեյի միջև տեղի ունեցած զրույցը, որը կայացավ Լոնդոնի խորհրդաժողովի աշխատանքների ավարտից անմիջապես հետո, մարտի 16-ին, բրիտանական համայնքների պալատի շենքում: Անգլիական վարչապետը, խոսելով այն զիջումների մասին, որ Լոնդոնը կարող է անել Թուրքիային, հիշատակեց Հայաստանի ու Քրդստանի անունները: Իսկ Բեքիր Սամի-բեյի հայտարարեց, որ Միջագետքը «թանկ գին չէ հանուն բրիտանական բարեկամության», դրան ավելացնելով, որ Անկարան մտադիր չէ Անգլիային անախորժություններ պատճառել Մոսուլում:[62] Ակնհայտ է, որ քաղաքական այդ սակարկությունը գնում էր հայ և քուրդ ժողովուրդների հաշվին: Իսկ Ֆրանսիան ձգտում էր ամեն գնով հաշտություն կնքել Թուրքիայի հետ: 1921թ. հոկտեմբերի 20-ին Ֆրանսիայի կողմից լիազորված Ֆրանկլեն-Բույոնը Անկարայում քեմալական կառավարության հետ կնքեց անջատ ֆրանս-թուրքական խաղաղության պայմանագիր, որը հանդիսացավ Մերձավոր Արևելքում Սևրի համակարգի կործանման կարևոր էտապներից մեկը: Ֆրանսիան դրանով ըստ էության հրաժարվում էր Սևրի պայմանագրից և ճանաչում էր քեմալական կառավարությանը: Անկարա մեկնելուց առաջ Ֆրանկլեն-Բույոնի և Ալ. Խատիսյանի միջև տեղի է ունենում հանդիպում, և ֆրանսիացի դիվանագետը խոստանում է իր բանակցությունների ժամանակ աչքի առջև ունենալ նաև հայերի շահերը, միաժամանակ խորհուրդ տալով, որ «հայերու շահերը պաշտպանելու համար պետք է հաշտվիլ թուրքերուն հետ, անոնց վստահությունը ձեռք բերել»[63]

Ֆրանկլեն-Բույոնի պայմանագիրը ողբալի հետևանքներ ունեցավ հայության համար: Կիլիկիան դատարկվեց հայերից և 150 հազար մարդ ստիպված եղավ ապաստան գտնել Սիրիայում և Հունաստանում:

1922թ. մարտին Փարիզում տեղի ունեցած մերձավորարևելյան հարցի վերաբերյալ խորհրդաժողովի ժամանակ Անտանտի տերությունները նոր զիջումներ արեցին Թուրքիային, ի թիվս որոնց, Լոնդոնի խորհրդաժողովում հայերին խոստացված «Հայ Ազգային օջախը» «կը դառնար հայտնի չէ թե ու՞ր տեղավորված օջախ»:[64]

Ֆրանկլեն-Բույոնի պայմանագիրը անուղղակի առնչություն ունեցավ նաև քրդական հարցի հետ այն առումով, որ Եռյակ համաձայնության անդամ երկրներից մեկը դուրս էր գալիս Սևրի համակարգից, դրանով իսկ Սևրի պայմանագիրը իր պարունակած քրդական հարցի վերաբերյալ հոդվածներով դատապարտելով չգոյության: Արտահայտելով ֆրանսիական կառավարող շրջանների այդ տրամադրությունները, Փարիզի քաղաքական շրջաններում մեծ հեղինակություն վայելող հրապարակախոս Մորիս Պերնոն գրեց. «Այլևս մենք չպետք է վտրճարկումների ենթարկենք ոչ ինքնավար Քրդաստանի և ոչ էլ անկախ Հայաստանի հարցերը»:[65]

1922թ. հույների նկատմամբ քեմալականների տարած վճռական հաղթանակից հետո Եռյակ համաձայնության պետությունները սկսեցին նախապատրաստական աշխատանքներ տանել Թուրքիայի հետ պայմանագիր ստորագրելու համար: Այդ նպատակով Լոզանում գումարվեց խորհրդաժողով (1922թ. նոյեմբեր-1923թ. հուլիս), որը կոչված էր վճռել Թուրքիայի և դաշնակիցների միջև բոլոր վիճելի խնդիրները:

Մինչև խորհրդաժողովի բացվելը, Ալ. Խատիսյանը Լոնդոնում հանդիպում է ունենում Ֆորին Օֆիսի Մերձավոր Արևելքի բաժնի ղեկավարներ Վանսիտարտի և Օսբորնի հետ, որոնք բառացիորեն ասում են հետևյալը. «Թուրքերու բռնած դիրքը լավ նախագուշակում չէ համագումարի հաջողության տեսակետով և որ դաշնակիցները այսօր զուրկ են իրական միջոցներե թուրքերու վրա ազդեցություն գործադրելու համար: Հասկցուցին, թե ոչ ոք պատերազմ կուզե: Թե թուրքերը լավ ըմբռնելով այս հանգամանքը՝ պիտի համառին մինչև ծայրը: Թե դաշնակիցներու մեջ ալ այս խնդրի նկատմամբ չկա միակամ ոգի և մինչև իսկ անոնցմե ոմանք կօգնեն թուրքերուն դրամով և զենքով: Թե հայերու պահանջները կենսական խնդիրներ չեն Դաշնակիցներու համար, որոնք զբաղած են ավելի նեղուցներու հարցով և միայն Հայկական հարցի համար Դաշնակիցները հազիվ թե խզեն հարաբերությունները Թուրքիո հետ»:[66]

Երբ այս դառը ճշմարտությունը լսելուց հետո Ալ. Խատիսյանը հիշեցնում է Օսբորնին, որ Անգլիան բազմիցս խոստումներ է տվել հայ ժողովրդին, հետևում է հետևյալ պատասխանը. «Ի՞նչ ընենք, մենք խոստացեր էինք հույներուն Զմյուռնիան և Թրակիան, սակայն չկրցանք իրագործել մեր խոստումը»:[67]

Նմանատիպ պատասխաններ Ալ. Խատիսյանը ստացավ նաև Փարիզում: Առանց ուժի գործադրման թուրքերի նկատմամբ հնարավոր չէ հասնել որևէ արդյունքի, իսկ ուժ բանեցնող չկա. ժողովուրդները չեն ցանկանում այլևս պատերազմել,- ահա ֆրանսիացիների պատասխանը:

Հայկական զույգ պատվիրակությունների մասնակցությունը Լոզանի խորհրդաժողովին մերժվեց դաշնակիցների կողմից այն պատճա-

ռաքանությամբ, որ Հայաստանն ընդունել է խորհրդային իրավակարգ, որի իշխանությունը ճանաչված չէ դաշնակիցների կողմից: Դա նշանակում էր, որ հայկական պատվիրակությունը զրկվում էր խորհրդաժողովի նիստերին անմիջական մասնակցություն բերելուց: Խորհրդաժողովում լորդ Քերզոնը դիմելով թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինենյուին հայտարարեց. «Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը նայում է մեզ, սպասելով, որ դուք բավարարություն կտաք հայերին»: Դրան հետևեց Ինենյուի պատասխանը. «Քաղաքակիրթ աշխարհը ավելի շատ ձեզ է նայում, որովհետև դուք եք, որ անվերջ խոստումներ եք տվել հայերին, իսկ մենք որևէ խոստում չենք տվել»:[68]

Թուրքական պատվիրակությունը փորձում էր մերժել Հայկական հարցի քննարկումը այն պատճառաբանությամբ, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով որոշված են Հայաստանի և Թուրքիայի սահմանները, իսկ Թուրքիայում բնակվող հայերի հարցը իրենց ներքին խնդիրն է:

Խորհրդաժողովի քաղաքական հանձնաժողովը Թուրքիայի սահմանների խնդրի քննության առնչությամբ որոշեց քննարկման առարկա դարձել նաև Հայկական հարցը: Այդ կապակցությամբ հայկական զույգ պատվիրակությունների ներկայացուցիչները հրավիրվեցին մասնակցելու ենթաժողովի դեկտեմբերի 26-ի նիստին:

Լոզանում անգլիացիները համառորեն պնդում էին, որ հայերի համար Ազգային օջախ ստեղծվի Կիլիկիայում, մինչդեռ ֆրանսիացիները առաջարկում էին այն հիմնել Թուրքիայի արևելյան վիլայեթներում, Կովկասահայաստանի մոտ: Դրա պատճառը կայանում էր նրանում, որ Անգլիան ցանկանում էր Սիրիայի սահմանների հարևանությամբ իր համար ստեղծել մի հենակետ: Հենց այդ նույն պատճառով ֆրանսիացիները չէին ցանկանում, որ Հայկական օջախը ստեղծվի իրենց հովանավորության ներքո գտնվող երկրի սահմանների մոտ:

Հայկական պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի միջոցով առաջադրեց Ազգային օջախի հետևյալ տարբերակը. այն պետք է ստեղծվի Արևմտյան Հայաստանի տարածքում՝ ելքով դեպի ծովը: Ընդ որում նշվում էր, որ հայկական պատվիրակությունները չեն առարկի, եթե Ազգային օջախը ստեղծվի Կիլիկիայում:[69]

Ինչ վերաբերում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին, ապա վերջինս Լոզանում իր պատվիրակության միջոցով պաշտպանեց Ազգային օջախի գաղափարը: Իր 1922թ. դեկտեմբերի 30-ի թվակիր հայտարարությամբ ամերիկյան պատվիրակությունը տեղեկացնում էր խորհրդաժողովի մասնակից պետություններին, որ հայկական անկախ օջախի ստեղծման առաջարկը առաջ է բերել Միացյալ Նահանգների բնակչության մեծ մասի խորունկ հետաքրքրությունն ու համակրանքը:[70] «Արմենիա-Ամերիկա» միությունը խորհրդաժողովին ներկայացրեց Ազգային օջախի մի մանրամասն ծրագիր, միաժամանակ նշելով այն կյանքի կո-

չելու համար անհրաժեշտ նյութական միջոցների աղբյուրը: Հիշյալ միությունը գտնում էր, որ Հայկական Օջախի հաստատման վայրը կարող է որոշել այդ նպատակով ստեղծվելիք իրազեկ հանձնախումբը: Միաժամանակ միությունը գտնում էր, որ Հայկական Օջախի հաստատման լավագույն վայր կարելի է համարել Եփրատից արևմուտք ընկած Սիրիայի հյուսիսային մասը: Այդտեղ հաստատված Օջախը պետք է ունենար ելք դեպի ծով: Նրա տարածքը կազմելու է 18 հազար քառակուսի մղոն: Ըստ ամերիկյան տեսակետի Օջախը պետք է լիներ անկախ՝ Ազգերի Դաշնակցության հովանավորության ներքո և արտաքին քաղաքականության բնագավառում պետք է վարեր չեզոքության գիծ: Նախագծի հեղինակները այն տեսակետին էին, որ տարբեր վայրերում ցրված արևմտահայ փախստականների մեծագույն մասը ցանկություն կհայտնի վերադառնալ և բնակություն հաստատել Հայկական Օջախում:[71]

Սակայն ամերիկյան այս ծրագրին գործնական իրականացում տալու համար, բնականաբար, անհրաժեշտ էր «գործադրել ազդու միջոցներ», մի բան, որ Վաշինգտոնը չցանկացավ անել: Խորհրդաժողովում բրիտանական ներկայացուցիչները (լորդ Քերզոն, Հորացիոս Ռումբոլտ և այլն) աշխատում էին հոմոզել թուրքական պատվիրակությանը, որ սիրիական սահմանների մոտ կամ որևէ այլ վայրում հայերի համար Ազգային Օջախի ստեղծումը նպատակ ունի նրանց հավաքել մի տեղ, որտեղ նրանք կարողանային պահպանել իրենց ազգությունը, լեզուն և իրենց մշակույթը: Ընդ որում անգլիացիները չեշտում էին, որ այդ տարածքը պետք է մնա թուրքական իշխանության ներքո և կառավարվի թուրք գեներալ-նահանգապետի կողմից:[72]

Խորհրդային Ռուսաստանը ևս չցանկացավ մթագնել իր հարաբերությունները քեմալական Թուրքիայի հետո հանուն հայերի համար Ազգային Օջախի: Ի պատասխան այսպես կոչված Հայասերների միության հուշագրի, 1923թ. Խունվարի 26-ին արտաքին գործերի ժողկոմ Գեորգի Չիչերինը իր պատասխան նամակում ընդհանրապես խուսափելով «հայերի համար Ազգային Օջախ» բառակապակցության օգտագործումից, գրում էր, որ Ռուսաստանի և Ուկրաինայի կառավարությունները առաջարկում են իրենց սահմանների մեջ տեղավորել հայ փախստականներին: Սա նշանակում էր, որ Չիչերինը Հայկական Օջախը տեղափոխում էր Ռուսաստան: Իսկ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ սպանել Թրքահայաստանի դատը:[73]

Լոզանում թուրքական պատվիրակությունը Իսմեթ Ինենյուի և Ռիզա Նուր բեյի գլխավորությամբ զարգացնում էին այն տեսակետը, որ Հայկական օջախի ստեղծումը իբր հավասարազոր է Թուրքիայի մասնատմանը: Որ առանց այն էլ Թուրքիան սեղմվել է իր էթնիկական սահմանների մեջ: Որ Թուրքիան չի կարող իր տարածքում գտնել հողի մի կտոր նման ծրագրի իրականացման համար: Իսմեթ Ինենյուն նույնիսկ

անցնելով դիվանագիտական պատշաճության սահմանները, ցինիկորեն հայտարարեց, որ Եվրոպայում կան չքնաղ անկյուններ, եվրոպացիները, որոնց տիրապետության տակ գտնվող տարածքները անհամեմատ ավելի մեծ են, քան Թուրքիայինը, արդյոք չեն ցանկանում շնորհ անել հայերին և նրանց համար հատկացնել տարածքներ Ազգային Օջախ ստեղծելու համար:[74] Ավելին, Ռիզա Նուր բեյը, ոտքի կանգնելով կտրականապես հայտարարում է, որ ինքը չի մասնակցի մի այնպիսի նիստի, որտեղ խոսք է գնում Հայկական հարցի մասին: Այս հայտարարությունից հետո նա իր խորհրդականների հետ դուրս է գալիս ժողովասրահից, իր հետևից ուժգին շրխկացնելով դուռը:

Ալ. Խատիսյանը վկայում է, որ այս միջադեպից հետո «Հայկական Հարցի քննությունը դադրեցավ քաղաքական տեսակետով»: Այլ կերպ ասած, հարցը հանվեց քաղաքական հարթությունից և տեղափոխվեց ֆիլանտրոպիստական հարթության և լորդ Քերզոնի արտահայտությամբ լուռ մահացավ:[75] Այսպիսով, Լոզանում Հայկական հարցը Ազգային Օջախի գաղափարից հասավ Թուրքիայի որևէ անկյունում հայերի կենտրոնացման մտքին: Սա էր վերջին պահանջը, որ ներկայացվեց թուրքերին: Դրանից հետո խորհրդաժողովը առհասարակ իր օրակարգից հանեց Հայկական հարցը, դրանով իսկ տապանաքար դնելով Սևրի պայմանագրի վրա: Լոզանի եզրափակիչ արձանագրության մեջ հայերի մասին այլևս փոքրիկ հիշատակություն անգամ չկար:[76] Հիրավի, «Լոզանը դարձավ Հայկական Դատի ողբերգական փուլերեն մեկը» (Ալ.Խատիսյան):

Ինչ վերաբերում է քրդական հարցին, ապա այն Լոզանի խորհրդաժողովում առհասարակ չդրվեց: Արդեն 1921 թվականից սկսած Անտանտի դաշնակիցները իրենց համար փակված էին համարում քրդերի ազգային ինքնորոշման պահանջների վերաբերյալ հարցը: Այսուհետև «Քրդական հարցը վերադառնում էր իր ելակետային վիճակին»[77], այսինքն այն հանվում էր միջազգային-իրավական ատյաններից և վեր էր ածվում քրդաբնակ տարածքները միմյանց միջև բաժանած պետությունների ներքին խնդրի: Իսկ ավելի կոնկրետ, Լոզանի խորհրդաժողովում քրդական հարցը քննարկվում էր որպես Մոսուլի բարդ ու զգայուն խնդրի բաղկացուցիչ մաս:

1923թ. հուլիսի 24-ին Լոզանում դաշնակից պետությունների և Թուրքիայի միջև կքված խաղաղության պայմանագրի տեքստում ոչ մի հիշատակում չէր պարունակվում ոչ միայն քրդերի անկախության կամ ինքնավարության, այլև առհասարակ Քրդստանի մասին: Այսպիսով գերեզման էր իջեցվում նաև Սևրի պայմանագրում պարունակված հոդվածները քուրդ ժողովրդի ազգային երազանքների մասին:

Լոզանի պայմանգքի մեջ պարունակվում էր մի հատուկ բաժին, որը վերնագրված էր. «III Բաժին. Փոքրամասնությունների պաշտպա-

նություն» (հոդ. 38-45): 38-րդ հոդվածում ասվում էր. «Թուրքական կառավարությունը պարտավորվում է Թուրքիայի բոլոր բնակիչներին տրամադրել իրենց կյանքի ու ազատության համապարփակ ու կատարյալ պաշտպանություն, առանց ծագման, ազգության, լեզվի, ռասայի կամ կրոնի տարբերության»:[78]

39-րդ հոդվածը պարտավորեցնում էր թուրքական կառավարությանը «ոչ մի սահմանափակում և արգելք չդնել, որպեսզի ցանկացած թուրքական քաղաքացի օգտվի որևէ լեզվից»:

Սակայն այդ հոդվածները հայ ժողովրդի համար մեռած տառ էին, որովհետև ցեղասպանության կործանարար մրրիկը հայաթափ էր արել ողջ Արևմտյան Հայաստանը, որտեղ այլևս հայեր չէին մնացել, որպեսզի օգտվեին Լոզանի խորհրդաժողովի կողմից տրամադրված այդ ձևական ու չնչին իրավունքներից:

Ինչ վերաբերում է քրդերին, ապա Լոզանի պայմանագրի նշված հոդվածներում փոքրամասնությունների իրավունքների իրավաքաղական երաշխիքների վերաբերյալ կետերում խոսքը գնում էր բացառապես ոչ մահմեդական փոքրամասնությունների մասին:[80] Առհասարակ, Լոզանի պայմանագիրը չէր ճանաչում ոչ թուրք մահմեդականների, այդ թվում նաև քրդերի, «փոքրամասնություն» լինելու ստատուսը:

VAHAN BAIBOURTIAN

FROM THE HISTORY OF POLITICAL CONNECTION OF ARMENIAN AND KURDISH QUESTIONS IN TURKEY IN THE CONTEXT OF INTERNATIONAL DIPLOMACY
(Since World War I Untill Lausanne Conference)

The liberation of small in number peoples based on the principle of self-determination was one of the slogans on the background of which was running World War I.

The plans of the Allied countries envisaged partition of the Ottoman Empire into five main ethnic areas: Turkish Anatolia, Armenia, Syria, Kurdistan and Arabia. Moreover, it was foreseen that independent Armenian and Kurdish states would be created on the territory of Western Armenia and Turkish Kurdistan.

As it is explored in the article, the Armenian Question became paint at issue of the international diplomatic discussions consequent to the Berlin Congress of 1878. As far as the Kurdish Question is concerned, it was first reflected in political schemes of the Great Powers during the years World War I and at the post-war period international diplomatic forums, particularly at Paris Peace Conference of 1919, San Remo Conference of 1920, London Conference of 1921 and etc.

In the provisions of the Treaty of Sévres, signed on August 10th 1920, for the first time in the international legal practice specific decisions were taken in regard of the Armenian and Kurdish issues. Upon those provisions the issue of forming Armenian

and Kurdish independent states on the territory of the Ottoman Empire was put on the agenda.

However, the Treaty of Sévres was never implemented stipulated by the Kemalists-Turkish nationalist's movement in Turkey, Turkish-bolshevik rapprochement, as well as rapprochement between the Allies and the Kemalists. The Lausanne Conference, that took place in 1922-1923, was pursuing the aim of resolving all the disputable issues between Turkey and the Allies. Ncvertheless the Armenian and Kurdish issues were not only neglected, but a tombstone was laid on the Treaty of Sévere and on the Armenian and the Kurdish Questions on the wholc.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Мустафа Кемаль, Путь новой Турции, Москва, 1929, предисловие В. Гурко-Кряжина, стр. XXXIII
2. Նասիպեան Ագապի, Բրիտանիա և Հայկական հարցը 1913-1923թ.թ., Բեյրութ, 1994, էջ 87:
3. Раздел Азиатской Турции. По секретным документам бывшего министерства иностранных дел. Под редакцией Е.А.Адамова, Москва, 1924, стр.158-159.
4. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т.2, Москва, 1957, стр. 5-6.
5. Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 115:
6. Архив полковника Хауза. Подготовлен к печати профессором истории Иэльского университета Чарльзом Сеймуром, т. III, Москва, 1939, стр. 227, 233.
7. Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբներին, Երևան, 1989, էջ 58:
8. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա., Երևան, 1996, էջ 66:
9. Նույն տեղում, էջ 67:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում, էջ 132: Տե՛ս նաև Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, էջ 8-10:
12. Աղոնց Ն., նշվ.աշխ., էջ 104:
13. Ллойд Джордж Д., Военные мемуары, т.V, Москва, 1938, стр. 52.
14. Lord Beaverbrook, Men and Power 1917-1918, London, 1956, p.92, 344.
15. Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 123,127:
16. Lloyd George D., The Truth about the Peace Treaties, London, 1938. p. 1118.
17. Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 121:
18. Precis of Affairs in Southern Kurdistan during the Great War. Baghdad, 1919, p.7-9.
19. Bell G., Review of the Civil Administration of Mesopotamia, London, 1920, p.60.
20. Wilson Arnold T., Mesopotamia 1917-1920. A Clash of Loyalites. A personal and Historical Record, London, 1931, p.84-86
21. Schmidt D.A., Jorney among Brave Men, Boston-Toronto, 1964, p.192-193; Yung E., La Revolte arabe, Vol. I, Paris, 1924-1925, s.109-110.

22. Лазарев М.С., Империализм и курдский вопрос (1917-1923.), Москва, 1989, стр.101.
23. Precis of Affairs…, p.10-11.
24. Տե՛ս Nader Entessar, Kurdish Etnonationalism, London 1992.
25. Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference, Vol.XI, Woshington, 1945, p.576.
26. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т.I, стр. 167.
27. Miller David Hunter., The Drafting of the Covenant. New York-London, 1928, Vol.II, p. 109-110.
28. Նույն տեղում: Տե՛ս նաև Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т.I, стр. 529-531.
29. Miller David Hunter., նշվ. աշխ., հ. I, էջ 186.
30. Архив Внешней политики России, ф. НАИ, сер.А., д.153, л.20.
31. Howard H.N., The Partition of Turkey: A Diplomatic History 1913-1923, New York. 1966. p.221.
32. Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference. Vol. IV, Washington. 1943, p. 153.
33. Այդ մասին մանրամասն տե՛ս General Shérif Pasha, Memarandum on the Claims of the Kurd people, Paris, 1919; Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետության գոյության տարիներին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ XX, Երևան, 2001, էջ 18-21.
34. Лазарев М. С., .. նշվ. աշխ., էջ 137.
35. Bell G., Review…, p.65-66.
36. Տես Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 235: Բայբուրդյան Վ., Հայ քրդական հարաբերությունները, Հայաստանի, էջ 21-23:
37. Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Երևան, 2001, էջ 41-42:
38. АВПР, ф. НАИ, сер. А., д.190, л.121.
39. Documents on the British Foreign Policy, ol. IV, ª 634, p.p.969-970.
40. Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև…, էջ 64-67:
41. Ллойд Джордж Д., Правда о мирных договqрах, т.II, стр. 447.
42. Documents on the British Foreign Policy, Vol. VIII, ª 5, p. 43-44.
43. Նույն տեղում, էջ 44-45.
44. Տե՛ս Treaty of Peace with Turkey, signed at Sévres, August 10, 1920. The Frontier between Armenia and Turkey. As decided by President Woodrow Wilson. November 22, 1920, London, 1920.
45. Աղոնց Ն., Հայկական հա ր ըց, հատ. Ա., էջ 122-123: (Ն. Աղոնցը նկատի ունի 1916թ. ապրիլի 16-ին Պետրոգրադում կնքված անգլո-ֆրանս-ռուսական պայմանագիրը, որի համաձայն պատերազմի ավարտից հետո ռուսական կայսրությանն էին միանալու Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթները): Տե՛ս ,"Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел". Под редакцией Е.А. Адамова, Москва, 1924, док. ª XCII.
46. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա., էջ 131:

47. A History of the Peace Conference of Paris, Vol.VI, p.31.
48. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т.II, стр. 450.
49. Քաջազնունի Հ., Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ51:
50. Миллер А.Ф., Турция, Актуальные проблемы новой и новейшей истории, Москва, 1983, стр. 125.
51. Черчиль В., Мировой кризис, М.-Л., 1932., стр. 271.
52. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 337.
53. Documents on the British Foreign Policy, Vol. XV, International Confereccs and Conversations 1921, № 26, p.p.213-214.
54. Նույն տեղում, №24, էջ 194, 197-198:
55. Նույն տեղում, №26, էջ 213-214:
56. Տե՛ս օրինակ, DBFP, vol. XVII, London, 1970, №41.
57. Տե՛ս Шамсутдинов А.М., Национально-освободительная борьба в Турции, 1918-1923, Москва, 1966, стр. 238-239.
58. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 341:
59. Նույն տեղում:
60. Նույն տեղում, էջ 342.
61. Лазарев М. С., նշվ. աշխ., стр. 247.
62. DBFP, Vol. XV, , № 65, p.441
63. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 348:
64. Նույն տեղում, էջ 350:
65. Pernot Maurice, La Question Turque, Paris, 1923, s. 253.
66. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 356-357:
67. Նույն տեղում, էջ357:
68. Նույն տեղում, էջ 378:
69. Նույն տեղում, էջ 391-392:
70. Նույն տեղում, էջ 394:
71. Նույն տեղում, էջ395-398:
72. Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов, Тифлис, 1926, стр 27.
73. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 398-399:
74. Армянский вопрос на Лозаннской конференции, V, стр19-20.
75. Նույն տեղում:
76. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 402:
77. Лазарев М. С., նշվ. աշխ., стр. 257.
78. Севрский мирный договор и акты подписанные в Лозанне, Москва, 1927, стр. 145.
79. Նույն տեղում, էջ 12:
80. Նույն տեղում, էջ152-154:

ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

1908 Թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ

1908 թ. հուլիսի 23-ի երիտթուրքական հեղափոխությունից անմիջապես հետո վերականգնվեց Օսմանյան Սահմանադրությունը[1] և Երիտթուրքերի առաջնային խնդիրներից մեկը դարձավ ընտրությունների անցկացումը և խորհրդարանի ձևավորումը, որը պետք է դառնար իրենց իշխանության օրինականացման և ամրապնդման հիմքը:

Օսմանյան կայսրությունում 1908 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անցկացված խորհրդարանական ընտրություններն առավել ակնհայտ դարձրին կայսրությունում ձևավորված քաղաքական հոսանքների միջև պայքարը:

Այս պայքարը հիմնականում ծավալվում էր Սահմանադրության և հին վարչակարգի կողմնակիցների միջև, որոնցից յուրաքանչյուրը տարբեր միջոցներով փորձում էր առավել չափով պատգամավորական տեղեր ապահովել խորհրդարանում:

Օսմանյան կայսրության Սահմանադրությունը նախատեսում էր երկաստիճան ընտրություններ, այսինքն, բնակչությունը նախ պետք է ընտրեր ընտրողներին, իսկ վերջիններս, իրենց հերթին, պատգամավորներին[2]: Ընտրական օրենքում, որն ընդունվել էր դեռևս 1877 թ., առկա էին մեծ թվով ընտրական սահմանափակումներ. մասնավորաբար, ընտրելու իրավունքից զրկվում էին կանայք, հող և անասուն չունեցող գյուղացիները, քրեական հանցանքներ կատարած անձինք և այլք: Ընտրելու իրավունք էր տրվում նրանց, ովքեր վճարում էին հողահարկ և շահութահարկ:

Այս օրենքի մեջ երիտթուրքական իշխանությունների կողմից մտցվեցին մի շարք փոփոխություններ, որոնք պետք է առավելություն տային նրանց խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Այսպես, օրինակ, եթե 1877 թ. օրենքի համաձայն պատգամավորը կարող էր ընտրվել միայն այն շրջանից, որտեղ նա բնակվել էր որոշակի ժամանակ, ապա այժմ այդ սահմանափակումը վերացվում էր[3]՝ հնարավորություն տալով իթթիհադականներին իրենց թեկնածուներին առաջադրել

ցանկացած շրջանից, որտեղ ավելի լայն հնարավորություններ կային կազմակերպելու նրանց ընտրությունը, և ապահովելու տարբեր շրջաններից իրենց կողմնակիցների ավելի մեծ թվի ներգրավումը խորհրդարան:

Հարկ է նշել, որ իթթիհադականները ընտրական պայքարի մեջ մտան՝ ունենալով բավական լավ կազմակերպված և գործունյա համակարգ: Ամբողջ երկրով մեկ ստեղծված իթթիհադական ակումբները ակտիվ քարոզչություն էին ծավալում իրենց թեկնածուների օգտին, նույնիսկ հատուկ գործակալներ էին ուղարկում կայսրության տարբեր վիլայեթներ, որոնք տեղում ընդարձակ քարոզչական աշխատանքներ էին իրականացնում: Օրինակ, Բասրա ուղարկվեց ճանաչված փաստաբան Ազիզ Բեյը, Բեյրութ, Դամասկոս և Մոսուլ՝ մայոր Վեհիբ Բեյը[4]:

Բացի այդ, երիտթուրքերն ունեին լավ մշակված նախընտրական ծրագիր, որտեղ, մասնավորաբար, նախատեսվում էին Սահմանադրության մեջ արմատական փոփոխություններ, ինչը գրավում էր կայսրության տարբեր ազգությունների, այդ թվում նաև արաբական ազգային գործիչների մեծ մասին:

Չափազանց կարևոր էր և այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրության ազգությունները և հատկապես արաբները, իրենց ազգային նպատակներին հասնելու համար դեռևս հույսեր էին կապում երիտթուրքերի հետ: Այն հանգամանքը, որ արաբական վիլայեթներում «Իթթիհադ վե թերաքի» կուսակցության վարկանիշը դեռևս բարձր էր, վերջիններիս համար ապահովեց արաբ գործիչների մեծ մասի աջակցությունը: Թերևս այդ էր պատճառներից մեկը, որ իթթիհադականներն արաբական վիլայեթներում արաբ ազգայնականների կողմից չհանդիպեցին լուրջ դիմադրության: Բացի այդ, այստեղ դեռևս չէին ձևավորվել այնպիսի ազգայնական խմբեր և կազմակերպություններ, որոնք կարողանային սեփական ուժերով ակտիվ մասնակցություն ունենալ ընտրություններին:

Այս և նման հանգամանքները, անշուշտ, էապես ազդեցին ընտրությունների ընթացքի վրա, որը շատ բարենպաստ էր երիտթուրքական «Իթթիհադ վե թերաքի» կուսակցության համար:

Սուլթանական իշխանությունն[5] իր հերթին ջանում էր փոխել ստեղծված իրադրությունը՝ վարձելով շրջանցել իրեն ոչ ձեռնտու ընտրական օրենքը: Այս նպատակով մեծ վեզիր Սաիդ Փաշան[6], օրինակ, հատուկ շրջաբերական ուղարկեց կայսրության բոլոր վիլայեթները, որտեղ, մասնավորաբար, ասվում էր. «Հաշվի առնելով խորհրդարանի գումարման հրատապությունը՝ թույլ է տրվում պատգամավորների ընտրությունը ոչ թե ժողովրդի, այլ տեղի վարչակազմի անդամների կողմից»[7]: Կասկածից դուրս է, որ եթե այս շրջաբերականը կենսագործվեր, ապա պատգամավորական տեղերի մեծ մասը կզբաղեցնեին սուլթանա-

կան վարչակազմի կողմնակիցները: Պատահական չէ, որ առաջարկվող ընտրակարգի դեմ անմիջապես սուր քննադատմամբ հանդես եկան սահմանադրական ընտրությունների կողմնակիցները, որոնց ի վերջո հաջողվեց նրա իրականացումը կասեցնել:

Ավելորդ չէ նշել նաև, որ երիտթուրքական իշխանություններին ընդդիմադիր էին ոչ միայն նախկին վարչակարգի ներկայացուցիչները, այլև քաղաքական ուժեր, որոնք ձևավորվել էին հեղափոխությունից հետո:

Անմիջապես խորհրդարանական ընտրությունների նախօրյակին՝ 1908 թ. սեպտեմբերի 14-ին, Ստամբուլում ստեղծվեց «Իթթիհադ վե թերաքքի»-ին ընդդիմադիր «Օսմանյան լիբերալների» կուսակցությունը (Ահրար) (Osmanli Ahrar Firkasi), որի գլխավոր քարտուղարը ազգությամբ արաբ Նուր ալ-Դին Ֆարուխն էր[8]: Կուսակցության մեջ ներգրավված էին կայսրության տարբեր ազգությունների ներկայացուցիչներ, հատկապես հույներ և հայեր: Անհամեմատ փոքր էր թուրքերի թիվը, որոնք հիմնականում «Իթթիհադ վե թերաքքի» նախկին անդամներն էին:[9]

«Ահրարը» իթթիհադականներին մեղադրում էր չափազանց ազգայնական կողմնորոշման մեջ: Պատահական չէ, որ ի տարբերություն «Իթթիհադ վե թերաքքիի» ծրագրի, որտեղ ակնհայտ էր կայսրության ոչ թուրք ազգությունների նկատմամբ անհանդուրժողականությունը, «Ահրարի» ծրագրում առաջ էր քաշվում դեռևս 1902 թ. թագաժառանգ Սաբահ ալ-Դինի հռչակած ապակենտրոնացման և ազգերի միասնության գաղափարը[10]:

Այսուհանդերձ, «Ահրարի» դիրքերը շատ թույլ էին: Պատճառներից մեկը, հավանաբար, այն էր, որ ստեղծվելով ընտրությունների նախօրյակին կուսակցությունը ուղղակի չհասցրեց իր մասնաճյուղերը հիմնել կայսրության վիլայեթներում և ինչպես հարկն է նախապատրաստվել ընտրություններին: Հետևանքը եղավ այն, որ լիբերալները կարողացան ընտրություններին մասնակցել միայն Ստամբուլում և խորհրդարան անցկացնել Անկարայի ընտրատարածքից ընտրված ընդամենը մեկ թեկնածուի՝ Սահիր Սաիդ փաշային[11]:

Չնայած այս հանգամանքին՝ «Ահրար» կուսակցությունը հետագայում խորհրդարանում գտավ 50 պատգամավորների աջակցությունը, որոնք առաջադրվել էին իթթիհադականների կողմից և ներկայացնում էին արաբներով, ալբանացիներով, հայերով, հույներով և կայսրության այլ ազգություններով բնակեցված շրջանները[12]: Վերջիններիս համար առավել գրավիչ էր «Ահրարի» առաջարկած սահմանադրական փոփոխությունների ծրագիրը, որտեղ նախատեսվում էր ավելի ընդլայնել վիլայեթների իրավունքները և դրանց վարչակազմերում, համապատասխան այդտեղ բնակվող ազգությունների քանակի, կարգավորել պաշտոնների նշանակումը[13]:

Չնայած բարենպաստ պայմաններին, իթթիհադականները խորհրդարանում իրենց կողմնակիցների մեծամասնությունն ապահովելու համար դիմում էին նաև տարատեսակ ընտրախախտումների, ինչպես նաև վարչական ճնշումների:

Երիտթուրքերին առավելապես անհանգստացնում էր ընտրությունների ընթացքն արաբական վիլայեթներում: Նրանց առաջնահերթ նպատակը խորհրդարան թուրք պատգամավորների մեծ թվի ներգրավմամբ այնտեղ թուրքական տարրի գերակայության ապահովումն էր, ինչը մեծապես կնպաստեր երկրի թուրքացման ծրագրի իրականացմանը: Մինչդեռ արաբ ազգաբնակչության թվին համապատասխան արաբ պատգամավորների ընտրվելը (որոնք կզբաղեցնեին խորհրդարանի պատգամավորական տեղերի զգալի մասը), փաստորեն, մեծապես կխոչընդոտեր երիտթուրքերի նպատակների իրականացմանը: Փորձելով սահմանափակել արաբների մասնակցությունը ընտրություններին՝ երիտթուրքական իշխանությունները դիմեցին ամենատարբեր միջոցների: Վերջիններս, մասնավորապես, պահպանեցին Սահմանադրության մեջ ամրագրված այն դրույթը, որի համաձայն Օսմանյան կայսրության խորհրդարանի պատգամավոր կարող էին ընտրվել միայն նրանք, ովքեր տիրապետում էին թուրքերեն լեզվին[14], հանգամանք, ինչը մեծ չափով կդժվարացներ արաբական, ինչպես նաև մյուս վիլայեթներից ընտրվողների հնարավորությունները: Կայսրության որոշ շրջաններում թուրքերենին տիրապետողների շրջանակը սահմանափակվում էր պետական հաստատություններում ծառայող պաշտոնյաներով և հին վարչակարգի այն ներկայացուցիչներով, որոնք հեռու էին արաբական ազգային շարժումից և բնականաբար, առավել ընդունելի էին երիտթուրքերի կողմից[15]: Բացի այս սահմանափակումից, իշխանություններն ուղղակի աշխատանքից ազատեցին ներքին և արտաքին գործերի նախարարությունների արաբ պաշտոնյաներին: Արաբական շրջաններում ծառայող մի խումբ արաբ սպաներ ուղարկվեցին թուրքաշատ նահանգներ կամ ընդգրկվեցին ավելի ցածր աստիճանի ծառայություններում[16]: Կայսրության հեռավոր շրջաններում ժողովրդական ընտրություններ ընդհանրապես տեղի չունեցան. օրինակ՝ Եմենում պատգամավորները ընտրվեցին Թաիզի և Սանայի շեյխերի և առևտրականների կողմից[17]: Երիտթուրքերի գործելաոճի դրսևորման համար պատեհ հնարավորություն էր տալիս Սահմանադրության մեջ ամրագրված՝ ընտրատարածքների ձևավորման մասին անորոշ և հեհեղուկ օրենքը, որը, փաստորեն, մեկ պատգամավորի ընտրության իրավունք էր տրամադրում 50 հազար բնակչություն ունեցող շրջաններին՝ միաժամանակ նույնանման իրավունք վերապահելով նաև 25 հազարից ոչ պակաս և 75 հազարից ոչ ավել ազգաբնակչություն ունեցող շրջաններին[18]:

Ճարպկորեն օգտագործելով այդ հնարավորությունը՝ իթթիհադականները թուրքերի թվական գերազանցություն ունեցող շրջանները միտումնավոր կերպով մասնատում էին մանր ընտրատարածքների՝ նրանցից յուրաքանչյուրին հնարավորություն տալով մեկական ներկայացուցիչ ունենալ խորհրդարանում և արտաքնապես առանց ընտրակարգը խախտելու՝ ապահովել խորհրդարանում թուրքական տարրի գերակայությունը: Միևնույն ժամանակ հակառակ քաղաքականություն էր վարվում գերակշռարար այլ ազգություններով բնակեցված տարածքներում:

Օսմանյան հպատակների իրավունքների այսպիսի կոպիտ խախտումների դեմ բազմաթիվ դժգոհությունները, ինչպես և պետք էր սպասել, իշխանությունների կողմից մնում էին անպատասխան:

Երիտթուրքերի ազգայնամոլության այս և նման դրսևորումները երկկողմ անվստահության և անհանդուրժողականության մթնոլորտ էին ստեղծում ընտրությունների ողջ ընթացքում:

Չնայած, օգտագործելով իրենց իշխանությունը, երիտթուրքերին հաջողվեց ընտրատարածքների մեծ մասում անցկացնել իրենց թեկնածուներին, սակայն դա դեռևս չէր նշանակում, որ ընտրություններում երիտթուրքերը ձեռք բերեցին բացարձակ առավելություն: Մասնավորաբար, արաբական մի շարք շրջաններում իթթիհադականները հանդիպեցին բավական լուրջ ընդդիմության պահպանողական ուժերի կողմից, որոնք հիմնականում համախմբված էին այս կամ այն հեղինակավոր հոգևորականի կամ շեյխի շուրջ:

Բավական ուժեղ հակաիթթիհադական խմբավորում էր ձևավորվել, օրինակ, Բասրայում: Այստեղ իր թեկնածությունն էր առաջադրել հայտնի հողատեր Թալիբ փաշան, որը չնայած «Իթթիհադ վե թերաքի» կուսակցության անդամ էր, սակայն իրականում սուլթան Աբդուլ Համիդի կողմնակիցն էր: Պատահական չէ, որ երիտթուրքերը սկսեցին ակտիվորեն պայքարել նրա թեկնածության դեմ՝ նույնիսկ երեք անգամ անվավեր ճանաչելով Բասրայում անցկացված ընտրությունները: Այնուհանդերձ, Թալիբ փաշան, ինչպես նաև մեկ այլ խոշոր հողատեր՝ նախկին վարչակարգի կողմնակից Ահմադ փաշան, կարողացան ընտրվել խորհրդարան[19]:

Անհրաժեշտ է նշել նաև, որ իթթիհադականների հաղթանակն արաբական մի շարք վիլայեթներում կրում էր զուտ ձևական բնույթ: Հաճախ առաջադրվելով «Իթթիհադ վե թերաքի» կուսակցության կողմից՝ թեկնածուները ընտրարշավի ժամանակ հանդես էին գալիս իթթիհադական ծրագրերով ու գաղափարներով, սակայն ընտրվելուց հետո, արդեն որպես պատգամավոր, գրեթե ոչնչով կապված չէին լինում իթթիհադականների հետ:

Ընտրությունները բավական սուր բնույթ կրեցին նաև Սիրիայում, հատկապես Դամասկոսում: Այդտեղ իրենց թեկնածությունն էին առա-

ջարդել «Արաբա-Օսմանյան եղբայրություն»[20] կուսակցության ղեկավար Շուկիկ ալ-Մուայադ ալ-Ազմը և նրա գործընկեր Ռուշդի ալ-Շամաան: Փորձելով խոչընդոտել նրանց ընտրությունը՝ երիտթուրքերի դրդմամբ ոստիկանները ձերբակալեցին կուսակցության կողմնակիցներից մեկին: Դրսան անմիջապես հետևեց քաղաքապետարանի առջև կազմակերպած հսնրահավաքը, որի մասնակիցները հակաերիտթուրքական կոչեր էին հնչեցնում, ինչն իշխանություններին ստիպեց հրաժարվել իրենց մտադրություններից: Ի վերջո՝ Շուկիկ ալ-Մուայադ ալ-Ազմը և Ռուշդի ալ-Շամաան հասան՝ հաջողության ընտրվելով խորհրդարան[21]:

1908 թ. նոյեմբերի վերջին ընտրություններն ավարտվեցին: Ի վերջո երիտթուրքերին հաջողվեց խորհրդարանում ապահովել թուրքական տարրի գերակայությունն այլազգի պատգամավորների հանդեպ: Սակայն դրա հետ մեկտեղ, որոշ թուրք համարվող պատգամավորներ արդեն իսկ իրենց ծագումով թուրք չէին, այլ բալկանյան մահմեդականներ, ինչպես, օրինակ, Մուհամեդ Ֆուադը, որը ծագումով բուլղարացի էր[22]:

Խորհրդարանն իր աշխատանքներն սկսեց 1908 թ. դեկտեմբերի 17-ին: Պատգամավորների ժամանման կապակցությամբ կայսրության մայրաքաղաքում անցկացվեցին բազմաթիվ երթեր և տոնախմբություններ: Արաբները, ինչպես նաև կայսրության մյուս ժողովուրդները մեծ խանդավառությամբ ընդունեցին խորհրդարանի բացումը՝ նրա գործունեության հետ կապելով իրենց նպատակների իրականացումը:

Խորհրդարանի 275 պատգամավորներից 65–ը ընտրվել էին արաբական վիլայեթներից (նրանցից 15 – ը ազգությամբ թուրք էին): Պատգամավոր էին ընտրվել նաև 25 ալբանացի, 23 հույն, 12 հայ, 4 բուլղարացի, 5 հրեա, 3 սերբ և 1 վալախ: Այսպիսով, թուրք պատգամավորների թիվը խորհրդարանում 152 էր, ինչն, անշուշտ, չէր համապատասխանում կայսրության ազգային կազմին[23]:

Օսմանյան կայսրության Սահմանադրության համաձայն՝ բացի խորհրդարանի ստորին պալատից ստեղծվեց նաև վերին պալատ՝ սենատ, որի անդամները, սակայն, ոչ թե ընտրվում էին, այլ նշանակվում սուլթանի կողմից: Այս հանգամանքը, անշուշտ, լավագույն ձևով օգտագործվեց վերջինիս կողմից՝ սահմանափակելու այլ ազգությունների, այդ թվում նաև արաբների մուտքը սենատ: Այս տեսակետից հատկանշական են Աբդուլ Համիդի խոսքերը սենատորների նշանակման կապակցությամբ. «Սենատը ազգի և սահմանադրության վերաքննիչ ուժն է, և նրա անդամների բացահայտ ճնշող մեծամասնությունն անպայման և անպայման պետք է լինեն թուրքեր և մահմեդականներ»[24]: Աբդուլ Համիդի նման դիրքորոշումը նույնքան ձեռնտու էր նաև նրա հակառակորդներին՝ երիտթուրքերին՝ իրենց քաղաքականության իրականացման հա-

մար: Պատահական չէ, որ սուլթանի կողմից նշանակված քառասուն սենատորներց 37-ը թուրք էին և միայն երեքը արար[25]:

Այսպիսով արաբները, լինելով կայսրության ամենամեծաթիվ ազգային տարրը[26], տարբեր հանգամանքների բերումով չկարողացան խորհրդարանում զբաղեցնել համապատասխան քանակի տեղեր: Սակայն նույնիսկ այս պարագայում խորհրդարանի գրեթե կեսը կազմեցին ոչ թուրք պատգամավորները, ինչը նրանց հնարավորություն էր տալիս համախմբվել մի ընդհանուր դաշինքի մեջ և հետամուտ լինել իրենց ազգային պահանջներին: Մինչդեռ իրականում այս հնարավորությունը վերջիններիս կողմից չօգտագործվեց, քանի որ ազգային խմբավորումներից յուրաքանչյուրի առաջնահերթ նպատակը զուտ տեղային խնդիրների լուծումն էր, ինչը, բնականաբար, չնպաստեց նրանց ուժերի միավորմանը, միաժամանակ թուրքերին հնարավորություն տվեց խորհրդարանում ունենալ գերակայող դիրք:

Խորհրդարանի պատգամավորները միավորվեցին երեք քաղաքական խմբավորումների մեջ. առաջինը «Իթթիհադ վե թերաքին» էր, երկրորդը՝ «Ահրարը», որի անդամները հավատում էին, որ կայսրության դժվարությունների լուծումը գտնվում է ֆեդերատիվ պետության ստեղծման մեջ՝ տեղային ինքնավար նահանգներով: Երրորդ խմբավորումը «Մահմեդական ընկերությունն» էր, որը հետամուտ էր պանիսլամիզմի գաղափարների և կրոնական օրենքների տարածմանը[27]:

Ավելորդ չէ նշել, որ համախմբման փորձեր եղան նաև արաբ պատգամավորների կողմից: Խորհրդարանի աշխատանքների հենց սկզբում նրանք ստեղծեցին «արաբական դաշինքը»[28], սակայն այն զուտ ձևական էր, քանի որ նրա անդամները կապված չէին ընդհանուր հայացքներով: Հիմնականում հենց այդ պատճառով էլ նրանց չհաջողվեց ստեղծել միասնական ծրագիր, որտեղ կարտացոլվեին արաբ ժողովրդի ձգտումները: Արաբ պատգամավորների բարձրացրած հարցերը մեծ մասամբ սահմանափակվում էին տեղային խնդիրներով:

Համախմբմանը խոչընդոտող պատճառներից էր նաև արաբ պատգամավորների քաղաքական հայացքների տարբերությունը:

Այսպիսով, արաբ պատգամավորները խորհրդարանի աշխատանքի առաջին տարվա ընթացքում չկարողացան լուրջ ընդդիմություն ստեղծել «Իթթիհադ վե թերաքիին» և խորհրդարանում բարձրացնել արաբական ազգային խնդիրներ: Սակայն դա, իհարկե, ամենևին էլ չէր նշանակում, որ արաբ պատգամավորները կողմնակից էին իթթիհադականների բոլոր ծրագրերին և առաջարկություններին: Խորհրդարանական որոշ քննարկումների ժամանակ, ինչպես, օրինակ, երբ բարձրացվեց արաբ պատգամավորներ Թուլիբ փաշայի, Ահմադ փաշայի, Շաֆիկ ալ-Մուայադե և Յուսուֆ Շիտվանի ընտրությունների անօրինականության հարցը[29], կամ երբ իթթիհադականների առաջարկով անվստահութ-

յուն հայտնեցին վեզիր Քեմալ փաշայի կառավարությանը, արաբները գրավեցին հակաիթթիհադական դիրքորոշում, որը, սակայն, արտահայտվում էր ոչ թե բացահայտորեն, այլ, առավելապես, ձեռնպահ մնալով[30]: Սա թերևս արաբների և թուրքերի միջև ապագա լուրջ հակասությունների առաջին արտահայտություններից էր, ինչը հանգեցրեց իթթիհադական կուսակցության հետ արաբ գործիչների կապերի թուլացմանը:

Ինչպես ակնհայտորեն ցույց տվեց դեպքերի զարգացման հետագա ընթացքը, երիտթուրքերի ծայրահեղ ազգայնամոլական քաղաքականությունը ի վերջո հիասթափեցրեց կայսրության ազգություններին, այդ թվում նաև արաբներին և առավել չափով խորացրեց երիտթուրքերի հետ վերջիններիս հակասությունները: Եվ պատահական չէ, որ խորհրդարանի հետագա տարիների գործունեության ընթացքում արաբ պատգամավորներն սկսեցին անդամակցել այնպիսի կուսակցությունների, որոնք գտնվում էին իթթիհադականներին ընդդիմության շարքերում, ինչպեսին էին 1910 թ. ստեղծված «Ահալի Ֆիրկասի» կուսակցությունը, ինչպես նաև ավելի ուշ՝ 1911 թ. վերջերին առաջացած «Հուրիյեթ վե իթիլաֆին[31]»:

Խորհրդարանական ընտրությունները առաջին միջոցառումն էր, որի ընթացքում ի հայտ եկան երիտթուրքական կառավարության հռչակած սկզբունքների և իրական քաղաքականության հակասությունները, ինչը որոշակիորեն սթափեցրեց «հեղափոխական» ոգևորությամբ տոգորված արաբներին: Ի հայտ եկան նաև հակասությունները արաբների և թուրքերի միջև, ինչը հետագայում պետք է դառնար արաբական ինքնորոշման հիմք:

Արաբական վիլայեթների բնակչությունը թերևս առաջին անգամ իր ուժերը փորձեց քաղաքական պայքարում՝ մասնակցելով ընտրություններին և որոշ դեպքերում նույնիսկ ճնշում գործադրելով իշխանությունների վրա:

Խորհրդարանական ընտրություններն ունեցան ևս մեկ կարևոր հետևանք. սկսեց ձևավորվել արաբական քաղաքական վերնախավը, որը հնարավորություն ունեցավ որոշակի մասնակցություն ունենալ Ստամբուլում ընթացող քաղաքական գործընթացներում և մեծապես ազդեց արաբական ազգային շարժման հետագա ընթացքի վրա:

ARAM GASPARYAN

THE ELECTIONS OF 1908 IN OTTOMAN EMPIRE'S ARAB PROVINCES

On the 23rd of July 1908, immediately after the Young Turks revolution, Ottoman constitution has been restored and in October-November there were held parliamentary elections. Trying to insure in parliament the superiority of Turkish element during the elections the Young Turks turned to various violations which limited the Arabs inclusion in parliament as well as their activities concerning the rcalization of Arab national aims.

Nevertheless, the parliamentary election gave on opportunity to Arab politicians to take part in the political processes of the Empire, which was very important and influential for the further development of the Arab national movement.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Օսմանյան կայսրության առաջին սահմանադրությունը հռչակվել էր 1876 թ. դեկտեմբերի 23-ին, սակայն արդեն 1878 թ. սկզբին սուլթան Աբդուլ Համիդն այն չեղյալ հայտարարեց: Սահմանադրությունը վերականգնվեց միայն 1908 թ. հուլիսի 24-ին երիտթուրքերի կողմից:
2. حسن قايالي. الحركة المعربية بعيون عثمانية (١٩٠٨–١٩١٨)، دمشق ٢٠٠٣، ص. ١٠٩.
3. И. Шпилькова, Младотурецкая революция 1908-1909 гг., М.,1977, с.194
4. Л.Н.Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914гг., М.,1986, с. 173.
5. И. Шпилькова, նշվ. աշխ. էջ 195.
6. Երիտթուրքական հեղափոխությունից հետո իթթիհադականները չփոխեցին պետական կարգը՝ պահպանելով սուլթանական իշխանությունը և գահին թողնելով Աբդուլ Համիդին:
7. Սեհմեդ Սաիդ Փաշա. Աբդուլ Համիդի առաջին քարտուղար 1876 թ.: 1979 թ. դարձավ Օսմանյան կայսրության մեծ վեզիր, հուլիսի 22-ին 1908 թ. յոթերորդ անգամ զբաղեցրեց վեզիրի պաշտոնը: F. Ahmad, The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics, 1908-1914. Oxf. 1969, p.178.
8. Joseph Hajjar. L' Europe et les destinées du Proche-Orient: La nationalizme arabe syrien entre la Jeune Turque et les puissances (1908-1914). Damas, 1996, p. 121.
9. Ա.Ն. Մանդելշտամ, Երիտասարդ թուրքերի պատմությունը, Էջմիածին, 1916, էջ 12.
10. J. Hajjar, նշվ. աշխ. էջ 121-122.
11. F. Ahmad, նշվ. աշխ. p.28.
12. Э. Тума, Национально-освободительное движение и проблемы арабского единства., М.,1977, с. 97.

13. Մանրամասն տես՝ T.Z. Tunaya. Turkiyede siyusi pariler. Istanbul 1952. ss., 247-250.
14. Г.З. Алиев, Турция в период правления младотурок (1908-1918г.), М. 1972., ст. 128.
15. Л.Н.Котлов, նշվ. աշխ., էջ. 174.
16. للدكتور توفيق برو. للعرب و للترك فى للعهد للمستورى للعثمانى ١٩٠٨-١٩١٤، دمشق ١٩٩١، ص، ٨٧
17. .حسن قايالى, նշվ. աշխ., էջ. 111.
18. А. Тыркова. Старая Турция и младотурки. Год в Константинополе. Петроград, 1916, ст. 33.
19. Э. Тума, նշվ. աշխ., էջ. 103.
20. 1908 թ. սեպտեմբերին Ստամբուլի արաբ հասարակական գործիչները հիմնեցին «Արաբա-օսմանյան եղբայրություն» («Ալ-Իխուա ալ-Արաբի ալ-Օսմանի») կուսակցությունը, որի հիմնական նպատակն էր բարեկամական հարաբերություններ հաստատել թուրքերի և արաբների միջև և աջակցել երիտթուրքերին Սահմանադրության դրույթներ պահպանելու գործում: Youssef M. Chhoueirri. Arab Nationalism. A History Nation and State in the Arab World. Oxf. 2000, p.80.
21. .المدكتور توفيق برو, նշվ. աշխ., էջ. 120.
22. J. Hajjar, նշվ. աշխ. էջ 126.
23. .المدكتور توفيق برو, նշվ. աշխ., էջ. 105-106: Առանձին հետազոտողներ իրենց ուսումնասիրություններում նշում են տարբեր թվեր: Ըստ Զ. Զեյնի՝ խորհրդարան էր ընտրվել 260 պատգամավոր, որոնցից 119 թուրք էին, 72-ը՝ արաբ. Zein N. Zeine, Arab Turkish Relations and the Emergence of Arab Nationalism, Beirut, 1958, p.65. Ն.Հովհաննիսյանի բերած տվյալների համաձայն՝ պատգամավորների ընդհանուր թիվը կազմում էր 245, որոնցից 150 թուրքեր, 60 արաբներ: Ն. Հովհաննիսյան. Արաբական երկրների պատմություն, h.II, Եր., 2004, էջ. 469.
24. Հր. Ռ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությանը և քաղաքականությունը, Եր., 1986,էջ 202.
25. Lugol Jean. Le panarabisme. Pesse, Present, Avenir. Le Caire 1946, p.173.
26. Ջ.Անտոնիուսի բերած տվյալներով՝ 1908 թ. Օսմանյան կայսրության (առանց Եգիպտոսի) ազգաբնակչության ընդհանուր թիվը կազմում էր 22 մլն., որոնցից 7.5 մլն. թուրքեր էին, 10.5 մլն. արաբներ, իսկ մնացած 4 միլիոնը՝ հույներ, ալբանացիներ, հայեր, քրդեր և այլ․ ազգեր: George.Antonius. The Arab Awaeking. The Story of the Arab National Movement, N.Y.,1947, p.104: Ըստ Դ.Ֆրոմկինի արաբները կազմում էին Օսմանյան կայսրության բնակչության 40 տոկոսը, մոտ 10 մլն. David Fromkin. A Peace to End All Peace. The Fall of the Ottoman Empire and the Greation of the Modern Middle East. N.Y. 1989. p. 48,
27. Sydney Nettlon Fisher, William Ochsenwald. The Middle East. A History. N.Y. 1990, p.328.
28. Л.Н.Котлов, նշվ. աշխ., էջ. 178.

29. Նույն տեղ., նշվ. աշխ., էջ. 182.
30. F. Ahmad. նշվ. աշխ., էջ 34-37.
31. Մանրամասն տես, F. Ahmad. նշվ. աշխ., էջ 69-91.

ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՐԱՔ-ԻՐԱՆՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Տարածքային-սահմանային հակասությունները ժամանակակից Իրաքի և Իրանի միջև սկիզբ են առնում դեռ Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև դիմակայության շրջանից: Բազմաթիվ հակասությունների շարքում կենտրոնական տեղերից մեկը զբաղեցնում է երկու երկրների միջև բնական սահման հանդիսացող Շատ ալ Արաբ գետը[1]: Շատ ալ Արաբը կարևոր ռազմավարական նշանակություն ունի երկու երկրների համար: Այդ գետը Իրաքի համար այն միակ ջրային ճանապարհն է որով ելք է ապահովվում դեպի Պարսից ծոց[2]: Շատ ալ Արաբը նաև կարևորագույն առևտրական և փոխադրամիջոցային նշանակություն ունեցող ջրային ճանապարհ է, այդ իսկ պատճառով գետի նկատմամբ հսկողություն սահմանելը հանդիսանում էր սկզբում Օսմանյան կայսրության և Աեֆյան Պարսկաստանի, իսկ ապա ժամանակակից Իրաքի և Իրանի Իսլամական Հանրապետության համար հույժ կարևոր արտաքին քաղաքական խնդիր: Սույն հոդվածի սեղմ շրջանակներում փորձել ենք լուսաբանել Շատ ալ Արաբ գետին առնչվող սահմանային խնդիրների հարցը: Շատ ալ Արաբ գետի շուրջ հակասությունները սկիզբ են առնում 16-րդ դարում:

1639թ. Օսմանյան կայսրության և Իրանի միջև ստորագրվեց տարածքային-սահմանային հակասությունները կարգավորող Զոհաբի պայմանագիրը[3]: Այդ պայմանագիրը Շատ ալ Արաբ գետի շուրջ առկա թուրք-իրանական հակասությունների համապարփակ կարգավորման առաջին փորձն էր[4]: Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև սահմանային հիմնական հակասությունները վերաբերում էին այդ երկրների հարավային հատվածում բնական սահման հանդիսացող Շատ ալ Արաբ գետին և վերջինիս աջ ու ձախ ափերին հարող որոշ տարածքներին: Ի տարբերություն Օսմանյան կայսրության, Պարսկաստանը բանակցություններին պնդում էր, որպեսզի սահմանը երկու երկրների միջև անցներ Շատ ալ Արաբի գետահովտով, ինչը միանշանակ մերժվում էր Թուրքիայի կողմից, քանի որ գետի վարարման ժամանակ գետահովիտը շատ հաճախ ենթարկվում էր վտվախության՝ ընդարձակելով

պարսկական սահմանը[5]: Բանակցող կողմերը որոշեցին պահպանել գոյություն ունեցող սահմանների կարգավիճակը, բացառությամբ Օսմանյան կայսրությանը անցնող Շատ ալ Արաբ գետին հարող վիճելի մի տարածք: Բայցևայնպես Զոհաբի պայմանագիրը չկարողացավ կարգավորել թուրք-իրանական սահմանային-տարածքային հակասությունները:

Զոհաբի պայմանագրի անարդյունավետության արդյունքում 1823թ. ստորագրվեց Էրզրումի առաջին պայմանագիրը, որում քննարկվող մի շարք հարցերի՝ Խուզիստանի, իրանական Շուշտեր և իրաքյան Բասրա քաղաքի միջև սահմանային հակասությունների հետ մեկտեղ Շատ ալ Արաբի խնդիրը ևս մնաց չկարգավորված:

Հարկ է նշել, որ 19-րդ դարում թուրք-պարսկական հարաբերություններին ավելի ու ավելի էին միջամտում Ռուսաստանը և Մեծ Բրիտանիան, ինչը մեծապես դժվարացնում էր թուրք-իրանական սահմանային հակասությունների կարգավորման գործընթացը:

1847թ. մայիսի 31-ին երկարատև բանակցություններից հետո ստորագրվում է Էրզրումի երկրորդ պայմանագիրը[6]: Ինն կետից բաղկացած այդ պայմանագրում հստակ նշվում էր, որ Շատ ալ Արաբն իր ողջ երկայնքով պատկանում է Օսմանյան կայսրությանը, իսկ Մոհամմարա[7] քաղաքը և նավահանգիստը, Խիզր կղզին և նավահանգիստ Աբադանը, ինչպես նաև Շատ ալ Արաբի արևելյան, այսինքն ձախ ափին գտնվող հողերը պետք է ընդգրկվեն Պարսկաստանի սուվերենության ներքո: Պայմանագրին համաձայն պարսկական նավերը Շատ ալ Արաբով ազատ նավարկելու իրավունք էին ստանում[8]: Էրզրումի երկրորդ պայմանագրի 3-րդ կետին համաձայն պետք է ստեղծվեր թուրք-պարսկական հանձնաժողով, որը 1849թ. պետք է սկսեր երկու երկրների սահմանի դելիմիտացիան: Որոշ ժամանակ անց հանձնաժողովի մեջ մտան Ռուսաստանի և Անգլիայի մեկական ներկայացուցիչ[9]: Թվում էր թե թուրք-իրանական հակասությունները կարգավորված են, սակայն տարաձայնությունները պահպանվել էին: Օրինակ՝ Ղրիմի պատերազմի ընթացքում՝ 1853-1856թթ. թուրք-պարսկական հակասությունները վերաճեցին զինված բախման. 1854թ. հուլիսի 16-17-ը իրանական զորքերը հարձակվեցին Բայազետի մոտ տեղակայված թուրքական զորամիավորումների վրա[10]:

Այդուամենայնիվ 19-րդ դարի 2-րդ կեսի ողջ ընթացքում Իրանը ընդունում էր Էրզրումի 2-րդ պայմանագիրը, համարելով այն Օսմանյան կայսրության և Իրանի միջև սահմանային վեճի կարգավորման համապարփակ տարբերակ, քանի որ պայմանագիրն իրավաբանորեն ամրագրում էր փաստացի գոյություն ունեցող իրավիճակը: Սակայն իրականում Էրզրումի 2-րդ պայմանագիրը ևս չկարգավորեց երկու երկրների միջև գոյություն ունեցող հակասությունները: Էրզրումի բանակցությունների մասնակից բրիտանացի Հենրի Լեյդը գրում էր, որ Պարսկաստանը

հավակնում էր Շատ ալ Արաբի ձախ ափի մոտ 60 մղոն երկարությամբ մի հատվածի: Համապատասխան քարտեզներ ուսումնասիրելուց հետո Լեյդը հայտնում էր, որ Օսմանյան Թուրքիայի պահանջները Շատ ալ Արաբի և Մոհամմարայի նկատմամբ ամբողջովին հիմնավորված էին: Լեյդը ընդգծում էր, որ Պարսկաստանը միայն անվանապես է սահմանել իր իրավասությունները այդ վիճելի տարածքների հանդեպ[11]:

1911թ. դեկտեմբերի 21-ին Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև ստորագրվեց Թեհրանի հռչակագիրը, որը պետք է բանակցությունների հիմք դառնար երկու երկրների միջև սահմանի դելիմիտացիայի հարցում[12]: Համաձայն հռչակագրի կազմվեց խառը հանձնաժողով /թուրք-պարսկական/, որի նստավայրն ընտրվեց Ստամբուլը: Այդպիսով հիմք ընդունելով Էրզրումի երկրորդ պայմանագիրը թուրք-պարսկական հանձնաժողովը սկսեց սահմանների դելիմիտացիան: Միևնույն ժամանակ կողմերը պայմանավորվել էին, որ խնդիրներ առաջանալու դեպքում, հարցը կհանձնվի Հաագայի միջազգային դատարան[13]: Սակայն Թեհրանի հռչակագիրը ևս անզոր գտնվեց լուծում տալ թուրք-պարսկական տարածքային սահմանային վեճին: Եվ Թուրքիան համաձայն Թեհրանի հռչակագրի 4-րդ կետի խնդիրը փորձեց հանձնել միջազգային դատարան, ինչին դեմ արտահայտվեց Իրանը: Խուսափելով խնդիրը Հաագա տեղափոխելուց[14] 1912թ. օգոստոսի 15-ին իրանական պատվիրակը հայտարարեց, որ իր կառավարությունը ընդունում է Էրզրումի 2-րդ պայմանագիրը և դեմ չէ սահմանի դելիմիտացիայի շարունակմանը[15]:

1913թ. ամռանը տեղի ունեցան ռուս-թուրքական և անգլո-թուրքական բանակցություններ թուրք-իրանական սահմանի վերաբերյալ, որի արդյունքում 1913թ. հուլիսի 29-ին Անգլիայի արտգործնախարար Գրեյը և Թուրքիայի հատուկ ներկայացուցիչ Իբրահիմ Խակկի Փաշան Լոնդոնում ստորագրեցին համաձայնագիր, որով Անգլիան ստիպեց[16] Թուրքիային ընդունել այն սահմանագիծը, որը ձեռնտու էր Իրանին և հետևապես առաջին հերթին նաև Անգլիային[17]:

Արդեն 1913թ. նոյեմբերի 4-ին Օսմանայն կայսրության և Պարսկաստանի միջև Անգլիայի և Ռուսաստանի միջնորդությամբ ստորագրվեց Կոստանդնուպոլսի հռչակագիրը, համաձայն որի Օսմանյան իշխանությունը տարածվում է ողջ Շատ ալ Արաբի նկատմամբ իր կղզիների հետ միասին, իսկ սահմանն անցնում էր գետի ձախ՝ արևելյան ափով: Իրանի հսկողության տակ մնում էին Աբադանի պարսկական ափը՝ Մուխալլան և Մոհամմարա նավահանգստի մի մասը[18]:

Կոստանդնուպոլսի հռչակագրի համաձայն կազմավորվում էր թուրք-իրանական նոր հանձնաժողով, որը հերթական անգամ պետք է զբաղվեր թուրք-իրանական սահմանի դելիմիտացիայով: 1914թ. հունվարից մինչև ամիսը հանձնաժողովը դելիմիտացիայի ենթարկեց թուրք-

պարսկական սահմանը Շատ ալ Արաբում գտնվող Ֆաո նավահանգստից մինչև փետրվարի 17–ը լեռը, որի երկարությունը կազմում էր մոտ 1900կմ, տեղադրվեց 227 սահմանասյուն: Նոր գծված սահմանները ստորագրեցին Անգլիան և Ռուսաստանը[19]: Փաստորեն թուրք-իրանական սահմանային վեճն ըստ էության կարելի էր համարել կարգավորված: Սակայն առաջին աշխարհամարտից հետո հակասությունները երկու պետությունների՝ այս անգամ արդեն Իրաքի[20] և Իրանի[21] միջև դարձան օրհասական:

Իրաք-իրանյան սահմանային հակասությունների կարգավորման բանակցային փորձերը վերսկսվեցին 20-րդ դարի 30-ականներին:

1932թ. ապրիլի 22-ին Թեհրանում մի կողմից Իրաքի թագավոր Ֆեյսալի և վարչապետ Նուրի Սաիդի և մյուս կողմից Իրանի շահի միջև տեղի ունեցած բանակցություններից հետո արվեց պաշտոնական հայտարարություն, որ կողմերը մի շարք հարցերի շուրջ եկել են համաձայնության: Իրանական կողմը կարծիք հայտնեց, որ ցանկալի կլիներ, եթե սահմանը երկու երկրների միջով անցներ ոչ թե Շատ ալ Արաբի ձախ ափով (արևելյան), այլ գետահովտով, ինչը սակայն մերժեց Իրաքի թագավորը: Իրանն առաջարկեց նաև, որպեսզի Իրաքն իրեն հանձնի Շատ ալ Արաբի երկայնքով 3 կմ երկարությամբ մի տարածք, որպես բարի կամքի դրսևորում՝ ապահովելով իրանական նավերի խարսխվելու հնարավորությունը: Ի պատասխան այդ հարցադրմանն Իրաքն առաջարկեց վերոհիշյալ տարածքը վարձակալության հանձնել Իրանին, եթե վերջինս համաձայնի բավարարել Իրաքի պահանջները մի շարք այլ վիճելի հարցերում: Սակայն Իրանը մերժեց այդ տարբերակը[22]:

Չնայած այն հանգամանքին, որ երկու երկրների միջև 1930-1931թթ. երկարացվեցին հյուպատոսական հարաբերությունները, այդուամենայնիվ իրաք-իրանյան հարաբերությունները մնում էին լարված:

1932թ. երկու երկրների միջև հարաբերությունները ծայրահեղ վատթարացան:

Իրավիճակն էլ ավելի բարդացավ, երբ 1934թ., իրանական ռազմածովային ուժերի մի քանի նավ մտավ Շատ ալ Արաբ՝ հասնելով մինչև Խորեմշահր: Այդ քայլից հետո Իրանը հայտարարեց, որ չի ճանաչում Իրաքի սուվերենությունը Շատ ալ Արաբի նկատմամբ[23]:

Չկարողանալով Շատ ալ Արաբի խնդիրը կարգավորել անմիջական բանակցությունների միջոցով, Իրաքը 1934թ. նոյեմբերի 29-ին դիմեց Ազգերի Լիգայի Խորհուրդ՝ խնդրելով քննարկել Իրաք-իրանյան սահմանավեճը: Իրաքը մեղադրում էր Իրանին Շատ ալ Արաբով նավագնացության խոչընդոտելու, տարածքային զավթման փորձ իրականացնելու և Գունջան-Շամ գետի հունը փոփոխելու մեջ: Իրաքի կողմից Ազգերի Լիգային դիմելը Շատ ալ Արաբի խնդիրը տեղափոխում էր զարգացման նոր փուլ՝ նրան տալով քննարկման ավելի լայն շրջանակներ:

1935թ. հունվարի 8-ին պատասխան նամակում Իրանը պնդում էր, որ նախկինում կնքված ոչ մի փաստաթուղթ իրավական ուժ չունի, քանի որ Օսմանյան կայսրությունը այլևս գոյություն չունի[24]:

Ազգերի Լիգայի Խորհրդում Անգլիան առաջարկեց խնդիրը հանձնել Հաագայի միջազգային դատարան[25]: Սակայն Իրանը հրաժարվեց հարցը հանձնել միջազգային դասարան: Խնդրի լուծմանը չնպաստեց նաև Ազգերի Լիգայի Խորհրդի կողմից Իտալիայի պատվիրակ Ալոիզի խնդրի ուսումնասիրման նպատակով միջնորդ նշանակվելը: Համապատասխան ուսումնասիրություն անցկացնելուց հետո Ալոիզը ևս առաջարկեց վեճը հանձնել միջազգային դատարան, ինչին հերթական անգամ դեմ արտահայտվեց Իրանը[26]: Միևնույն ժամանակ Ալոիզի միջնորդությամբ Իրաքի և Իրանի միջև սկսեցին անմիջական բանակցություններ և 1935թ. սեպտեմբերի 28-ին երկու երկրների արտգործնախարարները դիմեցին Ազգերի Լիգայի Խորհուրդ՝ խնդիրը Հաագայի դատարանի քննարկմանը չներկայացնելու խնդրանքով[27]:

1937թ. հուլիսի 4-ին Իրանի և Իրաքի միջև ստորագրվեց սահմանային վեճերի կարգավորման մասին պայմանագիր[28], որով Շատ ալ Արաբ գետի ջրերը համարվում էին ազատ նավարկելի և բաց միայն երկու երկրների ռազմանավերի համար: 1937թ. պայմանագրի 4-րդ և 5-րդ հոդվածների համաձայն պետք է կազմակերպվեր գետի շահագործման համար անհրաժեշտ հարկահավաք, անվտանգության ապահովման համակարգ, ապահովվի սանիտարական պայմաններ և այլն[29]:

Չորս օր անց հուլիսի 8-ին Իրաքի, Իրանի, Թուրքիայի և Աֆղանստանի միջև կնքվեց Սաադաբադի պակտը, իսկ հուլիսի 24-ին ստորագրվեց հակասությունների խաղաղ լուծման մասին պայմանագիրը: Պետք է նշել, որ Սաադաբադի պակտը ավելի շատ ռազմաքաղաքական միություն էր և ինչպես հաճախ այն անվանում էին մերձավորարևելյան Անտանտա: Սաադաբադի պակտի համաձայն իրաք-իրանյան սահմանը փոփոխման էր ենթարկվում միայն իրանական Աբադան նավահանգստի հատվածում, որտեղ այն մոտ 2 կմ երկարությամբ անցնում էր /առաջին անգամ/ գետահովտով: Սաադաբադի պակտի հիմքում դրվում էր 1913թ. Կոստանդնուպոլսի վիրոնշյալ հռչակագիրը[30]: Պակտով կարգավորվում էր նաև նավագնացության սկզբունքը, և ենթադրվում էր նոր վերահսկիչ հանձնաժողովի կազմավորում[31]: Սակայն վրա հասած երկրորդ համաշխարհային պատերազմը ժամանակավորապես հետաձգեց երկու երկրների միջև գոյություն ունեցող հակասությունների քննարկումը:

1948թ. հունիսին Իրանը Իրաքի կառավարությունից պահանջեց յուրաքանչյուր 6 ամիսը մեկ իրեն ներկայացնել Շատ ալ Արաբի համար ծախսվող գումարի չափը և ստացվող եկամուտները[32]: 1949թ. ապրիլի 5-ին Իրանն Իրաքին համաձայնագրի նախագիծ ուղարկեց, որտեղ վկա-

յակոչելով 1937թ. սահմանային պայմանագրի 4-րդ և 5-րդ հոդվածները՝ պահանջում էր անհապաղ իրականացնել դրանք: Համաձայն այդ կետերի իրաք-իրանյան խառը հանձնաժողովը պետք է յուրաքանչյուր երկու կողմերին էլ տեղեկացներ Իրաքի և Իրանի կողմից Շատ ալ Արաբի համար ծախսվող գումարի չափը: Բայց այս հարցում ևս կողմերը ընդհանուր հայտարարի չեկան:

1948թ., այնուհետև 1957թ. Կարաչիում Բաղդադի պակտի մասնակիցների հանդիպմանը ևս մեկ անգամ քննարկվեց Շատ ալ Արաբի հարցը, որտեղ որոշվեց դիմել Թեհրանում Շվեդիայի դեսպանությանը[33] որպես միջնորդի, սակայն 1958թ. հուլիսի 14-ին Իրաքում տեղի ունեցած հեղափոխության արդյունքում Իրանում շվեդական դեսպանությանը որպես միջնորդի դիմելու հարցը հետաձգվեց[34]: Իրաքյան նոր կառավարությունը ոյդեգրեց հակակիսյսերապաշտակւսն քաղաքական ուղեգիծ և դուրս եկավ Բաղդադի պակտից: Ստեղծված իրավիճակում Անգլիան և ԱՄՆ-ը սկսեցին սերտ կապեր վերահաստատել Իրանի հետ, իսկ Վաշինգտոնը նույնիսկ ռազմական օգնություն խոստացավ Թեհրանին Իրաքի դեմ ռազմական գործողություններ սկսելու դեպքում[35]: Նման աջակցության առաջարկի ազդեցությունը նպաստեց Իրանին ավելի եռանդուն կերպով պահանջել Իրաքին զիջումների գնալ վերոհիշյալ հակասությունների հարցում: Իրաքյան հեղափոխությունից հետո՝ օգտվելով Անգլիայի և ԱՄՆ-ի աջակցությունից Իրանը սկսեց պահանջել վերանայել Իրաքի հետ գոյություն ունեցող սահմանային պայմանագրերը, մասնավորապես կապված Շատ ալ Արաբի խնդրի հետ:

Հակառակ այն հանգամանքին, որ Իրաքը ոչ միշտ էր կատարում Իրանի հետ ունեցած պայմանագրային կետերը, այդուամենայնիվ Բաղդադը պնդում էր, որ 1937թ. պայմանագիրը կարգավորել է վիճելի բոլոր խնդիրները և որ այն վավերացնելով Իրանը ընդունել է նաև Էրզրումի 1847թ. 2-րդ պայմանագիրը, Կոստանդնուպոլսի 1913թ. հռչակագիրը, որոնք կնքվել են Օսմանյան կայսրության հետ, որի իրավահաջորդը հանդիսանում է Իրաքը[36]:

1953թ. Իրանում Մոսադեկի կառավարության անկումից հետո Իրաքն էլ ավելի կոշտ դիրքորոշում զբաղեցրեց՝ պահանջելով Իրանից իրեն վճարել 1.926.138 իրաքյան դինար, որպես հարկ Շատ ալ Արաբով իրանական նավերի նավարկության համար: Ի պատասխան իրանական կառավարությունը 1955թ-ից վերսկսեց պահանջել կյանքի կոչել 1937թ. պայմանագրի 5-րդ հոդվածը՝ (հանձնաժողովի կազմավորումը): Միայն 1956թ. մայիսին կողմերը համաձայնության եկան տեխնիկական հարցերով հանձնաժողովի կազմման հարցում: Երկու երկրների միջև լարվածության թոթափմանը չնպաստեց նաև նրանց անդամակցությունը Բաղդադի պակտին:

1958թ. սեպտեմբերի 10-ին իրանական կառավարությունը հայտարարեց, որ Իրանի նավերը իրավունք ունեն ազատ օգտվել Շատ ալ Արաբից[37]:

1959թ. մայիսի 7-ին Իրանի կառավարությունը Բաղդադում իր դեսպանության միջոցով հայտնեց, որ Շատ ալ Արաբի վրա Խոսրովաբադի նավահանգիստը[38] ենթարկվում է Խորեմշահր նավահանգստին: Ի պատասխան Իրաքը հայտարարեց, որ համաձայն 1937թ. պայմանագրի Շատ ալ Արաբում գտնվող նավահանգստներից միայն Աբադանն է պատկանում Իրանին[39], և հետևաբար Խոսրովաբադ նավահանգիստը պատկանում է Իրաքին:

Հակառակ ողջ լարվածությանը 60-ականներին երկու երկրների միջև ակնկալվող զինված բախումը տեղի չունեցավ: Իրաք-իրանյան բանակցությունների նոր փուլ է սկսվում 1968թ. հուլիսի 17-ին, երբ Իրաքում հեղաշրջման արդյունքում իշխանության գլուխ է գալիս Ահմեդ Հասան ալ-Բակրը, որը դարձավ երկրի նախագահն ու վարչապետը[40]:

1968թ. դեկտեմբերի 14-ին Թեհրան է ուղևորվում Իրաքի փոխվարչապետ և պաշտպանության նախարար, գեներալ Հարդան Տիկրիտին, որը հայտարարեց, որ իր պետությունը պատրաստ է կարգավորել բոլոր հակասությունները և վերանայել 1937թ. պայմանագիրը[41]: Սակայն վեց ամիս տևած պատվիրակությունների փոխադարձ այցելությունները ոչմի դրական արդյունքի չբերեցին: 1969թ. հունվարի 27-ին իրանական 20 հոգանոց պատվիրակությունը ժամանեց Իրաք երկու երկրների միջև գոյություն ունեցող հիմնական հակասությունները կարգավորելու նպատակով: Սակայն բանակցությունները մտան փակուղի, քանի որ իրանական պատվիրակությունը պահանջեց չեղյալ հայտարարել 1937թ. պայմանգիրը[42]: 1969թ. փետրվարի 11-ին Բաղդադում գտնվող Իրանի կառավարական պատվիրակության ղեկավար Խալաթբարին հանձնեց Իրաքին 1937թ. սահմանային պայմանագրի չեղյալ հայտարարման մասին կառավարական նամակը: Նույն թվականի ապրիլի 15-ին Իրաքի արագործնախարարը Բաղդադում Թեհրանի դեսպանությանը տեղեկացրեց, որ Իրաքը Շատ ալ Արաբը համարում է իր տարածքի մի մասը և որ Իրանի նավերն այդ հատվածով անցնելիս պետք է իջեցնեն իրենց դրոշները և նրանցում չպետք է լինեն Իրանի ռազմածովային ուժերի ներկայացուցիչներ: Ապրիլի 19-ին Թեհրանը հրապարակայնորեն չեղյալ հայտարարեց 1937թ. իրաք-իրանյան սահմանային պայմանագիրը: Օգտվելով Իրաքում ստեղծված լարված իրավիճակից՝ կապված Իրաքի հյուսիսում քրդերի դեմ ընթացող ռազմական գործողությունների, իրանական կողմն Իսրայելի, ԱՄՆ-ի և Անգլիայի աջակցությամբ Իրաքում հակաիշխանական դավադրության փորձ էր կազմակերպել, որը սակայն բացահայտվեց 1970թ. հունիսին, և էլ ավելի սրեց երկուստեք հարաբերությունները[43]:

Իրանի նման քայլը պայմանավորված էր նաև միջարաբական հարաբերություններում առկա որոշակի բարդություններով, մասնավորապես իրաքա-սիրիական և իրաք- եգիպտական հարաբերությունների վատթարացմամբ:

1969թ. ապրիլի 19-ին Իրանի մեջլիսը միակողմանի ձևով չեղյալ հայտարարեց 1937թ. սահմանային պայմանագիրը: Իրանը հայտարարեց, որ Իրաքն անօրինական ձևով շուրջ 30 տարի օգտագործում է Շատ ալ Արաբը և տեղեկանք չի ներկայացնում գետի օգտագործումից ստացված եկամուտների մասին, այդ իսկ պատճառով Թեհրանը չեղյալ է հայտարարում պայմանագիրը, իսկ գետն էլ վերանվանում Արվանդ Ռուդ (Շատ ալ Արաբի հին պարսկերեն անվանումը)[44]:

Ապրիլի 21-ին Իրաքը դատապարտեց Իրանի անհեռատես քայլը և հրաժարվեց ճանաչել Թեհրանի կողմից պայմանագիրը չեղյալ հայտարարելու փաստը[45]: Արդյունքում Իրաքից արտաքսվեցին մի քանի հազար իրանցիներ, իսկ Իրաքը ապաստան տվեց գեներալ Բախտիարին[46]:

1969թ. ապրիլի 29-ին ՄԱԿ-ում Իրաքի մշտական ներկայացուցիչ Ադնան Ռաուֆը ՄԱԿ-ի ԱԽ-ի նախագահին նամակ ուղարկեց, որտեղ հայտնում էր Իրաքի բողոքը կապված Իրանի 1937թ. պայմանագիրը չեղյալ հայտարարելու հետ: Մայիսի 1-ին ԱԽ նախագահին ուղղված պատասխան նամակում Իրանի ներկայացուցիչ Մեհդի Վաքիլը վարձում էր արդարացնել Իրանի գործողությունները: ՄԱԿ-ի ԱԽ-ն անտարբեր մնաց երկու նամակների հանդեպ համաձայնելով միայն միջնորդել Իրաքի և Իրանի միջև երկկողմ բանակցություններ սկսելու հարցում: Փաստորեն իրաք-իրանյան սահմանային վեճը ՄԱԿ տեղավոխելը ևս ոչ մի հանգուցալուծման չբերեց:

1969-1970 թթ., այն բանից հետո, երբ Մեծ Բրիտանիան հայտարարեց, որ հեռանում է Պարսից ծոցի շրջանից, Իրանի շահ Մուհամմեդ Ռեզա Փահլավին ակտիվացրեց Թեհրանի ծավալապաշտական քաղաքականությունը տարածաշրջանում[47]: Այդ ժամանակահատվածում իրաք-իրանյան հարաբերություններում լարվածության նոր փուլ է սկսվում, կապված Իրաքի Իրանից Պարսից ծոցի արաբական երեք կղզիների ետ վերադարձնելու պահանջի հետ[48]: 1970-ականների առաջին կեսին երկու երկրների միջև դադարեցվել էին դիվանագիտական, տնտեսական, առևտրական և մշակութային բնագավառում հարաբերությունները: Միայն 1973թ. աբաբ-իսրայելական պատերազմը ստիպեց Իրանին մեղմացնել իր կոշտ հակաաբաբական դիրքորոշումը: Եվ արդեն հոկտեմբերի 7-ին Իրաքի հեղափոխական կոմիտեի խորհրդը որոշեց վերականգնել դիվանագիտական հարաբերություններն Իրանի հետ:

1975թ. մարտի 6-ին Ալժիրում, ՕՊԵԿ-ի անդամ պետությունների հերթական նիստին Իրանի շահը և Իրաքի հեղափոխական խորհրդի հրամանատարության նախագահի տեղակալ Սադդամ Հուսեյնն Ալժիրի

նախագահ Խուարի Բումեդյենի միջնորդությամբ ստորագրեցին համաձայնագիր[49], որի առաջին կետի համաձայն 1913թ. Կոստանդնուպոլսի արձանագրության և 1914թ. դելիմիտացիայի վերաբերյալ հանձնաժողովի հռչակագրի հիման վրա դեմարկացիայի էր ենթարկվում իրաք-իրանական սահմանագիծը[49]. Ըստ Ալժիրի համաձայնագրի Իրաքի և Իրանի միջև սահմանը պետք է անցներ ոչ թե արևելյան՝ իրանական ափով, այլ գետահովստով, իսկ ավելի կոնկրետ գետի մեջտեղով:

Ալժիրի համաձայնագիրը փոխզիջումային տարբերակ էր: Իրանը պարտավորվում էր դադարեցնել, օգնություն ցույց տալ քուրդ ապստամբներին, Իրաքը համաձայնվում էր ճանաչել Իրանի հավասար իրավունքները Շատ ալ Արաբի նկատմամբ և գետի սահմանի դելիմիտացիան գետահովտով[50]:

1975թ. հունիսի 13-ին Բաղդադում Ալժիրի համաձայնագրի հիման վրա ստորագրվեց Իրան-իրաքյան պայմանագիրը պետական սահմանների և բարի դրացիական հարաբերությունների, ինչպես նաև իրաք-իրանյան սահմանի անվտանգության ապահովման վերաբերյալ: 1975թ. դեկտեմբերի 26-ին Իրաքը և Իրանը ստորագրեցին 4 լրացուցիչ համաձայնագրեր՝ Շատ ալ Արաբով նավագնացության, սահմանային գետերի և արոտավայրերի հավասար օգտագործման, ինչպես նաև սահմանային կոմիսարների իրավունքների և լիազորությունների վերաբերյալ: 1975թ. պայմանագրի ստորագրման նախօրեին իրաք-իրանյան սահմանային խառը հանձնաժողովը վերջնականապես անցկացրեց Շատ ալ Արաբի՝ որպես գետային սահմանի դեմարկացիան և դելիմիտացիան գետահովտով: Այդ սահմանագիծը պայմանագրով համարվում էր անձեռնմխելի և վերջնական[51]: Ալժիրի համաձայնագրի և Բաղդադի պայմանագրի համաձայն երկու երկրների միջև սահմանն անցնում էր Շատ ալ Արաբի գետահովտով: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները թե՛ Իրաքը, և թե՛ Իրանը ճգճգում էին պայմանագրի կետերի կատարումը, ինչը շուտով մի շարք հանգամանքների հետ միասին հանգեցրեց Իրաք-իրանյան պատերազմին:

1979թ. Իրանում տեղի ունեցավ իսլամական հեղափոխություն և Իրանը հռչակվեց Իսլամական հանրապետություն: Իրադարձություններն Իրանում ոչ միայն ազդեցին տարածաշրջանում ընթացող գործընթացների վրա, այլև նոր հարցադրումներ առաջ քաշեցին միջազգային հարաբերություններում:

Իրաք-իրանյան հարաբերությունները ծայրահեղ լարված բնույթ էին ստանում, երբ 1979թ. հուլիսին Իրաքի նախագահի պաշտոնը ստանձնում է Սադդամ Հուսեյնը: Իրաքի կառավարության որոշ շրջանակներ 1975թ. պայմանագիրը համարում էին ազգային շահերը ոտնահարող: Փոխադարձ մեղադրանքների տարափից հետո՝ կապված 1975թ. պայմանագրի կետերը չկատարելու հետ, Սադդամ Հուսեյնը պահանջեց

Իրանից ետ վերադարձնել Ծոցի երեք կղզիները: Իրաքի պահանջին Իրանը պատասխանեց, որ այդ կղզիների դիմաց ինքն արդեն վճարել է 14մլն. դոլար: Իսկ 1979թ. հոկտեմբերի 7-ին Իրանը պահանջեց փակել իրաքյան հյուպատոսությունը Խորեմշահրում, միևնույն ժամանակ հավակնություն հայտնելով Բահրեյնի նկատմամբ: Իրանը Պարսից ծոցը սկսեց անվանել Իսլամական ծոց:

1980թ. ապրիլի սկզբին Սադդամ Հուսեյնը նամակ ուղարկեց Ֆիդել Կաստրոյին, որպես Չմիացած երկրների շարժման նախագահի և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կուրտ Վալդհայմին կապված Իրանի ագրեսիվ հայտարարությունների հետ: Իրաքյան նամակին հաջորդեց իրանական, որտեղ Թեհրանը հայտարարում էր, որ Բահրեյնը և Բաղդադը իրանական տարածքներ են և շուտով կանցնեն Իրանի ինքնիշխանության ներքո[52]:

1980թ. սեպտեմբերին Իրաքի Ազգային խորհուրդը չեղյալ հայտարարեց իրան-իրաքյան 1975թ. մարտի 6-ի հռչակագիրը և 1975 հունիսի 13-ի պայմանագիրը՝ հայտարարելով Շատ ալ Արաբի նկատմամբ իրաքյան սուվերենության վերականգնումը[53], իսկ սեպտեմբերի 22-ին իրաքյան զորքերը հարձակվեցին Իրանի վրա: Սկսվեց 8 ամյա իրաք-իրանյան պատերազմը, որը մեծ հաշվով կողմերից ոչ մեկին հաղթանակ չապահովեց:

Իրաք-իրանական պատերազմից հետո սկսված հաշտության բանակցությունները ոչ մի արդյունքի չհանգեցրեցին և իրաք-իրանյան պատերազմը սառեցվեց:

1990թ. օգոստոսի 14-ին Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնի Իրանի նախագահին հղած նամակում, Բաղդադը առաջարկում է Շատ ալ Արաբի խնդրի կարգավորման հարցում հիմք ընդունել 1975թ. Ալժիրի հռչակագիրը, որին էլ դրական է արձագանքում Թեհրանը[54]: Այդպիսով հարյուրամյակներ տևած իրաք-իրանյան տարածքային-սահմանային հակասությունները և իրաք-իրանյան պատերազմի պատճառներից մեկը՝ Շատ ալ Արաբի խնդիրը, կարգավորվեց Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև 19-րդ դարում գոյություն ունեցող սահմանների փաստացի կարգավիճակի հիման վրա:

GOR GEVORGYAN

ABOUT IRAQI-IRANIAN TERRITORIAL-BOUNDING CONTRADICTIONS

In the context of Iraqi-Iranian territorial and bounding contradictions the main problem is connected with the river of Shat al-Arab. In the different periods of history the contradiction between two sides were transformed into sanguinary conflicts. The longest one was Iraqi-Iranian war /1980-1988/. Only at the end of 1980s the problem

of Shat al-Arab was dissolved. The bound between two countries became the deepest line /talveg/ of Shat al-Arab.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շատ ալ Արաբ գետը առաջացել է առաջին հազարամյակի կեսին Տիգրիս և Եփրատ գետերի միախառնման արդյունքում: Շատ ալ Արաբի ընդհանուր երկարությունը մոտ 204 կմ. է, իսկ լայնքը՝ մոտ 550 մ., որոշ հատվածներում գետի լայնքը գերազանցում է 1կմ.: Շատ ալ Արաբ գետի երկայնքի մոտ կեսը իրաք-իրանյան հարավային սահմանագիծն է: Տես՝ Алиев А., Иран и Ирак: история и современность, М., 2002 с. 605.
2. Алиев А., նշվ.աշխ., էջ 606.
3. www.mcii.or.ip/text/border/Iran-Iraq/irning1639.html; Чириков Е.И., Путевой журнал русского коммисара-посредника по турецко-русскому разграничению 1849-1852гг., СПб, 1875, с. 649-651; Al-Dhabit Sh. S., International Relations and Boundary Treaties between Iraq and Iran. Baghdad. 1966, p. 29-37.
4. Բայբուրդյան Վ.Ա., Թուրք-իրանական հարաբերությունները 19-րդ դարի առաջին երեսնամյակին և Մեծ տերությունները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Իրան, հ. 11, Երևան 1982, էջ 120:
5. Ниязматов Ш.А., Ирано-иракский конфликт: исторический очерк, М., 1989, с. 5.
6. The Treaty of Erzurum May 31,1847 տես՝ www.meij.or.ip/text/border/Iran-Iraq/erzurum1847.html; Khalid Al-Issi, The Shatt al-Arab Dispute, Groningen 1971, p. 24; Longrigg S.H., Four Centuries of Modern Iraq. Ox., 1925, p. 249.
7. Մոհամմարան (Խորրեմշեհր) 1837թ. գրավվել էր Սուլթան Մահմուդ 2-ի հրամանով Բաղդադի կառավարչի կողմից, սակայն 1841թ. այն կրկին անցավ Իրանին: Ниязматов Ш.А., նշվ.աշխ., էջ 5:
8. Ниязматов Ш.А., նշվ.աշխ., էջ 8:
9. Some Facts Concerning the Dispute between Itan and Iraq over the Shatt al-Arab, Ministry of Foreign Affairs, Tehran, May, 1966, p. 6.
10. Syres P.M., A History of Persia, vol.11, L., 1930, p. 365.
11. Ниязматов Ш.А., նշվ.աշխ., էջ 6:
12. The Tehran Protocol, December 21,1911, տես՝ www.meij.or.ip/text/border/Iran-Iraq/tehran1911.html;
13. Layerd H.Early, Adventures in Persia, Susanianas and Babylonia. Vol.2, L., 1987, p.431-432.
14. Ամենայն հավանականությամբ Թեհրանը մտահոգված էր, որ Հաագայում թուրք-իրանական սահմանավեճը կլուծվի հօգուտ Օսմանյան Թուրքիայի:
15. Wilson A., South-Western Persia: A Political Officeris Diary 1907-1914, Ox., 1914, p. 300.
16. Al-Iss; Khalid. The Shatt al-Arab Dispute. Groningen, 1971, p. 16-17.
17. 1912թ. Անգլիային հաջողվեց ստանալ Իրանի հարավում և Աբադան կղզում գտնվող նավթահանքերի շահագործման կոնցեսիաները, ինչն էլ գտնվում էր հենց այդ վիճելի սահմանագծում: Մինչև 1921թ., Իրանում իշխանության

զավթումը Ռեզա շահի կողմից, Անգլիան Հարավային Իրանում լիիրավ տնօրեն էր:

18. Protocol relating to the Delitation of the Turco-Prsian Boundary signed at Constantinople on 1913, տես՝ www.meij.or.jp/text/border/Iran-Iraq/irninq1913.html;
19. Ниязматов Ш.А., նշվ.աշխ., էջ 8:
20. Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրությունը պարտվեց, իսկ Իրաքը դարձավ Անգլիայի ենթամանդատային տարածք: 1921թ. օգոստոսի 23-ին անգլիացիների աջակցությամբ Հիջազի արքայազն Ֆեյսալը հռչակվեց Իրաքի թագավոր:
21. 1935թ. իրանական կառավարությունը որոշում ընդունեց պարսկական պետությունը վերանվանել Իրան: Տես՝ Иванов М.С., Очерк истории Ирана, М., 1952, с. 323.
22. Lauterpracht E., River Boundaries: Legal Aspects of the Shaff al-Arab Frontier – The International and Comparative Law Quarterly. Vol. O. Pt2, April, 1960, p. 211.
23. Al-Iss: Khalid. The Shatt al-Arab Dispute. Groningen, 1971, p. 16-17.
24. Агаев С.А., Иран. Внешняя политика и проблема независимости 1926-1941гг., М., 1971, с. 289.
25. The Lcaguc of Nations, February, 1935, p. 217-222.
26. Al-Marayati; A., The Diplomatic History of Modern Iraq. N.Y., 1961, p. 69-73: Անգլիան հույս ուներ որ Հաագայում խնդիրը կլուծվի հօգուտ Իրաքի, իսկ ինքը՝ Լոնդոնը միջնորդելով հարցին «բարի ծառայություն» կմատուցի Բաղդադին:
27. Alwan M., The Iraqi-Iranian Frontier Dispute – Baghdad, 1960, p. 226-231.
28. 1937 Frontier Treaty between the Kingdom of Iraq and the Empire of Iran, տես՝ www.meij.or.jp/text/border/Iran-Iraq/irninq1937.html;
29. Նույն տեղում:
30. Тарасов П.К., Саадабадский пакт, международные отношения в новейшее время, Свердловск, 1968, с. 50.
31. O'Conell D.P., State Succession in Municipal Law and International Law, Cambridge, 1967.
32. Ниязматов Ш.А., նշվ.աշխ., էջ 30; Իրաքում նույնիսկ իրանական ֆիլմերի կինոփառատոն կազմակերպվեց, իսկ իրաքյան մի խումբ երիտասարդ դերասաններ ուղևորվեցին Իրան՝ մենահամերգների:
33. Թեհրանում Շվեդիայի դեսպանությունը համաձայնել էր ստանձնել միջնորդի պարտականությունը, բայց հայտնել էր, որ իր միջնորդությունը կարող էր իրականացվել միայն 1958թ. նոյեմբերի 1-ից հետո:
34. Ниязматов Ш.А., նշվ.աշխ., էջ 49:
35. Жданов Н.В., Игнатенко А.А., Ислам на пороге 21 века, М., 1989, с. 282.
36. Алиев А., նշվ.աշխ., էջ 580:
37. Al-Izzi Kh. The Shatt-al-Arab Dispute. A Legal Study, 3-rd ed. L.: Third world centre for research and publishing L., 1981, p. 89-90.

38. 1957թ. անգլո-իրանական նավքային կազմակերպությունը անօրինական կառուցել էր Խոսրովաբադ նավահանգիստը իրաքյան տարածքային ջրերում:
39. Ниязматов Ш.А., նշվ.աշխ., էջ 42:
40. Fizzli N., The Iran-Iraq Conflict, P., 1981, p.27.
41. Նույն տեղում:
42. Ниязматов Ш.А., նշվ.աշխ., էջ 30:
43. Նույն տեղում:
44. Маркарян Р.В., Зона Персидского залива. Проблемы, перспективы., М., 1986, с.61-62.
45. Fizzli N., նշվ.աշխ., էջ 27:
46. Գեներալ Բախտիարը Իրանում դատապարտված էր մահապատժի՝ մեղադրվելով հակաշահական դավադրության մեջ:
47. Оганесян Н. О., Отношение Иракской Республики со странами Арабского Востока, Ер., 1985, с. 79.
48. Խոսքը վերաբերվում է Աբու Մուսա, Մեծ և Փոքր Թոմբեր կղզիներին, որոնց նկատմամբ Իրանի հավակնությունները սկիզբ են առնում դեռ 17-րդ դարից: 1971թ. նոյեմբերի 30-ին իրանական ռազմածովային ուժերը զբաղեցրեցին այդ երեք կղզիները՝ բարձրացնելով իրանական դրոշը: Նախքան զբաղեցվելը Իրանի կողմից կղզիները պատկանում էին Արաբական Միացյալ Էմիրությունների մաս կազմած Շարջա և Ռաս-ալ-Խայմա էմիրություններին: Новейшая история Арабских стран Азии, М., 1989, с. 326; Գևորգյան Գ., Եգիպտոսը և իրաք-իրանյան պատերազմը 1980-1988թթ., Մերձավոր եվ Միջին երկրներ եվ ժողովուրդներ, h. 22, Եր., 2003, էջ 63:
49. Տես՝www.meij.or.jp/text/border/Iran-Iraq/irninq1975.html: http://internationalwaterlaw.org/
50. Նույն տեղում:
51. Ниязматов Ш.А., նշվ.աշխ., էջ 49:
52. Նույն տեղում:
53. Տես `www.meij.or.jp/text/border/Iran-Iraq/irninq1975.html: http://internationalwaterlaw.org/
54. Letter from the Presiden of Iraq to the President of the Islamic Republic of Iran of August 14,1990, տես՝ www.meij.or.jp/text/border/Iran-Iraq/irninq1990.htm

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Իրանը հայտարարեց իր չեզոքության մասին[1], սակայն դա չկանգնեցրեց թուրքերին, որոնք արդեն պատերազմի սկզբին ներթափանցեցին Իրանի հյուսիսային շրջաններ՝ մասնավորապես Ատրպատական[2], որտեղ էլ թուրքական և ռուսական զորքերի միջև տեղի ունեցան պատերազմական գործողություններ[3]: Ներխուժելով Ատրպատական՝ թուրքերը հաշվեհարդար տեսան տեղի քրիստոնյա բնակչության հետ: Թուրքական ռազմական դատարանի վճռով գլխատվեցին մի քանի հայեր... առավել շատ մարդիկ սպանվեցին առանց դատի[4]:

Այս փաստերն էլ հենց հերքում են թուրքական պատմագրության այն կեղծ վարկածը, թե «հայերի տեղահանումները Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ պետական անհրաժեշտություն էին» և ոչինչ ծրագրավորված չի եղել[5]: Միևնույն ժամանակ «Իրանի չեզոքություն» աշխատության մեջ հանդիպում ենք ուշագրավ մի փաստի, որտեղ մատնանշվում է, որ. «Թուրքական զորքերի ռազմական գործողությունների ծրագիրը, ներխուժումը Կովկաս և Իրան, մշակվել էր Էնվեր փաշայի և գերմանական գլխավոր շտաբի համատեղությամբ, դեռևս Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը: Այդ ծրագիրը իր մեջ ներառում էր ամբողջ Այսրկովկասի, Հյուսիսային Իրանի, Այսրկասպյան շրջանների և Միջին Ասիայի զավթումը, ինչպես նաև նախատեսում էր Իրանի, Աֆղանստանի և հյուսիս-արևմտյան Հնդկաստանի ներքաշումը պատերազմի մեջ: Չնայած պատերազմի նախապատրաստմանը, թուրքական կառավարությունը բազմիցս վստահեցրել է Իրանի կառավարությանը չեզոքության պահպանման մեջ»[6]:

Պարսիկ ուսումնասիրողները այն կարծիքին են, որ հայերի մասսայական ոչնչացման ծրագիրը երիտթուրքական ղեկավարների կողմից մշակված էր դեռևս մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, ավելի ստույգ, Բալկանյան պատերազմից անմիջապես հետո[7]:

Մի շարք պարսիկ պատմաբաններ անդրադարձել են Հայոց մեծ եղեռնին: Այսպես, Իսմայիլ Ռային «Հայերի կոտորածները»[8], Սեիդ Մո-

համմեդ Ալի Ջեմալզադեն «Իմ անձնական խորհրդածությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին»[9], Ռեզա Ալի Դիվանբեկը «Հուշեր մանկական կյանքից» աշխատություններում, անկողմնակալ և անաչառ մոտեցմամբ ներկայացնում են Հայոց ցեղասպանության իրողությունը:

Իսմայիլ Ռային «Հայերի կոտորածները» աշխատությունը գրվել է մի շարք արխիվային նյութերի, հուշերի հիման վրա: Այն տպագրվել է պարսկերենով 1972թ., և հաջորդ 4 տարիների ընթացքում գիրքը վերահրատարակվել է 6 անգամ: Ըստ երևույթին, հեղինակը հարկադրված է եղել գրքի լույս ընծայման հետ կապված բազմաթիվ դժվարություններ հաղթահարել, ինչը բացատրում ենք այն հանգամանքով, որ հեղինակը թե՛ նախաբանում և թե՛ գրքի տարբեր գլուխներում կրկնում է այն միտքը, որ մտադիր չի եղել վարկաբեկել թուրք ժողովրդին և Թուրքիայի ներկայիս վարչակարգը: Սակայն այս ամենով հանդերձ նա մատնանշում է, որ 1860թ-ից մինչև 1922թ. ընկած շրջանում թուրքական յաթաղանի զոհ է դարձել 2.377 հազար մարդ, որի ճնշող մեծամասնությունը՝ 2 մլն. հայեր էին: Սակայն ըստ բազմաթիվ աղբյուրների և վկայությունների՝ իրական թիվը ավելի մեծ է[10]:

Հայոց ցեղասպանությանն է անդրադարձել նաև 20-րդ դարի ռեալիստական գրականության հիմադիրներից մեկը՝ նշանավոր արձակագիր-նովելիստ Մոհամմադ Ալի Ջամալզադեն: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին նա գտնվում էր Բեռլինում և մի առիթով գործուղման է մեկնում Բաղդադ, ուր հասնելու համար պետք է անցներ Թուրքիայի վրայով ու ակամայից ականատես է լինում թուրք ժանդարմների կողմից հայերի նկատմամբ գազանաբար կատարված խոշտանգումների ու սպանությունների տեսարաններին, որոնց մասին նա հետագայում Ժնևից գրություններ է ուղարկում Թեհրանում լույս տեսնող «Հուր» ամսագրին, որն էլ տպագրվում է 1971թ. 2-րդ համարում: Ջամալզադեն նշում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիան հավակնություններ ուներ նաև Իրանի արևմտյան նահանգների՝ հատկապես Ատրպատականի նկատմամբ: Այնուհետև, մանրամասն նկարագրում է իր տեսած ոճրագործությունները՝ որևէ լուրջ քննադատության չենթարկելով սակայն թուրքական կառավարությանը: Միայն հոդվածի վերջում, այն էլ ոմն շվեդ սպայի անունից, մատնանշում է, որ դա իսկական բնաջնջում էր: «Մի ծերունի մոտեցավ շվեդ երկու սպաների և ֆրանսերեն լեզվով ասաց. «Տեր Աստված, ե՞րբ պիտի վերջանա այս արյունահեղ պատերազմը»: Սպաներից մեկը պատասխանեց. «Սա ոչ թե պատերազմ, այլ բնաջնջում և արմատախիլ ոչնչացում է»[11]:

Առաջին համաշխարհային պատերազմը իր ծանր հետևանքները է թողել նաև իրանահայության վրա: 1918թ. թուրքական զորքերը, մտնե-

լով Ատրպատական, կոտորել են զգալի թվով հայերի, ավերել բազմաթիվ հայկական գյուղեր: Արևմտյան Հայաստանից մազապուրծ եղած հայերի մի զգալի մասն էլ հանգրվան գտավ Իրանի տարածքում: Շուտով Իրանում ստեղծվեց «Պարսկական խորհուրդ», որը համարվում էր պարսկահայության բարձրագույն մարմինը: Հիրավի, այդ խորհուրդը փրկարար դեր կատարեց վտանգված վայրերի հայ ազգաբնակչության համար[12]: «Պարսկական խորհուրդը» իր դիմումներով հասավ այն բանին, որ Իրանի կառավարությունը պաշտպանություն խոստացավ ինչպես իր քաղաքացիներին, այնպես էլ երկրի սահմանն անցած և իր տարածքում ապաստան գտած արևմտահայությանը:

Իրանահայության թիվը եղեռնից հետո զգալիորեն մեծացավ ի հաշիվ արևմտահայության: Իրանը ոչ միայն պաշտպանեց, այլև օժանդակեց հայությանը՝ տալով նրան անձի և գույքի ապահովության երաշխիքներ:

Մեջլիսում իրենց ներկայացուցիչը ունենալու իրավունքը հայերը ստացել էին դեռևս 1905-1911թ. Սահմանադրական հեղափոխության ժամանակ, սակայն 1915թ. հետո գաղութի հայ բնակչության ստվարացման հետևանքով, տրվեց նաև երկրորդ պատգամավորական տեղը: Ի դեպ, նշենք, որ մեջլիսում կրոնական փոքրամասնություններին՝ հայերին, ասորիներին, հրեաներին և զրադաշտականներին տրված է ընդամենը 5 տեղ, որից երկուսը, մինչև այսօր էլ, պատկանում է հայերին:

Հայ պատգամավորներից մեկը ներկայացնում է Իրանի հյուսիսային շրջանների հայության իրավունքները, մյուսը՝ հարավային:

Տարիներ շարունակ հայ պատգամավորները ապրիլի 24-ի կապակցությամբ մեջլիսում պարբերաբար ունենում են ցեղասպանության վերաբերյալ ելույթներ: Եվ ամեն տարի նրանց ելույթները ճայնասփռվում են Թեհրանի F.M. ռադիոկայանից:

Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում գոյություն ունեն Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք հուշարձաններ: Հիշարժան են հատկապես Աբադանի, Ահվազի, Սպահանի, Թեհրանի և Ուրմիայի շրջաններում գտնվող հուշարձանները, ուր ամեն տաբի հազարավոր հայեր են այցելում՝ խոնարհվելու Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ Իրանի կառավարությունը որպես կանոն չի խոչընդոտում ինչպես մեջլիսում ելույթ ունեցող հայ պատգամավորներին, այնպես էլ յուրաքանչյուր տարի խաղաղ երթ կազմակերպած հայերին: Իրանում տպագրվում են մեկ տասնյակի հասնող հայկական պարբերականներ, որոնց էջերը հատկապես ապրիլին ողողված են լինում ցեղասպանության թեմաներով:

Համաձայն իրանական ու թուրքական մամուլի, մեջլիսում Հյուսիսային թեմի պատգամավոր Լևոն Դավիդյանը 2000թ. մշակել էր

օրինագիծ Հայոց ցեղասպանության հարցի կապակցությամբ և պատրաստվում էր այն մեջլիսի քննարկմանը ներկայացնել: Այդ առիթով դեկտեմբերի 4-ին ԻԻՀ ԱԳՆ խոսնակ Համիդռեզա Ասեֆին լրագրողներին հայտնեց, որ «Մեջլիսն անկախ օրենսդիր մարմին է ու կարող է ընդունել ցանկացած որոշում և արտգործնախարարությունը չի կարող որևէ քայլ ձեռնարկել»[13]:

2004թ. ապրիլին ուշագրավ դեպք արձանագրվեց Իրանում: Համաձայն «Ալիքի» հրապարակումներին, Թեհրանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում Մեծ եղեռնի նոր հուշարձանի բացումից հետո «մի խումբ խափանարարներ փորձեցին եկեղեցու մօտակայքում գտնուող փողոցում խլրտումներ առաջացնելով՝ խանգարել համահաւաքը, սակայն հայ կարգապահ ուժերը եւ պահանջատէր երիտասարդները թոյլ չտուեցին, որ որեւէ խանգարում առաջանայ տեղի ունեցող ժողովրդական համահաւաքում:

Նշելի է, որ նոյն տարրերը քանի օր առաջ եւս փորձել էին յարձակւելով Ս. Սարգիս եկեղեցու շրջափակի վրայ՝ հրդեհի մատնել Մեծ Եղեռնին նւիրուած ցուցահանդէսը եւ շրջապատում տեղադրւած ցուցանակները եւ բախումներ առաջացնել շրջապատում գտնւող հայ երիտասարդների հետ: Լուրջ միջադէպեր տեղի չեն ունեցել իրանցի ոստիկանութեան ժամանակին միջամտելու եւ համագործակցելու շնորհիւ: Ձերբակալւել են նաեւ 4 հայ երիտասարդներ: Հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր դոկտ. Լեւոն Դաւթեանի եւ Թեհրանի հայոց թեմի ազգային առաջնորդարանի գրասենեակները հետամուտ են ձերբակալւածների խնդրին: Ըստ տեղեկութիւնների՝ ձերբակալւել են 9 խափանարարներ»[14]:

Ուշագրավ է այն փաստը, որ նույնիսկ «Ալիք» թերթի խմբագրությունը որևէ որակում չի տալիս այդ երիտասարդներին, նրանց կոչելով միայն «խափանարարներ»՝ չխոսելով նրանց ազգային պատկանելության մասին:

Հարկ է մեջ բերել նաև իրանական մամուլի անդրադարձը սույն հարցի կապակցությամբ: 2004թ. ապրիլի 25-ի «Համբասթեգի», «Շարղ», «Իրան», «Վաղայէէ էթթիֆաղիէ» եւ «Համշահրի» թերթերը, գլխավորապես առաջին էջերում, անդրադարձել էին Հայոց ցեղասպանութեան 89-րդ ամյակի առթիվ Ս. Սարգիս եկեղեցու բակում թեհրանահայության համահավաքին:

Վերոհիշյալ օրաթերթերը մատնանշում են, որ «Թեհրանահայերը նախաձեռնել էին քայլարշավ դեպի Թուրքիայի դեսպանատուն, որը, սակայն, չի թույլատրվել ներքին գործերի նախարարության կողմից: Վերջինս ցույցի արտոնություն էր տվել դեպի հյուսիսային պողոտաներ, որը, սակայն, մերժվել էր Թեհրանի հայոց թեմի կողմից»[15]: Ի դեպ, Թեհրանի հյուսիսային հատվածում գտնվում է ՍԱԿ-ի գրասենյակը:

2004թ. աշնանը ԻԻՀ նախագահ Սեյեդ Մուհամմեդ Խաթամիի՝ Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ընթացքում ԻԻՀ նախագահը սեպտեմբերի 9-ին այցելեց Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի տուրք մատուցելու Եղեռնի զոհերի հիշատակին: Սակայն նա որևէ կերպ չորակեց Թուրքիայի տարածքում 1915թ. տեղի ունեցած ոճրագործությունը ո՛չ բանավոր, ո՛չ էլ առավել ևս գրավոր կերպով: Ցեղասպանության թանգարանի տնօրենը նրան նվիրեց 1915 թ.-ի Մեծ եղեռնի զոհերի մասին մի աշխատություն, Հայաստանի քարտեզը, «Սասունցի Դավիթ» էպոսը և Արարատ լեռան լուսանկարների մի ալբոմ: ԻԻՀ նախագահը հետաքրքրվեց, թե ինչ են խորհրդանշում Ծիծեռնակաբերդ համալիրի հուշակոթողները:

Մենք որոշակի վերապահումով ենք մոտենում ԻԻՀ-ում ՀՀ-ան նախկին դեսպան Գ. Ղարիբջանյանի «Հայլուրին» տված այն կարծիքին, թե Խաթամիի այցը Ծիծեռնակաբերդ «ապացուցում է, որ ԻԻՀ-ում հստակ վերաբերմունք կա այս խնդրի նկատմամբ»: Մենք առավել հակված ենք այն դիտարկմանը, որ Մոհամմեդ Խաթամիի այցը Մեծ եղեռնի հուշարձանին Հայաստանի Հանրապետության Արտաքին գերատեսչության արարողակարգի բաղկացուցիչ մասն էր: Չնայած չենք կարող նաև բացառել այն հանգամանքը, որ Իրանի պես հզոր երկրի նախագահը կարող էր պարզապես չայցելել Ծիծեռնակաբերդ, և ՀՀ-ն որևէ կերպ չէր կարող առարկել՝ ելնելով երկու երկրների բարի դրացիական հարաբերություններից:

Ի դեպ, երբ փորձեցինք ուսումնասիրել ԻԻՀ նախագահի ինթերնեթային կայքը, ի զարմանս մեզ որևէ ակնարկ անգամ չգտանք Ծիծեռնակաբերդ կատարած նրա այցի մասին[16]: ԻԻՀ նախագահի ինտերնեթային կայքում ներկայացվում էր Խաթամիի այցը Հայաստան, նրա հանդիպումները ՀՀ նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի հետ, անգամ զետեղված էր ուսանողության հետ հանդիպման փաստը, բայց ոչ մի խոսք չկար Ցեղասպանության հուշարձան այցելելու մասին: Կարելի է նշել, որ Խաթամիի այցը Ծիծեռնակաբերդ միայն ՀՀ ներքին սպառման համար էր նախատեսված:

Այսպիսով, Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության վերաբերյալ հետևյալն է.

1. Չարգելել հայ պատգամավորների ելույթները մեջլիսում:
2. Թույլատրել FM ռադիոկայանով նրանց ելույթների ձայնասփռումը:
3. Չխոչընդոտել հայերի խաղաղ երթերին, ներքին գործերի նախարարության կողմից նախապես նշված վայրերով:
4. Հայկական լրագրերում տպվող նյութերին:
5. Ցեղասպանությանը նվիրված հուշարձանների կառուցմանը:

6. Միևնույն ժամանակ ոչ միայն պաշտոնապես չճանաչել, այլ նաև վարձել խուսանավել վերոհիշյալ հարցի քննարկումներից:

ԻԻՀ-ի նման մոտեցումը կարելի է բացատրել. Թուրքիա-Իրանի լավ հարաբերությունների առկայությամբ, Եվրոպայի հետ Իրանի առևտրի ծավալի զգալի մասի Թուրքիայի տարածքով անցնելու փաստով, (այժմ Իրանի և Եվրոմիսության միջև առևտրի տարեկան ծավալը հասնում է 20 մլրդ եվրոյի)[17], ինչպես նաև Իրանի տարածքում բնակվող ադրբեջանցիների թվաքանակով: Իրանում նրանց թիվը հաշվվում է 20 մլն., իսկ համաձայն այլ տվյալների նրանց թիվը աճել է՝ հասնելով 30մլն.-ի, որը մեր կողմից միանշանակորեն չի ընդունվում, քանզի սկզբնաղբյուրը ևս հավաստիացնում է ինֆորմացիայի չճշտված լինելու փաստի մասին[18]: Բայց եթե մի փահ ընդունենք վերջին թվի հավաստի լինելու փաստը, միևնույն ժամանակ արձանագրենք, որ Իրանում բնակվում է մոտ 68 մլն մարդ, ապա Իրանի բնակչության կեսը պետք է որ ադրբեջանցիներ լինեն, իսկ հաշվի չառնել այդ թվաքանակը ու նրանց պահանջները, առնվազն անհեթեթություն կլիներ: Համաձայն վերոհիշյալ տեղեկատվության «Ազերիները կամ թրքախոս իրանցիները հիմնականում բնակվում են երկրի հյուսիսային նահանգներում, որոշ նահանգներում նրանք կազմում են բնակչության 80-90%-ը»[19]: Բնականաբար, ԻԻՀ նախագահը, պաշտոնական բոլոր դեմքերը, ինչպես նաև իրանական մամուլը պետք է վեր դասեն սեփական, ազգային շահերը մյուս բոլոր հարցերից: Սինույն ժամանակ, Իրանի կառավարությունը ինչպես 20-րդ դարի սկզբին, այնպես էլ այսօր մեծ ջերմությամբ է ընդունում հայերին՝ չտնանահարելով նրանց իրավունքները և զգացմունքները:

Իրանահայությունը բավական ակտիվ նախապատրաստվել էր Մեծ եղեռնի 90-ամյակին: Իրականացրել են մի շարք միջոցառումներ: Մարտի 9-ին «ԲիԲիՍի» ռադիոյի պարսկական բաժնում լայն արձագանք գտավ Հայոց ցեղասպանության թեման: 2005թ. ապրիլի 14-ին «Ալիքի» ինթերնեթային կայքում տպագրվեց ցեղասպանության 90-ամյակի շրջանակներում Իրանում իրականացվող միջոցառումների ծրագիրը: Առավել ուշագրավ են Իրանահայ գրողների միության կողմից իրականացվող աշխատանքը, այն է՝ տպագրել վերապրողների վկայությունները՝ պարսկերենով, Հայ մշակութային «Արարատ» կազմակերպությունը նախատեսում է հոկտեմբերի 20-ին պարսիկ մտավորականների համար «Կոմիտաս» սրահում իրականացնել գիտական միջոցառում: Հայկական հարցերի ուսումնասիրման կենտրոնը ձեռնարկում է՝ 30 րոպեանոց վավերագրական ֆիլմի պատրաստում պարսկերեն լեզվով, կենտրոնը վարձելու է մեկ կամ երկու ձեռնարկ Իսլամական խորհրդարանում Հայոց Ցեղասպանության պաշտոնապես ճանաչման ու դատապարտման նախաքայլեր իրականացնելու կապակցությամբ, նախաձեռնելու է սեմինար պարսկական շրջանակում, իրականացնելու է հրատարակչա-

կան աշխատանքներ, 6 գրքերի հրատարակություն պարսկերեն լեզվով, պրակների և փաթեթների պատրաստում, իրականացնում է քարոզչական աշխատանքներ՝ ինտերնետային ցանցի միջոցով: Արդեն ստեղծել են մոտ 20 ինտերնետային էջ և՛ անգլերեն, և՛ պարսկերեն ընթերցողի համար[20]: Եվ այս ամենը իրանահայությունը կիրականացնի ողջ տարվա ընթացքում:

2005թ. ապրիլի 19-ին մեջլիսում հերթական անգամ ելույթով հանդես եկավ իրանահայության ներկայացուցիչը: Հատկանշական է, որ այս տարվա ելույթը փոքր-ինչ առավել համարձակ էր և հարկ ենք համարում մեջ բերել այն ամբողջությամբ. «Օսմանեան իշխանութեան օրօք երիտթուրքերի կողմից իրականացւած Հայոց Ցեղասպանութիւնը այն ոճրագործութիւններից է, որը արժանի պատժի չարժանանալու պատճառով՝ կարող է կրկնւել տարբեր ոճրագործների կողմից՝ աշխարհի որեւէ անկիւնում: Ուստի՝ ես եւ իրենց քւէները ինձ վստահած իրանահայերը Իսլ. խորհրդարանի յարգարժան պատգամաւորներից, նաեւ Իրանի Իսլ. Հանրապետութեան կառավարութեան պատասխանատուներից ուզում ենք, որ Հիմնական օրէնքի 154-րդ յօդւածի գործադրման ուղղութեամբ եւ նկատի առնելով Իսլ. Հանրապետութեան կառավարութեան կիրառած քաղաքականութիւնները, ըստ որոնց՝ իրաւազրկւած ազգերին խրախուսելը Իրանի Իսլ. Հանրապետութեան համակարգի անժխտելի սկզբունքներից է համարւում, մեզ նպաստեն, որ մարդկային այդ արհաւիրքը ճանաչեցնենք համայն աշխարհի ժողովրդին: Ինչպէս որ բազմաթիւ երկրների կառավարութիւններ ու խորհրդարաններ յիշեալ ճնգ իրողութիւնը դատապարտելու գծով ճայնակցել են հայութեանը[21]:

Ուշադրության է արժանի նաև Իրանի մամուլի անդրադարձը վերոհիշյալ խնդրին, որը ի դեպ զետեղված է նաև «Ալիք»-ի ինտերնետային կայքում. «Մարդոմսալարի» օրաթերթը ապրիլի 25-ի համարում գրեց «Հայերը ցուցադրեցին իրենց զայրույթը», «Շարղ» օրաթերթը կիրակի ապրիլի 24-ի համարում լայնորեն անդրադարձել է Հայոց ցեղասպանությանը և այն վերնագրել՝ «Մեկ դար ցեղասպանություն» խորագրով: «Էթեմադ» օրաթերթը գրում է. «90 տարի առաջ Թուրքիայի պետությունը ձեռնարկեց բնաջնջել հայերին և մինչ այժմ չի ընդունել այդ իրողությունը: Այս ստումով արեկ թեհրանահայերը բողոքի երթ կատարեցին և ապա ընթերցելով բանաձևը՝ պահանջեցին բոլոր երկրներից ճանաչել Հայոց ցեղասպանությունը»[22]: «Ջոմհուրիէ էսլամի» օրաթերթը գրում է. «Հայերը պահանջում են աշխարհի բոլոր պետություններից, որ ճանաչեն Հայոց ցեղասպանությունը»[23]: Ամենից ծավալուն անդրադարձել է «Իրան» օրաթերթը. ապրիլի 25-ի համարում նշվում է տեղի ունեցած քայլարշավի և ընթերցված բանաձևի վերաբերյալ, միևնույն ժամանակ անդրադառնալով Հայաստանում ապրիլի 23-ի գիշեր կատարված երթին, որի ընթացքում տասնյակ հազարավոր երիտասարդներ ջահերով շարժվել են

դէպի Ծիծեռնակաբերդ՝ ոչ միայն հարգանքի տուրք մատուցելու զոհվածներին, այլ ողջ աշխարհից պահանջելու, որպեսզի ճանաչեն 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:

Այնուհետև զետեղված է Վարդան Օսկանյանի հարցազրույցը գերմանական «Դի Վելտ» պարբերականին, որի ընթացքում Հայաստանի արտգործնախարարը անդրադարձել է Հայաստանի քաղաքականությանը՝ Թուրքիայի նկատմամբ, Թուրքիայի Եվրոմիությանն անդամակցելու, Ցեղասպանության և հատուցման խնդիրներին[24]: Թեմային են անդրադարձել նաև «Աբրար», «Համշահրի», «Էղբալ» թերթերը:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ ԻԻՀ նորընտիր նախագահ Մ.Ահմադինեժադը իր նախընտրական քարոզարշավի ժամանակ խոստացել էր իբանահայությանն ընտրվելու դեպքում դատապարտել Հայոց ցեղասպանության փաստը: 2005թ. հոկտեմբերի 30-ին ԻԻՀ նախագահն ընդունեց մեջլիսի կրոնական փոքրամասնությունների հինգ պատգամավորներին և իրանահայ դեպուտատների ներկայությամբ ևս մեկ անգամ վերահաստատեց նախընտրական իր խոստումը՝ նշելով, որ «Որևէ ժողովրդի նկատմամբ գործադրված նման արարքն արժանի է պախարակման և դատապարտման»[25]:

Ահա այսպիսին է Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ և հուսանք, որ օրերից մի օր մեր հարևան՝ տարածաշրջանում ռազմավարական կարևորություն ունեցող երկիրը՝ Իրանը, ևս կդատապարտի Թուրքիայի տարածքում իրականացված ոճրագործությունը, որը երբեք չի ջնջվի հայ ժողովրդի հիշողությունից:

GOHAR ISKANDARYAN

ARMENIAN GENOCIDE AND THE POSITION OF IRAN

In the article was presented the fact, that Turkish government realized genocide during the World War I, not only in his own territory, but also tried to carry out a crime in the territory of Persia. Breaking the neutrality of Persia, Turkish government intrude upon the territory of his neighbour country, where he punished Christians and also Armenians. While Persian government showed kind-hearted treatment and gave shelters those Armenians, who could take flight from Turks.

Some Persian historians (Ismayil Rain, Mohammad Ali Jemalzade, Reza Ali Divan Bec, etc.) told about Armenian Genocide and Turkish future plans in their works.

Nowadays Iran's government has rather interesting position on Armenian Genocide:

1. Not to permit the speeches of Armenian deputies in the Mejlis and the speeches resounded with FM radio;
2. Not to prevent Armenians peacefully demonstrations places mentioned beforehand from the Ministry of Internal Affairs of Iran;

3. The materials being published in Armenian newspapers;

4. The construction of monuments devoted to Genocide;

5. At the same time not only officially not to declare Genocide facts, but also avoid the discussions of above-mentioned question.

As regards Iranian-Armenians, they acted very actively worked and hoped that some day Iran would also declare the fact of Genocide.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարկ ենք համարում մեջ բերել չեզոքության պայմանագրից որոշ հատվածներ. «Ներկա պահին, երբ, ցավոք սրտի, պատերազմ է ընթանում եվրոպական տերությունների միջև, շահական կառավարությունը վճռեց հայտարարել իր չեզոքության մասին, կանխելու նպատակով այն դեպքերը, որոնք կարող են հանգեցնել բախման Պարսկաստանի տարածքում»: ... «Ավարտելով՝ պարտքս եմ համարում Ձեր ուշադրությունը բևեռել այն հանգամանքի վրա, որ թուրքական դեսպանը կտրականապես հայտարարել է, թե Պարսկաստանի չեզոքության հայտարարման պարագայում, թուրքական կառավարությունը այդպիսի չեզոքությունը կհարգի ամբողջությամբ»: Международные отношения в эпоху империализма (в дальнейшем МО). Документы из архивов царского и временного правительств 1878-1917гг., серия III, том VI, часть 1, Москва-Ленинград, 1935, с. 368, N 360. Ի դեպ, պարսիկները չեզոքության հայտարությամբ հետապնդում էին ևս մեկ նպատակ. նրանք ցանկանում էին միևնույն ժամանակ իրենց տարածքից դուրս բերել ռուսական զորքերը, մատնանշելով, որ հակառակ պարագայում Թուրքիան չի ճանաչի Պարսկաստանի չեզոքության փաստը և կդիմի ռազմական գործողությունների:
2. 1914թ. հոկտեմբերի 23/10-ին Սազոնովը հեռագրով (թվագրված N3432 համարով) Վորոնցով-Դաշկովին ներկայացնում է. «Ուրմիայից մեր ջոկատների հեռանալուց անմիջապես հետո, սկսվեցին թուրքական քրդերի ասպատակությունները...»: МО. Документы из архивов царского и временного правительств 1878-1917гг., сер. III, т. VI, ч. 1, с. 421, N 409. Հարկ է նշել, որ Թուրքիան միայն հոկտեմբերի 29-ին հայտարարեց պատերազմի մեջ մտնելու մասին: Իսկ 1914թ. դեկտեմբերի 16/3-ին թուրքերն արդեն անթաքույց էին գործում: «...Պարսկական կառավարությունն արդեն բողոք է ներկայացրել թուրքական դեսպանին Սոուջբուլաղի զբաղեցման կապակցությամբ»: МО., сер. III, т. VI, ч. 2, с. 221, N 653. Իսկ 1914թ. դեկտեմբերի 30-ի (1915թ. հունվարի 12) դրությամբ թուրքերը արդեն գրավել էին Թավրիզը: МО. сер. III, т. VII, ч.1, с. 9, N 6.
3. 1914թ. նոյեմբերի 6-ին (հոկտեմբերի 24-ին) Սազոնովը հեռագրում է. «Հաշվի առնելով, որ մեր կողմից անհնար է խուսափել ռազմական գործողություններից Ատրպատականում ընդդեմ թուրքերի, մեր կամքին հակառակ ստիպված ենք բարեպատեհ իրավիճակ ստեղծելու համար դիմել այս կամ այն միջոցների...»: МО., сер. III, т. VI, ч. 2, с. 31, N 470. Այդ միջոցների թվին էր պատկանում նաև Ատրպատականում գործող գերմանական, ավստրիական և թուրքական հյուպատոսների և վտանգ ներկայացնող հպատակների ձեր-

բակալումը: Հետաքրքրական էին թուրք դեսպանի պարզաբանումները Պարսկաստանի տարածքների բռնազավթման վերաբերյալ, որտեղ նա բացատրություններ է տալիս իրենց գործողությունների կապակցությամբ. «Թուրքական զորքերը մտել են Պարսկաստան ոչ թե նրա տարածքը զբաղեցնելու, այլ այդ շրջանից ռուսներին վտարելու համար»: МО., сер. III, т. VI, ч. 2, с. 311-312, N 723. Անշուշտ, այս բացատրությանը անվերապահորեն հավատալը անհեթեթ կլիներ:
4. Вопросы Истории, 1,1948, с. 93.
5. Uras Esat, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara. 1950. s. 616-617.
6. 'Нейтралитет Ирана', Тегеран, 1918, док. N 1-4, Краткие сообщения института востоковедения, XIX, Москва, 1956, с.17.
7. Վ.Բայբուրդյան, Պարսիկ պատմաբանները Հայոց ցեղասպանության մասին, Միհր, Երևան, 2005, 2(53), էջ 29:
8. Իսմայիլ Ռային «Հայերի կոտորածները», Երևան, 1999:
9. Հ.Հ.Մովսիսյան, «Պարսիկ անվանի գրողը հայկական ցեղասպանության մասին»,Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1987, թիվ 2:
10. Իսմայիլ Ռային, Հայերի կոտորածները, էջ 3, 58-59:
11. Հ.Հ.Մովսիսյան, «Պարսիկ անվանի գրողը հայկական ցիղասպանության մասին»,Պատմա-բանասիրական հանդես, էջ 233:
12. Վ.Բայբուրդյան, Իրանն այսօր, Երևան, 1999, էջ 291:
13. ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Պատմադիվանագիտական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, գործ 67:
14. http://www.alikonline.com/files/2004/apr/25/25A01.htm
15. http://www.alikonline.com/files/2004/apr/25/25A06.htm
16. http://www.president.ir
17. http://www.iranatom.ru/news/aeoi/year05/august/trade.htm
18. ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Պատմադիվանագիտական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, ցուցակ 5, գործ N 243, # 05-31,12.05.1999թ.:
19. Նույն տեղում:
20. Թեհրանի միութիւնների նախաձեռնած ծրագրերը 2005-ին՝ նւիրուած Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեակի ոգեկոչման, http://www.alikonline.com/files/2005/apr/14/14D05.htm
21. Հիւսիսային իրանահայութիան պատգամաւոր Գէորգ Վարդանեանն Իսլ.խորհրդարանին եւ կառավարութեանը դիմեց ճանաչելու Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը, http://www.alikonline.com/files/2005/apr/19/19A01.htm
22. http://www.sharghnewspaper.com, http://www.alikonline.com
23. http://www.lomhourieslami.com, http://www.alikonline.com
24. http://www.iran.com, http://www.alikonline.com
25. http://www.alikonline.eom/files/2005/oct/31/31A02.htm

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՆ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1980-1981 ԹԹ.

1980 թ. ԱՄՆ նախագահական ընտրապայքարում հաղթանակած Ռոնալդ Ռեյգանի խոստովանությամբ, իր կյանքի համոզմունքներից մեկը Իսրայել պետության գոյատևումն ապահովելու խնդիրն էր[1]: Այդ մասին նա հայտնել էր դեռևս Կալիֆոռնիայի նահանգապետի պաշտոնավարության ընթացքում՝ Նիքսոնի վարչակարգի իսրայելամետ քաղաքականությանն իր աջակցությունը հայտնելիս: 1980 թ. նախագահական ընտրարշավի ժամանակ Ռեյգանը կրկին վերահաստատեց իր լոյալությունը Իսրայել պետության հանդեպ[2], որը, նրա համոզմամբ, Մերձավոր Արևելքում կայուն ժողովրդավարություն ունեցող, ԱՄՆ-ի հետ միանման արժեհամակարգ ունեցող, և տարածաշրջանի հնարավոր ապակայունացման ու քաոսի զսպման նպատակով կայուն ռազմական հնարավորություններ ունեցող երկիր էր[3]:

Ուստի պատահական չէր, որ ԱՄՆ նախագահի պաշտոնում Ռ.-Ռեյգանի ընտրությունը թեթևություն պարգևեց իսրայելցիներին, որոնք սկսել էին մտորել Իսրայելի շահերին հավատարմության և Սաուդյան Արաբիայում ու Պարսից ծոցում սեփական նյութական ու ռազմավարական շահերի միջև հարկադրաբար ընտրություն կատարող ամերիկյան վարչակարգի ապագա քաղաքականության շուրջ[4]: Ռեյգանի ընտրությունը մեծապես ողջունվեց Իսրայելում, փոխարենը՝ խիստ մտավախություն առաջացնելով արաբական աշխարհում: Արաբներին մտահոգեց ոչ միայն հետընտրական շրջանում նախագահի կողմից երկրի ղեկավար պաշտոններում իսրայելամետ բարձրաստիճան պաշտոնյաների նշանակումները (մասնավորապես պետքարտուղարի պաշտոնում Ալեքսանդր Հեյգի նշանակումը), այլ մերձավորարևելյան գործերում վերջիններիս փաստացի անտեղյակությունը[5]:

Իր պաշտոնավարության առաջին 18 ամիսների ընթացքում նախագահ Ռեյգանը, պետքարտուղար Հեյգն ու Ազգային Անվտանգության Խորհրդի գլխավոր խորհրդատու Ռիչարդ Վ.Ալլենը, Միացյալ Նահանգների մերձավորարևելյան քաղաքականության շուրջ դատում էին ոչ թե տարածաշրջանային գործերում իրենց սեփական փորձի ու իմացութ-

յան, այլ սառը պատերազմի ոսպնյակով՝ Արևելք-Արևմուտք հակամարտության դիրքերից: Վարչակարգին ավելի շատ մտահոգում էր ոչ թե Լիբանանի «անցողիկ» համարվող ճգնաժամն ու արաբա-իսրայելական հակամարտությունը, այլև Մերձավոր Արևելքում ԽՍՀՄ-ի հնարավոր առաջխաղացման կասեցումը[6], ԱՄՆ-ի համար ռազմավարական ու կենսական շահեր ունեցող Ծոցի երկրների անվտանգության ապահովումը և նրա նավթային պաշարների նկատմամբ Արևմուտքի ազատ մուտքի ապահովագրումը: Ավելին, նրանք տարածաշրջանը դիտում էին իբրև խորհրդային ծավալապաշտության դեմ Վաշինգտոնի պայքարի մարտադաշտ[7]:

Ռեյգանի նախագահության տարիներին ԱՄՆ վարչակարգը գործնականում անդրդվելի մնաց Մոսկվայի ցանկացած քաղաքական նախաձեռնության նկատմամբ: Ի տարբերություն իրենց նախընտրական հռետորությունից պաշտոնավարության միջին շրջանում առավել կենտրոնամետ, պրագմատիկ մոտեցումների անցնող ԱՄՆ նախագահների մեծ մասի, Ռեյգանը մեկընդմիշտ ահողդող մնաց ավանդական արտաքին և ներքին ուժերի նկատմամբ՝ չհրաժարվելով նախկինում իրեն բնորոշ ագրեսիվ գաղափարական դիրքորոշումներից: Եվ քանի որ նախագահի համար ԽԱՀՄ-ը մնաց իբրև ԱՄՆ-ի համար առաջին թշնամի[8] և «չարիքի կայսրություն», ուստի վարչակարգն իր ջանքերը կիզակետեց Խորհրդային Միության առճակատման դեմ[9], և ԱՄՆ մերձավորբարևելյան քաղաքականության առաջնահերթություն դարձրեց խորհրդային հնարավոր ագրեսիայի և վերջինիս արբանյակ համարվող երկրների (Սիրիա և ՊԱԿ) միջոցով տարածաշրջանում համայնավարների վերահսկողության հաստատման կասեցումը: Վերոհիշյալ մարտահրավերների դիմակայման նպատակով Վաշինգտոնը հետամուտ եղավ Ծոցի արաբական երկրներից (Իսրայել, Եգիպտոս, Հորդանան և Սաուդյան Արաբիա) կազմված «ռազմավարական կոնսենսուսի»՝ պաշտպանական համակարգի ստեղծմանը՝ ԱՄՆ «Արագ Ծավալման Ուժերի» կազմավորմամբ: Ծոցի երկրներին զինելու միջոցով Միացյալ Նահանգները մտադիր էր կասեցնել ինչպես խորհրդային զորքերի աֆղանական ներխուժումը, այնպես էլ իրանական հեղափոխության «արտահանումը»[10]:

Պաշտպանական համակարգի ստեղծման նպատակով 1981 թ. ապրիլին պետքարտուղար Ալեքսանդր Հեյգը մեկնեց Մերձավոր Արևելք՝ պահպանողական արաբ վարչակարգերին համոզելու խորհրդային սպառնալիքի առկայության և «ռազմավարական կոնսենսուսին» միանալու անհրաժեշտության մեջ: Սակայն սաուդցի ու հորդանանցի առաջնորդները հայտնեցին, որ վերջիններիս համար առավել մեծ մտահոգություն ու սպառնալիք է ներկայացնում ոչ թե Խորհրդային Միությունը[11], այլև Իրանի իսլամական հեղափոխության «արտահանումը»[12], Իսրայելը, արաբա-իսրայելական չլուծված հակամարտությունն ու ՊԱԿ-ը:

Նրանք հայտնեցին նաև, որ ի վիճակի չեն ռազմա-քաղաքական համագործակցություն հաստատել Միացյալ Նահանգների հետ, քանի դեռ արաբա-իսրայելական հակամարտությունը ՄԱԿ-ի բանաձևերի հիման վրա համապարփակ լուծում չի ստացել: Արաբ առաջնորդները նախազգուշացրին, որ արաբա-իսրայելական խնդրի լուծման շուրջ շարունակ ձախողումները կարող են թուլացնել թե՛ իրենց, և թե՛ Միացյալ Նահանգների դիրքերը՝ հօգուտ ԽՍՀՄ-ի, և ուշ թե շուտ կսպառնան մերձավորարևելյան նավթի նկատմամբ Արևմուտքի անկաշկանդ մուտքին[13]:

Հարկ ենք համարում նշել, որ մերձավորարևելյան քաղաքականության շուրջ վարչակարգի դիրքորոշումները, այնուամենայնիվ, տարամիտված էին: Եթե Ռեյգանն ու պետքարտուղար Հեյգն Իսրայելի հետ առավել սերտ դաշինքի կողմնակից էին՝ Սիրիայի պես արմատական արաբական վարչախմբերին խորհրդային «ծավալապաշտության գործակալներ» համարելով, ապա վարչակարգի այնպիսի պաշտոնյաներ, ինչպիսիք Պաշտպանության քարտուղար Կասպար Վեյնբերգերն (և Պենտագոնը) ու Ազգային Անվտանգության գծով խորհրդատու Վիլիամ Կլարկն էին, համոզված էին տարածաշրջանի արաբական վարչախմբերի հետ հաշտեցման անհրաժեշտության մեջ՝ հրաժարվելով ամերիկյան ավանդական իսրայելամետ քաղաքականությունից, և կոչ անելով արաբա-իսրայելական հակամարտության նկատմամբ առավել հավասարակշռված մոտեցում դրսևորել[14]: Նրանց կարծիքով, տնտեսապես ու աշխարհաքաղաքական առումով կարևորություն ներկայացնող արաբական աշխարհը ևս կենսական նշանակություն ուներ Ամերիկայի ռազմավարական շահերի համար, մինչդեռ վերջինս անտեսում էր բարեկամական արաբական երկրների հետ կապերը՝ «իսրայելական քաղաքականությանը թշնամական» համարելու պատճառաբանությամբ: Ուստի, այս տեսակետի ջատագովների համաձայն, Իսրայելի դեմ առավել մեծ ճնշում պետք է գործադրվեր՝ արաբա-իսրայելական հիմնախնդրում զիջումներ կորզելու, իսկ արաբներին առավել առաջադեմ զենքեր պետք է վաճառվեր՝ ուժերի միջև հավասարակշռությունը պահպանելու նպատակով: Այսպիսով, Ռեյգանի պաշտոնավարության առաջին տարում վարչակարգը մերձավորարևելյան քաղաքականության շուրջ պառակտված էր մնում՝ չորդեգրելով հստակ ու հետևողական քաղաքականություն[15]:

Ահա թերևս վերջին նկատառումներից ելնելով, նախագահ Ռեյգանը, հաշվի առնելով Ծոցի տարածաշրջանում իրանա-իրաքյան պատերազմի ծավալման հավանականությունը, և կարևորելով Սաուդյան Արաբիայի դերը՝ որպես նավթարդյունահանող երկրի ու կոմունիզմի դեմ պայքարի հենարանի, ցանկանում էր ամրապնդել իր հարաբերությունները վերջինիս հետ: Նախագահը՝ ապավինելով Պենտագոնի այն հավաստիացումներին, թե Սաուդյան Արաբիային «AWACS» համակարգի հետախուզական ինքնաթիռների տրամադրումը (որը նախատեսվում էր

1986 թ. համար) չի խախտի Մերձավոր Արևելքում հաստատված ուժերի հավասարակշռությունը, վերսկսեց «AWACS»-ի շուրջ դեռևս Կարտերի վարչակարգի օրոք ձեռնարկված բանակցությունները[16]:

Սակայն ԱՄՆ-ի դաշնակից Իսրայելը այս հարցում դատում էր այլ կերպ՝ «AWACS»-ի վաճառքը դիտելով իբրև սեփական պաշտպանությանն ուղղված մարտահրավեր և Ռիյադի կողմից Վաշինգտոնի նկատմամբ լծակներ ձեռք բերելու հնարավորություն, որն ըստ էության նվազեցնում էր ԱՄՆ-Իսրայել ռազմավարական դաշինքի նշանակությունը: Ուստի 1981 թ. փետրվարին, Իսրայելի արտգործնախարար Յիցհակ Շամիրն իր վաշինգտոնյան այցի ժամանակ ԱՄՆ-ից պահանջեց Սաուդյան Արաբիայի համար նախատեսված «AWACS»-ի վաճառքը փոխհատուցել Իսրայելին 300 միլիոն դոլլար արժողությամբ «F-15» տիպի տասնհինգ կործանիչների տրամադրմամբ[17]: 1981 թ. սեպտեմբերին, Իսրայելի մտավախությունները մեղմելու նպատակով, ԱՄՆ կառավարությունը վարչապետ Մենահեմ Բեգինի հետ ռազմավարական համագործակցության վերաբերյալ «Փոխըմբռնման հուշագիր» ստորագրեց[18]. Փոխզիջման այս քայլը սակայն չկանխեց Բեգինին՝ ամռան վերջին ԱՄՆ կատարած ուղևորության ընթացքում Կոնգրեսի համատեղ նստաշրջաններին հետևող հեռուստահարցազրույցի ժամանակ «AWACS»-ի վաճառքի դեմ ելույթով հանդես գալուց: Ռեյգանին (որն այդ քայլը որակեց իբրև գործարքի մասին լռելու խոստման դրժում), ավելի շատ վրդովեցրեց ոչ թե «AWACS»-ի վաճառքի հետ կապված Իսրայելի արտահայտած դժգոհությունը, որը լիովին հասկանալի էր, այլ իր դեմ վարչապետ Բեգինի կազմակերպած հրապարակային «լոբբինգը»:

Այնուհանդերձ, Եգիպտոսի նախագահ Սադաթի սպանության արդյունքում տարածաշրջանի հնարավոր ապակայունացման և Սաուդյան Արաբիան «մեկ այլ Իրանի վերածվելու» հավանականության մտավախությունից ելնելով, հոկտեմբեր ամսին, նախագահ Ռեյգանը ստիպված եղավ իր բոլոր իրավասություններն ու ողջ ժողովրդականությունը գործի դնել՝ Սենատի կողմից (52՝ կողմ, 48՝ դեմ ձայներով) Իսրայելին կործանիչներ վաճառելու հավանությունը ձեռք բերելու ուղղությամբ[19]:

Փաստորեն, «Փոխըմբռնման հուշագրով» ԱՄՆ-ն Իսրայելին ռազմական և քաղաքական անսահմանափակ աջակցություն էր ցուցաբերում[20], որը տարածաշրջանում հաստատված ուժերի հավասարակշռության քանակական լուրջ փոփոխություն էր ենթադրում[21]: Բացի այդ, Իսրայել-ԱՄՆ հարաբերություններում նախանշվող որակական փոփոխությունը հաստատում էր վերջինիս հավատարմությունը Իսրայելի կողմից շարունակվող «ագրեսիվ ու ծավալապաշտային» քաղաքականությանը[22]:

1981 թ. սկզբին, Ռեյգանի պաշտոնավարության սկզբից ևեթ արաբա-իսրայելական հակամարտությունում ճգնաժամային նոր իրավի-

ճակ ստեղծվեց, որը վարչակարգի ուշադրությունը հրավիրեց մասնավորապես լիբանանյան իրադարձությունների վրա՝ Ռեյգանի ութամյա նախագահության ընթացքում չկորցնելով իր հրատապությունը, և մնալով ԱՄՆ-ին նետված մարտահրավերներից մեկը[23]:

Խնդիրը նրանում էր, որ հիմնականում բավարարված լինելով «status quo» իրավիճակով, ամերիկյան վարչակարգը մերձավորարևելյան օրակարգում Լիբանանին երկրորդական տեղ էր հատկացնում: Սպիտակ Տունը սատարում էր փաղանգավորներին և հույս ուներ, որ պաղեստինցիները կարող են ինտեգրվել Լիբանանի քաղաքական համակարգին: Եվ քանի որ Վաշինգտոնի հիմնական նպատակը տարածաշրջանի կայունությանը սպառնացող բոլոր տեսակի զարգացումների և սուր ճգնաժամերի կանխարգելումն էր, ուստի վերջինիս կողմից լիբանանյան հիմնախնդրի անտեսման արդյունքում ճգնաժամը երկարաձգվում, իսկ քաղաքացիական պատերազմ հարուցող խնդիրները գնալով սրվում էին[24]:

Լիբանանի դրությունն առավել ապակայունացավ «Քեմփ-Դևիդի» համաձայնագրի ստորագրումից հետո, երբ ՊԱԿ-ն ակտիվացրեց իր գործողությունները՝ Լիբանանի հարավի մեծ մասն իր հսկողության տակ պահելով և պաղեստինյան փախստականների ճամբարներն Իսրայելի հյուսիսում կառուցվող բնակավայրերի դեմ պարտիզանական հարձակումների նպատակով որպես ռազմահանգրվան օգտագործելով:

Միևնույն ժամանակ, «Քեմփ-Դևիդի» պայմանագիրն ու ամերիկա-իսրայելական «Փոխըմբռնման Հուշագիրը» տարածաշրջանում համայնավարների ազդեցության ամրապնդման պատեհ առիթ հանդիսացան: Ուստի ԽՍՀՄ-ի առաջարկած ռազմական օգնությունը ողջունվեց Սիրիայի կողմից[25], վավերացվելով ռազմավարական[26] «Բարեկամության ու համագործակցության» պայմանագրում:

Այս ամենը չէր կարող չանհանգստացնել Իսրայելին ու Միացյալ Նահանգներին, առաջինին՝ Սիրիային իբրև պաղեստինցիներին իր դեմ հրահրող սադրիչ գործոն, իսկ երկրորդին՝ Սիրիային իբրև արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման հիմնական խոչընդոտ համարելու տեսանկյունից: Թերևս 1981 թ. գարնանը, Լիբանանում սիրիական ուժերի ներկայությանն ու քաղաքական ազդեցությանը վերջ դնելու ԱՄՆ-ի ցանկությամբ էր պայմանավորված պետքարտուղար Հեյգի՝ մերձավորարևելյան պաշտոնական առաջին այցի ընթացքում Լիբանանում Սիրիայի ապակայունացնող դերակատարության դատապարտումը[27]: Բանն այն է, որ դեռևս 1975-ին Սիրիան, օգտվելով քաղաքացիական պատերազմի իրավիճակից, իր կողմից նշանակված խաղաղապահ ուժեր մտցրեց Լիբանան, որոնք կազմեցին միջարաբական խաղաղապահ ուժերի՝ «Արաբական Զսպիչ Ուժերի» («ԱԶՈՒ») միջուկը[28]: Սիրիայի կողմից խառը միջարաբական զսպիչ ուժերի՝ ժամանակավոր

կարգավորողի դերի ստանձնման շնորհիվ մարոնիներին հաջողվեց «դե-ֆակտո» իրենց ձեռքում պահել նախագահական պաշտոնը[29]:

Վերոհիշյալ ռազմավարական համաձայնագրերի ստորագրումից հետո միմյանց դեմ սառը պատերազմի կարգավիճակում գտնվող երկու գերտերությունների մերձավորարևելյան դաշնակիցների միջև հակասությունները էլ ավելի սրվեցին՝ իրենց գագաթնակետին հասնելով 1981 թ. ապրիլին, երբ փաղանգավորներին ցուցաբերվող իսրայելական ռազմական աջակցությանը և պաղեստինցիների դեմ փաղանգավորական միլիցիայի հարձակումների կասեցմանն ուղղված Սիրիայի հակազդեցությունն ի վերջո հանգեցրեց իսրայելա-սիրիական ռազմական բախման[30]:

Խնդիրը նրանում էր, որ 1980 թ. վերջին՝ օգտվելով «Քեմփ-Դևիդի» ստորագրումից հետո Սիրիայի տարածաշրջանային դիրքերի թուլացումից ու Լիբանանում նրա ունեցած դժվարություններից, Լիբանանի արևելքում գտնվող Բեքաա հարթավայրի կենտրոնական քրիստոնեական Զահլե քաղաքի վրա հսկողություն հաստատած և իրենց դիրքերի ընդլայնման ու ամրապնդման նպատակով սիրիացիների հետ մարտի բռնկված աջ քրիստոնեական ուժերը (որոնց սիրիական ուժերը փորձում էին դուրս մղել Զահլեից) դիմեցին Իսրայելի աջակցությանը[31]: Վերջինս էլ ապրիլի 28-ին հրթիռակոծեց Զահլեում գտնվող սիրիական երկու տրանսպորտային ուղղաթիռների[32], որին էլ հետևեց Սիրիայի կողմից ԽՍՀՄ-ի հետ պաշտպանական նկատառումներով «Բարեկամության ու համագործակցության» պայմանագրի շրջանակներում «SAM-6» տիպի հակաօդային հրթիռների տեղադրումը Բեքաայի հովտում: Իսրայելը ռմբակոծման սպառնալիքի տակ պահանջեց անհապաղ դուրս բերել հրթիռները[33]: Թվում էր, թե երկու երկրները կրկին հայտնվել են պատերազմի նախաշեմին[34]: ԱՄՆ (որն ամենայն հավանականությամբ պաշտպանելու էր Իսրայելին), քաջ գիտակցում էր, որ սիրիա-իսրայելական հրթիռային ճգնաժամը կարող է իրենից վանել դաշնակից արաբական պահպանողական վարչակարգերին (որոնք ամենայն հավանականությամբ սատարելու էին Սիրիային), և որ ԽՍՀՄ-ի հետ Սիրիայի «Բարեկամության և Համագործակցության» պայմանագրի կյանքի կոչումը կարող էր ի վերջո ԽՍՀՄ-ԱՄՆ հակամարտության առիթ հանդիսանալ[35]:

Հետևաբար, խուսափելով լայնամասշտաբ սիրիա-իսրայելական պատերազմի ծավալումից ու Մոսկվայի հետ հնարավոր առճակատումից, Ռեյգանի վարչակարգը 1981 թ. մայիսին[36] երեք հիմնական մարտնչող կողմերի՝ Իսրայելի, Սիրիայի և ՊԱԿ-ի միջև հրադադարի հաստատման նպատակով[37] միջնորդական առաքելությամբ Մերձավոր Արևելք գործուղեց դեսպան Ֆիլիպ Հաբիբին: Վերջինիս հաջողվեց լիբանանա-իսրայելական սահմանի երկայնքով հրետանային գնդակոծություններից փոքր անց հրադադար հաստատել Սիրիայի ու Իսրայելի միջև[38]:

Ինչ վերաբերվում է իրթիռային ճգնաժամի ընթացքում Սիրիային աջակցելու հարցում ԽՍՀՄ-ի դրսևորած զգուշավորությանը, ապա այստեղ ակնհայտ էր վերջինիս համար իրենից որոշակի ռազմական առավելություն ունեցող ԱՄՆ-ի (ի դեմս նրա դաշնակից Իսրայելի) հետ իր դաշնակցի ուղղակի առճակատման աննպատակահարմարությունը: Դեռ ավելին, հրթիռային ճգնաժամի ընթացքում ակնառու դարձավ Միացյալ Նահանգների հետ Սիրիայի կողմից երկխոսության (որը դադարել էր 1977 թ-ին) վերականգնման հարցում խիստ շահագրգռվածությունը, ուստի անիմաստ էր Սիրիային պաշտպանել առճակատման միջոցով: Նույնը վերաբերվում էր նաև ՊԱԿ-ին, որի ղեկավարությունը բացահայտ կերպով ձգտում էր ձեռք բերել ԱՄՆ-ի ճանաչումը՝ իբրև ՊԱԿ-ի գերագույն քաղաքական նպատակներից մեկը[39]:

Այնուհանդերձ, Հաբիբիի առաքելությունից մեկ ամիս անց, 1981 թ. հունիսի 6-ին, իսրայելական ռազմա-օդային ուժերը Իրաքի՝ իբրև ռազմատենչ միջուկային տերության վերածվելու վարձերը «կասեցնելու» նպատակով, ինչպես նաև սեփական «ինքնապաշտպանական նկատառումներից» ելնելով, անցան հորդանանա-սաուդյան օդային տարածքները[40] ռմբակոծելով Բաղդադի մոտ գտնվող Իրաքի միջուկային գործարանի ռեակտորը:

Իսրայելի կողմից հորդանանա-սաուդյան օդային տարածքների խախտումները հավանաբար «խոր թիկունքում գտնվող» սաուդցիներին ու հորդանանցիներին, ինչպես նաև արաբական մյուս երկրներին ահաբեկելու և վերջիններիս «հասանելիությունը» ցույց տալու նպատակ էին հետապնդում: Չէր բացառվում նաև այդ ժամանակ Եգիպտոսի հակազդեցությունը լրջորեն ստուգելու փորձը, հատկապես նախքան Սինայից իսրայելական զորքերի դուրսբերման ժամկետի ավարտը[41]:

Այնուհանդերձ, Իսրայելի գործողությունը որոշակի լարվածություն առաջացրեց վերջինիս հետ վարչակարգի հարաբերություններում[42], թեև Ռեյգանն իր հուշերում նշել է, որ «համամիտ էր Բեգինի գործողության շարժառիթների հետ և կասկած չուներ անգամ Իրաքի կողմից միջուկային զենքի պատրաստման ցանկության մեջ: Նախագահին պարզապես դուր չէր եկել առանց Միացյալ Նահանգների կամ Ֆրանսիայի հետ խորհրդակցելու, Իսրայելի ինքնագործունեության հանգամանքը[43]»: Այնուամենայնիվ, վարչակարգը ՄԱԿ-ի շրջանակներում դատապարտեց Իսրայելի գործողությունը և խորհրդանշական ժամկետով հետաձգեց Իսրայելին ռազմական «F-16» տիպի չորս ինքնաթիռների տրամադրումը[44]:

Անշուշտ կարելի է համաձայնել, որ հորդանանյան ու սաուդյան օդային տարածքների խախտումն ու իրաքյան ռեակտորի հրթիռակոծությունները, որոնց հետևեցին Սաուդյան Արաբիայի նկատմամբ շարունակվող հետախուզական թռիչքները, արաբներին նսեմացնելու

նպատակ էին հետապնդում: Արաբ աբևմտամետ վարչակարգերին զայրույթ պատճառեց հատկապես ռմբակոծության ժամանակ ամերիկյան հրթիռների օգտագործման հանգամանքը: Բայց և այնպես, հունիսի 16-ին կայացած համաժողովի ընթացքում Ռեյգանը, հարձակումների դատապարտումից հետո, շարունակեց արդարացնել «Իսրայելի զգուշավորությունը»՝ Իրաքի տածած թշնամանքի հանդեպ, և հայտնեց, որ «ոչ թե Իսրայելն է իր հարևան երկրներին սպառնալիք ներկայացնում», այլ՝ «Իսրայելն է վերջիններիս սպառնալիքի տակ գտնվում»: Այս իմաստով, ԱՄՆ-ի դաշնակցի գործողություններն առավել քան երբևէ դժվարեցրին վարչակարգի գործը՝ անգամ ամենապահպանողական արաբ վարչակարգերին համոզելու, որ ոչ թե Իսրայելը, այլ Ռուսաստանն է նրանց մեծագույն թշնամին[45]:

Այնուհետև, 1981 թ. հունիսի 30-ի Իսրայելի խորհրդարանական ընտրություններին հաղթանակած Լիկուդ կուսակցությունը, շնորհիվ մասնավորապես արտաքին գործերի և պաշտպանության նախարարների պաշտոններում համապատասխանաբար Արիել Շարոնի և Իցխակ Շամիրի նշանակումների, որոնք դարձան Իսրայելի ռազմատենչ նոր քաղաքականության գաղափարախոսներն ու կենսագործողները, շարունակեց իր կոշտ քաղաքական գիծը՝ արագացնելով գրավյալ տարածքներում իսրայելական բնակավայրերի կառուցման գործընթացը և մի շարք ''preemptive attacks'' («կանխարգելիչ գրոհներ») ձեռնարկելով Լիբանանի հարավի պաղեստինյան թիրախների նկատմամբ[46]:

Նույն ամսին Բեյրութում գտնվող ՊԱԿ-ի գրասենյակի վրա Իսրայելի օդուժի հրթիռակոծությունների արդյունքում առաջացած զանգվածային ավերածությունների ու մարդկային կորուստների (300 զոհեր և 800 վիրավորներ), Իսրայելի ու պաղեստինցիների միջև լիբանանա-իսրայելական սահմանի երկայնքով մարտերի բռնկման, ինչպես նաև դեկտեմբերին Գոլանի բարձունքներում զգալի բռնակցումներով իսրայելական ուժերի ծավալման հանգամանքը վարչակարգին կանգնեցրեց ոչ դյուրին իրողության առջև[47]:

Խնդիրը նրանում էր, որ 1981 թ. դեկտեմբերի 14-ին, Իսրայելի Կնեսսետը, շրջանցելով ԱՄՆ-ի հետ վերջին շրջանում ստորագրված «Փոխըմբռնման Հուշագիրը», Գոլանի բարձունքների նկատմամբ իր օրենսդրական դաշտն ու կառավարման իրավասությունները ընդլայնող օրինագիծ ընդունեց, որը դատապարտվեց ԱՄՆ-ի կողմից՝ Ծոցի անվտանգության խնդիրներից իրենց ուշադրությունը շեղելու պատճառով: Դեկտեմբերի 18-ին վարչակարգը սպառնաց անգամ ԱՄՆ-Իսրայել հարաբերությունների հնարավոր վատթարացմամբ[48]:

Այսպիսով, իսրայելական գործողությունների և նրան ցուցաբերվող ամերիկյան աջակցության արդյունքում Սպիտակ Տան մոտ տարածաշրջանային լայնամասշտաբ հակամարտության առաջացման շուրջ

յուրջ մտավախություն առաջացավ: Իսկ Հաբիբիի առաքելության մասշտաբները ընդլայնվեցին, երբ կրկին անգամ ակնհայտ դարձավ, որ Լիբանանի ճգնաժամի ոչ մի ասպեկտ չի կարող դիտվել մերձավորարևելյան հակամարտության շրջանակներից դուրս, և Հաբիբը վարձեց ՄԱԿ-ի և Սաուդյան Արաբիայի օգնությամբ հասնել հիմնախնդրի առավել համապարփակ լուծման[49]: Հուլիսի 24-ին հրադադար հաստատվեց այս անգամ ՊԱԿ-ի ու Իսրայելի միջև, առաջինի հետ՝ անուղղակի, իսկ վերջինի հետ ուղղակի բանակցությունների միջոցով: Իսրայելը հրադադարն ընդունեց՝ ելնելով ամերիկա-իսրայելական հարաբերությունների հետագա վատթարացման մտավախությունից, որն առավել սաստկացավ, երբ նրա գործողությունները քննադատության արժանացան ոչ միայն իսրայելական որոշ շրջանակների, այլև ԱՄՆ վարչակարգի, կոնգրեսականների ու ամերիկյան լրատվամիջոցների կողմից: Սակայն պաշտոնական Իսրայելին առավել մտահոգում էր այն հանգամանքը, որ ՊԱԿ-ի մասնակցությունը հրադադարին կարող էր ԱՄՆ-ի մոտ նրա հանդեպ պատասխանատու բանակցային կողմի տպավորություն ստեղծել և նպաստել ԱՄՆ-ի և ՊԱԿ-ի միջև առավել սերտ կապերի հաստատմանը: Այս մտավախությունը թերևս զուրկ չէր հիմքից, քանի որ պաղեստինցի որոշ առաջնորդների կարծիքով, ՊԱԿ-ի հետ նույնիսկ անուղղակիորեն բանակցելու միջոցով, Միացյալ Նահանգներն ու Իսրայելը՝ ի հեճուկս իսրայելցիների ու Հաբիբիի այն առարկությունների, թե հրադադարն իրականում հաստատվել է «Իսրայելի և Լիբանանի միջև», առնվազն «դե ֆակտո» ճանաչում էին ՊԱԿ-ի՝ որպես հակամարտող կողմի կարգավիճակը[50]: Վաշինգտոնն իրականում փորձում էր «Միացյալ Ազգերի Կազմակերպության Լիբանանյան Ժամանակավոր Ուժերի»՝ («UNIFI») դիրքերի ամրապնդման միջոցով ընդլայնել Լիբանանում վերջինիս գործունեության շրջանակն ու կանխել պաղեստինցիների սպառազինման հնարավորությունները[51]:

1981 թ. երկրորդ կեսին, ամերիկյան պաշտոնական որոշ շրջանակների հայտարարություններից դատելով, մերձավորարևելյան հիմնախնդրի կարգավորման գործում իդեալական տարբերակ ընդունվեց քեմփ-դևիդյան համաձայնագրի ու Ֆահդի ծրագրի դրույթների համակցությունը[52]: Բանն այն է, որ 1981 թ. օգոստոսին Սաուդյան Արաբիայի վարչապետ թագակիր արքայազն Ֆահդը ներկայացրեց 8 կետերից բաղկացած նոր «խաղաղության ծրագիր»[53], որով կոչ էր արվում 1967 թ. գրավյալ տարածքներից, ներառյալ Արևելյան Երուսաղեմից, իսրայելական զորքերի դուրս բերում, իրենց սեփական պետության մեջ պաղեստինցիների իրավունքների ճանաչում, գրավյալ տարածքներում կառուցված բնակավայրերի ապամոնտաժ և կարճ ժամանահատվածով այստեղ ՄԱԿ-ի մանդատի հաստատում: Ծրագրով նաև ճանաչվում էր «տարածաշրջանի բոլոր պետությունների խաղաղ գոյակցության իրավուն-

քը», որը Սաուդյան Արաբիայի արքայազն Սաուդը՝ նոյեմբերի 5-ին, իսկ նախագահ Ռեյգանը՝ նոյեմբերի 10-ին որակեցին իբրև Իսրայելի «դե ֆակտո» ճանաչում: Վարչակարգը Ֆահդի ծրագիրն առնվազն մեկնակետ համարեց բանակցությունների համար, որն այնուհանդերձ հերքվեց Իսրայելի կողմից[54]:

Թեև Հորդանանի թագավոր Հուսեյնը վճռականորեն պաշտպանեց Սաուդյան Արաբիայի նախաձեռնությունը, այնուհանդերձ, վերջինս հարուցեց նախագահ Ռեյգանի դժգոհությունը՝ պահանջելով խաղաղության կայանալիք համաժողովում ՊԱԿ-ի մասնակցությունը: Լիբիան բացահայտորեն մերժեց ծրագիրը, իսկ նախագահ Ասադը հրաժարվեց ծրագրի քննարկման նպատակով Ֆեսի համաժողով մեկնել[55]:

Ըստ էության, ծրագրի նկատմամբ արաբական պետությունների տածած զգալի երկմտանքը պայմանավորված էր մասնավորապես Միացյալ Նահանգների կողմից Սաուդյան Արաբիային ցուցաբերվելիք աջակցության հանդեպ նրանց ունեցած թերահավատությամբ: Վերջիններս մտադիր էին ծրագրի շուրջ քննարկումները հետաձգել մինչև 1982 թ. ապրիլին Սինայից նախատեսվող իսրայելական ուժերի դուրս բերման ավարտը: Ինչ վերաբերվում է ՊԱԿ-ին, ապա Արաֆաթի կարծիքով ծրագիրը «լավ սկիզբ» և «տարածաշրջանի համապարփակ ու հարատև խաղաղության հաստատման համար լավ հիմք» կարող էր հանդիսանալ, սակայն ՊԱԿ-ի մի շարք այլ առաջնորդներ մերժում էին այն՝ վերջինիս հետ չառնչվելու և խաղաղության բանակցություններում իրենց չընդգրկելու պատճառաբանությամբ: Ի վերջո, ծրագրի ընդունումը նոյեմբերի վերջին կայացած Ֆեսի արաբական գագաթաժողովում ձախողվեց[56]:

Այսպիսով, վերոհիշյալ զարգացումները, որոնք ամենայն հավանականությամբ միտված չէին արաբա-իսրայելական հակամարտության համապարփակ լուծմանը, կամ առնվազն դրանց համար հնարավոր ուղիների նախանշմանը, ըստ էության նպաստեցին 1982 թ. հունիսին Իսրայելի կողմից լիբանանյան ագրեսիայի իրականացմանը:

Խնդիրը նրանում էր, որ նախագահ Ռեյգանը և պետքարտուղար Հեյգը՝ համոզված լինելով, որ ՊԱԿ-ի և Իսրայելի միջև հրադադարը դատապարտված է ձախողման, ներխուժման միջոցով հնարավոր էին համարում միաժամանակ երկու հիմնախնդրի՝ Լիբանանի ճգնաժամի և արաբա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորումը: Վարչակարգը հիմնականում կիսում էր Իսրայելի նկրտումները՝ պաղեստինցիներին ու սիրիական ուժերին Լիբանանից դուրս վտարելու և երկրում իր հետ հաշտություն կնքող իսրայելամետ ու արևմտամետ քրիստոնյա փաղանգավորների ղեկավարությամբ կառավարություն հաստատելու ուղղությամբ: Վարչակարգի համոզմամբ, հետպատերազմյան Լիբանանից իսրայելական, սիրիական և ՊԱԿ-ի ուժերի դուրս բերման հանգա-

մանքը կարող էր նպաստել մերձավորարևելյան խաղաղության նոր գործընթացի մեկնարկին, որը Սիրիային ու ԽՍՀՄ-ին շրջանցելով՝ կընդգրկեր Իսրայելին, Հորդանանին և անկախության չհավակնող պաղեստինցիներին: Անշուշտ խաղաղության բանակցություններում խորհրդային մասնակցության կասեցման միջոցով ԱՄՆ-ին էր վերապահվում միանձնյա հովանավորի և միջնորդի դերակատարությունը:

Հետևաբար, կասկածից վեր ենք համարում, որ ամերիկյան վարչակարգը ոչ միայն տեղյակ էր իսրայելական ծրագրվող ներխուժման մասին, այլև կողմ էր դրա «սահմանափակ» իրականացմանը՝ ռազմական և քաղաքական օգնություն տրամադրելով Իսրայելին, իսկ վերջինիս առաջնորդները «համոզված էին…որ վերջնական կանաչ լույսը պետք է գա Վաշինգտոնից»:

AGHAVNI HARUTYUNIAN

USA 1980-81 MIDDLE EAST POLICY

United States policy in the Middle East in 1980-81 was marked by primary attention toward questions of Gulf security and major diplomatic efforts over Lebanon and the Arab-Israeli conflict. The Reagan Administration, during its first 18 months in office, stressed the creation of a "strategic consensus" among Arab states in the Gulf to be directed against potential Soviet aggression or Moscow-backed subversion in an area whose oil resources made it increasingly important for US strategic interests. Such a viewpoint was largely reasoned by the Iranian revolution and the Soviet invasion of Afghanistan. So the Reagan Administration tried to further strengthen its ties with several Arab regimes, most notably Saudi Arabia, motivated by their growing importance for US security interests and the goal of strategic consensus in the Gulf. Shortly after the Reagan Administration came to office, the series of new crises began turned the Administration's attention to the Lebanon crises and the Arab-Israeli conflict. In May, 1981 Reagan sent Ambassador Philip Habib to negotiate a resolution of the missile crisis between Israel and Syria, who succeeded in obtaining a cease-fire. The June 1981 Israeli destruetion of the Iraqi nuclear reactor, and the July air raids against PLO offices in Beirut, coupled with the earlier events, actually produced broader regional conflict which eventually led to June 1982 Israel's invasion of Lebanon. So, there is no doubt that the USA was not only aware of the Israeli aggression, but largely encouraged Jerusalem in its operations both militarily and politically.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ronald Reigan, An American Life, New York; Simon & Schuster, 1990, p 409.
2. Kiron K.Skinner, Annelise Anderson and Martin Anderson, Reigan. A Life In Letters, Foreword copyright 2003, by George P.Shults, p. 443.
3. Նույն տեղում, էջ 32:

4. Питер Кальвокоресси, Мировая политика после 1945 года, Книга 1, Москва "Международные отношения", 2000, стр. 510.
5. Fred J. Khouri,The Arab Israeli Dilemma, (The Reigan Administration, Israel, the Arabs, and Palestinians, January 1981-March 1985). By Syracuse University Press, New York, 1985, p. 422.
6. Նույն տեղում, էջ 422:
7. William L.Cleveland, A History of The Modern Middle East. (Boulder:Wctvicw Press, 1994) p.121
8. Anatholy Dobrynin, In Confidence Moscow's Ambassador to America's Six Cold War Presidents, University of Washington Press, 1995. p. 499.
9. Shibley Telhami, Political Islam: Challenges For U.S. Policy. Why do they hate US so much?, Congressional Program, THE ASPEN INSTITUTE. Washington. DC. Second Conference, June 27-July 3, 2003. Vol. 18, No. 4. p 14.
10. Robert O Freedman, The Middle East After The Israeli Invasion of Lebanon. Syracuse University Press, 1986. p. 69-70. Այստեղ հիշարժանն այն է, որ թեև անվտանգության սպառնալիքների դիմակայման նպատակով Ծոցի տարածաշրջանի երկրների պաշտպանական համակարգի զարգացման ու կատարելագործման ուղղությամբ մեծ առաջընթաց արձանագրվեց, այնուամենայնիվ, «ռազմավարական կոնսենսուսն» առավել օգտակար գտնվեց ռազմա-տեխնիկական, քան թե քաղաքական համագործակցության առումով:
11. Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 422:
12. Barry Rubin, The United States and the Middle East: 1981-1982", Middle East Contemporary Survey, 1981-82, Vol. 6 (NY, 1983), p.1. Իրանում այաթոլլահ Խոմեյնու վարչախմբի հաստատման և երկրի տարածքից իրաքյան զորքերի դուրս մղման, այնուհետև 1982 թ. սեպտեմբերին իրաքյան ներխուժումից հետո ձեռք բերված ռազմական հաջողությունների արդյունքում Իրանը Ծոցի համար լուրջ սպառնալիք սկսեց դիտվել, և տարածաշրջանի արաբական պետությունների նավթարդյունահանման կայունության նկատմամբ ներքին, հատկապես արմատականության սպառնալիք ստեղծեց:
13. Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 423:
14. William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 123:
15. Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 426:
16. William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 123:
17. Նույն տեղում, էջ 123:
18. Barry Rubin, նշվ. աշխ., էջ 2:
19. William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 123:
20. Ն.Հովհաննիսյան, Լիբանանի ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982 թ, էջ 75:
21. Ռ.Կարապետյան, Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2000, էջ 101:
22. Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 427:
23. Polk William ,The Arab World Today, Harward University Press, 1991, p.452:
24. William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 121:

25. Ռ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 101: Սիրիան մտահոգված էր հատկապես վերոհիշյալ համաձայնագրի ստորագրման հարցում և շարունակաբար շեշտում էր ԽՍՀՄ-ի հետ նմանատիպ ռազմավարական համաձայնագրի կնքման անհրաժեշտությունը: Սիրիացիների կարծիքով, ԽՍՀՄ-ի հետ «Բարեկամության ու համագործակցության» պայմանագիրը շատ թույլ կողմեր ուներ Համաձայնագրում բացակայում էր Լիբանանում սիրիացիների ներկայության վերաբերյալ կետը, որը չափազանց կարևոր նշանակություն ձեռք բերեց մասնավորապես 1982 թ. հունիսին բռնկված պատերազմի ընթացքում:
26. Polk William, նշվ. աշխ., էջ 349:
27. Itamar Rabinovich, The War for Lebanon 1970-1985 , Cornell University Press, Ithaca and London, 1985, p 90.
28. Ghassan Tueni, Lcbanon's Wars and Middle East Peace , Mediterrancan Quarterly, A Journal of Global Issues, Vol., 1, No.3, Summer, 1990. p. 9. Խաղաղապահ ուժերը 1976-ի նոյեմբերին Ռիյադում ու Ալեքսանդրիայում տեղի ունեցած արաբական զագաթաժողովների միաձայն որոշմամբ արաբական լիսկատար օրինականություն ստացան: Եվ քանի որ Ալեքսանդրիայում հիմնադրված «ԱՁՈՒ»-ի պառակտման հետևանքով ւսրաբական համերաշխությունը չերկարատևեց, ուստի միջազգային համաժողովներին լիբանւսնյան հիմնահարցի ուղղությամբ վարվող բւսնւսկցային գործընթացներում առաջատար դիրք զբաղեցրեց Սիրիան:
29. Питер Кальвокоресси, նշվ. աշխ., էջ 506:
30. Don Peretz, The Middle East Today, Fifth Edition, New York Westport, Connecticut London, p. 391.
31. Հարությունյան Լիլիթ, Սիրիայի և Իսրայելի գործոնը լիբանանյան ճգնաժամում (1975-1990 թթ.), Արևելք հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2001, էջ 80:
32. P.Scale, The struggle for the Middle East, London, 1988. p. 284.
33. Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 423:
34. Don Peretz, նշվ. աշխ., էջ 391:
35. Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 92:
36. William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 122:
37. Don Peretz, նշվ. աշխ., էջ 391:
38. Alexander M.Heig, Jr. Caveat: Realism, Reigan, Foreign Policy. New York, Macmillan, 1984,p.180.
39. Itamar Rabinovich նշվ. աշխ., էջ 148:
40. Питер Кальвокоресси, նշվ. աշխ., էջ 511:
41. Ե.Մ.Պրիմակով, «Մի դավադրության պատմություն», Երևան, «Հայաստան», 1987, էջ 306:
42. Amos Perlutter, The Life and Times of Menahem Begin, Doubleday & Company, New York, 1987. p. 7.
43. William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 121:
44. Питер Кальвокоресси, նշվ. աշխ., էջ 511:
45. Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 423:

46. Նույն տեղում, էջ 424: Պաղեստինցիները Լիբանան էին եկել երկու հոսանքով՝ 1948-49 թթ. արաբա-իսրայելական պատերազմի և 1970 թ. Հորդանանի քաղաքացիական պատերազմի արդյունքում:
47. William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 121-122:
48. Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 427:
49. Itamar Rabinovich նշվ. աշխ., էջ 92:
50. Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 424:
51. Tabitha Petran, The Struggle Over Lebanon, Monthly Review Press, New York, 1987, p. 262. ԱՄՆ-ը և Սաուդյան Արաբիան իբրև հովանավորներ պետք է երաշխավորեին համապատասխանաբար Իսրայելի և ՊԱԿ-ի կողմից հրադադարի պահպանման իրականացումը:
52. Е.Д.Пырлин, "100 лет противоборства. Генезис, эволюция современное состояние и перспективы решения палестинской проблемы", Москва, РОССПЭН, 2001, с.236.
53. Питер Кальвокоресси, նշվ. աշխ., էջ 511:
54. Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 425:
55. Питер Кальвокоресси, նշվ. աշխ., էջ 511:
56. Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 425:

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1983Թ. ՄԱՅԻՍԻ 17-Ի ԼԻԲԱՆԱՆԱԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1980-ականների սկզբին, շարունակվող «սառը» պատերազմի պայմաններում, գերտերությունների՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի գլխավորած խմբավորումների և նրանց մերձավորբարևիլյան դաշնակիցների միջև դիմադրության ու հակամարտության խորացումն անմիջականորեն անդրադարձավ ներլիբանանյան իրականության վրա՝ ավելի բարդացնելով լիբանանյան ճգնաժամի քաղաքական կարգավորման խնդիրը:

Պատահական չէր, որ 1982թ. ապրիլի վերջին, 1979թ. ստորագրված եգիպտաիսրայելական խաղաղության համաձայնագրով նախատեսված Սինայ թերակղզուց իսրայելական զորքերի ամբողջությամբ դուրս բերումից շուրջ 6 շաբաթ անց՝ հունիսի 6-ին, Իսրայելը «խաղաղություն Գալիլեային» ռազմական գործողության շրջանակներում, որ հաճախ մասնագիտական գրականության մեջ անվանվում է նաև արաբիսրայելական հինգերորդ պատերազմ, ներխուժեց Լիբանան: Լիբանանի վրա հարձակման համար որպես հարմար առիթ օգտագործվեց 1982թ. հունիսի 3-ին Լոնդոնում Իսրայելի դեսպանի դեմ անհաջող մահափորձը[1]:

Նշենք, որ Լիբանան ներխուժմամբ Իսրայելը հետապնդում էր հետևյալ նպատակները 1.ռազմական ճանապարհով ոչնչացնել 1970թ. Հորդանանում «սև սեպտեմբերի» արյունալի դեպքերից հետո Լիբանանի տարածքում հաստատված Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) ռազմական կառույցները, 2. հասնել Լիբանանի տարածքից սիրիական զորքերի դուրս բերմանը, որոնք 1976թ.-ից Միջարաբական զսպման ուժերի կազմում գտնվում էին Լիբանանում, ինչն անկասկած կհանգեցներ տարածաշրջանում Սիրիայի դիրքերի թուլացմանը, 3. նպաստել Լիբանանում 1982թ. օգոստոսին կայանալիք նախագահական ընտրությունների արդյունքում այնպիսի վարչակարգի հաստատմանը, որ պատրաստ կլիներ Իսրայելի հետ կնքել խաղաղության մասին համաձայնագիր[2]: Ե'վ ԱՄՆ-ը և' Իսրայելը Լիբանանը հարմա-

րում էին Եգիպտոսից հետո արաբական աշխարհում երկրորդ երկիրը. որ ներքաղաքական փոփոխություններով պարտադրված կարող էր համաձայնել Իսրայելի հետ ստորագրել խաղաղության մասին անջատողական համաձայնագիր, ինչն ընդհանուր առմամբ համապատասխանում էր նաև տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերին և, ըստ էության, կարող էր դառնալ 1978թ. սկսված քեմփդևիդյան գործընթացի հաջող շարունակությունը:

1982թ. հունիսի 6-ի առավոտյան իսրայելական տարբեր տվյալներով 80-ից 100հզ. ցամաքային ուժերը, ռազմաօդային և ռազմածովային ուժերի հետ համատեղ՝ զինված նորագույն տեխնիկայով, անցան Լիբանանի սահմանը: Նույն օրը ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդն (ԱԽ) ընդունեց թիվ 508, իսկ մեկ օր անց՝ հունիսի 7-ին թիվ 509-ը բանաձևերը, որոնք դատապարտում էին Իսրայելի գործողությունները և պահանջում իսրայելական զորքերի անմիջապես դուրս բերում Լիբանանի միջազգայնորեն ճանաչված սահմաններից[3]: Միայն հունիսի 11-ին, մերձավորարևելյան տարածաշրջանում ընթացող զարգացումների շուրջ ամերիկախորհրդային շփումների ակտիվացման արդյունքում, ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանն իսրայելական կողմից պահանջեց դադարեցնել Լիբանանում ռազմական գործողությունները: 1982թ. հունիսի 11-ի լույս 12-ի գիշերն Իսրայելի առաջարկությամբ կնքվեց Սիրիայի և Իսրայելի միջև կրակի դադարեցման մասին համաձայնագիր[4]: Հաջորդ օրն ամերիկյան ներկայացուցիչ Ֆիլիպ Հաբիբի միջնորդությամբ, որ տարածաշրջան էր գործուղվել դեռևս 1981թ. գարնանը, համաձայնագիր կնքվեց նաև Իսրայելի և ՊԱԿ-ի միջև[5]: Իսրայելական վերահսկողության տակ հայտնվեց Լիբանանի տարածքի գրեթե կեսը՝ 4.5 հզ. կմ^{2}: Սակայն իսրայելական կողմը խախտեց համաձայնագրի դրույթները և հունիսի կեսերին արդեն գրավեց Լեռնային Լիբանանի մի շարք ռազմավարական շրջաններ, որոնք մինչ այդ գտնվում էին սիրիական ուժերի վերահսկողության տակ[6]: Հունիսի 13-ին իսրայելական զորքերը Բեյրութի արևելյան մասում վերահսկողություն իրականացնող աջ ուժերի՛ զինված խմբավորումների աջակցությամբ շրջապատեցին նաև արևմտյան Բեյրութը[8]:

Արաբական շրջանակներում առկա հակասությունների հետևանքով արաբական երկրների ղեկավարներն այդպես էլ չկարողացան հստակ դիրքորոշում որդեգրել Լիբանան իսրայելական լայնածավալ ներխուժման հարցում: Միայն հունիսի 26-ին Թունիսում հնարավոր եղավ հրավիրել Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) շրջանակներում արաբական երկրների արտաքին գործերի նախարարների համաժողով՝ Լիբանանում ստեղծված իրավիճակը քննարկելու նպատակով: Այս համաժողովը չհաստատեց Սիրիայի և ՊԱԿ-ի՝ Լիբանանում իսրայելական ագրեսիայի դեմ արաբների համատեղ ռազմական գործողութ-

յունները ծավալելու և ԱՄՆ-ի դեմ քաղաքական և տնտեսական պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ առաջարկությունը[9]:

Հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 12-ն իսրայելական զինված ուժերը որոշակի ընդմիջումներով արևմտյան Բեյրութը ենթարկեցին օդային, ցամաքային և ծովային ռմբակոծության: Իսրայելական զորքերի գործողությունները դժգոհություն առաջ բերեցին Վաշինգտոնում: Ամերիկյան ճնշումների արդյունքում Իսրայելը դադարեցրեց արևմտյան Բեյրութի պաշարումը: Հարաբերական հանգստությունն արևմտյան Բեյրութում վերականգնվեց օգոստոսի 13-ին[10]:

Օգոստոսի 19-ին Իսրայելն ընդունեց Ֆիլիպ Հաբիբի միջնորդությամբ արևմտյան Բեյրութից սիրիական զորամիավորումների և ՊԱԿ-ի զինված խմբավորումների դուրս բերման ծրագիրը: Հայտնվելով բավական բարդ իրավիճակում՝ ՊԱԿ-ը համաձայնեց քննարկել Բեյրութից իր զինված ջոկատների դուրս բերման իսրայելական պահանջը: Բանակցությունները ՊԱԿ-ի և Իսրայելի միջև ընթանում էին ամերիկյան բանագնաց Ֆիլիպ Հաբիբի և լիբանանյան կառավորության միջնորդությամբ: Ֆիլիպ Հաբիբն իր կառավարության անունից երաշխավորեց, որ 1. իսրայելական զորքերը չէին մտնի արևմտյան Բեյրութ, 2. կապահովվեր Լիբանանի տարածքում գտնվող պաղեստինյան փախստականների ճամբարների անվտանգությունը[11]. Պաղեստինյան ղեկավարությունը ստիպված էր համաձայնել Բեյրութից իր զինված խմբավորումների դուրս բերման հետ: Լիբանանում անվտանգության ապահովման, ինչպես նաև պաղեստինյան զինված խմբավորումների Բեյրութից դուրս բերումը վերահսկելու նպատակով, 1982թ. օգոստոսի 21-ին Բեյրութ մտցվեցին բազմազգ ուժեր՝ ամերիկյան, ֆրանսիական, իտալական և անգլիական զորամիավորումներ[12]: Մինչև 1982թ. սեպտեմբերի 1-ը ՊԱԿ-ի 8.144 և սիրիական վերահսկողության տակ գտնվող Պաղեստինի ազատագրության բանակի 3.500 մարտիկներ, ինչպես նաև 2.700 սիրիացի զինվորներ լքեցին արևմտյան Բեյրութը[13]:

Մինչ այդ, 1982թ. օգոստոսի 23-ին, գումարվեց Լիբանանի խորհրդարանի արտահերթ նիստ, որում երկրի նախագահ ընտրվեց միակ թեկնածու, լիբանանյան աջ ուժերի զինված խմբավորումների 34-ամյա հրամանատար Բաշիր Ժմայելը: Ուղիղ մեկ ամիս անց սահմանադրության համաձայն նոր նախագահը պետք է ստանձներ իր պաշտոնը, սակայն 1982թ. սեպտեմբերի 14-ին Բեյրութում, այն շենքում, որտեղ տեղակայված էր «Քաթաիբ» կուսակցության գրասենյակը, տեղի ունեցած հզոր պայթյունի հետևանքով նա զոհվեց[14]: Հաջորդ օրը՝ 1982թ. սեպտեմբերի 15-ին իսրայելական բանակն, այնուամենայնիվ, մտավ արևմտյան Բեյրութ: Լիբանանյան կառավարությունն Իսրայելի գործողությունները որակեց որպես նոր ագրեսիա: Այն պահանջեց ՄԱԿ-ի ԱԽ հրավիրում և Թել-Ավիվի գործողությունների համար մեղադրեց ամերիկյան կառավա-

րության, քանի որ ԱՄՆ-ը Հաբիբի միջոցով երաշխավորել էր, որ թույլ չի տա իսրայելական զորքերի մուտքն արևմտյան Բեյրութ: Իսրայելն իր արևմտյան Բեյրութ ներխուժումը հիմնավորեց հետևյալ փաստարկներով. 1. ներխուժմամբ նա ձգտում էր կանխել նախագահի սպանության հետևանքով արևմտյան Բեյրութում հնարավոր քաոսային իրավիճակի առաջացումը և 2. հակառակ դուրս բերման համաձայնագրի Իսրայելը պնդում էր, որ Բեյրութում շարունակում էին մնալ շուրջ 2.000 պաղեստինյան զինված մարտիկներ[15]:

Այն ժամանակ, երբ ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունում էր որոշում, որը դատապարտում էր արևմտյան Բեյրութ իսրայելական ներխուժումը, Իսրայելի փաստացի դաշնակիցները՝ աջ ուժերի զինված խմբավորումները, 1982թ. սեպտեմբերի 17-ի գիշերը պաղեստինյան փախստականների Սաբրա և Շաթիլա ճամբարներում իրականացրեցին շուրջ 3.000 պաղեստինյան փախստականների դաժան սպանությունը[16]:

Սեպտեմբերի 21-ին Լիբանանի նոր նախագահ ընտրվեց Բաշիր Ժմայելի ավագ եղբայրը՝ «Քաթաիբ» կուսակցության քաղաքական վարչության անդամ Ամին Ժմայելը, որ երկու օր անց ստանձնեց նախագահի պաշտոնը: Սեպտեմբերի վերջին լիբանանյան կառավարության պահանջով և համաշխարհային հանրության ճնշմամբ Իսրայելը ստիպված էր իր զորքերը դուրս բերել Լիբանանի մայրաքաղաքից[17]:

Միայն 1982թ. հոկտեմբերի 4-ին լիբանանյան հակամարտող կողմերի միջև երկարատև բանակցություններից հետո Ամին Ժմայելը երկրի վարչապետ նշանակեց Շաֆիկ Ուազանին, որը ձևավորեց նոր կառավարություն:

Հակառակ Բեյրութից պաղեստինյան ռազմաքաղաքական կառույցների դուրս բերմանը, Թել-Ավիվն, այնուամենայնիվ, չէր շտապում իր զոբքերը դուրս բերել Լիբանանի տարածքից: Իսրայելական ղեկավարները չէին թաքցնում, որ նրանց հիմնական նպատակը ԱՄՆ-ի հովանու ներքո Լիբանանի հետ անջատողական խաղաղության համաձայնագրի ստորագրումն էր:

Իսրայելական շարունակվող օկուպացիան նպաստեց Լիբանանում Իսրայելի ռազմական ներկայության դեմ արմատական տրամադրությունների և զինված դիմադրության ուժեղացմանը: Այդ դիմադրությունը գլխավորեցին լիբանանյան ձախ ուժերը, որոնք 1982թ. սեպտեմբերին ձևավորեցին Լիբանանյան հայրենասիրական դիմադրության ճակատը, որի գործունեությանն իրենց ակտիվ մասնակցություն էին բերում նաև շիական «Ամալ» շարժումն ու «Հիզբալլահ» կուսակցությունը[18]:

Իսրայելի ռազմական ներկայության դեմ դիմադրության առաջին լայնածավալ գործողությունը 1982թ. նոյեմբերին Տիրում իսրայելական սպայակույտի շենքի պայթեցումն էր, որի արդյունքում սպանվեց 10 իսրայելցի. կային նաև տասնյակ վիրավորներ[19]:

Իսրայելն իր հերթին փորձում էր հնարավորինս օգտագործել ներխուժումից հետո Լիբանանում ստեղծված իրավիճակը: Պատահական չէ, որ Բեյրութի քրիստոնեական Դբայ արվարձանում լիբանանյան կառավարության թույլատվությամբ բացվեց Իսրայելական կապերի գրասենյակը, որ իրականացնում էր կիսապաշտոնական դիվանագիտական ներկայացուցչության գործառույթներ[20]: Չսահմանափակվելով գաղտնի դիվանագիտությամբ՝ իսրայելական նախարարները, այդ թվում նաև պաշտպանության նախարար Արիել Շարոնը, հաճախակի այցելում էին աջ ուժերի ղեկավարներին:

Նորընտիր նախագահ Ամին Ժմայելը քաղաքական ուղեգիծ եռչակեց հակամարտող կողմերի միջև խաղաղության հաստատման ճանապարհով Լիբանանի ամբողջականության վերականգնումն ու երկրից բոլոր օտարերկրյա զորքերի դուրս բերումը[21]: Նախագահը չէր թաքցնում, որ պատրաստվում էր իր քաղաքական ծրագիրը կյանքի կոչել հիմնականում ԱՄՆ-ի և արևմուտքի օժանդակությամբ: Հատուկ նշանակություն էր հատկացվում մարտունակ բանակի ստեղծմանը, որի պատրաստման և զինման հարցում Լիբանանի նախագահին իր աջակցությունը հայտնեց ԱՄՆ-ը[22]:

Այսպիսով և' Իսրայելը և' ԱՄՆ-ը շատ մոտ էին Լիբանան իսրայելական ներխուժմամբ իրենց առջև դրված գլխավոր խնդրի իրագործմանը: Լիբանանում արդեն իսկ ձևավորվել էր արևմտամետ վարչակարգ, որ կտրականապես դեմ էր երկրում պաղեստինյան և սիրիական ռազմական ներկայությանը և պատրաստակամություն էր հայտնել սերտացնել իր շփումներն Իսրայելի հետ, ճնշել լիբանանյան ձախ ուժերին և այդ ճանապարհով «կայունություն» հաստատել երկրում, ինչը ճանապարհ պիտի հարթեր դեպի լիբանանաիսրայելական հաշտության պայմանագրի կնքումը:

Լիբանանում ամերիկյան ազդեցության ուժեղացման պայմաններում 1982թ. վերջին լիբանանյան իշխանությունները, ԱՄՆ-ի միջնորդությամբ, որի անմիջական խնդիրն էր դարձել լիբանանաիսրայելական համաձայնագրի նախապատրաստումը, համաձայնեցին բանակցություններ վարել Իսրայելի հետ: Բանակցությունները սկսվեցին 1982թ. դեկտեմբերի 29-ին և ընթանում էին պարբերաբար Կիրիատ-Շմոնում (Իսրայել) և Խալդում (Բեյրութի արվարձան): Իսրայելական կողմն իր զորքերի դուրս բերումը պայմանավորում էր լիբանանաիսրայելական խաղաղության համաձայնագրի ստորագրմամբ, Լիբանանի հարավում ապառազմականացված «անվտանգության գոտու» պահպանմամբ և լիբանանյան բանակի նախկին մայոր՝ Հադդադի ղեկավարած Լիբանանի հարավի բանակի[23] (ԼՀԲ) զորամիավորումների երկրի բանակում ընդգրկելով[24]:

Երկարատև բանակցությունների արդյունքում 1983թ. մայիսի 17-ին Լիբանանի և Իսրայելի պատվիրակությունները ստորագրեցին «Խաղաղության մասին համաձայնագիրը»: Այդ փաստաթուղթը նախատեսում էր երկու երկրների միջև պատերազմական իրավիճակի դադարեցում և իսրայելական զորքերի աստիճանաբար դուրս բերում: Համաձայնագիրն արգելում էր Լիբանանին թույլ տալ իր տարածքով (նաև օդային) որևէ երկրի զորամիավորումների տեղաշարժ, որն Իսրայելի հետ չուներ դիվանագիտական հարաբերություններ[25]: Լիբանանն իր տարածքում չէր կարող ունենալ զենիթային զենք, որի գործողության հեռավորությունը գերազանցեր 5 կմ-ը: Այն նաև պահանջում էր Լիբանանից չեղյալ հայտարարել ցանկացած համաձայնագիր, պայմանագիր կամ արձանագրություն, որ հակասում էր լիբանանաիսրայելական համաձայնագրի դրույթներին՝ ներառյալ բոլոր այն պարտավորությունները, որ Լիբանանը, որպես արաբական պետություն, ստանձնել էր 1945թ.-ից՝ դառնալով ԱՊԼ հիմնադիր անդամ[26]: Այն սահմանափակեց լիբանանյան կառավարության ալ-Զահրանի և ալ-Աուալի գետերի միջև ընկած տարածքում զորքերի տեղակայումը և պահանջեց կառավարությունից ճանաչել Իսրայելի հովանավորյալ ԼՀԲ-ը, որպես միակ օրինական ուժ, որ կարող էր վերահսկել մինչև ալ-Զահրանի գետն ընկած տարածքը, ինչպես նաև թույլ էր տալիս լիբանանաիսրայելական սահմանի երկայնքով իսրայելական վերահսկողական զորամիավորումների տեղակայում, որոնք լիազորված էին վերոնշյալ շրջանում ոչնչացնել ցանկացած զինված խմբավորում: Լիբանանի հարավին վերաբերող բոլոր որոշումներն Լիբանանն ու Իսրայելը պետք է ընդունեին համատեղ[27]:

Լիբանանի խորհրդարանում համաձայնագիրը հավանության արժանացավ 64 կողմ և 2 դեմ ձայնով, սակայն նրա վավերացումը հետաձգվեց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իսրայելը Լիբանանից իր զորքերի դուրս բերումը պայմանավորում էր սիրիացիների և պաղեստինյան զինված խմբավորումների՝ երկրի տարածքից ամբողջությամբ դուրս բերմամբ: Նախագահ Ժմայելը խուսափեց իր ստորագրությունը դնել այդ համաձայնագրի տակ:

Հակառակ լիբանանյան աջերի, որոնք ոգևորությամբ ընդունեցին լիբանանաիսրայելական համաձայնագրի ստորագրումը, ձախ ուժերը, ինչպես նաև Սիրիան, կտրականապես մերժում էին ճանաչել այն, փաստարկելով, որ համաձայնագիրը ոտնահարում էր Լիբանանի անկախությունն ու ինքնիշխանությունը: Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադն այս կապակցությամբ նշեց, որ լիբանանաիսրայելական համաձայնագրի համաձայն իսրայելական զինվորները հայտնվում էին Դամասկոսից 24 կմ, իսկ սիրիական զորքերը՝ Թել-Ավիվից 250 կմ հեռավորության վրա, ինչն Իսրայելի հետ պատերազմական վիճակում գտնվող Սիրիային թելադրում էր բացասաբար վերաբերվել այդ համաձայնագրին[28]:

1983թ. հունիսի 23-ին ձախ ուժերը հայտարարեցին Ազգային փրկության ճակատի (ԱՓՃ) ստեղծման մասին, որում միավորվեցին Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը, Լիբանանի Կոմունիստական կուսակցությունը, Կոմունիստական գործունեության կուսակցությունը և այլն: Ճակատին իրենց աջակցությունը հայտնեցին նաև նախկին վարչապետ Ռաշիդ Քարամեն և նախկին նախագահ Սուլեյման Ֆրանժիեն: ԱՓՃ-ի հետ սերտորեն համագործակցում էր նաև շիական «Ամալ» շարժումը: Ճակատի խարտիան որպես նպատակ հռչակեց Լիբանանից իսրայելական զորքերի և բազմազգ ուժերի դուրս բերումը, ինչպես նաև լիբանանաիսրայելական համաձայնագրի չեղյալ հայտարարումն ու լիբանանյան աջերի, մասնավորապես «Քաթաիբ» կուսակցության քաղաքական մենիշխանության դեմ պայքարը, ինչի արդյունքում էլ հնարավոր էր դարձել այդ համաձայնագրի ստորագրումը[29]:

«Խաղաղության մասին համաձայնագրի» ստորագրումն ուժեղացրեց մի կողմից լիբանանյան աջերի և Իսրայելի, իսկ մյուս կողմից ԱՓՃ-ի միջև հակամարտությունը, որին զգալի աջակցություն էին ցույց տալիս Սիրիան և Լիբանանի որոշ շրջաններում դեռևս իրենց ներկայությունը պահպանած պաղեստինյան զինված խմբավորումները:

Իսրայելի հետ համաձայնագրի կնքումը լիբանանյան վարչակազմը հիմնավորում էր այն փաստարկով, որ այն նախատեսում էր իսրայելական զորքերի աստիճանաբար դուրս բերում: Սակայն, ինչպես այդեն նշվեց, Իսրայելն իր զորքերի դուրս բերումը նախապես պայմանավորում էր սիրիական զորքերի դուրս բերմամբ: Սիրիան, իր հերթին, կտրականապես հրաժարվում էր իր զորքերը դուրս բերել Լիբանանի տարածքից՝ դրան հակադրելով իր այլընտրանքը. զորքերի դուրս բերում միայն ՄԱԿ-ի ԱԽ համապատասխան բանաձևերի հիման վրա իսրայելական զորքերի դուրս բերումից հետո[30]: Իսրայելը հրաժարվեց այդ առաջարկից: Հետևաբար լիբանանաիսրայելական համաձայնագրի ստորագրման լիբանանյան վարչակազմի ամենագլխավոր փաստարկը՝ իսրայելական զորքերի դուրս բերումը, կորցրեց իր նշանակությունը՝ պահպանելով Լիբանանի և Սիրիայի համար բոլոր բացասական դրույթները:

Լիբանանաիսրայելական համաձայնագրի ստորագրումից հետո Լիբանանում դեպքերի զարգացումը կենտրոնացավ հիմնականում մինչև Աուալի գետն ընկած տարածքներից իսրայելական զորքերի մասնակի դուրս բերման վրա: Էական նշանակություն ունեցավ 1983թ. սեպտեմբերի 3-ին մեծամասամբ դրուզներով բնակեցված Լեռնային Լիբանանի Շուֆ շրջանից իսրայելական զորքերի դուրս բերումը, որոնք այդ շրջանում ձախ ուժերի հետ բախումներում կրում էին զգալի կորուստներ: Շուֆից իսրայելական զորքերի դուրս բերումից հետո, նրանց դիրքերը գրավեցին աջ ուժերի զինված խմբավորումներն ու լիբանանյան բանակի ստորաբաժանումները, ինչն իր հերթին բախումներ առաջ բերեց վեր-

ջիններիս և դրուզների զինված ջոկատների միջև: Ռազմական գործողությունների ընթացքում Շուֆը մաքրվեց լիբանանյան աջերի զինված ստորաբաժանումներից և անցավ ձախերի հսկողության տակ[31]: Երկյուղելով, որ դեպքերի նման զարգացումը կարող էր նպաստել լիբանանախորհրդային խաղաղության համաձայնագրի չեղյալ հայտարարմանը, ԱՄՆ-ը, լիբանանյան բանակի ստորաբաժանումներին և աջ ուժերի զինված խմբավորումներին աջակցություն ցույց տալու նպատակով, որոշեց միջամտել ռազմական գործողություններին: Ամերիկյան հետևակը և 6-րդ նավատորմի նավերը լայնածավալ ռմբակոծության ենթարկեցին Լեռնային Լիբանանում ձախ ուժերի դիրքերը[32]: Նպատակ հետապնդելով ստիպել սիրիական կառավարությանը հրաժարվել ձախ ուժերին ցույց տրվող աջակցությունից և իր զորքերը դուրս բերել Լիբանանի տարածքից՝ Սիրիա գործուղվեց ԱՄՆ-ի նախագահի հատուկ ներկայացուցիչ Ռ. Մակֆարլեյնը[33]: Սակայն ո՛չ տարածաշրջանում ամերիկյան ուղղակի ռազմական ներկայությունը, ո՛չ էլ քաղաքական ճնշումները չստիպեցին Սիրիային փոխել իր դիրքորոշումը:

Սեպտեմբերի 25-ին Սիրիայի և Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ լիբանանյան հակամարտող ուժերը ստորագրեցին կրակի դադարեցման մասին հերթական համաձայնագիրը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հրավիրել ազգային երկխոսության համաժողով, որը բացառելու էր ոչ հավասարակշռված որոշումների ընդունումը[34]: Փաստորեն, սա նշանակում էր «Քաթաիբ» կուսակցության քաղաքական մենիշխանության, ինչպես նաև լիբանանյան հակամարտության կարգավորման գործընթացում աջ ուժերի և նրանց արևմտյան դաշնակիցների վտրճերի ձախողում: Լիբանանյան գործերում նախաձեռնությունը կրկին անցավ լիբանանյան ձախերի և Սիրիայի կողմը:

Լիբանանյան հակամարտության դեռևս չկարգավորված լինելը, 1982թ. իսրայելական ներխուժումը, հակամարտող կողմերի և նրանց դաշնակիցների գործողությունները, նպաստեցին Լիբանանում՝ մասնավորապես շիական շրջանակներում, ծայրահեղական տրամադրությունների սրմանը: Պատահական չէր, որ 1983թ. հոկտեմբերի 10-ին շիա ծայրահեղականները Լիբանանում պայթյուն կազմակերպեցին ԱՄՆ դեսպանատան մոտ, իսկ հոկտեմբերի 23-ին գրեթե միաժամանակ պայթյուններ տեղի ունեցան նաև երկրում տեղակայված բազմազգ ուժերի ամերիկյան և ֆրանսիական զորքերի զորանոցներում: Պայթյունի հետևանքով զոհվեց տարբեր տվյալներով 239-241 ամերիկացի և 50-57 ֆրանսիացի զինծառայող[35]: Հոկտեմբերի վերջին Տիրում կրկին պայթեցվեց իսրայելական սպայակույտի շենքը, որի արդյունքում սպանվեցին տասնյակ իսրայելցիներ[36]: Վերոնշյալ զարգացումների արդյունքում Իսրայելում և Արևմուտքում ավելի հաճախակի դարձան Լիբանանից իսրայելական զորքերի և բազմազգ ուժերի դուրս բերման օգտին հնչող կո-

չերը, սակայն ԱՄՆ նախագահ Ռեյգանը հայտարարեց, որ ամերիկյան ծովային հետևակը դեռևս դուրս չէր բերվի Բեյրութից, քանի դեռ Լիբանանում շարունակում էին մնալ օտարերկրյա զինված ուժեր[37]: Իրենց հերթին ֆրանսիական ռազմաօդային ուժերը հոկտեմբերի վերջին Բաալբեքի շրջանում գրոհի ենթարկեցին շիա ծայրահեղականների դիրքերը, իսկ դեկտեմբերի 4-ին ամերիկյան 6-րդ նավատորմի օդային ուժերը ռմբակոծեցին նաև Լեռնային Լիբանանում սիրիական զորքերի դիրքերը[38]:

Լիբանանում զինված հակամարտության կարգավորմանն էր միտված ազգային երկխոսության համաժողովի անցկացումը, որի առաջին փուլը տեղի ունեցավ Ժնևում 1983թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը: Համաժողովին իրենց մասնակցությունը բերեցին Լիբանանի նախագահ Ամին Ժմայելը, ԱՓՃ-ի ղեկավարներ՝ Վալիդ Ջումբլաթը, Ռաշիդ Քարամեն, Սուլեյման Ֆրանժիեն, «Ամալի» ղեկավար Նաբիհ Բերրին, աջ ուժերի ղեկավարներ՝ Պիեր Ժմայելը, Քամիլ Շամունը և այլն: Համաժողովին մասնակցեցին նաև Սիրիայի Արաբական Հանրապետության արտաքին գործերի նախարար Աբդ ալ-Հալիմ Խադդամը և Սաուդյան Արաբիայի պետնախարար Մասուդը[39]: Դժվարին բանակցություններից հետո համաժողովում ձեռք բերվեց կրակի դադարեցման վերաբերյալ համաձայնագիր, որի համար հիմք ծառայեց լիբանանաիսրայելական համաձայնագրի այս կամ այն չափով համընդհանուր դատապարտումը: Պարզ դարձավ, որ ներլիբանանյան բախումների հուսալի դադարեցումը հնարավոր էր միայն լիբանանաիսրայելական համաձայնագրի չեղյալ հայտարարման հիմքի վրա, որի հետ լիովին համաձայն էր Սիրիան: Համաժողովը որոշում ընդունեց չեղյալ հայտարարել լիբանանաիսրայելական համաձայնագիրը և հանձնարարեց Ամին Ժմայելին այցելել Վաշինգտոն՝ ամերիկյան վարչակազմի հետ քննարկելու Լիբանանից իսրայելական զորքերի դուրս բերման հարցը: ԱՄՆ-ն իր հերթին փորձեց ճնշումների միջոցով ստիպել Լիբանանի նախագահին՝ չհրաժարվել լիբանանաիսրայելական համաձայնագրից[40]:

Լիբանանում խորացող հակամարտության պայմաններում 1984թ. հունվարին ձախ ուժերի զինված խմբավորումները նոր դիրքեր գրավեցին Լեռնային Լիբանանում և Բեյրութի հարավային արվարձաններում: Լիբանանյան բանակը, ԱՄՆ-ի ծովային հետևակի աջակցությամբ փորձեց փետրվարի սկզբին վերականգնել իր դիրքերը մայրաքաղաքի հարավային արվարձաններում, որոնք ենթարկվեցին հրետանային հարձակման: Արդյունքում կային բազմաթիվ զոհեր: Ի պատասխան ձախ ուժերի և «Ամալի» ղեկավարները փետրվարի 4-ին կոչ արեցին լիբանանյան բանակի մահմեդական շարքային զինվորներին, որոնք հիմնականում շիաներ էին, լքել բանակի շարքերը և միանալ ձախ ուժերին: Կոչին հետևեց բանակի պառակտումը քրիստոնեական և մահմեդական

մասերի: Փետրվարի 6-ին ձախ ուժերը և «Ամալն» իրենց կողմն անցած շարքային զինվորների օժանդակությամբ պարտության մատնեցին բանակային ստորաբաժանումներին և վերահսկողություն հաստատեցին արևմտյան Բեյրութում՝ պահանջելով լիբանանաիսրայելական հաշտության համաձայնագրի չեղյալ հայտարարում[41]: Լիբանանում դեպքերի վերոնշյալ զարգացումները ստիպեցին ԱՄՆ-ին փետրվարի 7-ին ամերիկյան ծովային հետևակները և բազմազգ ուժերի մեջ ներգրավված իր զորքերը 6-րդ նավատորմի նավերով շուտափույթ դուրս բերել Բեյրութից[42]:

Լիբանանյան վարչակազմը նույնպես հարկադրված էր վերանայել իր քաղաքական ուղեգիծը: Փետրվարի 28-ին Ամին Ժմայելն առաջին անգամ այցելեց Դամասկոս, ինչն ընկալվեց որպես լիբանանյան իշխանությունների բացառապես արևմտամետ, ինչպես նաև միայն Իսրայելի հետ համագործակցության քաղաքականությունից հրաժարում և լիբանանյան հակամարտության կարգավորման գործընթացում Սիրիայի հատուկ դերի ճանաչում: 1984թ. մարտի 5-ի Դամասկոսի հետ ստորագրված պայմանավորվածության համաձայն լիբանանյան կառավարությունը պաշտոնապես չեղյալ հայտարարեց Իսրայելի հետ «Խաղաղության համաձայնագիրը»[43]:

Մայիսի 17-ի համաձայնագրի չեղյալ հայտարարումը նոր քաղաքական իրավիճակ ստեղծեց Լիբանանում և նրա շուրջ: 1984թ. փետրվար-մարտ ամիսներին Լիբանանից դուրս բերվեցին նաև բազմազգ ուժերի կազմում ներգրավված ֆրանսիական, իտալական և անգլիական ստորաբաժանումները[44]: Կրկին ստեղծվեց ներլիբանանյան հակամարտությունը քաղաքական ճանապարհով կարգավորելու հնարավորություն: Մարտի 12-20-ը Լոզանում հրավիրվեց ազգային երկխոսության համաժողովի 2-րդ փուլը: Տարաձայնությունների առկայության պատճառով հակամարտող կողմերը չկարողացան համաձայնության գալ քաղաքական բարեփոխումների հարցում: Նրանք հաստատեցին կրակի դադարեցման համար անհրաժեշտ միջոցառումները և հավանություն տվեցին նոր սահմանադրության մշակման սկզբունքներին[45]: Ապրիլին Դամասկոս Ամին Ժմայելի նոր այցելության շրջանակներում համաձայնեցվեց լիբանանյան քաղաքական կառուցվածքի բարեփոխումների համալիրը, որը պահպանելով կրոնադավանական համակարգը, նախատեսում էր բարեփոխումների արդյունքում հավասարեցնել մահմեդականների և քրիստոնյաների իրավունքները[46]:

Դամասկոսում ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա, 1984թ. մայիսին, ձևավորվեց ազգային միասնության կառավարություն՝ Ռաշիդ Քարամեի գլխավորությամբ: Նոր կառավարության կազմում ներգրավվեցին հակամարտող ճամբարների ղեկավարները՝ Առաջադիմական սոցիալական կուսակցության ղեկավար Վալիդ Ջումբլաթը և «Ամալ» շարժման ղեկավար Նաբիհ Բերրին, ինչպես նաև աջ ու-

ուժերը ներկայացնող Պիեր Ժմայելը և Քամիլ Շամունը: Կառավարության ծրագիրն արտացոլում էր ձախ ուժերի պահանջները՝ իսրայելական զորքերի դուրս բերում, անկախ արտաքին քաղաքականության վարում, Սիրիայի հետ համագործակցության սերտացում և հակամարտող կողմերի միջև համաձայնեցված քաղաքական բարեփոխումների իրականացում[47]:

Նոր կառավարության առաջին քայլերից էր Դքայում իսրայելական կապերի գրասենյակի փակումը: Լիբանանում ստեղծված նոր իրավիճակը հնարավորություն տվեց իշխանություններին, որ իրենց գործողությունները համաձայնեցնում էին Սիրիայի հետ, ավելի ակտիվորեն պայքարել երկրից իսրայելական զորքերի դուրս բերման համար: Էական մարդկային կորուստները, ֆինանսական ծախսերը, հարավի բնակչության՝ մասնավորապես շիաների զինված պայքարը, ստիպեցին իսրայելական նոր կառավարությանը՝ Շիմոն Պերեսի գլխավորությամբ, համաձայնել զորքերի դուրս բերման հետ՝ այն չպայմանավորելով Լիբանանից սիրիական զորքերի դուրս բերմամբ[48]:

Լիբանանյան կառավարության և Իսրայելի միջև բանակցությունները սկսվեցին 1984թ. նոյեմբերին Նակուր բնակավայրում՝ լիբանանաիսրայելական սահմանի մոտ: Իսրայելական զորքերի դուրս բերման առաջին փուլը նախատեսում էր զորքերի հեռացում Սիդոնի շրջակայքից մինչև Լիթանի գետը: Այդ շրջանում անվտանգության ապահովման համար պատասխանատվությունն իսրայելական կողմը դնում էր լիբանանյան բանակի վրա: Երկրորդ փուլը նախատեսում էր զորքերի դուրս բերում երկրի կենտրոնական և արևելյան շրջաններից և դուրս բերված զորքերի վերադասավորում լիբանանաիսրայելական սահմանի շրջանում: Երրորդ և վերջին փուլը նախատեսում էր զորքերի դուրս բերում դեպի Իսրայելի հյուսիսային սահման: Լիբանանի հարավում պահպանվելու էր 10 կմ լայնությամբ «անվտանգության գոտին», որը շարունակելու էր վերահսկել ԼՀԲ-ը[49]:

1985թ. հունիսի 6-ին ավարտվեց Լիբանանի մեծ մասից իսրայելական զորքերի դուրս բերումը: Իսրայելցիները լքեցին Սայդան, Տիրը, Նաբաթիան, Լեռնային Լիբանանի մեծ մասը և Բեքաայի հովիտը: Այդուհանդերձ, Թել-Ավիվն իր ներկայությունը պահպանվեց լիբանանաիսրայելական սահմանի երկայնքով «անվտանգության գոտում»՝ ԼՀԲ-ի տրամադրության տակ թողնելով 1000 իսրայելցի զինվոր[50]: Իսրայելը պահպանեց նաև «անհրաժեշտության դեպքում» Լիբանանի տարածքում գրոհներ իրականացնելու իրավունքը:

Փաստենք, որ 1980-ականների սկզբին Լիբանանում ընթացող զարգացումները՝ 1982թ. իսրայելական ներխուժումը, բազմազգ ուժերի տեղակայումը, լիբանանաիսրայելական խաղաղության համաձայնագրի ստորագրումը ու դրանց արդյունքում լիբանանյան ճգնաժամի խորա-

ցումը, մածապես պայմանավորված էին նաև «սառը» պատերազմի շրջանակներում գերտերությունների ու նրանց մերձավորարևելյան դաշնակիցների միջև հակամարտության խորացմամբ: Մի շարք գործոններով պայմանավորված, Լիբանանն արաբական երկրների շարքում դարձավ այն թույլ օղակը, որտեղ բախվեցին գերտերությունների ու նրանց տարածաշրջանային դաշնակիցների շահերը: ԱՄՆ-ի հովանու ներքո քեմփդևիդյան գործընթացն իր շարունակությունն ունեցավ Լիբանանում: Արդյունքում, 1983թ. ստորագրվեց լիբանանաիսրայելական խաղաղության համաձայնագիրը, որը, թեև որոշակի առաջընթաց էր, սակայն, այն ոչ միայն չհանգեցրեց Լիբանանի և Իսրայելի միջև վերջնական խաղաղության հաստատմանն ու Լիբանանում իրավիճակի կայունացմանն, այլ նաև էլ ավելի խորացրեց ներլիբանանյան հակասությունները: Երկրում տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային զինված ուժերի առկայությունն առաջ բերեց արմատական տրամադրությունների և զինված դիմադրության ուժեղացում, որի արդյունքում էլ չեղյալ հայտարարվեց լիբանանաիսրայելական համաձայնագիրը, իսկ իսրայելական զինված ուժերը (բացառությամբ «անվտանգության գոտուց») և բազմազգ ուժերի ստորաբաժանումներն արդեն 1984-85թթ. հարկադրաբար դուրս բերվեցին Լիբանանի տարածքից:

LILIT HARUTYUNYAN

THE LEBANESE-ISRAELI PEACE TREATY OF MAY 17 1983 IN THE CONTEXT OF THE INTERNATIONALIZATION OF LEBANESE CONFLICT

The developments that passed in Lebanon in the beginnig of 1980's – the Israeli intervention in 1982, the entrance of the Multinational Forces. the subscription of the Lebanese-Israeli Peace Treaty, as the result the deepenning of the Lcbanese crisis was greatly conditioned also with the deepenning of contradictions between Great States and their Middle East allies in the context of Cold War.

Conditioned with some factors Lebanon among the Arab States became the fccble ring where there were collided the Great States' and their regional allies' interests. Camp David's process found its possible continuation in Lebanon. In 1983 under the patronage of USA it was signed the Lebanese-Israeli Peace Treaty which was precise progress for its time but it didn't assist to the establishment of final peace between Lebanon and Israel. The Treaty not only didn't stabilize the situation in Lebanon but also more deepenned the interlebanese contradictions. The regional and not regional military forces' presence in Lebanon led to the activization of foundamental disposals and armed resistance as the result of which the Lebanese-Israeli Peace Treaty has been denounced and the Israeli forces (except the Security zone) as well as the Multinational forces already in 1984-1985 had to be put out of Lebanon.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Л. Вольнов, Ливан: эхо агрессии, Москва, 1984, с. 8.
2. The Times, Guide to the Middle East: The Arab World and Its Neighbours, ed. By Peter Sluglctt and Marion Farouk-Sluglett, Times Books, London, 1991, pp. 149-152, Charles D. Smith, Palestine and the Arab-Israeli Conflict, San Diego State University, 1990, pp. 263-264.
3. Палестинская проблема, Док. ООН, международных организаций и конференций, Москва, 1984, с. 112.
4. Dilip Hiro, The Essential Middle East: A Comprehensive Guide, New York, 2003, p. 237.
5. Sccurity in the Middle East: Regional Change and Great Power Strategies, ed.by Samuel F. Wells, Jr. and Mark A. Bruzonsky, London, 1991, p. 340.
6. Новейшая история Арабских стран Азии, Москва, 1988, с. 145-146.
7. Լիբանանյան աջ ուժերի կորիզը կազմում էին «Լիբանանյան փաղանգներ» («Հիզբ ալ-քաթաիբ ալ-լուբնանի») և «Ազգային լիբերալ» («Հիզբ ալ-կառումի ալ-ահրար») կուսակցությունները:
8. Dilip Hiro, The Essential Middle East: A Comprehensive Guide, p. 238.
9. Գոռ Գևորգյան, 1982թ. իսրայելյան ագրեսիան Լիբանանում և Եգիպտոսի դիրքորոշումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h. XXIII, Երևան, 2004, էջ 60:
10. "Civil War in Lebanon", The Bureau of Public Affairs, U.S. Depaetment of State, p. 325.
11. А. Агарышев, От Кэмпт-Дэвида к трагедии Лавана, Москва, 1986, с. 133.
12. Elizabeth Picard, Lebanon. A Shattered Country: Miths and Realities of the War in Lebanon, New York, London, 1993, p. 127.
13. Dilip Hiro, The Essential Middle East: A Comprehensive Guide, p. 238.
14. Բաշիր Ժմայելի սպանության վերաբերյալ կան երկու հակադիր կարծիքներ: Որոշ հետազոտողներ գտնում են, որ Ժմայելի սպանության ետևում կանգնած էր Սիրիան: Մասնավորապես՝ փաստարկվում է, որ Ժմայելը սերտ կապեր էր հաստատել և ակտիվորեն համագործակցում էր Իսրայելի հետ Լիբանանից պաղեստինյան զինված խմբավորումների և սիրիական զորամիավորումների դուրս բերման գործում: Բաշիր Ժմայելը բազմիցս հայտարարում էր, որ նախագահ ընտրվելու դեպքում պատրաստ էր խաղաղության համաձայնագիր կնքել Իսրայելի հետ՝ հաշվի առնելով վերջինիս պահանջները: Բնական է, որ այս ամենը չէր բխում Սիրիայի շահերից, որի հետ Ժմայելը խուսափում էր համագործակցության եզրեր գտնել: Մյուս տեսակետի համաձայն, Բաշիր Ժմայելի սպանությունը կազմակերպել էր Իսրայելը: Սերտորեն համագործակցելով Իսրայելի հետ և խոստանալով, որ ամեն կերպ կնպաստի Լիբանանից պաղեստինյան զինված խմբավորումների և սիրիական զորամիավորումների դուրս բերմանը, Բաշիր Ժմայելը նախագահ ընտրվելու նպատակով ստիպված էր հրաժարվել Իսրայելին տված իր որոշ խոստումներից և զիջումների գնալ ու համագործակցել լիբանանյան ձախ ուժերի հետ, որոնք սերտ կապեր էին պահպանում պաղեստինցի մարտիկների և Լիբանանում տեղակայված սիրիական զորամիավորումներ հետ: Նախա-

գահ ընտրվելու համար Բաշիր Ժմայելին անհրաժեշտ էր նաև ձախ ուժերի աջակցությունը: Նա չէր կարող լինել միայն լիբանանյան աջերի նախագահը: Այդ էր պատճառը, որ Ժմայելը հարկադրված էր հրաժարվել Իսրայելին տված իր որոշ խոստումներից, որի համար էլ ստիպված եղավ վճարել իր կյանքով: Սակայն, Բաշիր Ժմայելի սպանության վերաբերյալ առկա տեսակետներից և ոչ մեկը մինչև օրս էլ դեռևս հաստատված չէ: Այս մասին մանրամասն տե՛ս Thomas L. Friedman. From Beirut to Jerusalem. Anchor Book. USA, 1995, pp. 157-158. Tracy Chamoun, Au Nom du Père, France. 1992. p. 76.

15. Ariel Sharon with David Chanoff, Warrior: The Autobiography of Ariel Sharon, New York, London, Toronto, Sydney, Tokyo, Singapore, 1990, p. 500-502.
16. Այս մասին մանրամասն տես В. И. Киселев, Палестинская поблема в международных отношениях: региональный аспект, М., 1988, с. 184, Е. Дмитриев, Палестинская трагедия, М., 1985, с. 107, Shi'is and Social Protest, ed. by Juan R. Cole and Nikki R. Keddie, London, 1986, p. 147.
17. 1982թ. Լիբանան իսրայելական ներխուժման արդյունքում զոհվեց տարբեր տվյալներով 15.700-ից 30.000 մարդ, այդ թվում նաև 1.110 պաղեստինցի մարտիկներ և 1.350 սիրիացի զինվորներ, վիրավորվեց մոտ 30.000 մարդ: Իսրայելական կողմում զոհերի թիվը տարբեր տվյալներով կազմում էր 350-ից 500 մարդ: Ռազմական կորուստները հետևյալն էին. Սիրիա՝ 92 կործանիչ, 42 տանկ, ՊԱԿ՝ 20 տանկ, Իսրայել՝ 2 կործանիչ, 2 տանկ: Մանրամասն տե՛ս Dilip Hiro, The Essential Middle East: A Comprehensive Guide, p. 238. Իսրայելական երկրորդ ներխուժման հետևանքով Լիբանանին պատճառած տնտեսական վնասը մասնագետների կարծիքով հավասար էր գրեթե 2 մլրդ դոլարի: Մանրամասն տե՛ս Новейшая история Арабских стран Азии, с. 148.
18. «Ամալ» շարժման և «Հիզբալլահ» կուսակցության մասին մանրամասն տե՛ս Augustus Richard Norton, Shi'ism and Social Protest in Lebanon, London, 1986, pp. 156-178, Helena Cobban, "The Growth of Shi'i Power in Lebanon and Its Implication for the Future", Shi'ism and Social Protest, ed. by Juan R. Cole and Nikki R. Keddie, London, 1986, pp. 137-155.
19. N. Kliot, The Territorial Disintegration of a State: The Case of Lebanon, Center for Middle Eastern and Islamic Studies, England, 1986, p. 30.
20. Новейшая история Арабских стран Азии, с. 149.
21. Elizabeth Picard, Lebanon a Shattered Country: Myths and Realities of the Wars in Lebanon, New York, London, 1993, pp. 126-127.
22. Helena Cobban, The Making of the Modern Lebanon, London, 1985, pp. 229-230.
23. Լիբանանի հարավի բանակի մասին մանրամասն տե՛ս "Civil War in Lebanon", The Bureau of Public Affairs, U.S. Department of State, p. 323, Walid Khalidi, Conflict and Violence in Lebanon: Confrontation in the Middle East, Cambridge, 1979, p. 128.
24. Elizabeth Picard, Lebanon a Shattered Country: Myths and Realities of the Wars in Lebanon, p. 127.
25. The Text of Lebanese-Israeli (Putative) Peace Treaty տե՛ս Dilip Hiro, The Essential Middle East: A Comprehensive Guide, p. 302-303.

26. The Text of Lebanese-Israeli Peace Treaty տե՛ս նաև http://www.monde-diplomatique.fr/cahicr/proche-orient/region-liban
27. Նույն տեղում:
28. Ե. Պրիմակով, Մի դավադրության պատմություն, Երևան, 1987, էջ 361:
29. G. Helmick, "Internal Lebanese Politics: The Lebanese Front and Forces", London, 1988, pp. 306-323, Toward a Viable Lebanon, ed. by Halim Barakat, Croom Helm & Washington Center for Contemporary Arab Studies, London, 1988, p. 317.
30. Livia Rokach, Israel's Sacred Terrorism, Association of Arab-American University Graduates, 1986, pp. 24-30.
31. Dilip Hiro, The Essential Middle East: A Comprehensive Guide, p. 299.
32. Նույն տեղում:
33. Մակֆարլեյնը փոխարինել էր Ֆիլիպ Հաբիբին, որի հետ սիրիացիները հրաժարվել էին բանակցել դեռևս 1983թ. հունիսին:
34. Shi'is and Social Protest, ed. by Juan R. Cole and Nikki R. Keddie, p. 151.
35. Elizabeth Picard, Lebanon a Shattered Country: Myths and Realities of the Wars in Lebanon, p. 128.
36. Augustus R. Norton, External Intervention and the Politics of Lebanon, Washington, D. C.: Washington Institute for Values in Public Policy, pp. 12-13.
37. Новейшая история Арабских стран Азии, с. 152.
38. Նույն տեղում:
39. Helena Cobban, "The Growth of Shi'i Power in Lebanon and Its Implication for the Future", Shi'ism and Social Protest, p. 151.
40. Նույն տեղում:
41. Augustus R. Norton, External Intervention and the Politics of Lebanon, pp. 12-13.
42. Chaim Herzog, The Arab-Israeli Wars: War and Peace in the Middle East, New York, 1989, p. 351.
43. Tracy Chamoun, Au Nom du Pere, Paris, p. 121.
44. Elizabeth Picard, Lebanon a Shattered Country: Myths and Realities of the Wars in Lebanon, p. 128.
45. Е. М. Примаков, История одного зговора (Ближневосточная политика США в 70-е-начале 80-х годов), Москва, 1985, с. 305.
46. Новейшая история Арабских стран Азии, с. 153.
47. Helena Cobban, "The Growth of Shi'i Power in Lebanon and Its Implication for the Future", Shi'ism and Social Protest, p. 151-152.
48. С.М. Гасратян, Ю. В. Агавельян, "Отнашения Израиля с Ливаном-религиозно-политические проблемы", Востоковедный сборник, Выпуск 11, Институт изучения Израиля и Ближнего Востока, Москва, 2001, с. 88.
49. Նույն տեղում:
50. 1985թ. հունիսի 6-ին լքելով Լիբանանի մեծ մասը՝ իսրայելցիներն իրենց հետ տարան 1000 լիբանանցի գերիներ, որոնք հիմնականում շիա մարտիկներ էին: Ի պատասխան շիա ծայրահեղականները գրավեցին ամերիկյան մի ավիաընկերության «Բոինգ 727» ինքնաթիռը, որ Աթենքից մեկնում էր Հռոմ և ստիպեցին օդաչուին վայրէջք կատարել Բեյրութի օդանավակայանում՝ գերիների ազատ արձակումը պայմանավորելով Իսրայելում բանտարկված շիաների

ազատ արձակմամբ: Սակայն ամերիկյան և իսրայելական իշխանությունները կտրականապես հրաժարվեցին բանակցել ահաբեկիչների հետ: Նման պայմաններում վերջինների հետ բանակցությունները իր վրա վերցրեց «Ամալ» շարժման ղեկավար Նաբիհ Բերրին: Հունիսի վերջին համապատասխան պայմանավորվածություններ ձեռք բերվեցին գերիների և Իսրայելում բանտարկված շիա մարտիկների ազատ արձակման ուղղությամբ: Այս մասին մանրամասն տե՛ս Питер Кальвокоресси, Мировая политика после 1945 года, Т. 1, Москва, 2000. с. 515.

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ՀՐԱՀՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերի 915թ. ցեղասպանությունը, հրեաների հոլոկոստը երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, և նրանց հաջորդած ցեղասպանություններն ու ցեղասպանությունների փորձերը մի շարք երկրներում, վկայում են այն մասին, որ ցեղասպանությունը տեղի չի ունենում վակուումի մեջ՝ մեկուսացված ներքին և արտաքին իրողություններից: Նրանք իրագործվում են տարբեր կոմպոնենտներից կազմված քաղաքական մի համակարգում, որի մեջ իր բացառիկ դերն ունի երրորդ կողմի հարցը:

Յուրաքանչյուր ցեղասպանություն առաջին հայացքից նախ և առաջ ընկալվում է որպես զուտ երկու կողմերի՝դահճի և նրա զոհի միջև կատարվող պրոցես: Սակայն դա միայն առաջին հայացքից: Իրականում դրան միշտ ներկա է երրորդ կողմը: Երրորդ կողմի դերի բացահայտումն ունի կարևոր նշանակություն, քանի որ նա օգնում է ավելի ամբողջական պատկերացում կազմել մի այնպիսի բարդ երևույթի, նրա դրդապատճառների և իրագործման մեխանիզմների մասին, որի անունն է ցեղասպանություն:

Երրորդ կողմը ներկա է ցեղասպանության բոլոր երեք փուլերում՝ նախապատրաստական, բուն ցեղասպանության իրագործման և եռցեղասպանության: Եվ այդ բոլոր երեք փուլերում երրորդ կողմը կարող է կատարել երեք ֆունկցիա, առաջին՝ կանխարգելիչ, երկրորդ՝ հրահրիչ, և, երրորդ՝ զբաղել չեզոք և կողմնակի դիտորդի դիրք: Այս վերջինը՝ կողմնակի դիտորդի դերը, կարելի է ասել, որ նույնպես վտանգավոր է, քանի որ նա իր անտարբերությամբ և չեզոք դիրքով, կամա թե ակամա , կարող է խրախուսել դահճին իրականացնելու իր ոճրագործական մտահղացումները:

Ասվածը հավասարապես վերաբերում է նաև հայերի 1915թ ցեղասպանությանը Օսմանյան կայսրությունում, որն այսօր ցեղասպանագիտության մեջ ընկալվում է որպես ցեղասպան պետություն, իսկ հայերի ցեղասպանությունը՝ Այսեղնոցիդը, որպես ամենագենոցիդային գենոցիդ:

Երրորդ կողմի հարցը դրսևորվում է երեք մակարդակներով՝ տեղական, միջպետական և միջազգային:

Առաջին՝ տեղական մակարդակ:

Հայոց ցեղասպանության դեպքում մեկ կողմը դահիճն է՝ օսմանյան պետությունը, սուլթանական-երիտթուրքական իշխանությունը, իսկ մյուս կողմը՝զոհը, հայությունը, իր բնօրրանում ապրող բնիկ հայ ժողովուրդը: Եկվոր նվաճող թուրքերն իրագործեցին հայության ֆիզիկական վերացումը նրա բուն հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, նրա բոլոր վեց վիլայաթներում՝ Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի, Սվասի. Վանի և Դիյարբաքրի նահանգներում, և Օսմանյան կայսրության բոլոր հայաբնակ վայրերում, ներառյալ մայրաքաղաք Ստամբուլը:

Այս պարագայում Օսմանյան կայսրությունում չկար որևէ երրորդ ուժ, որը կարող լիներ կանխել հայերի ցեղասպանությունը կամ թեկուզ նման մի փորձ կատարեր: Դա բացատրվում է օսմանյան հասարակության առանձնահատկությամբ, այն պարագայով, որ այդ հասարակությունն այսօր որակվում է որպես ցեղասպան հասարակություն:

Դա ունի իր բացատրությունը: Օսմանյան կայսրությունը դիկտատորական, բռնատիրական, ռազմաֆեոդալական կայսրություն էր, խարսխված կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների, ռայաներ համարվող ասորիների, արաբների, բուլղարների, հայերի, հույների, մակեդոնացիների, սերբերի և այլ ժողովուրդների հալածանքների, մարդկային իրավունքների ոտնահարման և զանգվածային ջարդերի ու կոտորածների քաղաքականության վրա: Այդ ժողովուրդների պարբերական ջարդերը դարձել էին սովորական երևույթ Օսմանյան կայսրության ներքաղաքական կյանքում, որոնք թուրքերին ոչ միայն անտարբեր էին դարձրել նման երևույթների նկատմամբ, այլև վարժեցրել էին դրանց: Օսմանյան հասարակության ներսում ձևավորվել էր մի խավ, որը մասնագիտացել էր ոչ թուրք ժողովուրդներին սպանելու, կոտորելու, նրանց ունեցվածքը թալանելու և բռնագրավելու մեջ, դա դարձել էր մի յուրատեսակ պրոֆեսիա, որը տվյալ խավին ապահովում էր նյութական բարեկեցություն և որոշակի դիրք հասարակությունում:

Բայց եթե Օսմանյան կայսրությունում չկար հայերի ցեղասպանությունը կանխող երրորդ ուժ, ապա կար երրորդ՝ հրահրիչ ֆունկցիա իրականացնող կողմ՝ ի դեմս քրդերի և չերքեզների: Սակայն նրանք միայն հրահրիչ կողմ չէին հանդիսանում, այլ հայոց ցեղասպանության ամենագործունյա մասնակիցներ: Դրա հետևանքով ստեղծվել էր հայերի ցեղասպանությունն իրականացնող եռանկյունի՝ կազմված քրդերից, չերքեզներից և թուրքերից՝ այս վերջիններիս գլխավորությամբ:

Հայոց ցեղասպանությունը տարածքային առումով պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի: Առաջին փուլն իրականացվեց կայսրության փոքրասիական մասում՝ Արևմտյան Հայաստանում և Ա-

նատոլիայի տարածքներում: Երկրորդ փուլը բռնի տեղահանման ձևով իրականացվեց բուն Փոքր Ասիայի աշխարհագրական սահմաններից դուրս, Օսմանյան կայսրության արաբական տարածքներում: Հայերի ցեղասպանության երիտթուրքական ծրագրի համաձայն հայերին ֆիզիկապես վերացնելու ծրագիրն իրագործվում էր նաև հայերի արաբական անապատներ բռնի տեղահանման միջոցով: Երիտթուրքերի ոճրագործ պարագլուխները հույս ունեին, որ անպաշտպան հայ կանայք, երեխաները, հիվանդները և ծերունիները կուլ կգնան արաբական չիկացած անապատներին և որպես քրիստոնյաներ կոչնչացվեն արաբ մուսուլմանների կողմից: Նրանք հույս ունեին օգտագործել մուսուլմանական կրոնի համերաշխության գործոնը: Բայց չարաչար սխալվեցին իրենց հաշիվներում: Արաբական տարածքներում՝ Սիրիայում, Իրաքում, ապա նաև Լիբանանում, Պաղեստինում և Եգիպտոսում արաբ բնակչությունը, նրա կրոնական-հոգևոր և ազգային առաջնորդները ոչ միայն գործիք չդարձան երիտթուրքերի ձեռքում և չվերածվեցին հայերի ցեղասպանության հրահրիչ երրորդ կողմ, այլև, ընդհակառակը, դարձան հայերի ցեղասպանությունը կանխող կողմ: Բարեբախտաբար մնացել են բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են արաբների ազնիվ և հումանիստական դիրքորոշման մասին՝ հանդեպ հայ գաղթականները, որոնք անցնում էին Դեյր ազ-Զորով, Հալեպով, Սեսքենով, Միսուլով, Բաքուբայով Նահր ալ-Ումարով, արաբական բնակավայրերով, գյուղերով ու քաղաքներով: Տեղական շատ կառավարիչներ հրաժարվում էին կատարել երիտթուրքական դահիճներ Թալեաթի և Էնվերի հրամանները իրենց տարածքներով անցնող հայերից ոչ ոքի, անգամ նորածին մանուկներին, չխնայել և մինչև վերջ կատարել Ջամիյաթի՝ այսինքն երիտթուրքական "Միություն և առաջադիմություն" կուսակցության կենտրոնական կոմիտեի որոշումները հայերին վերացնելու մասին: Դրա համար, իրենց մարդկային վեհ կեցվածքի համար, բազմաթիվ արաբ տեղական կառավարիչներ ոչ միայն հեռացվել են իրենց զրաված պաշտոններից, այլև վարձահատույց եղել իրենց կյանքով՝ սպանվել թուրքական զինվորների կողմից:

Արաբների՝ հայերի ցեղասպանությունը կանխող կողմ լինելն ավելի ցայտուն կերպով արտահայտվում է այդ ժամանակ մուսուլմանական աշխարհի թերևս ամենահեղինակավոր կրոնական ղեկավարի՝ Հիջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալի ալ- Հաշիմիի դիքորոշումով: Նա հրապարակայնորեն իր ֆետվայով և մուսուլմանական աշխարհի հոգևոր առաջնորդներին ուղղված երկու նամակներով անարգանքի սյունին գամեց Օսմանյան կայսրության ամբողջ ղեկավարությանը, գտնելով, որ նա իր ներքին քաղաքականությամբ, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում սուսբների ու հայերի նկատմամբ կիրառած ոճրագործություննե-

րի պատճառով, խայտառակել է իրեն, և խզել կապերը իսլամի. սուրբ Կորանի ու ուղղավառ տոննայի հետ:

Հուսեյն իբն Ալին հրահանգեց իր որդուն՝ Ֆեսալին և օսմանյան տիրապետության դեմ 1916թ. սկսված արաբական ապստամբության մյուս ղեկավարներին, ամենալայն աջակցությունը ցույց տալ հայերին և "պաշտպանել նրանց այնպես, ինչպես դուք պաշտպանում եք ձեր անձը. ձեր երեխաներին և ձեր ունեցվածքը, որովհետև նրանք մուսուլմանների զիմիներն են":"

Զիմին կամ "ահլ ալ-զիմա" հասկացալությունը, հատուկ տեղ է գրավում իսլամի մեջ: Զիմիները որպես "գրքի մարդիկ", "ահլ ալ-քիթաբ", ունեին իրենց սուրբ գիրքը և համարվում էին մուսուլմանների կողմից հովանավորվողներ, որոնց թույլատրվում է պահպանել և դավանել իրենց կրոնը, և երաշխավորվում նրանց կյանքը, ազատությունը և գույքի անձեռնամխելիությունը: Իսլամը որպես "գրքի մարդիկ" էր ճանաչում, հուդայականներին, զրադաշտականներին և քրիստոնյաներին, այդ թվում և հայերին: Այդ հանգամանքը նկատի ուներ Հուսեյն իբն Ալին. երբ նշում էր, որ հայերը մուսուլմանների զիմին են, և դատապարտում օսմանյան կառավարությանը հայերին կոտորելու և դրանով իսլամի այդ հիմնաբար սկզբունքներից մեկը ոտնահարելու համար:

Արաբներին, որպես երրորդ կողմ, հաջողվեց կանխել իրենց տարածքներում հայերի զգալի մասի ցեղասպանությունը: Շնորհիվ դրա. մահվան ճիրաններից փրկվեցին հարյուր հազարավոր հայ գաղթականներ, որոնք դրեցին ժամանակակից հայ սփյուռքի հիմքը: Երախտագետ հայ ժողովուրդը բարձր է գնահատում արաբ ժողովրդի ազնիվ և հումանիստական այդ անմոռանալի դիքորոշումը:

Երկրորդ՝ միջպետական մակարդակ:

Այս մոդելը մեծ հեռանկար և ներուժ ուներ ցեղասպանության նախապատրաստական փուլում: Սակայն ժամանակի եվրոպական մեծ տերությունները, այսպես կոչված "եվրոպական կոնցերտի" անդամները՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը և Ավստրո-Հունգարիան, բարձրության վրա չգտնվեցին և չօգտագործեցին հայերի հնարավոր ցեղասպանությունը կանխելու իրենց պատմական առաքելությունը: Նրանք 1894-1896թթ. և 1909թ. հայերի կոտորածների ժամանակ, որոնք հայերի ցեղասպանության նախերգանքն էին, սահմանափակվեցին միայն Բարձր Դռանը նոտաներ հղելով, իսկ հայերին կարեկցանք արտահայտելով, չցանկանալով Օսմանյան կառավարությանը հարկադրել հայկական վիլայաթներում բարեփոխումներ իրականացնելու խոստումները: Արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ II-ը, իսկ այնուհետև երիտթուրքական ղեկավարները, շատ լավ կռահեցին, որ եվրոպական տերությունները հայերին հրապարակայնորեն կարեկցանք արտահայտելուց այն կողմ չեն անցնի և չեն դիմի գործնական քայլերի, և վարպե-

տորեն օգտվեցին նրանց յուրատեսակ պասիվությունից իրենց հակահայկական ծրագրերն իրականացնելու համար:

Իսկ առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց հետո, երբ "եվրոպական կոնցերտը" քայքայվեց և եվրոպական պետությունները հայտնվեցին հակադիր և թշնամական ռազմաքաղաքական բլոկներում, ապա այդ պետությունների կանխարգելիչ ֆունկցիան իջավ նվազագույնի: Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, որոնք պատերազմում էին գերմանա-ավստրիա-թուրքական բլոկի դեմ, գործնականում այլևս չէին կարող դառնալ ցեղասպանությունը կանխող կողմ: Թեև ցեղասպանությունն ինչ-որ ձևով կանխելու փորձ նրանք, այնուամենայնիվ, կատարեցին: Խոսքը 1915թ. մայիսի 13-ի անգլո-ֆրանս-ռուսական համատեղ հայտարարության մասին է, որը նույն օրը միաժամանակ հրապարակվեց Լոնդոնում, Փարիզում և Պետերբուրգում, որտեղ ասվում էր, որ ամբողջ Հայաստանում տեղի են ունենում հայկական ջարդեր թուրքերի և քրդերի կողմից, ձերբակալվում են հայ խաղաղ մարդիկ, ավերվում և կողոպտվում են հայկական գյուղերը: "Հաշվի առնելով այս նոր ոճրագործությունները, որ կատարվում են Թուրքիայում ընդդեմ մարդկության և քաղաքակրթության, - ասվում էր այդ հայտարարության մեջ, - Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարությունները սրանով հրապարակայնորեն տեղյակ են պահում Բարձր Դռանը, որ այս բոլոր ոճրագործությունների պատասխանատվությունը նրանք դնում են Թուրքիայի կառավարության բոլոր անդամների վրա, ինչպես նաև նրա տեղական այն բոլոր ներկայացուցիչների վրա, որոնք մասնակցել են այդ կոտորածներին": Այս վերին աստիճանի կարևոր փաստաթուղթը մի հուսահատ և ուշացած փորձ էր կանխելու հայերի ցեղասպանության հետագա շարունակումը, որը, ցավոք սրտի, հնարավոր չեղավ: Սակայն այդ եռյակ հայտարարությունն ունի պատմական կարևոր նշանակություն այն առումով, որ առաջին անգամ էթնիկական զտումների և կոտորածների համար պատասխանատու էր համարվում ցեղասպանություն իրականացնող երկրի կառավարությունը՝ նրա բոլոր անդամներով հանդերձ, մի կողմից, և հայերի կոտորածները հռչակվում էին որպես ոճիր թուրքական կառավարության կողմից ընդդեմ մարդկության և քաղաքակրթության:

Հայերի ցեղասպանության ժամանակ կար միայն մի պետություն, որը կարող էր կանխող կողմ դառնալ: Դա Օսմանյան կայսրության գլխավոր դաշնակից կայզերական Գերմանիան էր, որից լիակատար ռազմական, տնտեսական և քաղաքական կախման մեջ էր գտնվում Թուրքիան: Նման դերակատարում կարող էր ստանձնել նաև Ավստրո-Հունգարական միապետությունը՝ դաշնակցելով կայզերական Գերմանիայի հետ: Սակայն Գերմանիան ընտրեց այլ դերակատարում: Կայզերական Գերմանիան ոչ միայն չվարձեց կանխել հայերի ցեղասպանութ-

յունը և դառնալ կանխող կողմ, այլ ելնելով իր իմպերիալիստական շահերից, ընդհակառակը, վերածվեց հրահրիչ կողմի: Դրանով իսկ կայզեր Վիլհելմ II –ը, գերմանական կառավարությունը և գլխավոր շտաբը ստորագրեցին հայերի դեմ իրագործված իրենց հանցանքի տակ: Հայերի ցեղասպանության գործում Գերմանիան, ինչպես նաև Ավստրո-Հունգարիան, Թուրքիայի հետ միասին ունեն իրենց մեղքի բաժինը: Ուստի կարծում ենք, որ միանգամայն տրամաբանական կլինի, եթե նրանք ոչ թե փորձեն Թուրքիայի հետ միասին հերքել հայերի ցեղասպանությունը, այլ ընդունեն այդ անհերքելի պատմական իրողությունը, և Թուրքիայի վարչապետ Էրդողանն ու Գերմանիայի կանցլեր Շրոյդերը, որպես նախկին դաշնակից երկրների իրավահաջորդներ, ձեռք-ձեռքի տված գան սուրբ Էջմիածին, և ծունր դնելով, ներողություն հայցեն հայ ժողովրդից:

Երրորդ՝ միջազգային մակարդակ:

Այս մոդելն ուղղակիորեն առնչվում է ցեղասպանության կանխման միջազգային մեխանիզմների առկայության և նրանց ունակության հետ, և այդ իմաստով վերին աստիճանի կարևոր դերակատարում ունի: Նրա առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նա հավասարապես կիրառելի է ցեղասպանության բոլոր երեք փուլերի ընթացքում: Ցավոք սրտի, հայերի ցեղասպանության դեպքում նման միջազգային մեխանիզմ գոյություն չուներ: Ուստի ավելի հնարավոր էր այդ մոդելը կիրառել ցեղասպանության երրորդ փուլում, որը մենք անվանեցինք ետցեղասպանության փուլ: Սկզբում դա դրսևորվեց որպես առանձին պետությունների նախաձեռնություն: 1917թ. դեկտեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն ընդունեց Դեկրետ “Թուրքահայաստանի մասին”, որտեղ ասված էր, որ “Ռուսաստանի… կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված “Թուրքահայաստանի” հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն”: Սակայն նրանում չէին նախատեսված այդ դեկրետի իրականացման իրական ուղիները և նա մնաց թղթի վրա: Նույնպիսի ճակատագիր ունեցավ նաև ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի ներկայացրած նախագիծը և դրա հիման վրա 1920թ. օգոստոսի 10-ին Սևրում ստորագրված պայմանագիրը, որով նախատեսվում էր Արևմտյան Հայաստանի տարածքի մի մասը դնել հայերի տրամադրության տակ, միավորել այն Հայաստանի անկախ Հանրապետության հետ, ապահովել հայ գաղթականների վերադարձը: Սևրի պայմանագրով Թուրքիան ճանաչում էր Հայաստանի անկախությունը՝ Վուդրո Վիլսոնի կողմից առաջարկված և Սևրի պայմանագրով հաստատված սահմաններով: Սակայն այս պայմանագիրը նույնպես չիրականացվեց: Իսկ Ազգերի լիգան, որպես առաջին համապարփակ միջազգային կազմակերպություն, ինչպես բազմաթիվ այլ խնդիրների, այնպես էլ այս դեպքում,

չկատարեց իր առաքելությունը: Նա անգամ չփորձեց դնել հայոց ցեղասպանության դատապարաման և նրա կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելու հարցը: Այսինքն նա հանդես չեկավ, թեկուզ պոստ ֆակտում, որպես ցեղապանությունը կանխող կողմ:

Հայոց ցեղասպանությունը չի դատապարտվել մինչև օրս, այդ թվում և ՄԱԿ-ի կողմից: Մենք կիսում ենք այն մասնագետների տեսակետը, ովքեր գտնում են, որ ի տարբերություն հրեական հոլոկոստի, "Հայոց ցեղասպանությունը չունեցավ իր Նյուրնբերգը":

Հայերի ցեղասպանության 90-ամյա տաբելիցի նշումն ինքնանպատակ չէ: Կարծում ենք, որ նրանից, ինչպես նաև նրան հաջորդած մյուս ցեղասպանություններից, պետք է անհրաժեշտ դասեր քաղել, մանավանդ մեր օրերում, երբ մի կողմից աճում է ցեղասպանությունների կամ դրանց փորձերի թիվը, իսկ մյուս կողմից գոյություն ունեն ավելի կատարյալ միջազգային մեխանիզմներ, որի հիմքը Միավորված ազգերի կազմակերպությունը և նրա հռչակած հումանիստական սկզբունքներն են, ավելի մշակված տեսություն ցեղասպանության վերաբերյալ, որպիսին ցեղասպանագիտությունն է, և միանգամայն այլ մտածելակերպ, որի հիմքում ընկած են, գոնե ձևականորեն, եվրոպական արժեքները:

Ուստի առաջարկում ենք, առաջին, ՄԱԿ-ի հովանու ներքո ստեղծել ցեղասպանությունը կանխող միջազգային զինված ուժեր, որոնց պետք է օգտագործել միայն ու միայն ցեղասպանությունը և նման վարձերը կանխելու նպատակով: Դրանք չպետք է շփոթել ՄԱԿ-ի այլ, այսպես կոչված խաղաղարար ուժերի հետ: Երկրորդ, մշակել ցեղասպանություն կիրառող պետության նկատմամբ քաղաքական, տնտեսական և ռազմական ամենալուրջ և ամենակոշտ սանկցիաների ընդունումը, ընդհուպ մինչև այդ երկրի ժամանակավորապես օկուպացումը ՄԱԿ-ի հակացեղասպանական զինված ուժերի կողմից, և ՄԱԿ-ին այդ երկրի անդամակցության դադարեցումը: Երրորդ, պատասխանատվության ենթարկել ոչ միայն ցեղասպանություն իրականացնող պետության պատասխանատուներին, այլև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բոլոր հինգ մշտական և ոչ մշտական անդամ պետությունների ղեկավարներին, ցեղասպանության կանխումը ձախողելու համար: Չորրորդ, համապատասխան փոփոխություններ կատարել ՄԱԿ-ի կանոնադրության մեջ:

Սակայն բոլոր դեպքերում, արդյունավետության տեսակետից, կարևոր է շեշտը դնել ցեղասպանությունները կանխելու վրա, որովհետև հետո միշտ էլ ուշ է լինում, որի գինը միլիոնավոր մարդկանց կյանքն է:

Վկա՝ 1915թ. հայերի ցեղասպանությունը:

NIKOLAY HOVHANNISYAN

THIRD PARTY INVOLVEMENT IN PREVENTION AND PERPETRATION : THE ARMENIAN CASE

The genocide of Armenians in 1915, the Holocaust of Jews in World War II. genocides and attempts of genocides that followed them at different times in several countries, evidence that genocide does not happen in a vacuum. isolated from internal and external realities. It is committing within a complex political system in which exceptional is the role of a third party.

Any genocide is first of all perceived as a process. which involvcs just two sides- the executioner and the victim. This, however. is only at the first glance. In reality, a third party is always there. So it is important to identify the role of the said third party.

A third party is present at all three phases of genocide- preparation. execution or perpetration of genocide proper, and the post-genocidal phase. At all these phases, the third party may perform three functions, such as: preventing. perpetrating. and neutral, that of an outside observer.

All said is true for the Armenian Genocide of 1915 in Ottoman Empire. which having been defined by genocidology as a genocidal state. while the Armenian Genocide, or Armenocide-as the most genocidal genocide.

The issue of the third party is viewed at three levels: local, intergovernmental and international.

First- the local level.

In the case of the Armenian Genocide one party is the executor - the Ottoman state, the other party is its victims-Armenians. The Turkish new-comers-conqucrors executed the physical extermination of Armenians in the latter's own country- in Western Armenia.

In the Ottoman Empire there was no third party, able to prevent the Genocide of Armenians.This has its own explanation. The Ottoman Empire was a despotic state, anchored on the policy of violation of human rights and massacres of all non-Turkish peoples, looked upon as rayyas: Arabs, Armenians, Assyrians, Bulgarians, Greeks, Macedonians, Serbs and others, which recurrent carnages –a common occurrence in the Ottoman Empire's internal life-made the Turkish people not only indifferent, but accustomed to them.

Yet there was a third party in the Ottoman Empire to perform the perpetrating functions. It was consists of Kurds and Circassians, who were just not perpetrators, but the most active partakers of the Armenian Genocide.Thus, to accomplish the Genocide of Armenians, a triangle was formed of Kurds, Circassians and Turks, headed by the latter.

The Young Turks leaders tried to use as a third party also the Arabs, when the Armenians were deported and the caravans of Armenian refugees appeared in the Arab countries. They believed that the Muslim Arabs will join them in their criminal actions against the Armenians to finalize the Armenian Genocide. Vice versa the Arabs acted as a third party, preventing the Genocide of Armenians in their countries: Syria, Iraq, Lebanon, Palestine, Jordan and Egypt. For that very reason, for their

dignified human stand, many of Arab local governors and employees were not only dismissed from their positions, but paid their lives: they were killed by Turk soldiers.

Second - the intergovernmental level.

This model had had huge prospects and potentials at the preparatory phase of the Genocide. The Great European Powers. so called "European Concert", comprising England, France, Russia, Germany and Austria-Hungary, failed to rise to the occasion and to fulfill their historical mission –to prevent the Armenian Genocide. During the World War I the "European Concert" was broke down and its members appeared in hostile military-political blocks. And in the time of the genocide there was only one state able to act as a preventing third side. It was Kaiser Germany, the key ally of the Ottoman Empire. But Germany did not make any attempts to prevent the Genocide of Armenians, to become a preventing side. Instead, proceeding of its own interests, it became a perpetrating side.

Third-the international level.

This model is directly related with the existence and potential of the international mechanisms for prevention of genocide and punishment of its organizers. Therefore its role is top importance. The specificity of it is in that it is evenly applicable for all three phases. Unfortunately, in case of the Armenian Genocide, such an international mechanism did not exist. Hence, it proves more feasible to apply the model to the third phase, which we have designated post-genocidal. At first it appeared as an initiative by individual states. We mean the Soviet Russia's decree on December 29, 1917, on "Turkish Armenia", then the draft presented by the USA president Woodrow Wilson and the Treaty of Sevres, 1920, on the base of that draft. But all those suggestions and drafts remained on paper.

As for the League of Nations, the first comprehensive international organization, created in 1920, it failed to fulfill its mission. It did not even attempt to raise the issue of condemnation of the Armenian Genocide. Hence, even post-factum it did not act as a preventive side of the Genocide.

We think that commemoration of 90th year of the Armenian Genocide is not an end in itself. We are convinced that lessons must be learned from this Genocide, and those, which followed. Proceeding of historical experience, taking into consideration new realities and permanently increasing numbers of genocides in different parts of the world, we are sure that it is necessary to undertake new and more effective actions to prevent the genocides.

Hence, we are suggesting:

Firstly, to establish under the auspices of the United Nations international anti-genocidal armed forces only and solely for prevention of genocide.

These forces should not be mistaken for the so-called peacekeeping forces of UN.

Secondly, a most serious and severe political, economic and military sanctions must be used against the country perpetrating genocide, up to temporary occupation of that country by the UN anti-genocidal military forces and termination of its membership in the UN.

Thirdly, to certain responsibility must be called not only the responsible authorities of the country perpetrating genocide, but the UN Secretary- General,

leaders of the five permanent Member States and other non-permanent Member States of the UN Security Council for failure in preventing genocide.

Fourthly, the appropriate amendments in the UN Charter be made.

Yet, in all cases, it is always more efficient to focus on the prevention of genocide, because afterwards it is always late and the cost of being late is lives of millions of innocent men.

The Armenian Genocide is the proof of it.

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ 1980-ԱԿԱՆ ԹԹ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

1982թ. Սիրիայում վարչակարգի գոյությանը սպառնացող մուսուլման-եղբայրների հակապետական ելույթները ճնշելուց հետո իրադրությունը երկրում թեև որոշակիորեն կայունացավ, սակայն մնում էր լարված հիմնականում սոցիալ-տնտեսական դժվարությունների և իշխանական վերնախավում ի հայտ եկած որոշ տարաձայնությունների հետևանքով:

1980-ականների սկզբից Սիրիայում փաստորեն տնտեսական ճգնաժամ էր, որը հատկապես սրվեց 1980-ական թթ. կեսին: 1970-ական թթ.-ին ուղղիչ շարժման հայեցակարգի ներքո տեղի ունեցած սոցիալ-տնտեսական բարեփոխումները կանգ առան, և սկսվեց լճացման ժամանակաշրջան /ֆաթրաթ առ-ռուքուդ ալ-իկթիսադիյ/: Սիրիայում ցածր էր պետական հատվածի ձեռնարկությունների արդյունավետությունը: 1980-ական թթ. սկզբներին զգալիորեն կրճատվեցին նաև հարկագանձումների չափերը մասնավոր հատվածի ձեռնարկություններից՝ 1982թ. ողբերգական իրադարձություններից հետո դրանց մի մասի փակման հետևանքով[1]: Երկրում արագորեն աճում էր առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը, որը 1982թ. 1.7 մլրդ. սիրիական լիրայի փոխարեն 1985թ. հասավ արդեն 2 մլրդ. լիրայի: Արագ տեմպերով ընկնում էր նաև դրամի հաշվարկային փոխարժեքը, իսկ 1986թ. սղաճն արդեն կազմում էր 100 տոկոս: Աճում էր նաև պետության ներքին պարտքը, որը կազմում էր 60 մլրդ. լիրա[2]: Սպասվող արդյունավետությունը չունեցան նաև Սիրիայում 1970-ական թթ. կեսերին ստեղծված և ներդրումներ ակնկալող մի քանի ազատ գոտիները, հիմնականում տարածաշրջանային լարված քաղաքական իրադրության պատճառով: Սիրիայի տնտեսությունը հնգամյա պլանային էր, որը նմանակվել էր Խորհրդային Միությունից և որի հիմքը Սիրիայում դրվել էր դեռևս 1960-ականներից, սակայն հնգամյա պլանները հիմնականում ձևական բնույթ էին կրում և ամբողջովին չէին իրագործվում: Դրանց մեջ ամենաարդյունավետը 1971-1975 թթ. պլանն էր, երբ 1970թ. նոյեմբերի 16-ին Հաֆեզ ալ-Ասադի կզրնավորած ուղղիչ շարժման հայեցակարգի ներքո երկրում իրականացվեցին արմատա-

կան բարեփոխումներ և Սիրիան դուրս եկավ խորը սոցիալ-տնտեսական ճգնաժամից: Այն առանձնանում էր բարեփոխումների նպատակաուղղվածությամբ, մասնավորապես տնտեսության ազատականացմամբ և մասնավոր հատվածի զարգացմամբ: Հինգերորդ պլանն ընդգրկում էր 1981-1985թթ., որը հենվում էր Բաասի (Արաբական վերածննդի սոցիալիստական կուսակցություն) 7-րդ համագումարի որոշումների վրա: Սակայն այդ հնգամյա պլանը կազմվել էր սպասվելիք արտաքին օգնությունների ներգրավմամբ, որը բնականաբար չէր կարող ամբողջովին իրագործվել մի շարք պատճառներով: 1980-ական թթ. սկզբից Սիրիայի տնտեսությունը բախվեց մի քանի գլխավոր խնդիրների հետ: Սոցիալ-տնտեսական դժվարությունների հիմնական պատճառներից էին 1980-ական թթ. սկզբներից նավթի գնի կտրուկ նվազումը միջազգային շուկայում և բնականաբար նավթաարդյունահանող հարուստ արաբական երկրների կողմից Սիրիային հատկացվող օգնության զգալի նվազումը: Սիրիային հատկացվող ֆինանսական օգնությունը կրճատվեց նաև այն պատճառով, որ 1980թ. սկսված իրան-իրաքյան պատերազմի ընթացքում Իրաքի պահանջով և Իրանից բխող վտանգի առկայության պայմաններում Ծոցի երկրները հսկայական ֆինանսական միջոցներ էին տրամադրում Իրաքին[3]: Սիրիան, իր հերթին, 1982թ. ապրիլին Իրանի հետ պայմանագիր կնքելով տարեկան 8.7 մլն. տ. նավթ գնելու վերաբերյալ՝ փակեց Քիրքուք-Բանիաս նավթամուղը, որով հոսում էր իրաքյան նավթը: Հավանաբար դա տեղի ունեցավ Իրանի խնդրանքով[4], որից հետո Սիրիան իրանից սկսեց ստանալ տարեկան 1 մլն. տ. նավթ օգնության կարգով, իսկ որոշ քանակություն՝ իջեցված գներով[5]:

Արտաքին օգնությունը կարևորագույն դեր էր խաղում տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման գործում: Եթե նախորդ տասնամյակի վերջին Սիրիային հատկացվող ամբողջ անհատույց ֆինանսական օգնությունը կազմում էր 1.8 մլրդ դոլար, ապա 1985թ., գնալով նվազելով, այն արդեն կազմում էր 780 մլն. դոլար (ներառյալ իրանական անվճար նավթի առաքումները), իսկ 1986թ. հասավ 550-600 մլն. դոլարի[6]: Հարկ է նշել նաև, որ նշված ժամանակաընթացքում ընկան նաև բամբակի համաշխարհային գները, որը Սիրիայի ամբողջ արտահանման ծավալի մեջ մեծ տոկոս էր կազմում և արտահանման հիմնական հոլվածներից էր: Դրա հետ մեկտեղ զգալիորեն նվազեց նաև բամբակի արտադրանքը: Եթե 1976-77թթ. այն կազմում էր 155.000 տոննա, ապա 1980-81թթ. արդեն կազմում էր 117.800 տոննա[7]: Բամբակի գների անկումը ստիպում էր գյուղացիներին փոխել իրենց զբաղվածության ուղղությունը և հողերն օգտագործել հացահատիկի և շաքարեղեգնի մշակման համար[8]: Սիրիայում կարևորագույն տնտեսական գործոն էր նաև արտասահմանում, մասնավորապես նավթաարդյունահանող արաբական երկրներում աշխատող սիրիացիների ամենամյա դրամական փոխան-

ցումները հայրենիք, որոնք նույնպես զգալիորեն նվազեցին 1980-ական թթ. կեսերին՝ կապված այդ երկրներում գործարար ակտիվության անկման և Հարավ-արևելյան Ասիայից եկած էժան աշխատուժի և սիրիացիների միջև առկա մրցակցության պատճառով: Այդ փոխանցումները 1985-86թթ. 0.5 մլրդ. դոլարից իջան 0.3 մլրդ. դոլարի՛: Արդյունքում 1980-ականների կեսերին Սիրիան չստացավ ընդհանուր առմամբ սպասվելիք մոտ 5 մլրդ. դոլարի չափով օգնություն, որի միջոցով ծածկում էր ոչ միայն բյուջեի դեֆիցիտը, այլև մարում էր արտաքին պարտքերը[10]:

1980-ական թթ. սկզբներից պետությունը փորձում էր բարելավել տնտեսական իրավիճակը նավթաարդյունահանման նոր հանքավայրերի հայտնաբերման և արագ շահագործման միջոցով: Ասադը որոշ չափով վերանայեց իր գաղափարական ուղղվածությունը տնտեսության ոլորտում և շարունակեց ավելի սերտորեն համագործակցել նաև արևմտյան երկրների և ընկերությունների հետ՝ մասնավորապես խրախուսելով ամերիկյան նավթային ընկերությունների ներդրումները երկրում, չնայած այդ գործընթացը սկսվել էր դեռևս 1970-ական թթ. կեսերից՝ Սիրիայում ազատականացմանն ուղղված բարեփոխումների և օտարերկրյա ներդրումների խրախուսման գործընթացի ժամանակ: Այդ շրջադարձն անհանգստացրեց մի շարք արաբական ղեկավարների, որոնք հայտարարում էին, թե իբր Ասադը դավաճանում է արաբների շահերը և իսլամական գաղափարները[11]: 1983թ. ամերիկյան «Pecten Syria Petroleum» ընկերությունը հնարավորություն ստացավ նավթի հետազոտական աշխատանքներ կատարել Դեյր ազ-Զորի շրջանում, որը նախկինում վարձակալել էր «Syrian-American Oil Company»-ին՝ «SAMOCO»-ն: 1979-ին Հոմս քաղաքից արևելք ընկած 14.8 հազ. կմ/ք. տարածքում հետազոտական աշխատանքներ կատարելու կոնցեսիա էր ստացել ամերիկյան «Marathon Oil» ընկերույունը[12]: Այսպիսով 1980-ական թթ. կեսերին Սիրիայում նավթի առումով ամենահեռանկարային շրջանները գտնվում էին ամերիկյան ընկերությունների տնօրինության տակ: Նշենք, որ գոյություն ունեին նաև այլ ընկերություններ, որոնք երկրում որոշ ներդրումներ կատարելով և նավթ չհայտնաբերելով, դադարեցրեցին իրենց գործունեությունը, որոնցից էին «Chalenger Desert Oil»-ը, «SAMOCO»-ն և այլն: Այդուհանդերձ 1982թ. հում նավթը դարձավ Սիրիայի արտահանման ամենակարևոր հոդվածը՝ կազմելով ամբողջ արտահանման եկամուտների 51.3%-ը, իսկ 1983թ.՝ 74.7%-ը[13]: 1983թ., օրինակ, Սիրիայում արդյունահանվեց 8.4 մլն. տ. նավթ[14]: Նավթաարդյունահանման ոլորտում այս ժամանակաշրջանի կարևոր իրադարձություններից էր 1984թ. Դեյր ազ-Զորի շրջանում «Pecten» ընկերության կողմից բարձր կարգի «տայեմ» նավթի հանքավայրի հայտնաբերումը՝ 30 մլն. տոննայից ավել գնահատված պաշարով: Նոր նավթահանքի շահագործման համար հիմնադրվեց խառն «ալ-Ֆուրաթ» ընկերությունը,

որտեղ բաժնետոմսերի 50%-ը պատկանում էր սիրիական ազգային ընկերությանը, 50%-ը՝ «Shell Oil» կոնսորցիումին[15]:

Սիրիայում սոցիալ-տնտեսական և ներքաղաքական իրադրությունը լարված էր նաև այն պատճառով, որ մուսուլման-եղբայրների ելույթները ճնշելուց հետո իշխանությունները արտոնեցին նրանց այս կամ այն կերպ սատարող կամ հարող զգալի թվով կողմնակիցներին արտագաղթել երկրից, որոնց մեջ քիչ չէին նաև տարբեր ոլորտներում բարձր որակավորում ունեցող մասնագետները, որոնց առաջարկվում էր նյութական և կազմակերպչական օգնություն արևմտյան երկրների, ինչպես նաև Ծոցի միապետական վարչակարգերի կողմից[16]: 1982թ. դեպքերից հետո բազմահազար սիրիացիներ լքեցին երկիրը[17]: Հարկ է նշել, որ սա անկախությունից ի վեր քաղաքական պատճառներով երկրորդ խոշոր արտահոսքն էր երկրից, առաջինը հիմնականում տեղի էր ունեցել 1963-1966թթ.:

Մյուս խնդիրը գոյություն ունեցող մի շարք ներքին և արտաքին քաղաքական պատճառներով բանակի, անվտանգության ծառայությունների և սպառազինությունների վրա ուղղվող հսկայական ծախսերն էին: Եթե 1970թ. սիրիական բանակի թվաքանակը կազմում էր 80 հազ., ապա 1984թ. սիրիական բանակը կազմում էր 362 հազ. այսինքն՝ երկրի ամբողջ բնակչության մոտ 3.5 տոկոսը[18]: 1985թ. այն հասավ արդեն 400-404 հազարի, իսկ ոստիկանության և ամբողջ հատուկ ծառայությունների աշխատակիցների քանակը հասավ 100 հազարի[19]: Ակնհայտ է, որ մոտ 11 մլն. բնակչություն ունեցող երկրի համար 400 հազարանոց զինված ուժեր պահելը չափազանց դժվար է և անխուսափելիորեն պետք է դժվարություններ ստեղծեր երկրի տնտեսության համար և բարդեցներ բնակչության սոցիալական դրությունը: Միայն Լիբանանում սիրիական զորքերի ներկայությունը և դրա հետ կապված ռազմական ծախսերը օրական կազմում էին 250 հազար ԱՄՆ դոլար[20]: 1982թ. արդեն ռազմական ծախսերը կազմում էին Սիրիայի բյուջեի 29.1%-ը[21]: Այդուհանդերձ հարկ է նշել, որ հսկառակ բանակի և հատուկ ծառայությունների մեծ քանակին և իշխանական վերնախավում գրեթե բոլոր պաշտոնյաների զինվորական լինելու փաստին, սիրիական վարչակարգը չէր որակվում որպես ռազմական դիկտատուրա, ինչպես նշում է Վոլկեր Պերտեսը «սիրիական վարչակարգը չի կարող դիտարկվել որպես զուտ ռազմական դիկտատուրա, այլ այն «դիկտատուրա է, որտեղ զինվորականները հանդես են գալիս ընդամենը որպես ուժի կենտրոնների առավել հզոր և առավել քիչ մասնատված դերում»[22]:

1983թ. հունիսին, ելույթ ունենալով մի խումբ կրոնական գործիչների առջև, նախագահ Ասադն ասաց. «Մենք ցանկանում ենք ապրել խաղաղության և հանգստության մեջ, ցանկանում ենք, որ պաշտպանության վրա ծախսվող հսկայական միջոցները գնան գործարանների և

դպրոցների կառուցման համար, սակայն քանի դեռ գոյություն ունի վտանգը, մենք պետք է մտածենք այն մասին՝ ինչ կարող է տեղի ունենալ վաղը: Այն պայմաններում, երբ թշնամին (Իսրայելը-Գ.Ղ.) գտնվում է Դամասկոսից ընդամենը 23-24 կմ հեռավորության վրա, Սիրիան չի կարող չհոգալ իր պաշտպանունակության մասին[23]:

1981-1985թթ. ընթացքում միայն զենքի և ռազմական տեխնիկայի ներմուծման վրա Սիրիան ծախսեց մոտ 9 մլրդ ԱՄՆ դոլար[24], ինչն իհարկե արտաքին օգնության կրճատման պայմաններում բացասական ազդեցություն էր գործում երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Փորձելով շտկել իրադրությունը Սիրիան դիմում էր արտարժույթի միջազգային հիմնադրամներին և տարբեր ֆինանսական կառույցների՝ վարկեր ստանալու նպատակով, որոնք, սակայն, գտնվելով Վաշինգտոնի ազդեցության տակ, մերժում էին՝ քաղաքական պատրվակներով[25]: Սիրիային հաջողվեց սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման համար արտոնյալ պայմաններով վարկեր ստանալ միայն որոշ առանձին կապիտալիստական երկրներից, մասնավորապես Ճապոնիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, ԳՖՀ-ից, Իսպանիայից[26]:

Զինված ուժերի և անվտանգության ծառայությունների համակարգի թվաքանակի աճի նկատմամբ Ասադի այսպիսի մեծ ուշադրությունը կարելի է բացատրել այն պատճառով, որ անհիմն չէր այն վարկածը, որ Իսրայելի հետ խաղաղության պայմանագիր չկնքելը Սիրիայում բաասական վարչակարգի և Ասադի միանձնյա իշխանության ամրապնդման գլխավոր գրավականն էր, որը հնարավորություն էր ընձեռում պահպանել գրեթե մշտական ռազմական դրությունը երկրում՝ դրանից բխող բոլոր միջոցառումներով, ինչպես նաև ռազմական ներկայության ապահովումը Լիբանանում, վերահսկողությունը որոշ պաղեստինյան խմբավորումների վրա և այլն: Իսրայելի հետ պատերազմական վիճակի մեջ գտնվելու փաստը հնարավորություն էր տալիս նաև օգնություն ստանալ Իրանից և արաբական մի շարք երկրներից, որոնք օրինակ պաշտպանում էին պայքարը նաև իսլամական ծայրահեղականների դեմ երկրի ներսում և Սիրիայի ներկայությունը Լիբանանում:

* * *

Ներքաղաքական ոլորտում Սիրիայում գլխավոր զարգացումներից մեկն այն էր, որ 1980-ական թթ. սկզբից մուսուլման-եղբայրների և միավորված իսլամական ընդդիմության՝ իսլամական ճակատի կողմից Սիրիայի քաղաքական համակարգի դեմ կազմակերպված ընդդիմության հետ մեկտեղ երբեմն նկատվում էին տարաձայնություններ իշխանության բարձրագույն օղակներում: Սիրիայում ի հայտ եկավ միջանձնային մրցակցություն և միանձնյա ընդդիմություն՝ ի դեմս նախագահ Հաֆեզ ալ-Ասադի կրտսեր եղբայր Ռիֆաաթ ալ-Ասադի, որը Բաասի

մարզային ղեկավարության անդամ էր և «սառայա ադ-դիֆա՛այի» (պաշտպանական ջոկատներ) էլիտար զորամիավորումների հրամանատարը ու զգալի դեր էր կատարել 1982թ. Հալեպում և Համայում մուսուլման-եղբայրների հակապետական ելույթները ճնշելու գործում:

1980-ական թթ. սկզբին Ասադի առողջական վիճակը բավականին վատթարացել էր, և նա տարավ մի քանի սրտի կաթված: Օգտվելով այդ վիճակից Ասադին մի քանի անգամ մարտահրավեր նետեց և իշխանությունը Սիրիայում փորձեց վերցնել նրա կրտսեր եղբայր Ռիֆաաթ ալ-Ասադը, սակայն դա նրան չհաջողվեց, և նախագահը եղբորը զրկեց իր բոլոր իրավասություններից՝ աքսորելով երկրից:

1983թ. իսլամական ընդդիմության բաց հակակառավարական ելույթները գործնականում դադարեցին և այդ ժամանակվանից վարչակարգի ներքին հակառակորդներն արդեն չէին դրսևորում նախկին ակտիվությունը, թեև դրա հետ մեկտեղ որոշ շրջանակներում, մասնավորապես բանակի, ինչպես նաև մտավորականության և ուսանողության մի մասի մոտ պահպանվում էին վարչակարգի նկատմամբ առանձին ընդդիմադիր տրամադրություններ[17]: Այդուհանդերձ նոր թափ ստացավ մրցակցությունը նախագահի և եղբոր միջև: 1983-84թթ: ուշ աշնանը և ձմռանը Ասադի հիվանդության և պաշտոնում որոշ ժամանակով բացակայության պատճառով երկրում կրկին լարվածություն նկատվեց. Ասադի իշխանությանը մարտահրավեր նետեց Ռիֆաաթ ալ-Ասադը: Նախագահը հիվանդանոցում գտնվելու ընթացքում հանձնարարեց կազմավորել վեց հոգուց բաղկացած մի խորհուրդ, որը նրա փոխարեն պետք է զբաղվեր պետության առջև կանգնած ընթացիկ խնդիրներով, մինչև ապաքինումը: Խորհրդի մեջ մտան վարչապետ ալ-Քասմը, արտաքին գործերի նախարար Աբդ ալ-Հալիմ Խադդամը, Բաասի համազգային ղեկավարության գլխավոր քարտուղարի տեղակալ Աբդ ալ-Լահ ալ-Ահմարը, պաշտպանության նախարար Մուստաֆա Տլասը, ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Հիքմաթ Շիհաբին և Բաասի մարզային ղեկավարության անդամ Զուհեյր Մաշարկան: Ռիֆաաթ ալ-Ասադը, որը նույնպես մարզային ղեկավարության անդամ էր, չմտավ խորհրդի մեջ և իր կողմնակից զինվորականների հետ փորձեց դավադրություն կազմակերպել նախագահի դեմ[28], սակայն կրկին անհաջող: Այս դեպքերից հետո ներքաղաքական իրադրությունից ելնելով Սիրիայում իրականացվեց կազմակերպչական կառուցվածքային փոփոխություններ պետական բարձրագույն մարմիններում: 1984թ. մարտի 4-ին ալ-Քասմի կառավարությունը հրաժարական տվեց և նույն ամսում էական փոփոխություններով կազմավորվեց նոր կառավարություն՝ կրկին Աբդ առ-Ռաուֆ ալ-Քասմի գլխավորությամբ[29]: Վարչապետը սերում էր Դամասկոսի ազդեցիկ սուննիական ընտանիքից, որի հայրը հատնի կրոնական գործիչ էր և բազմաթիվ անգամ խորհրդատվություններ էր անցկացրել նախագահ Ասադի հետ Սիրիայի

սուննիական համայնքի խնդիրների շուրջ: Ալ-Քասմը մասնագիտությամբ ճարտարապետ էր և եղել էր Դամասկոսի քաղաքապետ: Ասադի կարգադրությամբ նա սկսեց պայքարել գոյություն ունեցող կոռուպցիայի երևույթների դեմ պետական վարչակազմում, ինչպես նաև բանակում: Վարչապետի նկատմամբ հիմնականում ալավի բարձրաստիճան զինվորականության կողմից հատուկ ըժգոհություն առաջացրեց ալ-Քասմի մտադրությունը՝ կրճատել բանակի ծախսերը և փոքրացնել երկրի քաղաքական կյանքում զինվորականների ազդեցության աստիճանը[30]: 1984թ. մարտի 11-ին Սիրիայում ձևավորվեց փոխնախագահների ինստիտուտ, սահմանվեց երեք փոխնախագահի պաշտոն, որոնք զբաղեցրեցին նախկին արտգործնախարար և փոխվարչապետ Աբդ ալ-Հալիմ Խադդամը՝ առաջին փոխնախագահ, Բաասի մարզային ղեկավարության անվանի գործիչ Զուհեյր Մաշարկան, ինչպես նաև Ռիֆաաթ ալ-Ասադը՝ նախագահի եղբայրը: Վերջինս արդեն ազդեցություն և կողմնակիցներ ուներ ղեկավար մարմիններում և Բաաս կուսակցությունում ու զինված ուժերի որոշ ստորաբաժանումներում: Առաջին փոխնախագահ Խադդամը պատասխանատու էր քաղաքական և արտաքին հարցերի (մասնավորապես Լիբանան), Մաշարկան՝ ներքաղաքական և կուսակցական հարցերի, իսկ Ռիֆաաթ ալ-Ասադը՝ ռազմական և ազգային անվտանգության խնդիրների համար[31]: Այդուհանդերձ ռազմական ոլորտում իշխանական լծակներն ամբողջովին նրա ձեռքում չէին, բարձրաստիճան զինվորականների նշանակման և ազատման հարցերը գտնվում էին Աստղին հավատարիմ պաշտպանության նախարար Մուստաֆա Տլասի և ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Հիքմաթ Շիհաբիի իրավասության ներքո[32]: Ռիֆաաթը հանդես էր գալիս Ասադի ներքին և արտաքին քաղաքականության մի շարք ուղղությունների դեմ: Երկրի ներսում մասնավորապես նա պահանջում էր խոսքի ազատություն, ասելով. «Մենք խոսում ենք ազատության մասին, սակայն մենք ազատ ենք միայն ուտելու և ամուսնանալու հարցերում»[33]: Այս կառուցվածքային փոփոխություններից գրեթե մեկ ամիս հետո Ասադի առողջական վիճակը կրկին վատթարացավ, իսկ Ռիֆաաթը փորձեց նորից գավթել իշխանությունը՝ շրջապատելով Դամասկոսը տանկերով, սակայն կրկին անհաջող[34]: Այս իրադարձություններից անմիջապես հետո Ռիֆաաթը, բանակի հատուկ զորամիավորումների հրամանատար գեներալ Ալի Հայդարը և բանակի 3-րդ կորպուսի հրամանատար Շաֆիկ Ֆայյադը 1984թ. մայիսի 28-ին պաշտոնական պատվիրակության կազմում ուղևորվեցին Մոսկվա: Մեկ շաբաթվա ընթացքում պատվիրակության մյուս անդամները վերադարձան Սիրիա, իսկ վերոհիշյալ երեքին թույլ չտրվեց մուտք գործել երկիր: Ռիֆաաթը աքսորվեց Ժնև, իսկ Հայդարը և Ֆայյադը՝ Սոֆիա[35], հետագայում Փարիզ: Ռիֆաաթը հեռացվեց ղեկավար գործունեությունից, սակայն ձևական պահպանեց իր պաշտոնական դիրքը: Հայտնի է, որ ալա-

վիների բնակության տարածաշրջանում զգալի ուժ և ազդեցություն ունեն նաև նախագահի մյուս եղբայրը՝ Ջամիլը, որը նույնպես զրկվեց իր բոլոր իրավասություններից և քաղաքական ազդեցությունից այն բանից հետո, երբ 1983-1984թթ. նախագահի և Ռիֆաաթի միջև դիմակայության ընթացքում պաշտպանեց Ռիֆաաթին[36]: Սիրիայում քիչ չէին Ռիֆաաթ ալ-Ասադի կողմնակիցները, հատկապես զինվորականների շրջանում և իրենց դիրքերից ազատվեցին ու զինվորական կոչումներից զրկվեցին նաև բարձրագույն սպայական կազմից նրա համախոհներն ու աջակիցները[37]: 1984թ. հետո, օրինակ, սարայա ադ-դիֆա'ան գլխավորում էին Ասադի որդի Բասիլը և Ասադի կնոջ եղբայր Աղնան Մախլուֆը[38]: Այդուհանդերձ Ռիֆաաթը շարունակում էր իր ընդդիմադիր գործունեությունը նաև աքսորի մեջ: Երբ նա հայտարարեց, որ մտադիր է վարչակարգը քննադատող ամսագիր հրատարակել և ավելին, ռադիոհեռարձակման կայան բացել, Ասադը որոշեց, որ ժամանակն է նրան թույլատրել մուտք գործել Սիրիա[39]: Նա արտասահմանից Սիրիա վերադարձավ 1984թ. նոյեմբերի 26-ին:

1980-ական թթ. առաջին կեսին ներքաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխություններից էր նաև այն, որ երկրում սուննիների վիճակը որոշակիորեն փատթարացավ, որը բացատրվում էր հետևյալ պատճառով. եթե 1970-ական թթ. ռազմական և քաղաքական իշխանությունը հիմնականում գտնվում էր ալավիների ձեռքում, իսկ սուննիական էլիտան ամուր դիրքեր ուներ առևտրա-տնտեսական և մշակութային ոլորտներում և որոնց շահերից էր բխում ազատական տնտեսությունը, նրանց ընձեռելով մասնավոր հատվածում լայնածավալ գործունեություն ծավալելու և հարստանալու հնարավորություն քաղաքական իշխանությանը չհավակնելու պայմանով, ապա 1982թ. դեպքերից հետո սուննիական համայնքի տնտեսական դիրքերը որոշ չափով թուլացան և ընդհանրապես տնտեսության մասնավոր հատվածի զարգացումը զգալիորեն դանդաղեց: 1985թ. Բաասի մարզային 8-րդ համագումարի որոշումներում, ինչպես նախկինում, ընդգծվում էր ազգային տնտեսությունում պետական հատվածի դերի հետագա ընդլայնման և խորացման անհրաժեշտության մասին[40]: Այդուհանդերձ 1970-ականների վերջի և 80-ականների սկզբի իրադարձություններից հետո, թեև հայտնի էր, որ մուսուլման-եղբայրների հետևում կանգնած էին նաև Սիրիայի սուննի համայնքի մեծահարուստ և ունևոր խավի ներկայացուցիչներ, երկրում տեղի չունեցավ մեծահարուստների ունեցվածքի բռնագրավում, համատարած ազգայնացում և սեփականության վերաբաշխում, ինչպես կատարվեց 1960-ականներին կեսերին:

1980-ական թթ. սկզբներին փոխզիջումների նպատակով գնալով նվազում էր ալավիների ներկայացվածությունը Բաաս կուսակցության բարձրագույն օղակներում, որն իհարկե ձևական բնույթ էր կրում: Սա

մշակված հին մարտավարություն էր Ասադի կողմից և նպատակ ուներ մեղմել իշխանական մարմիններում երկրի կրոնա-համայնքային ներկայացվածության անհավասարակշռությունը և խուսափել վարչակարգի նկատմամբ ընդդիմադիր տրամադրություններից և բողոքի ելույթներից Սիրիայում մեծամասնություն կազմող սուննի ազգաբնակչության կողմից: Այդուհանդերձ փաստ է, որ վարչակարգի հենարանը ոչ թե Բաաս կուսակցությունն էր, որն ի հարկե կարևոր գործոն էր վարչակարգի համար գաղափարական հենարան հանդիսանալու գործում, այլ բանակը և զինված ուժերն ընդհանրապես: 1985թ. արդեն Բաասի մարզային ղեկավարության 21 անդամից միայն չորսն էին ալավիներ՝ ներառյալ նախագահը և նրա եղբայր Ռիֆաաթը[41]:

1980-ականների կեսերին Սիրիայի ներքաղաքական կյանքում տեղի ունեցած ընդհանուր առմամբ գլխավոր զարգացումն այն էր, որ բաասական գաղափարախոսությունն ու կուսակցության հիմնարար սկզբունքներն սկսեցին հետզհետե փոխարինվել նախագահ Հաֆեզ ալ-Ասադի անձի պաշտամունքով, որը ծնոք բերեց առաջնային նշանակություն վարչակարգի պահպանման համար: Վարչակարգի կայունության հիմքում ընկած էր Ասադի անձը, թեև մուսուլման-եղբայրներին ճնշելուց հետո էլ ավելի ակտիվ սկսվեց կուսակցության գաղափարահիտսական աշխատանքը բնակչության շրջանում, որի հետևանքը կուսակցության անդամների թվաքանակի աճն էր: Եթե 1975թ. Սիրիայում Բաասի անդամ էր 22.549, 1980թ.՝ 45.010, ապա 1985թ. երկրում կուսակցության անդամների ընդհանուր թիվը կազմում էր արդեն 111.595 քաղաքացի[42]:

1985թ. Ասադն արդեն իսպառ վերացրել էր վարչակարգին ուղղված սպառնալիքները և արդեն կարող էր իրեն թույլ տալ դիմելու լարված իրավիճակը մեղմող որոշ քայլերի, մասնավորապես 1985թ. հունվարին մասնակի համաներման ենթարկվեցին մուսուլման-եղբայրների որոշ անդամներ ու կողմնակիցներ և բազմաթիվ աքսորվածների թույլատրվեց վերադառնալ Սիրիա[43]: 1985թ. սկզբին Սիրիայում տեղի ունեցավ Բաասի մարզային 8-րդ համագումարը: Ամբողջ հունվար և փետրվար ամիսներին մայրաքաղաքում և այլ քաղաքներում տեղի էին ունենում Հաֆեզ ալ-Ասադի քաղաքական ուղեգծի աջակցության հանրահավաքներ: 1985թ. փետրվարի 10-ին, ստանալով ըստ պաշտոնական տվյալների ձայների 99,97%-ը, Հաֆեզ ալ-Ասադը երրորդ անգամ յոթնամյա ժամկետով ընտրվեց Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ[44]:

GEVORG GHARIBJANIAN

THE SOCIO-ECONOMHC AND DOMESTIC POLITICAL CRISIS IN SYRIA IN THE FIRST HALF OF 1980'S

Since the 1980's, socio-economic reforms in Syria carried out under the doctrine of the Corrective Movement of the 1970's, have stopped, and a period of economic stagnation has began.

Since the early 1980's, the economy of Syria has faced several main challenges. Among the socio-economic difficulties were the sharp decrease in oil prices on the international market in the early 1980's and the resulting reduction of aid privided to Syria by the rich oil-producing Arab countries. Another problem was the drop in the mid 1980's of the cotton prices on the international market, which was a hard blow for Syria, where cotton has been an important export commodity. In the Mid 1980's remittences home from Syrians working abroad also reduced almost in half. In order to overcome the difficulties Syria continued the cooperation with Western and especially American oil companies.

In the early 1980's, the main development in Syria's domestic political life in general was a graduall change from the ideology and the founding principles of the Ba'ath party to the cult of personality of president Hafez al-Assad, which had gained a great significance for preserving the regime.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. БПИ ТАСС, 17.03.1987, Нo˙53, с. 32.
2. Նույն տեղում, էջ 31:
3. Huda Hawwa, Linkages and Constraints of the Syrian Economy, State and Society in Syria and Lebanon, edited by Youssef M. Choueiri, University of Exeter Press, 1993, p. 91.
4. 1980թ. սկսված իրանա-իրաքյան պատերազմում Սիրիան պաշտպանում էր Իրանին՝ փոխարենը ստանալով բազմակողմանի օգնություն: Սիրիայի և Իրաքի միջև հարաբերությունները բավական լարված էին կապված կուսակցական-գաղափարական և այլ խնդիրների հետ:
5. The Middle East and North Africa 1986, Thirty-Second Edition, London, 1986, p. 725.
6. БПИ ТАСС, 17.03.1987, Но 53, с. 31.
7. Kais Firro, The Syrian Economy under the Assad Regime, Syria under Assad, Domestic Constraints and Regional Risks, edited by Moshe Ma'oz and Avner Yaniv, London and Sidney, 1987, p. 49.
8. Նույն տեղում:
9. БПИ ТАСС, 17.03.1987, Но 53, с. 31.
10. Сирия, справочник, М., 1992, с. 308.
11. К. А. Капитонов, Хафез Асад-из летчиков в президенты, Ближний Восток в лицах, М., 1998, с. 73
12. Сирия, справочник, с. 261.

13. The Middle East and North Africa 1986, p. 725.
14. Kais Firro. Նշվ. աշխ., էջ 52:
15. Сирия, справочник, с. 261.
16. Сакр Аюуби, Структура и основные направления внешних экономических связей Сирии (70-е-начало 90-х годов), страны Ближнего и Среднего Востока (актуальные проблемы современности и истории), М., 1998, с. 22-23, Handbook of International Trade and Development Statistics, New York and Geneva, 1987, t. 5,1.
17. К. А. Капитонов, Նշվ. աշխ., էջ 72:
18. Zeev Ma'oz, The Evolution of Syrian Power, 1948-1984, Syria under Assad. Domestic Constraints and Regional Risks, edited by Moshe Ma'oz and Avner Yaniv, London and Sidney, 1987, p. 72.
19. Zeev Ma'oz, Նշվ. աշխ. էջ 72, В. М. Ахмедов, Армия и политика в современной Сирии, Армия и власть на Ближнем Востоке, М., 2003, с. 160.
20. Сирия, справочник, с. 226.
21. Kais Firro, Նշվ. աշխ., էջ 63:
22. Perthes Volker, The Political Economy under Asad, L.-N. Y., 1997, p. 151.
23. В. Ю. Беляков, Два фронта Сирии, Азия и Африка сегодня, No 10, октябрь, 1983, с. 8-11.
24. В. М. Ахмедов, Армия и политика в современной Сирии, Армия и власть на Ближнем Востоке, М., 2003, с. 160.
25. Մասնավորապես 1979թ-ից Սիրիան գտնվում էր ԱՄՆ կազմած ահաբեկչությանն աջակցող երկրների ցուցակում:
26. Сирия, справочник, с. 308.
27. Նույն տեղում, էջ 160:
28. باترك سيل، صراع على الشرق الأوسط دمشق، ص.٦٨٩
29. Առաջին անգամ նա նշանակվել էր փարչապետ 1980թ.
30. В. М. Ахмедов, ÜßÍ. ³ßË., ¿ç 164:
31. The Middle East and North Africa 1986. p. 733.
32. Նույն տեղում, էջ 721:
33. باترك سيل، صراع على الشرق الأوسط دمشق، ص. ٧٠٧
34. К. А. Капитонов, Նշվ. աշխ., էջ 75:
35. The Middle East and North Africa 1986. p. 721.
36 Middle East Contemporary Survey, Volume XXI, 1997. Bruce Maddy-Weitzman Edition. The Moshe Dayan Center for Middle Eastern and African Studies. p. 654.
37. Сирия, справочник, с. 160.
38. В. Н. Саутов, Алавиты у власти: тенденции внутренней эволюции и практика действия, Ближний Восток и Современность, сборник статей, выпуск двенадцатый, М., 2001, с. 141.
39. باترك سيل، صراع على الشرق الأوسط دمشق، ص. ٧١٠

40. А. О. Филоник, Госсектор и Бюрократия а Сирии, Арабские Страны. Проблемы социально-экономического и общественно-политического развития. Сборник статей, выпуск второй, М., 1995, с. 138.
41. Perthes Volker, Նշվ. աշխ., էջ 151:
42. الحركة التصحيحية المجيدة في الذكرة الخامسة والعشرين، دمشق، ١٩٩٥ .ص. ٨١
43. The Middle East and North Africa 1986. p. 721.
44. باترك سيل، صراع على الشرق الأوسط دمشق، ص.. ٧١٢

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԻԼՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ՍՈՉԻԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՄՇԵՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ (1918-1920 թթ.)

Վրաստանի անկախության հռչակումից հետո՝ 1918 թ. մայիս-հունիսին, վրացական բանակը հաղթանակ տարավ Աբխազիայում բոլշևիկների զինված ուժերի դեմ: Հետապնդելով «կարմիրների» ջոկատներին վրացական զորքերը 1918 թ. հուլիսին մուտք գործեցին հարևան Սոչիի շրջան: Վրաստանի կառավարությունը այդ քայլը բացատրում էր ռազմական անհրաժեշտությամբ: Այս շրջանում բնակվում էր 25000 հայ[1]: «Կարմիրների» հեռանալու օրը հայերը վերցրել էին ինչպես հասարակական կարգապահության հսկելու, այդպես էլ Սոչիի երկաթուղային կայարանի և փոստի պահպանության պարտականությունը[2]: Հուլիսի 11-ին Վրաստանի կառավարությանը հղած հեռագրում հաղորդվում էր, որ վրացական զորքերի մուտքը նշված շրջան սրտանց ողջունվում էր բնակչության կողմից[3]: Ինչպես վկայում է Սոչիի Հայոց Ազգային խորհրդի 1918 թ. օգոստոսի 24-ի նամակը ուղղված Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, ենթարկելով շրջանը Վրաստանին, նոր իշխանությունը առաջ քաշեց հայերի հպատակություն հարցը: Իշխանությունները առաջարկում էին հայերին ընդունել Վրաստանի քաղաքացիություն և տեղի հայերի մեծամասնությունը կողմնակից էր դրան, քանի կար մշակվող հողերից զրկվելու վտանգ[4]: Այս հարցի նշանակությունը կարևորվում էր տեղի հայերի 90 տոկոս գյուղացի լինելու հանգամանքով[5]: Ընդունելով քաղաքացիություն, հայերը միաժամանակ համաձայն էին նաև զորակոչվել վրացական բանակ[6]: Սակայն վրացական զորքերի շրջան ժամանելու հաջորդ իսկ օրից անսպասելի սկսվեցին որևէ կերպ չբացատրված հալածանքներ տեղի հայերի նկատմամբ: Զինվորականների խմբերը ներխուժում էին հայկական բնակավայրերը հափշտակում ձիերը, կողոպտում դրամ և այլ թանկարժեք ունեցվածք, միաժամանակ ենթարկելով ծեծի ոչ միայն տղամարդկանց, այլ նաև կանանց և երեխաներին՝ հիմնավորելով այս ամենը հայերի բոլշևիկներին աջակցելու հանգամանքով: 1918 թ. հուլիսի 22-ն Տուափսեի կողմից Կարմիր բանակի անհաջող հակահարձակումից հետո, նրա մարտիկները նահանջելով զենք էին թողել հայաբնակ Նիժնեե Լոո գյուղում: Հայտնաբերելով այն,

վրացական զինվորականները մեղադրել էին հայերին «կարմիրների» շարքերում վրացական բանակի դեմ մարտնչելու մեջ և ձերբակալել էին տեղի 14 գյուղացու, ցանկանալով նրանց հանձնել ռազմական դատարանի: Մեծ դժվարությամբ Սոչիի Հայոց խորհրդին հաջողվեց ապացուցել մեղադրանքի անհեթեթությունը, թեպետ այս գործի առիթով մեծ աղմուկ բարձրացրած վրացական պաշտոնյաները հրապարակայնորեն չարեցին որևէ հերքում: Անհրապույր դեր էր ունեցել տվյալ միջադեպում տեղի կոմիսար (գյուղապետ) Լավրենտի Կվերկվիլիան, որը կեղծ տեղեկություն հաղորդելով ռազմական իշխանություններին հայերի կողմից նախապատրաստվող «ապստամբության» մասին, պատժամիջոցների կիրառման ժամանակ բռնություններից փրկելու համար հայերից կաշառք էր պահանջում: Նման միջոցների նա դիմում էր և հետագայում «հովանավորություն» ցուցաբերելու համար[7]: Վրաստանի կենտրոնական իշխանությունները, նկատի ունենալով բազմաթիվ բողոքները, որոշել էին փոխել շրջանի հայաբնակ վայրերում նախկինում նշանակված գյուղապետերին: Սակայն 1918 թ. վերջերին Հայաստանի և Վրաստանի միջև առաջացած հակամարտության ժամանակ վրացական կառավարությունը այս մտքից հրաժարվեց[8]:

Հայոց խորհրդի բոլոր դիմումների նկատմամբ վրաց ռազմական իշխանությունը ցուցաբերում էր արհամարհական վերաբերմունք և դրանով իսկ, Խորհրդի կարծիքով, քաջալերվում էին նորանոր բռնություններ: Ընդհակառակն վրաց բալճրաստիճան քաղաքացիական իշխանությունները փորձում էին չափավորել զինվորականների վարքագիծը շրջանում, ինչով ամրապնդել էին վերջինների թշնամանքը Հայոց խորհրդի վերաբերյալ, որի հետևանքն էլ եղավ վրաց զինվորականների կողմից կազմակերպված սադրանքը Խորհրդի նկատմամբ: 1918 թ. օգոստոսին դեպի Տուափսե Սոչիի վրայով շարժվում էր Կուբանի կազակների ջոկատ, որը մինչ այդ մասնակցում էր թուրքական դեսանտի ջախջախմանը և հեռացվել էր Աբխազիայից մեղադրվելով աբխազ խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններ կիրառելու մեջ: Ոգելից խմիչքներով առատ հյուրասիրությունից հետո վրաց պարետը համոզել էր հարբած կազակներին, թե Հայոց խորհուրդը կազմված է բոլշևիկներից: Կատաղած կազակները, պարետի օգնականի ուղեկցությամբ, ներխուժել էին Խորհրդի տարածք և ծեծի էին ենթարկել Խորհրդի քարտուղարին ու այդ պահին ներկա եղած հայերին, խլելով թանկարժեք իրեր: Այս միջադեպի պատճառները պարզելու նպատակով կազակնեյի հրամանատար գեներալ Մասլովսկուն դիմել էր Սոչիի քաղաքագլուխը: Պատասխանելով նրան, գեներալը հայտնեց, որ իր ենթակաները թյուրիմացության էին մատնվել վրաց ռազմական իշխանության ներկայացուցիչների կողմից և ներողամտություն խնդրելով, շեշտում էր, թե կազակները հայերի նկատմամբ թշնամանք չունեն: Հայոց խորհրդի անդամները ե-

կան այն եզրակացության, որ, կազմակերպելով սադրանքը, վրաց զինվորականները նպատակ ունեին հայերի միջավայրում թշնամանք առաջացնել ռուսների նկատմամբ, ինչպես նաև ստեղծել պատրանք, թե վրացական կառավարությունից բացի հայերը այլ պաշտպան չունեն: Հայերի ահաբեկման նպատակով բազմիցս հիշեցվում էր, որ վրացիներին աջակցում է «գերմանական բռունցքը», այսինքն՝ Աղլերում տեղակայված գերմանական զորամասը[9]: Ռազմաճակատին հարող գոտում քաղաքացիական իշխանությունները անզոր էին վերջ տալ անօրինական հափշտակումներին և խաղաղ բնակիչների տների վրա զինվորների գիշերային հարձակումներին: Հերթական բողոքից հետո, 1918 թ. հոկտեմբերին հարձակում էր կատարվել նաև Հայոց խորհրդի նախագահ՝ Արամ Հակոբյանի տան վրա[10]: 1918 թ. սեպտեմբերի 15-ին Վրաստանի Ազգային խորհրդի անդամ Ե. Գեգեճկորին Սոչիից հաղորդում էր վարչապետ Ն. Ժորդանիային, որ վրացական տիրապետության հանդեպ եղած բարյացակամ վերաբերմունքը վերացել է[11]:

Հայ-վրացական զինված հակամարտությունը՝ 1918թ. դեկտեմբերին, բացասաբար ազդեց Վրաստանում հայ բնակչության կացության վրա: 1919 թ. հունվարի 8-ին Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը նամակով դիմել էր ՀՀ կառավարությանը, որտեղ մասնավորապես ասված էր. «Ռեպրեսիաների համար ահազանգ է հանդիսացել ներքին գործերի մինիստր Ն. Րամիշվիլու գաղտնի շրջաբերականը: Պատերազմի առաջին օրվանից, ՀՀ ենթականերին ցուցակագրելու անվան տակ, միլիցիայի և հատուկ ջոկատների ներկայացուցիչները սկսում են գիշերային ստուգումներ հայերի բնակարաններում, որը վերածվում է իսկական թալանի: Փակվում է հայկական թերթերի մեծ մասը, իսկ մնացածները չեն կարողանում արձագանքել կատարվող հանցագործություններին ամենահասարակ փաստերին: Վրաստանի ազգայնական թերթերը կոչ են անում ամենադաժան պայքար մղել ողջ հայ ժողովրդի դեմ, բռնագրավել նրանց ունեցվածքը և քշել Վրաստանից: Կատարվող թալանին և հակահայկական քաղաքականությանը «դասակարգային գիտակցություն» հաղորդելու նպատակով կամպանիան որակեցին վրաց դեմոկրատիայի ու հայ բուրժուազիայի միջև պայքար[12]...հայերի վիճակը դառնում է անտանելի: Փակվում են հայերի խանութները և կրպակները, թալանը և ծերբակալությունները հասնում են աննախադեպ չափերի»[13]: 1919 թ. հունվարին Սոչիի Ռուսական ազգային խորհուրդը բողոքով դիմել էր Վրաստանի կառավարությանը ռուս ազգության մարդկանց հալածելու պատճառով[14]: Սոցիալիստ-հեղափոխականների Սոչիի կոմիտեն 1919 թ. հունվարի 20-ին պահանջում էր վրաց իշխանություններից կատարել շրջանում բռնությունների, թալանների և չարաշահումների բազմաթիվ փաստերի քննություն[15]:

Հայաստանի և Վրաստանի միջև պատերազմի օրերին Սոչիի Հայոց խորհուրդը հրավիրվել էր վրացական կառավարության ներկայացուցիչ՝ Մ. Խոչոլավայի և շրջանում տեղակայված Ծովափնյա ջոկատի հրամանատար զեն. Ղոնիևի հետ հանդիպմանը: Հայոց խորհրդի անդամները զգուշացվել էին իրենց պատասխանատվության մասին՝ վրացական զորքերի դեմ տեղի հայերի ելույթի դեպքում, սպառնալով, թե նրանք կդիտվեն այդ գործի կազմակերպողներ և կպատժվեն գնդակահարությամբ[16]: Հայ լիազորներին ստիպել էին գրություն տալ, որ չեն լքի շրջանի տարածքը: Նման արգելքը տարածվել էր նաև ամբողջ հայ բնակչության տեղաշարժի վրա: Այսպիսով, հայերի հավատարմության ապահովման և շրջանում խաղաղության պահպանման պատասխանատվությունը դրվել էր Հայոց խորհրդի վրա: Հայերը, չնայած նրանց նկատմամբ թույլ տված բոլոր անօրինականություններին, չէին փոխել լոյալ դիրքորոշումը վրացական իշխանության վերաբերյալ: Այս կարևոր վկայությունը Ա. Հակոբյանը տվել էր 1919 թ. փետրվարի 17-ին՝ շրջանում վրացական տիրապետության թոթափումից հետո[17]: Վրաց պաշտոնյաների բոլոր կանխարգելիչ միջոցառումները նա համարում էր ավելորդ ու անիմաստ, քանի որ Խորհուրդը արդեն դիմել էր բնակչությանը հանգստության հրավերով, ինչպես նաև հեռագրել էր ՀՀ Կառավարությանը եղբայրասպան պատերազմին վերջ տալու կոչով[18]:

Խորհրդի և հայերի հաշտ դիրքորոշման դիմաց վրաց իշխանությունները սակայն ոչինչ չարեցին, որ վերջ տան անօրինականություններին: Հակառակը, ռազմական իշխանությունները կալանքի էին վերցնում բողոքողներին, որպես սադրիչներ և, տեսնելով դիմումների անարդյունավետությունը, հայ բնակչությունը դադարել էր ապավինել Խորհրդին, որի վարկը ընկել էր: Խորհուրդը 1918 թ. դեկտեմբերին միջամտության կոչով դիմել էր Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար) նորաբաց անգլիական Միսիային, սակայն՝ անարդյունք[19]: Քաղաքացիական իշխանությունների անզորության և վրաց զինվորականների կամայականության աստիճանի մասին վկայում է Կառավարության ներկայացուցչին կից հայերի գործերով խորհրդական պորուչիկ Նաջարովի հետ տեղի ունեցած միջադեպը: 1918 թ. դեկտեմբերին 15 վրացի սպա հարձակվել էին նրա վրա և դաժան ծեծի էին ենթարկել միայն այն պատճառով, որ խորհրդականը բազմիցս զեկուցում էր իր պետին հայաբնակ Դե-Սիմոն, Ուչ-Դերե, Նիժնեե և Գոռնոե Լոո գյուղերում զինվորականների կատարած բռնությունների մասին: 1919 թ. հունվարին սպանվել էր Պիլենկովոյի ենթաշրջանի (վրաց.՝ Գանթիադի, աբխ.՝ Ցանդրիփշ) Հայոց խորհրդի նախագահ Վրույր Տեր-Ղուկասյանը: Նա հայտնի էր վրացական զինվորականներին և իշխանություններին դատապարտող բազում ելույթներով: Իսկ հանցագործները այդպես էլ մնացին անհայտ[20]:

1919 թ. հունվարի 31-ին Գոռնոե Լոո գյուղում տեղի ունեցավ բախում գյուղացիների և թալանով զբաղվող մի խումբ վրաց զինվորականների միջև, որի արդյունքում զինվորներից մեկը վիրավորվեց: Վրաց հրամանատարությունը առանց միջադեպի պատճառը իմանալու հայերի դեմ ուղղեց պատժիչ ջոկատ, իբր ապստամբությունը ճնշելու նպատակով: Գյուղացիները թույլ չտվեցին զորամասին մուտք գործել գյուղ և դիմադրեցին: Նրանք պահանջում էին իշխանություններից քննություն վարել, քանի որ համոզված էին, թե զինվորները ապատեղեկացրել էին իրենց հրամանատարությանը բախման իրական պատճառների մասին: Սակայն դա տեղի չունեցավ և փետրվարի 1-ից գյուղում սկսվեց մարտ[21]: Չկարողանալով կոտրել ապստամբների մարտական կամքը, զինվորականները ներխուժել էին հարևան Ուչ-Դերե ավանը և դուրս էին քշել նրա հայ բնակիչներին դեպի Գոռնոե Լոո գյուղի մատույցները: Օգտագործելով գյուղացիներին որպես կենդանի վահան, զինվորականները վարձում էին մոտենալ ապստամբ հայերի դիրքերին: Սակայն դիմադրողները այնպես էին կազմակերպել մարտը, որ խաղաղ բնակչությունը չէր տուժել և ցրվել էր հարակից անտառում: Զինվորականների ձեռքում մնացած Ուչ-Դերեի երկու բնակիչ՝ Սեդրակ Թագմազյանը և Գարեգին Գբբաշյանը հայտարարվել էին պատանդ, սակայն շուտով դիրքերից հետ դարձի ճանապարհին առանց որևէ պատճառի սվինահարվել էին ուղեկալի կողմից[22]: Կատաղած զինվորները սպանել էին նաև ճանապարհին նրանց հանդիպող Կուբանսկոյե գյուղի տարեց բնակիչ Համբարձում Դավլաշյանին[23]:

Անհանգստացած դեպքերի զարգացումներով, Հայոց խորհրդի անդամները փետրվարի 2-ին կազմել էին շրջաբերական նամակ, հղելով այն շրջանում գործող հասարակաքաղաքական կազմակերպություններին, ինչպես նաև Թիֆլիսում ՀՀ Ներկայացուցչություն[24] և Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդ: Ա. Հակոբյանը գրում էր, որ Խորհուրդը բազմաթիվ անգամ դիմել է շրջանում Վրաստանի ներկայացուցչին, բողոքելով վրացական Ծովափնյա ջոկատի զինվորականների կատարած բռնությունների և թալանների վերաբերյալ, որոնք սակայն անարդյունք են մնացել: Միաժամանակ, չցանկանալով սրել հարաբերությունները վրաց իշխանությունների հետ, Խորհուրդը հայտնում էր, թե կատարվածը անպատասխանատու անձանց գործունեության հետևանք էր, պոնք գործում էին առանց իշխանությունների գիտության և կամքին հակառակ: Անդրադառնալով Գոռնոե Լոո գյուղի բնակիչների ելույթին, Խորհուրդը հայտնում էր նրանց անունից, որ գյուղացիները չունեն որևէ հակասություն վրացական իշխանությունների հետ և պաշտպանվում էին միայն հրոսակ զինվորների դեմ: Հայերի միակ պահանջն էր՝ նշանակել անկողմնակալ հանձնաժողով դեպքերի քննության նպատակով: Ստեղծված դրությունը Խորհուրդը բնութագրում էր որպես աղետ: Կառավա-

րության ներկայացուցչի հետ համատեղ իրականացված Խորհրդի միջոցառումները բախման դադարեցման ուղղությամբ անարդյունք մնացին և այդ պատճառով Խորհուրդը խնդրում էր հասցեատերերին միջամտել ու պահանջել Վրաստանի իշխանություններից անհապաղ վերջ տալ մարտական գործողություններին՝ հետ քաշելով զորքերը հայկական գյուղի մատույցներից[25]: Ելույթը Խորհուրդը դիտում էր որպես ինքնապաշտպանական կռիվ գյուղացիների կողմից[26]: Ստանալով այս տեղեկագրությունը, Վրաստանի Հայոց խորհուրդը փետրվարի 7-ի նիստում որոշում կայացրեց անմիջապես հեռագրել Սոչիի Խորհրդին պահանջելով՝ անհապաղ միջոցներ գտնել և դադարեցնել հայերի ելույթը «բարեկամ վրացական զորքերի դեմ»[27]: Միաժամանակ Վրաստանի Հայոց խորհուրդը առաջարկում էր Կառավարությանը, ցավալի դեպքերի քննման նպատակով, Սոչի ղրկել հանձնաժողով, ընդգրկելով նրա կազմի մեջ նույն խորհրդի մեկ ներկայացուցիչ:

Փետրվարի 3-ին Սոչիի Հայոց խորհուրդն անմիջական միջամտության խնդրանքով դիմել էր Այսրկովկասում բրիտանական հրամանատարությանը, որը, դիմողների կարծիքով, խաղաղ միջոցներով պիտի հարթեր միջադեպը: Խորհուրդը մտահոգություն էր հայտնում, որ մասնակի ելույթը Գոռնոե Լոո գյուղում կվերածվի ընդհանուր բախման: Դիմումի բովանդակությունը անգլիացիները հեռախոսակապով իսկույն ազդարարել էին Վրաստանի կառավարությանը[28]: 1919 թ. փետրվարի 4-ին Սոչիի Հայոց խորհրդի պահանջին սատարեց սոցիալիստ-հեղափոխականների շրջանային կոմիտեն, որը իր հայտարարությունում պահանջում էր շտապ նշանակել քննչական հանձնաժողով և պատասխանատվության կանչել մեղավորներին: Միաժամանակ Կոմիտեն շեշտում էր, որ բռնությունների և թալանների դեմ ելած գյուղացիներին «իշխանությունները ճնշում են դաժանությամբ հիշեցնող ցարական ժամանակների պատժիչ արշավանքները»[29]: Փետրվարի 5-ին Սոչիի Ուկրաինական Գրոմադայի (Միության) նախաձեռնությամբ անցկացվեց շրջանի հասարակաքաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների հավաք, որը որոշեց. «1) Պահանջել իշխանություններից դադարեցնել ռազմական գործողությունները և բռնությունները խաղաղ բնակչության դեմ; 2) Տեղի իշխանությունների հետ միասին ընտրել հանձնաժողով երեք անդամից բռնություւնների բոլոր դեպքերը քննելու համար՝ կատարած ինչպես զորքերի, այդպես էլ ստորին վարչակազմի կողմից; 3) Շտապ հեռագրով առաջարկել անգլիական Միսիային Թիֆլիսում լսել Սոչի պատվիրակություն; 4) Պատվիրակության առջև հարց բարձրացնել հանրաքվեի մասին, որպեսզի բնակչությունն առանց զորքերի և վարչակազմի կողմից որևէ ճնշման կարողանա ազատ արտահայտվել տեղական իշխանության կազմակերպման, շրջանի քաղաքական ու տնտեսական ճակատագրի մասին; 5)...; 6) Դուրս բերել զորքերը»[30]: Փաստաթղ-

թի բովանդակությունը որոշվել էր ազդարարել նաև Կամավորական բանակի շտաբին: 32 ձայն տրվել էր որոշման օգտին, իսկ դեմ էին արտահայտվել տեղի սոցիալ-ժողովրդավարականների ղեկավարները (Իզմայլով, Ցվանգեր): Շրջանային Վրացական Ազգային խորհրդի ներկայացուցիչները (Խոփերիա, Չիփաձե) ձեռնպահ մնացին[31]:

Տեղի Վրացական խորհուրդը պատասխան էր հղել Հայոց խորհրդի փետրվարի 2-ի շրջաբերականին, թե. «Վրաց հասարակությունը արտահայտում է իր ափսոսանքը որոշ վրաց զինվորների կողմից կատարած էքսցեսների վերաբերյալ: Միաժամանակ, վրաց հասարակությունը պատվիրակների միջոցով բարեխոսել է բարձրագույն ռազմական և քաղաքական իշխանությունների մոտ հայ բնակչության և զորքերի միջև հակամարտությունը անհապաղ վերացնելու մասին: Վրաց հասարակությունը հույսով է, որ բարեկամությունը հայ և վրաց եղբայր ժողովուրդների միջև չի խախտվի և առաջացած թյուրիմացությունները ու առանձին մութ անձանց սադրանքները հետագայում կկանխվեն ոգով բարեկամ երկու ժողովուրդների միացյալ ուժերով»[32]: Հիշյալ նամակի կրկնօրինակը հղվել էր Մեբձևեծովյան երկրամասում Վրաստանի կառավարության ներկայացուցիչ Մուխրան Խոչոլավային:

Փետրվարի 6-ին Կառավարության քարտուղարությունում սղագրել էին Խոչոլավայի զեկուցումը: Նա հայտնում էր, որ դեպքերը քննելու նպատակով փետրվարի 3-ից իր գլխավորությամբ սկսեց գործել հատուկ հանձնաժողով[33]: Նշված է երկու զոհ հայերից և արձանագրվել էին վիրավորներ նաև վրաց զինվորականների շարքերում: Չնայած, որ սկզբնական տեղեկություններով Խոչոլավայի մոտ ստեղծվել էր իրական ապստամբության տպավորություն, նա հաղորդում էր հակամարտությունը ի վերջո խաղաղ միջոցներով վերացնելու մասին: Միաժամանակ նա վկայում էր. «Ես անձամբ տեսել եմ հետևանքները մի շարք աններելի գործերի, հափշտակումների և կոպիտ վերաբերմունքի բնակչության նկատմամբ [վրաց] զինվորականների կողմից»[34]: Խոչոլավայի զեկուցագրում չկա որևէ մեղադրանք տեղի հայերի վարքագծի վերաբերյալ և փաստաթուղթը բարյացակամ ոգով է ներշնչված նրանց նկատմամբ: Վրաստանում ՀՀ-ի դեսպանորդ Լ. Գ. Եվանգուլովը զեկուցեց Երևան Սոչիի հայերի ապստամբության մասին, որն ուղղված էր անկարգություն անող վրացական զորքերի դեմ: «Վրաց իշխանությունների թշնամական վերաբերմունքը դեպի այդ շրջանի հայերը, ոչ ոքի մեջ կասկած չպիտի հարուցի»[35], - գրում էր դեսպանորդը:

1919 թ. հունվարին Վրաստանի կառավարության մոտ մտադրություն էր առաջացել Սոչիի շրջանի պետական պատկանելիության հարցը լուծել Փարիզի խաղաղարար վեհաժողովում: Վրաստանի կառավարության ոտնձգությունները բախման բերեցին Ռուսաստանի հարավում հզորացած «Սպիտակ շարժման» հետ: Նրա առաջնորդները, բացի հա-

կաբոլշևիկյան պայքարի, նաև մարտնչում էին հանուն «միացյալ և անբաժանելի» Ռուսաստանի և որևէ կերպ չէին կարող համաձայնվել Սոչիի շրջանի կարգավիճակի շուրջ առաջացած հարցի միջազգայնացմանը: Բացի այդ, նրանք համոզված էին, որ Վրաստանի համար Սոչիի շրջանը ուներ հսկայական նշանակություն որպես գոտի, որն առանձնացնում էր Աբխազիան Ռուսաստանից: Վրաստանի կառավարությունը մտավախություն ուներ, որ այդպիսի անմիջական հարևանությունը կբերի Աբխազիայի տարանջատմանը Վրաստանից, քանի որ այդ պահին առաջինի կարգավիճակը վերջնականապես չէր պարզվել[36]:

Լոռ գետի երկայնքով ձգվող առաջավոր դիրքերից Կամավորական բանակի 3-րդ սպայական գնդի մարտիկները, որոնց մեջ կային նաև հայեր, դիտում էին գնդացիրներով զինված վրացական հետևակի հարձակումը Գռոնոե Լոռ գյուղի վրա: 1919 թ. փետրվարի 5-ին Դենիկինը հրամայեց զորքերին անցնել Լառ գետը և վերջ տալ արյունահեղությանը, քանի որ «սպիտակ» հրամանատարության պնդմամբ հայերը ապավինել էին նրա օգնությանը[37]: Փետրվարի 6-ին Կամավորականները շրջապատեցին Սոչիում վրացական զորքերը[38], որից հետո նվաճեցին Գագրայի տեղամասը[39]: Այս տարածքում գործող վրացական զորամասի հրամանատարի հաղորդմամբ «սպիտակների» առաջխաղացման ժամանակ «հայ բնակչությունը անցնում է կամավորականների կողմը և կռվում է մեր դեմ»[40]: Առաջացավ Սոչիի ռազմաճակատը, որը Կամավորական բանակի կողմից պաշտպանվում էր նաև 1500 հայերից կազմված զորամասով[41]:

Գագրայի տեղամասում Կամավորականների տիրապետության օրերին ոմն Ղ. Դերենիկյանը[42], Հայ ժողովրդական կուսակցության անդամ, կնքել էր հակավրացական թևին պատկանող աբխազ գործիչների հետ գաղտնի դաշինք՝ Դերենիկյանի ասելով. «Հայ և աբխազ ազգությունների փոխհարաբերությունները կանոնավորելու համար»: Տվյալ փաստին ՀՀ ԱԳՆ-ում վերաբերվել էին բացասական և Դերենիկյանի գործունեությունը որակել էին «ինքնագլուխ»: Բացի այդ ԱԳՆ-ում կարծում էին, թե. «Շնորհիվ նրա ակտիվ գործունեության, որը միշտ պարզ կերպով ուղղված է եղել վրացիների դեմ, հայ-վրացական հարաբերությունները այս շրջանում դարձել են սովորականի թշնամական և ստեղծվել է մի շատ պարարտ հող պրովոկացիայի համար»: Այսպիսով Դերենիկյանը համարվեց «վնասակար և ինքնակոչ անձնավորություն, որի վնասակար ազդեցությունը հայ գաղութի վրա Սոչիում անհրաժեշտ է չեզոքացնել»[43]: ՀՀ կառավարական շրջանակները ստիպված աչք փակելով բռնությունների բազմաթիվ դեպքերի վրա, միաժամանակ խիստ բացասական էին վերաբերվում հայերի որևէ մասնակցությանը հակավրացական գործունեության: Վրաստանի հայության վիճակի բարելավումը ՀՀ իշխանությունները տեսնում էին բանակցությունների և բարիդրացիա-

կան հարաբերությունների հաստատման ճանապարհով: 1919 թ. նոյեմբերի 15-ին Եվանգուլովը առաջարկում էր արտգործնախարարին բացել ՀՀ հյուպատոսարան նաև Սոչիում՝ հիմնավորելով դիմումը, թե ժամանակին ներկայացուցչություն ունենալու պարագայում համապատասխանորեն կպաշտպանվեին հայերի շահերը և կկանխվեր նրանց ապստամբությունը: Այժմ, Եվանգուլովի կարծիքով, ներկայացուցիչը պետք է նպաստեր հայերի չեզոքությանը և հայրենադարձությանը[44]: Սակայն ՀՀ արտգործնախարարի հրահանգով Սոչիի շրջանը ընդգրկվեց Սուխումի հյուպատոսարանի գործունեության գոտում[45]:

1919 թ. փետրվարի 20-ին Վրաստանի Պառլամենտի ամբիոնից Նոյ Ռամիշվիլին մեղադրել էր Սոչիի շրջանում գտնվող ՀՅԴ-ի անդամներին Դենիկինին աջակցելու մեջ[46]: Ինչպես հաղորդում էր Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը, վրաց իշխանությունների կարծիքով Կամավորական բանակի հետ ընդհարման պատճառը տեղի հայերն էին[47]: Կամավորականների հարձակման անցնելու օրը վրացական իշխանությունները Սոչիում ցրել էին պարեկային խմբեր, հանձնարարելով նրանց ձերբակալել Հայոց խորհրդի անդամներին, որպես այդ գործի անմիջական հանցավորներ[48]: Որ դա այդպես չէր, վկայում է 1919 թ. փետրվարի 19-ի Սոչիի Հայոց խորհրդի նամակը Վրաստանի Հայոց խորհրդի նախագահությանը: Նրանում վստահորեն ասված էր, որ. «Ազգային խորհուրդը մինչև վերջին պահը մնացել էր լոյալ [Վրաստանի կառավարությանը] և ոչ մի կապ չի ունեցել Կամավորական բանակի հետ»[49]: Փաստերը վկայում են, որ հայ բնակչության մասնակի ելույթը չէր կարող պատճառ դառնալ Սոչիի և Գագրայի գրավմանը: Կամավորականների և Վրաստանի բախման հիմքում ընկած էր տարածքային վեճը: 1918 թ. սեպտեմբերին Եկատերինոդարում տեղի ունեցան բանակցություններ Կամավորական բանակի հրամանատարության, Կուբանի կառավարության անդամների և Վրաստանի կառավարության ներկայացուցիչների միջև: Առաջին երկուսը պահանջում էին իրենց վերահսկողությանը հանձնել Սոչին և Գագրան: Բանակցությունները ավարտվեցին անարդյունք[50]: Կառավարության ներկայացուցիչ Գ. Անջափարիձեն զգուշացնում էր ռազմական նախարարին, թե շրջանին տիրելու ցանկությունը կհանգեցնի լուրջ բախման և առաջարկում էր ուշադրությունը սևեռել Վրաստանի պատմական սահմանի վրա[51]: Նույն ժամանակ Ե. Գեգեճկորին համոզում էր վարչապետ Ժորդանիային՝ օգտվել հարմար պահից և պաշտոնապես միացնել Սոչիի շրջանը Վրաստանին, նշելով, որ հակառակ վարքագիծը աններելի է և նույնիսկ հանցավոր է Կառավարության համար: Միաժամանակ նա շեշտում էր, որ շրջանի միացումը փաստի առջև կդնի Կամավորական բանակի հրամանատարությանը[52]: Հետագայում, Բրիտանական հրամանատարությունը պաշտոնապես առաջարկել էր վրացական կողմին չեզոքացնել վիճելի Սոչիի

շրջանը, հանձնելով տեղում ամբողջ իշխանությունը բնակչության կողմից ընտրված ինքնակառավարման մարմիններին: Չեզոքության պահպանման համար նախատեսվում էր տեղակայել շրջանում անգլիական զորամաս[53]: Սակայն վրացական իշխանությունների և տեղի սոցիալիստական կազմակերպությունների ջանքերով 1918 թ. դեկտեմբերի 3-ին հրավիրված Սոչիի շրջանի գյուղացիության համագումարը կողմ քվեարկեց Վրաստանի կազմում լինելու առաջարկին, թեպետ ժամանակավոր՝ մինչև «առեղծվածային» Ռուսաստանի դեմոկրատական դաշնային հանրապետության ձևավորումը[54]:

Ինչպես գրում էր «սպիտակ» գեներալ Ա. Լուկոմսկոյը. «Սոչիի շրջանում վրացական իշխանության թոթափումից հետո թյուրիմացությունները շարունակվում էին հարևան Սուխումի շրջանում հայերի և աբխազների նկատմամբ վրացական իշխանությունների վերաբերմունքի պատճառով»[55]: Երկու կողմերը, և՛ վրացական, և՛ Կամավորական, միջնորդության խնդրանքով դիմում էին Այսրկովկասում Բրիտանական բանակի հրամանատարությանը: 1919 թ. մարտի 11-ին Դենիկինը նամակ էր հղել Եկատերինոդարում Բրիտանական ռազմական Միսիայի պետ գեներալ Բրիգսին, որտեղ մասնավորապես ասված էր. «Ինձ դիմել էին Սոչիի շրջանի հայկական ազգային միության պաշտոնական ներկայացուցիչները խնդրանքով՝ պաշտպանել Սուխումի շրջանի հայ բնակչությունը…վրացական զորքերի բռնություններից...»[56]: Վրաց պատմաբանները համարում են Դենիկինի կողմից հայերի և աբխազների շահերի պաշտպանության առաքելությունը կեղծարար և սադրանք, որի նպատակն էր արդարացնել իր զավթողական քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ[57]:

1919 թ. ապրիլին վրացական զորքերը անցան հակահարձակման և ետ խլեցին Գագրայի տեղամասը: Բրիտանական հրամանատարության նախաձեռնությամբ Գագրայի տեղամասում կողմերի միջև հաստատվել էր «չեզոք գոտի»[58]: Հայաբնակ Պիլենկովոյի ենթաշրջանը հայտնվեց նրա սահմանագծին, կիսվելով՝ «չեզոք» և «վրացական» մասերի[59]: Ինչպես տեղեկացնում էր ՀՀ հյուպատոսը Սուխումում, Գագրայի տեղամասի հայ բնակչությունը Կամավորականների և վրացական զորքերի բախումների ժամանակ ենթարկվել էր սնանկացման, քանի որ զինվորները սնվում էին հայերի հաշվին: Հյուպատոսի վկայությամբ տեղամասում հայերի վիճակը աննկարագրելի ծանր էր և դժոխքի վրա ճնշող տպավորություն էր թողնում[60]: Վրաց զինվորականները կասկածում էին հայերին Կամավորականներին աջակցության գործում և վրեժ էին լուծում նրանց նկատմամբ[61]: Մեկ այլ զեկույցում արգործնախարարին հյուպատոսը գրում էր, որ վրացական բանակը հլավ և սրով անցավ Գագրայի տեղամասով, օգտագործելով այն պատրվակը, թե հայերը հրավիրել էին Կամավորականներին Սոչիի շրջան: Հյուպատոսը ոչինչ

չէր ասում կոնկրետ դեպքերի մասին, նշելով միայն, որ վրացական ռազմական իշխանությունների անօրինականությունների ծավալը այս տեղամասում հնարավոր չէ նկարագրել[62]: Իրական դրությունը նկարագրվում էր Գագրայի գավառի Պիլենկովոյի ենթաշրջանի 7 հայաբնակ գյուղերի բնակչության նամակում, որը 1920 թ. հունվարին նրանք հղել էին Աբխազիայի Ժողովրդական Խորհուրդ[63]: «Ստիպված ենք հայտնել դժգոհություն մեր ներկա կյանքից,-գրում էին հայ գյուղացիները,-որի սկզբնապատճառ են հանդիսացել մեծամասամբ ստորին ծառայողները՝ զինվորները, որոնք գտնվելով ռազմաճակատում մշտապես անհանգստացնում են մեզ՝ գյուղացիներիս…այլևս չի մնացել ոչ ընտանի թռչուն, ոչ փեթակ, ոչ էլ կեր. զինվորները մասամբ գողացել են, մասամբ էլ՝ ոչնչացրել: Նրանք հափշտակել են մեր շորը, եգիպտացորենը, ծխախոտը…այնպես որ ներկա ժամանակ մենք շատ վատ հագնված ենք և վատ սնվում ենք: Մնացել է շատ քիչ կով և գոմշակով: Մենք ամեն կերպ փորձում ենք կազդուրել սնանկացած տնտեսությունները…սակայն խանգարում են զինվորները: Դրա վերաբերյալ մենք բազմիցս բողոքել ենք գումարտակների հրամանատարներին, սակայն նրանք որևէ ուշադրություն չեն դարձնում և կարծես քաջալերում են ենթականերին (բացառությունները հազվագյուտ են լինում), հետևապես զինվորները շարունակում են իրենց կործանարար գործունեությունը՝ վերջնականորեն սնանկացնելով մեզ: Վրաց զինվորականները գիշերներով հարձակվում են խաղաղ բնակիչների վրա, և սպառնալով գնդակահարել, դրամ են պահանջում: Ստանալով մի քանի հազար ռուբլի, հեռանում են, հակառակ դեպքում՝ սպանում են… Շայքայինների և սպաների վերաբերմունքը հայերի նկատմամբ վերին աստիճանի արհամարհական է և սպառնացող: Մենք.., հայտնելով մեր ճգնաժամային դրության մասին, խնդրում ենք ցուցաբերել իրավիճակի բարելավման համար Ձեր շուտափույթ և արդարացի աջակցությունը, կամ էլ վերաբնակեցրեք մեզ որևէ այլ տեղ, քանի որ մեր հուսահատ դրությունը հասել է իր գագաթնակետին: Վճռականորեն հայտարարում ենք, որ այդպես այլևս չի կարող շարունակվել»[64]: Եվ որպես այս վերիվարումների տրամաբանական եզրահանգում Սոչիի Հայոց խորհրդի «Հուշագրում» շեշտվում էր, որ Վրաստանի կառավարության ներկայացուցիչները չկարողացան անիշխանությանը վերջ տալու առաքելություն ունենալ: Խորհրդի տեսակետից, նրանք իրենք էին շրջանում «անարխիա» տարածում, քանի որ չկատարեցին խոստումը՝ դատի հանձնել բռնություններ գործողներին: Ելնելով եղածից Խորհուրդը կոչ էր անում բոլոր շահագրգիռ կողմերին այլևս չենթարկել Սոչիի շրջանը Վրաստանի իշխանությանը և միջոցներ գտնել Աբխազիայի հայ բնակչության տարրական իրավունքների ապահովման համար[65]:

BENIAMIN MAILYAN

GEORGIAN GOVERNMENT AND HAMSHIN ARMENIAN COMMUNITY OF THE SOCHI DISTRICT (1918-1920)

After proclamation of independence of Georgia, Sochi district was ruled by force, which was under control of Georgian national government. Sochi's status was not finally juridically legalized. The question of border evoked military conflict between Georgia and Russian "White" movement from suffered Hamshin Armenian population of the Sochi district. The violence of georgian troops had such result as rebellion local Hamshin Armenians' in the February of 1919.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ),ՀՀ արտաքին գործերի նախարարության ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 60: Շրջանի գյուղացիական բնակչության ընդհանուր թվից հայերը կազմում էին շուրջ 30 % (Деникин-Юденич-Врангель, Мемуары, Москва-Ленинград, 1931, с. 165):
2. ՀԱԱ,Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8 (ռուս.):
3. Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ (ՎԿՊՊԱ), Վրաստանի ժողովրդավարական հանրապետության կառավարության քարտուղարության ֆ. 1861, ց. 2, գ. 28, թ. 4, (ռուս.):
4. ՀԱԱ, Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչության ֆ. 276, ց. 1, գ. 62, թ. 1:
5. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8 (ռուս.):
6. ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 62, թ. 1:
7. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 11-11 շրջ. (ռուս.):
8. Նույնը, թ. 12 շրջ. (ռուս.): Վրաստանի կառավարությունը չկատարեց խոստումը՝ տրամադրել Սոչիի շրջանին ներքին ինքնավարություն, և ճզճզում էր ինքնակառավարման մարմինների ընտրությունները, (Деникин-Юденич-Врангель, Мемуары, с. 161-162):
9. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8-8 շրջ. (ռուս.):
10. Նույնը, թ. 11 շրջ. (ռուս.):
11. ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 26, թ. 38-40, (ռուս.):
12. Տես՝ "Резолюция Тифлисского Совета рабочих депутатов, 11 января 1919г.", газета "Борьба", Тифлис, 1919, № 9. «Պատերազմի վերջը», թերթ «Էրթոբա» (Միասնություն), 29. 12. 1918, (վրաց.): Այդպես էին մտածում սոցիալ-ժողովրդավարականները, իսկ ազգային-ժողովրդավարականների մամուլը գրում էր. «Այժմ մենք մղում ենք հայերի դեմ իրական ռասայական պայքար: Այս պատերազմը պետք է որոշի ո՞վ կգերիշխի Կովկասում: Մեր օգտին է կենսաբանական և մշակույթային առավելությունը, ինչպես նաև պատմական ավանդույթները», (Ռասայական պատերազմ, թերթ «Սաքարթվելո», 22 . 12. 1918 (վրաց.):
13. ՀԱԱ, Բաքվի Հայոց Ազգային խորհրդի ֆ. 223, ց. 1, գ. 60, թ. 1-2: Փաստերի իսկությունը հաստատվում է Վրաստանում Ռուսական ազգային խորհրդի նախագահ Ֆ. Լեբեդևի նամակում, (նույն տեղում, թ 32): Այդ տխած դեպքերի

մասին համառոտ հիշատակում են նաև վրաց հեղինակները, (տես՝ А. Ментешашвили, Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии, 1917-1921 гг. Тб., 1987, с. 131):

14. ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 116, թ. 15, (ռուս.):1919 թ. հունվարի 26-ին վրաց զինվորականները ցրել էին Սոչիի ռուս բնակչության ժողովը, որը հավաքվել էր իր ազգային խորհրդի նոր կազմը ընտրելու համար (Хроника: Разгон русского собрания в Сочи, газета "Закавказское слово", Тифлис, 01. 02. 1919, №12).
15. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 7 (ռուս.): Բաթումի մարզում Վրաստանի կառավարության ներկայացուցիչ Դ. Թոփուրիձեն, ելնելով Անտանտի երկրների լիազորների հետ զրույցներից, 1918 թ. դեկտեմբերի 19-ին զգուշացնում էր իր ռազմական նախարարին, որ «Հանրապետության ներսում անհրաժեշտ է զերծ պահել բնակչությունը էքսցեսներից և վրեժից [հայերի նկատմամբ]: Այդ տեսակի երևույթները կլինեն կործանարար և՛ մեր հումրավի համար, և՛ առավելապես վնասակար, քան անհաջողությունը ռազմադաշտում» (Я. Шафир, Очерки грузинской жиронды, Москва-Ленинград, 1925, с. 102):
16. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 9 (ռուս.):
17. Թեև մեկ այլ փաստաթղթում Ա. Հակոբյանը տրտնջում էր, որ երկար ժամանակ Խորհուրդը ծանր բեռ էր տանում տեղի հայերին զերծ պահելով վրացական իշխանության դեմ բաց ելույթից, (ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 9 շրջ., ռուս.):
18. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 12-12 շրջ. (ռուս.):
19. Նույնը, թ. 9-9 շրջ. (ռուս.):
20. Նույնը, թ. 13-13 շրջ. (ռուս.):
21. ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 140, թ. 3,4 (ռուս.); նույնը, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 2-3 (ռուս.):
22. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 14 (ռուս.):
23. Նույնը, թ. 9 շրջ. (ռուս.):
24. ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 140, թ. 3,4 (ռուս.):
25. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 2-3 (ռուս.):
26. Նույնը, թ. 9 շրջ. (ռուս.):
27. "Закавказское слово", 09. 02. 1919, №19.
28. ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 38, թ. 17-21, (ռուս.):
29. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 7 (ռուս.):
30. Նույնը, թ. 4-5 (ռուս.): Պարզ պատճառներով փաստաթուղթը չէր հրապարակվել Վրաստանի կառավարության կողմից, ի տարբերություն 1919 թ. հունվարի 5-ին ընդունած բանաձևի, որը դեռևս կողմ էր արտահայտվում Վրաստանի կառավարմանը, իսկ շրջանի ճակատագիրը նպատակահարմար էր գտնում լուծել միջազգային վեհաժողովում, (Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, изд. правительства Грузинской республики, с. 415-416, док. № 199):
31. Արտգործնախարար Ե. Գեգեճկորիի պնդմամբ Սոչիի շրջանում վրաց բնակչությունը կազմում էր 21-22 %, որոնք հիմնականում բնակվում էին

Պլաստունսկոյե գյուղում, (Документы и материалы.., с. 403. 409-410)։ Այլ տեղեկություններով նա չէր գերազանցում 5 տոկոսը, (Добровольческая армия и Грузия, "Закавказское слово", 14. 02. 1919, № 23)։

32. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 6-6 շրջ. (ռուս.)։
33. Անդամներ՝ Կուպրաշվիլի և Տեր-Գրիգորյան (ՀԱՍ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 9 շրջ., ռուս.)։ Նախկին սպա, սոցիալիստ-հեղափոխական Ս. Տեր-Գրիգորյանը վարում էր Կառավարության ներկայացուցչի գրասենյակի պետի պաշտոնը, իսկ մինչ այդ եղել էր Սոչիի քաղաքային դումայի և բանվորական պատգամավորների Խորհրդի գործկոմի նախագահ, (Деникин-Юденич-Врангель, Мемуары, с. 164-165)։
34. ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 116, թ. 22-27, (ռուս.)։
35. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 350, թ. 2 շրջ., թ. 3։
36. Տես՝ Բ. Սահյան, Աբխազիայի կարգավիճակի հարցը վրաց-աբխազական հարաբերություններում (1917 թվականից մինչև 1921 թվականի փետրվար), Երիտասարդ արևելագետների հանրապետական XXV գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզեր, Եր., 2004, էջ 33-35։
37. "Меморандум" Добровольческой армии английскому командованию по поводу взаимоотношений с Грузией, газета "Кавказское слово ",Тифлис, 05. 04. 1919, № 63.
38. Վրացական հեռագրային գործակալությունը 1919 թ. փետրվարի 10-ին հաղորդում էր, որ «գեն. Ղոնիևը իր զորամասով չկարողացավ անցնել Կամավորականների և հայերի օղակից», (թերթ «Աշակ», Թիֆլիս, 10. 02. 1919, № 32; թերթ «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 11.02.1919, № 31)։
39. XX դ. սկզբին Սոչիի և Սուխումի շրջանները դիտվում էին որպես մեկ աշխարհաքաղաքական և տնտեսական տարածք։ 1904 թ. Սուխումի շրջանից տարանջատվել էր Գագրայի տեղամասը և միացվել Սոչիի շրջանին։ 1917 թ. ՕԶԱԿՈՄ-ի անդամ Ա. Չխենկելին հարց էր բարձրացրել Ժամանակավոր կառավարության առջև այդ որոշումը վերանայելու նպատակով (ՎԿՊՊԱ, ֆ. 1818, ց. 2, գ. 135, թ. 30, 48, տես՝ А. Ментешашвили, Октябрьская революция... с. 116)։ 1918 թ. ամռանը տարածաշրջանում վրացական զորքերի հրամանատար գեն. Մազնիևի կարգադրությամբ Գագրան վերադարձվել էր Սուխումի շրջանի վարչական տարածքը։ Ն. թ. սեպտեմբերի 25-ին Ն. Ռամիշվիլին, համաձայն չլինելով այդ որոշմանը, առաջարկում էր վարչապետին վերանայել գեներալի կարգադրությունը, (ՎԿՊՊԱ Վրաստանի ներքին գործերի նախարարության ֆ. 1863, ց. 1, գ. 628, թ. 17 շրջ.)։ 1919 թ. փետրվարին Վրաստանի կառավարության տարածքային ներկայացուցիչ Մ. Խոչոլավան՝ ի նկատի ունենալով Գագրայի տեղամասի Պիլենկովոյի ենթաշրջանի զանգվածային հայ բնակչության կարիքները, ձեռնամուխ եղավ առաջարկել իր վերադասին կրկին վերամիավորելու այն Սոչիի շրջանին, (ՎԿՊՊԱ ֆ. 1861, ց. 2, գ.116, թ. 27, ռուս)։ Վրաստանի և Կամավորական բանակի միջև տարանջատման գիծը, Մեխադիր (այժմ՝ Խաշուփսա) գետի վրայով, պահպանվեց որպես Վրաստանի ԽՍՀ և ՌՍՖՍՀ-ի սահման մինչև 1929 թ., որից հետո Խաշուփսա և Փսոու գետերի արանքում ընկած հայաբնակ տարածքը ընդգրկվեց Աբխազիայի կազմը՝

Գագրայի շրջանի մեջ, (Г. П. Лежава, Изменение классово-национальной структуры населения Абхазии, Сухуми, 1989, с. 16, 34):

40. Сообщение военного министерства,"Закавказское слово",12.02.1919, № 21. Սոչիի միջադեպը, «Մշակ», 13. 02. 1919, № 34: Վրաց զինվորականների գործերից տուժած հայ գյուղացիների աջակցությունը «սպիտակներին» չէր ժխտում Ա. Հակոբյանը, (Սոչիի շրջանի Հայոց խորհրդի դիմում, թերթ «Աշխատավոր», Թիֆլիս, 25. 03. 1919, № 57):
41. Բ. Մախյան, Համշենահայերի զորամասը Կամավորական բանակի շարքերում (1919-1920թթ.), «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», Եր.,2005, էջ 122-126:
42. ՀՀ ԱԳ նախարարին հղած նամակում նա ներկայանում էր, որպես Սոչիի շրջանի՝ Պիլենկովո և Գագրա ավանների ներկայացուցիչ, (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 14):
43. ՀԱԱ. ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 15:
44. Նույնը, գ. 35, թ. 3:
45. Նույնը, գ. 409, թ. 52 (շրջ.), թ. 53:
46. "Закавказское слово", 25. 02. 1919, № 30.
47. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 350, թ. 3: Հակահայկական քաղաքականության արձագանքը պարզ երևում է 1922 թ. հրատարակած գնդապետ Ն. Վ. Վորոնովիչի հուշերում: Նա գրում էր, թե իբր «Սոչիի շրջանի գյուղացիության միջավայրում չկար Կամավորական բանակի այլ կողմնակից՝ բացառությամբ վրացիներին ատող հայերի: Կամավորականների գործակալները, օգտագործելով հայերի և վրացիների միջև թշնամությունը, կապ էին հաստատել տեղի դաշնակցականների կոմիտեի հետ, որոնց միջոցով նախապատրաստում էին հայերի ելույթը ընդդեմ վրացական տիրապետության: Թեպետ կամավորականները հարձակվեցին ավելի վաղ, քան բռնկվեց ապստամբությունը, հայերի ջոկատները աջակցելով նրանց՝ հարվածեցին վրացական զորքերի թիկունքին», (Н. В. Воронович, "Зеленые" повстанцы на Черноморском побережьи, Деникин-Юденич-Врангель, Мемуары, с. 162,164): Հայերի դերի մասին ոչինչ չի ասում Կամավորական բանակի գեն. Լուկոմսկոյը, նշելով, որ. «փետրվարի 4-ին վրացական զորքերը կատարել էին անբարյացակամ (՞) գործողություններ մեր դեմ և գեներալ Դենիկինը հրամայեց անցնել հարձակման և գրավել Սոչին», (Деникин-Юденич-Врангель, Мемуары, с. 99): Պարզ է, որ շրջանի պատասխանատու վրաց պաշտոնյաները արդարանալու կարիք ունեին անսպասելի պարտության համար, թեև ժամանակակիցներին հայտնի էր տեղում վրացական զորքերի պետ՝ գեն. Ղոնիևի կատարյալ ապաշնորհությունը ռազմական ոլորտում, (Н. В. Воронович, "Зеленые" повстанцы.., с. 162): Սոչիի իրադարձությունների պատճառով Թիֆլիսում 1920 թ. հուլիսի 30-ից օգոստոսի 2-ը տեղի ունեցավ դատ: Սոչիի և Սուխումի շրջաններում վրացական զորքերի հրամանատարությունը մեղադրվում էր ծառայողական անփութության մեջ: Դատի ժամանակ խոսք եղավ նաև հայերի մասին: Դատախազի հարցին՝ մի՞թե եղել էին բռնություններ հայերի նկատմամբ, նախկին ռազմական նախարար Գեորգաձեն պատասխանեց. «Եթե եղել են, ապա առանձին դեպքեր»: Իսկ երկրորդ հարցին, թե արդյո՞ք

Կամավորականների առաջխաղացումը պայմանավորված էր վրաց զինվորների անկարգություններով, վկայի պատասխանը եղավ. «Այդպես էին բացատրում անգլիացիները», (Газета "Слово", Тифлис, 03.08.1920. №173): Բրիտանական ռազմական Միսիայի պետ Բրիգսը հրավիրել էր արտգործնախարար Ե. Գեգեճկորիի ուշադրությունը Սոչիում վրացական զորքերի վատ պահվածքի վրա,(Բանակցությունների սղագրություն. Թիֆլիս, 23 մայիսի 1919 թ., տես՝ А. Ментешашвили, Из истории взаимоотношений грузинского, абхазского и осетинского народов, 1918-1921 гг. Тб., 1990, с. 29):

48. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 14 (ռուս.):
49. Նույնը, գ. 56, թ. 1-1 շրջ. (ռուս.):
50. Մանրամասն տես՝ Документы и материалы.., с. 391-407, док. № 196, с. 407-414, док. № 197. Դիվանագետ Զ. Դ. Ավալովը համարում էր, որ բանակցությունների ժամանակ վրացական բանագնացները՝ Գեգեճկորին և Մազնիևը, հավակնելով Սոչիի շրջանին, պաշտպանում էին անարդար սկզբունքներ, (З. Авалов, Независимость Грузии в международной политике 1918-1921 гг., Воспоминания и очерки, Париж, 1924, с. 198): Վրաց ներկայացուցիչների անզիջում դիրքորոշումը պայմանավորված էր Գերմանիայի աջակցությամբ, որի վկայություններից մեկն էր Կովկասում գերմանական տեղեկատվական բյուրոյի պետ պրոֆեսոր Է. Ցոպմայերի հայտարարությունը: «Ռուսական Կամավորական բանակի ղեկավար գեն. Ալեքսեևի սպառնալիքները,-ասում էր գերմանացին,-Վրաստանի համար անվնաս են, քանի որ հարձակման դեպքում գերմանական զորքերը պայմանավորվածությունների համաձայն կկանգնեն Վրացական հանրապետության սահմանների պաշտպանությանը, իսկ ուկրաինական զորքերը կհարվածեն գեն. Ալեքսեևի բանակի թիկունքին», ("Кавказское слово", 05.10. 1918, № 213.):
51. ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 28, թ. 28-30 շրջ., (ռուս.):
52. ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 26, թ. 38-40, (ռուս.):
53. Деникин-Юденич-Врангель, Мемуары, с. 163.
54. ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 28, թ. 91-93, (ռուս.): Տեղեկացնելով համագումարի որոշումների մասին Գ. Անջափարիձեն չէր թաքցնում, որ այն հրավիրվել էր իր կարգադրությամբ ("Кавказское слово", 06.12. 1918, № 264): Դեռևս 1918 թ. սեպտեմբերին Անջափարիձեն հայտնում էր իր կառավարությանը, որ նախաձեռնում է միջոցներ Սոչիի շրջանի բնակչության կողմից Վրաստանի օգտին արտահայտվելու համար (ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 28, թ. 28-30 շրջ): Նաև տես՝ "Резолюция граждан г. Сочи о присоединении к Грузии, 20 сентября 1918г.",(Документы и материалы.., с. 390, док. № 195): Այդ ամենը հակասում էր 1919 թ. փետրվարի 8-ին Ն. Ժորդանիայի ելույթում հնչած փաստերին: «Սոչիի շրջանը մենք գրավել էինք ժամանակավոր,-ասում էր վարչապետը,-և մենք հայտնում էինք, որ պատրաստ ենք հեռանալ, եթե չեն տուժի տեղի բնակչության շահերը: Մենք առաջարկել էինք անգլիական հրամանատարությանը վերահսկողության վերցնել շրջանը և չսպասելով դրական պատասխանի սկսեցինք նահանջել: Սակայն անգլիացիները առաջարկեցին մեզ մնալ մինչև խաղաղարար

կոնֆերանսում հարցի վճռելը: Այս գոտում գտնվելը ծանր բեռ էր մեզ համար և՛ տնտեսական, և՛ քաղաքական տեսակետներից: Մենք պատրաստ էինք հանձնել շրջանը Կուբանի կառավարությանը (թեև 1918թ. Եկատերինոդարի բանակցություններում վրաց ներկայացուցիչները կտրուկ մերժեցին դրա հնարավորությունը - Բ.Մ.): Սակայն տեղի բանվորները, գյուղացիները ու սոցիալ-ժողովրդավարականները հայտնում էին, որ Դենիկինը անընդունելի է իրենց համար և մնալու խնդրանքով մեզ դիմել էին բազմաթիվ պատվիրակություններ», (Н.Н. Жордания, За два года (1.03.1917-1.03.1919), Статьи и речи, Тифлис, 1919, с. 199): Այս «անշահագրգիռ» դրվածքը ժխտում էր Ե. Գեգեճկորին ասելով, թե. «Սոչիի շրջանի վերաբերյալ ես պարտավոր եմ հայտարարել, որ մենք չենք հրաժարվում մեր հավակնություններից» (Վրաստանի Հիմնադիր ժողով, 17 ապրիլի 1919 թ., "Кавказское слово", 25.04.1919, № 75):

55. Деникин-Юденич-Врангель, Мемуары, с. 100.
56. Там же. Վրաց պատմաբանները գրում են, թե «Պատահաբար չէ, որ Դենիկինը ապավինել էր նվաճաց Սոչիի շրջանի հայկական ազգային խորհրդի «ծառայությանը», քանի որ ստանալ համաննման կեղծաթուղթ Աբխազիայի հայ բնակչության «պաշտոնական ներկայացուցիչներից» նա որևէ կերպ չէր կարող», (Д. Гамахария, Б. Гогия, Абхазия - историческая область Грузии (исторические документы, материалы, комментарии с древнейших времен до 30-х годов XX века), Тб., 1997, с. 91):
57. Д. Гамахария, Б. Гогия, նշվ. աշխ., էջ 90-91:
58. В. Фавицкий, Зеленая армия в Черноморье, "Пролетарская революция", Исторический журнал Испарта, № 8-9, 1924, с. 52, схема № 2.
59. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 1 շրջ:
60. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 3, 4 (ռուս.):
61. Նույնը., թ. 5 (ռուս.):
62. Նույնը, թ. 11-12 (ռուս):
63. «Ինքնավար Աբխազիայի» ներկայացուցչական մարմին (Տես՝ Բ. Մախլյան, Աբխազիայի կարգավիճակի հարցը.., էջ 33-35):
64. Г. А. Дзидзария, Очерки истории Абхазии, Тб., 1963,с. 231-232. Այս բողոքը ժխտում է այն տեսակետը, որ հայ-վրացական «պատերազմից երկու-երեք ամիս անց վերականգնվեցին Վրաստանի հայության իրավունքները, և նրանց կյանքը մտավ նորմալ հունի մեջ», (Կ. Սարդարյան, Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ, Եր., 2002, էջ 92): Նույնիսկ 1919 թ. նոյեմբերին «Խաղաղության պայմանագրի» գործելուց հետո Վրաստանի Հայոց խորհրդի անդամները արձանագրում էին, որ «հայ բնակչության նկատմամբ շուրջ երկու տարի տարվող անվստահության և ճնշման քաղաքականության արդյունքում գրեթե ամեն հայ դիտվում է որպես պետության թշնամի...Անկախ Վրաստանի գոյության երկու տարում հակահայությունը ոչ թե թուլացել է, այլև հակառակը՝ ներգրավել է վրացական հասարակության նորանոր շրջանակներ, վերածվելով մտավորական երևույթից զանգվածայինի: Արմատները պետք է փնտրել կոնկրետ պատմական և քաղաքական պայմաններում որոնցում կայանում է Վրաստանի պետական անկախությունը...Վրացական ժողովրդի ազգային

գիտակցության ամրապնդման նպատակով և ազգային պետության կառուցման վրա նրա մտքի սևեռման համար, վրացական մամուլը օգտագործում է ներքին թշնամու գաղափարը՝ հանձինս ազգային փոքրամասնությունների», (Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի «Հուշագիր», ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 140, թ. 2, 6, ռուս.):

65. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 10, (ռուս.): Մանրամասն տես՝ Բ. Մախյան, Քաղաքական իրադրությունը և համշենահայերի կացությունն Աբխազիայում 1918-1920 թթ.,«Պատմա–բանասիրական հանդես», 2005, № 1. էջ 125-140:

СУРЕН МАНУКЯН

ЗИГЗАГИ РАЗВИТИЯ ИСЛАМИСТСКОГО ДВИЖЕНИЯ В СИРИИ В 1982-2000 ГГ.

Сирийский исламизм в 1980-х гг. Агония движения

В 1976-82 гг. Сирия пережила период противостояния между исламистами и режимом Баас. Столкновения, охватившие почти все города Сирии и унесшие жизни тысяч жителей страны были настолько напряженными, что некоторые исследователи даже называют этот период истории Сирии гражданской войной. Решающее противостояние произошло в феврале 1982 г. в наиболее консервативном суннитском городе Хама, который к тому времени оставался единственным оплотом исламистов. Власть в Хаме была захвачена сторонниками организации Братьев-мусульман и посланные на расчистку города от исламистов 12 тысячные подразделения сирийской армии подвергли артиллерийскому огню старые кварталы города - Баруди и Кайлани, где находились основные опорные точки исламистов. Старая часть города была полностью разрушена. Число погибших в результате массированного огня по разным оценкам составило от трех тыс. (по оценкам правительственных источников) до 10-30 тыс. по данным западных СМИ[1].

Восстание в Хаме, ставшее апогеем противостояния, стало также и началом постепенного угасания исламского радикализма в стране. Власти нанесли оппозиции не только физический, но также и психологический удар. Это дает повод Х.Лобмейеру утверждать, что “сирийская оппозиция проиграла не сражение, а войну”[2]. По мнению И.Рабиновича “События в Хаме сопровождавшиеся обдуманной жестокостью со стороны правительственных войск, были сознательным действием, направленным на преподание урока любой оппозиционной группе в том случае, если она попытается противопоставить себя режиму”[3].

Победа режима была не только физической, но также и идеологической. В этот период светский арабизм одержал победу над

исламизмом. Исламисты в значительной степени потеряли симпатии населения, которое просто устало от систематического, безсмысленного насилия. Разрыв между ними и обществом стал огромным, а вооруженная борьба окончательно стала непопулярной.

Исламисты в свою очередь пытались оправдать тактику насилия и призвать к консолидирванному выступлению против режима. Для этого сразу после хамских событий Командование исламской революции в Сирии выпустило серию заявлений. Например, вышедший в Вене номер газеты "аль-Назир" писал: "Жители Хамы восстали с оружием в руках. Почему это случилось? Это был единственный способ защитить нацию".[4] А 16 февраля был опубликован призыв руководителей исламистов Саида Хаввы и Мухаммеда аль-Байануни к населению страны начать забастовку в знак солидарности с восстанием. Однако призыв не получил отклика, и жители остальных городов сохранили нейтралитет. Несмотря на мелкие столкновения, произошедшие между полицией и населением в Латакии, Алеппо и Дамаске, широкомасштабного выступления в поддержку исламистов не произошло. Разгром исламистов остался практически незамеченным и в правительственных кругах арабских стран[5].

Исламистское движение Сирии стремительно вступало в полосу явного упадка и отчуждения.

Ярким свидетельством этого кризиса стали многочисленные расколы внутри движения, которые были следствием различных, часто абсолютно непонятных и странных форматов оппозиционных объединений, в которых участвовали исламисты.

Первой попыткой консолидации и приложения усилий для хотя бы частичного восстановления организационной структуры и влияния оппозиционного движения в стране стало образование уже 11 марта 1982 г. нового антиасадовского блока, названного Национальным альянсом за освобождение Сирии (аль-тахалюф аль-ватани ли-тахрир сурия), который включал в себя организации, входившие в ИФС[6] (в том числе Ассоциация Братьев-мусульман) и около двух десятков маленьких секулярных группировок - насеристов, социалистов и проиракских баасистов. Ведущую роль в новом объединении играли Братья-мусульмане, партия Баас-региональное командование, группа Салах ад-дина аль-Битара и Арабский социалистический союз-фракция Мухаммада Дарраа. Коалиция была сформирована в Багдаде[7], при активном участии Ирака, который стремился получить дивиденты от сохраняющегося обострения внутренних проблем Сирии, союзника Ирана, с которым Багдад находился в состоянии войны[8].

Принятая новым объединением декларация призывала “использовать все возможные средства, в особенности вооруженную народную борьбу для свержения нынешнего диктаторского режима”. Режиму вменялись в вину не только нападки на исламские ценности, но также и “разделение Ливана на несколько сектантских государств”, давление на ООП и передача Голанских высот Израилю[9].

Вхождение ИФС в подобную коалицию, показывает чрезвычайно бедственное положение в котором он находился. Это был своеобразный шаг отчаяния, совершенный для выживания Ассоциации Братьев-мусульман. С точки зрения идеологических концепций было совершенно необъяснимо, например, объединение исламистов с проиракскими баасистами, хотя один из лидеров исламистов Аднан Саад ад-Дин и заявлял в интервью журналу “Аль-Ватан аль араби”, что иракская партия Баас “опирается на набожных и верующих людей” и этим она “радикально отличается своим содержанием и ориентацией” от сирийской[10]. Однако эти заявление были лишь слабой и неудачной попыткой найти объяснения своих труднообъяснимых поступков. Вместе с тем, явно смягчается тональность программных установок и проповедей лидеров организации. Целью исламистов сейчас уже объявляется “создание свободного, народного государства с равными для всех граждан правами и объязанностями”[11]. После встречи Аднана Саад ад-Дина с представителями американской администранции в Аммане, стало ясно, что целью подобного “оппортунизма” является обеспечения финансовой поддержки движения. Примечательно, однако, что западные эксперты считали этот Альянс даже большей угрозой режиму Асада[12], чем “строго исламскую” фракцию радикального исламиста Аднана Укле. Это еще раз подтверждает слабость исламского движения в Сирии в целом.

Создание этого нового альянса, однако, было малоэффективным и даже наоборот стало причиной очередного раскола в организации Братьев-мусульман. Объединение с группировками, исповедующими резко секулярные взгляды, было абсолютно неприемлемо для течения молодых, радикальных членов организации, возглавляемого Аднаном Укле. Кроме того взаимоотношения с США провозглашались ими уступкой империализму. Аднан Укле подвергал критике также союзнические отношения с Ираком, страной, которая с 1980 г. находилась в состоянии войны с единственным с мире исламским государством – Ираном[13]. На ряд критических заявлений, сделанных последним, Аднан Саад ад-Дин ответил комюнике, опбликованным в Париже 11 сентября 1982 г. согласно которому Аднан Укле был исключен из организации Братьев-мусульман Высшим командованием

исламской революции Сирии[14], после чего вместе с единомышленниками попробовал продолжить борьбу собственными силами в одиночку. Политика союза с секулярными организациями была плохо воспринята и зарубежными исламистами. Это выразилось в уменьшении финансовой и материальной помощи поступающей из-за рубежа.

90-ակա թվականներին արդեն վերևում լուսաբանված իրադարձությունների ընթացքում Հարավային Քուրդիստանում իսկական ինքնավարություն է ձեռք բերվել և պայքարը թևակոխել է զարգացման նոր փուլ: Շատ կարևոր է ընդգծել, որ նրա բնույթը փոխվել է և այն մղվում է ոչ թե ինքնավարության ձեռքբերման, այլ արդեն ձեռք բերված ինքնավարական դեմոկրատական իրավունքների պաշտպանության և Իրաքի ֆեդերատիվ պետական համակարգում նրանց օրինականության ճանաչման համար: Քաղաքական այս աննախադեպ իրավիճակը հանդիսանում է ինքնավարության բարեհաջող գործընթացի գրավականներից մեկը:

Քրդական ինքնավարական ինչպես և յուրաքանչյուր ազգային ւազատագրական շարժման համար մեծ նշանակություն ունի նաև արտերկրյա կամ միջազգային դիրքորոշման ու օգնության պարագան: Այս տեսակետից քրդական ազգային ազատագրական շարժումը տասնամյակներ շարունակ գտնվում էր բացառիկ անբարենպաստ պայմաններում: Ի տարբերություն գրեթե բոլոր ազգային ազատագրական շարժումների, քրդականը մի շարք պատճառներով զրկված էր որևէ պետության կամ պետությունների խմբի պետական մակարդակով օգնությունից: Եթե այն տեղի ուներ, ապա դուրս չէր գալիս ժամանակավոր քաղաքական ու ռազմական շահարկումների շրջանակներից: Վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում քրդական ինքնավարական շարժումը հիմնականում դուրս եկավ այդ յուրօրինակ «շրջափակումից»: Ներկայումս քրդական ազգային ինքնավարական շարժումը վայելում է գրեթե բոլոր մեծ տերությունների (բացառությամբ՝ թերևս Չինաստանի) համակրանքն ու բարոյա-քաղաքական աջակցությունը, կամ արժանանում դրական չեզոքության դիրքորոշման: Եվրոպական գրեթե բոլոր պետությունները բացորոշ պաշտպանում են քրդական ինքնավարական շարժումն ու առաջադրած նպատակները: Այդ հիմնահարցը մի շարք երկրների պառլամենտների (Շվեդիայի, Բելգիայի, Հունաստանի, Իտալիայի, Իսպանիայի և այլն) քննարկման է արժանացել՝ համապատասխան

դրական որոշումներով: Հատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ ԱՄՆ-ը, Կանադան և եվրոպական գրեթե բոլոր երկրները դրական կեցվածք ունեն Իրաքի պետության ֆեդերատիվ համակարգի հարցում, որը քրդական ինքնավարության անդառնալի բնույթի շատ կարևոր գործոն է:

Առանձնահատուկ նշանակություն ունի քրդերի ինքնավարության նկատմամբ մուսուլմանական արևելքի կեցվածքը: Այն միանշանակ չէ. հիշարժան է այն փաստը որ քրդական ինքնավարական շարժման ուղջ ժամանակաշրջանում ինչպես Իրաքում, այնպես էլ արաբական այլ երկրներում հակաքրդական կեցվածքի ուժերից բացի գրեթե միշտ առկա են եղել հասարակական քաղաքական հոսանքներ, որոնք դրականորեն են վերաբերվում քրդերի ազգային իրավունքների ճանաչմանը: Այդ կեցվածքը որոշ տարբերակներով դրսևորվել է նաև որոշ երկրների պետական քաղաքականության մեջ (Լիբիա, Եգիպտոս, Հորդանան, Թունիս և այլն): Հիշատակության է արժանի 1998թ. մայիսին քրդերի և արաբների լայն կազմով պատգամավորների մասնակցությամբ Կահիրեյում կայացած արաբա-քրդական հարաբերություններին նվիրված կոնֆերանսը, որի աշխատանքները և կայացած որոշումը տոգորված էին արաբաքրդական հարաբերությունների մեջ վտխըմբռնման ու բարեկամության գաղափարի զարգացման ու քրդական ինքնավարության հիմնահարցի արդարացի կարգավորման ոգով: Կարևոր է ընդգծել, որ չնայած քրդական ազատագրական շարժման երկարատև դրամատիկ բնույթին և քրդերի դեմ սադդամյան ռեժիմի գործադրած դաժան միջոցներին, դրանք չհասցրին արաբ և քուրդ ժողովուրդների միջև թշնամանքի սերմանմանը, ինչը հատկանշական է նմանօրինակ ազգային կոնֆլիկտային տարածքների համար: Ինքնավար շրջանում արաբական մտավորականության և հասարակական այլ խավերի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի են ունեցել բազմաթիվ տարբեր բնույթի միջոցառումներ, արաբ նկարիչների ցուցահանդեսներ, արվեստի գործիչների ելույթներ: Այդ կարգի միջոցառումների մեջ ամենանշանակալին թերևս արաբական պոեզիայի խոշորագույն ներկայացուցիչ՝ Մուհամեդ Մահդի ալ-Ջավահիրիի ծննդյան 100-ամյակին նվիրված լայնածավալ հանդիսությունները էին, որոնք անցան արաբական մի շարք երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ: Էրբիլում և Սուլեյմանիեյում կանգնեցված են պոետի Իրաքիայում պատրաստված բարձրարվեստ արձանները:

Հատուկ կարևորություն ունի քրդական ինքնավար ազգային պետական համակարգի փաստական միջազգային լայն ճանաչումը: Ինքնավար շրջանը իր ներկայացուցչությունները ունի եվրոպական գրեթե բոլոր երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ճապոնիայում, Հարավային Կորեայում և այլուր: Հատկանշական է, որ չնայած Թուրքիայի, Իրանի

և Սիրիայի քրդական ինքնավարական շարժման և ինքնավար շրջանի պետական համակարգի նկատմամբ հայտնի ոչ բարեկամական կեցվածքին. այդ երկրներում գործում են քրդական ինքնավարության ներկայացուցչություններ, որոնք կատարում են յուրօրինակ միջպետական կապերի ապահովման դեր: Հարավային Քուրդիստանի ինքնավար շրջանի՝ փաստականից իրավական ճանաչման գործընթացի կարևոր դրսևորում է այն ուշագրավ փաստը, որ նրա ղեկավարներ՝ Մասուդ Բարզանին, Ջալալ Թալաբանին, Նեճիրվան Բարզանին, քրդական պառլամենտական պատվիրակությունները բազմաթիվ այցելություններ են կատարում աշխարհի ամենատարբեր երկրները և ընդունվում պետությունների և կառավարությունների ղեկավարների մակարդակով՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Ռուսաստանում, Ճապոնիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, արաբական երկրներում և այլուր: Քրդական ինքնավարության փաստական ճանաչման վկայություն է վերը նշված բարձր մակարդակի հանդիպումները քուրդ ղեկավարների և Թուրքիայի, Իրանի և Սիրիայի պետության ու կառավարության ղեկավարների միջև: Ինքնավար շրջանը առևտրա-տնտեսական զգալի ծավալի կապեր ունի վերը նշված շատ երկրների, այդ թվում և Չինաստանի հետ:

Համեմատության կարգով հիշեցնենք, որ նման մակարդակի ու ծավալի արտաքին քաղաքական և տնտեսական կապեր չունի այսպես կոչված «չճանաչված» կոնֆլիկտային ազգային-էթնիկական գոտեթե ոչ մի տարածք:

Որպես իսլամական արմատականների տեռորիստական գործունեության թիրախներից մեկը Քուրդիստանի ինքնավար գոտին բնականաբար գտնվում է միջազգային հակատեռորիստական ուժերի համակարգում: Այս պարագան ինքնաբերաբար նպաստում է ինքնավար շրջանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական գործընթացների բնույթի և քաղաքական կողմնորոշման պատշաճ ըմբռնմանը: Չնայած Հարավային Քուրդիստանի շարժման ինքնավարական բնույթին, նրա ճակատագրի համար կարևոր նշանակություն ունի միջազգային պետական ու հասարակական կեցվածքը: Այս առնչությամբ ուշագրավ է, որ «սառը պատերազմի» համար հատկանշական համաշխարհային առճակատման ժամանակաշրջանից հետո առաջին անգամ ձևավորման գործընթացում է գտնվում յուրօրինակ առճակատման նոր տարբերակ՝ մի կողմից թափ առնող (առավելապես իսլամի դրոշի ներքո) գլոբալ տեռորիզմի, մյուս կողմից հակատեռորիստական ուժերի համակարգի միջև: Վերջինս իր կազմով ավելի լայնածավալ է և ներառնում է ինչպես Արևմտյան երկրների ամբողջությունը, այնպես էլ նախկին ՍՍՀՄ-ի տարածքի երկրներ և իսլամական աշխարհի շատ պետություններ: Ինքնավար շրջանի այս համակարգում գտնվելը անտարակույս, դրական դեր ունի

նրա արդի կարգավիճակի զարգացման և հետագա ճակատագրի համար:

Քրդերի ազգային ինքնավարության օրինականացումն ու պահպանումը ի լրացումն թվարկված գործոնների թելադրվում է նաև պատմության դրամատիկ դասերով, որոնցից գլխավորն այն է, որ անհնարին է քրդական հիմնահարցի ուժի դիրքերից լուծումը: Եվ հակառակ հիմնահարցի լուծման հակառակորդների պնդումների, ոչ թե նրա լուծումը, այլ չկարգավորված վիճակն է հանդիսանում տարածաշրջանի անկայունության պատճառը:

Պատշաճը մատուցելով քրդական ինքնավարության նպաստավոր պայմաններին ու զարգացման հնարավորություններին, այնուհանդերձ, հազիվ թե հարկ կա գերագնահատելու նրանց նշանակությունը: Ազգային ինքնավարության հաստատմանն ու գոյատևմանը խանգարող գործոնները սպառնալից են և կարող են նրա խաթարման պատճառ դառնալ: Ի նկատի ունենալով այդ պարագան ազգային ինքնավար շրջանը ստեղծել է և՛ թվաքանակով և՛ մարտունակության մակարդակով ինքնապաշտպանության ժամանակակից պահանջները բավարարող ուժեր, որոնց գոյության օրինականացման, գործելակերպի խնդիրները հանդիսանում են իրաքյան նոր իշխանությունների և քրդական կողմի քննարկման առարկան:

Քրդական ինքնավարության հիմնահարցն այժմ արդեն գտնվում է մեծ տերությունների Մերձավոր և Միջինարևելյան քաղաքականության և միջազգային հակաահաբեկչական կոալիցիայի հետաքրքրությունների շրջանակներում: Նրա աննախադեպ բնույթը մուսուլմանական արևելքում և գործընթացի բարդությունները հավանաբար թելադրում են այդ ինքնավարության գոյատևումն ապահովող համապատասխան միջազգային երաշխիքներ:

SHAKRO MHOYAN

PROBLEMS OF SELF-DETERMINATION OF KURDISH IN MODERN IRAQ

Complicated process of self-determination of Kurds in Iraq is one of the most important modern issues in the Middle East.

There are two sets of aspects that could determine the fate of Kurdish autonomy in Iraq. Negative set consists of partitioning of Kurdistan and active anti-Kurdish policy of neighboring countries, radical Islam with its clear stance against autonomy, different approach of Iraqi political forces towards Kurdish problems and others.

There are also important positive aspects helping to ensure non-reversibility of self-determination of Kurds. At this time Kurds are struggling not for the right of self-determination in Iraq but for legitimization of national and democratic rights they

enjoy. Dcmocratic social, economic and political reforms carried out in autonomous region, recognition and support to these reforms by international community, the possibility to defend achieved status and other factors are the basis of positive foresight of political process in South (Iraqi) Kurdistan.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Коровиков А., Исламский экстремизм в арабских странах, М., 1990, с. 3.
2. Спец. заявление ПСК 19.09.2001г. о деятельности "Джунуд аль ислам", стр. 1.
3. Նույն տեղում:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Օսմանյան կայսրությունում կատարված հայոց կանխապես ծրագրված ցեղասպանության միջազգային ճանաչմանը ընդդիմանալիս պաշտոնական Անկարան հաճախակի ծանուցում է, թե Թուրքիայի պետական արխիվները բաց են հիշյալ խնդիրն ուսումնասիրող մասնագետների համար: Թե այդ հայտարարությանը նախորդող ինչ աշխատանք է կատարվել արխիվային հավաքածուների նյութերի մշակման ու ընտրության մարզում՝ մեզ հայտնի չէ, բայց որ 1915-1916թթ. ոճրագործության հղացման, միջոցների կիրարկման և մանավանդ կազմակերպիչներին վերաբերող վավերական նյութերի նշանակալի մասը 1919-1920 թվականներին արդեն գողացվել ու ոչնչացվել է՝ վկայված է պաշտոնապես գործող թուրքական Պատերազմական ատյանի 1919թ. ապրիլ-մայիս ամիսների նիստերի արձանագրություններով: Հայտնի են նաև գողացողներից մի քանիսի անունները՝ պետական ապահովության նախկին տնօրեն Ազիզ բեյ, Իթթիհատի և Թեշքիլաթը մախսուսեի փաստաթղթերը Նուրը Օսմանիեի կենտրոնից Գերմանիա տարած դոկտ. Նազըմ, Պատերազմական նախարարության շենքում գաղտնի թղթերի բնագրերի հարկաբաժնում գրասենյակ ունեցող Թեշքիլաթը մախսուսեի ղեկավարներից փոխգնդապետ Հյուսամեդդին բեյ և այլք: «Կոստանդնուպոլսոյ մէջ գործող թրքական Պատերազմական ատեանը հայերու տարագրութեան և ջարդերու վերաբերեալ պետական կարևոր փաստաթուղթերու տրցակ մը ձեռք բերած էր 1919-1920-ին, - գրում է Ատյանի նիստերի արձանագրություններն ուսումնասիրած Հայկազն Գ. Ղազարյանը, - հակառակ անոր, որ ղեկավար թուրք ոճրագործները, իրենց փախուստէն առաջ, յաջողեր էին փախցնել, պահել կամ անհետացնել կարևոր մաս մը վաւերագրեր, արձանագրութիւններ, ծածկագիր հեռագիրներ, տոմարներ, հաշիւներ, փոխանակուած հաղորդագրութիւններ, շրջաբերականներ՝ նախարարութեանց, վալիներու, միւթեսարըֆներու, Թեշքիլաթը մախսուսէի պատասխանատու քարտուղարներու, զինուորականներու, ժանտարմըրիի հրամանատարներու թուղթեր: Այդ բոլորը

կը վերաբերէին հայերու վրայ գործուած ցեղասպանութեան աքարքներուն»[1]:

Այնուամենայնիվ՝ Պատերազմական ատյանի քննիչ հանձնախումբը «յաջողած էր, բացի մաս մը վաւերագրերէ, ձեռք անցընել նաև հարիւրաւոր երդուեալ վկայութիւններ, խոստովանութիւններ, պետական հեռագիրներ, որոնք դասաւորած էին 296 թղթածրարներու (տոսիեներու) մէջ»: Ցավոք, դատական գործավարության հիմք ծառացած այս թղթածրարներն էլ անխարդախ պետական պահպանության չհանձնվեցին: Քեմալական նոր իշխանությունները փաստորեն կասեցրին դատարանական քննությունները, առգրավեցին եղած նյութերը և տեղափոխեցին «նախ Պրուսա, ապա՝ Անգարա, ուր թուրք փրոֆեսորները կուսումնասիրէին իրենց գործին գալիք փաստերը և զանազան հրատարակութիւններ կը կատարէին անոնցմէ»[2]:

«Գործին գալիք» ասելով պիտի նկատի ունենալ երկու պարագա. նախ որ՝ երիտթուրքերի դատապարտությունը իբրև քաղաքական ուժի քեմալականները ընդունում ու կիրառում էին, ուստի Մուստաֆա Քեմալը տարիներ անց կարող էր ասել, թե նրանք (իմա երիաթուրքերը) պետք է պատասխան տան քրիստոնյաների կոտորածների համար[3], և ապա՝ ինքը Քեմալ փաշան փաստորեն շարունակեց նախորդ իշխանությունների գործը՝ կոտորածի ենթարկելով «հարյուր հազարավոր հայեր և հույներ»[4]: Հետևաբար քեմալականները բնավ խնդիր չունեին պահպանել քննիչ հանձնաժողովի կուտակած թղթածրարները կամ վարձելու գտնել ու ետ բերել գողացված փաստաթղթերը: Եղեռնից վերապրողների դատի պաշտպանությունը «Թուրքիան թուրքերինն է» կարգախոսի շրջանակների մեջ չէր տեղավորվում, ավելին՝ նոր իշխանությունները առիթը ներկայացած պահին պատրաստ էին շարունակել այն, ինչի համար պատասխանատու էին ճանաչում երիտթուրքերին:

Պատմական վկայություն բովանդակող աղբյուրների (պատմողական, վավերագրական, նյութական-հուշարձանային, գրական-բանահյուսական և այլն) դիտավորյալ ոչնչացումը կամ թաքցնումը ծանր հասարակական հանցանք է, որին երբեմն չեն հանդգնում դիմել նույնիսկ ժամանակին ամենակարող համարված անձեր: Եթե Պատերազմական ատյանը արձանագրած չլիներ, ապա պիտի դժվարանայինք հավատալ, թե երիտթուրքերն ու նրանց սև գարծը հայոց մնացորդաց հանդեպ շարունակողները չխորշեցին ծրագրված ցեղասպանության իրողությունը ներկայացնող վկայությունները ևս ոչնչացնել կամ ի չիք դարձնել: Այլ պարագաներ նույնպես գալիս են ապացուցելու, որ թուրքական կառավարող շրջանակաները իրապես ընդունակ են եղել նման կեղծարարական գործողության: Արդարև, արևմտահայոց շատ վանքերի ու եկեղեցիների ունեցած ձեռագրերից, այլազան բովանդակության փաստաթղթերից ու նույնիսկ տպագիր գրականությունից, կազմակեր-

պած սպանդից ու տարագրությունից հետո, գրեթե ոչինչ չի պահպանվել: Եթե նույնիսկ ենթադրենք, թե դրանք անխնամ մնալու պատճառով աստիճանաբար են քայքայվել-ոչնչացել, ապա անկարելի պիտի լինի նման վախճան վերապահել միջնադարյան ձեռագրերի երեք խոշոր հավաքածուների, որոնց հատորավոր նկարագրությունները ժամանակին հրատարակվել են: Խոսքը վերաբերում է Արմաշի դպրեվանքի (223 միավոր), Անկյուրո Կարմիր վանքի (323) և Կեսարիայի ս. Կարապետի վարժարանի (160) 716 հատոր բովանդակող հավաքածուներին, որոնցից ընդամենը մեկ-երկու միավոր է փրկվել[5]: Եթե որևէ պետություն կամ հանրություն միայն հայերեն ու հայկական լինելու պատճառով կարող է հարյուրավոր միջնադարյան ձեռագրական հուշարձան ոչնչացնել, ապա այլևս ավելորդ է խոսել հայոց ցեղասպանություն հավաստող փաստաթղթերի կամ վկայությունների պահպանման մասին: Երկրորդ պարագան այլ պետությունների (Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Իտալիա, Անգլիա, ԱՄՆ և այլն) դիվաններում պահպանված զեկուցագրերի ու վկայությունների հիրավի պատկառելի քանակությունն է, որոնց հատորավոր հրատարակությունները այսօր շատերին են հայտնի[6]:

Լիովին կարելի է պատկերացնել, թե կոտորածը գաղտնորեն նախապատրաստելու, գավառի իշխանությունները երանգավորելու, գործողության արդյունքների վերաբերյալ կենտրոնին զեկուցելու համար դեռ մինչև Պատերազմական ատյանի քննիչ հանձնաժողովի կողմից վավերագրեր ու վկայություններ հավաքելը ինչ քանակության գրագրություն պիտի գոյանար: Ուրեմն՝ բոլոր հիմքերը կան մտածելու, որ թուրքական արխիվների բացմանը նախորդել է նրանցում եղած նյութերի «պիտանին ու ոչ պիտանիին» ջոկելու և «մշակելու» տևական մի գործողություն:

Որքան էլ գաղտնի նախապատրաստվեր և անողոքությամբ իրագործվեր ոճիրը, անշուշտ կլինեին փրկվածներ, որոնք չէին հապաղի կատարվածի մասին տեղյակ պահել ազգային Պատրիարքարանին՝ նրա միջնորդությանն ապավինելու հույսով: Ցավոք, այդ մղձավանջային տարիների Պատրիարքարանի դիվանական նյութերը տակավին հայտնի չեն հայոց ցեղասպանությունն ուսումնասիրող գիտնականներին:

Զավեն պատրիարքի գրառումներից իրապես հայտնի է, որ զանազան ճանապարհներով այդպիսի գրություններ հասնում էին նրան[7]: Ավելին, 1919-ին Հայոց Քաղաքական ժողովի որոշմամբ ստեղծվեց հատուկ «Տեղեկատու դիւան», ուր պիտի կենտրոնանային «Հայաստանի և հայկական դատի վերաբերեալ հին թէ նոր ամէն կարգի վիճակագրութիւնները, ... *Հայ հալածանքներու, ջարդերու, տեղահանութեան վերաբերեալ բոլոր դրուագներն ու պատմութիւններ, կողոպտուած ազգային թէ անհատական շարժուն թէ անշարժ գոյքերու մասին վիճակագրական պատկերներ մասնաւորապէս վերջին տեղահանութեան միջոցին*

գործած չարագործութեանց մասնակցող գլխաւոր յանցապարտ թուրքերու մասին կարելիին չափ լիակատար տեղեկութիւններ, կենսագրական ծանօթութիւններ և անոնց յանցապարտութեան մասին քաղուած փաստաթուղթեր և վկայութիւններ ու իսլամացած երկսեռ հայութեան և յիշատակուած որբերու մասին վիճակագրութիւններ...»[8]: Եվ ահա, Ա. Ալպոյաճյանի և Կ. Նուրյանի հավաքած ու խնամքով մշակված դիվանի այդ նյութերը 1922թ. նոյեմբերին վերահաս վտանգից ազատելու համար ի պահպանություն ուղարկվում են Մանչեսթր Գրիգորիս եպս. Պալաքյանին, իսկ ապա Թորգոմ Գուշակյան պատրիարքի ջանքերով փոխադրվում Երուսաղեմ, «ուր կպալուէին խնամով»[9]:

1938-ին Զավեն պատրիարքը հատկապես Երուսաղեմ է գնացել՝ «աչքէ անցնելու համար Տեղեկատու դիւանի թղթածրարները... Մեծապէս անակնկալի եկայ տեսնելով հոն կատարեալ հաւաքածոյ մը վաւերագիրներու և արձանագրութիւններու 1918-1922-ի բոլոր կարևոր դէպքերուն»[10]:

Անհավատալի է, բայց փաստ, որ հայոց պատմության նոր ու նորագույն շրջանի համար բացառիկ կարևորություն ունեցող դիվանական այս ժողովածուն մինչև օրս անծանոթ է մնացել հայագետներին: Դիվանի բովանդակությունը պատկերացնելու համար ստորև Զավեն պատրիարքի հուշերից քաղելով բերում ենք Կ. Նուրյանի բնութագրությունն ամբողջությամբ.

«1. *Թուրքիոյ ընթացքը հանդէպ Հայոց՝ զինադադարէն սկսեալ* ներկայացնել «ստիպողական ըլլալով գրուած է մեծագոյն տեղը Դիւանի զբաղումներուն» «300 տեղեկագիրներով Բարձր Քոմիսէրութիւնները, ինչպէս նաեւ Հանրապետութիւնը եւ Ազգ. պատուիրակութիւնը տեղեկացած են այն բոլոր յարձակումներուն, որոնք Թուրքերու կողմէ կը գործածուին ընդդէմ Հայոց զինադադարէն սկսեալ, 292 ուրիշ տեղեկագիրներով, հայթայթուած են անհրաժեշտ փաստացի վաւերագիրներ, տեղահանութեան հեղինակներուն, զորս Թուրքերը կ'ուզեն արդարացնել...

2.*Ջարդեր ու տեղահանութիւններ*. Դիւանը կը հաւաքէ ... ջարդերու եւ տեղահանութեանց վրայ բոլոր այն տեղեկութիւնները, որոնք ստուգուած եւ հիմնուած են հաւատարիմ վկայութեանց վրայ: Արդէն հրատարակուած է ... գիրք մը Կեսարիոյ եւ ուրիշ մը՝ Տիարպէքիրի ջարդին վրայ. երրորդ եւ գեղեցիկ գործ մը Հայ կղերական նահատակներու վրայ ի մօտոյ մամուլին պիտի յանձնուի...

3.*Վիճակագրութիւններ*. ...Դիւանը ձեռնարկած է պատրաստութեանը հաւաքածոյի մը, որ պատկերացնէ Պատրիարքարանի թեմերուն պատերազմի վաղորդայնին ունեցած իրական վիճակը. այսինքն իւրաքանչիւր առաջնորդութեան եկեղեցիներուն, վանքերու, դպրոցներուն, ազգային սեփականութեանց եւ բնակչութեան թիւը:

4.*Հայաստանի մասին տեղեկութիւններ*. Դիւանը կը հաւաքէ... ազգային բրոքականտը շահագրգռող ամէն գործ: Անիկա բազմագրած ու ցրուած է երկրագործական տեղեկագիր Հայաստանի վրայ... Դիւանը կուսումնասիրէ հայկական հողին հանքային հարստութեանց վրայ ուսումնասիրութեան մը հրատարակութեան խնդիրը: Արեւելքի քաղաքակրթութեան մէջ Հայոց կատարած դերին վրայ շարք մը շահեկան գրքոյկներ պատրաստութեան մէջ են: Առաջինը այս շարքին «Les Armnniens et l'imprimerie» լոյս տեսած է:

5.Վաւերագիրներու հաւաքում եւ մատենադարան. Դիւանը կը հաւաքէ եւ կը դասաւորէ... բոլոր շահեկան վաւերագիրները Հայոց ընկերային եւ քաղաքական կեանքին: Այսպէս, Հայ ընկերակցութիւններու կամ պաշտօնական մարմիններու կողմէ հրատարակուած 600 է աւելի տեղեկագիրներ վիճակագրութիւններ եւ այլն, դասաւորուած են: ...Դիւանը ունի մատենադարան մը Հայոց մասին խօսող գործերէ բաղկացած: Այս գիրքերուն վրայ աւելցած են երկու հարուստ մատենադարանները՝ Տիար Հրանտ Ասատուրի եւ Տիար Թէոդիկի, որոնց պահպանութիւնը Դիւանին վստահուած է: Երկու մատենադարանները կը ներկայացնեն հաւաքաբար 7800 հատոր»[11]:

Ուշագրավն այստեղ միայն դիվանական նյութերի բովանդակությունը չէ, այլ նաև այդ նույն փաստաթղթերը երկրից դուրս հանելու միջոցավ փրկելու անհրաժեշտությունը: Պատերազմի ավարտից հետո, մանավանդ երբ դատարանի վճռով մահվան դատապարտվեցին Թալեաթը, Ջիմսըը, Էնվերը, Նազիմը, ինչպես նաև Բեհաէդդին Շաքիրը, Ջեմալ Ազիմին, Նայիլ բեյը, հայոց տեղահանության ու կոտորածին մասնակցած շրջանային որոշ պատասխանատուներ և այլն (1919-1920 թվականներ), հայոց միջավայրում (Թուրքիայում, Հայաստանում և արտերկրում) տպավորություն էր ստեղծվել, թե հասել է հատուցման ժամը, և թուրքական կոտորածներ այլևս տեղի չեն ունենա: Այդ պատրանքը մասամբ էլ թելադրված էր քեմալական շարժման հակաալյթանական կեցվածքով ու Անտանտայի պետությունների քաղաքական ակտիվությամբ: Սակայն շատ չանցած կացությունը փոխվեց. քանի՛ հանձնախմբերը լուծարվեցին, 1920-ի ապրիլին սկսվեց Այնթապի հայության պաշարումը, իսկ սեպտեմբերի 21-ին՝ թուրք-հայկական պատերազմը: Մեկ տարի անց, արևելյան նահանգներում խնդիրները լուծած համարելով (հատկապես 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված սովետա-թուրքական բարեկամության պայմանագրից հետո), Մուստաֆա Քեմալի զորաբանակը ձեռնամուխ եղավ երկրի արևմտյան շրջանների իշխանությանը տիրանալուն: 1922թ. սեպտեմբերի 9-ին քեմալական հեծելազորը մտավ նախորդ իշխանությունների կազմակերպած զանգվածային կոտորածների ու տարագրությունների ծիրից դուրս մնացած Զմյուռնիա և առաջին հերթին շուրջկալի ենթարկեց հայկական թաղամասը: Թե ինչ

կատարվեց քաղաքի հայ և հույն բնակչության հետ՝ հանգամանորեն նկարագրված է ականատեսների վկայությունների վրա հիմնված Ռենե Պյուսյի գրքում[12], որից կատարած ընդարձակ քաղվածքներ է հրատարակել ակադ. Մ. Ներսիսյանը, դրանք օժտելով լրացուցիչ նյութերով ու մեկնաբանություններով[13]: Հայ-հունական ողբերգության այդ դրվագի ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է Զմյուռնիայի կոտորածն ու հրդեհը վերապրած Տրդատ եպս. Պալյանի վկայությունը, որ իբրև նամակ 1923թ. հունվարի 29-ին Աթենքից ուղարկել է Վիեննա Վահան Իսպենչերյանին: Առհասարակ 1915-1922 թվականների կոտորածներից ինչ-որ եղանակով փրկված ու վերապրող հայերի՝ այդ տարիների նամակները բացառիկ կարևոր վկայություններ են, քանի որ գրված են դեպքերից անմիջապես հետո և ամենևին ոչ հատուցում պահանջելու դրդումով, այլ պարզապես ողջ մնացած հարազատ գտնելու համար դիմում են զանազան մարդկանց կամ կազմակերպությունների ինքնությունը պարզելու համար իրենց գլխին եկածը պատմելով[14]:

Նամակն ուղարկելուց մի քանի ամիս անց անասելի ցնցում ապրած վաստակաշատ ծերունի Տրդատ եպիսկոպոսը վախճանվել է, և հայագետ Ներսես Ակինյանը իր վաղեմի բարեկամի հիշատակին նվիրված մահախոսականում անհրաժեշտ է նկատել հրատարակել այդ նամակը, որ ստորև բերում ենք ամբողջությամբ ու նույնությամբ:

«...Ես 1922 սեպտեմբեր ամսոյ սկիզբները Մաղնիսայէն Իզմիր իջած էի եղբօրս մէկ սաւնը բնակելու համար, կարծելով թէ Մուսթաֆայ Քէմալը հոն գալու իսկ ըլլայ, Իզմիրի մէջ որեւէ դէպք չը պատահիր ու հանգիստ ժամանակ կ'անցընենք. բայց դժբախտաբար մեր մտածումը պարապի ելաւ. Մուսթաֆայ Քէմալի եւ իր անօրէն զօրքերու վայրագութեան միջոցաւ ամենամեծ հալածումի, կողոպուտի ենթարկուեցայ, ինչպէս նաեւ բոլոր Հայերը. Իզմիրի մէջ տառապանքը մեծ էր, ամբողջ Հայոց թաղը կրակի տուին Քէմալի զօրքերը, կայ՚գը երբ մեր թւաղին եկաւ, ինչպէս ուրիշ տուներու կ'ընէին, երեք չորս օթօմօպիլ բերին տանիս առջեւ, եւ իմ ամբողջ գոյքերս, զորս բերած էի Մաղնիսայէն, դրամներս, նամականդրոշմի մեծ հաւաքածոյս, 30 տարիներէ ի վեր աշխատած ու ժողոված ազգագրակւսին հաւաքածոյներս ու ուսումնասիրութիւններս, պարսկական երկու թանկագին գորգերս, վեղարներս, փիլոններս, փակեղներս, եպիսկոպոսական պնակէս, խաչ եւ ամբողջ հագուստներս ու զգեստեղէններս, թղթեւոյ եւ մագաղաթեայ հին ձեռագիր եւ 600 հատ գրադարանիս տպագիր գիրքերս, եղբօրս 40 պարկ չամիչը եւ տանը գոյքերը եւն այդ օթօմօպիլներու մէջ լեցնելով առին տարին, եւ անմիջապէս ալ տունին մէկ ծայրէն կրակ տուին, ինչպէս ըսի՝ կ'ընէին ուրիշ հայ տուներու ալ. որուն վրայ ստիպուեցայ առանց տեսնուելու տունէն փախչիլ աղտոտ միակ վերարկուով մը. այսպէս փողոցէ վաղոց քանի մը օրեր ասդին անդին միայն հաց ատելով թափառելէ յետոյ, վերջապէս քարա-

փի վրայ տուն մը մտանք հանգստանալու համար. տասը տասնեւհինգ օր վերջը շատ դժուարութեամբ յունական շոգենաւ մը մտանք եւ հասանք Աթենք, թէեւ օր մըն ալ զիս բանտարկեցին Իզմիր:

Այժմ երեք ամիսներէ ի վեր կը մնամ Աթէնք թշուառ վիճակիվ. իմ այս վիճակս լսելով Երուսաղէմէն, Կ.Պոլսէն, Բարիզէն, Եգիպտոսէն օգնութեան փոքր ինչ նպաստներ ղրկուած են. որով այժմ քիչ շատ հանգստութիւն մը ունեցայ. չը պիտի մոռնամ այդ բարիքները որ կ՚ըլլան ինձ: Աթէնքի Հայոց եկեղեցւոյն մէկ սենեակին մէջ այժմ օրերս կ՚անցընեմ խեղճ քրոջս հետ, որ կերակուրս կը պատրաստէ, որովհետեւ եղբայրս Իզմիրի մէջ կորսուեցաւ, իր մէկ վիեսայով:

Տրդատ եպիսկոպոս Պալեան:

Յ. Գր. - Եթէ կարելի է այս նամակիս ամբողջ պարունակութիւնը հաղորդէ Վիեննայի Մխիթարեան վանուց միաբան Հայր Ներսէս Ակինեանին:

Նոյն»[15]

Այլևս պարզ է, թե երբ մերօրյա թուրքական իշխանությունները խոսում են երկրի դիվանների դռները բաց լինելու մասին՝ նրանք քաջ գիտեն, որ հայոց եղեռնին վերաբերող վավերական նյութերը կամ գողացվել են (երիտթուրքերի կողմից), կամ բռնագրավվել ու ի չիք դարձել նոր իշխանությունների ձեռքով և կամ երկրից հանվել հայ գործիչների ջանքերով՝ երբևէ պատմական ճշմարտությունը փաստելու համար: Տարօրինակն ու անհասկանալին այն է, որ Երուսաղեմի հայոց պատրիարքարանին ի պահ տրված ազգային պատմության սեփականություն հանդիսացող այդ վավերական նյութերը շարունակում են «ընդ գրուանի» մնալ... Ինչու՞ և ու՞մ կամքը:

SAMVEL MOURADYAN

ON THE QUESTION OF AVAILABILITY IN THE TURKISH ARCHIVE OF DOCUMENTS EVIDENCING THE GENOCIDE OF ARMENIANS

Scientific and official-political publications in Turkey often state that the country's archives are open to any researcher and that there are no records of a Genocide whatsoever.

A careful study of relevant sources and specialized literature demonstrates clearly that, starting from 1918, public establishments in Turkey carried out consistent work for ex-patriation and removal from archives with subsequent elimination of any documentation, court-dcposited evidences, official orders and reports regarding the massacres and deportations of Armenians.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Հայկազն Գ. Ղազարեան* Ցեղասպան Թուրքը, տպարան Համազգայինի, Պեյրութ, 1968, էջ 58:
2. Նույն տեղում, էջ 59:
3. Տես *Մ. Գ. Ներսիսյան,* Պատմության կեղծարարները, Երևան, 1998, էջ 104:
4. Անդ:
5. Այդ հավաքածուների մասին տես ***Bernard Coulie***, Répertoire des bibliotheques et des catalogues de manuscrits arméniens, Brepols-Turnhout, 1992, p. 23-24, 27, 50-51:
6. Նրանց ցանկը տես «Հայոց 1915-1916թթ. ցեղասպանությունը. մատենագիտություն», Երեւան, 1915:
7. Տես ***Զաւէն Արքեպ.*** , Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 175-182:
8. Այս Տեղեկատու դիւանին էր հանձնարարված տարբեր դեսպանությունների հասցեագրված գրությունները պատրաստելու, «ինչպէս նաւ անոնց կողմէ պահանջուած զանազան տեղեկութիւնները հայթայթելու և Համազգային խորհուրդի քարտուղարութիւնը կատարելու» պարտականությունը (***Զաւէն Արքեպ.*** , նշվ. աշխ., էջ 302):
9. Նույն տեղում, էջ 303:
10. Անդ:
11. Նույն տեղում, էջ 304-305:
12. ***Rene Puaux***, La mort de Smyrne, Deuxieme edition, Paris, 1922:
13. *Մ. Ներսիսյան,* նշվ. աշխ. , էջ 116-124
14. Այդ կարգի նամակ-դիմումների ստվար մի հատոր կազմել ու հրատարակել է ***Պ. Տօնապետեանը*** «Ձայն տառապելոց» խորագրով (Փարիզ, տպ. Յ. Բ. Թիւրապեան, 1922, ԺԵ, 500 էջ):
15. *Հ. Ն. Ակինեան,* Տրդատ եպիսկոպոս Պալեան. Համառօտ ակնարկ մը իր գրական գործունէութեան վրայ, «Հանդէս Ամսօրեայ», 1923, թիւ 11-12, էջ 551-552: Նամակը վերջերս վերահրատարակվեց Գ.Տեր-Վարդանյանի աշխատասիրությամբ լույս տեսած Կեսարիայի և շրջակայից այժմ չքացած ձեռագրերի նկարագրության հավելվածում:

ԿԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՄԱԿ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ (2004Թ. ՀՈՒՆԻՍ – 2005Թ. ՕԳՈՍՏՈՍ)

Սույն հոդվածի առանցքում ՄԱԿ-ի գործունեության լուսաբանումն է՝ Իրաքում ստեղծված սոցիալ-քաղաքական բարդ ու դժվարին իրադրության պայմաններում: Նշված ժամանակահատվածը՝ 2004թ. հունիս – 2005թ. օգոստոս, ներառում է երկրի համար շրջադարձային և կարևոր պատմական իրադարձություն. 2004թ. հունիսի 28-ին պաշտոնապես Իրաքում իշխանությունը փոխանցվեց երկրի նոր ղեկավարներին:

Քաղաքական զարգացումների հետագա ընթացքը հանգուցալուծվեց Իրաքի նոր Սահմանադրության նախագծի փաթեթով: Իրաքի խորհրդարանականները երկար և բուռն քննարկումներից հետո 2005թ. օգոստոսի 28-ին, կիրակի օրը վերջապես հավանության արժանացրին նոր Սահմանադրության նախագիծը, որի հանրաքվեն նշանակվեց 2005թ. հոկտեմբերի 15-ին, շաբաթ օրը:

Հետաքրքրական է և արաբագիտության նորագույն շրջանի համար ոչ պակաս կարևորություն է ներկայացնում հետևյալ հարցադրումը՝ միջազգային այնպիսի հեղինակավոր կազմակերպություն, ինչպիսին Միավորված Ազգերի Կազմակերպությունն է /ՄԱԿ/, գործունեության ինչպիսի առի է որդեգրել և ինչպես է այն իրականացնում Իրաքում, նախկին վարչակարգի փլուզումից հետո:

Դեռևս 2003թ. մարտի 6-ին «Ազգ» օրաթերթում Իրաքի շուրջ հրապարակումների շարքում էր նաև ՄԱԿ-ի գործունեության մասին բավական հետաքրքիր անդրադարձ, «ՄԱԿ-ը մշակում է Իրաքի հետպատերազմյան կառուցվածքի ծրագիր», վերնագրով:

Ըստ այդ հրապարակման «...ծրագրի 60 էջանոց պատճենը հայտնվել է Լոնդոնի «Թայմսի» տրամադրության տակ: Դրա մշակումն անցյալ ամսվանից հույժ գաղտնի պայմաններում իրականացնում են ՄԱԿ-ի 6 աշխատակիցներ՝ գլխավոր քարտուղարի տեղակալ Լուիզ Ֆրեչեթի ղեկավարությամբ»[1]:

Մինչ այդ ծրագրի բովանդակությանն անդրադառնալը, նշենք, որ արդեն իսկ դրա վերնագիրը վկայում էր Իրաքում սպասվող ԱՄՆ-ի կողմից ռազմական գործողությունների իրականացման անխուսափելիության մասին, ընդ որում «պատերազմ» որակումով: Համաձայն այդ ծրագրի, Իրաքում Սադդամ Հուսեյնի վարչակարգի տապալումից 3 ամիս անց ՍԱԿ-ը մասնակից էր դառնալու երկրի ինքնակառավարման համակարգի ստեղծմանը: Հետաքրքիր է, որ անգամ տակտիկական նրբանկատություն է արտահայտված, այն է՝ «ՄԱԿ-ը մտադիր չէ լիովին իր հսկողության տակ առնել երկրի կառավարումը, իրաքյան նավթը, պաշտոնյաների հուսալիության ստուգումը կամ ԱՄՆ-ի օկուպացման պայմաններում ընտրությունների անցկացումը: Փոխարենն Իրաքում կարող է ստեղծվել օգնության առաքելություն, որը կօժանդակի նոր կառավարության կազմավորմանը»[2]:

Եվ քանի որ նշված ծրագիրը հետաքրքիր է ոչ միայն քաղաքական տեսանկյունից, այլ նաև սոցիալ-տնտեսական հեռահար կառուցողական նպատակաուղղվածությամբ, ապա թերևս Իրաքին նախատեսվող «օգնության առաքելությունը» արտահայտված է բոլոր հնարավոր դրսևորումներով: Այսպես՝ «ըստ ՍԱԿ-ի աղբյուրների, ծրագիրը կգործի նույնիսկ այն դեպքում, եթե ԱՄՆ-ը պատերազմ սկսի առանց անվտանգության խորհրդի /ԱԽ/ նոր բանաձևի ընդունման: Ծրագրի հեղինակները ՄԱԿ-ին հանձնարարում են նշանակել համակարգող, որը կազմակերպության հատուկ ներկայացուցիչը կդառնա հետպատերազմյան Իրաքում:

Այդ պաշտոնի ամենահարմար թեկնածուն հակամարտությունների հարթման գծով ՄԱԿ-ի հատուկ լիազոր Լախդար Բրահիմին է, որն Ալժիրի նախկին արտգործնախարարն է: Աֆղանստանում նա արդեն մասնակցել է նոր կառավարության կազմավորմանը: 68-ամյա Բրահիմիի դուստրը CNN-ի լրագրող է և ներկայումս աշխատում է Բաղդադում»[3]:

Հատկանշական է, որ անգամ անհանգստության և դժգոհության տրամադրություններ են արտահայտվել մամուլում: Այսպես՝ «Թայմսը» նշում է, որ Իրաքը ՄԱԿ-ի օրինական անդամ է, ուստի նրա ապագա կառավարության հարցի քննարկումը սկսելով, ՄԱԿ-ի ղեկավարները խախտում են կազմակերպության կետերից մեկը, որն արգելում է միջամտել անդամ երկրների ներքին գործերին»[4]:

«Ազգ» օրաթերթը նշված հրապարակման մեջ անդրադարձ է կատարում նաև Իրաքի համար շատ կարևոր «Նավթ պարենի դիմաց»՝ ծրագրին, վկայակոչելով «Ֆայնենշլ թայմս»-ի մեջբերումը, թե «ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան գրում են ՄԱԿ-ի բանաձևի նախագիծ, որը սահմանում է Իրաքի հետպատերազմյան կյանքին ՄԱԿ-ի «մասնակցության սկզբունքները»: Մասնավորապես նախատեսվում է փոփոխել «Նավթ

պարենի դիմաց» ծրագիրը, ինչը թույլ կտա Իրաքին մարդասիրական օգնություն ցույց տալ Սադդամ Հուսեյնի տապալումից հետո»[5]:

Վերը նշվածին ավելացնենք նաև, որ այդ օրերին Իրաքի շուրջն արդեն ամերիկյան բազմահազարանոց զորք էր տեղակայված. և ԱՄՆ-ը բոլորովին պարտադիր չհամարեց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի /ԱԽ/ կողմից նոր բանաձևի ընդունումը:

Մանավանդ որ ՄԱԿ-ի կողմից ընդունված մի որևէ բանաձև ԱՄՆ-ի համար «ցանկալի էր, բայց ոչ անհրաժեշտ»:

Ինչպես հայտարարել էր Սպիտակ տան մամլո քարտուղար Արի Ֆլեյշերը մամլո ասուլիսում, ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը պարզ հասկացրել է, որ բանաձև լինի թե ոչ, ԱՄՆ-ը մտադիր է զինաթափել Սադդամ Հուսեյնին:

Այսօր, երբ Սադդամ Հուսեյնի վարչակարգը Իրաքում տապալված է, ՄԱԿ-ի գործունեությունը Իրաքում ստանում է առավել պատասխանատու շեշտադրություն և տակտիկական տեսանկյունից նոր պայմաններում աշխատելու ունակության դրսևորում:

Կարևորը այն չէ, թե նախօրոք ծրագրված էր, թե ոչ հետագա գործունեությունը Իրաքում, ի դեմս նման կարևոր միջազգային կազմակերպության, ինչպիսին ՄԱԿ-ն է: Եվ եթե զուգահեռներ ենք տարբերակում, հօգուտ ինչ-որ նախնական ծրագրի կամ սոցիալ-տնտեսական բնույթի հեռահար «պայմանավորվածությունների», ապա դրանք նույնպես հաստատում են ՄԱԿ-ի կարևորությունը միջազգային հարաբերություններում:

Տեղին է նկատել, որ Իրաքը ՄԱԿ-ի կազմում է ընդգրկվել 1945թ. դեկտեմբերի 21-ին: Տարբեր տարիների միջազգային հանրությանը ներկայանալով իր ակտիվ կեցվածքով՝ 1981թ. ՄԱԿ-ի երեսունվեցերորդ հերթական նստաշրջանի նաև 1982թ. տասներկուերորդ հերթական սեսիայի, նույն թվականի յոթերորդ և իններորդ սեսիաների Գլխավոր ասամբլեայի նախագահն էր Իսմաթ Քիթթանին: Ի դեպ տարբեր տարիների Իրաքի ներկայացուցիչը ՄԱԿ-ում զբաղեցրել է նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի փոխնախագահի աթոռը, ինչպես նաև ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում Իրաքը ունեցել է ոչ մշտական անդամներ, մինչև 1991թ. իր անդամները ունենալով ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհրդում[6]: Թեև Իրաքը ամերիկյան ռազմական գործողությունների արդյունքում իր տապալված վարչակարգով և փլուզված տնտեսությամբ կանգնած է բոլորովին այլ խնդիրների առջև, սակայն ՄԱԿ-ը իր ճկուն ծրագրերով ներկայանում է նոր պայմաններում աշխատելու ունակությամբ:

2005թ. ապրիլին Իրաքի խորհրդարանը ընտրեց երկրի նոր նախագահ: Հատկանշական է, որ Իրաքի առաջին դեմք ընտրվեց ազգությամբ քուրդ քաղաքական գործիչ, Քուրդստանի հայրենասիրական

միության նախագահ Ջալալ Թալաբանին: Այդ ընտրությունը կայացավ 2005թ. հունվարին տեղի ունեցած երկրի խորհրդարանական ընտրություններում ձայների մեծամասնությունը ստացած առաջատար խումբ կազմող շիաների և քրդերի միջև ընթացող բանակցությունների արդյունքում: Նա 2003թ. հուլիսից մինչև 2004թ. հունիսը ամերիկյան օկուպացիոն ադմինիստրացիայի ստեղծած Իրաքում ժամանակավոր ղեկավար խորհրդի նախագահության անդամ էր:

Իրաքում 2003թ. հունվարին կայացած խորհրդարանական ընտրություններում Քուրդստանի հայրենասիրական միությունը և նրանց նախկին ընդդիմախոսները՝ Քուրդստանի դեմոկրատական կուսակցությունը հանդես եկան միասնական բլոկով, ազգային խորհրդաժողովում ստանալով 75 ձայն:

Իրաքի նորընտիր նախագահ Ջալալ Թալաբանու տեղակալներ ընտրվեցին շիա Աբդել Սահիդին, որը նախկինում, ժամանակավոր ադմինիստրացիայի կազմում էր, զբաղեցնելով ֆինանսների նախարարի աթոռը և սուննի՝ Գազի ալ-Յավարը, որը մինչ այդ Իրաքի «ժամանակավոր» նախագահն էր: Իրաքում նախագահական խորհրդի այս երեք անդամներն էլ կոչված էին ընտրել երկրի նախարարների խորհրդի ղեկավար, այսինքն վարչապետ և ձևավորելու նոր կառավարություն: Այդ թեկնածությունը հաստատվեց 2005թ. ապրիլի 8-ին, շիա-մահմեդական Իբրահիմ ալ-Ջաֆարի օգտին[7]:

Ուշադրության արժանի է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի գնահատականը այս ընտրություններին:

«Իրաքում, վերջերս կայացած ընտրությունների հաջողությունը ստեղծում է բարենպաստ իրադրություն: Ժամանակավոր փուլի հաջող ավարտը շատ մեծ նշանակություն ունի:

Ես լի եմ վճռականությամբ հասնել նրան, որ ՄԱԿ-ը ամեն հնարավորը կօգտագործի օգնելու համար Իրաքի ժողովրդին ավարտելու այդ գործընթացը»: «...այսօր համաշխարհային հանրությունը ընդունում է, որ բոլորի համար կարևոր է ընդհանուր խնդիրը՝ Իրաքի առաջընթացը ելման կետից՝ հաջողությամբ ավարտված ընտրություններից, խաղաղ, բարգավաճ և դեմոկրատական ապագային»: «Մինչև իսկ վերջերս հնչած անհամաձայնությունների արձագանքները կարող են շրջվել նոր հնարավորություններով: Հենց այն, որ ՄԱԿ-ը չէր տալիս իր համաձայնությունը Իրաքում սկզբնական էտապի որոշ գործողությունների համար, այժմ նրա համար ապահովում է անհրաժեշտ վստահություն և մերձեցում իրաքյան խմբերին, որոնք պետք է համաձայնվեն միանալ քաղաքական նոր գործընթացին, խաղաղության վերահաստատման նպատակով: Այսօր հենց այդ ժամանակն է օգտվելու համար նման առավելությունից»[8]:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը առանձնակի կարևորում է իրաքցիների որոշում ընդունելու քաջությունը, ժամանակի պահանջը սթափ գնահատելը: «Ոչ ոք չի կարող անտարբեր մնալ իրաքցիների ցուցաբերած խիզախության հանդեպ, ովքեր եկան ընտրական տեղամասեր: ՄԱԿ-ը հպարտանում է այն աջակցությամբ, որը կարողացավ ցուցաբերել իրաքի զարգացնելու ընտրությունների քաղաքական բացում, ինչպես նաև տեխնիկական նախապատրաստման գործում: Մենք օգնեցինք մշակել ընտրությունների մասին օրենք և ձևավորել ընտրական անկախ հանձնաժողով, որը իրականացրեց ընտրությունների անցկացման վերահսկողությունը: ՄԱԿ-ի հանձնախումբը, որը կազմված էր ավելի քան 50 աշխատակիցներից օգնեց հանձնաժողովի աշխատանքին Բաղդադում, Ամմանում և Նյու-Յորքում: ՄԱԿ-ը նախապատրաստեց հանձնաժողովի անդամներին և թվով մի քանի հարյուր այլ աշխատակիցների, որոնք զբաղված էին ընտրություններով, նրանք էլ իրենց հերթին ուսուցանում էին ևս հազար մարդու և այդ գործընթացում նույնպես մենք նրանց օգնություն և աջակցություն ցուցաբերեցինք»[9]:

Իրաքի համար հետպատերազմյան այս շրջանում անչափ կարևոր է Սահմանադրության գործընթացը: Այն անցնում է լարված և իրարամերժ մոտեցումների պայմաններում: Դիտորդները նշում են, որ Իրաքի սուննիներին մտահոգում են ոչ թե Սահմանադրության այս կամ այն հոդվածին, բովանդակությանն առնչվող խնդիրները, այլ իշխանությունից զրկվելու փաստը: Սուննիները չեն կարողանում հաշտվել շիաների և քրդերի ղեկավար դիրքերի հնարավորության հետ: Մինչև իսկ սուննիների ներկայացուցիչները քաղաքական հեռանկարներ են փորձում ներկայացնել, այն է՝ «փորձելով Սահմանադրության նախագծի հարցում արժանանալ ԱՄՆ-ի աջակցությանը՝ սուննիների ներկայացուցիչները հայտարարում են, որ եթե ընդունվի Սահմանադրության այս նախագիծը, ապա Իրաքի շիաբնակ հատվածը կհայտնվի Իրանի լիակատար ազդեցության տակ: Իսկ ահա ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշն արդեն իրաքցիներին կոչ է արել հանրաքվեի ժամանակ կողմ արտահայտվել Սահմանադրության ընդունմանը»:

«Մենք տեսնում ենք, որ Սահմանադրության հարցում սուննիները պառակտվել են, Սուննիների մի մասը դեմ է արտահայտվել Սահմանադրության որոշ հոդվածներին: Դա նրանց իրավունքն է: Նրանք ազատ հանրության ազատ քաղաքացիներ են», - ասել է ԱՄՆ-ի նախագահը, որի կարծիքով առավել կարևորն այն է, որ երկրի բնակչության մեծամասնությունը ներքաշվի սահմանադրական գործընթացում և մասնակցի սահմանադրական քննարկումներին[10]:

Սուննիները մտավախություն ունեն, որ նավթի վաճառքից ստացվող շահույթը կարող է կենտրոնացվել շիաների և քրդերի ձեռքում և պնդում են, որ այդ շահույթը հավասարապես բաշխվի իրաքցի սուննի-

ների, շիաների և քրդերի միջև: Միաժամանակ բողոքի ալիք է բարձրացրել Իրաքի նախկին նախագահ Սադդամ Հուսեյնի ԲԱԱՍ կուսակցության գործունեության կասեցումը և հետագա արգելքը հիմնական օրենքով, սահմանադրորեն:

Թեև Իրաքում բնակվող շիաները և քրդերը միասին կազմում են երկրի ազգաբնակչության 80%-ից ավելին, սակայն Սահմանադրության նախագիծը առաջին ընթերցմամբ մերժվեց և միայն երկար քննարկումներից հետո արժանացավ խորհրդարանի հավանությանը, նշենք նաև որ սուննիները այդպես էլ չենթարկվեցին գործադրվող ճնշումների ազդեցությանը և իրենց ստորագրությունը հրաժարվեցին դնել Սահմանադրության նախագծի տակ: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Իրաքի ամենաքիչը երեք նահանգներում ընտրողների երկու երրորդի դեմ արտահայտվելու դեպքում Սահմանադրությունը կարող է հայտնվել ձախողման լուրջ վտանգի տակ: Մանավանդ, որ սուննիները շարունակում են մասնակցել Իրաքի քաղաքական գործընթացներին:

Մինչ այդ, Իրաքում ուժեղացվում է ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը: Հոկտեմբերի 15-ին Իրաքում կայանալիք Սահմանադրության հանրաքվեն և դեկտեմբերին նախատեսված համընդհանուր ընտրությունները կազմուպատրաստ դիմավորելու նպատակով Պենտագոնը ուժեղացնում է Իրաքում ամերիկյան զորքերի դիրքերը:

ԱՄՆ-ի Պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի կարգադրությամբ 2005թ. օգոստոսից Իրաք են ուղարկվում 82-րդ օդադեսանտային դիվիզիայի 1500 զինծառայողներ: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ նրանք կմիանան Իրաքում արդեն տեղաբաշխված ամերիկացի 138 հազար զինծառայողներին և այնտեղ կմնան մոտ 4 ամիս:

Գործակալության տվյալներով Իրաքում ամերիկյան զորքի թվակազմը կարող է հասնել 160 հազարի: Ուղարկվող նոր զորախմբերը կոչված են զսպելու Իրաքում ահագնացող բռնությունների ալիքը, ինչպես նաև վնասազերծելու ահաբեկչական վտանգի հայտնի օջախները: Այդ նոր զորախմբերի Իրաք մեկնումից առաջ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը Այդահոյի նահանգի Նամպա քաղաքում ազգային գվարդիայի զինծառայողների և նրանց ընտանիքների առջև ելույթ ունենալով հայտարարեց, թե ԱՄՆ-ն ավարտելու է Աֆղանստանում և Իրաքում սկսած իր գործը:

«Քանի դեռ նախագահ եմ, մենք կմնանք Աֆղանստանում և Իրաքում, կպայքարենք ահաբեկչության դեմ և կհաղթենք», ընդգծեց Բուշը, որի խոսքերը մեջբերում է RFI ռադիոկայանը[11]:

Փաստորեն հաստատվում է 2005թ. մայիսի 18-ին ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի երկրորդ նախագահական ժամկետի գլխավոր խնդրի իր իսկ պատկերացման մասին վարվելակերպը, ինչի մասին նա մանրամասն տեղեկացրեց Վաշինգտոնում միջազգային հանրապետական

ինստիտուտում ունեցած ելույթի ժամանակ: Այստեղ հանդես գալով, նա նշել է, որ իր պաշտոնավարման անցյալ տարիների փորձը իրեն համոզել է, որ վարչակարգերի տապալումը զինված ներխուժման միջոցով ավելի քիչ արդյունավետ է, եթե ուշադրություն դարձնենք և հաշվի առնենք այդ երկրի և հասարակության հետագա վերակառուցման անհրաժեշտությունը, համեմատած տնաքույծ հեղավախությունների հետ:

ԱՄՆ-ի նախագահի այս ելույթում շատ հետաքրքիր տվյալներ են ամփոփված: Պարզվում է, որ տնաքույծ հեղավտիտության հիմքում ժողովրդական ապստամբությունները ավելի էժան են նստում, այսպես Աֆղանստանում և Իրաքում 2001թ. սկսած Վաշինգտոնը ծախսել է մինչև 300 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ այդ նույն ժամանակահատվածում դեմոկրատիայի թավշյա աջակցության նպատակով՝ ընդամենը 4.6 մլրդ - դոլար: Նա առանձնակի նշել է, որ նման հեղափոխությունները ձեռնտու են նրանով, որ չեն պահանջում վերստին ստեղծել պատերազմի հետևանքով ավերված պետական ղեկավարման կառուցվածքները[12]:

Այս անդրադարձը հաստատում է նման կարգի այն լուրջ խնդիրները, որոնք ծառացել են ԱՄՆ-ի իշխանությունների առջև Իրաքում:

Իրաքում ԱՄՆ-ի վարած պատերազմի հետևանքով ավերված պետական ղեկավարման կառուցվածքների վերականգնման դժվարությունների մասին է խոսում Իրաքում սահմանադրական գործընթացի պատկերը:

ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի վկայությամբ և կանխատեսումներով՝ Իրաքը չի խաղաղվի ևս 12 տարի: Նրա կարծիքով՝ Իրաքում ընդդիմությունը կշարունակվի դեռևս 5-ից 12 տարի, սակայն ապագայում պատերազմը կվարեն արդեն ոչ թե ամերիկյան և արտասահմանյան ուրիշ երկրների զորքերը, այլ տեղական զինված ուժերը: Առայժմ պարտիզանների գործողությունները կարող են ակտիվանալ տարվա վերջին նախատեսված Սահմանադրության ընդունման և երկրի մշտական կառավարության ստեղծման նախաշեմին:

Բռնության հնարավոր ճողփյունը կանխելու նպատակով, ԱՄՆ-ի զինված ուժերի հրամանատարությունը ծավալել է ակտիվ երկխոսություն սուննի մարտիկների հետ:

Այս խոստովանությունը հաստատել է նաև ամերիկյան զորքերի կենտրոնական հրամանատարության ղեկավար գեներալ Ջոն Էբզեյդը:

Փաստորեն, ընդդիմության ուժերի հետ երկխոսությունը հանդիսանում է այն կամպանիայի մի մասը, որի նպատակն է սեպ խրել իրաքյան ապստամբների և արտասահմանցի վարձկանների միջև:

Միջազգային զանգվածային լրատվամիջոցներով նույնպես տեղեկություն է հաղորդվել այն մասին, որ ամերիկյան ռազմական ուժերը դեռևս 2005թ. հունիսին կրկնակի անգամ հանդիպել են Իրաքի սուննի ապստամբների ներկայացուցիչների հետ:

«Ֆոկս-Նյուս» հեռուստաալիքի կազմակերպած իր հետ հարցազրույցում, Ռամսֆելդը այս հարցի շուրջ հայտարարել է, որ իրականում «շփումները բավական շատ են եղել» և պարզաբանել է, որ իրենց խնդիրն է ներգրավել իրենց շուրջն այն մարդկանց, որոնք պատրաստ են աջակցել քաղաքական գործընթացին Իրաքում: Նա նշել է, որ նման գործողությունների նպատակն է անցկացնել հստակ սահմանազատում՝ ընդդիմության ուժերի ջոկատների, որոնք վարում են սովորական մարտական գործողություններ և այն մարտիկների միջև, որոնք պայթյուններ են կազմակերպում, մահապարտ տեռորիստներ են[13]:

Իրաքում մահապարտ տեռորիստների գործողությունների արդյունքում 2005թ. միայն մայիս-հունիս ամիսների ընթացքում զոհվել է 1,2 հազ. մարդ[14]:

Այս տվյալները պատահական չեն, քանի որ 2005թ. հունվարին անցկացված խորհրդարանական ընտրություններից հետո, օկուպացիոն ուժերի և ապստամբների միջև մարտերը Իրաքում նոր ուժով ծավալվեցին:

Վկայակոչելով ամերիկյան զինվորական հրամանատարության պաշտոնական ներկայացուցչին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ Իրաքում ամեն օր մոտ 70 ահաբեկչություն է իրականացվում: Դրանց մեջ կան բազմաթիվ իրաքցի խաղաղ բնակիչներ, կանայք և երեխաներ: Մեծ թիվ են կազմում նաև զոհված ամերիկացի զինծառայողները: Միայն մայիսին Իրաքում զոհվել են 77 ամերիկացի զինծառայողներ:

Հակաիրաքյան պատերազմի սկզբից ի վեր սպանված ամերիկացիների թիվը հասել է 1658-ի: Վիրավորների թիվը գերազանցել է 12630-ը: 2005թ. մայիսի տվյալներով Իրաքում տեղաբաշխված ամերիկացի զինծառայողների թիվը կազմում է 139 հազ.: Այդ նույն ամսվա ընթացքում Իրաքում զոհվել են նաև 600-ից ավելի իրաքցիներ, ինչպես նոր բանակի զինծառայողներ և ոստիկաններ, այնպես էլ խաղաղ բնակիչներ[15]:

Բնական է, որ Իրաքի սուննի մահմեդականները ձգտում են ավելի լայն մասնակցություն ունենալ երկրի Սահմանադրության խմբագրական աշխատանքներին, ինչը այդպես էլ նրանց չբավարարեց:

2005թ. մայիս-հունիս ամիսներին հաղորդվում էին Իրաքի հյուսիս-արևմուտքում շարունակվող մարտերի մասին: Ամերիկյան հրամանատարությունը հայտարարել է, որ Սիրիայի սահմանի մոտ իրաքցի ապստամբների դեմ ծավալված գործողությունների ընթացքում հունիսի 8-ին, չորեքշաբթի օրը սպանվել են 4 ամերիկացիներ, ձերբակալվել են 70 կասկածյալներ: Իսկ Ֆրանսպրեսի տվյալներով, այդ նույն շրջանում առևանգվել են 22 իրաքցի զինծառայողներ: Նրանք գերի են տարվել Ռավա քաղաքի մոտակայքում գտնվող իրաքյան բանակի ռազմակայանից ոչ հեռու, անհայտ զինյալների հարձակման հետևանքով: Նշված է,

որ բոլոր այդ պատանդները շիա մահմեդականներ են[16]: Ինչը վկայում է, որ դա կարող է լինել սուննիների ձեռքի գործը:

Իրաքի նոր Սահմանադրության հաստատման նախաշեմին, ԱՄՆ-ի նախագահ Բուշը խոստովանել է, որ Ամերիկան առաջիկա ժամանակներում կարող է բախվել Իրաքի ընդդիմադիրների առավել դաժան հակազդեցությանը: «Մեր երկիրը Իրաքում իրականացնում է բարդ առաքելություն, և մենք կարող ենք սպասել ավելի կատաղի ընդդիմադրության առաջիկա շաբաթների և ամիսների ընթացքում», ասել է նա ամերիկյան ռադիոյով իր երկրի ժողովրդին հասցեագրված ուղերձում:

Եվ, կարծես, ի հաստատումն Բուշի այս կանխատեսումների, Իրաքի հյուսիսում Մոսուլ քաղաքի ոստիկանական շտաբում տեղի ունեցած հերթական պայթյունը երկար սպասել չտվեց: Արդյունքում երեք մարդ զոհվեց, 14 մարդ ստացավ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, հաղորդում է Ռեյթեր գործակալությունը[17]:

Նման մահաբեր գործողությունները Իրաքում այս ժամանակահատվածի համար դարձել են հատկանշական երևույթ: Այսպես հուլիսի 11-ին Իրաքում, Բաղդադից հյուսիս-արևելք գտնվող Հալիս քաղաքի մուտքի բլոկպոստի վրա իրականացրած տեռորիստական գործողության արդյունքում, զոհվեցին 8 իրաքցի զինծառայողներ: Նման կարգի դիմադրության հարձակումները այդ շաբաթվա հանգստյան օրերին խլեցին ավելի քան 50 մարդու կյանք[18]:

Միաժամանակ Սահմանադրական գործընթացներում ընդդիմադիրների պայքարը հանգեցրեց Իրաքում գործող դիվանագիտական ծառայողների խոցելիությանը: 2005թ. հուլիսի 5-ին Իրաքում Բահրեյնի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարը ստացավ վնասվածքներ, անհայտ մարդկանց զինված հարձակման հետևանքով: Դեպքը կատարվեց էլ-Մանսուր հեղինակավոր շրջանում, ուր տեղակայված են դիվանագիտական առաքելություններ և արտասահմանյան ընկերությունների օֆիսներ: Նույն օրը հրաձգության հարվածների ենթարկվեց Պակիստանի դեսպանատան ներկայացուցիչը[19]:

Իրաքում 2005թ. հուլիսի սկզբին Եգիպտոսի դեսպան Իհաբ Շերիֆը առևանգվեց գրոհայինների կողմից: Նրան մեղադրեցին ամերիկացիների հետ գործակցելու մեջ և մահապատժի ենթարկեցին: Հուլիսի 21-ին Բաղդադում առևանգվեցին ալժիրցի 2 դիվանագետներ:

Մեկնաբանների կարծիքով, իրաքցի գրոհայինները դիվանագետներին թիրախ են դարձնում միջազգային ընկերակցության կողմից Իրաքի նոր կառավարության ճանաչմանը խանգարելու նպատակով: Ընդ որում շատ հարձակումներ իրականացվում են քաղաքացիական վայրերում՝ այսպես, ականատեսների վկայությամբ, ալժիրցի դիվանագետների առևանգումը իրականացվել է Բաղդադի արևմտյան մասում գտնվող

ռեստորաններից մեկի մուտքի մոտ: Առևանգիչները ռեստորանին մոտեցել են երկու ավտոմեքենաներով[20]:

Պակաս ակնհայտ և կարևոր չեն երկրի քաղաքական զարգացումների տեսանկյունից, նաև ներքին անհամաձայնությունները, որոնք շատ դեպքերում ստանում են զինված հակամարտությունների արտահայտում: Հայտնի է, որ Իրաքի ղեկավարությունը պաշտպանում է շիաների «Բադրի կազմակերպությանը», իսկ վերջինս էլ մեղադրվում է բազմաթիվ սուննիների սպանության մեջ: Թեև 2005թ. մայիսի վերջից հունիսի սկիզբը առևանգվել են 22 իրաքցի զինվորներ, Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին և վարչապետ Իբրահիմ ալ-Ջաֆարին հանդես են եկել շիաների «Բադրի կազմակերպության» պաշտպանությամբ:

CNN հեռուստաընկերությունը մեջբերում է Թալաբանիի այն խոսքերը, թե շիա գրոհայինները և քրդերի զինված կազմավորումները Իրաքի ազատագրման հերոսներ են և երկրի հավատարիմ զավակներ[21]:

Փաստորեն Իրաքի ներկայիս ղեկավարությունը ներկայացնում է այն ուժերին, որոնք իր հիմնական հենարանն են և որոնք կյանքի են կոչել հենց այդ իշխանությանը: Մանավանդ որ «Բադրի կազմակերպությունը» որպես քաղաքական շարժում ընդամենը երկու տարվա կենսագրություն ունի: Սակայն չմոռանանք, որ անցյալում այն կոչվում էր «Բադրի բրիգադներ», լինելով Իրաքի իսլամական հեղափոխության գերագույն խորհրդի զինված թևը՝ որպես շիա իրաքցիների ամենաազդեցիկ կազմակերպություն:

Նախագահ Թալաբանին մերժել է «Բադրի կազմակերպությանը» հասցեագրված մեղադրանքները, դրանք համարելով անհիմն ամբաստանություն: Միաժամանակ Իրաքի նոր նախագահը՝ շիաներին և քրդերին շնորհակալություն է հայտնել նախկին նախագահ Սադդամ Հուսեյնին ցույց տված դիմադրության համար, ինչը նպաստեց այդ վարչակարգի տապալման նպատակի իրագործմանը: Նշվում է, որ այդ կազմակերպությունն ուզում է էական դեր խաղալ Իրաքի անվտանգության ապահովման գործողություններում, իսկ սուննիները ձգտում են ավելի լայն մասնակցություն ունենալ երկրի Սահմանադրության խմբագրման աշխատանքներում[22]:

Այդ խմորումները Իրաքի նոր Սահմանադրության ընդունման նախաշեմին կազմում են իրադարձությունների մի ամբողջ շղթա, գնալով դժվարացնելով նաև երկրի իրավապահների աշխատանքը: Մամուլում հաճախակի են դառնում տեղեկությունները գրոհայինների հարձակումների մասին զինծառայողներով տեղակայված վայրերում, որոնք ուղեկցված են ծանր հետևանքներով:

2005թ. հուլիսի 19-ին Իրաքի տարբեր շրջաններում իրականացված մի քանի հարձակումների արդյունքում զոհվել է ավելի քան 15 մարդ՝ հիմնականում ոստիկաններ և զինծառայողներ: Միաժամանակ,

տեղեկություն է տպագրված նաև այն մասին, որ Իրաքում ԱՄՆ-ի Ռազմական ուժերի հրամանատարությունը հրաման է տվել ձերբակալել Քուրդստանի բանվորական կուսակցության առաջնորդներին[23]:

Այդ նույն մթնոլորտը շարունակվեց նաև հաջորդ օրերին: 2005թ. հուլիսի 20-ին Բաղդադում զինակոչային տեղամասի մոտակայքում իրականացված ուժեղ պայթյունի հետևանքով զոհվել է ամենաքիչը 10 մարդ և 20-ը ստացել են վնասվածքներ:

Սուննիները, որոնք մասնակցում էին Իրաքի նոր Սահմանադրության նախապատրաստման հարցերով ստեղծված Հատուկ Հանձնաժողովի նիստերին, ստիպված էին հեռանալ այդ հանձնաժողովից, քանի որ հենց այդ օրերին՝ 2005թ. հուլիսի 19-ին, երեքշաբթի օրը իրենց երկու գործընկերները սպանվեցին անհայտ մարդասպանների արձակած հրազենային կրակոցներից[24]:

Ընդհանրապես, այս ժամանակահատվածը մի յուրօրինակ քննություն է ոչ միայն Իրաքի համար, թե ինչպես է փլուզված երկիրը վերաբերվում իր սեփական խնդիրներին, նաև կոալիցիոն ուժերի համար, որոնք հայտնվել են աննախադեպ իրադրության մեջ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների համար, առաջին հերթին ՍԱԿ-ի, որը անդամ պետությունների հետ գործ ունի:

Տեսադաշտում պարզ պատկեր է, թե ինչպես Իրաքի Սահմանադրությունն ընդունելու փաստը որոշակի կատալիզատորի դեր է կատարում կոալիցիոն գլխավոր ուժերի համար:

Պատահական չէ, որ Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին մեղադրում է վարչապետ Իբրահիմ ալ-Ջաֆարիին իշխանությունը ուզուրպացնելու մեջ: Քուրդստանի լրատվական գործակալության տարածած հայտարարության մեջ, որի հեղինակն է նախագահ Թալաբանին, վարչապետ ալ-Ջաֆարիի հասցեին ասվում է, որ նա որպես երկրի կառավարության ղեկավար խախտում է շիաների և քրդերի միջև իշխանության տարանջատման մասին իր լիազորությունները: Թալաբանին լինելով ազգությամբ քուրդ, մեղադրում է վարչապետին՝ մի շարք ազդեցիկ նախարարական պաշտոնները իր յուրային շիաների միջև բաշխելու շահարկով[25]:

Այդ նույն ժամանակահատվածում գնալով ավելի հաճախակի են դառնում սեփական ուժերը վերագնահատող խոստովանությունները կոալիցիոն ուժերի կողմից:

Ինչպես հաղորդում է «Նյու Յորք Թայմսը» Պենտագոնի ղեկավարությունը մտադիր է 2006թ. գարնանը Իրաքում տեղակայված իր զինծառայողների թիվը նվազեցնել 20-30 հազարով: 2005թ. օգոստոսի տվյալներով՝ ըստ այդ հրապարակման, Իրաքում ԱՄՆ-ի բանակի զինվորների թիվը 138 հազար է: Իսկ 2005թ. դեկտեմբերին երկրում նախատեսված Ազգային ասամբլեայի ընտրությունների անցկացման առիթով

այդ թիվը ժամանակավոր կավելանա և ամերիկյան ավելի քան 160 հազար զինվորներ կտեղակայվեն Իրաքում[26]:

Մեծ Բրիտանիան նույնպես մտադիր է իր զորքերի գերակշռող մասը դուրս բերել Իրաքից: Համաձայն «Սանդեյ մեյլ» բրիտանական թերթի լրագրողների հայթայթած գաղտնի փաստաթղթի, որը կրում է «Իրաքում իրադարձությունների զարգացման տարբերակներ» վերնագիրը, Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարար Ջոն Ռիդը վարչապետ Թոնի Բլերին խորհուրդ է տալիս Իրաքից վերադարձնել 8500 բրիտանացի զինվորների առաջիկա երեք ամիսների ընթացքում, իսկ մնացյալ 3000 զինծառայողներին դուրս բերել հաջորդ 6 ամսվա ընթացքում:

Այդ գաղտնի փաստաթղթում նշվում է նաև, որ բրիտանական զորքն Իրաքից հանելու որոշումը խաչ կքաշի ամբողջ կոալիցիայի վրա, քանզի Մեծ Բրիտանիայից հետո Իրաքը կարող են թողնել ԱՄՆ-ի Գլխավոր դաշնակից նաև այլ երկրներ:

Հիշյալ փաստաթուղթը առաջին իրական ապացույցն է, որ բրիտանացիները որոշել են Իրաքում լքել ամերիկացիներին:

«Մտադիր ենք 2005թ. հոկտեմբերին իրաքցիներին հանձնել ալ-Մութանայի և Մայսանի նահանգների վերահսկողությունը: Բրիտանացիների վերահսկողությանը ենթակա մյուս երկու նահանգներն իրաքցիներին կհանձնվեն 2006թ. ապրիլին», - նշված է փաստաթղթում[27]:

Այս նշված պետությունների օրինակին հետևելու միտում ունի նաև Իտալիան, դատելով Շոտլանդիայում 2005թ. հուլիսի 8-ին ավարտված «Մեծ ութնյակի» գագաթաժողովում Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիի այն հայտարարությունից, համաձայն որի՝ նույն տարվա սեպտեմբերից իր երկիրը սկսելու է Իրաքից 300 իտալացի զինծառայողների դուրս բերումը, վերջնական որոշումն այդ մասին վերապահելով «անվտանգության պայմաններից» կախվածության գործոնին[28]:

Հենց այդ նույն օրերին տեղեկատվություն տարածվեց այն մասին, որ տասնմեկ բրիտանական զինծառայողներ պետք է կանգնեն դատարանի առջև իրենց կատարած հանցագործությունների մեղադրանքով, որոնք իրականացրել են Իրաքում 2003թ. զինծառայության ընթացքում: Այդ հանցագործությունների թվում է նաև երկու անմեղ մարդկանց սպանություն, քաղաքացիական անձանց կազմից[29]:

2005թ. հոկտեմբերին Իրաքի Սահմանադրության ընդունման հանրաքվեից քիչ անց նախատեսված Իրաքի նախկին նախագահ Սադդամ Հուսեյնի դատավարությունը նույնպես որոշակի հանգուցալուծումների առիթ տվեց: Նրա փաստաբան Իսսամ Գազզաուին հայտարարել է, որ իրենք մասնակցում են ոչ լիարժեք դատական պրոցեսի: Սադդամ Հուսեյնին մեղադրում են մի շարք հանցագործությունների մեջ:

«Իզվեստիա» թերթի թղթակցի այն հարցին, թե «Ինչու՞ է դատավարությունը սկսվում հենց այդ ժամանակ: Չէ՞ որ ամերիկյան ադմի-

նիստրացիայի ներկայացուցիչները դեռ քիչ առաջ հավաստիացնում էին, որ Սադդամի դատավարությունը չպետք է իր ժամանակացույցով համընկնի Իրաքի Սահմանադրության հանրաքվեի հետ, որը պետք է ավարտվի օգոստոսի կեսերին: Ամերիկացիները մտավախություն ունեին, որ Սադդամի դատավարությունը կառաջացնի միջկրոնական բախումներ: Ստացվում է, որ դրանից այլևս չե՞ն երկյուղում»:

Սադդամ Հուսեյնի փաստաբան Իսսամ Գազզաուին այդ հարցին պատասխանել է՝ «Այդ ամենը մեծ հանելուկ է, չեմ կասկածում, այդ թվում նաև հենց իրենց՝ դատավորների համար: Գլխավոր խնդիրը Սադդամ Հուսեյնի գործով Հատուկ տրիբունալի լրիվ կախվածությունն է ամերիկացիներից, այնպես որ ոչ միայն վերջնական որոշումները, այլ անգամ այդ տրիբունալի գործողությունների ծրագիրը մնում են անկանխատեսելի»[30]:

Այդ հարցազրույցը «Իզվեստիա» թերթում տպագրվել է 2005թ. հուլիսի 20-ին, դրանից հետո որոշ վտվախություններ եղան կապված Իրաքի Սահմանադրության նախագծի քննարկումների ժամկետի հետ, քանի որ առաջին քննարկմամբ այն մերժվեց: Սակայն նշված հարցազրույցը և դրա պատասխանը որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Մանավանդ որ իրականում դեռ մինչև 2005թ. օգոստոսի վերջը Իրաքի Սահմանադրության կազմողները վիճում էին պետության կառավարման, իսլամի դերի, կանանց իրավունքների և նավթի վաճառքից ստացվող շահույթի բաշխման հարցերի շուրջ: Օգոստոսի 15-ին նախատեսված նախագծի հաստատումը օգոստոսի 28-ին, այդպես էլ բավարար չափով չգոհացրեց երկրի բոլոր շահագրգիռ ուժերին հավասարաչափ կերպով:

«Նոր Հիմնական օրենքում կարտացոլվեն և՛ շիաների, և՛ սուննիների և՛ քրդերի կարծիքները: Իրաքում վերջապես դեմոկրատիա կլինի, - հայտարարել է Հատուկ հանձնաժողովում շիաների նախագահ Ալի ալ-Դաբբաղը: Նա ավելացրել է, որ նախկինում ամեն ինչ այլ ձևով էր ընթանում: Սադդամ Հուսեյնը անձամբ է գրել Սահմանադրությունը, և ինքը ներկայացնում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունը մեկ դեմքով»[31]:

Իրաքի նոր Սահմանադրությունը թվով յոթերորդն է լինելու Իրաքի վերջին 84 տարիների պատմության մեջ: Այդ Սահմանադրության նախագծի հաստատմանը կոչված Սահմանադրական Հատուկ հանձնաժողովի կազմը 71 հոգուց էր բաղկացած՝ 15 սուննիներ, 15 քրդեր, 28 շիաներ և մնացած 13-ը՝ առանձին կուսակցությունների, շարժումների էթնիկ խմբերի ներկայացուցիչներ են: Կանանց ընդհանուր թիվը Հատուկ հանձնաժողովում 9-ն է: Պարզվում է, որ կանայք Իրաքում ակտիվ վերաբերմունք են ցուցաբերում Սահմանադրության հարցերում:

«Նրանք մեզ մոտ ամենաակտիվն են: Ցանկանում են ստանալ այնպիսի իրավունքներ, ինչպիսիք ունեն Արևմուտքում գեղեցիկ սեռի ներկայացուցիչները», իրաքցի կանայք մտավախություն ունեն, որ նոր Սահմանադրությունը բացառապես կհենվի իսլամի նորմերի վրա: «Այդ դեպքում կանայք տղամարդկանց համեմատությամբ ավելի քիչ իրավունքներ կունենան, օրինակ՝ ժառանգության փոխանցման կամ ապահարզանի դեպքում», - ասել է Իսլամական իրավունքի բրիտանական ուսումնասիրության կենտրոնի փորձագետ, «Ֆեմինիզմը և իսլամը» գրքի հեղինակ Մահի Յամանին»[32] «Իզվեստիա» թերթի թղթակցին:

Մինչ Ջորջ Բուշի աղմինիստրացիան ստիպված էր սկսել նոր հետաքննություն կապված Իրաքում ամերիկյան զինվորականների չարաշահումների հետ, այս անգամ խոսքը Իրաքի նախկին նախագահ Սադդամ Հուսեյնի լուսանկարների շարքի մասին է, պտոնք պատկերում էին նրան ԱՄՆ-ի հսկողության տակ գտնվող Բաղդադի մոտ տեղակայված բանտում[33]:

Նախագահ Բուշը փորձել է դեպքի առիթով զարմացած հասարակությանը հանգստացնել, ասելով՝ «Ես չեմ կարծում, որ այդ լուսանկարների հրապարակումը իրաքյան խռովարարներին կստիպի իրագործել նոր հանցագործություններ»: Ըստ Պենտագոնի ներկայացուցիչների, այդ լուսանկարները ունեն մեկ տարվա վաղեմություն՝ կատարված են մոտավորապես 2004թ. հունվարից հունիս ընկած ժամանակահատվածում: Սադդամ Հուսեյնը այդ ժամանակահատվածում գտնվում էր ԱՄՆ-ի զինվորականության ձեռքում /նրան ձևականորեն էին հանձնել իրաքցիների հսկողությանը՝ 2004թ. հուլիսին/: Դա նշանակում է՝ նրա վրա տարածվում էր Ժնևյան կոնվենցիայի համապատասխան հոդվածը ռազմագերիների իրավունքների մասին, համաձայն որի արգելվում է հրապարակել գերիների անձնական կյանքի մասին որևէ նյութ:

Դեպքի առիթով՝ Բուշի առաջին հայտարարությունից երկու ժամ անց, Սպիտակ տան մամլո քարտուղարի տեղակալ Թրենթ Դաֆֆին ընդունեց, որ այդ լուսանկարների հրապարակումը ամերիկյան զինվորական կանոնադրության և Ժնևյան կոնվենցիայի կոպիտ խախտում է: «Ես կարծում եմ, որ մեզ կարող են սպասվել լուրջ հետևանքներ», - ասաց նա, շարունակելով, որ ամերի.կյան նախագահը կատարվածը ծանր է ընկալել և պահանջում է անցկացնել ամենամանրամասն հետաքննություն[34]:

Այդ լուսանկարները միաժամանակ հայտնվել էին բրիտանական «Սան» և ամերիկյան «Նյու Յորք փոստ» թերթերի էջերում, որոնք պատկանում են նույն սեփականատիրոջը՝ մեդիա-մագնատ Ռուպերտ Մերդոկին:

ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը հարմար առիթ էր փնտրում ամերիկացիներին հիշեցնելու համար, որ իրենց երկիրը գտնվում է պատե-

բազմական վիճակում: «Մենք գանվում ենք պատերազմական վիճակում և սա հանդիսանում է դրա վշտալի հետևանքը», - ասաց նա Իրաքում 2005թ. օգոստոսին զոհված 14 ծովային հետևակայիններին հրաժեշտի արարողության առիթով իր ելույթում, Դալլասի մերձակայքում:

Ամֆիբիա զրահամեքենան պայթել էր Եփրատի հովտում ռազմական գործողություն իրականացնելիս, ճանապարհին տեղադրված ռումբից: Դա ամերիկյան զինուժի ամենամեծ կորուստների շարքում է. սկսած 2003թ. մարտից Իրաքում զոհված զինծառայողների թիվը հասնում էր 1820-ի[35]: Իրաքում զոհված ծովային հետևակայինների թիվը այդ վերջին մեկ շաբաթում կազմում էր 21 մարդ: Իսկ զոհվածների մայրերը համոզված էին, որ իրենց որդիները իզուր են զոհվում և պատասխան էին պահանջում՝ «Իրաքը Ամերիկայի համար վտանգ չէր ներկայացնում, և մեր որդիները անհասկանալի է, թե հանուն ինչի են մեռնում», - ասում էր որդեկորույս Սինդի Շահանը Ջորջ Բուշի նախագահական տեխասյան ռանչոյի մոտ Կրոֆորդում կայացած իմպրովիզացված ցույցի ժամանակ, որի մասնակիցները ամերիկյան զոհված զինծառայողների մայրերն էին[36]: Այդ արարողությունը համընկեց ամերիկյան «Նյու Ուիկ» հանդեսի մի հրատարակմանը, հասարակական հարցման տվյալների մասին, համաձայն որի ամերիկացիների մեծամասնությունը՝ 61%-ը չի սատարում Բուշի ռազմավարությանը Իրաքում: Սա Իրաքում ԱՄՆ-ի վարած պատերազմի սկզբից մինչ այժմ ամենացայտուն ցուցանիշն էր[37]:

* * *

Լուսաբանման ենթական նշված ժամանակահատվածը Իրաքում քաղաքական բարդ հագեցվածությամբ թելադրում էր համապատասխան գործունեություն՝ ուրեմն և աղեկվատ դիրքորոշում ՍԱԿ-ի համապատասխան կառույցների կողմից: ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահի կողմից հաստատված փաստաթղթերի Իրաքին վերաբերվող մասի հիմնական ասելիքը հետևյալն է՝ ուժեղացնել աջակցությունը Իրաքին: Դրանցից մեկը ընդունված է 2004թ. մարտի 24-ի նիստի 4930 գրանցումով և կրում է՝ «Ուժեղ աջակցություն Միացյալ Ազգերի հանձնախմբի կողմից Իրաքին ցույց արվող օգնությունը անհապաղ իրականացնելու մասին որոշմանը» վերնագիրը[38], որը նաև դիմումի տեսք ունի:

Հաջորդը՝ ՍԱԿ-ի ԱԽ նախագահի կողմից հաստատված փաստաթուղթը ընդունված է 2004թ. ապրիլի 27-ին կայացած 4953 նիստի արձանագրությամբ և կրում է «Ուժեղ աջակցություն Իրաքի հատուկ խորհրդականի ջանքերին» վերնագիրը[39]:

Ուշադրության արժանի այս կարևոր փաստաթղթերը իրենց բովանդակությամբ լինելով միջանցիկ չէին սահմանափակվում ընդունման ժամկետով և շարունակական բնույթ ունեցան: 2004թ. օգոստոսի 12-ի,

նիստի 5020 գրանցման համաձայն նշվում են նաև նախկին բանաձևերը՝ 1500 /2003/, 14 օգոստոսի 2003 և 1546 /2004/, 8 հունիսի 2004: Այս հիմքի վրա ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը որոշում է կայացրել երկարաձգելու Իրաքին ցույց տրվող իր կազմակերպության օժանդակության առաքելությունը, նկատի ունենալով, որ ՄԱԿ-ը կարող է ղեկավար դեր խաղալ Իրաքի ժողովրդին և կառավարությանը ցույց տրվող օգնությամբ ձևավորելու համար այնպիսի ինստիտուտներ, որոնք կներկայացնեն օրինակելի կառավարություն: Այդ բանաձևի համաձայն Իրաքին ցույց տրվող օգնության առաքելության մանդատը երկարաձգվեց ևս 12 ամսով, հաշված իր ընդունման ժամկետից մինչև 2005թ. օգոստոս[40]: Նշվածը՝ վերջնաժամկետ չէ: Շարունակվեց նաև Իրաքի համար կարևոր «Նավթ պարենի դիմաց» ծրագիրը, որը ամենից վիճահարույցն է ՄԱԿ-ի համար իր հետևանքներով, որոնց մասին զանգվածային լրատվամիջոցները բազմիցս անդրադառնում են[41]: Այսուհանդերձ՝ նշված ժամանակահատվածի առանցքում մնում է Իրաքի նոր Սահմանադրության ընդունումը, դրան նախորդող գործընթացներով: ՄԱԿ-ը այդ ընթացքում ցուցաբերել է հստակ դիրքորոշում: «Նոր Սահմանադրությունը, իհարկե կլինի իրաքյան Սահմանադրություն, և իրաքցիները իրենք կորոշեն դրա ձևը: Խոսք անգամ լինել չի կարող իրաքցիների համար անընդունելի օտար գաղափարների և մոդելների մասին: Սակայն, եթե նրանք խորհուրդ հարցնեն /իսկ ես մտածում եմ, նրանք դրան կդիմեն/, մենք բավարար գիտելիքներ և փորձ ունենք, որոնցով կարող ենք կիսվել: Հոկտեմբերին, Սահմանադրության նախագծի համաձայնեցումից հետո, տեղի կունենա հանրաքվե, որը բոլոր իրաքցիներին հնարավորություն կտա արտահայտելու իրենց կարծիքը այդ առիթով: Մենք հույս ունենք, որ կարող ենք ընտրական հանձնաժողովի հետ համագործակցել հանրաքվեի կազմակերպման ընթացքում և դրան հաջորդող խորհրդարանական ընտրություններում այնպես, ինչպես մենք համագործակցեցինք նրա հետ վերջերս կայացած ընտրությունների նախապատրաստման ընթացքում և մինչև այժմ համատեղ աշխատում ենք արդյունքների մշակման և ստուգման վրա», - նշել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանը:

Դեռևս 2005թ. մարտի սկզբին նա հրապարակել է հետևյալ տվյալները՝ ՄԱԿ-ի հաստատությունները, հիմնադրամները և ծրագրերը, ընդհանուր թվով՝ 23, համատեղ աշխատում են երկրի վերակառուցմանն ուղղված միջազգային օգնությունը համակարգելու գծով: ՄԱԿ-ը հավանություն է տվել և ֆինանսավորել է ընդհանուր թվով 46 նախագծի՝ 494 միլիոն ԱՄՆ-ի դոլար արժողությամբ: Նա նշել է նաև, որ կարևորը ոչ թե ՄԱԿ-ի աշխատակիցների թիվն է, այլ որ Իրաքում իրենց աշխատանքի մեծ մասը՝ հանձնախմբի ուսուցանում, կոնսուլտացիոն աշխատանք, համակարգում, ֆինանսական միջոցների հոսքերի սպասարկում և այլն,

կարելի է իրագործել նաև երկրից դուրս, այսինքն պայման չէ Իրաքում գտնվելը[42]:

Սույն հոդվածում օգտագործված նյութերի լուսաբանումը հաստատում է նաև, որ իրաքյան նավթի դերը գնալով ձեռք է բերում կարևոր նշանակություն ոչ միայն որպես տնտեսական գործոն, այլ նաև ԱՄՆ-Իրաք հակամարտության քաղաքական զարգացումներում ոչ պակաս քնութագրական շարժառիթ և կռվան: «Չիկագո Սան Թայմս» թերթը տեղեկացնում է, որ Կալիֆոռնիայում ռազմածովային բազայում սեպտեմբերի 1-ի իր ելույթում Բուշը հայտարարել է, որ ամերիկյան զորքերը պետք է Իրաքում մնան երկրի նավթային հարստությունները ահաբեկիչներից պաշտպանելու համար: Բուշի խոսքերով, եթե ալ-Զարքաուին և Բեն Լադենը տիրանան Իրաքին, ապա այնտեղ ահաբեկիչների պատրաստման նոր հենակետ կստեղծեն, իսկ նավթը կօգտագործեն իրենց չարագույժ ծրագրերի ֆինանսավորման նպատակով[43]:

KARINE SAMVELYAN

THE POLITICAL SITUATION IN IRAQ (JUNE 2004 – AUGUST 2005) AND THE POSITION OF THE UNITED NATIONS

The article deals with the analyses of the political sphere in Iraq in period of June 2004 – August 2005. This period was very intensive in Iraq: the reconstruction of national and local institutions; the preparations for direct elections; the process of active debates about the problems of the new Constitution etc.

The United Nations role in Iraq in this period – important factor.

The actions of the Security Council of the United Nations in Iraq included the democratic methods for just solve the very difficult political problems for this phase. The decision about the extention of UN Assistance Mission for Iraq is very important step. The Security Council having considered the report of the Secretary-Gencral of 5 August 2004 (S/2004/625) decides to extend the Mandate of the United Nations Assistance Mission for Iraq (UNAMI) for a period of twelve months from the date of this resolution. United Nations should play a leading role in assisting the Iraqi pcople and government in the formation of institutions for representative government.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես՝ ԱՄԿ-ը մշակում է Իրաքի հետպատերազմյան կառուցվածքի ծրագիր, «Ազգ», 6, III, 2003, էջ 5:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:

6. Տե՛ս Организация Объединенных Наций. Генеральная Ассамблея. A/59/100, Distr: General 15 June 2004, Russian Original: English. c. 300, 243, 244, 245, 274, 275, 280, 292.
7. Տե՛ս "Известия", 8 IV, 2005, с. 6.
8. Кофи Анан, Начать с чистого листа, "Известия", 2 III, 2005, с. 4.
9. Նույն տեղում:
10. Սուննիները կրկին դեմ են, «Հայկական ժամանակ», 30 VIII, 2005, էջ 7:
11. «Ազգ», 26, VIII, 2005, էջ 5:
12. "Независимая газета", 20 V — 21 V, № 98, 99, с. 6.
13. Նույն տեղում, 28, VI, 2005, № 129, էջ 8:
14. Նույն տեղում:
15. «Ազգ», 2 VI, 2005, էջ 5:
16. «Ազգ», 10 VI, 2005, էջ 5:
17. "Известия", 28 VI, 2005, с. 4.
18. "Независимая газета", 12 VII, 2005, с. 8.
19. Նույն տեղում, 6 VII, 2005, էջ 6:
20. «Ազգ», 23, VII, 2005, էջ 5:
21. Նույն տեղում, 10 VI, 2005, էջ 5:
22. Նույն տեղում:
23. "Независимая газета", 20 VII, 2005, № 148, с. 6.
24. Նույն տեղում, 21 VII, 2005, № 149, с. 6.
25. Նույն տեղում, 12 VII, 2005, № 140, с. 8.
26. "Известия", 8 VIII, 2005, с. 4.
27. «Ազգ», 12, VII, 2005, էջ 5:
28. Նույն տեղում:
29. "Независимая газета", 21, VII, 2005, № 149, с. 6.
30. "Известия", 20 VII, 2005, с. 1, 3.
31. Նույն տեղում, 11 VIII, 2005, с. 4.
32. Նույն տեղում:
33. Նույն տեղում, 23 V, 2005, էջ 4:
34. Տե՛ս նույն տեղում:
35. Նույն տեղում, 5 VIII, 2005, էջ 6:
36. Նույն տեղում, 8 VIII, 2005, էջ 4:
37. Նույն տեղում:
38. S /PRST/ 2004/6, Strong support for decision to dispatch UN assistance team to Iraq, United Nations, Press Release, Security Council, SC/8293, 17 January 2005, Resolutions and Statements of the Security Council, 2004, p. 119.
39. Նույն տեղում, S /PRST/ 2004/11, Strong support for efforts of Special Adviser on Iraq, p. 124.
40. Նույն տեղում, S /RES/ 1557, Extension of UN Assistance Mission for Iraq, p. 73-74.
41. Տե՛ս "Известия", 24 III, 2005, с. 3; 1 IV, 2005, стр. 3; 18 V, 2005, с.2.
42. Նույն տեղում, 2, III, 2005, էջ 4:
43. «Ազգ», 2 IX, 2005, էջ 5:

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԾՐԱԳԻՐ

Ցեղասպանության երևույթի տեսական հետազոտությունների կարևորագույն եւ, թերեւս, սակավ ուսումնասիրված ուղղություններից է պետության (*state power*) դերի իրականացման հետ կապված խնդիրների ընդհանրության պարզաբանումը: Մասնավորապես, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ցեղասպանության քաղաքականության գործադրման վերաբերյալ պաշտոնական որոշում ընդունելու և համապատասխան գործողությունների ծրագրի նախապատրաստման գործընթացը արտացոլող փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրումը, քանի որ այս դեպքում հնարավոր է դառնում վավերագրերի միջոցով փաստել դիտավորության հանգամանքի (*intent*) առկայությունը: Այն ցեղասպանության հիմնական բնորոշիչն է: ՄԱԿ-ի նախկին Գլխավոր քարտուղարներից Բութրոս Բութրոս-Ղալին բնութագրում է այն որպես ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948թ. Կոնվենցիայի "հիմնարար տարր"[1]: Եթե չի հաջողվում այն բացահայտել և ապացուցել, ապա հնարավորություն է ստեղծվում ընդհանրապես խուսափել ցեղասպանության համար պատասխանատվությունից, ինչպես կոնկրետ օրինակների վերլուծության հիման վրա եզրակացնում է ցեղասպանագիտական հետազոտությունների առաջնեկ Լեո Քուփըրը[2]: Այսպես, օրինակ, բրազիլական կառավարությունը ժամանակին խուսափեց տեղաբնիկ առանձին ցեղերի դեմ ցեղասպանության մեջ մեղադրվելուց, քանի որ նրան հաջողվեց ցույց տալ, որ բնակչության այդ խմբերի անհայտացումը արդյունք էր սովի, որը չէր ծրագրվել կառավարության կողմից[3]:

Դիտավորության հանգամանքը առաջինը մտցրել է գիտական և իրավագիտական շրջանառության մեջ ցեղասպանության հայեցակարգի ստեղծող Ռաֆաել Լեմկինը: Հիմք ընդունելով ցեղասպանություն իրականացնողի դիտավորության (intent) հանգամանքը, նա բնութագրել է ցեղասպանությունը որպես որոշակի ազգային, կրոնական կամ ռասայական խմբի դեմ "հալածանքի կամ ոչնչացման նպատակով իրականացվող տարաբնույթ գործողությունների ընդհանրություն"[4]: Հետագայում այն տեղ գտավ 1948թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ըն-

դունված "Ցեղասպանության հանցագործության կանխարգելման եւ դրա համար պատժի մասին" Կոնվենցիայի տեքստում[5]:

Սույն հոդվածում պետության դերի ու դիտավորության հանգամանքի հետ կապված տեսական խնդիրները պարզաբանելու համար մենք անդրադառնում ենք Օսմանյան կայսրության իրականությանը: Այս ընտրությունը պայմանավորված է նրանով, որ 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին օսմանյան Թուրքիան իրականացրեց նոր ժամանակների առաջին լայնածավալ ցեղասպանությունը՝ շուրջ երկու տասնամյակների ընթացքում մեթոդաբար բնաջնջելով Արեւմտյան Հայաստանի եւ կայսրության այլ տարածաշրջանների հայ ազգաբնակչությանը: Այդ ոճրագործությունը ծրագրվեց եւ իրագործվեց թուրքական պետության կողմից՝ ի դեմս նրա կենտրոնական ու տեղական տարբեր մակարդակի մարմինների ու գերատեսչությունների, ինչպես նաեւ հատուկ այդ նպատակով ստեղծված կառույցների: Ներգրավվեցին և օգտագործվեցին նաեւ մահմեդական ազգաբնակչության առանձին խմբեր: Այդ գործունեությունը ղեկավարում էր պետական կառավարման բարձրագույն օղակի ընդերքում գործող միասնական կենտրոնը՝ սկզբում սուլթան Աբդուլ Համիդը եւ նրա պալատի հատուկ գաղտնի գրասենյակը, հետագայում՝ երիտթուրքական կուսակցության ղեկավար կորիզը:

Այդ քաղաքականության բաղադրիչների եւ տարրերի մի մասը մշակվել ու կիրառվել էր Օսմանյան կայսրության պատմության նախորդ շրջաններում՝ ինչպես հայերի, այնպես էլ այլ հպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Մեր նախորդ հրապարակումներում քննության են առնված ցեղասպանության ծագումնաբանության մի շարք հարցեր[6]: Սակայն դեռևս ուսումնասիրված չէ ցեղասպանության բուն ծրագրի առաջացման գործընթացը կայսրությունում: Սույն հոդվածը անդրադարձ է այդ խնդրին: Մենք քննության ենք առնում ցեղասպանական բնույթի երկու ծրագիր, որոնք ստեղծվել են Օսմանյան կայսրությունում շուրջ չորս տասնամյակ տարբերությամբ: Դրանցից առաջինը ստեղծվել է 1876թ. իսկ երկրորդը՝ 1915թ.

<u>1876թ. ծրագիրը</u>

Անդրադառնանք 1876թ. ծրագրին: Այն ուղղված է եղել բուլղարների դեմ և ըստ էության հակազդեցություն էր բուլղարների Ապրիլյան ապստամբությանը: Այդ ծրագիրը գիտական շրջանառության մեջ է դրվել մեր կողմից անցյալ տարի և արդյունք է պրպտումների Ռուսաստանի Արտաքին Քաղաքականության Արխիվում[7]:

Այն, որ նման ծրագիր պիտի գոյություն ունենար, մեզ հուշել են համեմատաբար վերջերս հրատարակված անգլիական դիվանագիտական փաստաթղթերը, որոնք մինչև այդ համարվել են կոնֆիդենցիալ և տեղ չեն գտել հայտնի "Կապույտ գրքերում": Այսպես օրինակ, Ադրիա-

նապոլսի բրիտանական փոխ-հյուպատոսի ստացած տեղեկության համաձայն, կառավարության կողմից հանձնարարականներ են ուղարկվել տեղական իշխանություններին, որոնցով ցուցում է տրվել նրանց "ոչնչացնել բուլղարներին" և սպանել վեց տարեկանից ցածր բոլոր արու մանուկներին: Այդ միջոցառումներով, նպատակ է դրվում "բնաջնջել ցեղը (race) և ստիպել մնացածին արտագաղթել"[8]: Այդ կարևոր տեղեկության աղբյուրն է եղել օսմանյան բյուրոկրատիայի ազգությամբ ալբանացի մի ներկայացուցիչ: Այն թվագրված է մայիսի 19-ով: Ուշագրավ է, որ դրանից մի քանի օր առաջ բուլղարացի քաղաքական գործիչ ու հրապարակախոս Թոդոր Բուրմովը, լավ տեղեկացված լինելով բուլղարական ապրիլյան ապստամբության ճնշման նպատակով թուրքական իշխանությունների ձեռնարկած գործողությունների մանրամասների մասին, հանգել էր եզրակացության, թե "դժբախտ ազգաբնակչության կոտորածը տեղի է ունենում սուլթանական կառավարության նախապես մտածված ծրագրով"[9]: Նա այդ ժամանակ գտնվում էր Կ. Պոլսում ու կատարում էր ռուսական դեսպանատան թարգմանչի պարտականությունները: Պարզ է, որ իր այդ դիտարկումը նա կիսել է նաև դեսպան կոմս Ն. Իգնատևի հետ, սակայն արխիվային փաստաթուղթ այդ մասին չի պահպանվել:

Մեր կողմից հայտնաբերված արխիվային փաստաթուղթը ոչ միայն հաստատում է օսմանյան պաշտոնյայի հայտնած տեղեկությունը և բուլղարացի գործչի իրադրության վերլուծության արդյունքը, այլ նաև նշում է ցեղասպանական բնույթի մի շարք կետեր: Այն իրենից ներկայացնում է օսմանյան կառավարության նիստի արդյունքում ընդունված որոշման շարադրանք: Ստորև ներկայացնում ենք այդ հաղորդագրությունը.

"Թուրքական կառավարությունը որոշում է ընդունել ապստամբության ճնշման պատրվակով ոչնչացնել լիովին բուլղարական այն... բնակավայրերը, որոնց բնակիչները առավել առաջընթաց են ապրել, իսկ մնացյալ գյուղերը ու քաղաքները ավերել բաշիբոզուկների ասպատակությունների միջոցով, քաղաքային բնակչության լավագույն ներկայացուցիչներին ոչնչացնել այս կամ այն ձևով, բնաջնջել ողջ մտավորականությանը և կենդանի չթողնել Ռուսաստանում կրթություն ստացած ոչ մի ուսուցչի, փակել ուսումնարանները և այնպես ճնշել ժողովրդին, որ նա հնարավորություն չունենա երբևիցե վերականգնվի ու վերադառնա ներկայիս վիճակին, երբ նա վտանգ է ներկայացնում թուրքերի տիրապետության համար, և վերջապես, թուրքացնել նրա մի մասին, որ էլ ավելի թուլացնել նրան:"[10]

Դժվար չէ եզրակացնել, որ վերը նշված կետերի ընդհանրությունը իրենից ներկայացնում է, ըստ էության, ոչ միայն ապստամբության

ճնշման ծրագիր, այլև բուլղարների հիմնովին բնաջնջման ծրագիր: Այստեղ նշված են և գլխավոր նպատակը, և այն իրականացնելուն միտված որոշակի գործողություններ: Այդ գործողությունները հետևյալն էին.

1. ոչնչացնել անհնազանդություն ցուցաբերող բուլղարական բնակավայրերի բնակիչներին և հավասարեցնել նրանց հողին,
2. մնացյալ բուլղարական բնակավայրերը ենթարկել բաշիբոզուկների ասպատակություններին,
3. "այս կամ այլ միջոցով" ոչնչացնել բուլղարների քաղաքական. տնտեսական ու ինտելլեկտուալ ընտրանուն,
4. այս քաղաքականության հիմնական թիրախը դարձնել մտավորականությանը, մասնավորապես, Ռուսաստանում կրթություն ստացած ուսուցիչներին,
5. փակել բուլղարական ուսումնարանները
6. հնարավորինս ուժեղացնել բուլղարների թուրքացման գործընթացը:

Ժամանակակից ընկալումներից ելնելով, այս գործողությունների ընդհանրությունը բացահայտում է դիտավորությունը բնաջնջել որոշակի էթնիկական խումբ և կարող է բնութագրել որպես ցեղասպանություն:

Փաստաթղթում մատնանշվում են նաև այդ ծրագրի հեղինակները՝ Օսմանյան կայսրության այդ շրջանի ականավոր պետական գործիչներ Ահմեդ Միդհատ փաշան ու Հյուսեյն Ավնի փաշան: Միդհատ փաշան այդ կառավարությունում զբաղեցնում էր առանց պորտֆելի նախարարի պաշտոն, իսկ Ավնի փաշան՝ ռազմական նախարարի: Նրանց առաջարկած ծրագիրը ընդունվել է միայն երկարատև վիճաբանությունից հետո: Մասնավորապես, դեմ է եղել արտաքին գործերի նախարարար Րաշիդ փաշան:

Հարկ է ընդգծել, որ այդ ժամանակ կառավարության ղեկավարն էր սադրազամ Մյութերջիմ Րյուշդյու փաշան, որը ժամանակին եղել է Սիրիայում քրիստոնյաների կոտորածների գլխավոր կազմակերպիչներից[11]: Նա, Միդհատը, Ավնին, ինչպես նաև նախկին շեյխ ուլ իսլամ Հասան Հայրուլլահ էֆենդին սկսած 1875թ. կազմել էին դավադիրների խումբ, որի նպատակն էր ոչ միայն գավթել իշխանությունը, այլ նաև ճնշումներ գործադրել քրիստոնյաների դեմ[12]: Դավադիրները կապ էին հաստատել մահմեդական ուսումնական հաստատությունների ուսանողների հետ և օգտագործելով նրանց կատաղի հակաքրիստոնեական տրամադրությունները հրահրում էին վերջիններիս հակակառավարական ցույցերի[13]: Այդ ցույցերի արդյունքում սուլթանը ստիպված էր կազմել նոր կառավարություն: Այդ դավադիր խմբի բոլոր անդամները ընդգրկվեցին նոր կառավարության կազմի մեջ[14]: Այդպիսով, նրանք հնարավորություն ստացան հաղորդել իրենց ծրագրերին պաշտոնական բնույթ:

Հետագայում հանցավոր խմբի կազմը ընդլայնվել էր: Այդ ամիսներին Կ. Պոլսում գտնվող երիտասարդ ռուս թուրքագետ Վասիլի Սմիռնովը[15], հենվելով "ստամբուլյան հարաբերություններին լավ ծանոթ մարդկանցից" ստացված տեղեկությունների վրա. սալիս է երեք թուրք պետական գործիչների անունները, որոնք կազմում էին, ըստ իր բնութագրման, "բուլղարական սարսափների դժոխքային եռյակը". նրանք էին, բացի Միդհատ փաշաից, այդ տարիների խոշոր պետական գործիչ ու ճանաչված բառարանագետ Ահմեդ Վեֆիք փաշան եւ "նոր օսմանցիների" շարժման առաջնորդներից Ալի Սուավին[16]: Նրանք, ըստ Սմիռնովի, նպատակադրվել էին "սիստեմատիկորեն ոչնչացնել իրենց համար ատելի բուլղարներին և ... համառորեն հետևում են իրենց ծրագրին..."[17]:

Շարունակելով հետաքրքրվել այդ խնդրով ռուսական դիվանագետները կարողացան բացահայտել այդ ցեղասպանական ծրագրի մի շարք այլ մանրամասներ: Համաձայն Ռուսե քաղաքի ռուսական գլխավոր հյուպատոս Վ. Ֆ. Կոժևնիկովի ստացած տեղեկությունների, կայսրության մայրաքաղաքում Միդհատ փաշայի ղեկավարությամբ գործում է գաղտնի կոմիտե՝ "Սյուփյուրգե" ("Ավել") անվանումով: Ըստ այդ տեղեկության, "Սյուփյուրգեի" թիրախը միայն բուլղարները չէն, նրա նպատակն է ոչնչացնել երկրի ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը[18]:

"Սյուփյուրգեի" գոյության մասին ռուսական դիվանագիտությանը հայտնի էր դարձել միայն 1876 թ. նոյեմբերին: Սակայն, ըստ երևույթին, այն ստեղծվել էր ավելի վաղ, դեռևս այդ նույն տարվա մայիսին, երբ կառավարությունը Միդհատի և Հյուսեյն Ավնիի ճնշման ներքո ընդունել էր վերոհիշյալ որոշումը բուլղարներին ոչնչացնելու մասին: Հետագայում, Հյուսեյն Ավնիի սպանությունից հետո (նույն թվականի հունիսի 15-ին) այն համալրվել էր նոր անդամներով (հայտնի են Վեֆիք փաշայի և Ալի Սուավիի անունները), սակայն, ինչպես վկայում է հաղորդագրությունը "Սյուփյուրգեի" մասին, Միդհատը պահպանել էր իր ղեկավար դիրքը:

Ցեղասպանության ծրագրի ստեղծման ամսաթիվը կարելի է որոշել բավական մեծ ճշտությամբ: Նոր կառավարությունը կազմվել է մայիսի 12-ին, մեր կողմից նշված փաստաթուղթը թվագրված է մայիսի 29-ով, անգլիական փաստաթուղթը՝ մայիսի 19-ով: Այսպիսով, առավել հավանական է, որ կառավարության համապատասխան նիստը տեղի է ունեցել մայիսի երկրորդ կեսին, երբ բուլղարական ապստամբությունը վերջնականապես դեռ ճնշված չէր: Հետաքրքիր է նշել, որ այդ նույն օրերին կառավարությունը զավթած դավադիրները նյութում էին նաև այլ դավեր՝ այս անգամ սուլթան Աբդուլ Ազիզի դեմ[19]: Ըստ երևույթին, շատ կարճ ժամանակ է պահանջվել և ցեղասպանության ծրագիրը և հակասուլթանական դավադրությունը նախապատրաստելու համար: Ակնհայտ է, որ Միդհատը և Ավնին մշակել էին բուլղարների ցեղասպանության ծրագրի

հիմնական դրույթները նախքան իշխանության գալը: Այդ հըկու գործիչը նաև հիմնական շարժիչ ուժն էին հակաասուլթանական դավադրության[20]:

Օսմանյան կայսրությունում հետագայում տեղի ունեցած բուռն իրադարձությունները՝ երկու սուլթանների գահընկեցություն, սահմանադրության հռչակում, ինչպես նաև եվրոպական հասարակության կտրուկ հակազդեցությունը "բուլղարական սարսափներին", խոչընդոտեցին վերը նշված ծրագրի իրականացմանը:

Հանցավոր քառյակի անդամներից միայն Վեֆիքը խուսափեց բռնի մահից: Միդհատը տարիներ անց սպանվեց իր ոխերիմ թշնամի սուլթան Աբդուլ Համիդի հրամանով, Ավնին, ինչպես արդեն նշել էինք, այդ տխրահռչակ կառավարության նիստից մեկ ամիս չանցած սպանվեց մահափորձի հետևանքով, իսկ Սուավին սպանվեց երկու տարի անց՝ Աբդուլ Համիդի դեմ ապստամբության ընթացքում:

1915թ. ծրագիրը

Անցնենք երկրորդ փաստաթղթին: Նրա թիրախը հայ ժողովուրդն էր: Այդ փաստաթուղթը իրենից ներկայացնում է Առաջին աշխարհամարտի տարիների Օսմանյան կայսրության մի խումբ ղեկավար գործիչների՝ Թալեաթի ղեկավարությամբ, գաղտնի հանդիպման ժամանակ ընդունված որոշումների գրառում և հայտնի է որպես "10 պատվիրաններ":

Հանրությանը ծրագրի գոյության մասին հայտնի է դարձել 1919թ. Կ.-Պոլսի հայկական "Վերջին լուր" լրագրի հրապարակումից, որը հրատարակել է նաև ծրագրի հայերեն թարգմանությունը: Հետագայում այն արտատպել է իր մենագրություններից մեկում հայտնի պատմաբան Լեոն[21] և ավելի ուշ՝ ֆրանսահայ պատմաբան Աբթյուր Բեյլերյանը իր ֆրանսիական արխիվային փաստաթղթերի ժողովածուի ներածությունում հրապարակել է նրա ֆրանսերեն թարգմանությունը[22]: Ամերիկահայ ցեղասպանագետ Վահագն Դադրյանը անցյալ դարի վերջերին մանրակրկիտ հետազոտեց անգլիական արխիվները և բացահայտեց մի շարք կարևոր փաստեր, կապված փաստաթղթի ստեղծման ու հայտնաբերման հանգամանքների հետ[23]: Մասնավորապես, պարզվեց, որ խորհրդակցությանը ներկա են եղել ներքին գործերի նախարար և երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Թալեաթը, կենտրոնական կոմիտեի անդամներ և "հատուկ կազմակերպության" ղեկավարներ Բեհաեդդին Շաքիրը ու Նազըմը, ներքին գործերի հասարակական անվտանգության վարչության պետ Իսմաիլ Ջանվուլադը ու օսմանյան բանակի գլխավոր շտաբի քաղաքական վարչության պետ գնդապետ Սեյֆին: Խորհրդակցությանը որպես քարտուղար ներկա է եղել ներքին գործերի նախարարության հետախուզական վարչության պետ գնդապետ Էսադը, որը և գրի է առել փաստաթուղթը: Ստորև ներ-

կայացնում ենք Դադրյանի կողմից հրապարակված անգլերեն տեքստի թարգմանությունը.

1."Միություն և առաջադիմություն" կոմիտեի կանոնակարգի 3-րդ ու 4-րդ կետերը օգտագործելով փակել բոլոր հայկական միությունները և ձերբակալել բոլոր նրանց, ովքեր երբևիցե գործել են կառավարության դեմ, և ուղարկել նրանց այնպիսի նահանգներ, ինչպիսիք են Բաղդադը կամ Մոսուլը, և ոչնչացնել նրանց ճանապարհին կամ տեղում:

2.Բռնագրավել զենքերը:

3.Համապատասխան ու հատուկ միջոցներով գրգռել մահմեդականների կարծիքը հայերի դեմ. այնպիսի վայրերում, ինչպիսիք են Վանը, Էրզրումը, Ադանան, որտեղ հայերը փաստորեն արդեն արժանացել են մահմեդականների ատելությանը, հրահրել կազմակերպված կոտորածներ՝ ինչպես ռուսները արեցին Բաքվում:

4. Էրզրումի, Վանի, Մամուրեթ ուլ Ազիզի ու Բիթլիսի նահանգներում թողնել գործադրումը ժողովուրդին, ի հակառակ դրան այնպիսի տեղերում, ինչպիսիք են Ադանան, Սըվասը, Բուրսան, Իզմիտը ու Զմյուռնիան ակտիվորեն օգնել մահմեդականներին կանոնավոր զինված ուժերով (այսինքն՝ ժանդարմերիայով):

5.Իրականացնել միջոցառումներ՝ մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, հոգևորականներին և ուսուցիչներին ոչնչացնելու նպատակով, թողնելով աղջիկներին և երեխաներին՝ մահմեդականացնելու նպատակով:

6.Տեղահանել բոլոր նրանց ընտանիքներին, ում կհաջողվի փրկվել, և իրականացնել միջոցառումներ՝ նրանց բոլոր կապերը իրենց ծննդավայրերի հետ կտրելու նպատակով:

7.Քանի որ հայ պաշտոնյաները կարող են լինել լրտեսներ, նրանց լիովին հեռացնել բոլոր պետական գերատեսչություններից կամ պաշտոններից:

8.Օգտագործելով համապատասխան միջոցներ՝ սպանել բանակում գտնվող բոլոր հայերին, թողնելով դրա իրականացումը զինված ուժերին:

9.Բոլոր գործողությունները ամենուրեք սկսել միաժամանակ՝ այդպիսով ժամանակ չթողնելով նախապատրաստելու պաշտպանական միջոցառումներ:

10.Ուշադրության դարձնել այս հրահանգների հույժ գաղտնի բնույթի վրա, դրանք չպիտի հայտնի լինեն 2-3 հոգուց ավելի մարդկանց".[24]

Փաստաթղթի վրա ամիս-ամսաթիվ նշված չէ: Անգլիացի սպան, որին Էսադը հանձնել է այդ փաստաթուղթը, թվագրել է այն մոտավորա-

պես 1914թ. դեկտեմբեր –1915թ. հունվար ամիսներով[25]: Ներկայումս հայտնի փաստերի լույսի ներքո այդ թվագրումը կարելի է համարել ընդունելի, քանի որ փետրվարին արդեն նշաններ կային, որ այդ ծրագրի կետերը սկսել են իրագործվել: Այսպես, օրինակ, լավատեղյակ գերմանացի փոխ-գնդապետ Շտանգեն[26] հայտնում էր, որ փետրվարի 10-ին "քաղաքական պատճառներով" սպանվել են Օսմանյան բանկի հայազգի փոխ-տնօրենը և համարյա այդ նույն օրերին՝ Էրզինջանի հայոց եպիսկոպոսը[27]: Դրանից մի քանի օր հետո սկսվեց հայազգի պաշտոնյաների վտարումը պետական ծառայությունից, օսմանյան բանակի հայ շարքայինների զինաթափումը և սպաների ձերբակալումը[28]: Բոլոր այդ գործողությունները հիշատակված էին "10 պատվիրաններում": Որոշ մասնագետների պնդմամբ, երիտթուրքերի կենտկոմը վերջնական որոշումը հայերի զանգվածային կոտորածը սկսելու մասին ընդունել է 1915թ. նույն ամսի կեսերին[29]: Արամ Անտոնյանի կողմից հրատարակված երիտթուրքական կուսակցության կենտկոմի նամակը, ուղղված Ադանայի վիլայեթում կենտկոմի պատասխանատու ներկայացուցիչ Ջեմալին, գրված է փետրվարի 18-ն և աննուղակի կերպով հաստատում է այդ վարկածը, քանի որ այստեղ նշվում է, թե արդեն որոշում է ընդունվել բոլոր հայերին անխնա ոչնչացնել և համապատասխան հրամանները այդ մասին կառավարության կողմից շուտով կուղարկվեն նահանգների կուսակալներին ու բանակի հրամանատարներին[30]: Այսպիսով, կարելի եզրակացնել, որ "10 պատվիրանները" արտացոլում են հայոց ցեղասպանության վերաբերյալ վերջնական որոշում ընդունելու նպատակով նախապատրաստական աշխատանքի այն փուլը, երբ արդեն ստեղծվել էր կոնկրետ խնդիրների լուծմանը ուղված գործողությունների ու միջոցառումների միասնական ու համակարգված ծրագիր:

Ծրագրի հեղինակներից Թալեաթի, Բեհաէդդին Շաքիրի ու Նազըմի մեղքը հայոց ցեղասպանության կազմակերպման ու իրականացման մեջ վաղուց հայտնի ու փաստված է և լրացուցիչ անդրադարձի անհրաժեշտություն չկա: Ջանփուլադի հայաջինջ գործունեությունը նույնպես լավ հայտնի է: Մասնավորապես, նա գլխավոր պատասխանատու է Կոնստանդնուպոլսի հայ մտավորականության և այլ խավերի ներկայացուցիչների ձերբակալությունների և աքսորի համար: Նույնիսկ իր կուսակիցների շրջանում նա աչքի էր ընկնում անմարդկային դաժանությամբ ու արյունարբու հակումներով և այդ պատճառով նրան անվանում էին "մարդասպան զինվոր"[31]: Անգլիացի սպա Էնդրյու Րյանը, որը հարցաքննել է ձերբակալված երիտթուրք պարագլուխներին, խոստովանում էր, որ ինքը նրա նկատմամբ ավելի քիչ համակրանք է զգում, քան թե ուրիշների նկատմամբ[32]: Իսկ ահա Մուսթաֆա Քեմալը ոչ միայն համակրում էր այդ "մարդասպան զինվորին", այլ նաև բարձր էր գնահատում նրան, որպես "պետական գործչի"...[33]

Այդ հանցավոր խմբի հինգերորդ անդամը՝ գլխավոր շտաբի գնդապետ Սեյֆին նույնպես եղել է հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներից: Նրա դերը մինչև օրս լիովին բացահայտված չէ: Հայտնի փաստերը վկայում են, որ նա. մասնավորապես, ղեկավարել է "Հատուկ կազմակերպության" շրջանակներում գործող մարդասպանների ջոկատները՝ այսպես կոչված *ֆիդաիններին*: Այդ փաստը հաստատվել է գերմանացի գնդապետ ֆոն Լոսսովի կողմից[34]: Սակայն շնորհիվ գաղտնի գործելու մեծ վարձի այդ մարդասպանին հաջողվեց խուսափել ետպատերազմյան օսմանյան ռազմական դատարանի առջև կանգնելուց: Պատերազմի ավարտից հետո նա ակտիվ, սակայն և հաճախ անտեսանելի գործունեություն ծավալեց քեմալական շարժման տարբեր ճակատներում: Այսպես, նա ղեկավարներից էր Արևմտյան ճակատում գործող գաղտնի "Համզա" խմբի, որի նպատակն էր ապահովել հաջորդականությունը երիտթուրքերի և քեմալականների միջև[35], իսկ հետագայում՝ հրամանատարն էր Տրապիզոնում տեղակայված քեմալական բանակի ստորաբաժանումներից մեկի[36]:

Հանցավոր խմբի անդամներից Սեյֆին միակն էր, որը մահացավ իր մահով: Թալեաթին և Բեհաէդդին Շաքիրին գնդակահարեցին հայ վրիժառուները, Նազըմը ու Ջանփոլադը մեղադրվեցին Մուսթաֆա Քեմալի դեմ մահափորձ նախապատրաստման համար և ի թիվս մի շարք այլ նախկին իթթիհադականների 1926թ. կախաղան բարձրացվեցին:

Համեմատական վերլուծություն

Ժամանակակից ցեղասպանագիտության մեջ լայն տարածում է ստացել տարբեր ցեղասպանությունների համեմատական ուսումնասիրումը: Համապատասխանաբար, ուշադրություն է դարձվել համեմատական հետազոտությունների մեթոդաբանական կողմի վրա: Մասնավորապես, առաջարկվել է "ցեղասպանությունների տարբեր դեպքերի համեմատության և ուսումնասիրման մատրիցա"[37]: Սակայն բացակայում են պետության բարձրագույն մարմինների կողմից նախապատրաստված ցեղասպանական ծրագրերի, կամ այլ համանման փաստաթղթերի համեմատական ուսումնասիրությունները: Նշանակում է, չկա նաև համապատասխան մեթոդաբանություն: Այդ պատճառով, մենք ստիպված ենք առաջարկել մեր մեթոդը, որը կարելի է անվանել *համեմատական-կառուցվածքային:* Այն իր մեջ ներառնում է համեմատական, ինչպես նաև կոնկրետ տեքստերի հետազոտությունների տարրեր և հնարավորություն է տալիս լավագույնս քննության առնել ամերիկացի հասարակագետ Սթիվըն Քացի կողմից նշված ցեղասպանության վերլուծության երեք հիմնական հարցերը. բնորոշում, փաստացի նյութ և մեկնաբանություն[38]:

* * *

Համեմատելով “10 պատվիրանները” 1876 թ. փաստաթղթի հետ կարելի եզրակացնել, որ թուրքական վերնախավը անցած չորս տասնամյակների ընթացքում զգալիորեն հմտացել էր ցեղասպանություն նախապատրաստելու ու համապատասխան գործողությունների ծրագիր ստեղծելու գործում: Մասնավորապես, մի ողջ ազգի բնաջնջման գործընթացը այս փաստաթղթում ծրագրավորված է իրականացնել պետական տարբեր մարմինների համակարգված և մեկ կենտրոնից ղեկավարվող տարաբնույթ գործողությունների միջոցով: Դրանց թվին են պատկանում, օրինակ, և բռնի տեղահանությունը, ընդ որում, այդ պիտի օգտագործվի որպես քող՝ ֆիզիկական բնաջնջման համար, և հայ ազգաբնակչության նախապես ընտրված որոշակի խմբերի զանգվածային ոչնչացումը ու բռնի մահմեդականացումը և այլն: Նշված է, թե պետական որ կառույցն է իրականացնելու բնակչության որ խմբի ոչնչացումը: Հաշվի է առնված նաև ժամանակի գործոնը՝ նշված է գործողությունների միաժամանակյա իրականացման անհրաժեշտությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում քողարկիչ միջոցառումների իրականացման և խույժ գաղտնիության պահպանման անհրաժեշտության վրա: Կարևոր հանգամանք է այն, որ նշված ցեղասպանական գործողությունները նախատեսնված է իրականացնել ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլ ողջ կայսրության տարածքում:

1876թ. ծրագրում բոլոր այդ բաղադրիչները բացակայում են: Այն պարզապես պարունակում է ժամանակակից հասկացողությամբ ցեղասպանական գործողությունների որոշակի մի ընդհանրություն, որը նախատեսնված էր իրականացնել միայն Բուլղարիայի տարածքի վրա: Չեն նշված նրանց իրականացման ու ղեկավարման միջոցները, անտեսված են ժամանակի գործոնը և համակարգման անհրաժեշտությունը: Ի տարբերություն “10 պատվիրանների”, ուշադրություն չի դարձված գաղտնիության հանգամանքի վրա: Դեռ ավելին, ռուսական դիվանագիտական աղբյուրները հայտնում են, թե նրա գլխավոր հեղինակ Միդհատ փաշան չի թաքցնում այդ ծրագրի գոյության փաստը և “բացահայտորեն խոսում է նրա մասին”[39]:

Ծրագրերի միջև կարևոր տարբերությունից է նաև այն, որ 1876թ. ծրագիրը ընդունվել է կառավարության նիստի ընթացքում՝ քննարկումներից ու վիճաբանություններից հետո: Այն ունեցել է իր ընդդիմախոսին՝ ի դեմս կայսրության արտաքին գործերի նախարարի: 1915թ. ծրագիրը արդյունք է գաղտնի խորհրդակցության, որի ընթացքի մասին ոչ մի մանրամասն հայտնի չէ: Այդ փաստաթուղթը պահվել է գաղտնի և սկսել է իրագործվել նույնպես գաղտնիության պայմաններում, ինչպես և պահանջում էր նրա վերջին “պատվիրանը”: Ասկայն կայսրությունով մեկ տեղի ունեցող անասելի կոտորածը այլևս անհնարին էր պահել գաղտնի: Մա-

յիսի 12-ին (հ.տ.) Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները Հայտարարագրով դիմում են օսմանյան կառավարությանը՝ նրա անդամների վրա դնելով անձնական պատասխանատվություն Թուրքիայի կողմից "մարդկության ու քաղաքակրթության" դեմ իրականացվող հանցագործությունների համար[40]: Թուրքիայի պալագլուխները և միաժամանակ ցեղասպանության ծրագրի հեղինակները հանցագործությունները քողարկելու և պատասխանատվությունից խուսափելու միջոց էին ընտրել հայերի սպանդը՝ որպես պատերազմական գոտիներից տեղահանություն ներկայացնելու հնարքը: Հայտարարագրի հրապարակման հաջորդ օրվանից թուրքական իշխանությունները, Թալեաթի նախաձեռնությամբ, սկսում են ձեռնարկել քայլեր, որոնց նպատակն էր post factum "օրինական" տեսք հաղորդել բռնի տեղահանությանը: Նա ներքին գործերի նախարարության անունից զաղտնի զեկուցագրով դիմում է կառավարությանը՝ պահանջելով տեղահանել պատերազմական շրջանների հայ ազգաբնակչությանը[41]: Այս փաստաթուղթը, չնայած այն հանգամանքին, որ պարունակում է կեղծիքների ու ստերի մի ամբողջ շարան, միաժամանակ հնարավորություն է տալիս վերահաստատելու թուրքական իշխանությունների ցեղասպանության դիտավորությունը: Հ.Գ.Ղազարյանի թարգմանությամբ այն ձևակերպված է այսպես. "Պետության կենսական ջանքերու կարգին կարևոր գործ մըն է այս մտատանջությունը[42], զայն հիմնական կերպով լուծելու, վերջացնելու և ամբողջապես ջնջելու համար[43]: Այս մասին միջոցներ պատրաստելու և պատրաստ գտնվելու մասին խորհած և նկատողության առած ենք"[44]: Վերջին նախադասությունը կարելի է մեկնաբանել որպես անդրադարձ մեզ լավ ծանոթ "10 պատվիրաններին":

Իշխանությունները այնքան էին շտապում, որ խախտեցին օրենքների ընդունման կարգը, ինչը վկայում է նրանց շրջանում տիրող խուճապի մասին: Առանց կառավարության նիստ հրավիրելու, Թալեաթի զեկուցագիրը քննարկելու և կառավարության համապատասխան որոշում ընդունելու, արդեն հաջորդ օրը հապճեպ ընդունվում է և անմիջապես հրապարակվում է "Պատերազմի ժամանակ կառավարության գործունեության դեմ դուրս եկողների համար ռազմական տեսանկյունից առնվելիք միջոցների մասին ժամանակավոր օրենք" վերտառությամբ և սուլթանի և ռազմական նախարար Էնվերի ստորագրությամբ օրենքը[45]: Պատմագիտական գրականության մեջ այն հայտնի է որպես "Տեղահանության մասին օրենք", չնայած այն հանգամանքին, որ օրենքի տեքստում օգտագործված է ոչ թե "տեղահանություն" (*tehcir*) բառը, այլ "արտաքսում ու բնակեցում" (*sevk ve iskân*) արտահայտությունը[46]: Այդ օրենքի հրապարակված տեքստը պարունակում է չորս կետ, որոնցից կարևորը առաջին երկուսն են: Նրանցով զինվորական ստորաբաժանումների ղեկավարները պարտադրվում են պատերազմական գոտում կարգ ու

կանոնը խախտողներին ու կառավարության որոշումներին ենթարկվողներին ոչնչացնել, իսկ լրտեսության մեջ կասկածվող գյուղերի ու գյուղաքաղաքների բնակիչներին՝ "արտաքսել ու բնակեցնել" այլ բնակավայրերում[47]: Ուշագրավ է, որ հայ բառը այստեղ ընդհանրապես չի գործածված:

Օրենքի բովանդակությանը ծանոթանալիս ակնհայտ է դառնում երկու կարևոր հանգամանք.

առաջինը, այն գրված է միայն մեկ նպատակով՝ փորձել Անտանտի տերություններին համոզել, որ երկրում տեղի են ունենում զուտ պատերազմական պայմանների պահանջներից բխող միջոցառումներ, այլ ոչ թե հայերի համատարած և անասելի դաժան կոտորած.

երկրորդը, այդ միջոցառումների իրականացման համար պատասխանատու են զինվորական ղեկավարները, սկսած բանակի հրամանատարներից և վերջացրած դիվիզիայի հրամանատարներով, այլ ոչ թե կառավարության անդամները, որոնց պատերազմից հետո խոստացել էին պատժել Անտանտի երկրները:

Այսպիսով, հայոց ցեղասպանության հիմնական կազմակերպիչները, լավ գիտակցելով իրենց մեղքը, սկսած կոտորածների արդեն առաջին փուլից, փորձ էին անում խուսափել պատասխանատվությունից: Պատահական չէ, որ նույնիսկ այս օրենքը պարունակում էր գաղտնի կետեր, որոնք վերաբերում էին կոտորված ու բռնագաղթվածների ունեցվածքի բռնագրավմանը[48]: Այս դեպքում ևս բարձրագույն իշխանության ներկայացուցիչ թուրք ջարդարարները ցուցաբերում էին "զգուշավորություն"...

Ըստ օրենքի 3-րդ կետի, այն ուժի մեջ մտավ միայն պաշտոնաթերթ "Takvîm-i Vekāyi" ("*Իրադարձությունների օրացույց*") կողմից հրատարակվելուց հետո, այսինքն, մայիսի 19-ին:

Մինչդեռ, Թալեաթի զեկուցագիրը մայիսի 16-ին ներկայացվեց *սադրազամ* (վարչապետ) Սայիդ Հալիմին, որը չսպասելով կառավարության նիստին, տվեց նրան իր հավանությունը, այդպիսով միանալով հայոց ցեղասպանության համար պատասխանատուների թվին: Նա փաստաթղթի վրա դրեց իր անվան առաջին տառերը ու արեց հետևյալ մակագրությունը. "ի կատար ածել համաձայն առաջարկվածի"[49]: Կառավարության նիստը, որտեղ քննարկվեց Թալեաթի զեկուցագիրը, տեղի ունեցավ մեկ օր հետո՝ մայիսի 17-ին: Այդ նիստի համառոտ արձանագրությունը պահպանվել է և հետագայում հրապարակվել է ի թիվս օսմանյան արխիվներում պահվող այլ նյութերի[50]: Փաստաթուղթը վերնագրված է "Նախարարների խորհրդի քննարկումների վերաբերյալ արձանագրություն" և բաղկացած է երկու մասից. "Համառոտ նկարագրություն"[51] ու "Որոշում": Ընդգծենք, որ այս վերջինում նույնպես առկա է արտահայտություն, որը բացահայտում է այս անգամ արդեն ողջ օսմանյան

կառավարության ցեղասպանական նպատակադրվածությունը՝ նշված է հայկական շարժման "լիովին ոչնչացման ու վերացման անհրաժեշտությունը" ("imhâ ve izâlesi kat'iyyen muktezı")[52]:

Հայոց ցեղասպանության մասին որոշում ընդունելու վերջին փուլը արտացոլող ներկայումս հայտնի փաստաթղթերի ծագումնաբանական-բովանդակային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ի տարբերություն 1876թ., երիտթուրք ոճրագործների գործողություններում հենց սկզբից մեծ տեղ է հատկացվել իրականության կեղծմանը ու քողարկմանը:

Որոշ դեպքերում ակնհայտ է երկու ծրագրերի նմանությունը: Այսպես, օրինակ, հատուկ ընդգծված է սոցիալական-մասնագիտակւսն որոշակի խմբի՝ և բուլղարացի, և հայ ուսուցիչների իսպառ բնաջնջման անհրաժեշտությունը: Կամ էլ, բռնի մահմեդականացումը երկու փաստաթղթերում դիտարկվում է որպես ազգի բնաջնջման լրացուցիչ միջոց:

Ընդհանուր առմամբ, 1876թ. ծրագիրը արտահայտումն է միջանկյալ վուլ՝ միջնադարում Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների նկատմամբ որպես պատժամիջոց լայնորեն կիրառված զանգվածային կոտորածների քաղաքականության և լայնածավալ ցեղասպանության քաղաքականության միջև: Այդ պատճառով, այն որպես կոնկրետ ցեղասպան գործողություններ նախանշող փաստաթուղթ "անկատար" է: Ի տարբերություն նրան, "10 պատվիրանները" աչքի են ընկնում և նպատակների հստակ նախանշմամբ, և նրանց իրականացմանը ուղղված ու գաղտնիության պայմաններում նախապատրաստվող միջոցառումների լավ մտածված մի ողջ համակարգով: Ըստ էության, "10 պատվիրաններ" պարունակող ծրագիրը այդ տեսակետից արտահայտումն է այն փաստի, որ թուրքական վերնախավը տասնամյակների ընթացքում "հմտացավ" այլազգիների ու այլադավանների զանգվածային սպանդ կազմակերպելու ոճրագործ գործում: Այդ առումով, այն կարող է համեմատվել միայն նացիստական Գերմանիայի կողմից հրեաների ցեղասպանությունը ծրագրավորող փաստաթղթերի հետ: Ամեն դեպքում, այն անցյալ դարի ամենադաժան փաստաթղթերից է, բացարձակ չարի խտացրած արտահայտումներից:

Մեր կողմից քննության ստնված երկու ցեղասպանական բնույթի փաստաթղթերի միջև կա նաև մեկ սկզբունքային տարբերություն: Առաջինը, 1876 թվականինը, ըստ էության, նպատակ ուներ արմատական միջոցներով *հակազդել* արդեն ընթացող բուլղարական զինված ապստամբությանը: Իսկ երկրորդը, 1915 թվականինը, արդյունք էր տարիների նախապատրաստական աշխատանքի, որը, փաստորեն, սկիզբ էր առել դեռևս 1910թ.[53] և նրա ստեղծման պահին Օսմանյան կայսրությունում հայերի զինված ապստամբություն գոյություն չուներ: Բացի դրանից, թուրքական իշխանությունները 1890-ականներից սկսած արդեն ձեռք

էին բերել հայ ժողովրդի զանգվածային կոտորած ամենադաժան միջոցներով իրականացնելու "փորձառություն" և 1915թ., անտարակույս, հաշվի առան այն: Բուլղարների դեպքում, այդ փորձը սահմանափակ էր:

1876 թվականի ծրագիրը այդպես էլ հիմնականում չիրականացվեց: Բուլղարները, չնայած այն հանգամինքին, որ Ապրիլյան ապստամբությունը դաժանորեն ճնշվեց, ոչ միայն պահպանեցին իրենց գոյությունը իրենց հայրենիքի տարածքի վրա, այլ նաև շուտով հնարավորություն ստացան նախադրյալներ ստեղծելու ինքնիշխան պետություն ստեղծելու համար: "10 պատվիրանները" իրականացվեցին "մեծ հաջողությամբ", քանի որ դրա արդյունքում հայ ժողովուրդը իսպառ բնաջնջվեց իր պատմական հայրենիքի տարածքում:

Վերջաբանի փոխարեն

Մեր կողմից քննության առնված երկու ցեղասպանական ծրագրերի առկայությունը, որոնք ուղղված էին երկու տարբեր ժողովուրդների դեմ և որոնք միմյանցից բաժանված են համարյա չորս տասնամյակ ժամանակահատվածով, վկայում է, որ Օսմանյան կայսրության կառավարող շրջանակները՝ սկսած 19-րդ դարի վերջին քառորդից մինչև նրա փլուզումը, ցեղասպանության քաղաքականությունը դիտարկում էին որպես բազմազգ ու բազմադավան կայսրության՝ միատարր պետության վերածելու ու տարածքային ամբողջականությունը պահպանելու արմատական միջոց: Ըստ էության, ցեղասպանության ոճրագործության նախապատրաստումը և իրականացումը դարձել էին պետական գործառույթների բաղադրամաս: Նման դեպքերում, համաձայն որոշ հետազոտողների, կարելի է խոսել նույնիսկ "*համառության*" մասին, որը ցուցաբերում է տարիների ընթացքում տվյալ պետության կառավարությունը, հետապնդելով ցեղասպանական նպատակներ, նույնիսկ եթե նրանք որոշ դեպքում չեն ստանում համապատասխան ձևակերպում[54]:

Այս եզրակացությունը ուժեղացնում է այն հետազոտողների դիրքերը, որոնք առաջարկում են բնութագրել Օսմանյան կայսրությունը իր գոյության վերջին կեսդարյա ժամանակահատվածում որպես "ցեղասպան" կամ "ոճրագործ" պետություն: Այս մոտեցումը կիսում են այնպիսի ճանաչված ցեղասպանագետներ, ինչպիսիք են Լեո Քուփըրը[55], Իրվինգ Լուիս Հորովիցը[56], Իվ Թերնոնը[57] և այլք: Մենք նույնպես կողմնակից ենք այդ մոտեցման[58]:

Միաժամանակ, Օսմանյան կայսրության օրինակով պետականորեն նախապատրաստված ցեղասպանությունների ծրագրերի համեմատական-կառուցվածքային ուսումնասիրումը և ժամանակի ընթացքում նրանց հիմնադրույթների կերպարանափոխման օրինաչափությունների բացահայտումը հնարավորություն են տալիս գիտական լուրջ հիմքի

վրա դնել ընդհանրապես "ցեղասպան" պետության ծագումնաբանության հայեցակարգային մի շարք կարևոր խնդիրների հետազոտումը:

RUBEN SAFRASTYAN

OTTOMAN EMPIRE. TWO PROGRAMMS OF GENOCIDE

In the late 19^{th} and early 20^{th} century, Ottoman Turkey carried out the first large-scale genocide of new times, annihilating the Armenian population in Western Armenia and other territories of the Empire for some twenty years. This crime was programmed and implemented by the Turkish state, in particular by its central and territorial bodies and departments of different levels, as well as by structures established especially for this purpose. The whole process of genocide was headed by a united center functioning inside the top government circle.

Part of the components and elements of this policy was elaborated and applied to the Armenians and other subdued peoples in the previous periods of the history of the Ottoman Empire. Ottoman Turkey had waged a policy of massacres against these peoples for centuries considering it the most important and basic method to keep them subdued. The succession of massacres and the genocide in the Ottoman Empire arouses no doubts. However, by present specialists have not applied to the specific historical stages, ways and forms of development of the policy of massacres into genocide. In particular, the process of origination of the genocide program in the Empire has not been studied sop far.

The given report applies to this problem. We examine two programs of genocide nature that were created in the Ottoman Empire. The gap between them was some forty years.

The first program was elaborated in 1876, the second one in 1915. Comparing the these documents, one can draw a conclusion that during the last forty years the Turkish elite had become rather experienced in preparation of genocide and creation of a program of relevant acts. In particular, the document of 1915 programmed the process of extermination of a nation through systematized various acts of different state bodies regulated by a single center.

The two programs were aimed against two different peoples and the period between them was 40 years. The existence of these two state programs of genocide testifies that starting from the last 25 years of the 19^{th} century up to its collapse, the ruling circles of the Ottoman Empire had considered the policy of genocide as a method of transforming the multi-nation and multi-religion empire into a homogeneous state maintaining the territorial integrity. In essence, preparation and implementation of the crime of genocide became a component of state functions.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations.* – In: The United Nations: Blue Books Series, Volume VII: The United Nations and Human Rights, 1945-1995. With an introduction by Boutros Boutros-Ghali,

Secretary General of the United Nations. New York: Department of Public Information, United Nations, 1995, p. 21.

2. *Leo Kuper*, Genocide: Its Political Use in the Twentieth Century. New Haven and London, 1981, p. 33-35.
3. Տես. *Frédérick Guillaume Dufour*, Toward a Socio-historical Theory of Persecution and an Analytical Concept of Genocide. - YCISS Occasional Paper, Nr. 67, October 2001, p.13.
4. *Raphael Lemkin on Genocide.* - In: Genocide and Human Rights: A Global Antology. Ed. by *J. N. Porter.* Lanham-New-York-London, 1982, p. 330.
5. Անգլերեն պաշտոնական տեքստը տես. *Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide A/RES/260 A (III), 9 December 1948.* – In: The United Nations: Blue Books Series, Volume VII: The United Nations and Human Rights, 1945-1995. With an introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations. New York: Department of Public Information, United Nations, 1995, p. 151-153.
6. *Ռուբեն Սաֆրաստյան*, Ցեղասպանության ակունքները միջնադարյան Օսմանյան կայսրությունում. I. - Պատմա - բանասիրական հանդես, 1998, թիվ 1-2 (147-148), էջ 105-112: *Նույնի*, Նախացեղասպանություն (Proto-Genocide). տեսության և պատմության խնդիրներ (Օսմանյան կայսրության օրինակով). - Թուրքագիտական եվ օսմանագիտական հետազոտություններ, III: Երևան, 2005, էջ. 26 – 47:
7. *Ռուբեն Սաֆրաստյան*, Թուրքական իշխանությունների հակազդեցությունը 1876 թ. բուլղարական ապստամբությանը. նոր մոտեցում. - Արևելագիտական ժողովածու, հատոր V: Երևան, 2004, էջ. 310-318:
8. *J. H. Dupuis* to *H. Elliot*, May 19, 1876. – In: *The Near and Middle East, 1856-1914 Part I* : British Documents on Foreign Affairs. Series B: Near and Middle East. Volume 2 : The Ottoman Empire: Revolt in the Balkans, 1875-1876. Editor : *D. Gillard.* Bethesda, 1985, p. 234.
9. Տե՛ս նրա նամակը պատմաբան պրոֆեսոր Նիլ Պոպովին, որը միաժամանակ Մոսկովյան սլավոնական կոմիտեի քարտուղարն էր. Письмо болгарского журналиста Т. Бурмова Н. А. Попову, 1876г. мая 15. - Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. *С. А. Никитина, В. Д. Конобеева, Ал. К. Бурмова, Н. Т. Тодорова.* Москва, 1961, с.222.
10. *Вице-консул в Филипполе - Послу в Константинополе,* 17 /29 мая 1876г., копия, прил.к предыд. — Архив Внешней Политики России (АВПР), ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 159об — 160. Գհրովի անձնական արխիվում պահպանվել է այդ փաստաթղթի մեկ այլ օրինակ, որը ժամանակին հրատարակվել է Բուլղարիայում: Այն էականորեն չի տարբերվում Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում պահվող օրինակից: Տես. *Доклад Герова.* Константинополь, май 1876г. - *Документи за българската история.* Т. 2 : Архив на Найден Геров. Ч. 2, София, 1932, с. 168-169.
11. Տես այդ մասին *С. Н. Константинопольские письма (1861-1864). - Русский вестник, 1867, т. 69, май, с. 58.*

12. Տես այդ մասին *Vassif Effendi Clician,* Son Altesse Midhat-pacha. grand vizir. Paris. 1909. p. 37 – 39.
13. *Игнатьев — Гирсу,* 13/25 мая 1876г. — АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 43 — 47.
14. *İ. H. Danışmend,* Osmanlı Tarihi Kronolojisi. Cilt: 4. İstanbul. 1955. s. 255.
15. Վերադառնալով հայրենիք, Վ. Սմիռնովը ծավալեց բեղմնավոր գիտամանկավարժական գործունեություն և դասվեց ռուսական թուրքագիտության ճանաչված դեմքերի շարքին: Նրա գիտական գործունեության ու պատմագիտական հայացքների մասին տես. *А. С. Твертинова.* В. Д. Смирнов - историк Турции (К 125-летию со дня рождения). - Советская тюркология, 1971, 4, с. 103-114.
16. *В. Смирнов,* Официальная Турция в лицах. Stambul und das moderne Türkenthum. Politische, sociale und biographische Bilder. von einem Osmanen. Leipzig. 1877. - Вестник Европы, 1878, кн. 1, с. 311.
17. Նույն տեղում:
18. *В. Ф. Кожевников - Н. П. Игнатьеву,* 12 ноября 1876 г., Приложение. - Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. *С. А. Никитина, В. Д. Конобеева, Ал. К. Бурмова, Н. Т. Тодорова.* Москва, 1961, с.501.
19. Տես այդ մասին *R. H. Davison,* Reform in the Ottoman Empire: 1856-1876. Princeton. 1963, p. 330 – 331.
20. *Ali Haydar Midhat Bey,* The Life of Midhat Pasha. London. 1903. p.82.
21. Տես առաջին անգամ 1934թ. Փարիզում հրատարակված աշխատության վերահրատարակումը. Լէօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատոր Բ. Երևան, 1994, էջ 151 –152 :
22. Վերջերս Հայաստանում հրատարակվեց այդ արժեքավոր ժողովածուի հայերեն թարգմանությունը, որտեղ ներկայացված է ծրագրի հայերեն թարգմանությունը : Տես. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում: Հատոր I: Աշխատասիրությամբ *Արթուր Պեյլերյանի*: Առաջաբանը՝ *Ժան-Բատիստ Դյուրոզելի*: Ֆրանսերենից թարգմանեց *Վարուժան Պողոսյանը*: Երևան, 2005, էջ. 27 – 28 :
23. *Vahakn N. Dadrian,* The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians. – Holocaust and Genocide Studies, 1993, Volume 7, Number 2, p. 173 – 201.
24. Ibid., p. 174 – 175.
25. Ibid., p. 174.
26. Նա եղել է “Հատուկ կազմակերպության” ղեկավարներից: Տես. *Vahakn N. Dadrian*, Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources. New Brunswick, 1994, p. 110. Այստեղ Շտանգեի զինվորական կոչումը սխալմամբ նշված է գնդապետ:
27. Der deutsche Oberstleutnant *Stange* an die deutsche Militärmission in Konstantinopel, Erserum, den 23. August 1915, Geheim. - DE/PA-AA/BoKon/170, www.armenocide.net -1915-08-23-DE-013. Geheim!

28. Christopher J. Walker, Armenia: The Survival of a Nation. London, 1983, p. 200.
29. Ibid.
30. Տես նամակի տեքստում *Արամ Անտոնյան*, Մեծ ոճիրը: Պոսթըն, 1921, էջ. 130:
31. Տես այդ մասին *Osman Selim **Kocahanoğlu***, İttihat-Terraki'nin sorgulanması ve yargılanması: Mcclis-i Mcbusan tahkikatı, Teşkilat-ı Mahsusa, Ermeni Tehcirinin içyüzü, Divan-ı Harb-i Örfi muhakemesi. Istanbul, 1998, s. 629.
32. British Foreign Office Dossiers on Turkish War Criminals. By ***Vartkes Yeghiayan***. La Verne, 1991, p. 52.
33. *Osman Selim **Kocahanoğlu***, İttihat-Terraki'nin sorgulanması ve yargılanması: Mcclis-i Mebusan tahkikatı, Teşkilat-ı Mahsusa, Ermeni Tehcirinin içyüzü, Divan-ı Harb-i Örfi muhakemesi. İstanbul, 1998, s. 630 – 631.
34. Տես այդ մասին ***Vahakn N. Dadrian***, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Oxford, 1995, p. 220.
35. ***Erdal Şimşek – Ilhan Bahar***, Türkiye'de istihbaratçıhk ve MIT. Istanbul, 2004, s. 186 – 187.
36. ***Erik Jan Zürcher***, The Unionist Factor: The Role of the Comittee of Union and Progress in the Turkish National Movement, 1905 – 1926. Leiden, 1984, p. 128.
37. ***Walter K. Ezell***, Investigating Genocide: A Catalog of Known and Suspected Cascs, and Some Categories for Comparing Them. - Remembering for the Future: Working Papers and Addenda. Volume III: The Impact of the Holocaust and Genocide on Jews and Christians. Editorial Advisory Board: ***Yehuda Bauer, Alice Eckardt, Franklin H. Little***, and others. Oxford – New York – Beijing – Frankfurt – Sao Paulo – Sydney – Tokyo – Toronto, 1989, p. 2880 – 2892.
38. Տես. ***Steven T. Katz***, Quantity and Interpretation: Issues in the Comparative Historical Analysis of the Holocaust. - Remembering for the Future: Working Papers and Addenda. Volume III: The Impact of the Holocaust and Genocide on Jews and Christians. Editorial Advisory Board: ***Yehuda Bauer, Alice Eckardt, Franklin H. Little***, and others. Oxford – New York – Beijing – Frankfurt – Sao Paulo – Sydney – Tokyo – Toronto, 1989, p. 2510.
39. ***Вице-консул в Филипполе - Послу в Константинополе***, 17 /29 мая 1876г., копия, прил.к предыд. – Архив Внешней Политики России (АВПР), ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л. 160об.
40. Տես Հայտարարագրի տեքստում. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна. Ереван, 1982, с. 602.
41. Այդ զաղտնի զեկուցագրի տեքստը՝ հայերեն թարգմանությամբ, առաջին անգամ հրատարակել է ցեղասպանության վերապրող և խորունկ հետազոտող Հայկազն Ղազարյանը: Տես *Հայկազն Գ. Ղազարյան*, Ցեղասպան թուրքը. Պեյրութ, 1968, էջ. 324 – 328:
42. Ինչպես երևում է փաստաթղթի համատեքստից, Թալեաթի "մտատանջությունը"՝ դա հայ ժողովրդի ձգտումն էր իրականացնել բարենորոգումներ Արևմտյան Հայաստանում:
43. Թարգմանության հեղինակը, հաշվի առնելով սույն պարբերության

կարևորությունը, բիրում է թուրքերեն արտահայտությունը՝ հայերեն տառերով. *քյուլլիյեն իզալեսի*:

44. *Հայկազն Գ. Ղազարյան*, Ցեղասպան թուրքը..., էջ. 325:
45. Տեքստը տես Vakt-ı seferde icraat-ı Hükümete karşı gelenler içün cihet-i askeriyece ittihaz olunacak tedabir hakkında kanun-ı muvakkat. - Takvîm-i Vekāyi'. 18 Receb 1333 / 19 Mayıs 1331. 7. sene. nr. 2189.
46. Ibid.
47. Ibid.
48. Այդպես է պնդում Հ. Ղազարյանը, որի ձիրքի տակ զտնվել է օրենքի լրիվ տեքստի իր իսկ կողմից ընդօրինակած պատճենը, որը, ցավոք, նա չի հրատարակել: Տես. *Հայկազն Գ. Ղազարյան*, Ցեղասպան թուրքը..., էջ. 328:
49. Տես. *Vahakn N. Dadrian*, Warrant for Genocide: Key Elements of Turko – Armenian Conflict. New Brunswick, 1999, p. 124.
50. Տեքստը տես. Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtnâme: Hülasâ-i me'âlî, 17 Mayıs 1331. - BOA. Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - http://www.devletarsivleri.gov.tr/kitap/pdf/2/17.pdf
51. Պիտի հասկանալ, ըստ երևույթին, "խնդրի քննարկման համառոտ նկարագրություն":
52. Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtnâme: Hülasâ-i me'âlî, 17 Mayıs 1331...
53. Տես այդ մասին *Ռուբեն Սաֆրաստյան*, Ինչպես էր նախապատրաստվում ցեղասպանությունը. երիտթուրքերը 1910 թ. - Իրան-Նամե. Արևելագիտական հանդես, 1997, 4-5-7, էջ. 7:
54. *Frank Chalk.* Definitions of Genocide and Their Implications for Prediction and Prevention. - In: Remembering for the Future:Working Papers and Aggenda. Volume III: The Impact of the Holocaust and Genocide on Jews and Christians. Oxford-New York-Beijing-Frankfurt-San Paulo-Sydney-Tokyo-Toronto, 1989, p. 2382.
55. *Leo Kuper*, Genocide: Its Political Use in the Twentieth Century. New Haven and London, 1981.
56. *Irving Louis Horowitz*, Taking Lives: Genocide and State Power. New Brunswick-London, 1997.
57. *Yves Ternon*, L'Etat criminel: Les génocides du XXe siècle, Paris, 1995.
58. *Ռուբեն Սաֆրաստյան*, Ցեղասպանության ակունքները միջնադարյան Օսմանյան կայսրությունում. 1. - Պատմա - բանասիրական հանդես, 1998, թիվ 1-2 (147-148), էջ 105-112:

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սաուդյան Արաբիայի Թագավորությունն (ՍԱԹ) այն բացառիկ իսլամական պետություններից է, որտեղ կրոնական եւ քաղաքական կառույցներն ու ինստիտուտները սերտաճած են, իսկ հասարակական գիտակցության հիմքում ընկած է իսլամը: Սաուդյան Արաբիայում, որը թե՛ արաբական եւ թե՛ իսլամական ինքնության կրող է, իսլամը թերեւս ավելի մեծ դերակատարություն ունի քաղաքական եւ սոցիալական կյանքում, քան որեւէ այլ արաբական երկրում: Պետական համակարգի հիմքում ընկած է թեոկրատ պետության (աստվածապետության) մոդելը: Սաուդյան Արաբիան այն միակ երկիրն է ողջ մահմեդական աշխարհում, որտեղ Ղուրանը և մարգարեի սուննան ծառայում են որպես սահմանադրություն, իսկ հասարակության բարոյական, սոցիալական եւ իրավական կողմերը կարգավորում է շարիաթը: Պետական գաղափարախոսության հիմքում ընկած է վահաբականությունը, որի մասին խոսվում է միայն պատմական եւ դավանաբանական համատեքստում:

Իշխանական համակարգի կենտրոնական դեմքը թագավորն է՝ Ալ Սաուդ ընտանիքից: Նա մարմնավորում է թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ իշխանությունը, որ ներառում է դատական, գործադիր և օրենսդիր ոլորտները: Թագավորական ընտանիքը երկիրը կառավարում է վահաբական ուլամայի իշխող թևի՝ Ալ աշ-Շեյխի հետ դաշն կնքած:

ՍԱԹ-ն այն եզակի պետություններից է, որտեղ իսլամական իրավունքը ծառայում է որպես գլխավոր օրենսդրական աղբյուր: Իսլամական իրավական ուղղություններից ՍԱԹ-ում հիմնականում տարածված է հանբալիականությունը, որն իսլամի ամենաարմատական կրոնական-իրավական դպրոցն է, քանի որ մերժում է *իջթիհադը*[1] և ծայրահեղ անհանդուրժող է ամեն տեսակ նորարարության հարցում: Այս հանգամանքը շատ դեպքերում խթանել է հասարակության կրոնական գիտակցության մեջ ծայրահեղականության դրսևորմանը: Ասվածի ապացույցն է այն փաստը, որ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններին մասնակից 19 անձնասպաններից 15-ը սաուդցիներ էին:

2003 և 2004 թվականները Սաուդյան Արաբիայում նշանավորվեցին բարենորոգչական շարժումներով, որոնք ուղեկցվեցին սոցիալ-քաղաքական բարեփոխումների մի շարք պահանջներով, հասարակական ելույթներով, ինչն անվտանգության մարմինների կողմից շատ դեպքերում ուղեկցվեց բռնություններով: Նշենք, որ բարեփոխումների ծրագրեր թագավորական ընտանիքին ներկայացվել էին դեռևս 1990-1991թթ. Ծոցի պատերազմի շրջանում կրոնական արմատական ընդդիմադիրների կողմից, որոնք Ֆահդ թագավորից պահանջում էին երկու սրբավայրերի երկրից՝ իսլամի հայրենիքից, դուրս բերել ամերիկյան և դաշնակից՝ ոչ իսլամական զորքերը, վերանայել երկրի արտաքին և ներքին քաղաքականությունը[2]: Արդյունքում, 1992թ. Ֆահդ թագավորը ներկայացրեց սահմանափակ բարեփոխումների մի ծրագիր: Երկրի պատմության մեջ առաջին անգամ հրապարակվեց հիմնական օրենքի նշանակություն ունեցող մի փաստաթուղթ՝ «Երկրի կառավարման համակարգը» («Ան-նիզամ աս-սիյասի լիլ-հուքմ»)[3] և ստեղծվեց խորհրդակցական մարմնի նշանակություն ունեցող և թագավորի կողմից նշանակովի Մաջլիս աշշուրան (Շուրայի Խորհուրդը)[4]:

2003-2004թթ. ՍԱԹ-ում իսլամական բարենորոգչական շարժման առաջատարները, ինչպես անվանում է նրանց սաուդցի այլախոհ գործիչ, նախկին քաղբանտարկյալ Աբդ ալ-Ազիզ ալ-Կասիմը, իսլամական ազատականները կամ ազատական իսլամականներն են: Վերջիններս բնորոշվում են նաև որպես՝ *վասատիյուններ* (չափավորներ), *թանվիրիյուններ* (լուսավորչականներ), *ակլանիյուններ* (ռացիոնալիստներ) կամ *իսլահիյուններ* (բարենորոգիչներ)[5]: Իսլամական բարենորոգիչները, որոնց ելակետը սալաֆիական կամ վաղ իսլամն է, չեն խուսափում քննադատել ավանդական իսլամական գաղափարախոսություններն ու դրանց տեսաբաններին: Նրանց կարծիքով՝ *իջթիհադի* գործադրումն անհրաժեշտ է, որ ցույց է տալիս, թե իսլամն անհամատեղելի չէ արդիականության, առավել ևս՝ ժողովրդավարական արժեքների հետ: Նրանց կարծիքով՝ քաղաքական և կրոնական բարեփոխումները համատեղելի են: Ազատականների մոտ Արևմուտքի նկատմամբ առկա մոտեցումները, ի տարբերություն իսլամական ծայրահեղականների, պայմանավորված են ոչ թե գաղափարախոսական, այլ քաղաքական հիմքերով: Իրենց հարցադրումները տեղադրելով կրոնական-քաղաքական նոր ոսկուրսի մեջ՝ նրանք բազմաթիվ շիա բարենորոգիչների հետ կարողացան ստեղծել իսլամական սկզբունքների վրա խարսխված և հակավահաբական քաղաքական պլատֆորմ[6]:

Բարենորոգիչների մեջ առանձին խումբ են կազմում աշխարհիկ ազատականները, որոնք չունեն ազդեցիկ դիրքեր և սահմանափակվում են համախոհների նեղ շրջանակով: Նրանք առաջ են քաշում կրոնի և պետության տարանջատման, խոսքի ազատության, կրոնական հան-

դուրժողականության, ընտրական իրավունքի ներդրմանն առնչվող հարցեր[7]:

Բարենորոգումների հարցը հասարակական մեծ հնչեղություն ստացավ այն բանից հետո, երբ 2003թ. հունվարին բարեփոխումներ անցկացնելու խնդրագրով թագաժառանգ Աբդալլահին[8] դիմեցին 104 սաուդցի բարենորոգիչներ, որոնք կոչ էին անում երկրում մտցնել ընտրական իրավունք, ստեղծել սահմանադրություն, ընտրովի խորհրդարան, անկախ դատական համակարգ, պայքարել կոռուպցիայի դեմ, վերանայել կանանց իրավունքների, խոսքի ազատության, ինչպես նաև՝ կրոնական, տեղային և սոցիալական խտրականությունների և դրանց առնչվող այլ հարցեր[9]: Նրանց կարծիքով՝ շուտափույթ բարենորոգումների ճանապարհով միայն կարելի էր երկրում խուսափել բռնության, անկայունության և ազգային տարանջատվածության սպառնալիքից: Բացի այդ, նրանք առաջարկում էին քաղաքական որոշումների ընդունմանը մասնակից դարձնել հասարակության բոլոր շերտերին: Հունվարի 23-ին բարենորոգիչների մի խմբի հետ հանդիպեց թագաժառանգ Աբդալլահը, որը հավաստիացրեց, թե բարենորոգումների իրականացումը երկրում անխուսափելի է:

2003թ. մայիսի 12-ին Ռիադում ալ-Կաիդայի կազմակերպած ահաբեկչությունից հետո, որին զոհ գնացին բազմաթիվ սաուդցիներ, ամերիկացիներ և օտար քաղաքացիներ, ծավալվեցին հրապարակային քննարկումներ մարտնչող իսլամի և վահաբականության առնչության հարցի շուրջ, ինչը նոր մարտահրավեր էր թագավորական ընտանիքին, որը կանգնած էր բարեփոխումների անհրաժեշտության փաստի առաջ: Ահաբեկչության դատապարտմամբ հանդես եկավ Ներքին գործերի նախարար էմիր Նայիֆը, որի կարծիքով՝ ահաբեկչությունը իսլամի անունով արդարացնողը իր կրոնի և հայրենիքի դավաճանն է: Նայիֆի տեսակետը պաշտպանեցին բարձրաստիճան կրոնավորներ, այդ թվում՝ Գլխավոր ուլամայի խորհրդի նախագահ աշ-Շեյխը և ուրիշներ, որոնց գնահատմամբ՝ ահաբեկչությանը դիմող մահմեդականները հավատուրացներ են[10]:

2003թ. մայիսի 17-ին, ելույթ ունենալով Շուրայի Խորհրդում, Ֆահդ թագավորը հայտարարեց, որ Սաուդյան Արաբիան ընթանում է բարենորոգումների ճանապարհով: Նա նշեց, որ իրենք պատրաստվում են մեծացնել ժողովրդի մասնակցությունը կառավարման գործերում՝ ավելի մեծ հեռանկարներ բացելով կանանց համար, որոնք պետք է մասնակից դառնան ապագայի կերտմանը[11]:

2003թ. օգոստոսի սկզբին թագավորական հրամանով ստեղծվեց Աբդ ալ-Ազիզ թագավորի Ազգային երկխոսության կենտրոնը, որի նպատակն էր սաուդական հասարակությանն առնչվող խնդիրների շուրջ բանավեճեր կազմակերպել: Թագաժառանգ Աբդալլահի կարծիքով՝ կենտ-

րոնի բացումը պատմական ձեռքբերում էր, որն աջակցելու էր երկրում ծայրահեղականության և մոլեռանդության դեմ պայքարին[12]:

Հոկտեմբերի 14-ին մարդու իրավունքներին նվիրված համաժողովի օրը սաուդցիները ձեռնարկեցին նախադեպը չունեցող բողոքի մի ցույց, որը ճնշվեց անվտանգության ուժերի կողմից: Հայտնի դարձան ցուցարարներ ձերբակալվեցին[13]:

Երկրում ստեղծված ճնշող տպավորությունը թուլացնելու նպատակով 2003թ. հոկտեմբերի 13-ին Շուրայի Խորհուրդը հայտարարեց առաջիկա 12 ամիսների ընթացքում 178 տեղական ինքնակառավարման խորհուրդներում ընտրություններ անցկացնելու մասին[14]: 2004թ. նոյեմբերին հրապարակվեց ընտրական օրենքը, հստակ կերպով սահմանվեցին ընտրակարգի պայմանները[15]:

Իսլամական բարենորոգչական շարժման կարևոր ձեռքբերումներից մեկն այն էր, որ հասարակությունը ինչ-որ չափով հնարավորություն ստացավ խոսել նախկինում արգելված և սաուդական հասարակության տեսանկյունից հրատապ թվացող հիմնահարցերի մասին: Ասվածի ապացույցն է այն փաստը, որ 2003թ. դեկտեմբերին Մեքքայում անցկացված Ազգային երկխոսության կենտրոնի առաջին հանդիպման ընթացքում փորձ արվեց քննարկել սաուդական հասարակության մեջ առկա արմատականության և ծայրահեղականության տարբեր կողմերը, պատճառներն ու հետևանքները, դրանց հետագա կանխմանն ուղղված քայլերը: Անհրաժեշտ համարվեց սաուդական կրթական, սոցիալական և կրոնական համակարգերի արդիականացումը[16]:

Հարկ է նշել, որ լիբերալ գաղափարների տարածման հարցում ոչ պակաս կարևոր և դրական նշանակություն ունեցավ սաուդական մամուլը, որ հնարավորինս արձագանքեց ժամանակի հրամայականով թելադրված խնդիրներին: Մինչդեռ նախկինում մամուլը զգայուն թեմաների անդրադառնում էր միայն Սաուդյան Արաբիայի լրատվական պետական գործակալությունից կամ էլ կառավարական պաշտոնատարների համապատասխան անդրադարձներից հետո: Բազմաթիվ օտար լրագրողներ թույլտվություն ստացան ազատ կերպով տեղաշարժվել երկրներում: Կառավարությունը սկսեց ավելի բաց աշխատել մամուլի առաջ[17]: Ճիշտ է, մամուլը որոշ չափով ազատականացավ, սակայն այսօր էլ շարունակվում է մամուլի, հեռուստատեսության և ռադիոյի աշխատանքների գրաքննությունը, արգելվում է թագավորական ընտանիքին ուղղված քննադատությունը[18]:

2003-2004 թվականների բարենորոգչական գործընթացներին զուգահեռ Սաուդյան Արաբիայում մեծ թափ ստացան ֆեմինիստական շարժումները: Մարդու իրավունքների պաշտպան արևմտյան կազմակերպությունների տեսանկյունից՝ Սաուդյան Արաբիայում օրակարգային է կանանց իրավունքների հարցը[19]: Կանայք կազմում են ՍԱԹ-ի

բնակչության 50 տոկոսից ավելին, ինչն ավելի հրատապ է դարձնում նրանց մասնակցությունը սոցիալական կյանքում: Մինչդեռ ՍԱԹ-ում աշխատում է կանանց 4.8 տոկոսը[20]: 2004թ. սեպտեմբերին կառավարությունը հայտարարեց 11 մլրդ դոլլար արժողությամբ նոր ծրագրի մասին, որ հնարավորություն կտա նոր աշխատատեղեր բացել նաև կանանց համար[21]: Թագավորությունում պարբերաբար տեղի են ունենում կանանց թեմաներին նվիրված բանավեճեր:

2004թ. գարնանից բարենորոգչական շարժումը, ընդհանուր առմամբ, կորցրեց իր նախկին թափը, քանի որ շարժման բազմաթիվ ակտիվիստներ սկսեցին հետապնդվել: Բարեփոխումների ընդդիմախոս էմիր Նայիֆի[22] կարգադրությամբ 2004թ. մարտին ձերբակալվեց այլախոհների 12-13 հոգանոց մի խումբ, որ կոչ էր անում բացարձակ միապետությունից անցնել սահմանադրական միապետության, անցկացնել Շուրայի Խորհրդի ընտրություններ, ստեղծել անկախ գործող մարդու իրավունքի մոնիտորինգի խումբ և այլն[23]: Այլախոհների ձերբակալությունը բողոքի նոր ալիք և բարեփոխումներ անցկացնելու հարցում անվստահություն առաջացրեց վարչակարգի նկատմամբ: Ձերբակալվածների մեծ մասն ազատ արձակվեցին՝ հրապարակային կերպով բարեփոխումներին չանդրադառնալու պայմանով: Սակայն շարժման երեք առաջնորդներ՝ հայտնի լրագրող և բանաստեղծ Ալի ալ-Դումայնին, համալսարանական դասախոսներ Աբդալլահ ալ-Համիդը և Մաթրուք ալ-Ֆալիհը, ենթարկվեցին 9, 7 և 6 տարի ազատազրկման[24]: (2005թ. օգոստոսին իր գահակալությունից շատ չանցած Աբդալլահ թագավորը ներում շնորհեց վերջիններիս[25]):

Իսլամական բարենորոգչական շարժումն ամեն կերպ զսպելու որոշումն ամրագրվեց 2004թ. աշնանը հրապարակված օրենքով, որն արգելում է պետական ծառայողներին ստորագրել որևէ բողոքարկման տակ կամ հրապարակայնորեն քննադատել իշխող ընտանիքին[26]: Իշխանությունների նման քայլերը կապված էին մի կողմից 2004-ից նավթային գների բարձացման, մյուս կողմից՝ (ալ-Կաիդա) և ջիհադական խմբերի դեմ հաջողված պայքարի հետ[27]: Ներկայումս սաուդական վարչակարգը ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում հետևողականորեն պայքարում է ոչ միայն ջիհադականների, այլև նաև՝ կրոնական մոլեռանդ գաղափարների դեմ: 2004-ի կեսերին 1 400 կղերական պաշտոնյաներ (իմամներ, խատիբներ, մոլաներ) հեռացվել են իրենց պարտականություններից և պետք է նորից վերապատրաստվեն: Կրոնական հանդուրժողականությունն արմատավորելու համար իրականացվում են տարբեր միջոցառումներ[28]:

Ընդդիմադիր շարժումները դիմագրավելու հարցում թագավորական ընտանիքի համար շարունակում են լուրջ հենարան մնալ իսլամական պահպանողական շրջանակները՝ հանձինս վահաբական ուլամայի,

որը դեմ է ազատական բարեփոխումներին՝ դրանք դիտարկելով սպառնալիք վախաբականության և սեփական դիրքերի համար, ինչպես նաև միջին դասից[29] սերած պահպանողականների մի շերտի, որ ներգրավված է հիմնականում վարչարարական համակարգում: Ի դեպ, կան առանձին պահանջներ, որ երկուստեք առաջ են քաշում թե՛ պահպանողականները, թե՛ բարենորոգիչները[30]:

Հենվելով պահպանողական շրջանակների վրա՝ վարչակարգը 2005թ. փետրվարին անցկացրեց երեք փուլից կազմված տեղական ինքնակառավարման խորհուրդների ընտրություններ[31]: Ընտրություններից առաջ ձևավորվեցին դաշինքներ և խմբակցություններ, որոնք հասարակական շարժման շրջանակներում ընտրապայքար ծավալեցին[32]: Ընտրություններին հաղթանակ տարան հիմնականում պահպանողական և վախաբական ուլամայի կողմից հովանավորվող միջին դասի, հիմնականում արևմտյան կրթություն ստացած, ներկայացուցիչներ, որ աջակցում են թագավորական ընտանիքին, դեմ են աստվածապետության շրջանակներում ազատական բարեփոխումներին, միևնույն ժամանակ ձգտում են երկիրը հեռու պահել իսլամիստական շարժումներից և, ի վերջո, մասնակից դառնալ գործադիրի աշխատանքներին:

Տեղական ընտրությունները խոցել էին մի շարք ստումներով: Ընտրապայքարին որևէ քաղաքական ուժ կամ կուսակցություն չէր մասնակցում, կանանց արգելված էր առաջադրվել և քվեարկել[33], խորհուրդների տեղերի կեսը նշանակվեց թագավորի կողմից: Ցածր էր մասնակցության ցուցանիշը (400 000 ընտրող 3 միլիոնից)[34], որ մատնանշում է, թե ընտրությունները ոգևորություն չէին առաջացրել հասարակության լայն շրջանակներում: Բացի այդ, տեղական խորհուրդները որոշում ընդունելու տեսանկյունից շատ սահմանափակ են: Սա է պատճառը, որ բարենորոգիչները համոզված են, որ տեղական ընտրությունները չեն կարող վճռորոշ նշանակություն ունենալ բարեփոխումների գործընթացի մեջ: Սաուդցի հայտնի այլախոհ գործիչ Մուհսին ալ-Աուաջին նշում է, որ իրենք բարեփոխումների ավելի լուրջ ակնկալիքներ ունեն՝ ընտրովի խորհրդարան, թափանցիկ ֆինանսական և դատական համակարգ[35]:

Փաստորեն, Սաուդյան Արաբիայում չկա արևմտյան ժողովրդավարության, քաղաքացիական ինստիտուտների կամ աշխարհիկ հասարակության որևէ փորձ, իսկ ազատական (առավել ևս՝ աշխարհիկ) գաղափարները հասարակության մեջ այդքան էլ զանգվածային բնույթ չեն կրում: Առանձին բարենորոգիչներ նույնիսկ համոզված են, որ խորհրդարանական ընտրությունների դեպքում, հնարավոր է, հաղթանակ տանեն ոչ թե իսլամական լիբերալները, այլ ցեղային առաջնորդները կամ իսլամիստները[36]: Այս պարագայում, իսլամական ազատականների համար դժվար կլինի պայքարել կրոնական արմատականության, ծայրահեղականության, ինչպես նաև վախաբականության դեմ, որ խոր արմատներ

ունի հասարակական գիտակցության մեջ: Սաուդական (ալ-Հայաթ) թերթի խմբագիր Մայասսար Շամմարիի կարծիքով՝ սաուդական հասարակությունը պատրաստ չէ լայնածավալ բարեփոխումների, ուստի փոփոխությունները չեն կարող ներդրվել միանգամից, ինչպես ցանկանում են բարենորոգիչները: Մինչդեռ ալ-Ուաջին մերժում է այն գաղափարը, թե հասարակությունը պատրաստ չէ ժողովրդավարության: Նա համոզված է, որ հասարակությանը կարելի է վարժեցնել ընտրությունների: «Մենք զգում ենք ժողովրդավարության կարիքը, անկախ այն բանից՝ մենք պատրաստ ենք դրան, թե՝ ոչ»[37]: Իսկ Աբդալլահ ալ-Համիդի համոզմամբ՝ կարևոր է սաուդցիներին սովորեցնել մասնակցություն ունենալ քաղաքական գործընթացներին, այլ կերպ ասած՝ նրանց քաղաքացի դարձնել, քանի որ այդ գիտակցությունը նրանց մեջ դեռևս ամրագրված չէ[38]:

Սաուդյան Արաբիայի ժողովրդավարացման հարցում կարևոր գործոն է սաուդական հասարակությունը, որ պահպանողական, ավանդույթային և ցեղային է[39]: Ի վերջո, ժողովրդավարության ինչ մոդել է գործելու Սաուդյան Արաբիայում՝ արևմտյան թե՝ իսլամական: Մահմեդական տեսաբաններից շատերի կարծիքով՝ իսլամը և արևմտյան ժողովրդավարությունն անհամատեղելի են: Իսլամական աշխարհի համար ժողովրդավարություն նշանակում է շարիաթական նորմերի լիակատար ներդրում, ինչը կապահովի իսլամական սկզբունքների վրա խարսխված հասարակության ներդաշնակ զարգացումը: Սակայն փաստ է, որ ժողովրդավարական արժեքների օգտին հանդես եկող իսլամական բարենորոգիչներն ըստ էության առաջ են քաշում արևմտյան ժողովրդավարական արժեքներ, ինչպիսիք են՝ ազատ, խորհրդարանական ընտրությունները:

Իսլամական ազատականներին անհանգստացնում է այն փաստը, որ բարեփոխումների հարցում կարող է բացասական նշանակություն ունենալ նաև ԱՄՆ-ի գործոնը[40]: Փաստ է, որ Վաշինգտոնը արևմտյան արժեքների և ժողովրդավարության ներդրման ու միասեռ հասարակությունների ստեղծման՝ գլոբալ քաղաքականության շրջանակներում Ռիադից պահանջում է բարեփոխումներ անցկացնել երկրում, ինչպես նաև պայքարել իսլամական ահաբեկչության դեմ: Հնարավոր է, որ ԱՄՆ-ի նկատմամբ իսլամական հասարակությունների ավանդական անտագոնիզմի, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից սանձազերծված իրաքյան պատերազմի արդյունքում՝ սաուդցիները բարենորոգումները դիտարկեն իբրև ԱՄՆ-ի կողմից ներդրված և չաջակցեն դրանց: Այս իրողությունը կարող է հետաձգել կամ ընդհանրապես անհաջողության մատնել բարենորոգումների գործընթացը: Աբդ ալ-Ազիզ ալ-Կասիմի կարծիքով՝ «Ցանկացած արտաքին ազդեցություններ, և հատկապես Միացյալ Նահանգներից, ավելի կբարդացնի իրական առաջընթաց ու-

նենալու հնարավորությունը»[41]: Այս առումով ուշագրավ է Ֆրանսիայի նախկին արտգործնախարար Յուբեր Վեդրինի հետևյալ կարծիքը. «...այսօր պարզ է, որ եթե Սաուդյան Արաբիայում անցնեն ազատ ընտրություններ, այնտեղ կհաստատվի հակաարևմտյան վարչակարգ»[42]:

Կարելի է ասել, որ իսլամական բարենորոգչական շարժումը տեսանելի հաջողությունների հասավ Սաուդյան Արաբիայի պես պահպանողական երկրում, չնայած խոսքի ազատության, մարդու իրավունքների, կրոնադավանական փոքրամասնությունների նկատմամբ շարունակվող սահմանափակումներին: Սաուդական ընտրանին հազիվ թե ընդառաջ գնար սահմանափակ բարենորոգչական նախաձեռնությունների (խոսքի սահմանափակ ազատություն, քաղաքական բանավեճի ծավալում, տեղական ինքնակառավարման ընտրություններ. քաղբանտարկյալների մի մասի ազատ արձակում և այլն), եթե չլինեին ներքին ճնշումներն իշխող ընտանիքի վրա: Սաուդական հասարակական-քաղաքական համակարգի արդիականացման տեսանկյունից հիշյալ ձեռքբերումները մի քայլ են՝ այս ոլորտում ավելի լուրջ բարեփոխումների ճանապարհին:

Հարկ է նշել, որ ազատական շարժման հետագա հաջողությունը կախված է բարենորոգումների հարցում թագավորական ընտանիքի դիրքորոշումից: Բարենորոգիչները որոշակի ակնկալիքներ ունեն Աբդալլահ թագավորից, որն էապես աջակցել է բարենորոգչական շարժմանը: Արդյո՞ք Աբդալլահ թագավորն այսուհետև նույնպես ընդառաջ կգնա ներքին մարտահրավերներին, դժվար է ասել, սակայն փաստ է, որ այսօր թագավորական ընտանիքում շատերն են խոսում բարեփոխումների օգտին[43]: Չի բացառվում, որ առաջիկայում սկսվեն սահմանադրության, օրենսդիր մարմնի ստեղծման և ընտրական իրավունքի ներդրմանն առնչվող հարցերի քննարկումներ: Իշխող վարչակարգի տեսանկյունից՝ ահաբեկչության և կրոնական մոլեռանդության դեմ պայքարի հաջողությունը, ինչպես նաև սեփական իշխանության պահպանումը (թեկուզ ինչ-որ չափով ձևափոխված տարբերակով) շատ դեպքերում կախված է հասարակական-քաղաքական կյանքում իսլամական ազատականացման առավել ներգրավումից:

ARAKS PASHAYAN

ABOUT THE PROBLEM OF SOCIO -POLITICAL REFORMS IN SAUDI ARABIA

The social and political reformist movement in Saudi Arabia reached to his apogee in 2003-2004. The process was expressed with petitions and public claims such as suffrage, transparent financial and judicial system, defense of human rights, creation of constitution, etc. In result of internal challenges and pressures on Royal

family, the reformist movement (led by Islamic liberals) achieved some successes like limited liberty of speech and political discourse, municipal elections, release of several political prisoners. etc. These reforms are a new step towards modernization of public and political life in such conservative country as Saudi Arabia. The Royal Family has to realize that cooperation with Islamic liberalism would help to combat Jihadists and preserve own positions.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Իջթիհադը* նկատի է առնում կրոնական-իրավական որոշումների ընդունումը ռացիոնալիստական մեթոդով՝ *կիյասի* (դատողություն ըստ անալոգիայի), *իջմա՚յի* (հավաքական կարծիք) կամ *ռայյի* (ազատ, անհատական կարծիք) միջոցով:
2. Այս մասին տես՝ Кепель Ж., Джихад, М., 2004, стр. 213-216.
3. Основные системы власти Королевства Саудовская Аравия (1992г.), глава VI, Государственная власть, статья XXXXIV, в кн.: Александров И. А., Монархии Персидского залива. Этап Модернизации, М., 2000, стр. 464-479.
4. Кепель Ж., Джихад, стр. 214.
5. Stephane Locroix, Between Islamists and Liberals: Saudi Arabia's New "Islamo-Liberal" Reformists, Middle East Journal, vol. 58, No.3, Summer, 2004, p.346.
6. Նույն տեղում:
7. 2003թ. սեպտեմբերի 24-ին 306 սուննի և շիա աշխարհիկ ուղղվածությամբ մի խումբ ներկայացրեց «Հանուն ազգի պաշտպանության» վերտառությամբ խնդրագիր, որտեղ արծարծված էին վերը նշված հարցերը: Այս մասին տես՝ Toby Jones, Violence and the Illusion of Reform in Saudi Arabia, http://www.merip.org/mero/mero111303.html
8. Աբդուլլահ բին Աբդ ալ-Ազիզը ընդհուպ մինչև 2005թ. օգոստոսը Ֆահդ թագավորի հիվանդության պատճառով 1995-ից դե ֆակտո ղեկավարում էր երկիրը:
9. John R. Bradley, Reform Debate Rages in Saudi Arabia, Tuesday 4th March 2003, http://www.selvesandothers.org/article7051.html
10. Աշ-շարկ ալ-աուսատ, 14. 05.2003, http://asharqalawsat.com
11. Աշ-շարկ ալ-աուսատ, 18. 05.2003, http://asharqalawsat.com
12. Saudi Arabia To Establish A National Dialogue Center, http://www.islamonline.net/English/News/2003-08/04/article08.shtml
13. Saudi Arabia, World Report, 2005, http://hrw.org/english/docs/2005/01/13/saudia9810.htm
14. Առաջին անգամ տեղական ինքնակառավարման ընտրությունների մասին որոշում ընդունվել է 1977թ., Խալիդ բին Աբդ ալ-Ազիզ թագավորի կողմից, որի չկիրարկման պատճառն այն էր, որ նավթային հսկայական եկամուտների շնորհիվ իշխանությանը հաջողվում էր բարեկեցիկ պայմաններ ստեղծել սաուդական ժողովրդի համար՝ ամեն գնով խուսափելով հասարակական-քաղաքական բարեփոխումներից: Г.Г.Косач, Реформы в Саудовской Аравии: муниципальные выборы http://www.iimes.ru/rus/frame_stat.html

15. Իրենց թեկնածությունը կարող էին առաջադրել 25 տարին լրացած Սաուդյան Արաբիայի քաղաքացիներ կամ արաբական ծագումով եւ տաս տարուց ավել սաուդական քաղաքացիություն ունեցողներ, որոնք չպետք է նախկինում դատված լինեին կամ էլ վտարված պետական ծառայությունից: Ընտրելու իրավունք ունեին 21 տարին լրացած ոչ զինվորական քաղաքացիներ, որոնք պետք է քվեարկեին իրենց մշտական բնակավայրում: Նախքան ընտրական օրենքի հրապարակումը խրախուսվել էր հինգ սաուդցի կանանց թեկնածության առաջադրումը, սակայն արդեն 2004թ. հոկտեմբերին ներքին գործերի նախարար Նայիֆը հայտարարեց, որ հազիվ թե կանանց թույլատրվի իրենց թեկնածությունն առաջադրել, առավել եւս ընտրել:
16. Հասարակության մեջ արատավոր երևույթների հաղթահարման համար անհրաժեշտ համարվեց նաև երիտասարդական կենտրոնների ստեղծումը և երիտասարդների հետ կապված հատուկ ծրագրերի ստեղծումը, ինչը նրանց մեջ պետք է զարգացնի նորամուծության ոգին: Նշվեց, որ անհրաժեշտ է օգնել ցանկացած մարդու, ով ուզում է հաղթահարել իր մեջ բռնությունն ու ինտեգրվել հասարակությանը: Կարևորվեց նաև կամավոր սկզբունքներով ստեղծված կազմակերպությունների և առևտրական միությունների դերը քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման, ինչպես նաև կառավարության վարչական, իրավական և գործադիր ճյուղերի տարանջատման հարցը: Այս մասին տես՝ Saudi Reform, Middle East Document, Middle East Economic Survey, Vol. XLVII, No. 02, January 12, 2004.
17. 2003թ. գարնանից Մաջլիս աշ-շուրան լրագրողներին թույլատրեց մասնակցել իր աշխատանքներին, իսկ հեռուստաընկերությունները թույլտվություն ստացան մասնակիորեն մեկնաբանել Խորհրդի աշխատանքները: Նախադեպը չունի այն փաստը, որ Արտաքին գործերի նախարարությունը սկսել է մամուլի ասուլիսներ հրավիրել:
18. Շատ դեպքերում լրագրողները ենթարկվել են պատժամիջոցների կրոնական ոստիկանական կառույցին՝ Առաքինության պահպանության և անբարոյականության դեմ պայքարի կոմիտեին քննադատելու կամ վսհաբական դոգմաները կասկածի տակ առնելու համար: Այս մասին տես՝ Saudi Arabia, 2004-5005 Country Reports on Human Rights Practicc http://www.jewishvirtuallibrary.org/jsource/anti-semitism'hrsaudiarabia03.html
19. Սաուդուհիները չունեն ընտրելու, վարելու իրավունք, նրանց չի թույլատրվում ուսանել ցանկացած առարկա, նրանք չեն կարող ճանապարհորդել առանց ամուսնու, մերձավոր հարազատի կամ տղամարդ հովանավորի թույլտվության, տղամարդու հետ աշխատել նույն սենյակում: Կանանց նկատմամբ խտրականության կա ամուսնալուծության և երեխաների խնամակալության հարցում: Նրանք պարտավոր են հետևել հագուստի մեջ իսլամական ավանդույթին, այլապես կենթարկվեն շարիաթական պատիժների:
20. Ներկայումս 20, 000 ֆիրմաներ գրանցված են սաուդցի կանանց անունով: Ջիդդայի Առևտրի պալատի 50000 անդամներից 2000-ը կին է: Այս մասին տես՝ Samar Fatany, The Status of Women in Saudi Arabia, http://www.arabview.com/articles.asp?article=477

21. Khalid Hasan, Liberal Reform activism ends in Saudi Arabia, Daily Times, 2004, October 23.
22. Էմիր Նայիֆը, որը Ֆահդ թագավորի հարազատ եղբայրն է, դեմ է անգամ «բարեփոխում» եզրի շրջանառությանը, ինչը մատնանշում է, թե համակարգում ինչ-որ սխալ բան կա: Այդ համատեքստում նրա նախընտրած եզրը «զարգացումն» է: Այս մասին տես՝ www.project-syndicate.org
23. Khalid Bhatti, Limid Reforms Will Not Solve Deep Political Crisis, http://www.socialistworld.net/eng/2005/05/16saudi.html
24. 2004թ. օգոստոսի 9-ին սկսված նրանց դատավարության առաջին մասը, ՍԱԹ-ի պատմության մեջ առաջին անգամ, անցկացվեց բաց, սակայն դատավարության շարունակությունն ընթացավ դռնփակ:
25. Աբդալլահ թագավորը ներում շնորհեց նաև երեք այլախոհների փաստաբանին՝ Աբդ առ-Ռահման ալ-Լահիմին, որը բանտարկվել էր այն բանից հետո, երբ դատավարության ժամանակ քննադատել էր թագավորության դատական գործառույթը, ինչպես նաև իսլամիստ Սայիդ բին Զուեյրին, որը հինգ տարի ազատազրկման էր ենթարկվել թագավորությունում ահաբեկչական գործունեություն ծավալելու համար:
26. Պետական ծառայողներ են բարեփոխումների բազմաթիվ կողմնակիցներ, որ աշխատում են պետական կրթական, գիտական և մշակութային հաստատություններում, ինչպես նաև լրագրողներ, որ աշխատում են պետական թերթերի, ամսագրերի խմբագրություններում և լրատվական գործակալություններում:
27. Գոյություն ունեցող տեղեկությունների համաձայն՝ Սաուդյան Արաբիայում գործում է ալ-Կաիդայի հետ կապ ունեցող իսլամական ծայրահեղականների ցանց:
28. Հիշյալ թեմայի վերաբերյալ ինտերնետային կայքերում երիտասարդների հետ քննարկումներ են անցկացվում: Բջջային հեռախոսներ ունեցողները հաճախ են ահաբեկչությունը դատապարտող հաղորդագրություններ ստանում: Ալ-Կաիդայի գործունեությունը հրապարակային ձևով դատապարտել են բեն Լադենի ընտանիքի անդամները, որոնք շատ մոտ են կանգնած իշխող ընտրանուն: Այս մասին տես՝ Chicago Tribune, February 12, 2005, www.danieldrezner.com/archives/001887.html
29. Սաուդյան Արաբիայի հասարակության արդիականացման տեսանկյունից խիստ կարևոր է միջին դասը: Մոտ մեկ միլիոն մարդ հաշվվող միջին դասը ձևավորվել է 1960-ականներից, որի ներկայացուցիչները հիմնականում գործարարներ, համալսարան ավարտած մասնագետներ, համալսարանական դասախոսներ, ինչպես նաև չինովնիկներ են:
30. Թե՛ բարեփոխիչները և թե՛ պահպանողականները առաջ են քաշում անկախ դատական համակարգի, թափանցիկ բյուջեի ստեղծման և կառավարության հաշվետվության հարցը: Տես՝ Mohamad Bazzi, Quietly, Reform Fades Out After a Period During Which Change Seemed Possible, 2004, October 26, published by the Long Island, NY Newsday /http://www.commondreams.org/cgi-bin/print.cgi?file=/headlines/04/1026-01.htm

31. Ընտրությունները տեղի ունեցան Ռիադում և նրա շրջակայքում փետրվարի 10-ին, երկրի արևելյան և արևմտյան՝ մարտի 3-ին և հյուսիսային նահանգներում՝ ապրիլի 21-ին:
32. Նախադեպը չունեցող ընտրությունները քաղաքորությունում ընթացան նաև «ոչ մաքուր» տեխնոլոգիաներով: Ընտրարշավի ընթացքում սաուդական մամուլում հայտնվեցին հաղորդումներ այն մասին, որ որոշ թեկնածուներ «համեստ» գումարներ են բաժանում ուսանողներին՝ նրանց կողմից աջակցություն ստանալու ակնկալիքով:
33. Նախքան ընտրական օրենքի հրապարակումը խրախուսվել էր հինգ սաուդցի կանանց թեկնածության առաջադրումը, սակայն արդեն 2004թ. հոկտեմբերին Ներքին գործերի նախարար Նայիֆը հայտարարեց, որ հազիվ թե կանանց թույլատրվի իրենց թեկնածությունն առաջադրել:
34. Cauthy Nugent, Reforming Saudi Arabia, 2005, March, 4, http://www.workersliberty.org/node/view/3811
35. Mohamad Bazzi, After a Period During Which Change Seemed Possible, 2004, October 26, by the Long Island, NY Newsday /http://www.commondreams.org/cgi-bin/print.cgi?file=/headlines/04/1026-01.htm
36. Mohamad Bazzi, Quietly, Reform Fades out After a Period During Which Change Seemed Possible, 2004, October 26, published by the Long Island, NY Newsday /http://www.commondreams.org/cgi-bin/print.cgi?file=/headlines/04/1026-01.htm
37. Նույն տեղում:
38. Н.С.Глебова, Оценка арабскими и западными аналитиками современной ситуации в Саудовской Аравии, http://www.iimcs.ru
39. Այս տեսանկյունից ուշագրավ է Սաուդյան Արաբիայում ցեղային դեմոկրատիայի գործառույթը, որը, հենվելով ավանդույթի վրա, փորձում է ուղիղ կապ ստեղծել կառավարողի և նրա սուբյեկտների միջև՝ առաջնորդվելով իսլամական խորհրդակցության սկզբունքով: ՍԱԹ-ում շաբաթը մեկ կամ մի քանի անգամ ավագ էմիրները (ներառյալ թագաժառանգը) լսարան են տրամադրում սաուդցի քաղաքացիներին՝ ընդառաջ գնալով նրանց բողոքներին ու առաջարկներին:
40. John R. Bradley, Reform Debate Rages in Saudi Arabia, Tuesday 4th March 2003 http://www.selvesandothers.org/article705.html
41. Mohamad Bazzi, Quietly, Reform Fades Out After a Period During Which Change Seemed Possible, 2004, October 26, by the Long Island, NY Newsday /http://www commondreams.org/cgi-bin/print.cgi?file=/headlines/04/1026-01.htm
42. "Международного сообщество" увы не существует, Свободная мысль-XXI, No. 7, 2005.
43. Այս առումով ուշագրավ է 2005թ. էմիր Թալալի հայտարարությունն այն մասին, որ արաբ առաջնորդները պետք է բարեփոխումներ իրականացնեն նախքան հասարակական ճնշումների ենթարկվելը: Նա նշել է, որ բարեփոխումների կարիք ունի առաջին հերթին Սաուդյան Արաբիան: Էմիր Թալալը, որ Աբդալլահ թագավորի խորթ եղբայրն է, նախկինում զբաղեցրել է ֆինանսների նախարարի պաշտոնը: Այս մասին տես՝ Prince Talal Calls For Reforms in Saudi Arabia, http://www.middle-east-online.com/englisg/?d=14392

ՋՈՆ ԱՀՄԱՐԱՆՅԱՆ

ԱԲՐԱՀԱՄԻ ՏՈՀՄԸ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԻՋԱԳԵՏՔԸ

Աշխարհի շատ ժողովուրդների պես հրեաների ծագման վերաբերյալ պահպանվել են տեղեկություններ Սուրբ Գրքում: Հարկ է նշել, որ ներկայումս մասնագետների կողմից օգտագործվող Աստվածաշունչը մեզ է հասել ոչ իր նախնական տեսքով, այլ որոշակիորեն ժամանակի ընթացքում դրա մեկնաբանների խմբագրումների արդյունք է: Դրանով էլ պայմանավորված են Սուրբ Գրքում հրեա ժողովրդի պատմության «նահապետական փուլի» վերաբերյալ առկա երբեմն հակասական տեղեկությունները:

Վաղուց ի վեր նկատվել էր, որ Աստվածաշնչի սկզբում պահպանվել են հրեաների՝ Իսրայել գալու վերաբերյալ երեք ավանդույթներ **(Sharpe, 1890: 1)**:

1) Հրեաների նախահայր Աբրահամի տոհմը Եփրատի հոսանքների շրջանում գտնվող քաղդեացիների երկրից սկզբում եկել էր Սիրիա, այնուհետև՝ Քանաան, բնակություն հաստատելով Հեբրոնի մոտ՝ ընդունելով այստեղ ապրող խեթերի գերիշխանությունը (Ծննդոց 12; 13): Քանաանից հետո հիշատակվում է Աբրահամի կարճատև բնակությունը Եգիպտոսում, սակայն, հնարավոր է, դա ուշ ժամանակների խմբագրում լինի:

2) Հրեաները նախապես բնակվել են Սիրիայում, այնուհետև գաղթել են և, հասնելով Հորդանան գետի ափերը, բաժանվել երկու խմբի: Առաջին խումբը Հակոբի գլխավորությամբ բնակություն է հաստատել Քանաանի հյուսիսում՝ Շեխեմի (= ժաման. Նաբլուս) մոտ (Ծննդոց 33.18), իսկ երկրորդը՝ Եսավի գլխավորությամբ գնացել է հարավ՝ Հեբրոնից այն կողմ և բնակություն հաստատել Եդոմում՝ Սեիրի մոտ (Ծննդոց 36.8-9, Հեսու 24.4):

3) Հետագայում, հյուսիսում բնակվող հրեաները շարժվել են հարավ, հասել Ստորին Եգիպտոս (– Նեղոսի Դելտա - Հ.Ա.): Այստեղ նրանք հանդիպել են իրենցից ավելի քաղաքակիրթ և հզոր բնակչության և ընդունել նրանց գերիշխանությունը: Հետո հրեաների սերունդները Եգիպտոսից հեռացել են, Հորդանան գետի արևելյան ափին ընկած են ա-

մորեյներին, որից հետո գնացել են Քանաանի հյուսիս: Այստեղ նրանք օգնել են իրենց ազգակիցներին՝ տեղացիների դեմ կռիվներում և դարձել Քանաանի տերերը:

Ինչպես տեսնում ենք, երեք տարբերակներն էլ միմյանց հետ շփման եզրեր ունեն՝ 1) հրեաները եկվոր են (Աբրահամը՝ քաղդեացիների երկրից, Հակոբը՝ Սիրիայից), 2) Քանաանից հետո շարժումը դեպի Եգիպտոս և վերադարձը Քանաան (Աբրահամը՝ կարճատև, Հակոբի տոհմը՝ մի քանի սերունդ տևողությամբ): Անհրաժեշտ ենք համարում նշել, որ բոլոր դեպքերում հրեաներն իրենց համարում էին ոչ տեղաբնիկ Քանաանում. Այսպես, Աստվածաշնչում ամենուրեք հիշատակվում են մեծաքանակ ժողովուրդներ և ցեղեր, որոնք ապրում էին Քանաանում նախքան նահապետների գաղթը այս երկիր: Դրանք էին՝ քանանացիները, խեթերը, ամորեյները, փերիզացիները, խևացիները, յեբուսացիները և այլք (Դատավորաց 3.1-6): Ոչ պակաս կարևոր է նաև այն տեղեկությունը, ըստ որի հրեաների և տեղացիների միջև, բացի առանձին դեպքերից, գոյություն ունեին հիմնականում բարիդրացիական հարաբերություններ, շատ են խառը ամուսնությունների մասին հիշատակությունները: Այսինքն, հրեական ցեղերը, Քանաան գալով, բնակություն են հաստատել տեղական ցեղերի հարևանությամբ, շփվելով վերջիններիս հետ:

Քանաանում հրեաների հայտնվելու եղանակի վերաբերյալ նախկինում գերիշխում էր նվաճման մասին տեսակետը, որը հենվում էր «նահապետական վտանգի» նվիրված հատվածներում նրանց և տեղացիների միջև վկայված բախումների հիշատակությունների վրա: Սակայն հետագայում մասնագետները որդեգրեցին ավելի իրատեսական դիրքորոշում, որը այսօր գրեթե համատարած ընդունելություն է գտել:

Այսպես, Ա.Ալտի և Մ.Նոտի կարծիքով (**Alt, 1925; Noth, 1969** և այլն), հրեաները Քանաան են եկել ոչ որպես նվաճողներ, այլ խաղաղ ճանապարհով: Նրանք անասնապահությամբ զբաղվող ցեղեր էին, որոնք բնակեցրել էին Քանաանի սակավաբնակ շրջանները: Այս ներթափանցումը ուղեկցվել էր տեղական նշանակության բախումներով, որը և հիմք է տվել հրեաների «Ելքի» մասին պատմությանը:

Վերոհիշյալ սխեմայից զգալիորեն շեղվել են Գ.Մենդենհոլը և այլք (**Mendenhall, 1962**; նաև **Gottwald, 1979**): Նրանք գտնում էին, որ հրեաները չէին եկել դրսից, այլ իրականում միշտ ապրել են Քանաանում: Այստեղի գյուղացիական բնակչությունը ապստամբել է իր տերերի դեմ և հեռացել երկրի ծայրամասային շրջաններ: Հետո նրանք հարաբերվել են անհնազանդ, ավազակային կենցաղ վարող habiru-ների հետ, որի արդյունքում էլ դրվել է վաղ իսրայելական հասարակության հիմքը:

Հրեաների նախահայր Աբրահամ նահապետի նախնական բնակության վայրի և ժամանակի վերաբերյալ Աստվածաշնչում հիշատակվող տեղեկությունների մեկնաբանության խնդիրը մասնագետների

շրջանում վաղուց ի վեր թերևս առավել վիճահարույցներից է: Այս խնդիրները մեծաքանակ մասնագետների հետազոտության առարկա են դարձել և դեռ այսօր էլ շարունակում են մնալ ուշադրության կենտրոնում (**Ainstworth, 1838: 152f.; Albright, 1921: 49ff.; 1922: 110ff.; 1924: 125ff.; 1926a: 231ff.; 1932; 1942: 33ff.; Böhl, 1924: 148ff.; Woolley, 1936; O'Callaghan, 1948: 119ff.; Biemson, 1978; Moorey, 1982; Isserlin, 1983: 85ff.; Gerber, 2001: 145ff.** և այլն): Ուսումնասիրողները դեռևս ընդհանուր հայտարարի չեն եկել ոչ մեկի, ոչ էլ մյուսի հարցում:

Ավանդական տեսակետի համաձայն, որ բխում է Աստվածաշնչի տեղեկություններից (Ծննդոց 11.31), Աբրահամը ծագում էր հարավային Միջագետքից քաղդեական Ուր քաղաքից: Այնուհետև նա իր ընտանիքի հետ միասին գնացել է Հյուսիսային Միջագեաքի Խստան քաղաք, որտեղից էլ՝ Քանաան:

Աստվածաշնչի երկու հատվածներում Խառանը հիշատակվում է որպես Աբրահամի՝ դեպի Քանաան ուղևորության մեկնակետ (Ծննդոց 11.32 և 12.5): Այստեղ էր ապրում Աբրահամի ազգական Լաբանը: Իսկ այլ հատվածներում Լաբանը տեղադրվում է Պադդան-Արամում (Ծննդոց 25.20; 28.1-7;31.18), ինչպես նաև՝ Նախոր (Նախուր) քաղաքում (Ծննդոց 24.100), որը գտնվում էր Խառանի մոտ ընկած Բալիխ գետի հովտում: Աբրահամի տոհմի խառանյան աղերսներն այնքան ակնառու են, որ հիմք են սաղիս կասկածի տակ առնելու Հարավային Միջագետքի Ուր քաղաքի՝ գերիշխող վարկածը:

Դեռևս XIX դարի առաջին կեսին որոշ մասնագետներ (**Ainsworth, 1838: 152f.; Ritter, 1844: 294ff.** և այլն), հենվելով աստվածաշնչային, վաղ քրիստոնեական, եբրայական և մուսուլմանական ավանդությունների վրա, եկան այն եզրակացության, որ Աբրահամի տոհմի նախնական բնակության վայրը հյուսիսային Միջագետքն էր և որ Աստվածաշնչում որպես նրա հայրենի քաղաք հիշատակվող Ուրը հյուսիսային Միջագետքի Ուրֆա քաղաքն էր:

Սակայն 1854թ. Հարավային Միջագետքում հնագետները հայտնաբերեցին շումերական Ուր քաղաքը, որը հետագայում հայտնի հնագետ Լ.Վուլլին առաջարկեց համարել Աբրահամ նահապետի հայրենիք (**Woolley, 1936**): Լ.Վուլլիի ազդեցության տակ մասնագետների մեծ մասը շարունակում է հետևել այս տեղայնացմանը (օրինակ, **Larsen, 1975; Soggin, 1997: 189; Millard, 2001**): Այնինչ Աբրահամի գործունեությանն առնչվող աստվածաշնչյան տեղեկությունները հակասում էին դրան:

XX դարում առաջիններից մեկը Ս.Գորդոնն էր, որը հիմնավոր կասկածներ հայտնեց հարավային Ուրի հարցում և ձևակերպեց նոր տեսակետ (**Gordon, 1958: 28ff.**): Նրա կարծիքով, «քաղդեական» մակդիրը վերաբերում էր ոչ թե հարավային Ուրին, այլ Քսենոփոնի կողմից հիշատակվող՝ Հայկական լեռնաշխարհի հարավում գտնվող՝ հայերի

hարևան *խալդայներին* (Քսենոփոն, Անաբասիս IV.3.4): Եվ. քանի որ Աստվածաշնչի մեկնաբանները կարող էին ծանոթ չլինել այս հյուսիսային խալդայներին, նրանք Աբրահամի հայրենիքը փոխադրել էին հարավ: Սակայն հեղինակը. այնուամենայնիվ. վկայակոչելով Աբրահամի. Հովսեփի և այլ նահապետների գործունեության վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք նշում են առևտուրը. եզրակացնում էր. որ Աբրահամը պետք է ծագեր Կիլիկիայի Ուրա առևտրական քաղաքից. որը լավ հայտնի է մ.թ.ա.XV-XIIIդդ. խեթական սեպագիր տեքստերից:

Այս տեսակետը այժմ արդեն աստիճանաբար մուտք է գործում մասնագիտական հրատարակություններ. իհարկե. ոչ ամբողջությամբ. այլ միայն Ուրֆայի մասով (օրինակ, Gerber, 2001: 145ff.):

Ստորև կփորձենք ներկայացնել Նահապետի նախնական բնակավայրի խնդրին առնչվող նյութերը, որոնք վերցված են հինարևելյան սեպագիր աղբյուրներից, որոնց հիման վրա կկատարվեն համապատասխան եզրակացություններ: Հարկ է նշել, որ Ուր անունով այդ աղբյուրները հիշատակում են մեծաքանակ բնակավայրեր. որոնց մեծ մասը գտնվել է Սիրիայի և Միջագետքի հյուսիսային մասերում:

1) Մ.թ.ա.XXIII-XXIIդդ. Հյուսիսային Սիրիայի Էբլա քաղաք-պետության տեքստերում հիշատակվում է Ura, Ura'u, Uram, Uri'um, Urru քաղաքը, որը գտնվում էր Էբլայի մերձավորությամբ (**Bonechi, 1993: 310ff.**):

2) Նույն տարածաշրջանի Ալալախի սեպագիր տեքստերում (**Wiseman, 1953: Ns.105,162**), որ թվագրվում է մոտավորապես մ.թ.ա.1600թ., հիշատակվում են Ure, Urri, Ura անունով բնակավայրեր:

3) Հյուսիսային Միջագետքի Նուզի խուրրիաբնակ քաղաքի արխիվներից հայտնի են «մեծ» և «փոքր» Ure քաղաքները (**Fincke, 1993: 332**):

4) Խեթական սեպագիր տեքստերին լավ հայտնի էր Ura կարևոր առևտրական քաղաքը, որ գտնվում էր կիլիկյան ծովափին (**del Monte und J.Tischler, 1978: 457f.**):

5) Մեկ այլ Ura հիշատակվում է Սիրիայի հյուսիս-արևելյան ծովափից ոչ հեռու գտնվող Ուգարիտ (ժաման. Ռաս Շամրա հնավայրը) պետության շրջանում (**Wiseman, 1953: Nr.142,154**):

6) Խեթական տեքստերին հայտնի էին, բացի կիլիկյան Ura-յից, ևս երկուսը. մեկը՝ Հայասայում՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում (**del Monte und J.Tischler, 1978: 457f.**; Քոսյան, 2004: 100-101), մյուսը ենթադրաբար կենտրոնական Փոքր Ասիայում՝ խեթական մայրաքաղաք Խաթթուսասից ոչ հեռու (**Kammenhuber, 1970: 556f.**):

7) Մեկ այլ Ura հիշատակվում է Ասորեստանի արքա Թիգլաթպալասար III-ի տեքստերից մեկում (**Kessler, 1980: 179; Tadmor, 1994: 76,126,184**):

8) Մ.թ.ա.XIXդ. միջագետքյան սեպագիր տեքստերից մեկում հիշատակվում է Տիգրիսից արևմուտք՝ Խաբուրի ափին գտնվող Ur քաղաքը (**Groneberg, 1980: 247**):

Ինչպես տեսնում ենք, սեպագրական աղբյուրները տեղեկություններ են պահպանել մեծ թվով տեղանունների վերաբերյալ, որոնք գրեթե նույնահունչ են, չնայած տեղադրվում են Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում: Վերը հիշատակված բնակավայրերից 1,2,4,5-ը իրականում կարող էին նշել միևնույնը, չնայած բացառված չէ, որ դրանք տարբեր էին:

Աբրահամի տոհմի նախնական բնակության վայրի տեղայնացման հարցում հնարավոր է այլ լուծում: Ստորև ներկայացնենք մեր նկատառումները հարավային Ուրի թեկնածության դեմ և մեկ այլ Ուրի օգտին:

Ըստ ավանդույթի, Խառանից 14կմ հեռու գտնվող Ուրֆա քաղաքը (անտիկ աղբ. Եդեսիա, հայկ. Ուռհա, ժաման. Սանլըուրֆա) կառուցվել էր հին Ուրի ավերակների վրա: Ավանդույթը քաղաքի հիմնադիր է համարում առասպելական արքա Նիմրոդին: Իսլամական լեգենդը այս վայրը կապում է Աբրահամ նահապետի հետ. Ուրֆայի միջնաբերդից ցած գտնվող քարանձավը համարվում է Աբրահամի ծննդավայր: Այստեղ են գտնվում «Աբրահամի ջրավազանը», «Հակոբի աղբյուրը»: Այս վերջինը, ըստ Աստվածաշնչի, այն վայրն էր, որտեղ Հակոբը հանդիպել էր Ռաքելին, որտեղ Ռեբեքան (Իսահակի կինը) քար էր գցել Աբրահամի ծառայի վրա:

Հարավային կամ հյուսիսային Ուրի ընտրության հարցում կարևոր նշանակություն ունի Միջագետքի լուսնի աստված Սինի խնդիրը: Հայտնի է, որ հարավային Ուրը Սին աստծո պաշտամունքի կենտրոնն էր: Ըստ Աստվածաշնչի (Հեսու 24.2), Աբրահամի հայր Տերախի (հայալեզու հրատարակություններում Թարա) կերպարը կապված է լուսնի պաշտամունքի հետ: Հնարավոր է, նույնը կարելի է պնդել Լաբանի, Միլկախի և Սառայի մասին:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ նույնպիսի կարևորագույն պաշտամունքային կենտրոն էր Խառանը սկսած մ.թ.ա.II հազ. սկզբներից (**O'Callaghan, 1948: 28f.; Miliard, 2001**): Խառանի լուսնի աստվածը իր ֆունկցիան պահպանում էր նույնիսկ մ.թ.ա.I հազ. կեսերին: Մասնավորապես, այն բազմիցս հիշատակվում է Փոքր Ասիայի և Հյուսիսային Սիրիայի մ.թ.ա.X-VIIIդդ. հիերոգլիֆային լուվիական արձանագրություններում՝ որպես Armas (սա Սին աստծո խեթերեն ձևն է)(**Meriggi, 1962: 32**):

Անհրաժեշտ է նշել, որ Խառանի շրջակայքի օգտին է վկայում մի կարևոր փաստ: Բանն այն է, որ այստեղ հիշատակվում են երեք բնակավայրեր, որոնց անվանումները անմիջականորեն առնչվում են Աբրահա-

մի տոհմին: Դրանք են՝ Սերուգ (Աբրահամի նախապապը), Նախոր (Աբրահամի պապը) և Տերախ (Աբրահամի հայրը):

Սրանցից Նախորի անունը հստակ առնչվում է սեպագրական աղբյուրներում բազմիցս հիշատակվող Nahur քաղաքի անվան հետ: Նախուրը վկայված է հին բաբելոնյան, կապադովկիական, միջին ասորեստանյան և ուշ ասորեստանյան տեքստերում (**Bilgiç, 1945-51: 34; Groneberg, 1980: 173; Nashef, 1982: 201** և այլն): Համաձայն ընդունված կարծիքի (**Nashef, 1991: 86**), Նախուրը գտնվել է Հյուսիսային Միջագետքի ժամանակակից. Tell ʻAmuda բնակավայրի մոտ՝ թուրք-սիրիական սահմանի վրա, այսինքն, Խառանից ոչ հեռու: Նախուրը առաջարկվել է նույնացնել Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում գտնվող Նիխրիյս, Նիխիրիյա քաղաքի հետ, որը լավ վկայված է միջագետքյան և խեթական սեպագիր տեքստերում որպես Իսուվա (= հայկ. Ծոփք) պետության կարևոր բնակավայրերից մեկը (**Moisheson, 2001: 44**):

Աբրահամի հոր՝ Տերախի անունը համադրվել է Հյուսիսային Միջագետքի Terqa քաղաքի հետ (**Moisheson, 2001: 43ff.**): Ի.Մոյշեսոնի կարծիքով, այս քաղաքանունը ծագում էր Աքքադի պետությունը մ.թ.ա. XXIIդ. նվաճած հնդեվրոպացի կուտիների վերջին արքա Տիրիկանի անունից: Այս և միջագետքյան տեքստերում հիշատակվող Turukki, Tukrish ցեղանվան և տեղանվան հիմքում, ըստ նրա, ընկած է հնդեվր. «սայլ, կառք» բառը:

Աբրահամ նահապետի՝ Միջագետքի Խառան քաղաքից Քանաան գնալու ժամանակի հարցում նույնպես առկա են մեծ տարաձայնություններ: Ուսումնասիրողները այդ իրադարձությունը հիմնականում առաջարկել են թվագրել մ.թ.ա.II հազ. տարբեր հատվածներում: Առկա տեսակետներում, որպես ելակետ և հիմնական փաստարկ, հանդես է գալիս նահապետական փուլը ներկայացնող Ծննդոց գրքում հիշատակվող անձանց և նրանց հետ առնչվող երկրների ու բնակավայրերի անունների համադրումը այլ աղբյուրներից հայտնի պատմական գործիչների հետ:

Այսպես, Վ.Օլբրայթը Ծննդոց գրքի 14.1-ում հիշատակվող «Էլամի արքա Խեդորլաոմերին» համադրում էր հին միջագետքյան աղբյուրներում վկայված Էլամի արքա Կուտեր-Նախխունտե I-ի (մ.թ.ա.1625-1610թթ.[հին թվագրությամբ]) հետ (**Albright, 1942: 33ff.**): Դրա հիման վրա Ծննդոց գրքի 12-50 հատվածը, այն է՝ Աբրահամի՝ Քանաան ուղևորվելու պահից մինչև Հովսեփի մահը առաջարկում էր տեղադրել մ.թ.ա.1700-1550թթ. միջև: Ավելի վաղ նույն հեղինակը Ծննդոց գրքի 14.1-ում «Սեննաարի արքա Ամրափելին» նույնացնում էր Բաբելոնի հայտնի արքա Համմուրապիի հետ (**Albright, 1924: 125ff.**): Իր մեկ այլ աշխատության մեջ Վ.Օլբրայթը Աբրահամի գործունեությանն առնչվող Սոդոմի և Գոմորի ավերման դիպվածը առաջարկում էր տեղադրել վաղ բրոն-

գեղարի երկրորդ կեսում՝ մ.թ.ա.III հազարամյակի երկրորդ կես (**Albright, 1932: 140ff.**):

Ֆ.Բյոլը Աբրահամին համարում էր խեթական արքա Թուդխալիյաս I-ի ժամանակակիցը (մ.թ.ա.XVIIդ. հին թվագրությամբ)(**Böhl, 1924: 148ff.**): Հետագայում նա առաջարկեց նոր համադրություններ. օրինակ, գտնում էր. որ Ամրափելը Համմուրապին չէր: Աբրահամը պետք է ապրած լիներ մ.թ.ա.XVIդ., իսկ հրեաների ելքը Եգիպտոսից անհրաժեշտ է թվագրել մ.թ.ա.XIIIդ. (**Böhl, 1930: 31ff.**): Այս թվագրությունները հիմնականում ընդունվեցին Վ.Օլբրայթի կողմից (**Albright, 1931-32: 197f.**):

Ռ.Օ'Քալլագանը առաջարկում էր ավելի ընդհանրական թվագրություն մ.թ.ա.II հազ. առաջին կեսում (**O'Callaghan, 1948: 29**):

Ի.Մոյշեսոնը հակված էր ավելի վաղ թվագրման՝ Ուրի III դինաստիայի վերջին շրջանում՝ մ.թ.ա.XXIդ. երկրորդ կես (**Moisheson, 2001: 158**): Նրա կարծիքով, Հակոբի վերադարձը Քանաան արտացոլված է եգիպտական աղբյուրներում որպես հիքսոսների արշավանքը Եգիպտոս:

Այսքանով սահմանափակելով նահապետական փուլի թվագրման շուրջ առկա կարծիքների տեսությունը, անհրաժեշտ է նշել, որ դրանց հիմքում ընկած է Ելից գրքի 12.40-ի տեղեկությունը այն մասին, որ «Իսրայելի որդիները» Եգիպտոսում մնացել են 430 տարի: Եվ քանի որ ելքը Եգիպտոսից սովորաբար թվագրվում է մ.թ.ա.XIIIդ., ապա ենթադրվում է, որ հրեաների նախնիները պետք է հայտնվեին Եգիպտոսում ոչ ուշ քան XVIIդ. և որ Քանաան մուտք գործելու ժամանակը հազիվ թե շատ ավելի վաղ փուլում տեղի ունենար:

Վերոհիշյալ տեսակետները, որքան էլ որ բանավեճային են, այնուամենայնիվ առայժմ գերիշխում են և կարելի է ընդունելի համարել այն, որ իսկապես Աբրահամի տեղաշարժը Քանաան պետք է տեղ գտներ մ.թ.ա.XVIII-XVIIդդ. ընդգրկող ժամանակաշրջանում:

Մեր կարծիքով, նահապետական փուլի թվագրման և ընդհանրապես հրեաների կազմավորման վաղ շրջանի գնահատմանը մեծապես կարող է նպաստել Աբրահամի և նրա անմիջական հաջորդների (Իսահակ, Հակոբ և այլն) գործունեության տիպաբանական բնութագիրը: Վերջինիս բնորոշումը հնարավոր է նրանց կենսագործունեության բոլոր դիպվածների վերհանման, աշխատանքային գործունեության առանձնահատկությունների, այլոց հետ շփումների և այլ չափանիշների միջոցով: Ստորև կներկայացնենք այդ վերլուծության արդյունքները, որը թույլ կտա պարզելու Աբբահամի առնչակցությունը դեպի Քանաան մ.թ.ա.II հազ. ընթացքում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերին և հարակից հարցեր:

Աբրահամ.

Շփումներ – I) Եգիպտոսի փարավոն (Ծննդոց 12.16-20)

2) Սոդոմի. Գոմորի, Ադմայի. Զեբոիմի. Բելայի և Սալեմի արքաներ (Ծննդոց 14.1-21)

3) Գերարի արքա Աբիմելեխ (Ծննդոց 20.1-18; 21.22-34)

Գույք – 1) Փարավոնից ստացավ անասուններ և ծառաներ (Ծննդոց 12.16)

2) Շատ հարուստ էր՝ ուներ անասուններ. սկլի և արծաթ (Ծննդոց 13.2)

3) Իր տանը ծառայող 318 զինյալներ ուներ (Ծննդոց 14.14)

4) Նա Հեբրոնի բնակիչներից գնում է դաշտ և քարանձավ՝ վճարելով 400 սիկլ արծաթ (Ծննդոց 23.14-20)

Ռազմական գործ - Արշավանք Սեննաարի, Էլլասարի. Էլամի և Գոյիմի արքաների դեմ (Ծննդոց 14.15-16)

Կարգավիճակը – Իշխան, որը Հեբրոնի խեթերի համար ամենահայտնին էր (Ծննդոց 23.3-6)

Նույնիսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Աբրահամի գործունեությունը և կերպարը Աստվածաշնչի կազմողների կողմից պետք է համարեցվեր իրենց ստեղծած առանցքագաղափարին. այնուամենայնիվ վերոհիշյալ բնութագրիչները կարող են ընդհանրական պատկերացում տալ Նահապետի միջոցով ներկայացվող իրավիճակի մասին:

Խառանից հետո Աբրահամը Քանաանում շարունակ տեղաշարժվում էր, հետո նա հայտնվում է Եգիպտոսում, այնուհետև՝ կրկին Քանաան, որտեղ չի հիմնավորվում ինչ-որ մի վայրում: Որքան էլ ու մի շարք դեպքերում նշվում է նրա՝ վրանում բնակվելու, անասնապահությամբ զբաղվելու մասին, դա անհրաժեշտ է ընդունել որպես արդեն մ.թ.ա.1 հազ. սկզբների Քանաանի հրեաներին հոգեհարազատ կենցաղին հարմարեցնելու միտում: Որ Աբրահամը և նրա ուղեկիցները ամենևին քոչվոր կամ կիսաքոչվոր անասնապահներ չէին, պարզ է նրանց գործունեությունը բնութագրող դրվագներից:

Աբրահամը լիարժեք մասնակցում էր Քանաանի քաղաքական կյանքին, համագործակցում էր այստեղի մանր քաղաքական կազմավորումների (Սոդոմ, Գոմոր և այլն) հետ, մասնակցում պատերազմներին, ի վերջո, տեղի արքայիկներից մեկն էր: Վերջապես, Աբրահամը ունեոր մարդ էր, որն ի վիճակի էր պահելու 300-ից ավելի զինյալներ, գնելու անշարժ գույք: Ի դեպ, Աբրահամի զորաջոկատի թիվը լիովին համահունչ է փոքր քաղաքական կազմավորման զորքի մասին առկա պատկերացումներին:

Աբրահամ նահապետի հյուսիսմիջագետքյան ելակետի խնդիրը ամենևին չի սահմանափակվում վերոհիշյալ նկատառումներով: Այն ընդամենը մի մասն է մի կողմից հնագույն Քանաանի, մյուս կողմից հյուսիսային Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի միջև առվազն մ.թ.ա.III-II հազարամյակների ընթացքում հնագիտորեն և սեպագրական աղբյուրներով վկայված փոխառնչությունները լուսաբանող ընդարձակ նյու-

քերի, որոնց քննարկումը ներկայացվել է մեր մեկ այլ աշխատության մեջ (Սիմարանյան, 2005)։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սիմարանյան Հ., 2005 – Հայկական լեռնաշխարհը և Քանաանը. վաղ շփումներ, Եր.

Քոսյան Ա.Վ., 2004 - Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Եր.

Քսենոփոն - Անաբասիս (թարգմ. Խ.Կրկյաշարյանի), Եր., 1970.

Ainstworth W., 1838 – Researches in Assyria, Babylonia, and Chaldaea, London.

Albright W.F., 1921 – A Revision of Early Hebrew Chronology, "Journal of the Palestine Oriental Society" 1, p.49-70.

Albright W.F., 1922 – Palestine in the Earliest Historical Period. "Journal of the Palestine Oriental Society" 2, p.110-138.

Albright W.F., 1924 – Shinar-Sangar and its Monarch Amraphel, "American Journal of Semitic Languages and Literatures" 40, p.125-133.

Albright W.F., 1926 – The Historical Background of Genesis XIV, "Journal of Society of Oriental Research" 10, p.231-2

Albright W.F., 1931-32 – Rev. of Böhl F., 1930 – Das Zeitalter Abrahams, Leipzig in "Archiv für Orientforschung" 7, p.197-198.

Albright W.F., 1932 – The Archaeology of Palestine, New York.

Albright W.F., 1935 – The Horites in Palestine. – In: "From the Pyramids to Paul", New York, p.9-26.

Albright W.F., 1942 – A A Third Revision of the Early Chronology of Western Asia, "Bulletin of the American Schools of Oriental Research" 88, p.28-36.

Alt A., 1929 – Der Gott der Väter, Stuttgart.

Biemson J.J., 1978 – Redating the Exodus and the Conquest, Sheffield.

Bilgiç E., 1945/51 - Die Ortsnamen der "kappadokischen" Urkunden im Rahmen der alten Sprachen Anatoliens, "Archiv für Orientforschung" 15, S.1-37.

Böhl F., 1924 – Tud'alia I., Zeitgenosse Abrahams, um 1650B.C., "Zeitschrift für die alttestamentliche Wissenschaft" 42, S.148-153.

Bonechi M., 1993 – I nomi geografici dei testi di Ebla, Wiesbaden (= RGTC 12.1).

Fincke J., 1993 - Die Orts- und Gewässernamen der Nuzi-Texte, Wiesbaden.

Gerber Ch., 2001 – Abraham in Urfa – Abraham aus Urfa? Anmerkungen zu den Abraham-Legenden aus Urfa und weitere Gedenken zur religionsgeschichtlichen Bedeutung der Region Urfa. – In: "Lux Orientis. Archäologie zwischen Asien und Europa (Hrsg. R.M.Boehmer und R.Maran), Rahden/Westf.

Gordon C.H., 1958 – Abraham and the Merchants of Ura, "Journal of Near Eastern Studies" 17, p.28-31.

Gottwald N.K., 1979 – The Tribes of Yahweh. A Sociology of the Religion of Liberated Israel, 1250-1050 BCE, London.

Groneberg B., 1980 – Die Orts- und Gewässernamen der altbabylonischen Zeit, Wiesbaden (= RGTC 3).

Isserlin B.S.J., 1983 – The Israelite Conquest of Canaan: a Comparative Review of the Arguments Applicable, "Palestine Exploration Quarterly" 115, p.85-94.

Kammenhuber A., 1970 - Keilschrifttexte aus Boğazköy (KBo XVI), "Orientalia" 39, fasc.4, S.547-567.

Kessler K.-H., 1980 – Untersuchungen zur historischen Topographie Nordmesopotamiens. Wiesbaden.

Larsen T. M., 1975 - The Old Assyrian City-State and Its Colonies, Copenhagen.

Mendenhall G.E., 1962 – The Hebrew Conquest of Palestine. "The Biblical Archaeologist. American Schools of Oriental Research" 25, p.66-68.

Meriggi P., 1962 - Hieroglyphisch-hethitisches Glossar. Zweite, völlig umgearbeitete Auflage, Heidelberg.

Miliard R. A., 2001 - Biblical Archeology Review, May-June.

Moisheson B., 2001 – Armenoids in Prehistory, Lanham/Maryland.

Moorey P.R.S., 1982 – Ur "of the Chaldees", Ithaca/New York.

Nashef Kh, 1982 - Die Orts- und Gewässernamen der mittelbabylonischen und mittelassyrischen Zeit, Wiesbaden (= RGTC 5).

Nashef Kh., 1991 – Die Orts- und Gewässernamen der altassyrischen Zeit, Wiesbaden (= RGTC 4).

Noth M., 1969 – The History of Israel. London (II ed.).

O'Callaghan R.T., 1948 – Aram Naharaim. A Contribution to the History of Upper Mesopotamia in the Second Millennium B.C., Roma.

Monte J.F. del und Tischler J., 1978 - Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978.

Ritter C., 1844 – Die Erdkunde im Verhältniss zur Nahur und zur Geschichte des Menschen, "Theil" 11, S. 294-306.

Sharpe S., 1890 – The History of the Hebrew Nation and its Literature, Edinburgh.

Soggin B.J.A., 1997 – Das Buch Genesis. Kommentar, Heidelberg.

Tadmor H., 1994 – The Inscriptions of Tiglath-pileser III, King of Assyria, Jerusalem.

Wiseman D.J., 1953 – The Alalakh Tablets, London.

Woolley L., 1936 – Abraham, London.

JOHN AHMARANYAN

THE HOUSE OF ABRAAM AND NORTHERN MESOPOTAMIA

The paper deals with the problem of the primary homeland of the patriarch Abraham. Based on the analyses of the first book of the Bible ("Genesis"), the author comes to the conclusion that the homeland of Abraham must be sought not in the southern Mesopotamia (Sumerian-Chaldaean Ur), as it is accepted by most scholars, but in the northern Mesopotamia, in the area of the modern city of Urfa and in its neighborhood.

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ՈՒՐԱՐՏԱ-ՄՈՒԾԱԾԻՐՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ներածություն

Մուծածիրի պատմությունը և Մուծածիրին առնչվող բազում հարցեր լուսաբանվել են Ուրարտուի, մասամբ, Ասորեստանի և Մարաստանի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում: Քննարկվող առանցքային հարցերից մեկը վերաբերում էր Մուծածիրի էթնիկ բովանդակությանը՝ երկիրը դիտելով որպես խուռիական (խուռի-ուրարտական) աշխարհի մաս և ուրարտացիների բնօրրան[1], կամ արիական բնակչությամբ (նաև՝ մասամբ արիական կամ արիական արմատներով), արիական իշխող վերնախավով պետական կազմավորում, ըստ այլոց՝ նաև հիշյալ էթնիկ խմբերի շփման գոտի[2]:

Այստեղից բխում էր նաև երկրորդ հարցը՝ վերաբերելով այս կամ այն էթնիկ խմբին պատկանող իր բնակչությամբ ներկայացող Մուծածիրին ցայսօր շարունակ վերագրվող դերակատարությանը ուրարտական պետության ձևավորման գործում՝ քաղաքականից մինչև հոգևորը[3]:

Այս շրջանակում կարող են առաջադրվել բազում հարցեր, ներառյալ՝ «ուրարտական» և «մուծածիրյան» եզրերի հարաբերությանը վերաբերող. արդյո՞ք դրանք պետք է դիտել մեկը մյուսի առսկ շարունակություն, թե՞ նաև միմյանց զուգահեռ, որպես միևնույն արմատից ծագող, սակայն միմյանցից ինչ-որ չափով հեռացած, արդեն ինքնուրույն դրսևորումներ, իսկ գուցե արմատապես տարբեր երևույթնե՞ր, որոնցից ընդհանուրը կամ դրանք միավորողը, ինչ-ինչ պատճառներով, լինի դա քաղաքական գործընթաց կամ աշխարհընկալման ընդհանուր մի հենք, Խալդի աստծո պաշտամունքն էր. Մուծածիրը դիտվել է և շարունակում է դիտվել որպես Խալդի աստծո պաշտամունքի կենտրոն՝ մոտեցումների այս կամ այն տարբերությամբ:

Արդյո՞ք սակայն Մուծածիրն էր ուրարտական տերության հոգևոր կենտրոնը (կամ Ուրարտուն՝ Մուծածիրի շարունակությունը)՝ գտնվելով, այնուամենայնիվ, նրա սահմաններից դուրս, հանդիսանալով նաև քաղաքական առանձին միավոր, թե՞ միայն Մուծածիրը տերության կյանքում դեր ուներ այնքանով, որքանով որ այստեղից էր սերված համար-

վում Բիայնիլիի իշխող վերնախավը: Արդյո՞ք Խալդին տեղական. զուտ մուծածիրյան աստվածություն էր, թե՞ կարող էր բերված լինել մեկ այլ վայրից՝ լինի դա խալդայների երկիրը, կամ Խալդիի քաղաքը, որի ոչ միայն տեղորոշումը, այլև դերը բիայնական պետության քաղաքական և հոգևոր կառույցների ձևավորման խնդրում դեռևս մնում է չպարզաբանված[4]: Միգուցե Խալդին բերվել էր Մուծածիր հենց Խալդիի քաղաքի՞ց՝ արդյունքում ունենալով տեղի հնդիրանական աստվածների զույգի՝ «մուծածիրյան» Միտրա-Վարունայի հետ սինկրետված մի աստվածություն[5], որն արդեն կարող էր և քիչ հիշեցնել «խալդյան (կամ խալդական) Խալդիին»[6]:

Այլ խոսքով, որքանով էր օրգանական կապը Ուրարտուի և Մուծածիրի, որ նույնն է՝ այս երկրներում իշխող վերնախավերի միջև, որպես պետություն կոչվող կառույցը կրողների, և որքանով կարելի է բիայնական պետության, հետևաբար և ուրարտական տերության հիմքում տեսնել Մուծածիրը՝ իր բնակչությամբ կամ թեկուզ իշխող վերնախավով: Ի վերջո, ինչպիսին էին նաև ուրարտա-մուծածիրյան հարաբերությունները սեպագիր աղբյուրներով վերականգնվող դարաշրջանի այս կամ այն փուլում, արդյո՞ք միայն բարեկամական, թե պարզապես իրավիճակային, որտեղ Ուրարտուի և Մուծածիրի ենթադրվող մերձավորությունն անգամ որևէ դեր չուներ:

Վերը առաջադրված մասնավոր հարցերից մեկի՝ Ուրարտուի և Մուծածիրի քաղաքական հարաբերություններին է վերաբերում սույն հոդվածը. արդեն «նորահայտ» կոչվելուց հեռու, սակայն ցավոք հայ գիտությանը դեռ անհասանելի մնացած մեծաթիվ սեպագիր աղբյուրները՝ գերազանցապես ասորեստանյան, խնդրի առնչությամբ մատուցում են էական մանրամասնություններ պարունակող կարևոր տեղեկություններ, ինչը մղում է մեկ անգամ ևս անդրադառնալու Մուծածիրի՝ թվում է վաղուց ի վեր հայտնի, սակայն իրականում դեռ անհայտ պատմությանը[7]:

Պատմական ակնարկ

Մուծածիրի (ուրարտ. Արդինի) առաջին հիշատակությունը վերաբերում է ասորեստանյան արքա Աշշուր-նածիր-ապալ II-ի իշխանության շրջանին, իհարկե, եթե միջինասորեստանյան աղբյուրներում հիշվող Մուծրու երկրանվան տակ չտեսնենք նույն Մուծածիրը[8]: Ինչ վերաբերում է բուն հիշատակությանը, ապա ասորեստանյան արքան Ք.ա. 879թ. մայրաքաղաք Կալխուի իր նոր ապարանքի օծման արարողությանն ու դրան հետևած տոնակատարությանը մասնակից էր դարձրել Ասորեստանի հովանավորության կամ որոշակի ազդեցության տակ գտնվող փյունիկյան, վերինեփրատյան պետությունների և այլ, գերազանցապես մերձուրմյան երկրների ներկայացուցիչ-դեսպանների, այդ թվում նաև Մուծածիրից[9]:

Աշշուր-նածիր-ապալ II-ի հաջորդ Սալմանասար III-ի, ապա Շամշի-Ադադ V և Ադադ-նիրարի III արքաների օրոք Մուծածիրը դուրս էր մնացել քաղաքական հիմնական գործընթացներից, դրանց մասնակից դառնալով մերթ ընդ մերթ, հատկապես Ք.ա. 832թ. ընկատվող ասորեստանյան արշավանքների ինտենսիվացմանը զուգահեռ, ընդ որում՝ որպես հակաասորեստանյան ուժ և բիայնական նորաստեղծ պետության դաշնակից[10]: Երկիրը Ք.ա. 781-774թթ. տեղ գտած ասուրա-ուրարտա-մանայական պատերազմներից հետո, դատելով տարածաշրջանում հաստատված ընդհանուր քաղաքական իրավիճակից, արդեն ամբողջովին գտնվում էր ուրարտական ազդեցության ոլորտում[11]:

Դրեթե քառորդ դար շարունակվող այս դրությանը վերջ տվեց ասորեստանյան նոր գահակալ Թիգլաթպալասար III-ը (Ք.ա. 745/4-727թթ.)՝ հատկապես Ք.ա. 735թ. Ուրարտու իրագործած հաղթական արշավանքով: Դրանով տերությանը հասցվեց ծանր հարված: Այս շրջանում էր որ, ամենայն հավանականությամբ, վերջ գտավ և ուրարտական այրքա Սարդուրի II-ի գահակալությունը:

Տերության նոր առաջնորդ Ռուսա I-ը (Ք.ա. մոտ 730-710-ական թթ.) գահ բարձրացավ մի շրջանում, երբ երկիրն ապրում էր ծանր ճգնաժամ[12]. ներքին երկպառակությունները թուլացրել էին պետությունը, աշխուժացել էին կենտրոնախույս ուժերը՝ երկրներ, որոնցում ուրարտական իշխանությունությունը դարձել էր ձևական: Նոր վերելք էր ապրում Էթիունին: Տերության ակնհայտ թուլության վկայություններից էին էթիունցիների ավարառուական արշավները դեպի երկրի խորքերը, ինչը պետությունն ի զորու չէր կանխել[13]:

Հարավում՝ մերձուրմյան ավազանի ուրարտական տիրույթներում, երկրի քաղաքական իշխանությունը պահպանվում էր սոսկ ռազմական հզոր ներկայության շնորհիվ: Տերության բուն սահմաններից դուրս գտնվող երկրները (Շուբրիա, Կումմե, Խուբուշկիա, Մանայի թագավորություն, ուկկայցիների երկիր ևն) մեծավ մասամբ ընկել էին Ասորեստանի ազդեցության տակ: Ռուսայի համար հատկապես անհանդուրժելի իրավիճակ էր ստեղծվել տերության հետ ավանդաբար կապված Մուծածիրի իշխանությունում: Վերջինիս արքան, որը կրում էր Ուրզանա գահանունը, Ասորեստանի դրածոն էր և հարկատու նրան[14]: Ռուսան ստիպված էր շատ խնդիրներ լուծել նորից:

«Մուծածիրյան իշխանափոխություն»

Քննարկվող դարաշրջանին են պատկանում Մուծածիրը կամ երկրի քրմապետ-արքային հիշատակող ասորեստանյան արխիվի քսան տեքստեր՝ գերազանցապես արքունիք առաքված զեկուցագրեր[15], որոնցից տասներկուսը, հնարավոր է նաև ևս մեկ տեքստ[16], վերաբերում են բուն ուրարտա-մուծածիրյան հարաբերություններին:

Այս խմբի առաջին զեկույցը՝ ասորեստանցի Աշշուր-ռեծուվայի հեղինակությամբ, բավական հետաքրքիր է. ուրարտական արքան պատրաստվում էր մուծածիրյան արշավանքին, որն արտաքուստ իրագործվելու էր իբրև արքայի ուղևորություն դեպի Մուծածիրի Խալդի աստծո տաճար: Ռազմական նախապատրաստություններն ընթանում էին Մուծածիրին սահմանակից ուրարտական Ուեսի (Ուայախս, Վախսի) մարզում, ուր սկսել էին կենտրոնանալ զորքերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է բավական նշանակալի խմբավորմանը՝ տերությանը ենթակա երկրների զորամիավորումներով համալրված հինգ մարզային գնդերի[17]: Շուտով, մայրաքաղաքից Ուեսի մեկնեց նաև արքան:

Ուրարտուի սահմանամերձ շրջաններում ծավալված այս աշխուժությունն առաջացրեց ասորեստանցիների մտահոգությունը: Հայտնի են մի քանի նամակներ, որոնցում ասորեստանյան արքան պահանջում էր մանրամասներ պարզել Ռուսայի մտադրությունների մասին[18]:

Իրադարձությունները ծավալվեցին արքայի Ուեսի ժամանելուն պես: Նրա հրամանով բանակի առաջապահ զորախումբը՝ երկու մարզային գնդեր՝ Ուեսիի մարզպես Սեթինուի և «ուկկայցիների դիմացի մարզպետ» Սունայի հրամանատարությամբ, սկսեց արշավանքը[19]: Նպատակակետը Մուծածիրն էր[20]:

Սեթինուն և Սունան առանց դժվարությունների մտան Մուծածիր, երկրի առաջնորդ Ուրզանան հանձնվեց առանց պայքարի[21]: Քաղաքում գտնվող նրա ուժերը, որոնց մեծամասնությունը, թվում է, կազմել են խուռուշկացի վարձկանները, ինչպես երևում է, չփորձեցին դիմադրել[22]: Այս ժամանակահատվածին է պատկանում գիտական գրականության մեջ քաջ հայտնի ABL 409 նամակը՝ Ուրզանայից ուղղված ասորեստանյան «արքունի սենեկապետին» (nāgir ekalli): Նամակի բովանդակությունը հայտնի է. ուրարտական մարզպետները Մուծածիրի Խալդի աստծո տաճարում կատարել են պաշտոն: Սպասվել է նաև արքայի ժամանումը, որն այդ նպատակով Ուեսիից շարժվել էր Մուծածիր՝ մնացյալ մարզպետների և զորքերի հիմնական զանգվածով[23]:

Տեղեկանալով այս մասին, ասորեստանյան արքան «արքունի սենեկապետի» շուրթերով Ուրզանայից պահանջեց խափանել Ռուսայի մուտքը Մուծածիր, ինչին Ուրզանան պատասխանեց շատ հստակ. Մուծածիրը չուներ նման հնարավորություն: Ի պատասխան գրված նրա խոսքում ասվում է.

«*Այն մասին, ինչ դու գրել էիր ինձ՝ «թող ոչ ոք պաշտոն չկատարի առանց արքայի թույլտվության», երբ Աշշուրի արքան եկավ այստեղ, կարողացա՞ ես նրան ետ պահել: Նա արեց այն, ինչ արեց: Ուրեմն ես ինչպե՞ս կարող եմ ետ պահեմ այս մեկին*»[24]:

Իր պատասխանը ասորեստանցիներին հաղորդելու համար Ուրզանան որպես բանագնաց ուղարկեց իր եղբորը. թերևս կարող էր հարկ լինել տալու լրացուցիչ պարզաբանումներ՝ իր պասսիվությունն ու ուրարտական զորքերի մուտքը Մուծածիր արդարացնելու համար: Ասորեստանյան զեկուցագրերից մեկը հայտնում է.

«[Սեթինուն (?)] Մուծածիրում է, [մնացյալ] մարզպետները [.........]: Ինչ վերաբերում է ուրարտացուն, Ուրզանայի եղբայրը եկել է Շուլմու-Բելի մոտ, [ասելով]՝ «նա վերադարձել է [...]»[25]:

Ինչպես երևում է, ասորեստանյան արքունիքը կրկնեց իր պահանջը՝ Ուրզանային ստիպելով դիմել կոնկրետ քայլերի: Ենթարկվելով ասորեստանցիներին՝ Ուրզանայի գլխավորությամբ մուծածիրյան ուժերը հարձակվեցին քաղաքում գտնվող ուրարտական զորքերի վրա: Անակնկալի եկած ուրարտական մարզպետներին չհաջողվեց դիմադրություն կազմակերպել, տեղի ունեցած մարտերում ողջ զորախումբը ջախջախվեց, սպանվեց նաև Ուեսիի մարզպետ Սեթինուն[26]:

Մուծածիրի ուղղությամբ առաջացող Ռուսան քաղաքին մոտեցավ այն ժամանակ, երբ ուրարտական առաջապահն արդեն ջախջախվել էր: Արքային ոչինչ չէր մնում անել քան պաշարել Մուծածիրը: Մինչդեռ Ուրզանան փորձեց զարգացնել հաջողությունը՝ այս անգամ գրոհելով ուրարտական արքայի բանակատեղին[27]: Այս դրվագը կարծես արտացոլվել է նաև ասորեստանյան մեկ այլ զեկուցագրում, որի խիստ վնասված բովանդակությունը ռազմական գործողությունների ենթատեքստում հիշատակում է Ուրզանային և Ռուսային[28]:

Մուծածիրյան զորքերի գրոհները հաջողությամբ կասեցվեցին, ուրարտական գերազանցող ուժերն անցան հակահարձակման, որը եզրափակվեց քաղաքի նվաճումով: Ուրզանային սակայն Մուծածիրում չգտան: Ասորեստանյան արխիվում պահպանվել է «արքունի սենեկապետին» ուղղված լեռնային Զագրոսի ցեղապետներից Սանիյեի հայտնած տեղեկությունը, ըստ որի «*Ուրզանան [լքել է] քաղաքը*»[29]: Իրոք, Մուծածիրի արքան զգալի խումբ մերձավորներով կարողացել էր խուսափել գերի ընկնելուց՝ փորձելով ամենակարճ ճանապարհով՝ Անդարութի լեռնանցքով փախչել Ասորեստան[30]:

Մինչ ուրարտական զորքերը մարզպետ Կակկադանուի գլխավորությամբ հետապնդում էին Ուրզանային, Ռուսան Մուծածիրում իշխանության բերեց տեղի արքայատան մեկ այլ ներկայացուցչի՝ նրան հաստատելով, սկզբնապես, մարզպետ[31]: Մյուս կողմից, Ուրզանային չհաջողվեց անցնել Ասորեստան: Անդարութի մերձավորությամբ տեղի ունեցած մարտերում մուծածիրյան ուժերը ջախջախվեցին, ինքը՝ քրմապետ-արքան, գերվեց Կակկադանուի կողմից: Ասորեստանյան արքունիք առաքված Աշշուր-ռեծուվայի մեկ այլ զեկուցագրում ասվում է.

«......... [Նա (Կակկաղանուն – հեղ.) *գերել է] Ուրզանային՝ Մուծածի[ր] (երկրի) [արքային], հա[վաքել] նրա ժողովրդին [և տարել նրանց] Վախսի»*[32]:

Այս իրադարձության պատկերավոր նկարագրությունն է պահպանվել նաև Մուծածիրի մերձավորությամբ Ռուսա I-ի բարձրացրած երկլեզու վիմագրերից մեկում՝ Մովանայի կոթողում: Նրանում ասվում է.

«Իջա դեպի Մուծածիր, [իսկ արյ]քան [փակեց?] դուռը աստվածների տան և փախավ (դեպի) Ասորեստան: Խալդին՝ Տերը, վերա[բացեց այդ] դուռը, ... ընդդեմ Ուրզանայի ես [...]: [Իր զորքերը(?)] Ուրզանան պատ[րաստեց] իմ դեմ ճակատամարտի: Խալդի աստծո հրամանով ես՝ Ռուսաս, գնացի դեպի Անդարութու լեռը [և հաղ]թեցի (նրան): [Բռնեցի] Ուրզանային իմ ձեռքով [և զահընկեց արեցի նրան]»[33]:

Մուծածիրյան արքան, որ տարվել էր Ուեսի, իր այլ կողմնակիցների հետ, հնարավոր է, ենթարկվեց մահապատժի[34]: Այս առումով բացառիկ կարևորություն ունի ուրարտական արքայի թողած երկլեզու վիմագրերից երկրորդը՝ Թոփուզավայի կոթողը: Վերջինիս խիստ տուժած, այդ իսկ պատճառով տարաբնույթ կերպով իմաստավորված, մեզ հետաքրքրող հատվածում վերականգնվում է (17′) [^{d}Hal-di]-ni-ni ba-ú-š[i-n]i-ni ⸢ú⸣-la-a-di-⸢e⸣ (18′) [x x x x (x)] za-áš-gu-u-bi ^{m}Ur-za-na-ni (19′) [LUGÁ]L$^{?}$ $^{[URU]}$[A]r-di-ni-i pa-ru-u-bi միտքը[35]:

Այստեղ հստակ ընթերցվող zašgubi ^{m}Urzanani արտահայտությունը վկայում է Ուրզանայի վախճանի մասին. նշված արտահայտության համար, առանց երկմտանքի, կարելի է առաջարկել նման թարգմանություն[36]: Առավել ևս, արտահայտությունը առանձնանում է նախորդող մտքից, ուր uladi՝ *«գնացի/ուղղվեցի-դեպի»* բային միանշանակ հաջորդելու էր տեղանուն, դատելով Մովանայի կոթողից՝ նույն Անդառութուն, հետևաբար և քիչ է հավանական հատվածում «զորք(եր)» (^{LÚ}*A.SI*^{MEŠ}) տեսնելու Մորից վան Լունի կարծիքը՝ այս կերպ փորձելով լուծել Ուրզանային ոչնչացնելու՝ նրան քիչ հավանական թվացող միտքը[37]: Ի դեպ, հաջորդող տողի համար Միրյո Սալվինիի կողմից մեծ վերապահությամբ առաջարկված LUGÁL՝ «արքա» գաղափարագրի փոխարեն հնարավոր է թվում վերականգնել ^{LÚ}ÙKU՝ «ժողովուրդ/մարդ(իկ)» գաղափարագիրը՝ ունենալով *«ժողովրդին Արդինի քաղաքի (գերի) տարա»* միտքը: Այն միանգամայն համահունչ կլինի Ուրզանային և մուծածիրցիներին գերելու մասին ասորեստանյան աղբյուրի վերը հիշված տեղեկությանը:

Մյուս կողմից, Մովանայի կոթողի այս տեղեկությանը հաջորդում է Ուրզանային գահի բարձրացնելու մասին դրվագը: Հավելյալ մանրամասնություններով նույնն է վկայում նաև Թոփուզավայի արձանագրությունը[38]:

Փաստորեն, գործ ունենք ակնհայտ հակասությունների հետ, երբ մի դեպքում Ուրզանան համարվում է գահազրկված և անգամ սպան-

ված, իսկ մյուս կողմից նշվում է Ուբզանայի «նոր գահակալության» մասին: Նման պայմաններում որքանով է հնարավոր գահին տեսնել նույն Ուրզանային, երբ, թվում է, վերջինս այլևս գոյություն չուներ:

Մյուս Ուրզանա

Թուփուզավայի արձանագրության համաձայն, Ուրզանան Ռուսայի կողմից սկզբնապես հաստատվում է տեղի մարզպետ, այնուհետ նաև երկրի արքա: Փաստորեն, աղբյուրի տվյալները չեն վկայում տեքստում հիշատակվող սույն Ուրզանայի ունեցած իրական իշխանության մասին: Ակնհայտորեն, սկզբնապես նա չէր երկրի առաջնորդը (իհարկե, եթե հավաստի են առաջարկված ընթերցումները)[39]: Այս դեպքում, Մուծածիրի աստուրամետ արքայի ասպարեզից հեռացումը կարող էր բացել մուծածիրյան գահ տանող նրա ճանապարհը: Ամենայն հավանականությամբ, մուծածիրցի նորանշանակ մարզպետն օծվեց երկրի արքա՝ յնդունելով նույն Ուրզանա գահանունը[40]: Այս պարագայում, քննարկվող անունը կարելի է դիտել իբրև մուծածիրյան *մեծ հովվի*[41] գերագույն հոգևոր կոչում կամ որպես դինաստիական անուն/գահանուն՝ հետագայում վերաիմաստավորվելով, հնարավոր է, հայ իրականության մեջ[42]:

Մոտ երկու շաբաթ մնալով Մուծածիրում՝ Ռուսան կազմակերպեց ամենօրյա տոնախմբություններ՝ քաղաքացիներին բաժանելով իր կատարած զոհաբերությունները, Մուծածիրի խալդյան տաճարին ընծայելով թանկարժեք մետաղներ և իրեր, ուրարտական աղբյուրի վկայությամբ՝ «ավելին, քան նախորդ բոլոր արքաները»[43]:

Այսպիսով, հնարավոր է թվում ենթադրել, որ հետագայում ևս շարունակաբար հիշվող Ուրզանա անունը կարող էր և պատկանել այլ անձի (*մյուս Ուրզանա*), կարծես՝ արքայական միևնույն ընտանիքից, եթե նկատի ունենանք ուրարտական աղբյուրների վկայությունները նրան *«հայրական գահին»* բազմեցնելու մասին[44]:

Պատմական ետնախորք

Մուծածիրում տեղ գտած իշխանափոխությանը ասորեստանցիները հետևեցին դիտորդի դերում: Ասորեստանյան արքունիքի թույլ վարձը՝ տեղի ուժերով խոչընդոտելու Ռուսային, ավարտվեց անհաջողությամբ: Ասորեստանը կորցրեց ոչ միայն Մուծածիրի նկատմամբ ունեցած իր գերիշխանությունը, այլև դեռևս Թիգլաթպալասար III-ի կողմից նվաճված երբեմնի ուրարտական տարածքներ հատկապես Աղձնիքում[45]:

Մուծածիրի նկատմամբ լիակատար վերահսկողություն հաստատած Ռուսան, այնուամենայնիվ, չփորձեց երկիրը միացնել ուրարտական տերությանը, թերևս չկամենալով խախտել Մուծածիրի՝ որպես «միջազգայնորեն ճանաչված սրբազան քաղաք»-ի հնուց ի վեր ձևավորված

իրավունքները[46]: Մյուս կողմից, ուրարտական տերությունը սկսեց առավել մեծ չափերով միջամտել տարածաշրջանային գործերին: Հետագա աղբյուրները գծագրում են գործողությունների արդեն փործված ձեռագիր. Ռուսայի քաղաքականությունը՝ այս կամ այն երկրում իշխանության բերերը ցանկալի անձանց, մեծ կամ փոքր մասշտաբներով կրկնում էին մուծածիրյան իրադարձությունները: Այսպես, ռազմական միջամտությունների շնորհիվ Զիկիրտու երկրում իշխանության բերվեց Սիտատտին, Անդիայում՝ Տելուսինան, Ուիշդիշում՝ Բագդատտին, արդեն վերջիններիս ձեռքով և Ռուսայի անմիջական աջակցությամբ Մանայում սպանվեց երկրի ասսուրամետ արքա Ածան և գահ բարձրացվեց Ուլլուսունուն, Խաբխի երկրում իրականացված իշխանափոխության արդյունքում տեղի թագուհու և անչափահաս(˙) թագաժառանգի փոխարեն գահին բազմեցվեց ուրարտուհի:

Թվագրումը

Ոչ ուրարտական և ոչ էլ ասորեստանյան վերը հիշված աղբյուրները չունեն հստակ թվագրություն[47]: Վերջնական չեն նաև Ուրարտուի արքա Ռուսա I-ի գահակալության թվականները: Սակայն, բազմաթիվ նկատառումներ այնուամենայնիվ թույլ են տալիս առաջարկելու մուծածիրյան դեպքերի մոտավոր թվագրություն:

Նախ և առաջ, Ռուսայի մուծածիրյան արշավանքը չէր կարող տեղի ունենալ արքայի գահակալության առաջին տարիներին, երբ երկիրն ապրում էր ոչ փայլուն օրեր: Թիգլաթպալասար III-ի(˙) կառավարման վերջին շրջանին պատկանող տեքստում հիշատակված «ջախջախված Ուրարտուն», ակնհայտորեն, այն ուժը չէր, ինչը որ պատկերում են ասորեստանյան վերը հիշված աղբյուրները[48]: Թիգլաթպալասարին(˙) ուղղված մեկ այլ տեքստում ասորեստանյան պաշտոնյան անգամ հորդորում էր արքային մեկ անգամ ևս արշավել Ուրարտու, գրավել Տուշպան[49]: Հետևաբար, այս արքայի կառավարման վերջին կամ նրա հաջորդի՝ Սալմանասար V-ի գահակալության առաջին տարիները (Ք.ա. 730-725թթ.(˙)) կարելի է ընդունել որպես մուծածիրյան անցքերի հնարավոր վերին թվական:

Մյուս կողմից հայտնի է, որ Ք.ա. 719թ. սկսած և ընդհուպ մինչև Ք.ա. 714թ.՝ ասորեստանյան արքա Սարգոն II-ի իրագործած «VIII տարվա արշավանք»-ը Ուրարտու, Ասորեստանը տևական բախումներ էր ունենում Ուրարտուի հետ՝ սկզբնապես երրորդ երկրների տարածքներում (Ուկկու, Խուբուշկիա և հատկապես Մանայի թագավորություն), ապա և երկու տերությունների ողջ սահմանագծի երկարությամբ: Ընդ որում, ուրարտական կողմի ծավալած գործողությունները ասորեստանյան աղբյուրները՝ հատկապես արքունի տարեգրությունները, ներկայացնում են բավական հանգամանորեն, երբևէ, սակայն չհիշատակելով

Մուծածիրը ընդհուպ մինչև Ք.ա. 715թ. վերջերին տեղի ունեցած կիմերական արշավանքն Ուրարտու և Ռուսայի դեմ արքայազն Մելարտուայի բարձրացրած խռովությունը: Ենթադրելի է, որ շուրջ տասներեք տեքստերի հաղորդած մուծածիրյան անցքերն ինչ-որ կերպ կարտահայտվեին ասորեստանյան արքունի տարեգրություններում: Հետևաբար, Ք.ա. 719թ.-ը կարելի է ընդունել որպես մուծածիրյան անցքերի հավանական ստորին թվական:

Այս առումով կարելի է նշել նաև այլ փաստեր, այդ թվում՝ Կակկադանուի հիշատակությունը ասորեստանյան տեքստերում: Երկու զեկուցագրեր նրան հիշում են որպես մարզպետի[50]: Մինչդեռ, ասորեստանյան ավելի ուշ շրջանի աղբյուրներում Կակկադանուն արդեն զբաղեցնում էր բարձր դիրք՝ վարելով ուրարտական բանակի գլխավոր զորահրամանատարի պաշտոնը (LÚ.tūrtānū)[51]:

Մուծածիրյան անցքերի թվագրության առումով կարևորություն ունեն նաև այն գործոնները, որոնք, հնարավոր է, պայմանավորում էին Ասորեստանի վարած պասսիվ քաղաքականությունը այս շրջանում: Այն, միգուցե, պայմանավորված էր Պաղեստինում նրա մղած ծանր պատերազմով, դրանով իսկ անկարող լինելով խոչընդոտելու Ռուսայի գործողությունները Մուծածիրում: Ասորեստանցիներին այս շրջանում մտահոգում էին հրատապ այլ խնդիրներ, հատկապես Իսրայելի թագավորության մայրաքաղաք Սամարիայի անհաջող ընթացք ստացած պաշարումը Սալմանասար V-ի կողմից, սկսած Ք.ա. 724թ.-ից:

Սարգոն II-ը (Ք.ա. 722-705թթ.) իր կառավարման սկզբում հիմնական ջանքերն ուղղել էր Սամարիայի նվաճմանը (Ք.ա. 721թ.), որը չէր կարողացել իրագործել իր նախորդը՝ քաղաքը երեք տարի պաշարած Սալմանասար V-ը[52]: Հաջորդ՝ 720թ., Ասորեստանը պատերազմում էր էլամա-բաբելոնյան դաշինքի դեմ՝ տալով իր պատմության խոշորագույն ճակատամարտերից մեկը Դերում[53]: Ք.ա. 719թ. սկսած, ինչպես վերը նշվեց, Ասորեստանը վերստին բևեռվեց «ուրարտական խնդրին»: Եթե իրոք Ասորեստանի պասսիվությունը պայմանավորված էր այս հանգամանքով, ապա այն կարող է հուշել նաև Մուծածիրում ծավալված գործողությունների մոտավոր թվականը Սալմանասար V-ի իշխանության վերջին և Սարգոն II-ի կառավարման առաջին տարիներով՝ Ք.ա. 724°-721/0°թթ. սահմաններում[54]:

Մուծածիրը Ք.ա. 714թ. հետո

Ուրզանա անունը, որպես Մուծածիրի առաջնորդի, հանդիպում է հետագա աղբյուրներում և՝ մեկ էական տարբերությամբ: Անձնանվան բոլոր հիշատակումներն արդեն պատկերում են ուրարտական բացարձակ ազդեցության տակ գտնվող անձի, որը այդպիսին մնաց իր գահակալության ողջ շրջանում: Նա Ռուսայի կողքին էր տերության բոլոր

դժվարին օրերին (ասուրա-ուրարտական հակամարտություն, կիմերական արշավանք և այլն), ի վերջո, դրա համար հատուցելով գահով, ընտանիքի և երկրի կորստյամբ (Սարգոն II-ի «VIII տարվա արշավանք»-ը Ուրարտու Ք.ա. 714թ.). Ասորեստան «գերի տարվեց» Ուրարտուի գլխավոր՝ Խալդի աստվածը, մուծածիրյան տարածքները ներառվեցին ասորեստանյան տերության կազմում[55]:

Բավական սուղ են Մուծածիրի հետագա ճակատագրի մասին մեր տեղեկությունները: Ասորեստանյան էպոնիմների ցանկում Աշշուր-բանիի էպոնիմատի դիմաց (Ք.ա. 713թ.), ըստ Հայիմ Թադմորի վերականգնության, նշվում է *«Խալդի աստծո վերադարձը Մուծածիր»* արտահայտությունը, ինչը կարող է վկայել, որ Մուծածիրը դեռևս շարունակում էր պահպանել իր՝ կրոնական կենտրոնի դերը[56]:

Այս առումով չափազանց կարևորվում է ասորեստանյան արխիվի նամակներից մեկը՝ անհայտ հասցեատիրոջն ուղղված ցուցումներով: Խիստ պակասավոր տեքստում ընթերցվում է.

«… բայց դու [պետք] է ասես՝ թող [արքան՝ իմ տերը], [իմ աստվածներին]ետ վերադարձնի ինձ […], այնուհետ ……………, (և) [ես] շուտով [ետ կտ]ամ քեզ քո աստվածներին»[57]:

Կարելի է կարծել, թե խոսքն ուղղված էր ասորեստանյան արքայի կամ որևէ պաշտոնյայի կողմից *մյուս* Ուրզանային, զուցե, խոստանալով նրան վերադարձնել մուծածիրյան աստվածներին Սարգոնին հպատակվելու(?) դիմաց: Հետաքրքիր է նաև այն ցուցումը, ուր, պակասավոր հատվածում, հիշվում է Մուծածիր քաղաքը՝ հրահանգելով «մնալ այնտեղ»[58]:

Մասնագիտական գրականության մեջ արտահայտվել է կարծիք ուրարտական արքաների կողմից Մուծածիրի վերանվաճման մասին ինչ-որ մի ժամանակաշրջանում՝ Սարգոնի իրագործած «VIII տարվա արշավանքից» անմիջապես հետո[59] կամ ավելի ուշ[60]: Նման եզրակացության օգտին կարող է վկայել ասորեստանյան էպոնիմների ցուցակը: Աղբյուրի վերջին հրատարակիչ Աբրահամ Միլարդը Ք.ա. 713թ. համար վերականգնում է Մուծածիր ձեռնարկված ասորեստանյան արշավանքի կաղապարային բանաձևը[61]:

Մյուս կողմից սակայն, առկա են որոշակի հիմքեր՝ ենթադրելու, որ Մուծածիրը, այնուամենայնիվ, մնացել է Ասորեստանի կազմում:

Այս առումով մեծ կարևորություն ունեն ասորեստանյան երկու տեքստեր: Դրանցից մեկում հիշվում է Մուծածիրի մարզպետ Աքալուկունուն[62]: Ըստ որոշ հետազոտողների, այստեղ խոսքը կարող էր և վերաբերել ասորեստանյան մարզպետի, այսինքն՝ Ք.ա. 714թ. հաջորդող ժամանակաշրջանին[63]: Երկրորդ տեքստում հիշվում են մուծածիրյան զորքեր, որոնց տնօրինումը, կարծես, իրականացնում էին ասորեստանցիները[64]: Սա ևս կարող է վկայել, որ Մուծածիրը մնացել էր ասորեստանյան իշխանության տակ, իսկ մուծածիրցիները կատարում էին սարգոնյան

աղբյուրների համաձայն նրանց վրա դրված հարկային և զինվորական պարհակները[65]:

Հայտնի չէ, թե որքան կարող էր տևել նման իրավիճակը: Այս առումով չպետք է շրջանցել մի կարևոր իրողություն: Սարգոնյան դարաշրջանում նկատվում է պաշտամունքային հին, դեռևս Ասորեստանի նախաամորեական դարաշրջանից հայտնի կենտրոնների դերը սահմանափակելու, եթե ոչ՝ այդ կենտրոնները ոչնչացնելու միտում: Ասվածի վառ օրինակն է Կումմեն: Ամպրոպի աստծո պաշտամունքի հնագույն, երբեմնի հզոր այս քաղաքը սարգոնյան դարաշրջանից սկսած աստիճանաբար կորցնում է իր՝ պաշտամունքային-կրոնական կենտրոնի նշանակությունը: Մասնավորապես, հայտնի է Ռուսա I-ի որդի, ուրարտական արքա Արգիշթի II-ին ուղղված կումմեցի առաջնորդների խոսքը: Վերջիններս դժգոհում էին, որ իրենք այլևս որևէ իշխանություն չունեն, ենթարկվում են ասորեստանյան կառավարչին և որ իրենց են մնացել միայն իրենց տները[66]:

Պաշտամունքային հին կենտրոնների ջախջախմանը զուգընթաց, ոլպես հետևողական քաղաքականություն, Ասորեստանում առաջ էր մղվում գերագույն՝ Աշշուր աստծու պաշտամունքը՝ այն մոտեցնելով գրեթե միապաշտության[67]: Ասորեստանցիները փաստորեն կրկնում էին բիայնացիներին՝ հատկապես Ք.ա. 7-րդ դարից սկսած ամենուրեք փորձելով ներդնել Աշշուր աստծու պաշտամունքը, անգամ կրոնական այնպիսի հզոր կենտրոնում, ինչպիսին էր Բաբելոնը[68]: Որոշ հետազոտողներ սա փորձում են բացատրել հրեական միաստվածային գաղափարախոսության ազդեցությամբ Ասորեստանում[69], թեև ընդհանրապես՝ միաստվածային գաղափարախոսության համար այստեղ առկա էր դեռևս վաղդասակարգային հասարակության կազմավորման շրջանից եկող, տարածաշրջանին և հատկապես Հայկական լեռնաշխարհին ոչ օտար, պարարտ հող[70]: Կարելի է վստահությամբ պնդել նաև, որ նման գաղափարախոսություն՝ «միաստվածություն բազմաստվածության մեջ», նկատվում է նաև Ուրարտուում ի դեմս Խալդի աստծո պաշտամունքի[71]: Վերջինս պետք է որ շատ ընդհանուր եզրեր գտներ «ասորեստանցի միապաշտների»՝ Աշշուրի հետևորդների մոտ, ծագելով, չի բացառվում, աշխարհընկալման միևնույն արմատից:

Այս պայմաններում, որքանով է հավանական Մուծածիրի գոյության հնարավորությունը Ասորեստանում իր նախկին կարգավիճակով: Այս երկրում ևս տարածված Խալդի աստծո պաշտամունքի հարատևությունը Աշշուրին զուգահեռ հազիվ թե իրատեսական թվա: Եթե այն շարունակվել է, ապա, դատելով Ասորեստանում այս շրջանում ընթացող երևույթներից, միմիայն միաձուլվելով Աշշուր աստծո պաշտամունքի հետ: Հետևաբար, թերևս անհիմն չինչեն Մուծածիրի լքվելու և ամայանալու մասին մասնագիտական գրականության մեջ ասված տեսա-

կետնելը Սարգոն II-ի «VIII տարվա արշավանք»-ից անմիջապես հետո, գուցեև որոշակի ժամանակ անց[72]: Արդեն Արգիշտի II-ի հաջորդ Ռուսա II-ի իշխանության շրջանում Ուրարտուն ուներ Խալդի աստծո պաշտամունքի նոր կենտրոն՝ Ռուսախինիլի Քիլբանիկային՝ տերության նոր մայրաքաղաքը[73]:

YERVAND GREKYAN

EPISODES FROM THE IIISTORY OF RELATIONS OF URARTIAN STATE AND MUŞAṢIR

In the scientific literature it was long sincc discussed the significant role of the land/holy city of Muşasir/Ardini in the formation of the Urartian State. The offered paper is the first part of the author's supervisions on the matter – the political relations of these statc formations during the whole length of the history. Especially, the author focuses on the wcll-documented events – the military confrontation between the Urartian Empire and the land of Musasir.

Based on the analysis of twelve Assyrian and some Urartian cuneiform inscriptions the author gives comments on the reasons, main enlargements and the results of confrontation, the followed political situation, dating of the sources, consequently - of the events. The possible date of the confrontation is assumed between $724^{(?)}$-$721/0^{(?)}$ B.C. One can find similarities among the future actions of the Urartian Empire towards the buffer states of the region (the establishment of pro-Urartian rulers in the lands of Zikirtu, Andia, Uišdiš, the Mannaean Kingdom itself, probably Ḫabḫi etc.).

It is suggested to consider the name of the king of Musaşir - *Urzana* as title/throne name of "great shepherds" of the holy city and the land of Muşaşir. It seems possible to recognize at least two different leaders under the name of Urzana of the land of Musasir.

The author also discusses the possible fate of Musasir after the "VIII years' campaign" of the Assyrian king Sargon II. On the light of the changes in the policy of Sargonid Assyria towards the foreign religious centres of the period (Kumme etc.). it seems reasonable the offered opinion about final decline of the land/holy city of Muşasir.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Г.А. Меликишвили, К вопросу о древнейшем очаге урартских племен, ВДИ, 1947, № 4, с. 21сл.; նույնի՝ Мусасир и вопрос о древнейшем очаге урартских племен, ВДИ, 1948, № 2, с. 37сл.; նույնի՝ Древневосточные материалы по истории народов Закавказья: I. Наири-Урарту, Тбилиси, 1954, с. 37сл.; И.М. Дьяконов, История Мидии от древнейших времен до конца IVв., М.-Л., 1956, с. 37сл.; Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва, 1959, с. 37сл.; Н.В. Арутюнян, Биайнили (Урарту),

Ереван, 1970, с. 37сл. ուսումնասիրություններում և այլուր: Մուծածիրի ամփոփ պատմությունը տե՛ս R.M. Boehmer – M. Salvini, Muṣasir, in E.O. Edzard (Hrsg.), RLA, vol. VIII, 1993-1997: 444-450 (M. Salvini – A. Historisch, R.M. Boehmer – B. Archäologisch).

2. Э. Грантовский, Ранная история иранских племен в Передней Азии, Москва, 1970, с. 298сл.; С. Амаякян, Варуна-Ахурамазда и Уарубаине-Багмашту. Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей, Ереван, 1990, с. 48-49. Ch. Burney, The God Haldi and the Urartian State, in M.J. Mellink, E. Porada, T. Özgüç (eds.), "Aspects of Art and Iconography: Anatolia and its Neighbors, Studies in Honor of Nimet Özgüç", Ankara, 1993: 108-109; Ա. Պետրոսյան, Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը (Կ.Ֆ. Լեման-Հաուպտի ծննդյան 140-ամյակի առթիվ), ՊԲՀ, թիվ 2, 2002, էջ 243-270; А. Петросян, Армянский Мхер, западный Митра и урартский Халди, «Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը», Երևան, 2004, էջ 50-51, 53 և այլուր:
3. Տե՛ս վերը նշված աշխատություններում:
4. *Խալդիի (Խալդյան) քաղաքը* (^{d}Haldini(ni) URU) հիշվում է Մհերի դռան արձանագրության մեջ՝ բիայնական դաշնությանը մաս կազմող քաղաքական-կրոնական միավորների շարքում: Տես Н. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, № 38, текст I, стк. 15, текст II, стк. 25 (այսուհետև՝ КУКН): Չշփոթել արդեն հետագայում, տարբեր արքաների կողմից հիմնադրված նույնանուն քաղաքների հետ (^{d}Haldici/^{d}Haldini URU, ^{d}Haldiei URU ^{KUR}Ziuquni ևն): Հղումների համար տե՛ս КУКН, с. 507.
5. С. Амаякян, 1990: 48-49; Ս. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 110-111, ծնթ. 87; Ա. Պետրոսյան, 2002, էջ 245, 258; А. Петросян, 2004: 49-51; ինչպես նաև Ф. Тер-Мартиросов, Образование царства Армении, ՊԲՀ, թիվ 1, 2004: 2004: 265.
6. Վիմագրության կամ պատկերագրության մեջ նկատվող նման միտումների մասին տես, օրինակ, И.М. Лосева, Некоторые урартские ювелирные изделия с изображением ритуальных сцен, в сб, "Древний Мир", М., 1962, 309сл. ինչպես նաև K.F. Kravitz, A Last-Minute Revision to Sargon's Letter to the God, JNES, vol. 62, No. 2, 2003: 88-89.
7. Մեր օրերում Ուրարտուին և Մուծածիրին վերաբերող աղբյուրների վերագնահատման, խնդիրների նորովի լուսաբանման և նոր հարցադրումների փորձ են ձեռնարկել Գ. Լաֆրանկին և Ս. Պարպոլան, Ա. Իվանչիկը, Ս. Զավադցկին, Մ. Սալվինին, Ա. Պետրոսյանը, Ս. Հմայակյանը և այլք: Տե՛ս G.B. Lanfranchi – S. Parpola, G.B. Lanfranchi – S. Parpola, The Correspondence of Sargon II, Part II: Letters from the Northern and Northeastern Provinces, State Archives of Assyria, vol. V, 1990: xviif., xx (այսուհետև՝ SAA V); A. Ivantchik, Les Cimmériens au Proche-Orient, Orbis Biblicus et Orientalis, Bd. 125, Fribourg-Suisse – Göttingen, 1993: 45ff.; S. Zawadzki, Review of A.I. Ivantchik, Les Cimmériens au Proche-Orient (Fribourg-Suisse – Göttingen, 1993),

"Orientalia", vol. 65, 1996: 47. M. Salvini, Muṣaṣir (A. Historisch), 1993-1997: 445; K.F. Kravitz, 2003: 81-95. Ф. Тер-Мартиросов, О царе Армении Барзанесе, ՊԲՀ, թիվ 1, 2000: 185-198: А. Петросян, 2004: 53. Ս. Դնեչյան – Ս. Հմայակյան, Լոռիբերդյան կոյարգեզաձև կնիքների շուրջ, *Տարեգիրք*, Երևան, 2004: 39 և այլուր):

8. Kh. Nashef, Die Orts- und Gewässernamen der mittelbabylonischen und mittelassyrischen Zeit, RGTC 5, Wiesbaden, 1982: 198 (նշվ. գրականությամբ): Չշփոթել Եգիպտոսի հետ (Մուծրու):
9. A.K. Grayson, Assyrian Rulers of the Early First Millennium BC (1114-859 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. II, Toronto, 1991, No. A.O.101.30: 147.
10. D.D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, vol. I-II, Chicago, 1926-1927 (այսուհետև՝ ARAB). vol. I, § 588; A.K. Grayson, Assyrian Rulers of the Early First Millennium BC (858-745 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. III, Toronto, 1996, No. A.O.102.14: 174b-180; A.O.102.16: 320'b-328'.
11. Ասորեստանյան աղբյուրներում Մուծածիրն այս շրջանում չի հիշատակվում: Ուրարտական աղբյուրներում այն հանդես է գալիս մեկ անգամ՝ Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրությունում: Այստեղ, սակայն, առկա են տարակարծություններ հատվածի ընթերցման և մեկնաբանության հետ կապված: Տե՛ս Յ. Կարագեոզեան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, Հատոր I, Գիրք 1. Սեպագիր տեղանուններ, Երեւան, 1998, էջ 300-301 (նշվ. գրականությամբ): Հմմտ. Н. Арутюнян, КУКН, № 173, V, стк. 42 и прим. 44.
12. C.F. Lehman-Haupt, 1931: Armenien einst und jetzt, II/2, 1931: 461, 685, 855; Г. Меликишвили, 1954: 276-278; Б. Пиотровский, 1959: 83, 87-88; Ս. Հմայակյան, Հոռոմի բերդաքաղաքը և Ուրարտուի պատմության հետ առնչվող որոշ հարցեր, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, IV, Գյումրի, 2000, էջ 8 և այլուր:
13. H.W.F. Saggs, The Nimrud Letters 1952, Cuneiform Texts from Nimrud, vol. V, London, 2001 (այսուհետև՝ CTN V), ND 2453; ND 2798.
14. K. Deller, Ausgewählte neuassyrische Briefe betreffend Urartu zur Zeit Sargons II., in P.E. Pecorella – M. Salvini (eds.), Tra lo Zagros e l'Urmia, Incunabula Graeca LXXVIII, Roma, 1984, Nr. 6.8; 5.2; G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 136, 146:
15. S. Parpola, The Correspondence of Sargon II, Part I: Letters from Assyria and the West, SAA I, 1987, No. 7, 30-31; G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 11, 84, 88-90, 96, 112, 130, 136, 139, 144-148, 187, 191.
16. G.B Lanfranchi – S. Parpola, SAA, V, No. 12. Կան նաև մի ամբողջ շարք նամակներ, որոնք կարող էին միանգամայն վերաբերել մուծածիրյան իրադարձություններին: Ցավոք, դրանց վնասվածությունը թույլ չի տալիս ըստ հարկի օգտագործել նրանցում պահպանված տվյալները:
17. L. Waterman, Royal Correspondence of the Assyrian Empire, vol. 1-4, Ann Arbor, 1930-1936 (այսուհետև՝ RCAE), No. 444; G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 87.

18. Տես և հմմտ. G.B. Lanfranchi – S. Parpola. SAA V, No. 85(?), 114(?), 128(?).
19. L. Waterman, RCAE, No. 380; K. Deller, 1984: Nr. 3.4; G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 88.
20. G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 88, lns. 7-8.
21. L. Waterman, RCAE, No. 1083; K. Deller, 1984: Nr. 3.6; G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 11. տես նաև Nr. 6.9 – No. 148.
22. Խուբուշկացիները այս իրադարձությունների կապակցությամբ հիշատակվում են G.B. Lanfranchi – S. Parpola. SAA V, No. 11 տեքստում:
23. L. Waterman, RCAE, No. 380, 409; K. Deller, 1984: Nr. 3.4; 5.1; G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 88, 147.
24. K. Deller, 1984: Nr. 5.1; G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 147, rev., lns. 3-12.
25. Տե՛ս և հմմտ. G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 148, lns. 5-12. Ճուլմու-Բելը այս շրջանում վարում էր ասորեստանյան «արքունի 2-րդ սենեկապետ»-ի պաշտոնը:
26. L. Waterman, RCAE, No. 1079: Իհարկե, եթե միայն [i-na KUR ....]-ir հատվածում հնարավոր լինի տեսնել Մուծածիրը ([i-na KUR.mu-ṣa-ṣ]i'-ir' *դեպի Մուծածիր*): Հմմտ., սակայն, K. Deller, 1984: Nr. 1.4; S. Parpola, SAA, I. Helsinki, 1990, No. 30; A. Ivantchik, 1993: 161ff. (No. 1), ուր հեղինակները Ուեսիի մարզպետի սպանությունը կապում են կիմերական արշավանքի հետ՝ տալով վնասված հատվածի համապատասխան վերակազմություն՝ [i-na KUR.PA]B!-ir!՝ *ընդդեմ կիմմերների* (KUR.PAB = Gimir): Հետազոտողներն էլ առաջնորդվում են ըստ այդմ (տես, օրինակ, А. Иванчик, Киммерийцы и Урарту накануне восьмого похода Саргона II, ВДИ, № 3, 1990: 4-5 և այլն): Արձանագրության առավել վաղ հրատարակություններում հիշյալ հատվածը չի վերականգնվել (տես Հարպեր – Ուոտերմանի (R.F. Harper, ABL. No. 1079 = L. Waterman, RCAE, No. 1079) և Դյակոնովի (И.М. Дьяконов, АВИИУ, 50, № 5) հրատարակությունները:
27. Տե՛ս և հմմտ. L. Waterman, RCAE, No. 1043; G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 12, lns. 3-5.
28. G.B. Lanfranehi – S. Parpola, SAA V, No. 187.
29. Ըստ G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 130-ի (rev., ln. 7). Ցավոք, տեքստի վնասվածությունը թույլ չի տալիս հստակ մեկնել նամակի ողջ բովանդակությունը:
30. Անդարութուն ուրարտական աղբյուրներում հիշատակվում է միայն այս անցքերի կապակցությամբ, որպես «լեռ»: Այս տարածքը հայտնի է նաև Սարգոն II-ի՝ Աշշուր աստծուն ուղղված զեկույցից, որպես Մուծածիրին սահմանակից շրջան, Ասորեստան տանող լեռնանցք (Անդարութթա): Տես W. Mayer, Sargons Feldzug gegen Urartu-714 v.Chr.: Text und Übersetzung, MDOG, Bd. 115, 1983: 65-132 (տող 425):
31. G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 89, 187, 191. Հնարավոր է, այս մասին է խոսքը ասորեստանյան SAA V, No. 187 նամակում, որի հաջորդ հատվածը վերաբերում է ինչ-որ մեկին (մարզպետ*, արքա*) *հաստատելուն* (տող 7): Թոփուզավայի արձանագրության մեջ ևս առկա է համանման տեղեկություն: Տես Н. Арутюнян; КУКН, № 387, Урартский текст, стк. 7-8;

Ассирийский текст, стк. 7-8. Սակայն հարկ է նշել, որ հատվածի՝ նախկինում առաջարկված նման մեկնաբանությունը կարծես պատշաճ աջակցություն չի գտնում արձանագրության վերընթերցումներում: Հմմտ., մասնավորապես, M. Salvini, I documenti, in P.E. Pecorella – M. Salvini (eds.). Tra lo Zagros e l'Urmia, Roma, 1984: 87ff. idem. Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, 1995: 83. Տես նաև ծնթ. 39:

32. L. Waterman, RCAE, No. 1196; K. Deller, 1984: Nr. 3.7; G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 89.
33. B. André-Salvini – M. Salvini, The Bilingual Stele of Rusa I from Movana (West-Azerbaijan, Iran), SMEA, 44/1, 2002: 21-23 (Assyrian Version, lns. 40′-48′).
34. Ասորեստանյան զեկուցագրերից մեկը թերևս այս առնչությամբ հայտնում է. *«Տիշրի ամսին, Կակկադանում նրա առջև մտավ Վախի, արքան քաղաք մտավ նրանից հետո: Ես դեռ չեմ լսել, թե ինչ պատահեց այդ մարդկանց հետ. արդյո՞ք նրանք սպանվել են, թե արտաքսվել»*: Տես G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 112.
35. Թարգմանության համար տես M. Salvini, 1984: 91, 93: Հմմտ Н. Арутюнян, КУКН, № 387, Урартский текст, стк. 17-19.
36. Բառացի՝ *սպանեցի/ոչնչացրի Ուրզանա(յին)*: Արձանագրության հրատարակիչներից Միրյո Սալվինին, այստեղ տեսնելով հակասություն, առաջնորդվում է վիմագրի ասորեստանյան տարբերակի տվյալներով (M. Salvini, 1984: 91): Այս առնչությամբ Մ. վան Լունի արտահայտած կարծիքի համար տես տեքստը:
37. M. van Loon, Review of P.E. Pecorella – M. Salvini (eds.), Tra lo Zagros e l'Urmia (Roma, 1984), Bibliotheca Orientalis, XLIV, No. 1/2, January-Maart, 1987: 261.
38. Н. Арутюнян, КУКН, № 387, Урартский текст, стк. 20-21; Ассирийский текст, стк. 19; Տես և հմմտ. M. Salvini, 1984: 84ff. (Ass.Vers., ln. 21′; Urart.Vers., lns. 20′-21′); B. Andre-Salvini – M. Salvini, SMEA, 44/1, 2002: 22-23 (Ass.Vers., lns. 48′).
39. Ըստ Н. Арутюнян, КУКН, № 387-ի (նշված գրականությամբ): Հմմտ., սակայն, M. Salvini, 1984: 87ff.; idem., 1995: 83. Ցավոք, Թոփուզավայի արձանագրության քննարկվող հատվածը Սովանայի կոթողի պահպանված հատվածներում չի գտնում իր համապատասխանությունը: Տես նաև ծնթ. 31:
40. Ուրզանա անունը մասնագետները բխեցնում են հին իրանական *V(a)rzana բառից (Э. Грантовский, Ранняя история иранских племен в Передней Азии, Москва, 1970: 298сл.; R. Zadok, The Ethno-Linguistic Character of Northwestern Iran and Kurdistan in the Neo-Assyrian Period, Jerusalem, 2002: 44f.): Հմմտ., միաժամանակ, խուր. ^{d}Barzani դիցանունը, ինչպես նաև համանման ^{URU}bar-za-ni-a, ^{URU}ba-ar-zu-un-nu տեղանունները Մեծ Զաբի ավազանում: Տե՛ս M.C. Astour, Semites and Hurrians in Northern Transtigris, in D.I. Owen, M.A. Morrison (Eds.), SCCNH, vol. 2 (General Studies and Excavations at Nuzi, 9/1), Winona Lake, 1987: 3-68 (sp. p. 54):
41. Այսպես է բնորոշվում Մուծածիրի առաջնորդը ասորեստանյան սեպագիր տեքստերից մեկում: Տես G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 96.

42. Հմմտ. հայ քրմապետ *Արծանի* անունը (Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարաւնոյ (աշխատասիրութեամբ Ալեքսան Յակոբեանի), Անթիլիաս-Լիբանան, (Մատենագիրք Հայոց, Ե Հատոր, Է ԴԱՐ), 2005, էջ 1009 և այլուր: Համադրությունը Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 215):

43. B. André-Salvini – M. Salvini, SMEA, 44/1, 2002: 21-23 (Assyrian Version, Ins. 39′-40′).

44. Տե՛ս վերը, ծնթ. 38:

45. Թիգլաթպալասար III-ին հաջորդած արքաներից Սարգոն II-ի աղբյուրներում հիշվում է ասորեստանցիների կողմից նվաճված Ալզի երկրի ուրարտական մարզպետը: Ժամանակաշրջանի ուրարտական տեղանունների շարքում նշվում են այնպիսիք (Թասի/ա, Էզզեդա ևն), որոնք նվաճվել էին Թիգլաթպալասարի՝ Ք.ա. 735թ. իրագործած ուրարտական արշավանքի ժամանակ: Հիշված տեղանունների տեղադրության շուրջ տես և հմմտ. K. Kessler, Šubria, Urartu and Aššur. Topographical Questions around the Tigris Sources, in M. Liverani (ed.), Neo-Assyrian Geography, Quaderni di Gcografia Storica 5, Roma, 1995: 59ff.

46. Ձևակերպումն ըստ M. Salvini, Musaşir. 1993-1997: 445.

47. Ասորեստանյան վերոնշյալ նամակների հավանական թվագրումները տես նաև И.М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (ВДИ, № 2-4), 1951 (այսուհետև՝ АВИИУ), с. 337сл. (թիվ 2-7 տեքստերին տրված ներածականները): Հմմտ., սակայն, G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, xvii, B. Andre-Salvini – M. Salvini, SMEA, 44/1, 2002: 29.

48. Տես H.W.F. Saggs, 2001, ND 2798 տեքստը (տող 10-11): Հմմտ., սակայն, K. Deller, 1984, Nr. 4.4.

49. H.W.F. Saggs, 2001, ND 2673, Obv., Ins. 4-11.

50. G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 87, In. 4ff., No. 89, Ins. 5-6.

51. Տե՛ս, օրինակ, L. Waterman, RCAE, No. 197, 492; K. Deller, 1984: Nr. 1.2, 2.3; S. Parpola, 1987: No. 31; G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No 86 տեքստերը:

52. Սարգոնի գահակալության մասնամասները տես G.W. Vera Chamaza, Sargon II's Ascent to the Throne: The Political Situation, SAAB, vol. VI, Issue 1, 1992: 21-33.

53. В. Якобсон, Новоассирийская держава, в кн. История Древнего Мира, том II, Москва, 1989: 36. Բուն ճակատամարտի մասին տես A.K. Grayson, Problematical Battles in Mesopotamian History, in "Studies in Honor of Benno Landsberger on his Seventy-Fifth Birthday, April 21, 1965", Assyriological Studies 16, Chicago, 1965: 340f.

54. Մի խումբ հետազոտողներ առաջարկում են ասորեստանյան վերը ներկայացված աղբյուրների ողջ նյութը տեղավորել Ք.ա. 714թ. սահմաններում, մասամբ անգամ այս թվականից հետո: Տես G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, xviif.; B. André-Salvini – M. Salvini, SMEA, 44/1, 2002: 29 և այլուր:

55. D.D. Luckenbill, ARAB II, § 22; И.М. Дьяконов, АВИИУ, № 46 (129).

56. H. Tadmor, The Campaigns of Sargon II of Assur: A Chronological-Historical Study, JCS, 1958: 86-87, 95. Սակայն, մեծ թվով հետազոտողներ, այդ թվում նաև ասորեստանյան էպոնիմների ցանկի քննական վերահրատարակությունը կատարած Աբրահամ Միլարդը, կասկածանքով են վերաբերում Հայիմ Թադորի՝ վերը շարադրված վերակազմությանը: Տես A. Millard, The Eponyms of the Assyrian Empire. 910-612 BC., State Archives of Assyria *Studies*, vol. II, Helsinki, 1994: 47/60 (այսուհետև՝ SAAS II): Տես նաև ծնթ. 61:
57. S. Parpola, 1987: No. 7, ln. 3′-4′.
58. S. Parpola, 1987: No. 7, ln. 7′.
59. G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, xvii, xx:
60. И.М. Дьяконов, АВИИУ, № 60 և ծնթ. 8; В. Якобсон, 1989: 36; Այս վերջին միտքը կիսում են նաև հայ հետազոտողներ: Տես Ս. Դևեջյան – Ս. Հմայակյան, 2004: 39.
61. Հատվածում ընթերցվում է [a?-n]a ^{al}mu-sa-sir, այն է՝ «դեպի/ընդդեմ Մուծածիր(ի)» արտահայտությունը: Տե՛ս և հմմտ. A.R. Miliard, SAAS II: 47/60:
62. L. Waterman, RCAE, No. 381; K. Deller, 1984: Nr. 6,2; G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 84.
63. А. Иванчик, 1990: 15-16 և այլուր: Հմմտ., սակայն, Г. Меликишвили, 1954: 295-296, прим. 5, ուր և տես Թյուրո-Դանժենի նկատառումը տեքստի ընթերցման հետ կապված:
64. G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 139.
65. W. Mayer, 1983: 65-132 (տող 410).
66. G.B. Lanfranchi – S. Parpola, SAA V, No. 95.
67. B.N. Porter, The Anxiety of Multiplicity: Concepts of Divinity as One and Many in Ancient Assyria, in B.N. Porter (ed.), One God or Many? Concepts of Divinity in the Ancient World, Bethesda, 2000: 211-271; S. Parpola, Monotheism in Ancient Assyria, in B.N. Porter (ed.), One God or Many?, Bethesda, 2000, 165-210.
68. P.-A. Beaulieu, The Cult of AN.ŠAR/Aššur in Babylonia, "State Archives of Assyria *Bulletin*", vol. XI, 1997: 72f.
69. B.A. Levine, Assyrian Ideology and Israelite Monotheism, "Iraq", vol. LXVII, pt. 1, 2005: 411-427.
70. Հ. Հմայակյան, Ե. Գրեկյան, Միաստվածության գաղափարի ակունքները Հայաստանում, Դար 21, Երևան (հանձնված է հրատարակության):
71. Ս. Հմայակյան, 1990, էջ 34:
72. Տե՛ս A. Ivantchik, 1993: 45f.; S. Zawadzki, 1996: 47.
73. Թոփրաք-քալե ուրարտական հնավայրից հայտնաբերված տեքստերից մեկում նշվում է Խալդի աստծուն Ռուսախինիլի Քիլբանիկայի տեղափոխելու մասին: Տե՛ս И.М. Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963, с. 39, 81 (текст № 12). Н. Арутюнян, КУКН, № 412.

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՈՒՐԱՐՏՈՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ, ՀԶՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Մ.թ.ա. 13-րդ դարից սկսած ասուրական սեպագիր աղբյուրները վկայում են Ասորեստանին հյուսիսից սահմանակից Ուրուատրի կամ Ուրատրու անունով մի երկրի մասին: Այն գտնվել է արևմտյան և արևելյան Տիգրիսների միախառնման ավազանում: Նրան սահմանակից են եղել արևելքից Կումանի, հյուսիսից Խաբխի և արևմուտքից Կադմուխի խուրիական գավառները:

Մ.թ.ա. 890թ. հետո Ուրուատրին սեպագիր արձանագրություններում այլևս չի հիշատակվում: Ըստ այդ վավերագրերի նրա տարածքը զբաղեցնում են հիշյալ վարչաքաղաքական միավորները:

Մ.թ.ա. 859թ. սկսած ասուրական գրավոր աղբյուրներում հանդիպում են վկայություններ Ուրարտու անունով մի պետական կազմավորման մասին՝ Վանա լճի արևելյան ավազանում:

Ինչպես մեր մեկ այլ աշխատության մեջ ենք ցույց տվել, նկատի ունենալով արձանագրությունների նշված փաստերը և այն, որ Ուրուատրին կամ Ուրատրուն Ուրարտու անվան նախաձևերն են, պետք է եզրակացնել. Ուրուատրի երկրի ցեղերը, գաղթելով Վանա լճի ավազան, ստեղծել են Ուրարտու պետությունը: Այդ արտագաղթը տեղի է ունեցել Ուրուատրիի վրա Ասորեստանի հաճախակի հարձակումների հետևանքով[1]:

Այդ ժամանակ, ինչպես վկայում են վաղ միջնադարի հայ պատմիչները, ողջ լեռնաշխարհին ընդգրկվում էր Հայկական թագավորության սահմանների մեջ: Արամը, մ.թ.ա. 890թ. դառնալով պետության տիրակալ, Մինիայից նվաճեց նրա հյուսիս-արևմտյան շրջանները, կռվելով Ասորեստանի դեմ՝ գրավեց նաև վերին Տիգրիսի ավազանի խուրիական երկրները և ապա՝ Կապադովկիան՝ Փոքր Ասիայում: Այդ ժամանակի ասուրական սեպագիր աղբյուրները ողջ լեռնաշխարհը հիշատակում են «Նաիրի երկիր» անունով, որով հաստատվում է Մովսես Խորենացու հաղորդումն այն մասին, թե Արամի օրոք Հայկական լեռնաշխարհը գտնվում էր Հայկական պետության կազմի մեջ[2]:

Ավելին, հայ պատմիչի վկայությամբ Արամի՝ դեպի Ասորեստան կատարած արշավանքի ժամանակ ասուրական թագավորների հարկ ու տուրքի պատճառով Կորդուքն անապատ էր դարձել[3]:

Այդ երկիրը, որն ըստ պատմահոր՝ կոչվում էր նաև Արարադ, զբաղեցնում էր նույն Ուբուատրիի կամ Ուրարտուի տարածքները: Այս բոլորը հաստատվում են ասուրական սեպագիր աղբյուրնեյում, որոնցում մ.թ.ա. 890թ. սկսած Ուրատրուն այլևս չի հիշատակվում:

Հարց է առաջանում: Հայոց Արամ արքան ունե՞ր 90.000-ոց բանակ, ինչպես Մովսես Խորենացին է վկայում, որն այդ ժամանակի համար բավական պատկառելի ուժ էր: Այդ ինչպե՞ս եղավ, որ Հայկական թագավորության ոչ մեծ հատվածում բնակություն հաստատած ցաղթականները՝ ուրարտացիները, կարողացան այնքան հզորանալ, որ պետություն ստեղծեցին ոչ միայն իրենց զբաղեցրած տարածքում, այլև աստիճանաբար տիրացան Արածանիի և Ճորոխի ավազանների հայկական գավառներին ու նահանգներին: Իսկ մ.թ.ա.782թ. Ուրարտուի թագավոր Արգիշտի I-ը արդեն իր տիրապետության տակ առավ արևելյան Հայաստանը՝ Արմավիր մայրաքաղաքով և վերացրեց հայոց պետականությունը:

Ուրարտուի ստեղծման և հզորացման պատճառները բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել, թե լեռնաշխարհում ուրարտական բնակչությունն ինչքան է եղել, և որքան զորք է կարողացել դուրս բերել, բանակն ինչ սկզբունքներով էր կառուցված:

Ուրարտացիների քանակի վերաբերյալ հետաքրքիր տվյալներ ենք գտնում Ուրարտուի թագավոր Սարդուրի II-ի (մ.թ.ա. 764-735թթ.) տարեգրության հետևյալ հատվածում՝ փորագրված Վանի ժայռերից մեկի վրա:

(1) «Խալդյան հզորությամբ Սարդուրին՝ Արգիշտիի որդին, ասում է. (2) երբ (աստված) Խալդին ինձ նվիրեց թագավորություն (և) (ես) բարձրացա հայրական թագավորական տեղը, (3) ահա ինչպիսի ավելորդ(*) ընծա այս թագավորության համար (ես) ոչնչացրի. 92 մարտակառք, (4) 3.604 ձի, 352.011 զինվոր՝ և հեծյալ, (5) և հետևակ: Այն ընծան բանակի համար(*) (ես) ոչնչացրեցի: (6) Ինչ ավելորդ(*) էր, (ես) դեն նետեցի՝ 121 մարդ, 10.408 ձի, (7) 132 ջորի, 12.321 կով, 9.036 եզ, (8) ընդամենը՝ 21.357 (գլուխ) խոշոր եղջերավոր անասուն, 35.467 (գլուխ) մանր եղջերավոր անասուն, (9) 2.117 մարտական զենք, 1.332 աղեղ, 47.970 նետ, (10) 1.022.133 kapi գարի, 111 aqarqi գինի, 86 aqarqi 7 terusi mankali յուղ, (11) 7.079 մին պղինձ, 336 ստրուկ, ուրուրդանի մարդու համար(*) ես ոչնչացրեցի»[4]:

Ինչպես գտնում էր Ի. Դյակոնովը, Սարդուրի II-ը, ըստ այս տեքստի, հարկեր է վերցրել, ինչը պայմանավորված էր թագավորական տնտեսության հզորացումով[5]: Դրան կարելի է ավելացնել այն, որ նրա օրոք Ուրարտուն նվաճել էր համարյա ողջ լեռնաշխարհը և հարակից ո-

յող տարածքներ ու բավական մեծ քանակությամբ հարկեր էր ստանում այդ երկրներից: Դրա համար էլ տեքստերում նշված հարկերը, որոնք իրենց չափերով աննշան էին (դա նկատել է նաև Ի. Դյակոնովը), թագավորն ավելորդ է համարել և չեղյալ հայտարարել:

Ի.Մ. Դյակոնովը, հետևելով Ի.Ի. Մեշչանինովին, գրում է, որ տեքստի վերջում նշված ururdani տերմինը կապ ունի Ուրարտու անվան հետ և նշանակում է «ուրարտացի»[6]: Եվ, իրոք, այդ բառի -ni մասնիկը նույնանում է ուրարտերենի ածականակերտ -ni ածանցի, կամ ավելի շուտ, կարծում ենք, սեռականի նույնահունչ ցուցիչի հետ, քանի որ այդ հոլովի իմաստը տեքստում առկա է: Այդ պարագայում ururda բառը Urartu անունից այնքան էլ չի հեռանում: Տեքստի վերջում նշված է, որ այդ հարկերը թագավորը վերացրել է ուրուբդանի՝ ուրարտացի մարդու համար: Ուրեմն այդ տնտեսական ռեֆորմը վերաբերել է միայն ազգությամբ ուրաբա բնակչությանը: Տրամաբանական էլ չէր լինի, որ Ուրարտուի թագավորը նվաճված երկրների հարկերը չեղյալ դարձներ:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ այդ հարկերը Սարդուրի II-ի ժամանակ արդեն վերապրուկ էին: Ուստի կարելի է մտածել, թե դրանք սահմանվել են դեռևս մ.թ.ա. 859թ., երբ սուրքա Արամե ուրարտացին այդ թագավորությունն ստեղծեց:

Ի.Մ. Դյակոնովը խիստ կասկածելի է համարում տեքստում նշված Ուրարաուի թագավորական բանակի զինվորների թվաքանակը՝ 352.011 ռազմիկ, որն, իրոք, խիստ մեծացրած է[7]:

Տեքստում գրված է, որ այդ ընծան (խոսքը վերաբերում է 92 մարտակառքերին և 3.604 ձիերին) նրա բանակի համար է չեղյալ հայտարարել: Զինվորների թվաքանակին վերաբերող հատվածը կարծում ենք, պետք է ընակել որպես միջանկյալ նախադասություն, ավելացնել զեղչված նրա ստորոգյալը և թարգմանել մոտավորապես հետևյալ ձևով. «352.011 զինվոր (կա)՝ և հեծյալ, և հետևակ»: Այսինքն՝ պարզապես նշված է զինվորների քանակը և ոչ՝ դրանց վերացնելու մասին:

Տեքստի շարունակության մեջ գրված է, որ Սարդուրին վերացրեց նաև հետևյալ հարկերը՝ 121 մարդ, 10.404 ձի: Քանի որ տեքստի սկզբում 3.604 ձիերի հարկը բանակին է վերաբերում, ուրեմն խոսքը գնում է հեծկան նժույգների մասին: Բնականաբար, տվյալ 10.404 ձիերը լծու են եղել:

Այնուհետև թագավորը չեղյալ է հայտարարել հետևյալ հարկերը՝ 132 ջորի, 12.321 կով, 9.066 եզ, 35.467 գլուխ մանր եղջերավոր անասուն, 2.114 մարտական զենք (ըստ երևույթին՝ տեգ և սուր), 1.332 աղեղ, 47.970 նետ, 1.022.133 kapi գարի:

Ինչպես պարզել է Ն.Վ. Հարությունյանը, չափի միավոր kapi-ն - շումերերեն BANES-ն է: Ըստ Ռ. Լաբայի այն GUR-ի 3/30-ն է: Իսկ վերջինս 250 լիտր է[9]: Ուրեմն kapi-ն 25լ. է: Հետևաբար գարու հարկի չափը

մոտ 25.000 տոննա է: Սրանցից բացի ուրարտական բնակչությունը տարեկան պետք է տար 27.750լ. գինի, 17.805լ. ինչ-որ տեսակի յուղ և 10.615կգ. պղինձ:

Ինչպես նշում են մասնագետները, թվարկված հարկերի քանակը շատ քիչ է: Ըստ մեր հաշվարկների, այն կարելի է ստանալ մոտ 100.000 բնակչությունից: Դա հաստատվում է նաև այն տվյալով, որ Ուլուատրին, որը նախկինում բնակեցված է եղել ուրարտացիներով, Սալմանասար I-ի վավերագրերից մեկի հաղորդման համաձայն ունեցել է 8 գավառ և 51 բնակավայր[10]:

Այնուամենայնիվ, Ուրարտուն պետք է ունենար մեծաթիվ բանակ, որի օգնությամբ նրա տիրակալները կարողացել են նվաճել ողջ Հայկական լեռնաշխարհը և հարակից այլ երկրներ ու դիմակայել Ասորեստանի նման հզոր թագավորության ձեռնարկած արշավանքներին:

Դա պարզելու համար դիմենք այլ փաստերի: Որարտերենի šurḫani տերմինը, որը վերաբերում է զինվորների ինչ-որ տեսակի, Գ.Ա. Ղափանցյանը կապում է հայ. սխուր՝ «վճար» արմատի հետ և ենթադրում, թե դա նշանակում է «վարձկան(՞)»[11]:

Ուրարտական թագավորները, ինչպես հաճախ նշված են նրանց սեպագիր արձանագրություններում, տարվա արշավանքներն սկսելուց առաջ են հավաքագրել զինվորներ: Ուրեմն նրանք ողջ տարին կայուն բանակ չեն պահել՝ բացի բերդերի կայազորներից: Այդ ռազմիկներին նրանք մի քանի ամիս կերակրել ու զինել են, որոնց հիմնական վարձատրությունը եղել է ռազմավարի տեսքով: Օրինակ՝ Սարդուրի II-ը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանները կատարած իր մի արշավանքի կապակցությամբ գրել է տվել, որ իր ավարից բացի զինվորներին բաժանել է գերեվարված տղամարդկանց և կանանց[12]:

Կամ նույն արքան, Իրանի հաբավ-արևմտյան մասերում նվաճելով Բաբիլունի և Բուշտուատա երկրները, ձեռք է բերել մեծ ավար: Իսկ ինչքան անասուն զինվորներն էին բռնագրավել, նրանք առանձին էին քշում ու տանում[13]:

šurḫani բառի մեջ կարելի է տեսնել ուրարտ. šur- արմատը, որն առկա է նույն լեզվի šurili-ի («աշխարհ», «երկիր») մեջ -ili ածանցի հետ: Վերջինս հոգնակի թվում դառնում է šuraue «երկրներ»:

Քննարկվող տերմինի -ḫani բաղադրիչը, կարծում ենք, Խուրի երկրի մեկ այլ՝ Ḫanigalbat անվան առաջին բաղադրիչն է: Ֆ. Կոռնելիուսը գտնում է, որ նշված տեղանվան -gal- վանկը շումերերենի GAL «մեծ» բառն է, որը փոխարինում է ասուրերեն rabû «մեծ» արմատին[14]: Ավելացնենք նաև, որ rabû բառը սասուր. լեզվում հանդիպում է նաև rabâti հավաքական ձևով՝ նույն նշանակությամբ: Վերջինիս երկրորդ բաղադրիչը առկա է Ḫanigalbat տեղանվան մեջ:

Այն Ḫani անվան վրա ավելացրել են ասորեստանցիները: Ուրեմն, պետք է եզրակացնել, Խուրի երկրի բնիկների մյուս ինքնանվանումը Ḫanı-ն է և ոչ՝ Ḫanigalbat-ը:

Ուրարտուի արքա Արգիշտի I-ը, ինչպես նշված է նրա տարեգրության մի բաժնում šurḫani՝ խուրի զինվորներ է հավաքում ու գնում արշավանքի դեպի Ուրմիա լճից անմիջապես հարավ գտնվող Մանա և ապա Բուշտու երկրները ու նվաճում դրանք[15]:

Այդ երկրների հզորության մասին են վկայում նույն թագավորի տարեգրության զանազան տարիների վերաբերող հաղորդումները: Մ.թ.ա. 779թ. Արգիշտի I-ը ձեռնարկում է արշավանք դեպի այժմյան Չլդր լճի ավազանի Իյանի (Իգանի) երկրի դեմ, ապա՝ Ուրմիա լճից հարավ գտնվող Մանւս ու նրա հարևան Բուշտու երկրների դեմ: Այդ ռազմական գործողությունների ընթացքում նշված երկրներից գերեվարում է 18.243 մարդ, 790 ձի, 100 ուղտ, 22.529 գլուխ խոշոր, 36.830 գլուխ մանր եղջերավոր անասուն:

Մեկ այլ արշավանքի ժամանակ Արգիշտին, նվաճելով Մանա և հարակից այլ երկրներ, գերի է վերցնում 1.397 մարդ, 8.021 խոշոր և 32.538 մանր եղջերավոր անասուն[17]:

Այս տվյալները ցույց են սաղիս, որ Մանան, ինչպես նաև Բուշտուն բավական հզոր վարչաքաղաքական միավորներ են եղել: Դրա մասին են վկայում այդ ժամանակի ուրարտական սեպագիր այլ աղբյուրներ[18]:

Ուստի, կարծում ենք, այդ երկրների նվաճման ժամանակ Արգիշտի I-ի հավաքած խուրի զինվորների քանակը պետք է լիներ 50 հազարից ոչ պակաս:

Հյուսիսային Միջագետքի և վերին Տիգրիսի ավազանի խուրիական երկրները, ինչպես գրում են Ասորեստանի թագավորները, հաճախակի ենթարկվում էին այդ տիրակալների ասպատակություններին: Ուստի խուրիները, հավանաբար, մեծ հույսեր են կապել ցեղակից ուրարտացիների՝ Վանա լճի արևելյան ավազանում ստեղծած պետության հետ Ասորեստանի արքաներից պաշտպանվելու և իրենց բնիկ տարածքները ազատագրելու նպատակով: Բացի այդ, հարստահարված խուրիները հեշտությամբ կզինվորագրվեին ուրարտական թագավորներին, որով տարեկան մոտ չորս ամիս ապահովվում էին սննդամթերքով, հանդերձանքով ու սպառազինությամբ, իսկ արշավանքների ժամանակ հարստանում էին ավարով՝ գերիներով, անասուններով:

Այս բոլորից ելնելով, կարծում ենք, որ ուրարտական բանակի ճնշող մասը լրացնում էին խուրիները: Դա էլ այն մեծ գործոնն էր, որով ստեղծվեց ու հզորացավ Ուրարտու պետությունը: Ուրարտական թագավորներ Իշպուինին (մ.թ.ա. 823-810թթ.) և Մենուան (մ.թ.ա. 810-786թթ.) հայկական գավառներն ու նահանգները նվաճելիս, ինչպես երևում է

նրանց արշավանքներին վերաբերող սեպագիր արձանագրություններից, դրանց միասնական դիմադրությանը չեն հանդիպել: Նրանք ուրարտական զորքի դեմ առանձին են կռվել և բնականաբար պարտվել: Ուրեմն Հայաստանն այդ ժամանակ միասնական հզոր զորք չի ունեցել:

Կարելի է ենթադրել, որ հայկական բանակը այլ սկզբունքներով էր կառուցված: Ինչպես ցույց են տալիս հայոց պատմության ուշ ժամանակներին վերաբերող փաստերը, բանակի մեծ մասը տարալուծված է եղել իշխանական տների մեջ: Ամեն մի գավառի կամ նահանգի իշխան իր կարողության սահմաններում պահում էր որոշ քանակությամբ զինուժ, որը հարկ եղած դեպքում պետք է միանար արքունի բանակին: Սակայն իշխանները ոչ միշտ էին միաբան և կենտրոնամետ: Իսկ ուրարտական բանակը կենտրոնացած էր թագավորի ձեռքում, որն էլ բարձրացնում էր զորքի մարտունակությունը:

Իսկ ինչ տեղի ունեցավ մ.թ.ա. 7-րդ դարում, որը խիստ թուլացրեց Վանի թագավորությանը և հանգեցրեց կործանման:

Նախ նշենք, որ, ինչպես գտնում են մասնագետները, Ուրարտուն սկսեց անկում ապրել Ասորեստանի տիրակալ Սարգոն II-ի մ.թ.ա. 714թ. նրա դեմ ձեռնարկած արշավանքից հետո: Վերջինս դաժան պարտության մատնեց Վանի թագավորության զորքին Ռուսա I-ի ժամանակ՝ ավերելով այդ պետության շատ բերդեր ու շտեմարաններ: Սակայն դրանից հետո էլ Ուրարտուն, թուլանալով, շարունակում էր գոյատևել համարյա նույն սահմաններում մինչև մ.թ.ա. 680թ.[19]:

Այդ թվականին, ինչպես փաստում են վաղ միջնադարի հայ պատմիչները, հայոց առաջնորդ Սկայորդին, որի նստավայրն էր Սասունը (ասսուր. Շուպրիա, ուրարտ. Արմե), ոտքի հանելով լեռնաշխարհի գավառներն ու նահանգները, երկրի մեծ մասը ազատագրում է օտարների գերիշխանությունից: Այդ ժամանակից, ինչպես պնդում են ուրարտագետները, Ուրարտուն մնում է ամփոփված Վանի նահանգի, Արարատյան դաշտի և դրանց միջև ընկած գավառների սահմաններում[20]:

Մովսես Խորենացու հաղորդումների համաձայն Սկայորդին ապաստան է տալիս մ.թ.ա. 681թ. դեկտեմբերին Ասորեստանի տիրակալ Սենեքերիմին սպանող նրա որդիներ Սանասարին և Բաղդասարին[21]:

Վերջիններիս կրտսեր եղբայր Ասարխադոնը, դառնալով թագավոր, ինչպես վկայում են նրան վերաբերող ասսուրական վավերագրերը, ճնշում է իր երկրում ծագած ապստամբությունը: Նա հաղթում է նաև այդ ժամանակ Ասորեստանի վրա Իրանի սարահարթի և Փոքր Ասիայի կողմերից հարձակվող ռազմատենչ կիմերներին ու սկյութներին, որից հետո արշավանք է ձեռնարկում դեպի Շուպրիա (ուշ՝ Սասուն) և նվաճում այն: Նա պահանջում է այդ երկրի արքա Նիք-Թեշուբից վերադարձնել իր հոր արյունը թափողներին՝ մարդասպաններին: Ակնհայտ է, որ Սկայորդին Նիք-Թեշուբն է:

Նրա որդիներ Շերբի-Թեշուբը և Լիգի-Թեշուբ ներկայանում են Ասարխադոնին՝ խնդրելով նրանից ներում շնորհել իրենց հորը՝ մարդասպաններին ապաստան տալու համար[22]:

Այս երեք անձնանունների մեջ առկա է խուրիների ամպրոպի և որոտի Թեշուբ աստծու անունը: Իսկ niq-, serbi-, ligi- բաղադրիչները խուրիերեն բառեր են, որոնց իմաստները մեզ հայտնի չեն: Սակայն նկատի ունենալով ասուրական թագավորների այն անունները, որոնց մեջ ստկա են իրենց աստվածների հորջորջումները (օրինակ՝ Թուքուլտի-Նինուրտա «հզոր-(աստված) Նինուրտա»), պետք է կարծել, թե նշված բաղադրիչները ունեին «Թեշուբի սիրելի, հովանավորյալ, զորություն» կամ նման իմաստներ:

Նշված այդ երեք անձնանունները նկատի ունենալով՝ որոշ մասնագետներ եզրակացնում են, որ այդ ժամանակ Շուպրիայում իշխել է խուրիական դինաստիա: Սակայն դա համոզիչ չէ, քանի որ այդ դեպքում ուրարտական թագավորները կբարեկամանային այդ երկրի հետ և հաճախակի չէին ասպատակի, կողոպտի այն, գերեվարի նրա բնակչությանը, ինչպես դա տեղի է ունեցել:

Կարծում ենք, այդ տիտղոսները Սկայորդին և իր որդիները ստացել են, քանի որ կարողացել են ստեղծել մեծ բարեկամություն վերին Տիգրիսի ավազանի խուրիական երկրների հետ:

Հայոց առաջնորդ Սկայորդին, դաշնակցելով դրանց հետ, կարողացավ դադարեցնել խուրի ռազմիկների հոսքը Ուրարտու, որի պատճառով էլ վերջինս խիստ թուլացավ: Դրա շնորհիվ Սկայորդին կարողացավ, ոտքի հանելով լեռնաշխարհի հայությանը, ազատագրել երկրի մեծ մասը Վանի թագավորությունից:

Ամփոփելով վերը շարադրված փաստերը՝ մենք գալիս ենք այն հետևության, որ Ուրարտուի մ.թ.ա. 859թ. պատմական ասպարեզ մտնելը և մ.թ.ա. 810 թվականից սկսած հզորանալը մեծ մասամբ պայմանավորված է եղել խուրի ռազմիկների ներհոսքով Վանի նահանգ, որոնք, կարելի է ասել, էժան ռազմական ուժ են դարձել Բիայնիլի պետության համար: Իսկ մ.թ.ա. 680թ. սկսած այդ թագավորության անկումը և ապա մ.թ.ա. 591թ. կործանվելը, կարծում ենք, նույնպես կապ ունի խուրի երկրների թարմ ուժերի դեպի Ուրարտու հոսքը դադարեցնելու հետ:

VALERY KHACHATRYAN

THE FORMATION, GROWTH AND DOWNFALL OF THE URARTIAN STATE

The Heartland of the Urartian State – Van Lake basin probably had a population of about a hundred thousand people. From the formation of the Urartian State a mass

of Hurrian population under the pressure of the Assyrian Empire migrated and found safc haven within the borders of the Urartian State. Many of them were called up for military service and took place in the campaigns of the Urartian Kings, thus, having sufficient contribution in the success of the Kingdom. From the beginning of the first quarter of the seventh century the migration of the Hurrian potential military force to Urartu for some reasons came to an end. This factor had a fatal role among the reasons of the downfall of the Kingdom.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վ.Ն. Խաչատրյան, Հայաստանը մ.թ.ա. 15-7-րդ դդ, Երևան, 1998, էջ 118-121:
2. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, ժդ:
3. Նույն տեղը:
4. Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей (= КУКН), Ереван, 2001, 241G.
5. И.М. Дьяконов, Некоторые данные о социальном устройстве Урарту, "Сборник памяти акад. А.И. Тюменева", М.-Л., 1963, с. 55-65.
6. Նույն տեղը:
7. Նույն տեղը:
8. Н.В. Арутюнян, КУКН, с. 413, 451.
9. R. Labat, Manuel d'epigraphie akkadienne, Paris, 1952, p. 157.
10. И.М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (=АВИИУ), "Вестник древней истории", Москва, 1951, № 2. Н.В. Арутюнян, "Биайнили", Ереван, 1970, с. 12.
11. Գ.Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1944, էջ 12:
12. Н.В. Арутюнян, КУКН, 241F, 28.
13. Н.В. Арутюнян, КУКН, 241A, 12.
14. G.F. Del Monte, J. Tischler, Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978, S. 79-80.
15. Н.В. Арутюнян, КУКН, 173, III, 49.
16. Н.В. Арутюнян, КУКН, 173, IV, 1-60.
17. Н.В. Арутюнян, КУКН, 173, V, 29-31.
18. Н.В. Арутюнян, Биайнили, 279-310.
19. Н.В. Арутюнян, նույն տեղում.
20. Վ.Ն. Խաչատրյան, Հայաստանը մ.թ.ա. XV-VIIդդ., էջ 133-137.
21. Մովսես Խորենացի, Հայոց պատմությունը, I, իգ:
22. И.М. Дьяконов, АВИИУ, № 65.

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների իշխանական տոհմի, նրա Ղարաբաղյան ճյուղի ու առանձին ներկայացուցիչների պատմությանը վերաբերող առատ տեղեկություններ են պահպանվել զանազան սկզբնաղբյուրներում. վիմագրական արձանագրություններում, փաստավավերագրական այլ նյութերում (պարսկալեզու հրովարտակներ, կալվածագրեր, ինչպես նաև ռուսական տիրապետության շրջանի դատական գործեր) ու ժողովրդական բանահյուսության մեջ, որոնք դարձել են տարբեր ժամանակների պատմաբանների ուսումնասիրության առարկան: Դեռևս XIX դարի հայ ուսումնասիրողները գրել են այդ իշխանական տան պատմությանը նվիրված ուսումասիրություններ[1]:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի «Մելիք-Շահնազարյանների» ֆոնդում են պահվում Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյաններին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր՝ կցված Միր-Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի և այդ տոհմի XIX դարի այլ ներկայացուցիչների խնդիրների կապակցությամբ հարուցված դատական գործերին[2]: Այդ փաստաթղթերը պարունակում են հիշյալ տոհմի պատմությանը վերաբերող արժեքավոր տվյալներ, որոնցից ժամանակին օգտվել է Մ. Սմբատյանցը ու թարգմանաբար ներկայացրել իր «Նկարագիր ծովազարդ գաւառին Գեղարքունու» երկում: Մելիք-Շահնազարյանների ֆոնդում պահվող գործ № 1-ը հարուցվել էր Արևելյան Հայաստանի Ռուսաստանի կայսրության կազմի մեջ մտնելու սկզբնական շրջանում՝ Միր Դավիթ Մելիք-Շահնազարյանի կալվածատիրական իրավունքների վերականգնման հարցի կապակցությամբ: Գործ № 1-ին կցված են 29 պարսկալեզու փաստաթղթեր՝ իրենց ռուսերեն թարգմանություններով: Այդ փաստաթղթերի մեծ մասը բնագրերի պատճեններն են կազմված XIX դարի 20-ականներին և հաստատված միևնույն (3 արաբատառ և 1 հայատառ) նոտարական կնիքներով, սակայն կան նաև 8 բնագրեր:

Այդ գործում ընդգրկված փաստաթղթերում նշվում է, որ Միր Դավիթ-խանը Շափուրի որդի Մելիք Շահնազարի ժառանգներից է[3]: Այս Մելիք Շահնազարին է վերաբերում գործում ընդգրկված ժամանակագ-

րական կարգով վերջին փաստաթուղթը[4]: Այն իրենից ներկայացնում է Երևանի շարիաթի 1121 հ. թ. մուհարրամ ամսի (1708թ. հոկտեմբերի 16 - նոյեմբերի 14) արձանագրությունը, ըստ որի, հակառակ Մեհդի Ղուլի Բեկ Ջաբրայիլլուի հավակնություններին, 18 հեղինակավոր անձանց վկայությունների ու փաստաթղթերի հիման վրա հաստատվում է Ղարանլուղղարա գյուղի[5] պատկանելությունը Մելիք Բեկի ու Մելիք Շահնազարի տոհմին և որ այն ժառանգաբար փոխանցվել է Մելիք Շափուրի որդի Մելիք Շահնազարին և նրա ազգական Միրզաջանին, որը Սպահանում է գտնվում՝ հանդիսանալով շահի պալատականը:

Իր տոհմաբանության վերաբերյալ Միր Դավիթ Մելիք-Շահնազարյանը նշում է, որ Շափուրի որդի Մելիք Շահնազարի ժառանգներից (կամ որդիներից) Միրզաջան Բեկի թոռն էր և Ծատուրի որդին[6]: Դավիթ Մելիք-Շահնազարյանի վերաբերյալ ոչ չ կենսագրական տվյալներ է հաղորդում Գ. Շերմազանյանը, որն անձամբ ծանոթ էր նրան[7]: Նրա մանկության ու պատանեկության շրջանի մասին տվյալները փոքր-ինչ անորոշ են: Ըստ Շերմազանյանի՝ Դավիթ Մելիք-Շահնազարյանի հայրը սպանվել էր Գեղաքքունիքի Մազրա գյուղում, և նրա մայրը հղի վիճակում գերվել ու տարվել էր Իրան, որտեղ Նոր Ջուղայի մեծահարուստ հայերը իմանալով, որ նա Գեղամա մելիքական տան հարսն է, գնում են նրան: Սպահանում ծնվում է Դավիթը, որը լավ կրթություն է ստանում և այնուհետև ինչ-ինչ պատճառներով հայտնվում է Ֆրանսիայում: Այստեղ նա ծանոթանում է Հակոբ Շահան-Ջրպետյանի հետ, որի կողմից էլ նա որպես հայերեն, պարսկերեն ու ֆրանսերեն լեզուներին տիրապետող անձնավորություն ներկայացվում է Նապոլեոնին՝ նրա ու Ֆաթհալի շահի միջև նամակագրական կապ հաստատելու համար: Ըստ Շերմազանյանի, Դավթի միջոցով նամակներ են փոխանակվել Նապոլեոնի ու Ֆաթհալի շահի միջև[8]: Այս առիթով մի քանի անգամ Դավիթ Մելիք-Շահնազարյանը Ֆրանսիայից գնում է Իրան ու ետ վերադառնում: 1811թ. Իրանից Փարիզ գնալու ճանապարհին Դավիթը հանդիպում է Ներսես Աշտարակեցուն: 1816թ. Փարիզից Ներսես արքեպիսկոպոսին Շահան-Ջրպետյանի կողմից ձվված մի նամակում նշվում է, որ պարսկական դեսպան Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի միջոցով ստացել է նրա նամակը: Ֆրանսիայում գտնվելու տարիներին նա գրում է մի ակնարկ Իրանի տվյալ ժամանակաշրջանի դրության մասին[9]:

Այնուհետև Դավիթ Մելիք-Շահնազարյանը վերադառնում է Պարսկաստան, որտեղ պետական ծառայության է անցնում՝ ստանալով գլխավոր թարգմանչի պաշտոն և խանի տիտղոս[10]:

1824թ. թագաժառանգ Աբաս Միրզայի և երկու տարի անց նաև Ֆաթհալի շահի հրամանագրերով Գեղաքքունիքի գյուղերի նկատմամբ կալվածատիրական իրավունքը հանձնվում է Դավիթ Մելիք-Շահնազարյանին[11]: Հետաքրքիր է, որ այս հրամանագրերը տրված են հենց այն

ժամանակաշրջանում, երբ Գեղարքունիքի ու Սաղաբաքի կապակցությամբ տարածքային վեճեր էին ընթանում Իրանի և Ղարաբաղում ու Վրաստանում հաստատված ռուսական իշխանությունների միջև[12]: Գեղարքունիքը գտնվում էր ռուսական գերիշխանության տակ և այս կերպ հավանաբար Իրանի թագաժառանգը ցանկանում էր իր դիրքերը հաստատել վիճելի տարածքում, քանի որ Դավիթ Խանը նրա արքունի պաշտոնյաներից ու հավատարիմ անձանցից էր: Բնականաբար, նման պայմաններում Դավիթ Մելիք-Շահնազարյանի հավակնությունները չպետք է խրախուսվեին ռուսական կառավարության կողմից: Այս պատճառով Դավիր Մելիք-Շահնազարյանի կողմից այս խնդրի շուրջ Անդրկովկասի ռուսական կառավարչապետ Երմոլովին ուղղված նամակը, անհետևանք է մնում[13]: Դավիթ խանը նշում է, որ իր կալվածքների կապակցությամբ նա Երմոլովին էր դիմել Ներսես արքեպիսկոպոսի միջնորդությամբ, որի հետ նա որոշ հարաբերություններ է ունեցել նաև Էջմիածնի պարտքերի հարցով: Պահպանվել են 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի շրջանի մի շարք փաստաթղթեր, որոնք վկայում են Եփրեմ կաթողիկոսի օրոք Էջմիածնի պարտքերի զեղչման նպատակով, հայ բարձրաստիճան հոգևորականների ու պարսից իշխանությունների միջև վարվող բանակցություններում Դավիթ Մելիք-Շահնազարյանի որպես միջնորդ հանդես գալու մասին[14]: Կա անգամ շար'ի[15] դատարանի նիստի մի արձանագրություն այն մասին, որ Դավիթ Խան Մելիք-Շահնազարյանը Էջմիածնի Եփրեմ կաթողիկոսի անունից ու Ներսես արքեպիսկոպոսի հանձնարարականով պաշտպանում է վանքի շահերը նրա պարտատերերից մեկի՝ ոմն Հաջի Բաղերի դեմ, քանի որ վերջինս իր պարտքի դիմաց ավելի գումար էր գանձել[16]:

Նախքան ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ավարտը (1828թ.) Դավիթ խանը աշխատել է նաև Բաղդադում գտնվող Ֆրանսիական հյուպատոսարանում[17], որպես իրանական խնդիրներով զբաղվող հանձնակատար, իսկ 1828թ. գաղթում է Արևելյան Հայաստան:

Գործ 1-ին կցված բնագրերից առաջինը[18] Միր Դավիթ Մելիք-Շահնազարյան Շափուրյանի կողմից 1828թ. մարտի 6-ին Թավրիզում գրված խնդրագիրն է գեներալ-ֆելդմարշալ կոմս Ի. Ֆ. Պասկևիչին, որով խնդրում է թույլ տալ անցնել Ռուսաստանի տարածքները և, ընդունելով ռուսական հպատակություն, ստանալ Գեղարքունիքում գտնվող իր տոհմական կալվածքները, որոնք ձգվում են առևելքում Թուխլիջե գյուղից[19] մինչև Մազրա[20], և այնտեղից մինչև Ղոթ[21], ներառյալ Մեծ Ենգիջա[22], Ամրսաղ[23], Սիուսբաղ[24], Մսզար[25], Գյուրջի Վերան[26], Այթուն Թախթ[27], Փոքր Ենգիջա[28], Փոքր Արաք[29], Ղարանլուղդարա գյուղերը, որոնք Ֆաթհալի շահի ու նրա թագաժառանգ Աբաս Միրզայի հրամանագրերով իրեն էին հանձնվել:

Այնուհետև հաջորդում են Մելիք-Շահնազարյանների տոհմին վերաբերյալ շահական հրամանագրերի ու կալվածագրերի պատճենները, որոնցից մի քանիսը, ինչպես վերը նշեցինք, թարգմանվել ու հրատարակվել են Մ. Սմբատյանցի գրքում:

Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի կալվածատիրական իրավունքների պաշտպանության օգտին է հանդես գալիս Երևանի կառավարիչ Մուհամմադ Հուսեյն խան սարդարը, որը իր պարսկամետ քաղաքականությամբ փորձում էր պաշտպանվել ռուսական վտանգից: Պահպանված վավերագրերից մեկի համաձայն Երևանի Մուհամմադ Հուսեյն խանը Դավիթ խան Մելիք-Շահնազարյանին ուղղված իր նամակում նշում է, որ նրա խնդրագիրը և թագաժառանգի հրամանագրի պատճեն ստացվել են և Ռուսաստանի Գլխավոր հրամանատարը ևս թույլատրել է որպեսզի վերջինս զարնանը գնա իր ժառանգական տիրույթների տերը դառնա, ուստի նա ևս հավանություն է տալիս նրա գալստյանը[30]: Այս ուղղությամբ նա անգամ որոշ քայլեր է ձեռնարկում. նրա կողմից 1241 հ. թ. ռաբի' առաջին ամսին (1825թ. հոկտեմբերի 14 – նոյեմբերի 13) Մելիք Բարսեղի անունով հրապարակվում է մի հրամանագիր, որով նրան հանձնարարվում է գնալ կառավարել Գյոքչայի մահալը[31] և Դավիթ Խանի կալվածքներից գանձել մալիքանեն[32]: Նույն ֆոնդի գործ 1-ում կա նաև Երևանի Մուհամմադ Հուսեյն խան Սարդարի գրությունը Դավիթ խան Մելիք-Շահնազարյանին, որում սարդարը վերջինիս տեղեկացնում է, որ շուրջ 300-400 բնակիչ է գաղթեցրել Թուրքիայի տարածքներից նրա կալվածքներում բնակեցնելու և դրանք շենացնելու նպատակով[33]: Այս ամենը ընդհատվում է 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի պատճառով: Այնուհետև Երևանի խանությունը միացվում է Ռուսական կայսրությանը, որից հետո, չնայած իր կողմից Ռուսաստանի հպատակություն ընդունելուն, երկարատև համառ պայքարին ու դատական քաշքշուկներին, Դավիթ Մելիք-Շահնազարյանին չի հաջողվում տեր դառնալ իր պապենական կալվածքներին:

Գ. Շերմազանյանը հետևյալն է հաղորդում նրա հետագա ճակատագրի մասին. «1830-1831թթ. երբ ես Երևան էի, յաճախ կը տեսնուէի Դաւիթ խանի հետ: Համարեա թէ ամենայն օր նա կը յաճախէր իւր վէճի յամար դատարանները, մանաւանդ դաւաւորների և նահանգապետի մօտ»[34]: Որևէ եկամուտի աղբյուր ու աշխատանք չունենալով Դավիթ Մելիք-Շահնազարյանը հետզհետե վաճառում է իր մոտ եղած բոլոր քիչ թե շատ արժեքավոր իրերը (նաև շահի պարգևած «առյուծի և արևի» շքանշանը), ընկնում պարտքերի տակ: Ի վերջո Երևանի նահանգապետ Բ. Բեհբութովը, որը «թերևս համոզուած էր, որ Ռուսաց այնտեղի կառավարութիւնը դատարկ թղթակցութիւններով է զբաղեցնում Դաւթի միտքը, խորհուրդ է տալիս որ մէկ աղերսագիր գրէ Կայսեր անունով և նրա մէջն ասէ, թէ իմ հայրենական կալուածներն ընծայեցի Ռուսաց կայսերու-

թեան, հետևաբար աղերսէ, որ Տէրութիւնը նրան զոնէ մէկ գումար նշանակէ, որով նա կարողանայ ապրիլ»[35]: Ինչպես հայտնի է դառնում վերը նշված գործ 1-ին կցված ռուսական պաշտոնյաների զեկուցագրերի բովանդակությունից, Դավիթ խանը իրոք խնդրագիր է հղում Ռուսաց կայսերը և նրա գանձարանին նվիրում իր կալվածքները: Դրա դիմաց կայսրը նրան տարեկան թոշակ է նշանակում 1000 ոսկե դրամ (червонец), որը սակայն չստացած, Դավիթ խանը մահանում է 1831 թ. փետրվարին[36]. Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի մահից հետո տարեկան 60 ոսկե դրամ (червонец) է նշանակվում նրա ազգականներ Խաչատուր, Մելիք Բարսեղ և Ստեփան Շահնազարովներին:

Մատենադարանի վերոհիշյալ ֆոնդի գործ 1-ի վերջին վավերագրերը[37], ինչպես նաև գործ 2-ի և 3-ի փաստաթղթերը վերաբերում են Դավիթ խանի հեռավոր ու մոտ ազգականների ազգակցական կապը նրա հետ և պատկանելությունը Մելիք-Շահնազարյանների տոհմին հաստատելուն, ինչպես նաև նրանց Ռուսաստանի կայսրության պետական գանձարանից ստացվող թոշակի հետ կապված զանազան խնդիրներին:

Սույն հոդվածի շրջանակներում ստորև ներկայացված են Մելիք-Շահնազարյանների ֆոնդի գործ 1-ին կցված պարսկերեն վավերագրերի ճշտված ցուցակը և բնագրային փաստաթղթերից երկուսի թարգմանական տարբերակները:

Ներկայացվող վավերագրերի տվյալների և այլ աղբյուրների հաղորդումների համեմատությունը թույլ են տալիս հետևյալ ճշգրտումները կատարել Գեղարքունիքի Մելիք-Շահնազաբյանների տոհմի պատմության մեջ:

Դեռևս 1538թ. շահ Թահմասպ Ա-ի հրամանագրով հաստատվում է Գեղարքունիքի Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Սիրաբաղ, Գյուրջի Վերան և Ամրսաղ գյուղերի մուլքերի[38] պատկանելությունը Մելիք Բեկին: Ինչպես հաստատում է XVII դարի հիշատակարաններից մեկը, Մելիք Բեկ էր Գեղարքունիքի Մելիք Շահնազար Ա-ի հոր անունը[39]: Այնպես որ վստահաբար կարելի է պնդել, որ շահ Թահմասպ Ա-ի հիշյալ նրամանագիբը Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությանը վերաբերող մեզ հայտնի ամենահին փաստաթուղթն է:

XVII դարի սկզբին այդ տոհմի նշանավոր ներկայացուցիչն էր Մելիք Շահնազար Ա-ն, որը Շահ Աբաս Ա-ին մատուցած հավատարիմ ծառայությունների դիմաց վերահաստատվում է Գեղարքունիքի մելիքի պաշտոնում: Պարսից շահի ռազմական ձեռնարկումներին մասնակցում են նաև Մելիք Շահնազարի որդիները, որոնցից Յավրին հաջորդում է հորը (վերջինս մահանում է 1606թ.[40]) Գեղարքունիքի մելիքի պաշտոնում, իսկ նրա մահից հետո 1610թ. մելիք է դառնում Մելիք Շահնազարի մյուս որդին՝ Քյամալը:

Մելիք Քյամալի մահից հետո[41], Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1621թ. հրամանագրով[42] հաստատվում են Գեղարքունիքի Մելիք Քյամալի որդի և Մելիք Շահնազարի թոռ Աստվածաբովի[43] (կամ կրճատ ձևը՝ Աձապովին) մելիքական իրավունքները: Աստվածաբովի, որպես Մելիք Շահնազարի թոռան մասին նշվում է 1606թ. մի հիշատակարանում[44]: Այս Աստվածաբովը (կամ Աձապով) որպես Գեղարքունիքի մելիք հիշատակվում է նաև 1652թ. Երևանի բեկլարբեկի կողմից հրապարակված փաստաթղթում[45]: Աստվածաբովին Գեղարքունիքի մելիքի պաշտոնում փոխարինում է նրա որդի Մելիք Բեկը: Ըստ ստորև ներկայացվող շահ Սուլթան Հուսեյնի հրովարտակի բովանդակության Աստվածաբովի որդի Մելիք Բեկը 1656-7թթ. հաստատվում է Գեղարքունիքի մելիքի պաշտոնում: Մելիք Բեկը որպես Գեղարքունիքի մելիք 1657թ. հիշատակվում է նաև հայոց ձեռագրերի հիշատակարաններից մեկում[46]: Ամենայն հավանականությամբ այս Մելիք Բեկին են վերաբերում Մաքենյաց վանքի Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի վերին մասում գտնվող[47], նաև հետևյալ վիմագիր արձանագրությունները.

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՊԱՐՈՆ ՄԷԼԻՔ ՄԷԼԻՔ ՊԷԿԻՆ, ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ԱՃԱՊՈՎԻՆ, ԹՈՌ ՊԱՐՈՆ ՔԱՄԱԼ ՊԷԿԻՆ, ՊԱՐՈՆ ՄԷԼԻՔ ՊԷԿ

ԹՎԻՆ: ՌՃԻԷ (1678) ԿԱՄԱՒՆ ԱՅ ՄԵՔ: Ե (5) ԵՂԲԱՐՔՍ ԵՍ՝ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՍ, ՄԱՅԻԼ ՊԷԿՍ, ՏԱԹԼՈՒ ՊԷԿՍ, ՍԻՐԶԱՅ ՊԷԿՍ, ՄԵԼՔՈՒՄ ՊԷԿՍ, ՊԷԿՄ, ՍԱՅՐ ՄԵՐ ԽԱՆՈՒՄԱՂԷՍ՝ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ՄԷԼԻՔ ՊԷԿԻՆ[48]:

Այս արձանագրության ծանոթագրության մեջ նշվում է, որ «Մյուս կողմից՝ թիկունքի արձանագրության սկզբի թվականը՝ ՌՃԻԷ: ուղղել են: ՌԻԷ: (1578), որը ճիշտ է: Ավելորդ հարյուրավորը պետք է համարել փորագրողի սխալմունք»[49]:

Մեր կարծիքով այս նկատառումը ճիշտ չէ, այլ ճիշտ է վիմագրի վերը նշված 1678 թվականը, և խոսքը Աստվածաբովին 1656թ. հաջորդած նրա որդի Մելիք Բեկի մասին է, որը ևս Մելիք Շահնազար անունով որդի է ունեցել: Իսկ Մելիք Շահնազար Ա-ի մոր անունը, հակառակ վերոհիշյալ արձանագրության, մեկ այլ տեղ նշվում է Ֆախրական[50] կամ Ֆախրաջահան[51]:

Մեզ հայտնի պարսկերեն վավերագրերում որևէ տվյալ չկա 1656-1708թթ. Գեղարքունիքի մելիքների մասին: Միայն 1708-9թթ. երկու պարսկալեզու վավերագրերով հաստատվում է Գեղարքունիքի վերը նշված գյուղերի պատկանելությունը «Մելիք Շավալի որդի Մելիք Բեկի որդի Մելիք Շահնազարին»[52]:

Շահ Սուլթան Հուսեյնի 1709թ. մայիսի 11-ից – հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածում հրապարակված հրամանագիրը հաստա-

տում է Մելիք Աստվածաբովի որդի Մելիք Բեկի թոռ Մելիք Բեկի մելիքական իրավունքները Գեղարքունիքի մահալում[53]:

Մատենադարանի Մելիք-Շահնազարյանների ֆոնդում պահվող հրովարտակներից մեկը տրված է վերոհիշյալ Մելիք Միանսարի (կամ Մեհրասարի) անունով: Այդ հրովարտակի ձախ եզրը, ներառյալ նաև թվականը, վնասված է: Սակայն հասկացվում է հետևյալը, որ Նադիր շահն այդ հրովարտակը Գեղարքունիքի մելիքին է հղել թուրքերի դեմ դեպի Արարատյան դաշտը ձեռնարկած արշավանքի ընթացքում, որը տեղի է ունեցել 1735թ.: Այդ հրովարտակով շահը պահանջում էր Գեղամա մելիքի հավատարմությունը և թուրքական կայազորների դիրքերի հետախուզման հարցում նրա լրտեսների գործնական օժանդակությունը՝ խոստանալով դրա դիմաց ականջ չդնել «մելիքի դեմ չարախոսողներին» ու կարգավորել նրա խնդիրները[54]:

1726թ. մի ռուսերեն փաստաթղթում Գեղարքունիքի ու Ղաքաբաղի մելիքների շարքում հիշատակվում է Մելիք Շահնազարի որդի Մելիք Սարգիսջանի ու Մեհրասարի անունները, որը հիմնավորում է պարսկալեզու հրովարտակի վկայությունը այն մասին, որ XVIII դարի 20-ական 30-ական թվականներին Գեղարքունիքի մելիք էր Մելիք-Շահնազարյանների ժառանգ Մելիք Միանսարը (կամ Մեհրասար)[55]: Այդ փաստաթուղթը Ջրաբերդի ու Գեղարքունիքի ավագների դիմումն է հղված Ռուսաստանի կայսերը, որով խնդրում են նրա հովանավորությունը և հայտնում նրա ներկայացուցիչ Իվան Կարապետին իրենց հնազանդության մասին:

Մատենադարանի ձեռագրերից մեկում[56] տվյալներ կան Մելիք-Շահնազարյանների տոհմի XVIII դարի կեսերի (Նադիրի ժամանակաշրջանի) այլ ներկայացուցիչների մասին: Մասնավորապես, նշվում է, որ այդ տոհմից էր սերել Երևանի նահանգի մելիք քալանթար[57] Մելիքջանը (հայր Մանուչարի): Աբրահամ Կրետացին ևս իր «Պատմության» մեջ անդրադառնալով Նադիր շահի օրոք տեղի ունեցող դեպքերին՝ բազմիցս նշում է Երևանի նահանգի քալանթար Մելիքջանի անունը[58]: Վերջինս թեև Նադիր շահին մեծ օժանդակություն է ցուցաբերում Ահմեդ փաշայի զորքերի դեմ իր արշավանքի ընթացքում, սակայն հետագայում սպանվում է Նադիրի հրամանով[59]: Այնուամենայնիվ Նադիր շահը զղջալով նրա սպանության համար՝ որպես փոխհատուցում, նրա որդի Մանուչարին է հանձնում հոր պաշտոնը և նշանակում 250 թուման տարեկան ռոճիկ. «Ետ նմա իշխանութիւն ունել ընդ ինքեան զդահիճ, զբանդ և զշղթայս և անուանեց զնա միրիմիրան կամ պէյլերպէյի ՛ի վերայ Արարատեան երկրի և մասին ու Միւնեաց: Եւ այնուհետև այնքան սիրեաց զնա, որ ՛ի գնալն իւր ի Հնդիկս տարաւ և զՄանիչար»[60]:

Սակայն շուտով այս Մանուչարը իր նկատմամբ Նադիր շահի անվստահությունը զգալով՝ փախուստի է դիմում դեպի Կարին, «ուր ընկալեալ եղեւ ի բդեշխէ տեղւոյն որ էր Հէքիմ օղլու բաշի փաշայեն»: Նա-

դիրը նրան հրովարտակով ետ է կանչում՝ ներում խոստանալով, բայց պարսից տեղի իշխանությունների կողմից նա դավաճանաբար սպանվում է[61]:

Այս փաստաթղթերը վկայում են Գեղարքունիքի մելիքական տան իշխանության շարունակականության մասին, որը չնայած ժամանակների վայրիվերումներին ու իշխանական փոփոխություններին, նրա ներկայացուցիչների քաղաքական ճկունության շնորհիվ գոյատևում է XVI-ից մինչև XVIII դարերը:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի
Մելիք-Շահնազարյանների ֆոնդի պարսկերեն վավերագրերը[62]

1. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 18, էջեր 31-45, բնագիր, մեծ. 35 x 21 սմ: Սիր Դավիթ Մելիք-Շահնազարյան-Շափուրյանի կողմից 1828թ. մարտի 6-ին Թավրիզում գրված խնդրագիրն է գեներալ-ֆելդմարշալ կոմս Ի. Ֆ. Պասկևիչին, որով խնդրում է թույլ տալ անցնել Ռուսաստանի տարածքները և ընդունելով ռուսական հպատակություն՝ ստանալ Գեղարքունիքում գտնվող իր տոհմական կալվածքները, որոնք ձգվում են արևելքում Թուխլիջե գյուղից մինչև Մազրա, և այնտեղից մինչև Ղոթ, ներառյալ Մեծ Ենգիջա, Ամրսաղ, Միրաքաղ, Մազար, Գյուրջի Վերան, Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Աքաք, Ղանղուլեղդաքա (պետք է լինի Ղարանլուղդարա) գյուղերը, որոնք Ֆաթհալի շահի ու նրա թագաժառանգ Աբաս Միրզայի հրամանագրերով իրեն էին հանձնվել, և այդ առթիվ Կովկասի նախկին նահանգապետ Ա. Երմոլովի հետ բանակցություններ են վարվել, սակայն ռուս-իրանական սահմանների անկայունության պատճառով իրեն չեն հանձնվել:
2. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 21, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ և 1 հայատառ կնիքներով, մեծ. 21 x 29.5 սմ: Սեֆյան շահ Թահմասպ Ա-ի 944 հ. թ. ռամազան ամսի (1538թ. փետրվարի 1- մարտի 3) հրամանագիրն է, որը հաստատում է Գեղարքունիքի Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Սիրաքաղ, Գյուրջի Վերան և Ամրսաղ գյուղերի մուլքային պատկանելությունը Մելիք Բեկին[63]:
3. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 23, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ և 1 հայատառ կնիքներով, մեծ. 21 x 30 սմ: Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1012 հ. թ. ջումադի առաջին ամսի (1604թ. սեպտեմբերի 25 – հոկտեմբերի 25) հրովարտակն է, որով շահը պահանջում է Մելիք Շահնազարից նվիրվածություն ցուցաբերել իրեն ծառայելու հար-

ցում, քանի որ նա գրաված լինելով Ատրպատականը և նրա կենտրոն Թավրիզը, մտադիր էր արշավանքով նվաճել Երևանն ու Նախիջևանը, որից հետո խոստանում էր հավատարմության դիմաց նրան արքայական առատաձեռնությամբ վարձատրել[64]:

4. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 25, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ կնիքներով, մեծ. 29.5 x 41 սմ: Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1019 հ. թ. ռամազան ամսի (1610թ. նոյեմբերի 17 - դեկտեմբերի 17-ը) հրովարտակն է, որով Գեղարքունիքի մելիքությունը Մելիք Յավրիի մահից հետո շնորհվում է Մելիք Քյամալին[65]:
5. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 27, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ և 1 հայատառ կնիքներով, մեծ. 43 x 30 սմ: Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1013 հ. թ. զի հեջջե ամսի (1605թ. ապրիլի 20 – մայիսի 19) հրովարտակն է, որով թշնամիների դեմ մղած պատերազմում գործած քաջագործությունների դիմաց Մելիք Քյամալին է շնորհվում Նախիջևանի թումանի մեջ մտնող Չառուգիբիլ նահանգի Ղարաաղալ գյուղից մալոջահաթ[66] ու թաֆավութ-ե ջիզյա[67] հարկերի գանձման իրավունքը և ազատում այդ գյուղը իխրաջաթ[68] ու ավարիզաթ[69] հարկերից[70]:
6. Մելիք-Շահնազաբյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 29, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ և 1 հայատառ կնիքնիյռվ, մեծ. 21 x 29 սմ: Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1014 հ. թ. ջումադի առաջին ամսի (1605թ. սեպտեմբերի 14 – հոկտեմբերի 14-ը) հրամանագիրն է, որով կարգադրվում է շահական բոլոր պաշտոնյաներին (մեծ ամիրներ, դորչիներ, խասսե-ե շարիֆեի ղպամներ և այլն) Գեղարքունիքից բերված գերիներին հանձնել Յավրի Բեկին, որովհետև այնտեղի բոլոր գերիներին ներում է շնորհվում և հրամանի կատարման պատասխանատվությունը դրվում է Սեհդի Ղուլի Բեկ Ղորչիի վրա[71]:
7. Սելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 31, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ կնիքներով, մեծ. 30 x 43 սմ: Սեֆյան շահ Սեֆի Ա-ի 1046 հ. թ. սաֆար ամսի (1636թ. հուլիսի 5 – օգոստոսի 3) հրովարտակն է, որով Սելիք Աստվածաբովը (Շափուրը) վերահաստատվում է Գեղարքունիքի մելիքի պաշտոնում[72]:
8. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 33, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված 2 արաբատառ կնիքներով, մեծ. 29.5 x 43 սմ: Երևանի շար'ի դատարանի 1120 հ. թ. շա՛րան ամսի (1708թ. հոկտեմբերի 16 – նոյեմբերի 14) արձանագրությունը, ըստ որի 18 հեղինակավոր անձանց վկայություն-

ների ու փաստաթղթերի հիման վրա հաստատվում է Ղանդուլեդդարա (պետք է լինի Ղարանլուղդարա) գյուղի և Գեղարքունիքի Դրախտիկ (Թուխլիջա) գյուղից մինչև Մազրա, և այնտեղից մինչև Աղիյաման (Ղոթ) ընկած (Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Սիրաբաղ, Գյուրջի Վերան և Ամրսաղ) գյուղերի պատկանելությունը Մելիք Բեկի ու Մելիք Շահնազարի տոհմին և ժառանգաբար փոխանցվել է Մելիք Շափուբի որդի Մելիք Բեկի որդի Մելիք Շահնազարին և նրա հորեղբորորդի Սիրզաջանին, որը Սպահանում է գտնվում՝ հանդիսանալով շահի պալատականը: Ուստի այն պետք է ետ վերցվի նրան ապօրինաբար տեր դարձած Մեևղի Խանից և 5 տարվա ապօրինի տնօրինման եկամուտների փոխհատուցմամբ[73]:

9. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 35, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված 3 արաբատառ կնիքներով, մեծ. 21 x 59 սմ: Մելիք Շահնազարի խնդրագրի հիման վրա հրապարակված Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնի 1121 հ. թ. մուհարրամ ամսին (1709թ. մարտի 13 - փետրվարի 12) հրամանագիրն է ուղղված Չուխուր Սաադի ու Ղարաբաղի բեկլարբեկերին և Երևանի շար'ի դատարանին, որ պահանջում է պարզել, թե արդյոք իրո՞ք Ղարանլուղդարա գյուղը պատկանել է Մելիք Շահնազարին և այդ խնդրին արդար լուծում տալ[74]:

10. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 37, պատճեն, առանց որևէ կնիքի, մեծ. 30.5 x 43 սմ: Շար'ի դատարանի 1240 հ. թ. ռամազան ամսի (1825թ. ապրիլի 19 - մայիսի 19) արձանագրությամբ հաստատվում է Գեղարքունիքի Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Սիրաբաղ, Գյուրջի Վերան և Ամրսաղ գյուղերի պատկանելությունը Սիրզաջանի թոռ և Ծատուրի որդի Դավիթ խանի տոհմին և Աբաս Սիրզայի հրամանագրով նրան հանձնված լինելը[75]:

11. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 39, պատճեն, հաստատված հայատառ կնիքով, մեծ. 20.5 x 30.5 սմ: Երևանի Հուսեյն խան Սարդարի գրությունն է Դավիթ Մելիք-Շահնազարյանին, որով սարդարը վերջինիս տեղեկացնում է, որ ստանալով նրա խնդրագիրը, դիմել է գեներալ Երմոլովին որպեսզի վերջինս թույլատրի նրա ազգականների 7- 8 ընտանիքներին գնալ, հաստատվել Գեղարքունիքի իրենց նախնիներին պատկանող բնակավայրերում և խոստանում է 300-400 բնակիչ Թուրքիայի տարածքներից գաղթեցնել նրա կալվածքներում բնակեցնելու և դրանք շենացնելու նպատակով[76]:

12. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 41, պատճեն, ստանց որևէ կնիքի, մեծ. 20 x 30սմ: Ֆաթհալի շահ Ղաջարի թագաժառանգ Աբաս Սիրզայի 1240 հ. թ. ջումադի առաջին ամսի

(1824թ. դեկտեմբերի 22 – 1825թ. փետրվարի 21) հրամանագիրն է՝ ուղղված Գեղարքունիքի գեղջավագներին ու մեծատուններին, որով նրանց կարգադրում է հնազանդվել ու ծառայել Դավիթ Խան Մելիք-Շահնազարյանին, որի ժառանգական իրավունքները վերականգնվել են ու նրան է հանձնվել Գեղարքունիքի մելիքությունը[77]:

13. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 43, պատճեն, հաստատված հայատառ կնիքով, մեծ. 41 x 30 սմ: Ֆաթհալի շահ Ղաջարի թագաժառանգ Աբաս Միրզայի 1239 h. թ. ջումադի առաջին ամսի (1824թ. հունվարի 3 - փետրվարի 2) հրամանագիրն է, որով ելնելով այն հանգամանքից, որ Գեղարքունիքի մահալի կառավարումը շահական հրամանագրերով հանձնված է եղել Շավալրի որդի Մելիք Շահնազարին, իսկ Դավիթ խանը նրա ժառանգն է, նրան են հանձնվում նրա պապենական կալվածքները, որոնք են Մեծ Ենգիջա, Ամիրսաղ, Միրաբաղ, Գյուրջիվերան, Ալթունթախտ, Փոքր Աբաք, Փոքր Ենգիջա, Ղանդուլիղդարա (պետք է լինի Ղարանլուղդարա) գյուղերը: Այդ գյուղերի ռայաթներից յուրաքանչյուրը պետական հարկը, որ պետք է վճարվի շահի սարքարին, նշանակվում 1 բաջաղլու (հոլանդական ոսկեդրամ), որից ազատվում են այդ վայրերը նոր գաղթածները[78]:

14. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 44, պատճեն, հաստատված հայատառ կնիքով, մեծ. 33 x 42.5 սմ: Ֆաթհալի շահ Ղաջարի 1241 h. թ. ռաջաբ ամսի (1826թ. փետրվարի 9 – մարտի 11) հրամանագիրն է, որով հիմնվելով այդ առթիվ թագաժառանգ Աբաս Միրզայի կարգադրությունների վրա վերականգնվում են Դավիթ Խանի ժառանգական իրավունքները Զառուզիբիլ գավառի Ղարասաղալ գյուղի և Գեղարքունիքի Թուխլիջա (Դրախտիկ) գյուղից մինչև Ղոթ (Ադիյաման) գյուղն ընկած կալվածքների նկատմամբ[79]:

15. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 47, պատճեն, առանց որևէ կնիքի 21.5 x 33 սմ: Չուխուր Սաադի բեկլարբեկ[80] Մուհամմադ Ղուլի խանին ուղղված Երևանի շար'ի դատարանի հանձնակատարի 1062 h. թ. ռաջաբ ամսի (1652թ. հունիսի 8 – հուլիսի 8) զեկուցագիրը, որը 10 հեղինակավոր անձանց վկայության հիման վրա հաստատում է Ղարանլուղ-դարա գյուղի պատկանելությունը Մելիք Քյամալի որդի Մելիք Ասաբովին (Աստվածաբով)[81]: Գործին կցված վավերագիր 125-ի պատճենն է:

16. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 51, պատճեն, հաստատված արաբատառ կնիքով, մեծ. 30.5 x 42 սմ: Թավրիզի բեկլարբեկ Ֆաթհալի խանի 1239 h. թ. ջումադի առաջին ամսի (1824թ. հունվարի 3 - փետրվարի 2) հրամանագիրն է, որով, հիմնվելով շահական հրովարտակների ու շար'ի արձանագրությունների վրա, հաստատվում են Գեղարքունիքի Մեծ Ենգիջա, Ամիրսաղ, Մի-

րաբաղ, Գյուրջիվերան, Ալթունթախտ, Փոքր Արաք, Փոքր Ենգիջա, Ղարանլուղդարա գյուղերի պատկանելությունը Աստվածաբովի որդի Մելիք Շահնազարի ժառանգ Դավիթ խանին[82]:

17. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 51, պատճեն, մեծ. 29.5 x 42 սմ: Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնի 1120 հ. թ. ռաբի՛ առաջին ամսի (1708թ. մայիսի 21 – հունիսի 20) հրամանագիրը, որով Գեղարքունիքի մելիք Մելիք Քյամալի ժառանգներից Մելիք Բեկի թոռ Մելիք Բեկը հաստատվում է Գեղարքունիքի մելիքի պաշտոնում: Գործին կցված վավերագիր 127-ի պատճենն է:
18. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 56, պատճեն, մեծ. 16.5 x 21.5 սմ, գիր՝ շիքասթե - նասթաալիղ: Հայկական Մարզի դատական ատյանին ուղղված Միրզա Իսմայիլի 1244 հ. թ. ջումադի երկրորդ ամսի (1828թ. դեկտեմբերի 9 – 1829թ. հունվարի 7) զեկուցագիրն այն մասին, որ Երևանի Հուսեյն խան Սարդարը 1241 հ. թ. ռաբի՛ առաջին ամսին (1825թ. լոկտեմբերի 14 – նոյեմբերի 13) Դավիթ Խան Մելիք-Շահնազարյանի խնդրանքով Գեղարքունիքի մահալի մուլքերի տնօրինումը հանձնել էր նրա ազգական Բարսեղին, որպեսզի նա հավաքի այնտեղի մալիքանե[83] հարկը և տրամադրել էր 25 զութան:
19. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 58, բնագիր, մեծ. 21 x 32.5 սմ, գիր՝ շիքասթե - նասթաալիղ: Երևանի խան Մուհամմադ Հուսեյն Խան սարդարի 1241 հ. թ. ռաբի՛ առաջին ամսի (1825թ. հոկտեմբերի 14 – նոյեմբերի 13) հրամանագիրն է՝ ուղղված Մելիք Բարսեղին, որով նրա հանձնարարվում է գնալ, կառավարել Գեղարքունիքի մահալը և Դավիթ Խանի կալվածքներից գանձել մալիքանեն:
20. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 59, բնագիր, շիքասթե - նասթաալիղ: 6 անձանց արաբատառ կնիքներով հաստատված երդմնագիր ճշմարտությունն ասելու վերաբերյալ:
21. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 60, բնագիր, շիքասթե: 7 անձանց արաբատառ կնիքներով ու մատնադրոշմներով հաստատված երդմնագիր ճշմարտությունն ասելու վերաբերյալ:
22. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 61, պատճեն, էջեր 91/133-93/138, բնագիր, շիքասթե - նասթաալիղ: 10-ից ավելի հեղինակավոր անձիք վկայություն են տալիս Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի կողմից Մելիք Բարսեղի՝ նրա կալվածքների ժամանակավոր կառավարիչ նշանակված լինելու և այդ պաշտոնում նրա ձեռնարկած գործողությունների մասին:
23. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 101, էջ 178/225, բնագիր, շիքասթե - նասթաալիղ: Վկայագիր հաստատված 10 հոգու կողմից 1248 հ. թ. ջումադի առաջին ամսին (1832թ. սեպտեմ-

բերի 26 – հոկտեմբերի 26), ըստ որի Մելիք Լալամ Մելիք Շահնազարովը, որ հայտնի է Հաջի Յուսեֆ անունով, և փոքր հասակում որպես գերի Իրան է տարված եղել, իսկ այժմ Թիֆլիսում է բնակվում, Մելիք-Շահնազարյանների տոհմից է և հանգուցյալ Դավիթ խանի ազգականը:

24. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 123, բնագիր, մեծ. 17 x 31 սմ, գիր՝ շիքասթե - նասթալիղ: Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1013 հ. թ. ջումադի երկրորդ ամսի (1604թ. հոկտեմբերի 25 – նոյեմբերի 23) հրովարտակն է, որ հաստատում է Երևանի նահանգի Խոնջաքլու մահալի Վարսիլ գյուղում գտնվող 2 քարով ջրաղացի պատկանելությունը Բաբա քյադխուդայի ժառանգներին[84] ու քրիստոնյա Ասատուրին, ուստի արգելում է ամեն տեսակի ոտնձգությունները այդ կալվածքի նկատմամբ՝ հանձնարարելով Ամիր Գունե խանին այդ հարցում նրան օրինական օգնություն ցուցաբերել:

25. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 124, բնագիր՝ կիսաքայքայված որի թվականը չի նշմարվում, մեծ. 20 x 32սմ, գիր՝ շիքասթե - նասթալիղ: Նադիր շահի հրամանագիրն է հասցեագրված Գյոքչայի մելիք Մելիք Միանսարին, որով շահը պահանջում է: Գեղամա մելիքի հավատարմությունը և թուրքական կայազորների դիրքերի հետախուզման հարցում նրա լրտեսների գործնական օժանդակությունը՝ խոստանալով դրա դիմաց ականջ չդնել «մելիքի դեմ չարախոսողներին» ու կարգավորել նրա խնդիրները:

26. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 125, բնագիր, մեծ. 20 x 29.5 սմ, գիր՝ շիքասթե - նասթալիղ: Չուխուր Սաադի բեկլարբեկ Մուհամմադ Ղուլի խանին ուղղված Երևանի շար'ի դատարանի հանձնակատարի 1062 հ. թ. ռաջաբ ամսի (1652թ. հունիսի 8 – հուլիսի 8) զեկուցագիրը, որը 10 հեղինակավոր անձանց վկայության հիման վրա հաստատում է Ղարանլուղ-դարա գյուղի պատկանելությունը Մելիք Քյամալի որդի Մելիք Ասաբովին (Աստվածաբով):

27. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 126, բնագիր, մեծ. 23 x 57 սմ, գիր՝ նասթալիղ: Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1030 հ. թ. ջումադի առաջին ամսի (1621թ. մարտի 24 – հունիսի 23) հրովարտակն է, որը Մելիք Քյամալից հետո Գեղարքունիքի մելիքի պաշտոնում հաստատում է նրա ժառանգ Մելիք Աստվածաբովին:

28. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 127, բնագիր, մեծ. 29 x 66սմ, գիր՝ նասթալիղ: Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնի կողմից 1121 հ.թ. ռաբի' առաջին ամսին (1709թ. մայիսի 11 – հունիսի 10) հրապարակված հրովարտակը, որով Գյոքչա մահալի մելիքությունը հանձնվում է Մելիք Քյամալի ժառանգներից Մելիք Բեկի թոռ Մելիք Բեկին:

29. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 136, պատճեն: Ծատուրի որդի Հարություն և Ալլահերդիի որդիներ Միանսարի ու Եղիայի 1823թ. երդմնագիրը, ըստ որի նրանք Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի ազգականներն են և հետևաբար նրա ժառանգները:

Թարգմանություն
Մատենադարան, Մելիք Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 126, բնագիր, մեծ. 23.5 x 57.5, գիր՝ շիքասթե-նասթաալիղ

Շահ Աբաս Ա-ի կնիքը. «Սրբության շահի ծառա Աբաս 999, թող Ալլահն օրհնի Նաբիին, Վասիին, Բաթուլին, Մաջջաղի երկու թոռներին, Բաղերի, Սադեղին, Քազեմին, Ռեզային, Թաղիին, Նաղիին, Ասքյարիին և Մեհդիին»[85]

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.

Հայր Էլիասը 1682 թվականից Սպահանի կուսանոցի վանահայրն էր, իսկ 1687 թվականից՝ գավառական երեցը (ծխական քահանա): Շահ Սուլեյմանի կառավարման այս շրջանում Կարմելյանները պարտական են հայր Էլիասին՝ շահի արքունիքում հաստատվելու իրավունք ստանալու համար: Հայր Էլիասը ջանք ու եռանդ չխնայեց ձեռք բերելու համար այդ հրովարտակը, որով Ջուղայի Տունը վերաբացելու թույլտվություն ստացավ, իսկ Ջուղայի Տան քահանա Վասիլի մահվանից հետո հայր Էլիասը հրաժարվեց վանահոր իր պաշտոնից՝ գերադասելով հաստատվել գլխավորապես Ջուղայում[22]:

Հայր Էլիասը ծնվել է 1643թ. հունվարի 28-ին, Մոնսում (Բելգիա): 1660 թվականից Լուվենի համալսարանում չորս տարի ուսանել է մաթեմատիկա և բժշկություն: 1675թ. Հռոմում Սուրբ Պանկրատիոյի Կարմելյան, իսկ մեկ տարի անց՝ ընդգրկվում է իրանական առաքելության մեջ[23]:

Կարմելյան հայր Եղիայի գործունեությունը համընկել է Հռոմի և Ֆրանսիայի խոշորագույն քարոզիչ Ռաֆայել դյու Մանի գործունեության հետ: Անշուշտ, պետք է հիմք ընդունել այն իրողությունը, որ Եղիան Հռոմի այն հազվագյուտ քրոզիչներից էր, որին իսկապես Ռաֆայել դյու Մանը դրականորեն էր վերաբերվում : Ավելին, վերջինս 1693թ. հոկտեմբերի 2-ին, իր մահից առաջ Հռոմ հղած բնութագրում այսպես է ներկայացնում հայր Ե-

դիային. «Իբրև ականատես պիտի ասեմ, որ այն ժամանակվանից, երբ հայր Եղիան, երջանկությամբ միացավ հայկական միսիաներին (խոսքը վերաբերում է հայության շրջանում քարոզչությանը – Թ.Մ.), նրա հոտի բոլոր հոգևորականները նրան ենթարկվում և աշխուժորեն աշխատում են առաքելության համար, օգնում են իրենց հնարավորության սահմաններում բոլոր մյուս առաքելություններին, և շատ երկար կլիներ թվել այն բարեգործությունները ու ծառայությունները, որ հայր Եղիայի դարձի բերած հայերը մատուցել են ժամանակակից գործերին: Ահա թե ինչու բոլոր քարոզիչները, լինեն հիսուսյան, դոմինիկյան, վեղարավոր միսիաների ֆրանսիացի քահանաներ, պետք է շատ երախտապարտ լինեն հայր Եղիային և ողջունեն նրան շնորհաշատ անկեղծությամբ: Այս ամենը մենք վկայում ենք ականատեսի անաչառությամբ»[24]:

Սպահանում նկատելիորեն աճում է Կարմելյանների թիվը: Ինչպես նշում է անանուն հեղինակը, որը, հավանաբար, միաբանության անդամ է եղել, նախկինում երբեք այդքան կաթոլիկ չէր հաստատվել Սպահանում կամ Իրանի որևիցե վայրում: Նույնիսկ նշվում է Ջուղայի մերձակա շրջաններից հավատափոխ եղած թուրք բնակիչներ: Շահն ուշի ուշով հետևում էր կրոնավորների գործունեությանը: Այսպես, երբ Ջուղայում կաթոլիկ հավատքի հետևորդների թիվը մեծացավ, պարսից շահն ստիպված էր միաբաններին տեղափոխել Սպահանի մենաստան[25]:

Կարմելյանների համար նպաստավոր եղան շահի կառավարման վերջին տասը տարիները: Երկրի քայքայման ջղաձգությունները էլ ավելի խորացան նրա հաջորդի՝ շահ Սուլթան Հուսեյնի օրոք (1694-1722թթ.):

Շահ Սուլթան Հուսեյնի գահակալության տարիներին պետության կառավարման գործն անցավ շիա հոգևորականության և պալատական ներքինիների ձեռքը: Շահը դարձավ նրանց կամակատարը: Նա հրաժարվեց կրոնական հանդուրժողության քաղաքականությունից, որ իրականացնում էին իր նախորդները և արյունոտ հալածանքներ սկսեց սուննիների դեմ՝ ախոռների վերածելով նրանց մզկիթները: Կրոնական անհանդուրժողության քաղաքականության թիրախում հայտնվեցին նաև ջուղահայերը, որոնց նկատմամբ կիրառեց բռնի հավատափոխության դաժան քաղաքականություն:

Շահ Հուսեյնը պետության բոլոր գործերը հանձնելով ներքինիներին, ինքն իր ողջ ժամանակն անց էր կացնում հարեմում, որի ծախսերը կլանում էին նրա գանձարանի միջոցների մեծ մասը: Շահ Սուլթան Հուսեյնը հարեմը համարում էր իր անձնական թագավորությունը. միակ բանը, որն արժանի էր ուշադրության[26]:

Պետրոս Մեծի դեսպան Ա. Վոլինսկին կրոնական օրենքների մոլեռանդ պաշտպան շահի մասին գրում էր. «Այստեղի գլուխը հիմա այնպիսի մեկն է, որը ոչ միայն չի իշխում իր հպատակներին, այլև ինքն իսկ հպատակ է իր հպատակներին»[27]:

Այս ժամանակահատվածի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել Լեոի դիպուկ բնորոշմամբ «...Հուսեյնի թագավորության ժամանակաշրջանը Իրանի պատմության ամենամռայլ էջերից մեկն է կազմում»[28]:

Միաժամանակ պետք է նշել, որ շահ Սուլթան Հուսեյնի օրոք Պապ Ինոկենտիոս XII-ը (1691-1700թթ.) կրկին առաջ է քաշում ուժերի միավորման մասին գաղափարը, որը սակայն գրկաբաց չի ընդունվում շահի կողմից[29]:

Հատկանշական է, որ 1703թ. ապրիլի 30-ին Սպահանի եպիսկոպոս Էլիասը մի խնդրագիր է ներկայացնում Կլեմենտ (Կղեմես) XI Պապին (1700-1721թթ)՝ միաբանության համար անչափ կարևոր մի շարք հիմնադրույթներով: Նրանում ասված էր, որ շահը բարյացկամ վերաբերմունք և աջակցություն է ցուցաբերել իրեն և իր համայնքին, ինչպես նաև՝ քրիստոնյա թագավորներին: Հայրը Էլիասը նաև ֆինանսական աջակցության խնդրանք էր ներկայացրել: Սպահանում և Ջուղայում գործող մյուս միաբանություններին աջակցելու կարիքի մասին ոչինչ չէր հիշատակվում: Առաջարկվում էր երկու եկեղեցի և մեկ դպրոց բացել Ջուղայում, ինչպես նաև՝ եպիսկոպոսական զգեստ հատկացնել իրեն: Ավելորդ չէ նշել նաև, որ Շահրիմանյանները(մեծահարուստ այս գերդաստանը հարել է կաթոլիկությանը 1646թ.), ընդառաջելով խնդրագրի հեղինակին, շուրջ 2,250 սկուդի փոխանցեցին[30]:

Ուշագրավ է, որ 1708թ. Իրանի և Ֆրանսիայի միջև կնքված պայմանագրի 27-րդ կետով Իրանում հաստատված քարոզիչներին իրենց արարողությունների, ծեսերի կատարման ազատություն էր տրվում: Նրանք պարտավորվում էին հարգել այդ երկրի հավատքը և շիականության դեմ ոտնձգություններ չիրագործել[32]: Դրանով, փաստորեն, ապահովվում էր քարոզիչների հանգիստ և անվտանգ կյանքը: Հարկ է նշել նաև, որ պայմանագրի նույն կետով գործունեության ազատություն էր տրվում Կովկասի քաղաքներում, Սպահանում, Թավրիզում և Իրանի մյուս քաղաքներում բնակվող Կարմելյան, Հիսուսյան, Դոմինիկյան, Ավգուստինյան քահանաներին[32]:

Շահի հրովարտակով Իրանում բնակվող բոլոր քարոզիչներին իրենց տների, մենաստանների, եկեղեցիների վերակառուցման թույլտվություն էր նախատեսվում: Նրանց տրվում էր իրենց գործառույթների իրականացման ազատություն, մահացածներին թաղելու հնարավորություն: Մեկ այլ հրովարտակ վերաբերում էր Իրանի կառավարիչներին, որով վերջիններս պետք է միաբանների հետ հարաբերություններում պահպանեին բարեխղճություն: Մյուս հրովարտակը վերաբերում էր Կապուչինյան հայրերին և այլն[33]:

Անդրադառնալով Կարմելյանների գործունեության անհաջողությունների պատճառներին՝ պետք է նկատի ունենալ, որ, ըստ էության,

Կարմելյան կրոնավորներն իրենց գործունեության գրեթե բոլոր ժամանակահատվածներում ունեցել են դրամական միջոցների պակաս. որն, ինչ խոսք, ուղղակիորեն, ազդել է նրանց աշխատանքների արդյունավետության վրա:

Այսպես, շահ Սուլեյմանի գահակալության տարիներին Կարմելյան միաբանության ներկայացուցիչները համեստորեն տեղեկացնում էին Պապին, որ իրենք ֆինանսական աջակցության կարիք ունեն, որպեսզի կարողանան շարունակել իրենց գործունեությունն Իրանում, որով, փաստորեն, ի վիճակի կլինեին կերակրել իրենց և, բնականաբար, չէին թողնի ձեռնարկվածը: Ավելի շատ կանոն էր, քան բացառություն այն փաստը, որ Կաբմելյանները, անհույս պատրանքների մեջ չընկնելով, ստիպված էին լինում պարտք վերցնել:

Դեռևս 1695թ. իրանական քարոզչական կայաններում կրոնավորների թիվը գնալով պակասում էր, որը պայմանավորված էր հիմնականում նրանով, որ հայրերը փոխարինողներ չէին ունենում, նրանց շարքերը չէին համալրում նորերը և այլն: Նմանօրինակ վկայություն կա հայր Ռայմոնդի՝ 1709թ. սեպտեմբերի 13-ի նամակում, որտեղ նա գրում է, թե իրենք շատ բանի կարիք ունեն, հատկապես ընկերակիցների, քանի որ շուրջ հինգ տարի վերոհիշյալ հայրն ապրում էր միայնակ և հոգ էր տանում մի մեծ Տան մասին իր այգով (նկատի ուներ մենաստանը): Փաստեր կային, որ միաբանությունը երեք տարվա ընթացքում կորցրել էր վեց - յոթ կրոնավոր[34]:

Դժվար չէ նկատել, որ Կարմելյաններն իրենց գործունեությունն իրականացնում էի գրեթե նույն մեթոդներով, այն է՝ յուրաքանչյուր շաբաթ այցելում էին քրիստոնյաների տները՝ իրենց ընտանիքներին քրիստոնեական բարեպաշտություն ուսուցանելու ակնկալիքով, մկրտում էին մեռնող անհավատ երեխաներին, կանանց, տղամարդկանց, որոնց համար մկրտությունն առողջանալու վերջին հույսն էր: Այս եղանակով մկրտվածների թիվը հասնում էր շուրջ յոթ հազարի, որոնք երկնային արքայություն էին մտնում որպես քրիստոնյաներ: Հաճախ մկրտվողները ցանկանում էին, որ իրենց ընդունած սուրբ հավատը գաղտնի մնար:

Ջուղայում քարոզչական աշխատանքն ուղեկցվում էր պատարագով, օրհներգությամբ, աղոթքներով, իսկ արարողակարգի ավարտից հետո, որպես կանոն, վտքրիկ ուսուցում էր տրվում աղքատներին, որոնք, իրենց սովորության համաձայն, հավաքվում էին եկեղեցու շուրջբոլորը: Եկեղեցուն կից դպրոցում ուսուցանում էին հայերեն, ճարտասանություն, փիլիսոփայություն, աստվածաբանություն և այլն[35]:

Հարկ ենք համարում նշել նաև, որ Սուլթան Հուսեյնի կառավարման տարիներին Ալեքսանդր Ա. Ջուղայեցին (1706-1714թթ.) համառ պայքար էր տանում կաթոլիկության դեմ[36]:

Բազմաթիվ օրինակներ վկայում են, որ հայոց կաթողիկոս Ալեքսանդրը չէր թույլատրում հայերին կաթոլիկ եկեղեցի հաճախել, ավելին, պատժում էր նրանց: Կարմելյանների Հռոմ հղած նամակները լի էին բողոքներով, թե քարոզիչները և, ընդհանրապես, կաթոլիկները հետապնդվում են հայոց կաթողիկոսի կողմից: Այս կապակցությամբ հետաքրքրական է այն հանգամանքը, որ հայոց Ալեքսանդր կաթողիկոսը, ըստ «Կարմելյան տարեգրության» անհայտ հեղինակի հաղորդած տվյալների, չէր վարանել կաշառել թուրքական և իրանական պաշտոնյաներին, որպեսզի վերջիններս վնասեին և նույնիսկ ծեծեին քարոզիչներին, որն, ի դեպ, պատահել էր Կապուչինյան հայրերի հետ Թիֆլիսում և Գանձակում և Հիսուսյան հայրերի հետ՝ Շամախիում[37]:

Համադանից Բաղդադի եպիսկոպոսը տեղեկացնում է, որ «հայերն Ալեքսանդրի աջակցությամբ» (կաթողիկոս Ա. Ջուղայեցի - Թ. Մ.) պատրաստվում են Իրանից դուրս քշել քարոզիչներին:

Նշենք, որ Կապուչինյան հայր Փիթերն իր նամակներից մեկում հիշատակում է, թե հռոմեական եկեղեցու ամենակատաղի թշնամին հայերի կաթողիկոսն է, որն արքունիքում բավականին գումար է մսխում՝ ետ մղելու համար շահի կողմից իրենց արված առավելությունները: Իսկ Կարմելյան հայր Վասիլը, որը հայերին համարում էր «իրենց հերետիկոսության մեջ համառ», առաջարկում է նամակով դիմել «բարյացկամ» և «հոգատար» շահ Սուլթան Հուսեյնին, որպեսզի վերջինս կարողանա այնպես անել, որ հայերը ենթարկվեն Պապի հոգևոր հեղինակությանը, ինչպես նաև՝ ստիպել նրանց դադարեցնել իրենց նզովքը Պապի նկատմամբ[38]: Մինչդեռ Ալեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսը հենց 1709թ. Պապին հղած իր նամակում խնդրում է սանձահարել քարոզիչներին: Սակայն Պապից իր պահանջին հակառակ թուղթ է ստանում[39]:

Ամփոփելով Կարմելյանների գործունեության արդյունքները վերոհիշյալ շահերի կառավարման տարիներին, հարկ ենք համարում շեշտել, որ, ընդհանուր առմամբ, քարոզչական գործունեությունն իր փառքի գագաթնակետին չհասավ: Պարսից շահերը, լինելով բարյացկամ Իրան ժամանած կրոնավորների նկատմամբ, միևնույն ժամանակ բավականին հետևողական էին և հեռատես: Անառարկելի է, որ քարոզիչների գործունեության անհաջողությունները պայմանավորված չէին միայն պարսից շահերի վերաբերմունքով. Կարմելյան քարոզիչներից քչերն էին, որ կարողացան քարոզչությունը հաջողությունների հասցնել (օրինակ, հայր Էլիասը):

Հարկ ենք համարում շեշտել նաև այն կարևոր հանգամանքը, որ Սեֆյան շահերն այս ժամանակահատվածում «ընդհանուր թշնամու»՝ Օսմանյան կայսրության դեմ պայքարում որդեգրել էին չեզոքության քաղաքականություն, քանի որ քաջ գիտակցում էին, որ դա ընդամենը միջոց էր եվրոպական միապետների և, մասնավորապես, Հռոմի պապերի համար իրենց նպատակներին հասնելու համար:

Այսպիսով, թեև Կարմելյան քարոզիչները ժամանակ առ ժամանակ որոշակի հաջողություններ ձեռք բերեցին իրենց քարոզչական աշխատանքում, այնուամենայնիվ, իրենց գործունեության անարդյունավետությունը սեֆյան շահեր Աբբաս Երկրորդի, Սուլեյմանի և Սուլթան Հուսեյնի կառավարման տարիներին պայմանավորված էր ոչ միայն Իրանի կառավարող շրջանների հակահարվածով, այլ նաև միաբանության ներսում թույլ տրված սխալներով ու բացթողումներով:

TEHMINE MARTOYAN

THE ACTIVITY OF THE CARMELITES IN THE YEARS OF REIGN OF SAFAVID SHAHS ABBAS II, SULAIMAN AND SULTAN HUSAIN

In the article it goes about the activity of the Carmelites in the years of reign of shahs Abbas II, Sulaiman and Sultan-Husain. During the reign of shah Abbas II things were not going well for the poor Armenian and Syrian Christians, because of a new grand wazir who was a bigoted Muhammadan and antagonistic to Christianity. Religious Piter makes circumstantial statements regarding the tyrannous rule of shah Abbas II.

It is remarkable fact, that the administrative and financial control of the missions in Iran and their endowment took over by Sacr. Congregation de Prop. Fide. This fact disturbed the Carmelites. In the reign of shah Sulaiman the turks again become militant in Europe and take Crete. So Pope Innocent XI exhortes Christian princes to ally, and sends envoys to shah Sulaiman urging him to take the opportunity and attack the turks but shah Sulaiman refused.

The contribution made by Father. Elias of S. Albert to the work of the Order, the direction in which his activities were bent from his first arrival, was radically different from that of his predecessors as vicar provincials in the previous hundred yeais. Thc letters from the members of the Order in or visiting Iran during this reign which have been preserved and afford material for the history of their work much fewer in number than in earlier times.

From the material which survives it is evident that the Discalced Carmelites missionaries during the reign of shah Sultan- Husain they were in need of a financial allowance in order to continue their missions and so that they may be ablc to feed themselves and not abandon the undertakeing.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, London, 1939, v. I, p. 356 (այսուհետև՝ "A Chronicle of the Carmelites").
2. Նույն տեղում, էջ 363:
3. Տե՛ս նույն տեղը, էջ 363-364:
4. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", p. 365.
5. "A Chronicle of the Carmelites", v. I, p. 366.

6. Տե՛ս Կարապետյան Մ. Մ., «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևիլահայերը XVII-XVIII դարեր, Պատմա-բանասիրական հանդես, Ե., 1988, N1, էջ 219:
7. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", v. I, p. 370.
8. Մեջբերումն ըստ նշվ. աշխ., h. I, էջ 371:
9. Նույն տեղում:
10. Քաղվածքը՝ նույն տեղում, h. I, էջ 372:
11. Նույն տեղում, h. I, էջ 395:
12. Տե՛ս նույն տեղը, h. I, էջ 396:
13. Иванов М. С., Очерк истории Ирана, М., 1952, стр. 77, այս մասին տե՛ս նաև՝ Всемирная история, период английского завоевания, Минск, Харвест, Москва, АСТ, 2000, том 14, стр. 124, Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-XIXвв., Л., 1949, стр. 294.
14. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", v. I , p. 406:
15. Տե՛ս նույն տեղում, h. I, էջ 408:
16. Քաղվածքը՝ նույն տեղում, h. I, էջ 417:
17. Տե՛ս նույն տեղը, h. I, էջ 421:
18. Նույն տեղում, h. I, էջ 433:
19. Մեջբերումը տե՛ս ըստ նշվ. աշխ., h. I, էջ 439:
20. Տե՛ս նույն տեղը, h. I, էջ 446-447:
21. Տե՛ս նույն տեղը, h. I, էջ 448:
22. Տե՛ս նույն տեղը, h. I, էջ 450, 456:
23. Տե՛ս նշվ. աշխ., h. I, էջ 859-866:
24. Կարապետյան Մ. Մ., Թաջիրյան Է. Խ., Էջեր XVII դարի վերջի Նոր Ջուղայի պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի, Ե., 1998, N2 (95) էջ 84:
25. Տե՛ս "A Chronicle of the Carmelites",, v. I, p. 464:
26. Տե՛ս Новая история Ирана, Хрестоматия, М., 1988, стр 10.
27. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Ե., 1959, գիրք երկրորդ, էջ 287:
28. Լեո, Երկերի ժողովածու, Ե., 1986, h. V, էջ 432:
29. Տե՛ս "A Chronicle of the Carmelites",, v. I, p. 494-495:
30. Տե՛ս նույն տեղը, h. I, էջ 508-509:
31. Տե՛ս دکترعبدالحسین نوائی، روابط سیاسی ایران و اروپا در عصر صفوی، تهران، ۱۳۷۲، ص.۲۷۳
32. Մեջբերումը՝ նույն տեղում:
33. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", v. I , p. 494.
34. Քաղվածքն ըստ նշվ. աշխ., h. I, էջ 514-516:
35. Տե՛ս նշվ. աշխ., h. I, էջ 517-518:
36. Տե՛ս Այվազյան Ա., Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Ե., 2003, էջ 68:
37. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", v. I, p. 521.
38. Տե՛ս նույն տեղը:
39. Չամինյան Ա., Հայոց եկեղեցու պատմություն, մասն Բ., Նոր Նախիջևան, 1909, էջ 41, 96:

ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ

ՀԱՅ-ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Է ԴԱՐԻ ԿԷՍԵՐԻՆ ԵՒ ԶՈՒԱՐԹՆՈՑԻ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Վաղարշապատի մօտ, Քաղաքուղաշտի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կամ Զուարթնոց կոչուած վաղմիջնադարեան ճարտարապետութեան գլուխգործոցի կառուցումն աւանդաբար վերագրւում է 642/644-652/653 թուականներին[1]: Նրա օծումը կապւում է բիւզանդական կայսր Կոստանդ Բ-ի (Կոստաս, Կոստանդինոս) դէպի Հայաստան կատարած՝ Սեբէոս պատմիչի կողմից նկարագրուած 652-653 թթ. արշաւանքի ժամանակի հետ[2]: Առաւել ուշադիր ուսումնասիրողների կողմից աննկատ չի մնացել նաեւ այն փաստը, որ նոյն պատմիչի տեղեկութիւնների համաձայն՝ Զուարթնոցի կառուցումն այդ արշաւանքի օրերին չէր կարող աւարտուած լինել (Սեբէոսը յայտնում է, որ Հայոց իշխան Թէոդորոս Ռշտունու վախճանուելուց յետոյ Տայքից Այրարատ վերադառնալով, այսինքն՝ 657-658 թթ., Ներսէս Շինող կաթողիկոսը դեռ ջանում էր աւարտել տաճարի շինարարութիւնը), ուստի նրանք Զուարթնոցի օծումը թուագրում են յաջորդ տասնամեակի սկզբներով (ըստ Արամ Տէր-Ղեւոնդեանի՝ 661 թ.)[3]:

Ժամանակին մենք «Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը» միջազգային գիտաժողովում (1998 թ. սեպտեմբեր) ներկայացրած «Զուարթնոցի տաճարի օծման թուականը» զեկուցման մէջ, Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից» երկում պահպանուած տեղեկութիւնների քննութեամբ ճշգրտել ենք եկեղեցու նաւակատիքի ժամանակը՝ 660 թ. գարուն[4]: Աշխատանքն այդ ժամանակ չտպագրուեց, միւս կողմից, հետագայ պրպտումներից պարզ դարձաւ, որ աղբիւրների ուշադիր քննութիւնը ստիպում է վերանայել նաեւ Զուարթնոցի շինարարութեան սկզբի ժամանակի մասին աւանդական պատկերացումները: Ստորեւ կը փորձենք ներկայացնել առկայ սկզբնաղբիւրների ժամանակագրական տեղեկութիւնների մանրակրկիտ վերլուծութիւնը:

Կոստանդ Բ կայսեր (641/642-668)՝ Զուարթնոցի նաւակատիքին մասնակցելու մասին վկայութիւնը պահպանուել է Ժ դարի վերջի պատմիչ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից» երկի երրորդ

գրքի ԺԵ գլխում: Ամբողջական հատուածը հետեւեալն է. «Իսկ Կոստաս՝ սորին [*bclr* նորին]՝ որդի՝ ամս ԻԹ...: Եւ ի [*acl չիք* ի] նորին *ԺԹ ամին* [*clr չիք* ամին] նստի կաթողիկոս Հայոց տէր Ներսէս՝ ամս Ի. եւ հայ թուականն [*bclr* թիւն] *ՃԺ եւ մին էր:* Սա էր *հայրագիր* նորին Կոստանդնի [*a* Կոստանտնի] *եւ զանձիւք նորա* շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հաւտից ի Քաղաքիդաշտի[6] զՍուրբն Գրիգոր. եւ ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հոռոմոց, ընդ[7] որ յաւէժ հիացեալ ընդ շինուածն՝ ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր [*bclr* թագաւորին *փխ* իւր], զի զնոյնաձեւն յարմարեսցէ ի պաղատանն: Եւ ոչ ժամանեալ զաղատոսն՝ ի ճանապարհին վախճանիւր [*bclr* վախճանի]»[8]:

Չնայած բերուած հատուածում մի քանի ժամանակագրական տուեալներ իբրեւ ակնյայտ սխալներ են ներկայանում, մասնաւորապէս՝ Կոստասի 19-րդ տարում (659-660), Հայոց ՃԺԱ թուականին (662-663) Ներսէս Գ Տայեցու (641-661/2) կաթողիկոսանալը, սակայն աղբիւրագիտական ճշգրտումներից յետոյ (տե՛ս ստորեւ) պարզ է դառնում, որ Ժ-դարում Մովսէս Դասխուրանցու ձեռքի տակ եղած սկզբնաղբիւրը եզակի տեղեկութիւններ է պարունակել մեզ հետաքրքրող խնդիրների մասին: Տեղին յիշենք, որ, ինչպէս ժամանակին ցոյց է տրուել մեր աշխատանքներում, ՊԱ Գ գրքի ժամանակագրական տեղեկութիւններ պարունակող գլուխների մեծ մասը յանգում է հայ պատմիչի օգտագործած մի գրաւոր սկզբնաղբիւրի (այն պայմանականօրէն անուանել ենք «Աղուանից կաթողիկոսների գաւազանագիրք»), որի բովանդակութեան առանցքային մասը Մովսէս Դասխուրանցին արտագրել է իր երկի եզրափակիչ գլխում (Դ.իզ)՝ հաւանաբար հէնց աղբիւրին յանգող «Անուանք հայրապետացն Աղուանից, ամք եւ գործք նոցին» գլխագրի տակ, սակայն, միաժամանակ, նրա բազմաթիւ կտորներն առանձնացրել ու դասաւորել է ՊԱ նախորդող գլուխներում[9]:

Աւելացնենք, որ այդ վերականգնուող գաւազանագիրքը նաեւ Աղուանից կաթողիկոսարանում մի քանի դար շարունակ տարբեր փաստաթղթերի ու այլ գրուածքների հետ հաւաքուած յիշատակարաններից եւ կաթողիկոսների ու նրանց օրօք տեղի ունեցած ինչ-ինչ անցքերի մասին ժամանակագրական նշումներից առաջացած մի հաւաքածոյի տպաւորութիւն է թողնում (այլուր կոչուած *տոհմամատեան* կամ *քրքուկ*): Նմանատիպ երկի ամենից յայտնի օրինակը Է դարի վերջին[10] Յովհան Մամիկոնեանի ձեռքի տակ գտնուած Գլակայ վանքի վանահայրերին վերաբերող նիւթերի ժողովածոն է, որի մասին պատմիչն իր յիշատակարանում գրում է. «Ժամանակագրութիւնս այս սկսեալ առ սրբոյն Գրիգորով Զենոբայ Ասորւոյ, *վասն որ ինչ յիւրեանն տեղիսն գործեցաւ թողեալ գրով* ի նոյն եկեղեցին, հաճոյ է թուեալ եւ այլոց յետոյ զնոյն պահեալ զկարգ՝ միայն որ ինչ իշխանն տանս այս առնէր քաջութիւն՝ *իւրաքանչիւր հայր գրեալ զիւր ժամանակին թողայր*»[11]: Ընդ որում, ի տարբերութիւն, օ-

րինակ. Սամիկոնեան պատմիչի՝ Մովսէս Դասխուրանցին, որպէս կանոն, ոչ թէ վերաշարադրում, այլ բառացի արտագրութեամբ է տալիս իր աղբիւրների բնագիրը. որն էապէս մեծացնում է նրանց՝ իբրեւ իրենց ժամանակաշրջանի սկզբնաղբիւրի հաւաստիութիւնը:

Արդ՝ Մովսէս Դասխուրանցու երկի վերը բերուած հատուածում Զուարթնոցի նաւակատիքի մասին եզակի վկայութիւնից առաջ հաղորդւում է, որ Ներսէս Տայեցի կաթողիկոսը կառուցեց տաճարը («զբազմապայծառ փարախն բանաւոր հաւտից ի Քաղաքիդաշտի՝ զՍուրբն Գրիգոր») Կոստանդ Բ կայսեր յատկացրած միջոցներով («գանձիւք նորա»): Կայսեր «շռայլութեան» մասին այդ պնդումը, թերեւս, պէտք է գոնէ ինչ-որ մասով չափազանցուած համարել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժամանակակից Սեբէոսն ընդհանրապէս ոչինչ չգիտի Կոստանդի մեկենասութեան վերաբերեալ: Սակայն մեզ համար տուեալ դէպքում աւելի կարեւոր է այն, որ ՊԱ սոյն դրուագը քիչ բան է տալիս Զուարթնոցի շինարարութեան սկզբի ժամանակագրութիւնը պատկերացնելու համար: Ըստ այդմ՝ մեզ հետաքրքրող առաջին խնդրի մասին միակ աղբիւրը մնում է Է դարի ականատես պատմիչ Սեբէոսի երկը:

Կոստանդ Բ կայսեր զօրավար Պռոկոպի եւ Մուաւիայի միջեւ հաշտութեան պայմանագրի կնքման (պատմագրութեան մէջ թուագրւում է 650 թ.) յիշատակութիւնից յետոյ Սեբէոսը մի ամբողջ պարբերութիւն է նուիրում Զուարթնոցի կառուցման ձեռնարկին. «Յայնմ ժամանակի, - գրում է նա, - արկ ի միտս իւր կաթաղիկոսն [*SS* կաթողիկոսն][12] Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն, որ ի Վաղարշապատ քաղաքին՝ ի վերայ ճանապարհին, յորում, ասեն, ընդ յառաջ [*SS* առաջ] եղեւ թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի: Շինեաց անդ եւ եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երեւեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն: Եւ շինեաց եկեղեցին բարձր շինուածովք եւ չքնաղ զարմանալեաւք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն: Ած ջուր եւ եբեր զգետոյն [*U* զգետոյն] եւ արկ ի գործ զամենայն վայրսն առապար, անկեաց [*U* տնգեաց] այգիս եւ ծառատունկս. եւ շուրջանակի պարսպաւորեաց զբնակութեամբն գեղեցկադիր յաւրինուածով բարձր պարսպաւ ի փառս Աստուծոյ»[13]:

Մէջբերուած պարբերութեան «Յ» սկզբնատառը (այդպէս նաեւ՝ յաջորդ պարբերութեան սկզբի «Ա»-ն) ե՛ւ մեզ հասած հնագոյն ամբողջական գրչագրում (ՄՄ, թիւ 2639), ե՛ւ ԺԶ դարի արժէքաւոր պատառիկի պահպանուած թերթում (երես Բ) մեծացուած ու կարմրացուած է, այսինքն, ինչպէս նկատել է երկի վերջին հրատարակիչը՝ «Սեբէոսի պատմութեան» նախնական բնագրում ... հատուածը մինչեւ պարբերութեան վերջը կազմած է եղել առանձին գլուխ, կամ էլ ընդօրինակողների կողմից ընկալուել է որպէս առանձին մաս»[14]: Ցաւօք, հրատարակիչներն այդ գլխի առանձնացումը չեն կատարել (ընդհանրապէս, Սեբէոսի տեղեկու-

թիւնները քննելիս ստիպուած ենք լինելու պարբերաբար անդրադառնալ ձեռագրական թէկուզ եւ սուղ նիւթին. որից լուրջ շեղումները բնորոշ են բոլոր, այդ թւում եւ վերջին, քննական հրատարակութիւններին. այդ մասին մանրամասն՝ մեր յատուկ աշխատանքում[15]):

Զուարթնոցի շինարարութեան ձեռնարկին նուիրուած Սեբէոսի հատուածի ճշգրիտ ժամանակագրութիւնը վերականգնելը մի փոքր դժուարութիւն է առաջացնում, որը սակայն յաղթահարւում է Թէոփանէս Խոստովանողի տեղեկութիւնների օգնութեամբ: Ըստ վերջինիս՝ արաբների ռազմական ակտիւութիւնը մի քանի տարուայ ընդմիջումից յետոյ վերսկսուեց Կոստաս կայսեր 7-րդ եւ Օսման ամիրապետի 3-րդ տարում, այսինքն՝ 647/648 թ., երբ «Մուաւիան ծովով արշաւեց Կիպրոսի վրայ». յաջորդ տարուայ (648/649) իրադարձութիւնների մէջ Ժամանակագիրը նշում է Կիպրոսի գրաւումն ու աւերումը, իսկ կայսեր 9-րդ տարուայ համար (649/650) գրում. «Բուսուրը արաբներով արշաւեց ընդդէմ Իսաւրիայի, կոտորեց, շատերին գերեվարեց...: Կոստաս կայսրը ոմն Պրոկոպիոսի հաշտութիւն կնքելու համար Մուաւիայի մօտ ուղարկեց: *Երկու տարի* ժամանակով հաշտութիւն կնքուեց, որի համար Մուաւիան Դամասկոսում պատանդ պահեց [կայսրեղբայր] Թէոդորոսի որդի Գրիգորիոսին»[16]: Սեբէոսը որոշ չափով տեղեակ է արեւմուտքում տեղի ունեցած գործողութիւններից, որոնց մասին նա գրում է նոյն տարիների հայաստանեան ռազմական իրադարձութիւնների մանրամասն նկարագրութիւնից յետոյ՝ «Իսկ որ ի կողմանսն Պաղեստինացւոցն...» ոճական անցումով: Նա եւս նշում է Կիպրոսի Կոստանդիա (բնագրում՝ Կոստանդնուպոլիս) քաղաքի մօտ տեղի ունեցած «նաւամարտութեան» մասին, որտեղ արաբներն (առաջին տարին) անյաջողութեան մատնուեցին: Ապա պատմիչն անցնում է հաշտութեան բանակցութիւնների պատճառներին ու ընթացքին՝ տալով Թէոփանէսից շատ աւելի մանրամասն տեղեկութիւններ եւ աւարտելով պայմանագրի յիշատակութեամբ. «Արդ՝ իբրեւ ետես Պռոկոպ զհրամանն [*Պատառ.* զհրամանսն] արքունի եւ լուաւ բանս ի զաւրացն՝ գնաց զհետ նոցա ի Դամասկոս առ Մաւիաս իշխան զաւրուն Իսմայելի. եւ յայտնեաց զչափ սակին եւ ասաց զսահմանն [*Պատառ.* զսահման եւ ասաց զչափն սակի *փխ* զչափ...զսահմանն] եւ առ զհաշտութիւնն [*Պատառ.* զհաշտութիւն] եւ գնաց»[17]:

Ինչպէս ասացինք, դրանից առաջ Սեբէոսը նկարագրում է Հայաստանում տեղի ունեցած ռազմական գործողութիւնները: Հատուածի սկզբի թուագրումը («Եւ *ի գալ միւսում ամի* [*Պատառ.* ամին] եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական եւ բաժանեցան յերիս. առաջ մի՝ յԱյրարատ [*Ա, Պատառ.* յԱրայրատ *փխ* յԱյրարատ (*Միհրդ.*=Հ)], եւ առաջ մի՝ ի Սեպհական գնդին կողմանսն, եւ առաջ մի՝ յԱղուանս») կապւում է պատմիչի՝ նախորդ շարադրանքում տուած ժամանակագրութեան հետ: Իսկ դա սկսւում է Կոստանդի 5-րդ տարուայ, այսինքն՝ 646 թ. յիշատա-

կութիւնից[18], որի առկ Սեբէոսը թուագրում է Խոսրով Շնում պատուանունը կրած Սմբատ Բագրատունի Վրկանի մարզպանի (ըստ ԻԷ գլխի՝ վախճանուած 617/618 թ.) որդու՝ դեռեւս Հերակլ կայսեր վերջին տարիներից հալածական Վարազտիրոց ասպետին ու նրա «ապստամբակիցներին» աֆրիկեան աքսորից ոմն Թէոդորոս նորանշանակ զօրավարի խնդրանքով եւ կայսեր բարեհաճութեամբ վերադարձնելը («եւ հրամայեաց ածել զնոսա ի քաղաքն թագաւորական... եւ անդէն կարգեաց ի կարգն առաջի՝ *յամին հինգերորդի* թագաւորութեան իւրոյ: Նոյնպէս եւ զՎահանն Խորխոռունի եւ զայլ եւս»)[19]: Դրանից յետոյ մինչեւ յաջորդ թուականի յիշատակութիւնը Սեբէոսը պատմում է հետեւեալ իրադարձութիւնների մասին. Կոստանդի կողմից Թումաս իշխանին Հայաստան ուղարկելը; վերջինիս եւ այստեղ «Հայոց իշխան» անուանուած Թէոդորոս Ռշտունու միջեւ ծագած հակասութիւնները՝ կայսրութեան եւ այստեղ «Մարաց իշխան» կոչուած Ատրպատականի Սասանեան սպահպետի յարաբերութիւնների առիթով[20]; Հայոց իշխանին ձերբակալուած Կոստանդնուպոլիս ուղարկելը եւ կայսեր արդարացուցիչ վճիռը նրա օգտին ու Թումասին անարգելով պատուազուրկ անելը; Վարազտիրոց ասպետի եւ Թէոդորոս Ռշտունու ջերմ հանդիպումը; կայսրութեանը ենթարկուելուց ըստ երեւոյթին խուսափող Վարազտիրոցի («Բայց ասպետ ոչ կարաց նուաճել ընդ իշխանութեամբն Յունաց...») գաղտնի մեկնումը հայրենի Տայք; Հայոց զօրականների ու նախարարների եւ Յունաց Թէոդորոս զօրավարի կողմից Ներսէս կաթողիկոսին նրա մօտ ուղարկելը; Վարազտիրոցի համաձայնելը՝ ենթարկուելու Կոստանդ կայսեր, նրանից կիւրապաղատի տիտղոսը եւ «զիշխանութիւն աշխարհին» ստանալը, սակայն յանկարծակի հիւանդանալն ու վախճանուելը: Այսքանից յետոյ է Սեբէոսի բնագիրը յայտնում (սկսելով կարմիր գլխատառով)՝ «Եւ յետ այսորիկ արձակեաց զԹէոդորոս Ռշտունեաց տէրն ի Հայս մեծաւ պատուով. եւ ետ նմա զնոյն իշխանութիւն զաւրավարութեան, եթէ կամիցին իշխանքն Հայոց, եւ եթէ ոչ կամիցին. եւ եկն կարգեցաւ ի նոյն իշխանութեանն», ապա շարունակում. «Եւ եղեւ *ի զալ միւսում ամի* եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական...»[21]:

Դժուար չէ նկատել, որ վերը թուարկուած իրադարձութիւնների մեծ ծաւալից ելնելով՝ Սեբէոսի նշած այս «միւս ամը» ճիշտ կը լինէր վերագրել ոչ թէ նախորդող բնագրի վերջին թուականի (այսինքն՝ Կոստանդի 5-րդ տարուայ), այլ պատմիչի յիշատակած վերջին իրադարձութեան (այն է՝ Թէոդորոսին Հայաստան ուղարկելու) յաջորդ տարուան, ընդ որում՝ դրանց միջեւ ենթադրելով, գոնէ մէկ տարի ժամանակահատուած: Այսինքն, համարելով, որ Թումաս զօրավարին Հայաստան ուղարկելուց մինչեւ (ըստ ամենայնի՝ նրա լիազօրութիւններով) Թէոդորոս-Ռշտունուն հայրենիք վերադարձնելը յայտնի իրադարձութիւնները տեղի են ունեցել 646-647 թթ., արդարացուած կը լինէր Ատրպատականից արաբական ե-

րեք զօրախմբերի դէպի Այրարատ, Վասպուրական եւ Աղուանք ներխուժումը թուագրել 648-ի սկզբներով եւ ըստ այդմ կապել ոչ թէ արաբա-բիւզանդական եռամեայ պատերազմի սկզբի (ըստ Թէոփանէսի՝ Մուաւիայի նաւատորմիղի Կիպրոս ներխուժելը 647-ին), այլ նրա հետագայ ծաւալման հետ:

Իր յաջորդ թուականը Սեբէոսը նշում է արաբական ներխուժման ընթացքը որոշ չափով նկարագրելուց յետոյ: Նա յայտնում է, որ «որք ի կողմանս Սեպհական գնդին՝ արշաւեալ սփռեցան [*Պատառ.* սփռան], եւ [*Պատառ. չիք* եւ] հաքեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի՝ առին զաւար եւ զգերութիւն», ճակատամարտեցին Հէրեւան բերդի դէմ, սակայն չկարողացան գրաւել այն[22], ճիշտ այդպէս անյաջողութեան մատնուեցին Որդսպու ամրոցի մօտ, որից յետոյ շրջապատեցին Արծափի բերդը (Կոգովիտ գաւառում, նրա Դարոյնք կենտրոնից ոչ հեռու): Վերջապէս, շարադրելով այդ բերդի պաշտպանութեան մանրամասները՝ պատմիչը նշում է նրա անկման ճշգրիտ օրը (ընդ որում *Ա*-ում նախադասութիւնն սկսւում է կարմիր գլխատառով[23], իսկ Թ. Միհրդատեանցը նրանով է սկսել իր բնագրի հերթական գլուխը). «Եւ եղեւ յամին *երկրորդի* [այսպէս մեզ հասած ձեռագրերում - *Ա. Յ.*] Կոստանդնի, յամսեանն հոռի, որ աւր *ԻԳ* էր ամսոյն, յաւուր կիւրակէի, ընդ առաւաւտս, ճչեցին Իսմայելացիքն ի բերդին...»[24]: Սակայն արաբների յաջողութիւնն ի վերջոյ վերածուեց խոշոր պարտութեան. գերիների բազմութեամբ Արծափից հեռացող 3000-անոց բանակի վրայ յարձակուեց Հայոց զօրավար Թէոդորոս Ռշտունու զօրաջոկատը, որին յաջողուեց ջախջախել աւարառուներին եւ կոտորել մեծ մասին, այդ թւում՝ անունով յիշուած երկու «զօրքի իշխաններին»: Կարեւոր է թւում նաեւ Սեբէոսի տեղեկութեան աւարտը, ըստ որի՝ յաղթանակած Թէոդորոսը ռազմաւարից նուէրներ ուղարկեց Բիւզանդիա («Եւ ետ տանել զաւրավարն Հայոց զընծայս Կոստանդնի ի պատերազմէն զընտիր ընտիր երիվարացն Ճ ձի, զոր առեալ արքայի՝ ուրախ եղեւ ինքն եւ ամենայն պաղատն. եւ արձակեաց անդրէն շնորհակալութիւն մեծ»): Դրա էյֆորիկ ոճից, թերեւս, այն ապատրութիւնն է առաջանում, որ Արծափի ստորոտում հայերի յաղթանակը ժամանակով շատ հեռու չի եղել ընդհանուր պատերազմական գործողութիւնների աւարտից: Շարունակութեան մէջ Սեբէոսը խիստ համառօտակի նկարագրում է միւս ուղղութիւններում արաբների ռազմական առաջխաղացման ընթացքը (այստեղ էլ նրանք որոշակի յաջողութիւնների են հասնում. մի զօրաբանակն անցնում է «մինչեւ ի կողմանս Տայոց, Վրաց եւ *Աղուանից*», աւարով ու գերիներով վերադառնում Նախճաւանի ամրոցը շրջապատած զօրքերի մօտ, թէպէտ այն չեն կարողանում գրաւել, սակայն գրաւում ու աւարի են մատնում Խրամի բերդը), իսկ հատուածի վերջում անդրադառնում է բուն Կայսրութեան տարածքում ընթացած կռիւներին

(«Իսկ որ ի կողմանսն Պաղեստինացւոցն...» անցումով) եւ եռամեայ հաշտութեան կնքման հանգամանքներին[25]:

Դեռեւս 1930-ական թթ. սկզբին Յակոբ Մանանդեանը պարզաբանել է, որ վերը նշուած թուագրման մէջ գրչական սխալ է սպրդել, եւ Սեբէոսի բնօրինակում անհրաժեշտ է ենթադրել Կոստանդ կայսեր «*երկրորդ*» (վաղ բնագրում՝ «Բ-երորդ») ընթերցման փոխարէն «*Ը-երորդ*» («ութերորդ») բառի եղած լինելը (Ը եւ Բ երկաթագիր տառերն, իրօք, գրելաձեւերով բաւականին նման են եւ յաճախ են շփոթւում գրիչների կողմից)[26]: Ուսումնասիրողն իրաւացիօրէն նշել է, որ տուեալ հատուածում պատմիչի շարադրանքի հերթականութիւնը շատ կանոնաւոր է, եւ անհնար է, որ յատուկ Կոստանդի *առաջին, երկրորդ* եւ *հինգերորդ* տարիների իրադարձութիւնների յիշատակումից յետոյ նա յանկարծակի նորից վերադառնար երկրորդ տարուան. միւս կողմից՝ Արծափի գրաւմանը նախորդած պատմական իրադարձութիւններն իրականում հասնում են մինչեւ 649-650 թուականները, այսինքն՝ Կոստանդի Ը-երորդ կամ Թ-երորդ տարիները. իսկ հաշուի առնելով, որ Հայոց հոռի ամսուայ 23-ը, այսինքն՝ օգոստոսի 8-ը, կիրակի է եղել 650 թ. (649-ին այդ օրը եղել է շաբաթ), Յակոբ Մանանդեանն ի վերջոյ կանգ է առել «յամին *Թ-երորդի* Կոստանդնի» ընթերցման հաւանականութեան վրայ[27]:

Լիովին ընդունելով Յակոբ Մանանդեանի հիմնական փաստարկումների անհերքելիութիւնը՝ անհրաժեշտ է միայն մի ճշգրտում կատարել: Թերեւս առաւել արդարացուած կը լինէր ոչ թէ երկաթագրում աւելի հազուադէպ հանդիպող Թ-Բ վրիպակի ենթադրութեամբ կանգ առնել 650 թուականի վրայ, այլ հետեւելով նրա առաջարկած միւս տարբերակին եւ Աբրահամ Ջամինեանին՝ ենթադրել, որ գրչական վրիպակ է տեղի ունեցել օբուայ թիւն ընդօրինակելիս՝ *ԻԳ*, փոխանակ Սեբիոսի բնօրինակի *ԻԴ* վերականգնելի օրահամարի: Իրօք, երկաթագիր (այդպէս նաեւ բոլորգիր եւ շղագիր) «Գ» եւ «Դ» տառերը ամենից յաճախ են շփոթւում գրիչների կողմից[28], իսկ 649 թուականին Հայոց տոմարի ՂԹ թուականի երկրորդ՝ հոռի ամսուայ 24-ը, այն է՝ օգոստոսի 9-ը, եղել է կիրակի[29]:

Ընդմիջելով հիմնական քննութիւնը՝ այստեղ նշենք, որ մեր կարծիքով՝ Հայաստանում պատերազմական գործողութիւնների՝ վերը նկարագրուած աւարտական փուլին է վերաբերում նաեւ Սեբիոսի մօտ հետագայ մի անուղղակի հատուածում, իսկ Ղեւոնդի մօտ մանրամասն, բայց որոշ չափով խաթարուած ենթատեքստում պահպանուած պատմութիւնը՝ Կոգովտում ու հարեւան Մարդուցայքում Թէոդորոս Ռշտունու եւ Պռոկոպ զօրապետի վարած ռազմական գործողութիւնների մասին Նախճաւանի կողմերից գերիներով ու աւարով դէպի Ատրիք հեռացող արաբական զօրաբանակի դէմ: Ըստ Սեբիոսի հետագայ շարադրանքի մի հատուածի՝ եռամեայ հաշտութեան խախտումից յետոյ, 652 թ. Հայաստան ներխուժել մտադրուած Կոստանդ կայսրը *այդ պահին Հայոց*

սահմանից դուրս գտնուող իր զօրքից լսում է հետեւեալ բողոքները (որից յետոյ 100-հազարանոց բանակով մտնում է Դերջան). «Եւ ամբաստանութիւն ամենայն զաւրացն Հոռոմին եւ տրտունջ զՌ-շտունեաց տեառնէն լինէյին եւ զՀայոց առաջի թագաւորին իւրեանց՝ վասն *հարուածոց*, որ եղեն *ի Մարդողէսն*. զի ասացին, թէ՝ «Միաբանեցան ընդ Իսմայելացիսն, զմեզ վստահեցուցին եւ *զզաւրսն ճապաղել ետուն յասպատակ յԱտրպատական, եւ զնոսա ածին ի վերայ մեր յանկարծակի եւ հարկանել ետուն զմեզ*. եւ մեր *ամենայն ինչ անդ անկաւ*: Բայց թո՛ղ *երթամք ի Հայս ...»*. Կարծում ենք, որ հնարաւոր չէ գտնել մէկ այլ ընդունելի տարբերակ, թէ ուրիշ ե՞րբ կարող էր բիւզանդական զօրքը կրել «հարուածներ», որոնց համար տրամաբանական լինէր կայսերը բողոք ներկայացնել 652 թուականի այդ՝ վերստին Հայաստան մտնել-չմտնելու վճիռը կայացնելու պահին: Այլ կերպ ասած, ոչ մի կերպ հնարաւոր չէ համաձայնել Յակոբ Մանանդեանի թեթեւօրէն թղթին տրուած կարծիքի հետ, ըստ որի՝ 552-ին բիւզանդացի զօրականների բողոքները կարող էին վերաբերել 642-643 թթ., այսինքն՝ 10 տարի առաջ տեղի ունեցած կռիւների ժամանակին[30]:

Ինչ վերաբերում է Ղեւոնդին, ապա նա, ընկնելով ակնյայտ անախրոնիզմի մէջ՝ իրեն հասած պատմութիւնը (գլուխ Բ) մի նախաբանատիպ պարբերութեան մէջ կապում է Պարսից Յազկերտ արքայից արքային պարտութեան մատնելու *եւ սպանելու* հետ (իրականում՝ Միջին Ասիայում !), որից յետոյ արաբական զօրքի մի հատուածը *բաժանւում է եւ Պարսկաստանի կողմից* ներխուժում Գողթն ու Նախճաւան (ապա այնտեղից բռնում յետդարձի ճանապարհը Արտազ գաւառով): Իրականում դժուար չէ վերականգնել, որ պատմիչի մեզ անյայտ աղբիւրում խօսքը գնացել է պարսիկներին *Ատրպատականում* ջախջախելու եւ 648 թ. այդ աշխարհին վերջնականապէս տիրելու մասին, որին յաջորդեց երեք ուղղութեամբ ներխուժումը Հայաստան: Ըստ բուն շարադրանքի՝ Թէոդորոս Ռ-շտունին երկար համոզում է Կոգովիտ գաւառում, «ի *սահմանս* Բագուծորոյ եւ *Մարդուցայից*» բանակած Պռոկոպ զօրավարին՝ յարձակուել գերիներով ու աւարով վերադարձող արաբների վրայ: Ինքը մի յաջող դարան է գործում Եղբարսն կոչուած վայրում, հակառակորդին լուրջ վնասներ հասցնում, բայց դաշնակցի պասիւութիւնից ու ծուլութիւնից սրտնեղած՝ հեռանում Գառնի գաւառ, իսկ Պռոկոպի բախումն արաբների հետ աւարտւում է բիւզանդացիների խայտառակ պարտութեամբ ու փախուստով[31]: Արաբները հաւաքում են նաեւ նրանց *բանակի աւարը* («զկապուտ բանակին») եւ հեռանում իրենց երկիրը, ինչպէս գլխի վերջում նշում է պատմիչը՝ Աբու Բաքրի, Օթմանի ու Ամրի *22-րդ տարում*, որից յետոյ «*ամս Գ*» դադարում են Հայաստանի վրայ յարձակուելուց՝ մինչեւ այդ «իշխանների» *26-րդ տարին*:

Ղեւոնդի՝ ի բարեբախտութիւն հետագայ ուսումնասիրողի սյսհպանած (թէկուզ եւ պատմիչի ունեցած մնացեալ նիւթի հետ ճիշտ չհամաձայնած) այս պատմութեան հիմնական դրուագները (մի մասը՝ մեր կողմից ընդգծուած) ակնյայտօրէն համապատասխանում են 647/648-649/650 թթ. արաբա-բիւզանդահայկական պատերազմի (եթէ այն ընկալենք հէնց որպէս այդպիսին[32]) վերջին փուլի յայտնի իրողութիւններին: Անգամ գլխաւարաի թուագրումը, որը ուսումնասիրողների կողմից առաւելապէս համարուել է խառնակ ու անուշադրութեան մատնուել կամ կիսատ մեկնաբանութիւնների արժանացել[33], թւում է, թէ ճշգրտութեան տարր է պարունակում: Հայ մատենագրութիւն թափանցած եւ Մովսէս Դասխուրանցու երկի մէջ բառացի արտագրութեամբ մտած մի երկում պահպանուած ժամանակագրական աւանդոյթի համաձայն՝ Մահմեդ մարգարէի մահը եւ Աբու Բաքրի իշխանութեան գալը թուագրւում է Հայոց տոմարի *ՀԵ թուականով* (626 թ. յունիս 23 - 627 թ. յունիս 22)[34]: ՊԱ Գ.ա գլխի վերջում եւ Գ.բ-ի սկզբում կարդում ենք. «Ի լնուլ *ԿԵ թուականին* [*bclr* ամի թուոյ] Հայոց երեւեցաւ Մահմետն [*a* մոլարն Մահմետ] ի Մեդին Շահաստանի... Ի Ժ-երորդ ամին մեռաւ, յաւուր երկշաբաթի, յամսեանն շահռիաբիադովի [*a* շահռաբի աղաւաղի, *cr* շահռիաբիալուլ] յեբկուսն [*a* յերկուց]՝ կալեալ զիշխանութիւնն *ամս Ժ*... Երկրորդ իշխան [*a* իշխանութեանն] Տաճկաց զկնի Մահմետի նստաւ Աբու Բ[ա]քր Աբի Կահփեան [*a* յԱբի Կաւհփեան] եւ կալաւ զիշխանութիւնն ամս Թ [ուղղելի է «Բ», հմմտ. *Ն. Ադոնց*, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 119 - *Ա. Յ.*]»: Գումարելով 626/627-ին Ղեւոնդի աղբիւրի նշած 22 տարին՝ կը ստանանք 640-ական թթ. վերջին տեղի ունեցած եռամեայ պատերազմի աւարտական փուլի ժամանակը, իսկ 26 տարիների գումարը մեզ կը հասցնի 653 թ. Հաբիբ իբն Մասլամայի՝ Հայաստան մտնելու եւ Թէոդորոս Ռշտունու հետ համատեղ Մաւրիանոսի գլխաւորած բիւզանդական ուժերի դէմ վարած լայնածաւալ գործողութիւնների ժամանակին:

Աղբիւրագէտներին չպէտք է շփոթութեան մէջ գցի այն հանգամանքը, որ Ղեւոնդը, եւս մէկ անգամ օգտագործելով Աբու Բաքրի առաջին տարուանով թուագրումը (յաջորդ՝ Գ գլխի երկրորդ մասում, Արծափի ճակատամարտի մասին պատմելիս)՝ աղբիւրների տրամադրած նիւթերը բաւականին սխալ ընկալելու հետեւանքով պարզապէս գումարման գործողութիւն է կատարում եւ ստանում ամիր ալ-մումնիների՝ բոլոր տեսակի հաշուարկներով ժամանակավրէպ 36-րդ տարին: Ուշադիր քննութիւնից ամիջապէս երեւում է, որ Արծափի դէպքերի մասին պատմիչը գրել է՝ օգտուելով Սեբիոսից, սակայն Մարդուցայքի դէպքերի համար (գլուխ Բ) նա ակնյայտօրէն ունեցել է մէկ այլ սկզբնաղբիւր, որի բնոյթի մասին միայն ենթադրութիւններ կարելի է անել: Աւելին, ամենայն հաւանականութեամբ, Ղեւոնդի ձեռքին եղել է նաեւ մի երրորդ սկզբնաղբիւր.

յոր նա օգտագործել է (աւելացնելով Սեբէոսից քաղած աւելի մանրամասն տուեալներն ու սեփական խոհերը) իր Գ գլխի առաջին կէսի շարադրանքն ստանալու համար՝ Կոստանդ Բ-ի *երկրորդ տարում* Դուինի գրաւման մասին: Ինչպէս ենթադրել է դեռեւս Ն. Ադոնցը, դա, հաւանաբար, հէնց Փիլոն Տիրակացու՝ 686 թ. գրուած «Ժամանակագրութիւնն» է, որը Դուինի առումը նշուած թուականին վերագրող երկերից ամենահինն է («*Կոստանդին* որդի Կոստանդիանի [*ԷԾ* Կոստանդնի], թոռն Հերակղի, ամս ԻԹ: Ի սորա *Բ ամին* առաւ Դուին ի Տաճկաց [*ԻԲՈ* Տաճկաց՝ ի Ղ թուականին], եւ եղեւ [*ԷԾ չիք* եղեւ] համար գերելոցն ԼԵՌ»)[35]:

Աղբիւրագիտական առումով այստեղ նշենք մի կարեւոր հանգամանք. Դուինի գրաւման նոյն թուականը (Կոստանդի երկրորդ տարին) յայտնող հետագայ պատմիչները օգտուել են կա՛մ Փիլոնի «Ժամանակագրութիւնից», կա՛մ Ղեւոնդից (որը, ինչպէս տեսնում ենք, նոյնպէս, հաւանաբար, օգտուել է Փիլոնից), այդ թւում՝ նաեւ ՊԱ-ի Գ.ժե գլխի աղբիւրը՝ Աղուանից կաթողիկոսների վերականգնուող գաւազանագիրքը (վերը նշուած քոթուկ-տոհմամատեանի կազմում), թէկուզեւ առկայ ձեռագրերի պահպանած բնագրի («Կոստաս՝ ...ամս ԻԹ. ի սորա *հինգ* [!] ամին Արաբիա [*bclr* Աբաբեա] կռիւն եղեւ. եւ *ի վեցին* Տաճիկք էին ի Հայս. եւ առաւ Դուին ի Տաճկաց, եւ որք գերեցանն [*bclr* գերեցան]՝ ԼԵՌ թուեցան») թուականը ուրիշ է՝ Կոստանդի *վեցերորդ* (!) տարին[36]: Միեւնոյն ժամանակ յիշենք, որ Դուինի առումը բոլոր մանրամասնութիւններով նկարագրող ժամանակակից ու ըստ էութեան ականատես Սեբէոսն այդ իրադարձութիւնը կապում է 641 թ. մարտին մահացած Հերակլ կայսեր որդի ու կայսերակից Կոստանդին Գ-ի (Կոստանդ Բ-ի հօր) մի քանի ամիս տեւած միանձնեայ տիրակալութեան ժամանակի հետ («Մեռաւ Երակլոս, եւ թագաւորեաց որդի նորա Կոստանդին: Եւ ոչ ոք ընտրեցաւ զաւրավար Հայոց... Եւ ել զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ...» եւ այլն): Ըստ պատմիչի հաղորդած մանրամասների՝ Դուինի գրաւման ժամանակ Հայոց կաթողիկոսը դեռ Եզրն էր («Եւ եղեւ այս յամս Եզրի կաթողիկոսի»), բայց նրան հէնց «ի նմին ամի» (Դուինի առումից յետոյ, ուրեմն՝ տարեվերջին) «յաջորդեցաւ... յաթոռ կաթողիկոսութեան» Ներսէսը (641-662 թթ.). տրւում է անգամ քաղաքի անկման ստոյգ օրը՝ «որ աւր Ի էր Տրէ ամսոյն», որն այսպիսով՝ գրեթէ միանշանակօրէն 641 թ. հոկտեմբերի 6-ն է[37]: Ընդ որում՝ պատմիչը նշում է նաեւ Դուինից գերեվարուածների նոյն թիւը՝ 35 հազար մարդ[38]: Արդ, եթէ ընդունելի է մեր ենթադրութիւնը Ղեւոնդի կողմից իր Գ գլխի առաջին մասում երկու մեզ *յայտնի* հեղինակների՝ Փիլոն Տիրակացու եւ Սեբէոսի տուեալների զուգադրման մասին[39], ապա գուցէ իմաստալի՞ց է լուրջ ուշադրութիւն դարձնել *այլ* թուագրման տարբերակով (Կոստանդի *Բ տարի*) Դուինի առման այսպիսով *միակ* «ժամանակակից» յիշատակութեան ակնյայտ *հպանցիկ* բնոյթի վրայ. Փիլոնն, իրօք, ուրիշ ոչինչ չգիտի, բացի խնդրոյ առարկայ թուագրումից ու

գերիների ԼԵՌ թուից: Թւում է. թէ հպանցիկութեան այս պարագան բաւարար հիմք է համարելու. որ Դուինի անկումը Կոստանդին Գի ոյդի Կոստանդի երկրորդ տարուան վերագրելու մասին դրանից մօտ կէս դար անց գրուած «Ժամանակագրութեան» պնդումը. ամենայն հաւանականութեամբ. արդիւնք է ինչ-որ մի (տուեալ դէպքում՝ կարեւոր չէ. թէ ինչ) թիւրիմացութեան: Եւ այդ դէպքում. թերեւս. տեղին է պարզապէս վերանայել պատմագրութեան մէջ առանց աղբիւրագիտական հաւաստի հիմքի արմատաւորուած դրոյթը՝ 642-643 թթ. իբրեւ թէ տեղի ունեցած արաբական զօրքերի ներխուժման վերաբերեալ[40]:

Տեղին նշենք. որ 642-643 թթ. կենտրոնական Հայաստան արաբական ներխուժման բացառումից յետոյ անհրաժեշտ է եւս մէկ անգամ փորձ կատարել արժեւորելու ասորական պատմագրութեան մէջ՝ ԺԳ - դարի հեղինակ Դիոնիսիոս Թելմահարցու (Տել Մահրացու) մօտ պահպանուած յիշողութիւնը արաբների դէմ Պրոկոպիոս եւ Թէոդորոս զօրավարների համատեղ գործողութիւնների մասին Հիւսիսային Միջագետքում («մի խիստ ուժեղ յարձակում գործեցին եւ հասան մինչեւ Բատնա Սառուգ: Նրանք աւերեցին եւ կողոպտեցին այդ քաղաքը. վերցրին ինչ որ ցանկանում էին եւ վերադարձան իրենց երկիրը»):Պատմիչն այն դնում է սելեւկեան թուականութեան 955 (այսինքն՝ մ. թ. 643/644) թուականին եւ արաբների հետ Կոստանդ Բ-ին իշխանութեան բերած (ապա նրա դէմ դաւադրութիւն կազմակերպած ու սպանուած) Արեւելքի զօրավար Վալենտինոսի ընդհարման ու վերջինիս ամօթալի փախուստից յետոյ՝ «նոյն թուին»[41]: Սակայն եթէ ընդունելի համարուի. որ խօսքը ոչ թէ Վալենտինոսին փոխարինած զօրավար Թէոդորոսի մասին է (ըստ Սեբէոսի՝ «զոմն հաւատարիմ յիշխանացն Հայաստանեայց. յայնց. որ ի Յունաց կողմանէ»[42]). այլ՝ Ռշտունեաց իշխանի. ապա. թերեւս. արդարացուած կը լինէր Բատնա Սառուգի ուղղութեամբ հայ-բիւզանդական համատեղ ուժերի ներխուժումը վերագրել (անկախ ուշ ասորի պատմիչի առաջարկած ենթատեքստից) 647-650 թթ. արաբա-բիւզանդական պատերազմի սկզբնական փուլին՝ մինչեւ Ատրպատականի կողմից արաբների Հայաստան ներխուժելը[43]:

Ի դէպ. եթէ արդարացուած համարենք շարունակել այդ ենթադրութիւնը (եւ հետեւել ուսումնասիրողների մեծ մասին. որոնք կապ են նկատում Դիոնիսիոս Թելմահարցու տեղեկութիւնների եւ Ղեւոնդի Դ գլխում Թէոդորոս Ռշտունուն ու Պռոկոպ զօրավարին եւս մէկ անգամ յիշատակող պատմութեան միջեւ). ապա հնարաւոր է նաեւ նոյն պատերազմի ինչ-որ մի փուլի հետ կապել (աւելի մեծ հաւանականութեամբ՝ վերջինի. որի դրուագներից մէկը՝ արաբների Իսաւբիա ներխուժելու մասին. յիշում են Թէոփանէս Խոստովանողը եւ Միքայէլ Ասորին) Ղեւոնդի հերթական խառնակ ենթատեքստում ներկայացուած պատմութեանը հիմք ծառայած իրողութիւնները: Ըստ պատմիչի՝ Մուաւիայի իշխանու-

թեան 1-ին եւ Հերակլի թոռ «Կոստանդիանոսի կայսեր» *25-րդ* (!) տարում[44] վերջինս նրամայում է *Կիլիկիայում* գտնուող զօրքին՝ շարժուել Հայաստան ներխուժելու համար հաւաքուած արաբների վրայ. ըստ որում՝ կայսրը նաեւ պաշտօնանկ է անում *Պռոկոպ* զօրավարի հանդէպ *նենգութիւն գործած* («վասն նենգութեանն, զոր արար առ զաւրավարին Պռոկոպայ») Հայոց իշխան Թէոդորոս Ռշտունուն (նրա փոխարէն նշանակելով Բագրատունեաց տոհմից Սմբատին), սակայն սպառնալից նամակներով պահանջում է. որ նա իր զօրքով հասնի Ասորիք; վախեցած իշխանը ուղարկում է իր որդի Վարդի զօրագունդը՝ պատուիրելով նրան միաբանել թշնամու հետ; Եփրատի ափի ճակատամարտում, «յաւուր մեծի շաբաթուն Զատկին» բիւզանդացիները պարտութիւն են կրում ու փախչում, իսկ Վարդ Ռշտունին իբրեւ թէ նպաստում է դրան՝ կտրելով գետանցի կամրջալարերը; այդ պարտութեան արդիւնքում կայսրը յուսալքւում է եւ *դադարում յարձակումներ գործել* («լքաւ սիրտ արքային Յունաց ... եւ ոչ եւս յաւել ելանել ի վերայ Իսմայելի»)[45]: Եթէ վերանանք այս պատմութեան վիպական բնոյթի հետ կապուած՝ Վարդ Ռշտունու դաւաճանութեան կասկածելի դրուագներից, ապա մնացեալի խրայատուկ մանրամասների հիման վրայ (մի մասը՝ մեր կողմից ընդգծուած) կարելի է համարել, որ 649 թ. երկրորդ կէսում (երբ Հայաստան մտած արաբական զօրաբանակը Նախճաւանի անառիկ բերդը թողնելով՝ հեռացաւ երկրից Արտազով ու Մարդուցայք-Մարդաստանով) ռազմական գործողութիւնների գլխաւոր թատերաբեմը տեղափոխուեց Միջագետք, ուր Թէոդորոս Ռշտունին ուղարկեց նաեւ իր որդու զօրագունդը՝ գերադասելով հայկական ուժերի մեծ մասը պահել երկրում, մինչեւ որ կայսեր առաջարկով կնքուեց զինադադարի պայմանագիրը:

Տեղին նշենք. որ Ղեւոնդի պատմութեան մէջ շատ կարեւոր է Եփրատի ափի վճռական ճակատամարտի ժամանակի մասին ասուած տուեալը՝ «յաւուր մեծի շաբաթուն Զատկին», որը միմիայն իր կոնկրետութեամբ ստիպում է բարձրացնել ամբողջ հաղորդման հաւաստիութեան ցուցանիշը (անկախ նրա բնոյթից, որի մասին՝ ստորեւ): Միւս կողմից՝ այն յուշում է, որ Զատկի նախորդ օրը տեղի ունեցած ճակատամարտը հնարաւոր չէ վերագրել պատերազմի վերջին փուլին, եթէ այդ փուլն աւարտուած համարենք 649 թ. երկրորդ կէսին, Արծափի յաղթանակից ոչ շատ ուշ[46]: Այսպիսով. Ղեւոնդի մօտ պահպանուած տուեալները լրացուցիչ հաստատում են, որ արաբա-բիւզանդական պատերազմի վերջին գործողութիւնները եւ Պրոկոպիոսի ու Սաւաիայի բանակցութիւնները բրոք ընթացել են 650 թ. առաջին ամիսներին, իսկ զինադադարի պայմանագիրը կնքուել է, ամենայն հաւանականութեամբ՝ այդ տարուայ կէսերին: Յիշենք, որ Թէոփանէսը նշուած իրադարձութիւնները թուագրում էր Կոստասի 9-րդ տարով, որն ընդգրկում է 649 թ. սեպտեմբերից մինչեւ 650-ի սեպտեմբերն ընկած ժամանակը[47]:

Ինչ վերաբերում է Ղեւոնդի պատումում Վարդ Ռշտունու կամ նրա հօր դաւաճանութեան մասին պնդմանը. ապա իրականութեան մէջ չէր կարող այդպիսի բան լինել (ճիշտ այնպէս. ինչպէս եւ Մարդուցայքում Պրոկոպիոսին Թէոդորոս Ռշտունու «դաւաճանելը»). քանի որ 650 թ. զինադադարին յաջորդած սկզբնական շրջանում (մինչեւ Թէոդորոսի դաշնակցելը Մուաւիայի հետ) հայերի եւ բիւզանդացիների ստնչութիւնները բոլորովին այլ պատկեր են ցուցադրում: Նկատի ունենք. իհարկէ. քաղկեդոնականութեան (կամ աւելի ճիշտ՝ նրա միակամութեան տարբերակի) դաւանաբանութիւնն ընդունելու մասին Կոստանդ կայսեր *առաջարկը*[48] եւ Զուարթնոցի տաճարի շինարարութեան նախաձեռնումը Ներսէս Տայեցու կողմից: Այս ոչ երկարատեւ ժամանակահատուածի համար միակ իրական բողոքը հաւաստիօրէն ներկայացուած է Սեբէոսի կողմից. դա յոյն զօրականների *արտունջներն* էին այն մասին. որ դաւանաբանական տարբերութիւնների հետեւանքով Հայոց եկեղեցիներում նրանց չէին ընդունում «ի հաղորդութիւն մարմնոյ եւ արեան Տեառն» (բարեպաշտ քրիստոնեայի համար լիովին հասկանալի այդ գանգատները մեր պատմիչն այնուամենայնիւ համարում է «ամբաստանութիւն»): Իսկ *այդ պահին* հայերի իրական վերաբերմունքը կայսրութեան նկատմամբ պէտք է արտացոլուած համարել եկեղեցականների ու իշխանների մասնակցութեամբ Դուինի ժողովում ընդունուած. թէկուզ եւ կայսեր ու հայրապետի առաջարկը մերժող Դաւանութեան թղթի ձեւակերպումներում, ուր կարդում ենք, օրինակ. «Չի ահա թագաւորութիւն մեծ եւ հզաւր քան զամենայն թագաւորութիւնս, զոր ոչ ձեռին մարդկան, այլ Աստուծոյ աջովն պսակեալ, զոր ոչ ոք կարասցէ փոխանորդել՝ բայց [=բացի] Քրիստոսի թագաւորութիւն: Նոյնպէս եւ քահանայապետութիւն սուրբ՝ շնորհիւն Աստուծոյ, նախարարք եւ զաւրք՝ քրիստոսասէրք: Եւ մեր՝ պանծացեալ ի լոյս աստուածասէր թագաւորութեանդ՝ անշարժ մնացաք ի մէջ չար եւ անաւրէն թագաւորացն Պարսից...»[49]: Այսպիսով. Սեբէոսի մօտ պահպանուած առարկայական պատկերից երեւում է (անկախ նրանից. որ պատմիչը նման ուղիղ գնահատական չի տալիս). որ զինադադարի պայմանագրի պահանջներից մէկի համաձայն կայսերական զօրքերը Հայաստանում պահելու իրաւունքից զրկուելով[50]. Բիւզանդիան *հայերի հետ միասին*, թերեւս, «յուսավառ» փորձեր էր կատարում գտնելու արաբական առաջխաղացման չվերացած վտանգի առջեւ դաշնակցային յարաբերութիւնները պահպանելու եւ ամրապնդելու այլ գործնական հիմքեր: Եւ դա, մեր կարծիքով, այն իրական հասարակական եւ քաղաքական գործնական հողն էր, որի վրայ կեանքի կոչուեց Զուարթնոցի նման յիրաւի գլուխգործոցի կառուցման բոլոր իմաստներով վիթխարի ծրագիրը:

Իհարկէ, այլ հարց է, որ որոշ ժամանակ անց Թէոդորոս Ռշտունու եւ Մուաւիայի դաշինքի կնքումից յետոյ շատ բան փոխուեց. եւ բիւզան-

դացի զօրականները 652 թ. կէսերին Հայաստանի սահման եկած Կոստանդ Բ-ին կարող էին բողոքներ ներկայացնել նաեւ այնպիսի բնոյթի, ինչպիսիք պահպանել է ականատես Սեբէոսը: Եւ էլ աւելի տարբեր պայմաններ էին առաջ գալու մէկ-երկու տասնամեակ անց, արդէն Գրիգոր Մամիկոնեանի՝ խաղաղ եւ *գրեթէ* ամբողջութեամբ արաբական խալիփայութեանը ենթակայ իշխանապետութեան[51] տարիներին (ինչպէս նաեւ՝ աւելի ուշ, եւ անգամ՝ մինչեւ այսօր), երբ անցեալի ինչ-ինչ յիշողութիւններ կարող էին հիմք դառնալ էպիկական տարրերով լրջօրէն հարստացուած աւանդապատումների առաջացման համար, որոնցում բիւզանդացիների նկատմամբ հայ գործիչների հազիւ նշմարուող առճակատման դրուագները կարող էին «հերոսացուել» մինչեւ քամահրանքի կամ «իմաստուն դաւաճանութեան» աստիճան: Այս իմաստով, կարծէք թէ, ամբողջանում է այն ենթադրեալ սկզբնաղբիւրի վերականգնուող պատկերը, որում, ամենայն հաւանականութեամբ, ամփոփուած են եղել Մարդուցայքի եւ Եփրատի ափի ճակատամարտերի վիպականացուած պատմութիւնները (առաջինում կայսրութեան զօրքերին ըստ էութեան յօգուտ արաբների «հերոսաբար դաւաճանել էր» Թէոդորոս Ռշտունին, իսկ երկրորդում՝ hօր պատուէրով՝ Վարդ Ռշտունին) եւ որը յաջորդ դարում յայտնուել է Ղեւոնդի ձեռքի տակ ու նրա կողմից ներկայացուել այլ սկզբնաղբիւրների տուեալների կողքին, շատ կամ քիչ խաթարուած ենթատեքստերում: Յաւելենք, որ Է դարի միջին տասնամեակները (Սասանեան տիրակալութեան տապալման, «Հայոց իշխանի» գլխաւորութեամբ ինքնավարութեան ամրապնդման, արաբական «իսկական» լծի դեռեւս բացակայութեան պայմաններում), ըստ երեւոյթին պարարտ հող են եղել ուշսասանեան աշխարհիկ մտածողութեան լաւագոյն աւանդոյթներով ոչ վաղ անցեալի գործիչների եւ պատմական դրուագների (այն է՝ հայրերի ու պապերի, փոխանակ՝ անտիկ դարաշրջանում ընդունուած՝ նախապապերի) էպիկականացմամբ տոգորուած նմանատիպ պատմութիւնների առաջացման համար: Այդպիսի բազմաթիւ աւանդապատումներ ի մի են բերուել, օրինակ, Յովհան Մամիկոնեանի կողմից 681 թ., ընդ որում՝ դրանց մի մասը նրա ձեռքի տակ է յայտնուել արդէն ինչ-որ ձեւով ամփոփուած վիճակում՝ «Պարսից պատմութիւն» ընդհանուր վերնագրի տակ[52]:

Վերադառնանք մեր հիմնական քննութեանը: Որ 649 թ. Արծափի գրաւմանը յաջորդած արաբաբիւզանդական հաշտութիւնը, որից անմիջապէս յետոյ Սեբէոսը յիշատակում է Զուարթնոցի շինարարութեան սկզբի մասին, աւելի ճիշտ է վերագրել 650 թ. կէսերից ոչ ուշ ժամանակի, պարզ է դառնում պատմիչի՝ ժամանակագրական նշումներ պարունակող հետագայ շարադրանքի վերլուծութիւնից: Զուարթնոցին նուիրուած հատուածից (գլխից) յետոյ Սեբէոսը նախ անդրադառնում է Քաղկեդոնի ժողովի բանաձեւն ընդունելու բիւզանդացիների «վիշապային» պահան-

ջին ու մեծածաւալ Դաւանութեան նամակով նրա մերժմանը[53]. ընդ որում՝ շարադրանքի ոճից երեւում է, որ իրադարձութիւնները տեղի են ունեցել նախորդ պարբերութիւնում յիշատակուած հաշտութեան պայմանագրի ժամանակից անմիջապէս յետոյ[54]. այնուհետեւ խոհեր է ներկայացնում Իսմայելի զաւակների հզօրացման ու կայսրութիւնում ծայր առած խառնակութիւնների մասին[55]՝ գնահատելով դրանք իբրեւ «զբանս ըստ չարիս՝ հասելոյ ի վերայ մեր ժամանակի վասն սյատառման առաջաստին հին հաւատոյ եւ շնչել ի մեզ մահաբեր խորշակին»[56], որից յետոյ սկսում շարադրել Յազկերտ արքայի *20-րդ* եւ Կոստաս կայսեր *11-րդ տարում* (այսինքն՝ 651/652 թ.)[57] Պարթեւաց երկրում տեղի ունեցած Սասանեան վերջին տիրակալի զօրքերի նկատմամբ արաբների յաղթանակի եւ դաշնակցի հետ դաւաճանաբար վարուած թուրքերի կողմից նրա սպանութեան (651 թ. վերջ) պատմութիւնը, ինչպէս նաեւ՝ ամփոփում Սասանեանների աւելի քան 400-ամեայ տիրակալութեան թեման[58]: Այստեղ պատմիչը նոր պարբերութեամբ յայտնում է մեզ հետաքրքրող ժամանակագրական տուեալը. ըստ սրի՝ Յազկերտին յաղթելուց յետոյ եւ ոգեւորուած դրանից՝ «արքայն Իսմայելի... իբրեւ լցան *ամք Գ պայմանի խաղաղութեան*, ոչ կամեցաւ այլ աւելի առնել խաղաղութիւն *ընդ թագաւորն Յունաց*, այլ հրաման ետ զաւրաց իւրոց՝ ունել գործ պատերազմի... զի բարձցէ եւ զայն եւս թագաւորութիւն յերկրէ՝ *յերկոտասանեկորդ* [Ա երկոտասաներորդ] *ամի թագաւորութեանն Կոստանդի*[59]»:

Հասկանալի է, որ զինադադարի պայմանագրի խախտումը ամենից մեծ հաւանականութեամբ Կոստանդի 11-րդ եւ 12-րդ տարիների սահմանագծին մօտեցնելիս (652 թ. սեպտեմբեր) եւ դրանից պատմիչի նշած «*ամք Գ* պայմանի» յետ գնալիս՝ մենք պէտք է 2 տարուց գուէ մի քանի ամիս աւելի միջակայք ենթադրենք՝ Պրոկոպիոսի ու Մուաւիայի կնքած զինադադարի ժամանակին (ուրեմն՝ 650 թ. կէսերին մօտ) հասնելու համար: Վերստին յիշենք, որ Թէոփանէս Խոստովանողի պնդմամբ՝ «*Երկու տարի* ժամանակով հաշտութիւն կնքուեց»[60]: Ընդսմին, եթէ պէտք է բացատրութիւն գտնել Սեբիոսի ու Թէոփանէսի թուերի տարբերութեան համար, ապա հաւանաբար ճիշտ կը լինի ենթադրել, որ վերջինի մօտ այնուամենայնիւ արտացոլուել է պաշտօնական «2 տարի» ժամկէտը, իսկ հայ պատմիչի նշած «երեք տարին» արդիւնք է անձնական տպաւորութիւններից բխող շարադրանքի պատմողական բնոյթի եւ լրացուցիչ հաստատում է, որ, թերեւս, բուն Հայաստանում ռազմական գործողութիւնները դադարել էին 649 թ. վերջերին[61]:

Տեղին նշենք, որ Յազկերտ Գ-ի վերջին ճակատամարտին ու սպանութեանը վերաբերող հատուածում Սեբիոսը յայտնում է Ատրպատականի իշխանութեան (սպահպետութեան*) մասին իր վերջին տեղեկութիւնը. «հասին զհետ նորա [արաբները՝ Յազկերտի] մերձ ի սահմանս Քուշանաց եւ *կոտորեցին զամենայն զաւրս* նորա: Եւ փախուցեալ ան-

կաւ *ի գաւրս Թէտալաց,* որ էին ի կողմանցն [՞] եկեալ նմա յաւգնականութիւն: Եւ իշխանն Մարաց. *զորմէ վերագոյն ասացի* [՞]. եթէ գնաց յարեւելս. առ արքայն իւրեանց. եւ *ապստամբեալ՝ ի տեղի մի ամրացաւ* եւ խնդրեաց երդումն յԻսմայելացւոցն, եւ գնաց յանապատն ի ծառայութիւն Իսմայելացւոցն: Իսկ զաւրացն Թէտալաց կալեալ զՅազկերտ՝ սպանին…»[62]. Պատմիչի այս շարադրանքի մէջ, իրօք. վաղուց նկատուած որոշ անհարթութիւն կայ: Չնայած «զորմէ *վերագոյն ասացի*» նշումին. նրա մնացեալ բնագիրը Մարաց իշխանի՝ Յազկերտի մօտ գնալու մասին տեղեկութիւն չի պարունակում. ուստի դեռեւս Հ. Հիւբշմանը 1875 թ. գերմաներէն թարգմանութեան՝ այդ բառերին վերաբերող ծանօթագրութեան մէջ հարցնում էր՝ «Որտե՞ղ»[63]. բացի այդ. յստակ չի հասկացւում. թէ ե՞րբ է «Մարաց իշխանը» մեկնել Յազկերտի մօտ եւ ե՞րբ ապստամբել նրա դէմ: Թերեւս. անհրաժեշտ է փորձել հերթական անգամ հնարաւորինս ուղիղ ընկալել հեղինակի, որպէս կանոն, անմիջականութեամբ ներշնչուած խօսքը: Այդ դէպքում կարելի է. «վերագոյն *ասացի*» նշումը անգամ դիտել իբրեւ պարզ մոռացութեան հետեւանք (իհարկէ, լրիւ չբացառելով գրիչների մեղքով տեղի ունեցած ինչ-որ հատուածի կորստի տարբերակը), այնուհետեւ՝ «Մարաց իշխանի» արեւելք «գնալը» վերագրել նկարագրուող իրադարձութեան պահից հաշուած (651 թ. վերջ) հնարաւորին չափ վաղ («*վերագոյն* ասացի») ժամանակի եւ, ըստ այդմ. առաւել մեծ հաւանականութեամբ, համարել Բիւզանդիայի դէմ պատերազմը վերսկսած արաբների կողմից 647 կամ 648 թ. Ատրպատականի վերջնական նուաճման արդիւնք (որը չփոխուեց 650 թ. բիւզանդա-արաբական խաղաղութեան պայմանագրին յաջորդող տարիներին). եւ վերջապէս՝ Յազկերտի դէմ ապստամբելը կապել այն իրավիճակի հետ. երբ արքան կորցրել էր մնացեալ ուժերը («կոտորեցին զամենայն զաւրս նորա») եւ մնացել միայն ատրպատականցիների ու թէտալացիների (տուեալ դէպքում՝ թիւրքիւտների) զօրքերի յոյսին[64]:

Եւ մի վերջին հնարաւորութիւն՝ հաշուարկելու Պրոկոպիոսի ու Մուաւիայի կողմից կնքուած զինադադարի ժամանակը, ստեղծում է Սեբէոսի երկի յաջորդ հատուածներից մէկում Դաւանութեան թուղթն ընդունած ժողովից մինչեւ Կոստանդ կայսեր Դուին գալն ընկած պահի միջեւ 4 տարուայ տարբերութեան յիշատակումը: Սասանեան տէրութեան «բարձումը» եւ դրան հետեւած Իսմայելի արքայի ոգեւորութիւնը յիշատակելուց ու պարբերութիւնը «*յերկոտասաներորդ ամի* թագաւորութեանն Կոստանդնի» արտայայտութեամբ աւարտելուց յետոյ պատմիչը գրում է. «*Եւ ի նմին ամի* ապստամբեցին. Հայք եւ ի բաց կացին ի թագաւորութենէն Յունաց եւ հնազանդեցին ի ծառայութիւն արքային Իսմայելի»[65]: Պարզ է, որ այսպիսով նա թուագրում է նաեւ Թէոդորոս Ռշտունու գլխաւորութեամբ հայ իշխանների եւ Մուաւիայի միջեւ կնքուած դաշինքն ու դրան յաջորդած իրադարձութիւնները կայսեր 12-րդ տարով, որը համա-

պատասխանում է 652 թ. սեպտեմբերից մինչեւ յաջորդ տարուայ սեպտեմբերն ընկած ժամանակին[66]: Ապա հայ-արաբական «ըստ մահու եւ ըստ դժոխոց» դաշինքի կէտերի թուարկումից յետոյ Սեբէոսը բաւականին կանոնաւոր հերթականութեամբ շարադրում է. Կոստանդ Բի 100-հազարանոց բանակի մուտքը Հայաստան (Դերջան) եւ Կարին հասնելը՝ «*յամի ԺԲ-երորդի թագաւորութեան իւրում, ի քսան ամի Իսմայելացւոց տէրութեանն*» (այսպիսով՝ 652 թ. երկրորդ կէսին); Ներսէս Տայեցու եւ շատ հայ իշխանների՝ բիւզանդացիներին միանալը. բայց Թէոդորոս Ռշտունու եւ այլ՝ արաբների հետ կնքուած դաշինքին հաւատարիմ իշխանների դիմադրութիւնը, աւելացնելով՝ «Եւ էին ընդ նմա միաբան Վրացին եւ Աղուանն եւ Սիւնին»; շուտով «իշխան Հայոց հեծելոցն» նշանակուած Մուշեղ Մամիկոնեանի ու կաթողիկոսի արտասուալից աղաչանքների արդիւնքում Կոստանդի՝ ողջ բանակով Հայաստանի կենտրոնական գաւառները մտնելու մտքից հրաժարուելը եւ միայն 20-հազար զինուորներով Այրարատ հասնելն ու «ի տան կաթողիկոսին» հանգրուանելը; առանձին զօրաջոկատներ տարբեր գաւառներ, ինչպէս նաեւ՝ Վիրք, Աղուանք եւ Սիւնիք ուղարկելը, իսկ *Դուինում* մի կիրակի օր «հոռոմերէն, ի հոռոմ երիցու» *պատարագ մատուցելը*, որի ժամանակ կայսեր եւ միւս բիւզանդացիների հետ միասին հաղորդութիւն ընդունեցին ներկայ բոլոր հայ հոգեւորականներն ու իշխանները (բացի եպիսկոպոսներից մէկից, որը թաքնուեց ժողովրդի մէջ, սակայն յետոյ «հրաւիրուեց» կայսեր մօտ եւ մի ծանր զրոյցից յետոյ ինքն էլ ստիպուած ընդունեց քաղկեդոնական ծէսով հաղորդութիւնը); դրանից ոչ շատ անց Կոստանդի՝ շտապ Կոստանդնուպոլիս վերադառնալը (ըստ որում՝ նա «արար իշխանն Հայոց Մժիւսնոս ոմն հանդերձ հայ զաւրուն, որ ի նոցուն կալմանէ»); շուտով նաեւ Ներսէս կաթողիկոսի՝ Տայք տեղափոխուելը (ըստ երեւոյթին ռազմական լուրջ գործողութիւնների ծաւալման պահին); Թէոդորոս Ռշտունու մօտ արաբական 7-հազարանոց օգնական զօրքի հաւաքուելուց յետոյ («եւ նստոյց զնոսա յԱղիովիտ եւ ի Բզնունիս») բիւզանդացիների նահանջը դէպի Տայք («իբրեւ անցին աւուրք ձմերայնոյն, մերձ ի Զատիկն մեծ», որը 653 թ. ապրիլի 21-ին էր), որտեղից նոյնպէս նրանց դուրս մղեցին «մինչեւ մերձ ի ծովեզրն» («առին եւ զՏրապիզոն քաղաք»)[67]; եւ հաւանաբար 653 թ. վերջերին՝ Թէոդորոս Ռշտունու մեկնումը Դամասկոս ու Մուաւիայից զանազան նուէրներ ստանալը (այդ թւում՝ «Եւ իշխանութիւն ետ նմա զՀայս եւ զՎիրս եւ զԱղուանս եւ զՍիւնիս, մինչեւ ցԿապկոհ [*Ա* զԿասպկոխ[68]] եւ ցՊահակն Ճորայ»):

Արդ՝ Դուինի մայր տաճարում քաղկեդոնական ծէսով պատարագից խուսափած եպիսկոպոսի ու կայսեր զրոյցի ժամանակ, այսինքն, ամենայն հաւանականութեամբ՝ 653 թ. սկզբներին (բոլոր դէպքերում՝ ոչ ուշ, քան մինչեւ ապրիլի 21-ի Զատկի նախօրեակը), հայ աւանդապաշտ հոգեւորականը վարձում է արդարանալ այն փաստարկով, որ այդ պա-

հին համատեղ հաղորդուելու կողմնակից դարձած Ներսէս կաթողիկոսը ընդամենը մի քանի տարի առաջ ինքն էր ժողով հրաւիրել Դուինում եւ մերժման պատասխան նամակ ընդունել տուել («Յառաջ քան զայս *չորս* [այդպէ՛ս գրչագրերում - Ա. Յ.] *ամաւք՝ ժողով արար* դա, եւ զամենայն եպիսկոպոսունս այսր ժողովեաց եւ վասն հաւատոյ գիր ետ առնել, եւ կնքեաց նախ իւրով մատանեաւն եւ ապա մեր եւ ապա ամենայն իշխանացն մատանեաւք. եւ գիրն այն այժմ առ դմա է. հրամայեցէ՛ք խնդրել եւ տեսանել»)[69]: Թէպէտ առկայ գրչագրերում մեզ հասել է «*չորս* ամաւք» ընթերցումը, սակայն իրականում Դուինի եկեղեցական ժողովի (ամենայն հաւանականութեամբ՝ 650 թ. ամռան կամ աշնան ամիսներ) եւ նշուած գրոյցի միջեւ տարբերութիւնը, ըստ ամենայնի՝ երեք տարուց էլ պակաս է եղել: Քանի որ ձեռագրերում «Դ» եւ «Գ» տառերը չափազանց յաճախ են շփոթւում[70], իհարկէ, կարելի է ենթադրել, որ այս «Դ ամաւք»-ը եւս բնօրինակում «Գ ամաւք» է եղել: Կամ, ելնելով շարադրանքի պատմողական ու նովելային բնոյթից՝ հնարաւոր է նաեւ չգնալ վերականգնման տարբերակին, այլ համարել, որ Սեբէոսն է ինչ-որ մի պատճառով (տուեալ դէպքում՝ կարեւոր չէ, թէ ինչ) թուաբանութեան մէջ վրիպել (թերեւս անիմաստ է միայն՝ փորձել 3-ից աւելի տարի յետ գնալով՝ խնդրոյ առարկայ ժողովը պատկերացնել Արծափի, Նախճաւանի եւ Մարդուցայքի կռիւների ժամանակներում): Բայց բոլոր դէպքերում՝ մեր ժամանակագրական հաշուարկների համար կարեւորն այստեղ այն է, որ եպիսկոպոսի խօսքում յիշուած 4, կամ՝ ոչ պակաս քան 3 տարի միջակայքը, ըստ ամենայնի, թոյլ չի տալիս Դուինի ժողովի ժամանակը աւելի շատ հեռացնել արաբա-բիւզանդական զինադադարի կնքման ժամանակից (ասենք՝ 650-ից հասցնելով մինչեւ յաջորդ՝ 651 թ.):

Այսպիսով կարելի է ամփոփել, որ Սեբէոսի՝ թէկուզ եւ ուղիղ ժամկէտ չնշող տեղեկութիւնների վերլուծութեամբ, համադրուած ուրիշ հեղինակների տուեալների հետ, մեծ հաւանականութեամբ հնարաւոր է ենթադրել, որ Զուարթնոցի տաճարի շինարարութիւնն սկսուել է 650 թ. առաջին կէսի աւարտին կնքուած արաբա-բիւզանդական հաշտութեան պայմանագրին յաջորդած խաղաղ երկամեակի սկզբում (պայմանականօրէն, մօտաւորապէս՝ այդ տարուայ ամռան վերջերին):

Այս ժամկէտի ճշգրտումից յետոյ, բնականաբար, խօսք չի կարող լինել Կոստանդ Բ-ի՝ 652-653 թթ. Հայաստանում եղած ժամանակահատուածում (մանրամասն նկարագրուած ականատես Սեբէոսի կողմից) Զուարթնոցի կառուցման աւարտի եւ կայսեր մասնակցութեամբ նաւակատիքի մասին, ինչպէս ժամանակին թեթեւօրէն ասուել է Թորոս Թորամանեանի կողմից եւ աւանդաբար կբկնուել ճարտարապետական ուսումնասիրութիւնների մէջ[71]: Նշեցինք, որ պատմագիտութեան մէջ նկատուած է նաեւ Սեբէոսի երկրորդ անդրադարձը Զուարթնոցի շինարարութեան ընթացքին, Ներսէս Շինողի՝ Տայքից վերադարձից յետոյ:

Պատմիչը գրում է, որ Կոստանդ Բ-ի հետ Կոստանդնուպոլիս մեկնեց (653 թ. սկզբին) նաեւ Հայոց կաթողիկոսը. «եւ ընկալուն [*Երից*. ընկալեալ] զնա անդ պատուով. եւ ետուն նմա ինչս եւ արձակեցին անդրէն ի տեղի իւր. եւ եկն դադարեաց ի Տայս *մինչեւ մեռաւ Ռշտունեաց տէրն*. դադարեաց ասպատակ Տաճկին. եւ ապա *յետ վեցերորդի* [*Ա* Զ-երորդի] ամի հալածանացն դարձաւ անդրէն ի տեղի [*Երից*. տեղ]ա] իւր. եւ հաստատեցաւ յաթոռ կաթողիկոսութեան. *փութայր կատարել զշինուած* եկեղեցւոյն, զոր շինեաց ի վերայ պողոտային [*Ա* պողոտայինն] Վաղարշապատ քաղաքի»[72]: Պարզ է, որ ըստ այս ուղիղ վկայութեան՝ 653-ից 6 տարի անց, այսինքն՝ առնուազն՝ 658 թուականին տաճարն աւարտուած չի եղել (չնայած եղել է աւարտին մօտ՝ «փութայր *կատարել* զշինուած»):

Ժամանակային բացեր չթողնելու նպատակով անդրադառնանք նաեւ այս 6 տարիների իրադարձութիւններին, ինչպէս նաեւ Սեբիոսի երկի ամենավերջին ժամանակագրական տուեալներին, որոնք շարադրուած են բաւականին կանոնաւոր հերթականութեամբ: Թէոդորոս Ռշտունու՝ Դամասկոս այցելելու յիշատակութեանը յաջորդող գլխում (ԽԸ՝ ըստ Ստ. Մալխասեանցի գլխակարգութեան) նշելով Մուաւիայի ցամաքային բանակի ու նաւատորմի Քաղկեդոն հասնելը (քիչ անց նաեւ՝ արաբների պարտութիւնը փոթորկի պատճառով, «ի ձեռն աղաւթից աստուածասէր թագաւորին Կոստանդիանոսի»)՝ պատմիչը տալիս է «յամի *երեքտասանեորդի* Կոստանդնու» թուագրումը, որը համապատասխանում է 653 թ. սեպտեմբեր - 654-ի սեպտեմբեր ժամանակահատուածին (էջ 148 (170)): Արաբները պարտութիւն են կրում նաեւ Կապադովկիայում («Եւ միւս զաւրն, որ նստէր ի կողմանս Կապուտկացւոց, արար պատերազմ ընդ զաւրացն Յունաց. զոր եհար Յոյնն, եւ գնաց փախստական ի կողմանս Արուաստանի՝ հաբեալ աւար զՉորրորդ Հայս»), որից յետոյ Սեբէոսը շարունակում է. «Եւ եղեւ *յետ անցանելոյ աշնանային ժամանակին, ի մերձենալ ձմերայնոյ*՝ եկն զաւրն Իսմայելի եւ նստաւ ի Դուին. եւ խորհէր երթալ հարկանել զՎիրս...» (էջ 149 (171)): Ցուրտ ու ձիւնաշատ ճանապարհին կորուստներ կրելով (այսպիսով՝ 654-655 թ. ձմռանը)՝ արաբական այդ զօրաբանակը վերադառնում է «ի կողմանս Ասորեստանի, եւ ի Հայս անիրաւութիւն ինչ ոչ գործեցին», որից օգտուելով՝ «իշխանքն Հայոց, որ ի Յունաց եւ որ ի Տաճկաց կողմանէ՝ Համազասպ եւ Մուշեղ եւ այլն ամենայն, եկեալ ի մի վայր՝ միաբանեցան եւ արարին ընդ միմեանս հաշտութիւն... եւ *անցուցին* խաղաղութեամբ զաւուրս *ձմերայնոյն*, զի եւ զշինականսն ապրեցուցանեն» (էջ 149-150 (171-172)): Սակայն հարկապահանջութեան ինչ-որ սխալ համակարգի կիրառման պատճառով, ըստ պատմիչի՝ երկիրն ընկնում է աղէտալի վիճակի մէջ, իսկ Թէոդորոս Ռշտունին, որը հիւանդութեան պատճառով մեկուսացել էր Աղթամար կղզում, տեսնելով այդ վիճակը՝ «խնդրեաց [յ]իւր[73] զաւրս յԻսմայելաց-

ուզն. զի հարցէ զՀայն եւ հալածական արասցէ, եւ զՎիրս սատակեսցէ ի սուր սուսերի» (էջ 150 (172)):

Յաջորդ հատուածը *Ա* գրչագրում սկսւում է կարմիր գլխատառով («Յայսմ ամի ապստամբեցան Մարք ի ծառայութենէն Իսմայելի...»), եւ Թադէոս Սիհրդատեանցի ու Ստեփանոս Մալխասեանցի հրատարակութիւններում իրաւացիօրէն իբրեւ առանձին գլուխ է ներկայացուած (ԽԹ, էջ 150-151 (172-173))[74]: Արաբական զօրաբանակի՝ Մարաստանի լեռնային շրջանների ապստամբած բնակչութեանը հնազանդեցնել չկարողանալու եւ Հիւսիսային Կովկասում էլ պարտութիւն կրելով «ի կողմանս Տիգրոնի» վերադառնալու մասին ուշագրաւ մանրամասներով պատմող այդ հատուածի սկզբի թուագրումը՝ «Յայսմ ամի...», անկախ նրա ոչ ուղղակիութիւնից, հնարաւոր չէ մեկնաբանել այլ կերպ, քան յիշատակուած վերջին ժմեռուանից սկսուող 655 թուականին վերաբերող: Առանձին գլուխ է նաեւ յաջորդ հատուածը, որի սկիզբը եւս ոչ ուղղակի թուագրում է պարունակում. «Իսկ Մուշեղ Մամիկոնէից տէրն, ապստամբեալ ի Յունաց կողմանէն՝ հնազանդեցաւ ի ծառայութիւն Իսմայելի: Եւ *ի նմին ամի* զաւրն, որ ի Հայաստան աշխարհի, կալան ի ծագաց ի ծագս զերկիրն ամենայն. եւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն եւ ամենայն իշխանքս աշխարհին միաբանեալ՝ հնազանդեցան ի ծառայութիւն եւ ամենայն իրաւք փութային զկամս նոցա կատարել» (Ծ, էջ 152 (173)): Անկախ նախորդ գլխում յիշատակուած իրադարձութիւնների հնարաւոր երկարատեւութիւնից, այս տարին եւս (ճիշտ նոյն կերպ՝ նաեւ յաջորդ պարբերութեան մէջ նշուածը՝ «*Յամին յայնմիկ* ի ձեռն նախանձու եղբաւրն իւրոյ մատնեցաւ երանելի այրն աստուածասէր Արտաւազդն Դիմաքսեան եւ տուաւ ի ձեռն անողորմ դահճի՝ Հաբիբն անուանեալ զաւրավարի, որ նստէր յԱրուճն Աշնակի...»), ելնելով Սեբէոսի երկի այս վերջին մասերի շարադրանքի մանրակրկիտ բնոյթից՝ անհրաժեշտ է համարել 655 թուականը:

Այն փոխւում է միայն յաջորդ պարբերութիւններում. «Եւ էին աւուրք ցրտաշունչ *ձմեռայնոյն*, եւ նեղէր զնոսա Յոյնն... Եւ էր զաւրավար զաւրուն Յունաց Մաւրիճանոս ոմն, զոր ասէին՝ «Այր հաւատարիմ»: Արդ՝ ի հասանել ժամանակի *գարնայնոյն* կազմեցաւ պատրաստեցաւ [*Ա* եւ պատրաստեաց) ի պատերազմ ընդ զաւրուն Իսմայելի...» (Ծ, էջ 152-153 (174)): 656 թ. այս ակտիւացումը, սակայն, նոյնպէս յաջողութեամբ չաւարտուեց Բիւզանդիայի եւ, ըստ ամենայնի, նրա ակտիւացման հետ յոյսեր կապած հայերի գոնէ մի մասի համար[75]: Նրանք պարտուեցին Նախճաւանում ու Կարինում, զօրավար Մաւրիանոսը [*Ա* եւ *Երից*. գրչագրերում երկու անգամ կոչուած նաեւ Մ*ա*րիանոս) նահանջեց Վիրք, իսկ արաբական զօրքը աւարի մատնեց «զամենայն երկիրն Հայոց, զԱղուանս, զՍիւնիս... եւ կալաւ պատանդ զգլխաւոր իշխանս աշխարհին, եւ զկանայս եւ զուստերս եւ զդստերս բազմաց»: Պատմիչը շարունակում է՝ «Եւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն համազգեաւքն իւրովք գնաց ընդ նո-

սա[76]. եւ տարեալ իջուցին զնոսա յԱսորեստան. անդ մեռաւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն. եւ մարմին նորա բերաւ ի գաւառ իւր եւ թաղեցաւ ի գերեզմանի հարց իւրոց» (էջ 153 (174)). եւ մենք պէտք է թուագրենք Հայոց իշխանի թերեւս իրօք կամատր աստանդականութիւնն ու վախճանը նոյն՝ 656 թուականով: Նշենք, որ այդ տարուայ կէսերին նաեւ վախճանուեց Օսման ամիրապետը, որից յետոյ խալիփայութիւնն աստիճանաբար ընկղմուեց երկպառակչական պատերազմների յորձանուտը:

Սեբէոսն այնուհետեւ այլ թուագրում չունի մինչեւ Տայքից վերադարձած (ըստ ամենայնի՝ Դուինի կաթողիկոսարան) Ներսէսի հալածական կեանքի *վեցերորդ տարուայ* նշումը: Այդ պարբերութիւնից առաջ նա միայն յայտնում է. «Եւ *ունէր* [հասկանա՛լ՝ «ստացաւ», «ձեռք բերեց» (Թէոդորոսի վախճանից յետոյ) - *Ա. Յ.*] զիշխանութիւն Հայոց աշխարհիս Համազասպ Մամիկոնէից տէրն, որդի Դաւթի, այր առաքինի յամենայն դէմս»: Սակայն, կարծում ենք, որ կաթողիկոսի վերադարձի ժամանակի մասին ասուածի ոճը՝ «*մինչեւ մեռաւ* Ռշտունեաց տէրն, *դադարեաց* ասպատակ Տաճկին, *եւ ապա յետ* վիցերրոյդի *ամի* հալածանացն...», ստիպում է մտածել, որ պատմիչն արդէն իր նախորդ տարուայ նկարագրութիւնից (ծմռանը բիւզանդացիների ակտիւացումից մինչեւ Թէոդորոսի մահն ու Համազասպի իշխանութիւնը) անցում է կատարել առնուազն յաջորդ տարուան, այսինքն՝ 657 թուականին: Այստեղ հակառակ խնդիր է առաջ գալիս. իրականում 653 թ. սկզբից հաշուած մինչեւ 657 թ. զգալիօրէն պակաս է (մէկ տարի եւ աւելի), քան բնագրի նշած 6 տարին: Ուստի դեռ անհրաժեշտ է ընտրութիւն կատարել, թէ ի՞նչ է մեր առջեւ՝ մի վաղ գրչական վրիպա՞կ (օրինակ՝ «հինգերորդի ամի» փոխանակ «վեցերորդի ամի»), թէ՞ պատմողական ոճի արդիւնքում (այսինքն՝ երբ բացարձակ ճշգրտութիւն չի պահանջւում) Սեբէոսի թոյլ տուած ինչ-որ կարգի թուաբանական սխալ (Էդուարդ Դանիէլեանը մէկ այլ հնարաւոր լուծում է առաջարկել, ըստ որի՝ պատմիչի նշած 6 տարին անհրաժեշտ է հաշուել ոչ թէ 653-ից, այլ այն՝ աւելի վաղ ժամկէտից, երբ ենթադրաբար Թէոդորոս Ռշտունու հետ տարաձայնութիւնների պատճառով Ներսէսը հեռացել էր Տայք. Սեբէոսից յայտնի է, որ նա 652 թ. Կարին հասած կայսեր մօտ եկաւ «ի Տայոց»[77]): Թերեւս դժուար է միայն մտածել (թէպէտ տեսականօրէն դա բացառուած չէ), որ իր երկի այս աւարտական կտորներում շատ կանոնաւոր շարադրանք մատուցող պատմիչը ինչ-որ պատճառով որոշել է ոչինչ չյայտնել արանքում բաց թողած տարիներից մէկի մասին:

Թէոփանէս Խոստովանողի տեղեկութիւնները քիչ են օգնում այս ժամանակահատուածի մասին (654-657 թթ.) Սեբէոսի հաղորդումներն ստուգելու հարցում: Բիւզանդացի ժամանակագիրը Կոստանդ Բ-ի 13-րդ (653-654 թթ.) եւ աշխարհաստեղծման 6146 (654) թուականի համար յայտնում է միայն արաբների նաւատորմի՝ Էգէեան ծով, իսկ Մուաւիայի

ցամաքային բանակի՝ Կապադովկիայի Կեսարիա հասնելու մասին. իսկ յաջորդ. այսինքն՝ 655 թ. արդէն դնում է իրականում 656 թ. յունիսին տեղի ունեցած Օսման խալիփայի սպանութիւնը («Այդ տարին էթրիբացիք սպանեցին արաբների առաջնորդ Օթմանին... Այդ առթիւ արաբների մէջ յուզումներ առաջացան. անապատում ապրողները Ալիին... էին ուզում... իսկ Ասորիքում եւ Եգիպտոսում ապրողները՝ Մուաւիային: *Յաղթեց Մուաւիան* եւ իշխեց 24 տարի»)[78]: Յաջորդ մի քանի տարիների նկարագրութեան ուշադիր քննութիւնից եւս պարզ է դառնում. որ Թէոփանէսի թուագրումները իրական ժամանակագրութիւնից յետ են մնում 1-2 տարի: Այսպէս. 656 թ. տակ (աշխարհաստեղծման՝ 6148, Կոստասի՝ 15-րդ, Մուաւիայի՝ 1-ին տարի) նկարագրում է Ալի ամիրապետի բանակի առաջին մեծ պարտութիւնը Բաբբալիսոսի մօտ. որն իրականում տեղի է ունեցել 657-ին: 657-ի տակ (աշխարհաստեղծման՝ 6149, Կոստասի՝ 16-րդ - տարի) յիշատակւում է կայսեր արշաւանքը բալկանեան սլաւոնների դէմ, որն իրականում վերաբերում է 658 թուականին[79]: 658-ի տակ է դրւում (աշխարհաստեղծման՝ 6150, Կոստասի՝ 17-րդ տարի) արաբա-բիւզանդական զինադադարի պայմանագրի կնքումը («Այդ տարի Մուաւիայի առաջարկութեամբ հռոմայեցիների եւ արաբների միջեւ հաշտութիւն կնքուեց: Պատճառը արաբների մէջ բռնկուած ապստամբութիւնն էր... արաբները հռոմայեցիներին վճարելու էին օրական հազար դահեկան, մէկ ձի եւ մէկ ստրուկ»), որը, ինչպէս երեւում է ի թիւս այլ աղբիւրների՝ նաեւ «684 թ. պատմութեան» ժամանակագրական տեղեկութիւններից, աւելի ճիշտ է վերագրել 659 թուականին[80]: Եւ վերջապէս. 659-ի տակ (աշխարհաստեղծման՝ 6151. Կոստասի՝ 18-րդ, Մուաւիայի՝ 4-րդ տարի) նշւում է Ալի ամիրապետի մահուան մասին («Երբ արաբները Սապֆիում էին գտնւում. *սպանուեց* Պարսկաստանի [°] *Ալին*: Այդպիսով Մուաւիան *դարձաւ միահեծան թագաւոր*, հաստատուեց Դամասկոսում. որտեղ եւ կենտրոնացրեց դրամական գանձերը»), որն իրականում տեղի է ունեցել 661 թ.[81]: Աւելացնենք. որ նոյնը շարունակւում է յաջորդ մի քանի տարիների համար. օրինակ. շուրջ երկու տարուայ շեղում է պարունակում Թէոփանէսի նկարագրութիւնը Կոստանդ կայսեր՝ Կոստանդնուպոլսից Սիրակուզ տեղափոխուելու մասին. որը թուագրուած է նրա 20-րդ եւ աշխարհաստեղծման 6153 տարուանով, այսինքն՝ 661-ով. այնինչ իրականում տեղի է ունեցել 663 թ.[82], իսկ դրանից երեք տարի անց (աշխարհաստեղծման 6156. Կոստասի 23-րդ տարի). այսինքն 664 թ. համար ասւում է. որ «Այդ տարի պահոց շփոթում եղաւ», այնինչ աստղագիտական հաշուարկներով՝ ծուզատիկ է եղել յաջորդ՝ 665 թուականին[83]:

Զուարթնոցի կառուցումն աւարտին հասցնելու Ներսէսի ջանքերի մասին նշումից յետոյ Սեբէոսը շարադրում է արաբների մասին խոհերի (իրականում՝ հինկտակարանեան օրինակներով համեմուած փնովման) ծաւալուն հատուածը. որը տարաբախտաբար Գեւորգ Աբգարեանի կող-

մից ընկալուել է իբրեւ երկի հեղինակային յիշատակարան եւ հանուել ու տարուել բնագրի վերջ[84]: Մի կողմ դնելով բանասէրի կատարած բարգմանութիւնը՝ պատմիչի խօսքի սկիզբը պէտք է հասկանանք այսպէս. «Արդ՝ թէպէտ եւ [=չնայած] վայրապար [=պարզ ու հասարակ] զրուցեալ առղեցից [=պատմ*ելու* (զրուցեալ տող*ելու*) *էի* (պայմանական անցեալով)] զբանս ի կարգի պատմութեանս [=իմ պատմութեան *հերթականու-թեամբ*[85]] ըստ անհանճար խորհրդոյ մտացս իմոյ[86]. եւ ոչ ըստ արժանաւոր շնորհի գիտութեան. այլ սակայն անդր հայեցեալ ի կարգս ուսումնասիրացն՝ եւ [=նաեւ] հաստատեցից [=հաստատելու եմ (պայմանական ներկայով)] մարգարէական բարբառովն...»[87]: Իսկ անէծք յիշեցնող այս խոհաբանութեան աւարտն է. «Եւ ապա յեւս [*Ա* ելս] բանիցն ասէ. «Մերձ է աւր կորստեան նոցա. հասեալ է պատրաստութեամբ Տէր ի վերայ նոցա», որ եւ *այս եւս կատարեսցի* ի ժամանակի իւրում»: Սրան աւելանում է այն, որ *Ա* գրչագրում հատուածից առաջ մեծ խաչանշան է դրուած, իսկ Թ. Միհրդատեանցի (նաեւ՝ Ստ. Մալխասեանցի) հրատարակութիւնում՝ *տող է բաց թողած*, որը, ինչպէս բնագրի նախորդ մասերում կարմիր գլխատառերն էին, հատուածաբաժանում (գլխաբաժանում) է ցոյց տալիս (նոյն հաւանականութեամբ՝ հէնց հեղինակային): Իսկ այս ամենից բխում է, որ «Իսմայելի որդիների» մասին «խոհերը» հեղինակի սիւժետային մտայղացման իմաստով նախ եւ առաջ վերաբերում են (պարզապէս՝ նախաբան լինելով) այն *յաջորդող*, մէկ պարբերութիւն անց գրուած նախադասութեանը, որը պատմում է իրօք անէծքի արժանի արաբական վայրենագործութիւնների մասին, եւ յետոյ միայն՝ մի քանի պարբերութիւն անց այն ընդարձակ հատուածին (բազմացած ամիրապետերի երկպառակչական կռիւների ու դրանց հանգուցալուծման մասին), որով աւարտում է Սեբէոսի բնագիրը:

Կատարուած վերլուծութիւնից նաեւ երեւում է, որ քննարկուած «խոհերի» հատուածը նախորդող եւ յաջորդող սիւժէները ոչ թէ տարաբաժանող, այլ տրամաբանօրէն իրար կապող նշանակութիւն ունի: Ըստ այդմ՝ յաջորդող նախադասութեան սկզբի թուագրումը՝ «*Ի նմին ամի* ի բաց կացին Հայք ի ծառայութենէ Իսմայելացւոցն եւ հնազանդեցւան անդրէն ի ծառայութիւն թագաւորին Յունաց», կարող է վերաբերել միայն նախորդող հատուածում նշուած տարուան («յետ վեցերորդի ամի հալածանացն [Ներսէսի]»), այսինքն, ինչպէս տեսանք վերեւում՝ 657 թ. (թէպէտ կրկնենք, որ լրիւ հնարաւոր չէ բացառել նաեւ յաջորդ՝ 658 թուականի տարբերակը): Իր երկի այդ վերջին թուագրման տակ Սեբէոսն ամփոփում է Բիւզանդիային հնազանդուելու մանրամասները: Նախ նա յաւելում է. «Եւ արար արքայ Կոստանդին զՄամիկոնէից տէր զՀամազասպ *կիւրապաղատ* [*Ա* կորապաղատ] եւ ետ նմա *գահոյս արծաթիս* եւ *զիշխանութիւն* [*Երից*. զիշխանութիւնն] *աշխարհին* Հայոց. եւ *պատիւս այլոց իշխանացն*, եւ գանձս զաւրացն»[88]: Ուշագրաւ է, որ Կոստանդ Բ-ին

գրած հնազանդութեան «հրովարտակին» ի պատասխան՝ նրա կողմից չափազանց նման պատիւների է արժանանում նաեւ Աղուանից իշխան Ջեւանշէրը: Ըստ «684 թ. պատմութեան» «եւ խնդրեց հրամայէր գրել երդմունս եւ ունել համամիտ խաղաղութիւն: Եւ պարգեւս մեծամեծս շնորհէր եւ [*bclr չիք* եւ] *գահոյս արծաթիս* քանդակակերտ թիկամբք ոսկեզաւծ[89] եւ հանդերձս ոսկեմանեալս... Եւ առնէ զնա *պռոտոն պատրիկ*, եւ տայր բերել պատրկութեան եւ հիպատութեան եւ ապ[ու]հիւպաքոսութեան [*bclr* ապեւհիւպաքոսութեան] եւ ստրատելատութեան եւ ելխստութեան [*a չիք* եւ ելխստութեան] *հազար երկերիւր արկանց պատիւ...*». քիչ անց, Կոստանդի «հրովարտակում» Ջեւանշէրը մեծարւած է իբրեւ «Աղուանից իշխան, ապուհիպատ [*bclr* ապուրիպատ] եւ պռոտոն պատրիկ եւ Արեւելեաց [*bclr* Արեւելից] կուսակալ»[90]:

Հայերի քաղաքական կողմնորոշման փոփոխութեանն ի պատասխան՝ արաբները սպանում են պատանդ տարուածների մեծ մասին՝ 1775 մարդու («*Յայնժամ* ետես արքայն Իսմայելի, եթէ ի բաց կացին Հայք ի ծառայութենէ նոցա, զամենայն պատանդսն, զոր տարեալ էին ի [*Երից. չիք* ի] յերկրէն՝ ոգիս իբրեւ ՌՉՀԵ, սատակեցին զամենեսեան ի սուր սուսերի, եւ մնացորդքն սակաւք, թուով իբրեւ ԻԲ, որք ոչ դիպեցան ի տեղւոյն, այն միայն ապրեցան»[91]): Այնուհետեւ, ըստ Սեբէոսի՝ արաբների ենթակայութիւնը մերժելուն չեն կարողանում համաձայնել Մուշեղ Մամիկոնեանը (որի 4 որդիները պատանդ էին խալիֆայութիւնում) եւ ուրիշ իշխաններ՝ անունով չնշուած, որոնք ձերբակալւում են (ըստ երեւոյթին՝ հէնց Համազասպ Հայոց իշխանի կողմից) ու թողնում կայսեր հայեցողութեանը, վերջինս միւսներին ազատ է արձակում, սակայն Մուշեղին պահանջում է իր մօտ ուղարկել («Արդ՝ զայլ իշխանսն, զոր ձերբակալ ածարեալ էին, հրամայեաց թագաւորն թողուլ ի բաց, բայց զՄուշեղ *առ ինքն խնդրեաց*»), ընդ որում, չնայած պատմիչը մոտիւը չի նշում, սակայն շարադրանքի տոնից երեւում է, որ Կոստանդի նպատակը, թերեւս, ամենեւին էլ չար չի եղել[92]: Նշւում է նաեւ արաբներին ենթաքկուելը դադարեցրած Հայոց իշխան Համազասպ Մամիկոնեանի (որի եղբայրներից մէկն էր պատանդ Ասորիքում[93]) եւ հայ աւագանու մեծ մասի գլխաւոր պատճառաբանութիւնը, խալիֆայութիւնից նոր պատանդներ էին պահանջում՝ «բայց զայն [=բացի դրանից[94]]՝ եւ այլ եւս յիշխանացն հանդերձ կանամբք իւրեանց խնդրէին առ ինքեանս յԱսորիս»: «Վասն այնորիկ, - գրում է հեղինակը, - լաւ համարեալ զմահ քան զկեանս՝ ի բաց կացին ի ծառայութենէ նոցա եւ *հապճեպ երթեւեկով* հնազանդեցան ի ծառայութիւն թագաւորին Յունաց՝ հանդերձ միաբանութեամբ իշխանացն եւ զաւրացն Աղուանից[95] եւ իշխանացն [*Ա* իշխանս] աշխարհին Սիւնեաց՝ հանդերձ աշխարհաւն իւրեանց...»:

Տեղին նշենք, որ Սիւնեաց իշխանների մասին այստեղ շարունակւող բացատրական արտայայտութիւնը («որք [*Ա* որ] լծեալ էին յասա-

ջւզոյն յաշխարհագիրն Ատրպատականի. *մինչեւ բարձաւ թագաւորութիւնն Պարսից* եւ *տիրեաց Իսմայելացին*. նոքա անդէն նուաճեալ միաբանեցան ընդ Հայոց») Սեբէոսի շարադասութեան որոշ խրթինութեան հետեւանքով պատմագրութեան մէջ ժամանակագրական սխալ մեկնաբանութիւն է ստացել: Թէկուզ եւ պակասաւոր թուացող այդ արտայայտութեան[96] ճշգրիտ ընթերցման հիման վրայ Սիւնիքի դուրս գալը Իրանի հիւսիսային սպահպետութեան ուղիղ ենթակայութիւնից. որի կենտրոնական շահր-աշխարհը Ատրպատականն էր (գոնէ Զ դարի երրորդ քառորդում՝ Փայտակարան կենտրոնով)[97], պէտք է թուագրուի ոչ թէ պատմիչի նախորդող նախադասութիւնների տեղեկութիւնների ժամանակով (խալիփայութեանը ենթարկուելուց հրաժարուելը եւ կայսրութեանը հնազանդութիւն յայտնելը 657 թ.)[98], այլ հէնց Սասանեան *թագաւորութեան կործանման* եւ նրա վերջին մնացորդներում (այդ թւում՝ Ատրպատականում) վերջնականապէս *արաբական տիրապետութեան հաստատման* պահով. այսինքն՝ 652 թ.: Յիշենք. որ այդ նոյն տարում կնքուեց արաբա-հայկական դաշինքի պայմանագիրը («Եւ *ի նմին ամի* ապստամբեցին Հայք ... եւ հնազանդեցան ի ծառայութիւն արքային Իսմայելի»[99]). որում շատ մեծ հաւանականութեամբ կարող էր արծարծուած լինել նաեւ (եթէ. բնականաբար, ենթադրենք, որ Սեբէոսը յարմար չի գտել իր տեղում վերարտադրելու պայմանագրի բոլոր կէտերը) Սասանեան սպահպետութիւնների վերացումից յետոյ մինչ այդ շուրջ 8 տասնամեակ առանձին շահրի կարգավիճակով (ընդհանուր ստմամբ) ապրած Սիւնիքի՝ Հայոց շահր-աշխարհի կազմի մէջ վերադարձի խնդիրը: Վերջինիս լուծումը հաստատապէս աւարտուել էր յօգուտ Հայաստանին ենթակայութեան գոնէ 653 թ. վերջերին Դամասկոս մեկնած Թէոդորոս Ռշտունու եւ խալիփայութեան փոխարքայ Մուաւիայի պայմանաւորուածութիւններով. որոնց մասին պատմիչը գրում է. «Եւ *իշխանութիւն* ետ նմա [Թէոդորոսին - *Ա. Յ.*] զՀայս եւ զՎիրս եւ զԱղուանս *եւ զՍիւնիս*. մինչեւ ցԿապկոհ եւ ցպարհակն Ճորայ. եւ... պայման էր եդեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»[100]: Այսպիսով պէտք է համարենք. որ 652 թ. վերաբերող տեղեկութիւնները շարադրելիս Սեբէոսին չի յաջողուել գրել կենտրոնական Հայաստանի կազմի մէջ Սիւնիքի վերադարձի մասին. սակայն երկի աւարտական մի հատուածում, ուր կարող էր սխալ ընկալուել նահանգի կարգավիճակը (օրինակ՝ Աղուանք աշխարհին հաւասար). պատմիչը կարեւոր է գտել յատուկ նշում կատարել մի քանի տարի առաջ տեղի ունեցած այդ փոփոխութեան մասին:

Արդ, աւարտելով Բիւզանդիային «հապճեպ երթեւեկով» հնազանդութիւն յայտնելու հանգամանքների ու հետեւանքների ներկայացումը՝ Սեբէոսը շարադրում է իր երկի վերջին հատուածը՝ արաբական զօրքերի միջեւ սկսուած երկպառակչական պատերազմների մասին, առանց որեւէ *նոր թուագրում նշելու* («Արդ՝ առաքեաց Աստուած խռովութիւն ի մէջ

բանակացն որդւոցն Իսմայելի...» եւ այլն)[101]: *Ա* գրչագրում այն խաչան-շանով առանձնացուած է նախորդող բնագրից, ինչը թոյլ է տալիս են-թադրել, որ հեղինակի մտայղացման մէջ դա, հաւանաբար, հէնց առան-ձին հատուած է եղել: Հաշուի առնելով երկի աւարտման հանգամանքը՝ պատմիչի շարադրած փաստերը (յաճախ եզակի՝ մեզ հասած տարալե-զու վկայութիւնների շրջանակում) չեն կարող գնահատուել այլ կերպ, քան իրադարձութիւնների՝ հարեւան երկրում թողած անմիջական տպա-ւորութիւնների տակ ստեղծուած ամենահաւաստի պատկերը՝ առանց հե-տագայ ընդհանրացումների ոգով «վերամշակման»: Մնացեալ աղբիւր-ները կարող են օգնել միայն հայ հեղինակի վկայութիւնների ժամանա-կագրութիւնը ճշգրտելու խնդրում:

Ըստ Սեբիոսի՝ արաբական զօրքերը սկզբում իրար դէմ են դուրս գալիս *չորս* մասի բաժանուած. «մասն մի՝ այն, որ ի Հնդկաց կողմանէն, մասն մի՝ այն, որ ունէին զԱսորեստանն եւ զկողմանս հիւսիսոյ, մասն մի՝ այն, որ յԵգիպտոս եւ ի կողմանս Թէտալացւոց[102], մասն մի՝ ի կողմանս Տաճկաց եւ յԱսկարոն [*Երից.* յԱսկարաւն] կոչեցեալ տեղւոջ. եւ սկսան կռուել ընդ իրեարս...»[103]: Դրանցից վերջին երկուսը մի պահ դաշնակցում են («այն, որ *յԵգիպտոս* եւ որ *ի կողմանս Տաճկաց*»), սպանում իրենց «թագաւորին» եւ ուրիշին հռչակում («եւ այլ թագաւոր նստուցին»): Այս-տեղ պատմիչի մօտ ի յայտ է գալիս Մուաւիան. «Իսկ այն իշխանն, որ ի կողմանս Ասորեստանի էր՝ *Մաւիաս* անուն, *իշխան* նոցա, որ *էր երկրորդ թագաւորին իւրեանց*, իբրեւ ետես զեղեալսն, միաբանեալ զզաւրս իւր՝ գնաց եւ նա յանապատն եւ սպան զայն եւս արքայ, զոր նոքայն նստու-ցեալ էին: Եւ ետ մարտ ընդ *զաւրացն, որ ի Տաճկաց կողմանէ*, եւ եհար զնոսա կոտորմամբ մեծաւ եւ դարձաւ անդրէն յաղթութեամբ յԱսորես-տան» (ընդ որում՝ ճիշտ կը լինի ուշադիր լինել այն հանգամանքի նկատ-մամբ, որ Սեբիոսն օգտագործում է «իշխան», «երկրորդ թագաւորին իւ-րեանց» եզրերը՝ դեռեւս ոչինչ չասելով նրա այլ յատկանութիւնների մա-սին): Շարունակութեան մէջ պատմիչը պարզաբանում է տալիս վերը նշուած դաշինքի երկրորդ մասում՝ Եգիպտոսում կատարուած դէպքերի վերաբերեալ. «Իսկ այն զաւրն, որ յԵգիպտոս, *միաբանեալ ընդ թագաւո-րին Յունաց*՝ եւ [=նաեւ] *արար հաշտութիւն եւ միաւորեցաւ*. եւ բազմու-թիւն զաւրաց՝ իբրեւ հնգետասան հազարաց, հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան»: Դրանից յետոյ, կարծէք, աւարտելով պատերազմի մի փու-լի նկարագրութիւնը՝ Սեբիոսը գրում է ռազմական գործողութիւնների էլ աւելի թէժացման մասին («Եւ սաստկացաւ արիւն կոտորածին անհուն բազմութեանց ի մէջ բանակացն Իսմայելի, եւ գործ պատերազմին տագ-նապէր զնոսա՝ զմիմեանս սատակելով: Եւ ոչ կաբէին դադարել իրքը մի ի սրոյն եւ ի գերութենէն եւ ի սաստիկ պատերազմացն, որ ի ծովու եւ ի ցամաքի»): Ահա այստեղ նորից ի յայտ է գալիս Մուաւիան, սակայն ար-դէն թագաւոր հռչակուելու եւ խաղաղութիւն հաստատելու համար («մին-

չեւ *զաւրացաւ* Մաւիաս եւ յաղթեաց ամենեցուն: Եւ *հնազանդեցուցեալ* ընդ ինքեամբ՝ եւ [=նաեւ] թագաւորէ ի վերայ կալուածոյ [*ուշ ԴԴ* կալուածոց] որդւոցն Իսմայելի եւ առնէ *խաղաղութիւն* ընդ ամենեսին»), որի յիշատակութեամբ էլ աւարտւում է Սեբիոսի երկի շարադրանքը:

Դէպքերին ժամանակակից եւ առնուազն ականջալուր հայ պատմիչի այս վերջին վկայութիւնների համադրումը այլ աղբիւրներից յայտնի եւ ժամանակագրական հաստատումներ ունեցող տուեալների հետ թոյլ է տալիս նկատել երկու կարեւոր հանգամանք: Նախ՝ որ հեղինակի պատկերացմամբ՝ Մուաւիան ամիրապետութեան մրցավազքի մէջ մտել է ոչ միանգամից (ինչպէս որ ներկայանում է, օրինակ, Թէոփանէս Խոստովանողի մօտ), եւ պէտք է ենթադրել, որ ամենայն հաւանականութեամբ՝ նախորդ Օսման ամիրապետի օրինական ժառանգորդ ու վերջին «ուղղահաւատ» խալիփայ Ալիին նա սկզբում հաւատարիմ է եղել («...էր երկրորդ *թագաւորին* իւրեանց»): Եւ երկրորդ՝ Սեբիոսը չգիտի իր վերջին նախադասութեան հերոսի գլխաւոր հակառակորդին՝ Ալի ամիրապետին 661 թ. մայիսին վերջնականապէս պարտութեան մատնելու եւ սպանելու մասին (փոխարէնը՝ «*հնազանդեցուցեալ* ընդ ինքեամբ»)[104], սակայն չնայած դրան գրում է Մուաւիայի անվերապահ յաղթանակի («յաղթեաց ամենեցուն»), ապա *արաբական* բոլոր տիրոյթներում («ի վերայ *կալուածոյ* պդւոցն Իսմայելի»[105]) «թագաւորելու» եւ բոլորի հետ խաղաղութիւն հաստատելու մասին («առնէ խաղաղութիւն ընդ ամենեսին»): Ակնյայտ է, որ այդպէս հնարաւոր էր գրել միայն այնպիսի մի պահի, երբ նախկին փոխարքայի իրականում ոչ վերջնական յաղթանակը այնուամենայնիւ կարող էր գոնէ ինչ-որ չափով բաւարար լինել *Հայաստանում ստեղծագործող պատմիչի համար* արձանագրելու արաբների երկպառակչական պատերազմների (թէպէտ իրականում՝ *ծաւալուն* ռազմական գործողութիւնների) *աւարտը*, Մուաւիայի *տիրակալութիւնը* եւ «ընդ ամենեսին» *խաղաղութեան* հաստատումը: Եթէ յիշենք, որ Թէոփանէս Խոստովանողի հաղորդումների համաձայն՝ Բարբալիսոսի մօտ Մուաւիայից Ալիի կրած առաջին մեծ պարտութիւնից (657 թ.) 2 տարի անց եւ նրա սպանուելու նախորդ տարում[106] «Մուաւիայի առաջարկութեամբ հռոմայեցիների եւ արաբների միջեւ *հաշտութիւն կնքուեց*»[107], ապա դժուար չէ նկատել, որ հէնց այդ պայմանագրի կնքմանն սւնմիջականօրէն յաջորդած ժամանակը, այսինքն՝ 659 թուականն է այն յարմար պահը, երբ Բիւզանդիային վերստին հնազանդութիւն յայտնած ու խաղաղ շինարարութեամբ նախորդ տարիների ծանր վէրքերն ամոքելուն լծուած Հայաստանում կարող էր առաջանալ Մուաւիայի տիրակալութեան եւ խաղաղութեան վերջնական հաստատման տպաւորութիւնը:

Տեղին նշենք, որ Թէոփանէսը Օսման խալիփայի մահուանը յաջորդած իրավիճակի ընդհանուր եւ գոնէ սկզբի վտլի համար խառնակ նկարագրութեան մէջ (ըստ որի՝ Մուաւիան փաստօրէն ամիրապետ է

դառնում Օթմանից անմիջապէս յետոյ) այնուամենայնիւ յայտնում է մի կարեւոր տեղեկութիւն, որի հաւաստիութիւնն ընդունելու դէպքում, թւում է, թէ հնարաւորութիւն է առաջանում աւելի ճշգրիտ ընկալելու ուժերի քաղաքական դասաւորութիւնը: Ժամանակագրի խօսքերով՝ Ալիի եւ Մուաւիայի պայքարում վերջինիս կողմում էին բացի Ասորիքից նաեւ «Եգիպտոսում ապրողները»[108]: Դրա հետ համադրելով երկպառակչական պատերազմի եգիպտոսեան դրուագների մասին Սեբէոսի վերը յիշատակուած սուելի կանոնաւոր տուեալները (վերջում՝ «այն զաւրն, որ յԵգիպտոս, *միաբանեալ ընդ թագաւորին Յունաց*...» եւ այլն)՝ թերեւս արդարացուած է առաջ քաշել այն ենթադրութիւնը, որ Բիւզանդիայի հետ Մուաւիայի յայտնի իմաստով «համագործակցութիւնն» սկսուել էր 659 թ. պայմանագրի կնքումից շատ աւելի վաղ: Ընդ որում՝ դրա հետ զուգէ կապուած են ոչ միայն Բարբաղիոսի ճակատամարտին յաջորդած տարում Կոստանդ Բ-ի գլխաւորութեամբ բիւզանդակւն բանակի՝ դէպի արեւմուտք («Սկլաւինիայի դէմ») շատ մեծ եւ յաջող արշաւանքի իրագործումը (ըստ Թէովփանէսի), այլեւ հէնց հայերի՝ կայսրութեանը հնազանդութիւն յայտնելը 657 թ. (ըստ Սեբէոսի): Նշենք, որ այս լուծման դէպքում է լրիւ հասկանալի դառնում, որ Եգիպտոսի՝ «ընդ թագաւորին Յունաց» միաբանուած արաբական զօրքը, հայ պատմիչի վերը բերուած արտայայտութեան համաձայն՝ հաշտւում ու միաւորւում է («եւ արաբ հաշտութիւն եւ միաւորեցաւ») հէնց Մուաւիայի հետ:

Այսպիսով, Սեբէոսի երկի մեզ հասած վերջին տողերը վերաբերում են 658-659 թթ. իրադարձութիւններին: Այդ վերջին տողերը ենթադրած պահի եւ պատմիչի՝ մէկ էջ առաջ նշած վերջին թուագրման (Ներսէս կաթողիկոսի «հալածանքների» վեցերորդ եւ Բիւզանդիային հնազանդութիւն յայտնելու «առաջին» տարին՝ 657 կամ 658 թ.[109]) միջեւ ընկած մէկ տարուց քիչ աւելի ժամանակը, ըստ էութեան, այնքան մեծ չէ, որպէսզի երկու ժամկէտների միջեւ թուագրման այլ նշման բացակայութիւնը մեծ կասկած առաջացնի: Սակայն մեզ համար կարեւոր է այն, որ այդպիսի նշման բացակայութիւնը լրիւ ւսնիակասական ու ամբողջովին հասկանալի կը դառնայ հէնց այն դէպքում, եթէ համարենք, որ վերջին թուագրումից («*Ի նմին ամի* ի բաց կացին Հայք...») շուրջ մէկ տարի անց է կատարուել ոչ միայն երկի վերջին նախադասութեան մէջ նշուած իրադարձութիւնը, այլ նաեւ այդ նոյն վերջին նախադասութեան գրառումը: Այս պարագայում է, որ իր երկի շարադրանքը շատ վաղուց սկսած[110] եւ (ի բարեբախտութիւն մեր ժամանակների ւսղբիւրագէտի) նրա շարունակմանը պարբերաբար վերադարձող Սեբէոս պատմիչը եթէ ցանկանար նոր թուագրում նշել, ապա դա լինելու էր իր ապրած ընթացիկ տարուայ նշումը, եւ այդ դէպքում՝ մի աւարտական յիշատակագրութեան մէջ (այդպիսին չունենք ո՛չ երկի վերջում, ո՛չ էլ միջնամասի որեւէ հատուա-

ծում. ուստի պէտք է համարենք, որ շարադրանքի դադարումը հեղինակի կողմից, ամենայն հաւանականութեամբ, ծրագրուած չի եղել):

Այս տրամաբանական եզրայանգումը գումարւում է վերը քննուած այն հանգամանքներին, որ պատմիչի վերջին արտայայտութիւնները 659 թ. կնքուած բիւզանդա-արաբական հաշտութեան պայմանագրին անմիջապէս յաջորդած ժամանակահատուածում գրուածի տպաւորութիւն են թողնում, եւ որ նա ծանօթ չէ աւելի ուշ տեղի ունեցած իրադարձութիւններին (օրինակ, Ալիի սպանութեամբ Մուաւիայի 661 թ. վերջնական յաղթանակին, իսկ ստորեւ կը տեսնենք՝ նաեւ դրան նախորդած մէկուկէս տարիների անցքերին): Այդպիսով, կարող ենք ամփոփել, որ Սեբէոսն իր երկի վերջին մասերը շարադրել է, ամենայն հաւանականութեամբ՝ 659 թ. առաջին կէսին, եւ այդ ժամանակ Զուարթնոցի տաճարի շինարարութիւնը դեռեւս աւարտուած չի եղել: Հնարաւոր է, ինչպէս ենթադրում են որոշ ուսումնասիրողներ, որ երկի շարադրանքը դադարել է հեղինակի վերահաս մահուան հետեւանքով (ուրեմն՝ 659 թ., ոչ թէ 660 կամ 661)[111]: Գուցէ եղել են այլ պատճառներ, որոնց մասին կարելի է միայն ենթադրութիւններ անել, սակայն իրողութիւնն այն է, որ եթէ անգամ Սեբէոս պատմիչը տեսել է Զուարթնոցի կառուցման աւարտը, ապա միեւնոյնն է՝ նա չի կարողացել արձանագրել դա իր երկի մեզ հասած տարբերակում:

Արդ՝ Զուարթնոցի տաճարի շինարարութեան աւարտի եւ նաւակատիքի ժամանակը ճշտելու որոշակի հնարաւորութիւն է տալիս «684 թուականի պատմութեան» վկայութիւնների քննութիւնը: Այդ պայմանական անուանումը կրող ոչ այնքան փոքր պատմական երկը փաստօրէն բառացի արտագրութեամբ պահպանուած է Ժ դարի վերջի պատմիչ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի Ա գրքի ԻԷ-Լ եւ Բ գրքի ԺԸ-ԼԱ եւ ԼԳ-ԽԵ գլուխներում (Բ.լբ գլխում Ժ դարի պատմիչը տեղադրել է սեփական շարադրանքը՝ հիմնուելով իր մէկ այլ սկզբնաղբիւրի՝ վերը նշուած «Աղուանից կաթողիկոսների գաւազանագրքի» տեղեկութիւնների վրայ)[112]: Որոշ հետազօտողների կարծիքով՝ վերջինիս շարադրանքին է յանգում նաեւ ՊԱ Բ.ժէ գլուխը, ուր պատմւում է հետագայում Միհրանեաններ համարուած Վարազ Գրիգոր, Ջեւանշէր եւ Վարազ Տրդատ Գարդմանից իշխանների՝ Սասանեաններից սերելու մասին առասպելական տոհմաբանութիւնը: Սակայն իրականում այդ պատմութիւնը հաւաստի գրեթէ ոչինչ չի պարունակում, լեզուով ու ոճով էապէս տարբերւում է «684 թ. պատմութեան» յարակից հատուածներից եւ անկասկած շարադրուած է հէնց Ժ դարի հեղինակի կողմից՝ Խաչէնի եւ Փառիսոսի Առանշահիկ իշխանների տոհմաբանութիւնների մէջ ընդգրկուած վիպականացուած պատկերացումների հիման վրայ:

«684 թ. պատմութեան»՝ անանուն հեղինակը Է դարի 30-80-ական թուականներին Աղուանք երկրում (Սասանեան մարզպանութեան տարածքի ընդգրկումով) տեղի ունեցած գլխաւոր իրադարձութիւնների մա-

սին գեղարուեստական բարձր ոճով, բաւական մանրամասն եւ հիմնական գծերով վաւերական շարադրանք է ներկայացնում, որը որոշ հատուածներում դառնում է առաջին դէմքով: Քանի որ Տրտու գետի միջին հոսանքով լիսսր սահմանակցող կենտրոնական արցախեան Մեծ Կողմանք եւ Մեծ Իրանք գաւառների զանազան տեղանքները շարադրողի կողմից նկարագրուած են ընդգծուած մանրամասնութեամբ[113], ենթադրւում է, որ նա սերում է հէնց այդ տարածքից: Ըստ երեւոյթին, պատմիչը շատ մօտ է կանգնած եղել իր գլխաւոր հերոսներին՝ Ջեւանշէր եւ Վարազ Տրդատ իշխաններին, եւ յատկապէս՝ Մեծ Կողմանքի Իսրայէլ (երկրորդ անունով՝ Աբաս) եպիսկոպոսին. նա ներկայ կամ մասնակից է եղել նրանց մի շարք գործերին, այդ թւում՝ վերջինի ուղեւորութեանը Հոնաց աշխարհ՝ հիւսիսկովկասեան թիւրքալեզու ժողովրդին քրիստոնէական հաւատքի բերելու առիթով[114]: Աւելացնենք, որ «684 թ. պատմութիւնը» պարունակում է մի շարք պաշտօնական նամակներ, որոնց վաւերականութիւնը Նիկողայոս Ադոնցը կասկածելի էր համարում[115]: Սակայն իրականում արդարացի կը լինէր կասկածել դրանցում եւ ամբողջ երկում առկայ միայն որոշ (երբեմն՝ ծայրահեղ աստիճանի) չափազանցութիւնների առիթով, որոնք պղփւնք են իր հերոսներին մեծարելու՝ միջնադարեան հեղինակի համար սովորական ու հասկանալի միտումի[116]:

«684 թ. պատմութիւնն» աւարտւում է, ըստ ամենայնի՝ 682-683 թթ. իրադարձութիւնների նկարագրութեամբ. վերջնական շարադրանքը կատարուել է հաստատապէս 685 թ. ամռանը տեղի ունեցած հիւսիսկովկասեան խազարների աւերիչ արշաւանքից առաջ, որին զոհ գնացին Հայոց եւ Վրաց (ըստ մի տեղեկութեան՝ նաեւ Աղուանից) իշխանները: Հետաքրքիր է, որ ինչպէս եւ Սեբէոսը, «684 թ. պատմութեան» հեղինակն էլ, ամենայն հաւանականութեամբ, ստեղծագործել է ինչ-ինչ վալերով: Ուշադիր ընթերցելով Բ.իր գլխի աւարտական ընդարձակ հատուածը («Աստուածաւր եւ արդ զ՞ինչ ասացից եւ կամ զո՞ր խաւսեցայց ... զի քեզ բարի լիցի [*bclr* լինիցի], եւ որդւոց քոց ազգէ յազգ, մինչեւ յաւիտեան», նախ. 31-38), որը նաեւ Ջեւանշէր իշխանի տարուանով թուագրում է տալիս՝ 670 թ. («Արդ՝ այս եռեակք տասներրեակք եւ տարիք երեք, յոր [*a* զոր] սկսաւ Տէր բազմամեծար զբարեյաղթ իշխանն Աղուանից առնել [=637+33]...», նախ. 35), տեսնում ենք, որ այն գրուել է իբրեւ հեղինակի ստեղծագործական մտայղացման վերջաբան: Սակայն 13-14 տարի անց նա շարունակել է իր երկը (հիմնականում ծանրանալով 679-682 թթ. բախտորոշ իրադարձութիւնների վրայ. գլ. Բ.իթ-խե), ընդ որում՝ ինչ-որ պատճառով նրան չի յաջողուել օժտել այդ շարունակութիւնը նոյնատիպ գեղարուեստական վերջաբանով:

Արդ՝ «684 թ. պատմութիւնը» պարունակում է մեզ հասած հայկական եւ օտարալեզու մնացեալ սկզբնաղբիւրներին բացարձակապէս անյայտ, սակայն նրանց ունեցած տուեալներին լիովին համահունչ այն

տեղեկութիւնը, որ Կոստանդ Բ (Կոստանտիանոս) կայսրը իր իշխանութեան 19-րդ տարում. այսինքն՝ 659 թ. սեպտեմբեր ամսից մինչեւ 660-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատուածում, եղել է Ատրպատականում եւ իր մօտ հրաւիրել Աղուանից երկրի Ջեւանշէր իշխանին. «Իսկ *յինն եւ ի տասներորդի ամի թագաւորութեանն իւրոյ* Կոստանտիանոս՝ թոռն Հերակլի [*a* Հայրակղի], բազմամբոխ *զաւրաւք* եւ ընտիր ընտիր *գլխաւորաւքն Յունաց* հանդերձեալ՝ եկն ի սահմանս [*a* յաշխարհն] Պարսից՝ *կորզել ի Տաճկաց զկողմանս աշխարհացն* [*a* աշխարհին]... Յայնժամ առաքեաց զմի ոմն ի գլխաւորացն առ Ջեւանշէր՝ գալ նմա ի տեսութիւն: Եւ վաղվաղակի աճապարեալ՝ հասանէր *յաշխարհն Մարաց*, առ մեծ կայսրն. զորոյ զգալն լուեալ [*a* լսել]՝ ընդ յառաջ նորա ինքնին [*a* ինքն] ելանէր ի Քունգր [=Կանգաւար] գեաւղ»[117]: Ըստ արցախցի պատմիչի հաղորդած մանրամասների՝ Աղուանից իշխանն արժանանում է բարձրարժէք նուէրների ու կայսեր անձնական մեծարանքին, եւ դա նախանձ է առաջացնում կենտրոնական Հայաստանի նախարարների մէջ, որոնց թւում յանուանէ յիշատակւում է «զաւրավար» Համազասպ Սամիկոնեանը. «Տեսեալ զայսպիսի եւ երկնաւոր պարգեւս առ նա եղեալ նախարարացն Հայոց եւ *զաւրավարին Համազասպայ*՝ ի նախանձ մեծ բրդեցան, եւ նմա ոչ էր փոյթ. այլ [*bclr* այն] այնուհետեւ խնդրէր հրաժեշտ ի բարեսէր [*bclr* բարերար] տեառնէն...» (նախ. 8): Կոստանդի նուիրած փրկչական խաչի մասունքը Ջեւանշէրը բերում է հայրենիք եւ այն պատշաճ ձեւով պահպանելու համար Ուխտանէս Աղուանից կաթողիկոսի հետ (655-680 թթ.[118]) նախաձեռնում Գարդման բերդում եկեղեցու շինարարութիւնը[119]:

Իսկ նոյն գլխի շարունակութեան մէջ ասւում է, որ երբ ձմռանը փոխարինեց գարունը, այսինքն՝ 660 թ. մարտ ամիսը, Ջեւանշէրը եւս մէկ անգամ հանդիպեց կայսրին, եւ այս անգամ՝ *Վաղարշապատում*. «Եւ ի փոխանորդել *գարնանային ժամուն* հանդերձաւ կազմեցաւ մեծարգի իշխանն Աղուանից՝ միւս անգամ տեսանել զկայսր՝ հանդիպել նմա [*bclr* զկայսրն եւ հրաժարեալ ի նմանէ *փխ* զկայսր...նմա] *ի Վաղարշապատ քաղաքի:* Յայնժամ հրամայի [*bclr* եւ հրաման] ի թագաւորէն, զի մեծամեծք պտղատանն եւ վեհանձունքն [*a* վեհանձուկքն] ընդ յառաջ [*bclr* առաջ] նորա ելցեն. եւ այնպէս արքունաբար [*bclr* արքայաբար] մտանէ ի կայսերականն [*a* կայսերական] *մարզարան*...»[120]: «684 թ. պատմութեան» հեղինակը բազմաթիւ մանրամասներ է յայտնում 660 թ. գարնան սկզբին Վաղարշապատում Կոստանդ Բ-ի հետ կայացած այդ հանդիպման մասին: Իր իշխանի նկատմամբ անթաքոյց հիացմունքով լցուած՝ նա թուարկում է Ջեւանշէրի ստացած նուէրները («Եւ զինչ թագաւորականն սպաս էր [*bclr* թագաւորական էր սպաս], զամենն [*bclr* զամենայն] նմա հրամայեաց տալ, ընդ որ տրապէզիաքն անգամ սոսկացան, եւ ի վերայ այնոցիկ՝ զքաջ հաւուն իւրոյ Հերակղի եւ զՆիկիտա հանոյն[121] զար-

քունական գաւտի [*bclr* գաւտին] ածին ընդ մէջ նորա [*bclr* նորայն մէջ], եւ գլուրն պատմուճան, եւ դրաւշս երկուս, եւ զորդիս նորա առնէր պատրկունս զտղայականս»), նշում Աղուանից աշխարհի համար կայսեր հաստատած կարգավիճակը («Եւ որ միանգամ առաջին թագաւորացն Աղուանից գխրդատանեայք [*bl* գեաւլաստայք, *cr* գեւղաստեայք] եւ սահմանք լեալ էին, զամենայնն ի նա հրամայեաց ընծեռել [*a* ընծեռեաց] ազգաց յազգս, եւ արեւելեացս ամենեցուն արքայաբար *առնել տեսչութիւն*»), պատմում իմաստուն գրոյցների ու ջերմ բաժանման մասին («Եւ ոչ էր խորհուրդ կայսերն ծածկեալ ի նմանէ, եւ ի նմանէն լսելով հանճարեղ խորհրդականութիւնս [*bclr* խորհրդակցութիւնս] բազումս՝ հիանայր, եւ ողջունեալ [*a* ողջոյնեալ] զնա՝ ասէ. «Անձն քո՝ ընդ անձին իմում [*a* իմոյ], եւ սիրտ իմ՝ որպէս զսիրտ քո, ե՛րթ ի խաղաղութիւն»»)[122]: Պատմիչի մօտ բացատրութիւն չենք գտնում միայն այն մասին, թէ ինչ պատճառով էր Հայաստան ժամանած Կոստանդը կանգ առել եւ հիւրեր էր ընդունում ոչ թէ Դուինում, այլ այդ դարաշրջանում որոշ չափով խարխուլ վիճակում յայտնուած նախկին մայրաքաղաք Վաղարշապատում[123]:

Սակայն արդէն դժուար չէ նկատել, որ չնայած ինքը՝ 684 թ. անանուն պատմիչը, Զուարթնոցի մասին ոչինչ չի ասում, Կոստանդ Բ-ի՝ նրա նշած ժամկէտում (իր իշխանութեան 19-րդ տարուայ գարնանամուտին) Վաղարշապատում լինելը, ամենայն հաւանականութեամբ, կապուած է եղել աւարտուած տաճարի նաւակատիքի աքարողութեանը Ներսէս կաթողիկոսի հրաւէրով մասնակցելու հետ, ինչի մասին գիտենք սոյն աշխատանքի սկզբում բերուած «Աղուանից կաթողիկոսների գաւազանագրքի» ուղղակի պնդումից («եւ ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հոռոմոց, ընդ որ յաւէժ հիացեալ ընդ շինուածն՝ ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր [*bclr* թագաւորին *փխ* իւր], զի զնոյնաձեւն յարմարեսցէ ի պաղատանն»)[124]: Մեզ մնում է միայն ենթադրել, որ Հայաստանում ու Վաղարշապատում Կոստանդի մնալը, թերեւս, չէր կարող երկար ամիսներ տեւել, ուստի աւելի հաւանական է մտածել, որ նրա մասնակցութեամբ Զուարթնոցի Սուրբ Գրիգոր եկեղեցու կառուցման աւարտը եւ օծումը տեղի են ունեցել հէնց 660 թ. գարնան սկզբին[125]:

Զուարթնոցի օծման ժամանակի ճշտումից յետոյ անդրադառնանք այդ իրադարձութեան մասին միակ ուղիղ հաղորդումը պարունակող սկզբնաղբիւրի՝ «Աղուանից կաթողիկոսների գաւազանագրքի»՝ Մովսէս Դասխուրանցու փոխանցմամբ մեզ հասած բնագրի միւս, այդ թւում՝ բաւականաչափ խառնակուած կտորների դիտարկմանը: Նախ սկսենք այն տեղից, ուր յիշատակւում է Կոստանդ կայսեր *19-րդ տարին*, (659/660 թ.). մեզ հասած բնագրում այդ տարուան է վերագրուած Ներսէս Շինողի կաթողիկոսանալը («Եւ նորին ԺԹ [*a* ԺԹ-անն][126] ամին [*bclr* չիք ամին] նստի կաթողիկոս Հայոց տէր Ներսէս՝ ամս Ի...»[127], որն իրականում, Սեբէոսի յստակ թուագրմամբ՝ տեղի է ունեցել 641 թ. վերջերին: Վերը կա-

տարուած քննութեան լոյսի ներքոյ դժուար չէ նկատել, որ այդ թուականի առկայութիւնը Զուարթնոցի նաւակատիքի մասին յիշատակութեան կողքին, ամենայն հաւանականութեամբ, պատահական չէ: Ենթադրելի է, որ տուեալ ենթատեքստում բուն սկզբնաղբիւրի տոհմամատեանային ոճի գրառումը իրականում ինչ-որ շարդասութեամբ վերաբերել է «Քաղաքիդաշտի Սուրբ Գրիգորի» նաւակատիքին «տէր Ներսէս կաթողիկոսի» հրաւէրով հէնց այդ տարում կայսեր մասնակցութեանը: Ըստ այդմ, թէկուզ եւ անճանաչելիօրէն այլափոխուած վիճակում, Կոստանդի 19-րդ - տարուայ յիշատակութիւնը լրացուցիչ հաստատում է «684 թ. պատմութեան» վերը քննարկուած թուագրումը կայսեր՝ Վաղարշապատում լինելու ժամանակի մասին:

Երկրորդ. Ներսէս Շինողը քիչ անց կոչւում է «*հայրագիր* նորին Կոստանդնի [*a* Կոստանտնի]», որը «գանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հաւտից ի Քաղաքիդաշտի՝ զՍուրբն Գրիգոր»: «Հայրագիր» բառը հազուագիւտ յիշատակութիւններով է յայտնի հայ մատենագրութեան մէջ, ՆՀԲ հեղինակներն այն հասկանում են՝ «Գրեալ կամ համարեալ որպէս հայր»: Սեբէոսը «հայրագիր» եզր չի օգտագործում, թէպէտ Ներսէսի ու Կոստանդի միջեւ նրա նկարագրած յարաբերութիւնները այլ նմանատիպ դէպքերի հետ համեմատութեան մէջ, թերեւս, եզակի պատկեր են ցուցադրում: «Վասն Հայոց կաթողիկոսին Ներսէսի» գլխագիրը կրող հատուածում (որը բոլոր հրատարակիչների կողմից արդարացիօրէն ներկայացուած է իբրեւ առանձին գլուխ. Սա. Մալխասեանցի մօտ՝ ԽԷ) Ներսէսի կայսերաճանաչութիւնը նկարագրելիս Սեբէոսը կապում է դա Բիւզանդիայում անցկացրած նրա մանկութեան եւ զինուորական ծառայութեան հետ («էր նա բնակութեամբ ի Տայոց, ի գեղջէն, որում Իշխանն կոչեն: Եւ սնեալ ի մանկութենէ յաշխարհին Յունաց, եւ ուսեալ զլեզուս եւ զդպրութիւն Հոռոմին, եւ շրջեալ ընդ աշխարհս զաւրու կարգաւք զինուորութեան...»)[128]: Սակայն պատմիչի յաջորդ հատուածում ըմբոստ եպիսկոպոսի հետ զրուցելիս Կոստանդ Բ-ն է Ներսէսին անուանում իր «հայրը» («զ՞ինչ եւ դու, որ ես՝ քո թագաւոր. եւ դա՝ քո կաթողիկոս եւ *հայր մեր,* եւ դու ոչ արժանի համարիս զիս ընդ քեզ հաղորդութեանն, եւ ոչ՝ զդա»)[129]: Արդեօ՞ք դա միայն յարգանքի՞ց էր հարեւան կիսանեղթակայ երկրի հոգեւոր առաջնորդի նկատմամբ:

Ներսէս Տայեցու կաթողիկոս դառնալու մասին Սեբէոսի հաղորդած մի քանի տողերի մէջ աչքի է զարնում այն հանգամանքը, որ նորընծայ կաթողիկոսն անմիջապէս կարեւոր մի խնդիր է լուծում (Թէոդորոս Ռշտունուն Հայոց զօրավար նշանակելը) հէնց կայսեր հետ, աւելի ճիշտ կը լինի ասել, հաշուի առնելով Կոստանդի մանկական տարիքը (11 տարեկան)՝ մայրաքաղաքում, կայսերական արքունիքում. «Եւ *եղեւ այս* [Աղձնիքի կողմից Հայաստան ներխուժած արաբական զօրքերի կողմից Դուինը գրաւելը 641 թ. հոկտեմբերի 6-ին, ապա Աստրեստան վերադառ-

նալը - *Ա. Յ.*] *յամս Եզրի* կաթողիկոսի: Իսկ ի ձեռն այնր պատերազմի *ի կայսերէ* հրաման *հասեալ* զաւրավարութիւնն Թէոդորոսի՝ Ռշտունեաց տեառն, հանդերձ պատրկութեան [*Ա* պատրութեան] պատուով: *Այս ամենայն* լինի *ի ձեռն կաթողիկոսին Ներսէսի*, որ յաջորդեցաւ *ի նմին ամի* յաթոռ կաթողիկոսութեան փոխանակ Եզրի կաթողիկոսի»[130]: Դրանից ինքնին բխում է այն ենթադրութիւնը, որ Դուինի ասպատակութեանն անմիջապէս յաջորդած ժամանակահատուածում, այսինքն՝ 641 թ. վերջերին կաթողիկոս ընտրուելով՝ հետագայում Շինող պատուանունին արժանացած եռանդուն Ներսէսը շատ շուտով յայտնուել է Կոստանդնուպոլսում եւ անյապաղ ձեռնարկել Հայաստանի համար կենսական խնդիրների անյետաձգելի լուծմանը: Ի դէպ, զուցէ պատահական չէ, որ ժամանակակից ու ականատես Սեբէոսը[131] բերուած հատուածի վերջին նախադասութիւնն սկսում է «Այս *ամենայն...*» բառերով, չնայած վերեւում գրել էր ընդամենը 1 գործի մասին (Թէոդորոս Ռշտունու նշանակումը), յիրաւի սա այն դէպքերից է, երբ միտքը թելադրել է աւելին, իսկ ձեռքը գրել է պակաս:

Արդ՝ ըստ Թէոփանէս Խոստովանողի հաղորդած ժամանակագրական տեղեկութիւնների՝ Կոստանդ Բ-ի միայնակ գահակալութեան սկիզբը թուագրւում է 641 թ. աւարտով կամ 642 թ. յունուարով (Հերակլը վախճանուել է 641-ի մարտ ամսին, 4 *ամիս*[132] թագաւորել է նրա որդի Կոստանդին Գ-ն, ապա՝ 6 ամիս՝ նրա խորթ եղբայր Հերակլեոնասը իր մօր՝ Մարտինէի հետ, որոնք տապալուել են սենատի կողմից, ըստ Սեբէոսի՝ Վաղենտին Արշակունի զօրավարի ամենաակտիւ մասնակցութեամբ)[133]: Զուգահեռ փորձենք յիշել, որ Է դարի սկզբից, Փոկասից սկսած՝ բիւզանդական կայսրերի թագադրման արարողութիւնը կատարւում էր եկեղեցու մէջ եւ եկեղեցականների կողմից՝ Կոստանդնուպոլսի պատրիարքի գլխաւորութեամբ[134]: Համադրելով այս փաստերը Ներսէսի՝ մեծ հաւանականութեամբ Կայսրութեան մայրաքաղաքում գտնուած լինելու, իսկ հետագայում կայսեր հետ առանձնաշնորհեալ յարաբերութիւններ ունենելու հանգամանքների հետ, թւում է, թէ հնարաւոր է առաջ քաշել այն ենթադրութիւնը, որ Հայոց կաթողիկոսը կարող էր իբրեւ հոգեւորական հիւրերից մէկը մասնակցած լինել Կոստանդ Բ-ի թագադրման արարողութեանը եւ դրա շնորհիւ ձեռք բերել վերջինիս «հայրագիրը» (կամ, թերեւս՝ «հայրագիր»-ներից մէկը) լինելու պատիւը[135]:

Ինչ վերաբերում է Զուարթնոցի կառուցումը Կոստանդ կայսեր «գանձիւք» կատարուած լինելու մասին ՊԱ Գ.ժե գլխի արտայայտութեանը («եւ գանձիւք նորա շինեաց...» եւ այլն), ապա կրկնենք, որ Սեբէոսի երկում դրա վերաբերեալ անգամ ակնարկի բացակայութիւնը մեծապէս կասկածի տակ է դնում տոհմամատեանային գրանցումների անյայտ հեղինակի պնդման հաւաստիութիւնը: Ճիշտ է, վերը տեսանք, որ ժամանակակից պատմիչի շարադրանքը կանգ է առել տաճարի օծման

օրերից շուրջ մէկ տարի առաջ (659 թ.). ուստի մենք իրաւասու ենք ենթադրելու, օրինակ, որ շինարարութեան ծախսերի մի էական մասը վճարուել է նրա աւարտման փուլում եւ հէնց կայսեր կողմից. կամ. որ շինարարութեան հիմնական մեկենասը բարոյագիտական նուրբ նկատառումներով գերադասել է անյայտ մնալ մինչեւ աշխատանքների յաջող աւարտը: Ամեն դէպքում ակնյայտ է, որ Զուարթնոցի վիթխարի եւ բոլոր առումներով բարձրորակ կառոյցը պահանջել է սովորականից աւելի մեծ ծախսեր. եւ անհրաժեշտ միջոցների հայթայթմանը քաղաքական բացայայտ շահագրգռութիւններ ունեցող Բիզանդական տէրութեան մասնակցութիւնը, թերեւս, պէտք է համարել լիովին տրամաբանական: Աւելին. գուցէ հէնց դրանով է պայմանաւորուած ինքնին ֆենոմենալ այն փաստը, որ տաճարի շինարարութիւնը յաջողութեամբ աւարտին է հասցուել ընդամենը 10 տարում, ընդ որում՝ այնպիսի ծանր. ասպատակութիւններով ու կոտորածներով յագեցած տարիների (յիշենք 653-656 թթ. ժամանակամիջոցը), երբ անգամ Հայոց կաթողիկոսը շուրջ 6 «հալածական ամ» է անցկացրել Տայոց մեկուսացուած աշխարհում: Եւ այստեղ·մեր առջեւ յառնում է Զուարթնոցի ճարտարապետ-շինարարի կամ. ինչպէս ՊԱ նոյն հատուածն է նրան անուանում՝ «գաղատոսի» (յունարէն բառացի՝ «քարգործ»), լուսաւոր կերպարը:

Սեր երեւակայութիւնը թերեւս պէտք է լարենք եւ որոշ չափով հեռանանք աղբիւրագիտական կոնկրետ տուեալներից, որպէսզի լրիւ հասկանանք այդ շնորհաշատ մարդու երջանկութիւնն ու սխրանքը (ըստ ընդունուած կարծիքի՝ նրա «Յոհան» անունն է փորագրուած աւերակների մաքրման ժամանակ յայտնաբերուած կամարամիջոցի մի քարի վրայ[136]): Չգիտենք, թէ ապագայ տաճարի կառուցուածքային եզակի լուծումներով «նախագծա-նախահաշուային փաստաթղթերը» որքան ժամանակ առաջ էր նա յանձնել Ներսէս կաթողիկոսին (կամ գուցէ իշխաններից մէկին) եւ ինչքան էր սրտատրոփ աղօթել, որ իր հանճարեղութեամբ արտառոց այդ նախագիծը չմերժուի ու չարժանանայ դարերի ընթացքում թերեւս երբէք չպակասած հանճարեղ գաղափարների այն տարաբախտ նմուշների ճակատագրին, որոնք յայտնւում են «ո՛չ այնտեղ ու ո՛չ այն պահին»: Սակայն մեծ քաղաքականութեան մի իւրօրինակ շրջադարձի արդիւնքում այդ հրաշքը իրականութիւն դառնալու հնարաւորութիւն էր ձեռք բերել. Ներսէսն ու Կոստանդ կայսրը համաձայնութեան էին եկել միջոցներ չխնայել Հայաստանում այդպիսի մի վիթխարի ծրագիր իրականացնելու հարցում: Աւելի հաւանական է մտածել, որ այդ պահին իրեն աշխարհի ամենաերջանիկ մարդը զգացած Յոհան շինարարը ինչ-որ մի զգալի գումար էր ստացել, որից յետոյ անյապաղ սկսել էր աշխատանքը, եւ չնայելով շուրջը կատարուող ասպատակութիւններին ու հալածանքներին, դրսեւորելով ֆանտաստիկ աշխատասիրութիւն ու կազմակերպական եռանդ, իր քաջահմուտ վարպետների հետ 10 տա-

րի բսնել էր օրնիբուն, մինչեւ որ աւարտին էր հասցրել յիրաւի այդ դարի կառոյցը. ոյսով զմայլողների համար գրառող հեղինակն ասել էր՝ «*յաւէժ հիացեալ* ընդ շինուածն...»: Ըստ էութեան, հնարաւոր չէ կասկածելու որեւէ առարկայական հիմք գտնել նաեւ նոյն գրառման շարունակութեան հաւաստիութեան վերաբերեալ, ըստ որի՝ հայ շինարարին հրամայեցին գնալ կայսեր հետ՝ «զի զնոյնաձեւն յարմարեսցէ ի պաղատանն», եւ սակայն՝ «ոչ ժամանեալ [աւելացնենք՝ «Զուարթնոցին իր վերջին ուժերը տուած, անշուշտ, հիւծուած, բայց իր կեանքի գլխաւոր գործը պատուով կատարած» - *Ա. Յ.*] զաղատոսն՝ ի ճանապարհին վաղճանիւր»: Իրօք, Կոստանդնուպոլսում կամ Կայսրութեան մի այլ շրջանում յայտնի չեն Զուարթնոցի կառուցուածքային լուծումները կրկնող գմբէթաւոր շինութիւններ[137]:

Վերջապէս, անդրադառնանք ՊԱ Գ.ժե գլխի քննարկուող հատուածի սկզբում ւսուուածի ժամանակավրէպ թուագրմանը. «...նստի կաթողիկոս Հայոց տէր Ներսէս՝ ամս Ի. եւ *Հայ թուականն* [bclr թւին] *ճԺ եւ մին էր*»: Քանի որ վերը կատարուած քննութեամբ պարզուեց յարակից մնացեալ աղճատուած տեղեկութիւնների հաւաստիւթիւնը Մովսէս Դասխուրանցու բուն սկզբնաղբիւրում՝ տոհմամատեանային նախնական գրառումներում, ապա ակնյայտ է, որ այս դէպքում էլ, «Հայոց թուականութեան 111-րդ տարին» (662 թ. յունիսի 14-ից մինչեւ 663 թ. յունիսի 13-ն ընկած ժամանակահատուածը) նշելով՝ այդ գրառող հեղինակը նկատի է ունեցել Ներսէսի՝ 641 թ. վերջերին սկսուած 20-ամեայ կաթողիկոսութեան ոչ թէ սկզբի, այլ աւարտի տարին (գրիչների կամ հետագայ հեղինակների կողմից նմանատիպ շփոթի օրինակներ յայտնի են նաեւ այլ դէպքերում)[138]: Աւանդաբար Ներսէս Գ Շինողի հայրապետութեան տարիները հաշւում են մինչեւ 661 թ.՝ հիմք ընդունելով աղբիւրների մեծ մասում (այդ թւում նաեւ վերը բերուած ՊԱ հատուածում) նրա իշխած 20 տարիների յիշատակութիւնը[139]: Սակայն, թւում է, թէ քննարկուող հատուածի սկզբնաղբիւրի գրառումների տոհմամատեանային բնոյթի պարզաբանումը բաւարար հիմք է տալիս ենթադրելու, որ մեր առջեւ Հայոց կաթողիկոսի մահուան թուականի անմիջական ու յստակ («...եւ *մին* էր») արձանագրման դէպք է, այդպիսով՝ աղբիւրագիտական հաւաստիութեան բարձր ցուցանիշով:

Ներսէս Տայեցու հայրապետութիւնը մինչեւ 662 թ. հասցնող աղբիւրագիտական տուեալները վերջերս ամփոփուել են նաեւ Էդուարդ Դանիէլեանի կողմից[140]: Ուսումնասիրողն արչարացիօրէն մատնանշում է Համազասպ Մամիկոնեանի վախճանուելուց յետոյ Ներսէսի խնդրանքով Հայոց իշխանի պաշտօնում արաբների կողմից Գրիգոր Մամիկոնեանի նշանակման մասին Յովհաննէս Դրասխանակերտցու խօսքերը[141], ապա աւելացնում Ղեւոնդի մօտ պահպանուած՝ վերը բերուած տեղեկութիւնն այն մասին, որ Գրիգորին Հայոց իշխան նշանակեց եւ հայ-

րենիք ուղարկեց Մուաւիան (661-680 թթ.)՝ իր իշխանութեան *երկրորդ* տարում, այսինքն՝ հէնց 662 թ.[142]: Թերեւս կարելի էր կասկածել, որ Դրասխանակերտցու ուղղակի պնդման հիմքը միայն Ղեւոնդի հաղորդումն է (յիշենք՝ խառնակ ենթատեքստում)՝ ընդամենը այլ կերպ հասկացուած Ժ դարի սկզբների պատմիչի կողմից: Սակայն Մովսէս Դասխուրանցու տոհմամատեանային սկզբնաղբիւրի նոյնքան ուղիղ թուագրումը («հայ թուականն ճԺ եւ մին էր»)՝ ասած, ինչպէս տեսանք, Զուարթնոցը կառուցած կաթողիկոս Ներսէսի մահուան տարուայ մասին, ոչ միայն փարատում է նման կասկածը, այլեւ ստիպում համոզուած լինել, որ Դրասխանակերտցու ձեռքի տակ եւս եղել են լուրջ, գուցէ նոյնպէս տոհմամատեանային բնոյթի աղբիւրներ:

Յաւելենք, որ Ներսէս Գ-ի իշխանութեան ժամանակը շուրջ մէկ տարով աւելացնելու դէպքում (641 թ. վերջ - 662 թ.), մէկական տարով վտխւում են երկու յաջորդների տարիները՝ ըստ աղբիւրների՝ 6 տարի աթոռակալած Անաստաս Ակոռեցու (այսպիսով՝ 662-668 թթ.), եւ 10 տարի աթոռակալած Իսրայէլ Օթմսեցու (այսպիսավ՝ 668-678 թթ.): Իսկ այդպէս մէկ տարով տեղաշարժւում է նաեւ յաջորդ հայրապետի՝ Սահակ Ձորափորեցու՝ աւանդաբար 677 թուականը համարուած առաջին տարին, ինչին հաւաստի աղբիւրների վկայութիւնների հակասելու փաստը (685 թ. օգոստոսին տեղի ունեցած խազարական արշաւանքի թուագրման տեղեկութիւններում) նկատել էինք դեռեւս տարիներ առաջ[143]:

ALEXAN HAKOBIAN

THE ARMENIAN-BYZANTINE RELATIONS IN THE MIDDLE OF VII CENTURY AND THE DATING OF ZUARTNOTS CATHEDRAL'S BUILDING

A comparative study of historic sources has revealed that Zuartnots Cathedral was built between the years 650 to 660, rather than between 642 to 652, as traditionally believed. Sebeos wrote about the starting of its construction, telling that it happened after the end of the 647-650 Byzantine-Arab war. As for the end of the construction, information is provided by two sources, which Movses Daskhurantsi, the author of late 10th century, included into, or used in his "History of Albania". The first one is the work by an Anonymous Historian conditionally named "The History of the Year 684", and the second one is the collection entitled "The List of Albanian Catholicoses", which was compiled, most likely, in early 10th century, but was based on "Diary notes" of clergymen, who were witnesses of events of 7-10th centuries. Comparative analysis of information of these sources shows that Byzantine Emperor Constant II was in Armenia in early spring of 660, and attended the consecration ceremony of the Zuartnots Cathedral, built with his sponsorship near the old capital of Valarshapat.

A thorough analysis of the sources indicates that creation of the Zuartnots Cathedral, a building which was unique both in terms of its size and design, was a result of close cooperation between Armenia and Byzantine Empire against the threat posed by the Arab Caliphate. The author has also found solution to some problems of the history of that period. It is shown, in particular, that no Arabian invasion to Armenia occurred in 642-643; that Siunik joined the Central Aremnia in 652 rather than in 660; that Sebeos's work was complete in 659 and not in 661, etc. Along with the publishcd versions, correct texts of most relevant manuscripts were also used in the work.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Թորոս Թորամանեանը իբրեւ հիմնատրում նշում էր Սեբէոսի երկում Արծուփի ճակատամարտի թուագրումը Կոստանդ Բ-ի *երկրորդ* տարով, որը բացարձակ թիւրիմացութիւն է՝ հետագայում նկատուած եւ ուղղուած «*ութերորդ* տարույ» աղբիւրագէտների կողմից: Տես *Թ. Թորամանեան,* Նիւթեր հայկական ճարտարապետութեան պատմութեան, Աշխատութիւնների ժողովածոյ. Ա. Երեւան. 1942, էջ 254-255, 258-259, 266-267; *նոյնի*՝ Զուարթնոց, Երեւան, 1978, էջ 27-28; *Կ. Ղաֆադարեան,* Զուարթնոց (Դիտողութիւններ), ՊԲՀ, 1959, թիւ 4, էջ 183; *Ս. Բարխուդարեան,* Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ. Երեւան, 1963, էջ 27-29; *С. Х. Мнацаканян,* Звартноц, Москва, 1971, էջ 7; Հայ ժողովրդի պատմութիւն, հ. II, Երեւան, 1984, էջ 584-585; *Վ. Յարութիւնեան,* Հայկական ճարտարապետութեան պատմութիւն, Երեւան, 1992, էջ 81; *М. М. Асратян,* Армянская архитектура раннего христианства, Москва, 2000, էջ 32:
2. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, Չորրորդ տպագրութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ եւ ծանօթագրութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երեւան, 1939, ԽԶ-ԽԷ, էջ 141-146 (165-168): Ընթերցողը նկատեց, որ մենք օգտագործում ենք պատմիչի անուան *Սեբիոս* տարբերակը, որը տալիս են Ասողիկի, Սամուէլ Անեցու, Մխիթար Անեցու եւ Մխիթար Այրիվանեցու վաղ ձեռագրերը եւ Հայոց «Կանոնագրքի» Բ ենթախմբի գրչագրերը: Նրա ճշտութեան մասին մանրամասն տե՛ս *հ. Ն. Ակինեան,* Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր Պատմութիւնն ի Հերակղ, «Մատենագրական հետազօտութիւններ», հ. Բ, Վիեննա, 1924, էջ 17-21; *Ա. Յակոբեան.* Սեբիոսի երկի հատուածաբաժանման խնդիրը եւ Զուարթնոցի տաճարի կառուցման մասին գլուխը . «Հանդէս ամսօրեայ», ՃԺԹ տարի, Վիեննա-Երեւան, 2005:
3. Տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն, հ. II, էջ 315, 637 (ժամանակագրութեան ցանկ): Աւանդական տեսակէտի մեխանիկական կրկնութիւնների կողքին ուշագրաւ բացառութիւն է տոմարագէտ Ռաֆիկ Վարդանեանի՝ իրականից ընդամենը մէկական տարի շեղուող թուագրումը՝ 649-661, սակայն՝ առանց հիմնաւորումների (տե՛ս *Ռ. Հ. Վարդանեան,* Հայոց Տօնացոյցը (4-18-րդ դարեր), Երեւան, 1999, էջ 591-592):

4. Տե՛ս Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը. Միջազգային գիտաժողով.՝ Զեկուցումների դրոյթներ. Երեւան, 1998, էջ 15-16:

5. Օգտագործում ենք վերջին, համեմատական հրատարակութիւնը (*Մովսէս Կաղանկատուացի*. Պատմութիւն Աղուանից աշխարհի. Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վարագ Առաքելեանի, Երեւան, 1983. այսուհետեւ՝ ՊԱ)՝ մեր պատրաստած նոր գիտաքննական բնագրի ուղղումներով եւ Ժ դարի սկզբնօրինակի վերականգնման համար նշանակութիւն ունեցող *a* գրչագրի կամ B ճեռագրախմբի *bclr* գրչագրերի տարընթերցումների նշումներով: ՊԱ գրչագրերի վերլուծութիւնը տե՛ս *Ա. Յակոբեան*. Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը, «Բանբեր Մատենադարանի». 15. Երեւան, 1986, էջ 110-144:

6. 1860 թ. Մ. Էմինի եւ Կ. Շահնազարեանի հրատարակութիւններում (1761 թ. Ղունկիանոս դպրի արտագրութեանը յանգող Ag ձեռագրախմբի ընթերցումների հիման վրայ)՝ *Քաղաքողաշտի:* Վարագ Առաքելեանի համեմատական հրատարակութիւնում վերականգնում է տրուած՝ *Քաղաքադաշտի:* Զուարթնոցի մասին, իբրեւ դեռեւս բիւզանդական սեպագրում յիշատակուած տեղանուան, տե՛ս *Յ. Կարագեոզեան*, Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ յարակից նահանգներում), Երեւան, 1998, էջ 136-138:

7. Ուշ ձեռագրերում եւ հրատարակութիւններում՝ չիք *ընդ*:

8. ՊԱ, Գ.Ժե, էջ 317: Այստեղ եւ այսուհետեւ աղբիւրներից մէջբերումներում ընդգծումները մերն են - *Ա. Յ.*:

9. ՊԱ այդ սկզբնաղբիւրի մասին մանրամասն տե՛ս *А. А. Акопян*, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, էջ 216-223; *Ա. Յակոբեան*, «Վաչագանի վէպը» եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Զ դարերի Աղուանքում. «Հանդէս ամսօրեայ», ՃԺԷ տարի, Վիեննա, 2003, էջ 98-99; *Ա. Յակոբեան*, Աղուանից իշխանների ժամանակագրութիւնը Է. դարի վերջին - Ը. դարի սկզբին, «Հանդէս ամսօրեայ», ՃԺԸ տարի, Վիեննա-Երեւան, 2004, էջ 269-271:

10. Ըստ մեր վերջին քննութեան՝ Յովհան Մամիկոնեանի՝ պայմանականօրէն «Պատմութիւն Տարօնոյ» անուանուող երկը գրուել է Հայոց թուականութեան ՃԼ եւ հռոմեական ՆԼԴ, այսինքն՝ 681 թուականին: Տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 973, 1129, ծան. 45:

11. *Յովհան Մամիկոնեան*, Պատմութիւն Տարօնոյ («Մատենագիրք Հայոց», հ. Դ-Ե, Է դար), ԺԱ.40, էջ 1124 (այստեղ եւ այսուհետեւ «Մատենագրքից» յղումներում հայատառ գլխահամարից յետոյ արաբական թուանշանով տրւում է նախադասութեան համարը):

12. *Կաթաղիկոս* ձեւը տալիս են մեզ հասած միակ ամբողջական գրչագիրը (*Ա*) եւ ԺԶ դարի մէկ թերթանի արժէքաւոր պատառիկը (ՄՄ, թիւ 1343), ուստի մեծ հաւանականութեամբ հէնց այն է յանգում Սեբիոսի ինքնագրին: Մէջբերումներում այստեղ եւ այնուհետեւ տալիս ենք ճշգրիտ ընթերցումները հրատարակութեան պատրաստ մեր գիտաքննական բնագրից (նոր տողատմամբ եւ կէտադրմամբ)՝ անհրաժեշտութեան դէպքում նշելով կարեւոր տարընթերցումները եւ կատարուած փոփոխութիւնները:

13. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԳ, էջ 120 (147):

14. Պատմութիւն *Սեբէոսի*, Աշխատասիրութեամբ Գ. Վ Աբգարեանի, Երեւան, 1979, էջ 318, ծան. 528:

15. Տե՛ս *Ա. Յակոբեան*, Սեբիոսի երկի հատուածաբաժանման խնդիրը..., «Հանդէս ամսօրեայ», ՃԺԹ տարի, Վիեննա-Երեւան, 2005: Այստեղ համառօտ նշենք միայն, որ Ստ. Մալխասեանցի հրատարակութիւնից յետոյ (*Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն..., Երեւան, 1939) աշխատասիրողի հիմնական ճշգրտումները ընդունուեցին աղբիւրագէտների կողմից (տե՛ս *հ. Ն. Ակինեան*, Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր Պատմութիւնն ի Հերակղ, Վիեննա, 1924; *Ն. Ադոնց*, Պատմական ուսումնասիրութիւններ, Պարիս, 1948; *հ. Պ. Անանեան*, Սեբէոսի Պատմութեան գրքի մի քանի լուսաբանութիւններ, Վենետիկ, 1972; *Մ. Գ. Գրիգորեան*, Դիտողութիւններ եւ սրբագրութիւններ Սեբիոսի պատմագրոց բնագրին վերայ, Վիեննա, 1973 եւ ուրիշներ) եւ հիմք դարձան երկի բնագրագիտական ուսումնասիրութեան խորացման համար: Յատոք, Գեւորգ Աբգարեանի հրատարակութեան (Երեւան, 1979 թ.) առաջաբանում, ծանօթագրութիւններում ու յաւելուածներում իբրեւ թէ Անոնիկից օգտուած Անանունի վարկածի վերակենդանացումը եւ բնագրագիտական մի շարք վրիպումներ (այդ թւում՝ 2 գլխահամար աւելացնելը) էապէս արգելակեցին նմանատիպ ուսումնասիրութիւնների ծաւալումը գոնէ արեւելահայ բանասիրութեան մէջ: Սոյն աշխատանքում Սեբիոսի երկի յղումները կատարւում են Ստ. Մալխասեանցի գլխահամարներով ու էջերով (այլ ընթերցողների յարմարութեան համար՝ փակագծում նշելով նաեւ 1979 թ. հրատարակութեան էջերը): Միեւնոյն ժամանակ, պէտք է նշել 1939 թ. հրատարակութեան գլխաւոր թերութիւնը (ամբողջութեամբ անցած նաեւ Գ. Աբգարեանի մօտ)՝ գլխագրերի յօրինումը, որոնք միայն շփոթութեան մէջ են գցում Է դարի սկզբնօրինակը հնարաւորինս պատկերացնել ջանացող ընթերցողին:

16. *Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, Թարգմանութիւն բնագրից, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Հրաչ Բարթիկեանի (Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 13. Բիւզանդական աղբիւրներ. 4), էջ 53-55: Սեբիոսը եւ Միքայէլ Ասորին պայմանագրի ժամկէտը նշում են 3 տարի (*Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԶ, էջ 140 (164). «իբրեւ լցան *ամք Գ պայմանի* խաղաղութեանն...»; Chronique de *Michel le Syrien*, Edit. et trad. en francaise par J. B. Chabot, Vol. II, Paris, 1901, էջ 446. «Երբ արաբները նորից պատրաստւում էին արշաւել դէպի Կոստանդնուպոլիս, Պտղոմէոսը [= Պրոկոպիոսը] եկաւ նրանց խոստանալու՝ ամենամեայ հողահարկ տալ հռոմների երկրից: Բայց քանի որ խաբեց, արաբները վեր կացան եւ Իսաւրիան կողոպտեցին: Պտղոմէոսը կրկին գնաց, տուեց ոսկին եւ արաբների հետ զինադադար կնքեց *երեք տարով*» (թարգմանութիւնը ըստ՝ *Ա. Տէր-Ղեւոնդեան*, Հայաստանը VI-VIII դարերում, Երեւան, 1996, էջ 65)): Այդ խնդրի մանրամասն քննութիւնը տե՛ս *Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան*, Սեբէոսի երկը որպէս VII դարի Մերձաւոր Արեւելքի պատմութեան աղբիւր, ՊԲՀ, 1988, թիւ 1, էջ 126-127 (վերահրատարակուած՝ *Արամ Տէր-Ղեւոնդեան*, Յօդուածների ժողովածոյ, Երեւան, 2003, էջ 665-666):

17. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԳ, էջ 120 (147):

18. Դրանից էլ առաջ յիշատակուած թուականը վերաբերում էր Կոստանդի 2-րդ տարուան: Նրանով Սեբէոսի մօտ թուագրուած է կայսեր դէմ Վաղենտինի զօրավարի անյաջող ապստամբութիւնը՝ սկսելով շարադրանքը կարմիր գլխատառով («Եւ եղեւ *յերկրորդում* ամի Կոստանդի՝ թոռին երանելւոյն Երակլի. խորհէր [Վաղ]ենտին ի միտս իւր ճարտարութեամբ խաբել զս[ի]նկղիտոսն...» եւ այլն): Անհրաժեշտ է նշել, որ նոյն ապստամբութիւնը Թէոփանէս Խոստովանողը թուագրում է Կոստաս կայսեր *երրորդ* տարով, այսինքն՝ 644 թ. (հաշուած ոչ թէ 641 թ. սեպտեմբերին սկսուած Հերակլեոնասի հետ կայսերակցութիւնից, ինչպէս որ ուրիշ դէպքերում է, այլ 642 թ. յունուարին Կոստասի միանձնեայ գահակալութեան սկզբից): Դա պէտք է համարել պատմական իրականութեանը լրիւ համապատասխանող թուագրութիւն, քանի որ նոյն տարուայ համար Ժամանակագիրը ինչ-որ մի ճշգրիտ սկզբնաղբիւրի վկայութիւն է ունեցել «Դիոս [=նոյեմբեր] ամսի հինգին, շաբաթուայ վեցերորդ օրը, ժամը իններին» տեղի ունեցած արեւի խաւարման մասին (*Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 52, 250, ծան. 320): Ըստ տիեզերագիտական աղիւսակների՝ արեւի խաւարումը եղել է 644 թ. նոյեմբերի 5-ին, ուրբաթ (ուրեմն Թէոփանէսի աղբիւրը տուեալ դէպքում շաբաթուայ առաջին օր է հաշուել նախորդ կիրակին), Գրինիչով ժամը 11 անց 9,7 րոպէին (*Հ. Ս. Բադալեան*, Օրացոյցի պատմութիւն, Երեւան, 1970, էջ 480):

19. Ըստ պատմիչի մի նախորդ տեղեկութեան (Խ, էջ 109 (137-138))՝ մահուսնից առաջ ցանկանալով ուղղել իր սխալը՝ Հերակլը յորդորել էր իր որդի եւ կայսերակից Կոստանդին Գ-ին «դարձուցանել զնոսա յիւրաքանչիւր տեղիսն ... եւ հաստատել զկարգն առաջին», սակայն ինչ-ինչ պատճառներով դա չէր ստացուել («եւ թագաւորեաց որդի նորա Կոստանդին. եւ *ոչ ոք ընտրեցաւ* զաւրավար յաշխարհէն [*Միհրդ*. յաշխարհին] Հայոց, քանզի անմիաբան լեալ իշխանացն՝ մեկնեցան ի միմեանց»): Շարունակելով վերջին թեման՝ Սեբէոսը արաբական առաջին ներխուժումից, Դուինի առումից եւ Հայաստանից աւարառուների հեռանալուց յետոյ է դնում Հայոց զօրավարի «նշանակումը», արդէն Եզր Արահէզացուն փոխարինած Ներսէս Տայեցու միջնորդութեամբ. «*այս ամենայն լինի ի ձեռն կաթողիկոսին Ներսէսի*, որ յաջորդեցաւ ի նմին ամի [641] յաթոռ կաթողիկոսութեան փոխանակ Եզրի կաթողիկոսի» (էջ 110-111 (139)):

20. ՊԱ-ում բառացի արտագրութեամբ պահպանուած Անանուն հեղինակի՝ 684 թ. շարադրուած պատմական երկը, որի մասին մանրամասն կը խօսենք ստորեւ, նոյնպէս ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում 640-ական թթ. կէսերին «Ատրպատական գաւառի» պարսիկ զօրապետի (նոյնպէս անունը չտալով) նկրտումների դէմ Աղուանքում ծաւալուած «ապստամբական» գործողութիւնների մասին: Աղուանից իշխան Վարազ Գրիգորի որդին՝ սպարապետ Ջեւանշէրը (հետագայում, մօտաւորապէս 650-ական թթ. կէսերից՝ Աղուանից իշխան), Կաղեսիայի (այս երկում՝ Կատշան) ճակատամարտից հաշուած 7 տարի (այսինքն՝ 637-643/644 թթ.) Սասանեան զօրքերի կազմում արաբների դէմ մարտնչելուց յետոյ վերադառնում է հայրենիք, ուր հակամարտութեան մէջ է մտնում ընդդէմ «Ատրպատականացն»՝ աղբիւրում լրիւ չբացայայտուած ենթակայութեան կարգավիճակից ձերբազատուելու նպատակով: Առաջին բախումներից յետոյ, որոնք, ըստ աղբիւրի ժամանակագրական տրամա-

քանութեան՝ պէտք է 2-3 տարի տեւած լինէին (համապատասխան ԺԹ գլխի մի քանի էջում, տուեալ դէպքում՝ մեծապէս վիպականացուած ձեւով, շարադրուած են 644-ից մինչեւ 657/658 թթ. իրադարձութիւնները), Ջեւանշէրը մի պահ դաշնակցում է նաեւ հարեւան Վիրքի հետ, որի իշխանից («մեծապատիւ այրն Ատրներսեհ՝ իշխան աշխարհին, որ *երբեակ իշխանութեան* [*ե չիք* իշխանութեան] *զահերէցութիւն ի Հոովմայեցւոց թագաւորութենէն ունէր*») օգնական զօրք է ստանում պարսիկների դէմ պայքարը շարունակելու համար (Ատրներսեհ Բ-ի մասին տե՛ս. *Ն. Ադոնց*, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու. Աշխատասիրել, ծանօթագրել եւ ներածութիւնը գրել է Պ. Յովհաննիսեանը. Վաղարշապատ - Ս. Էջմիածին, 2005, էջ 75-76; *П. М. Мурадян*, Армянская надпись храма Джвари, ԼՀԳ, 1968, թիւ 2, էջ 66-68): Կայսերական Թումաս զօրավարի ատրպատականամէտ գործողութիւնների, ապա նրա պատժի մասին Սեբէոսի տեղեկութիւնների կողքին «684 թ. պատմութեան» այս տուեալները ցոյց են տալիս, որ բիւզանդացիները Սասանեան տէրութեան մնացորդներից մէկի՝ Ատրպատականի տիրակալի հետ, ունեցել են առանձնայատուկ յարաբերութիւններ (աղբիւրներում, թերեւս, վատ լուսաբանուած), որոնք, կախուած արաբների հետ վերջինիս մօտեցման աստիճանից՝ փոխուել են դաշնակցայինից մինչեւ թշնամական եւ հակառակը: Դրա մասին տե՛ս նաեւ վերջին վերլուծութիւնը. *Է. Լ. Դանիէլեան*, Հայաստանի քաղաքական պատմութիւնը եւ Հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երեւան, 2000, էջ 162-170:

21. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԲ, էջ 116-118 (143-145):
22. Քննարկելով *Հէրեւան* բերդանուան մասին ուսումնասիրողների տեսակէտները՝ Էդուարդ Դանիէլեանը վերջերս համոզիչ ձեւով ցոյց տուեց, որ Սեբէոսի մօտ յիշատակուած է Դաւիթ Անյաղթի ծննդավայր, Հարք գաւառի *Հերեան* գիւղի անուան մի տարբերակը (*Է. Լ. Դանիէլեան*, 647 թուականի արաբական արշաւանքը Հայաստան, ՊԲՀ, 1982, թիւ 2, էջ 114; *Նոյնի*՝ Հայաստանի քաղաքական պատմութիւնը, էջ 175-176): Չխորանալով խնդրի մէջ՝ այստեղ այնուամենայնիւ նշենք, որ իրականում այս պատերազմի առաջին փուլի հետ է կապւում համեմատաբար ուշ ժամանակների հայ եւ օտար պատմիչների մօտ խառնակ ժամանակագրութեամբ պահպանուած տեղեկատւութիւնը Աբդռահիմ զօրավարի (Աբդ ալ-Ռահման իբն Ռաբիա) արշաւանքի մասին դէպի Հայաստան եւ մինչեւ Դերբենդ (տե՛ս, օրինակ, *Յովհան Մամիկոնեան*, Պատմութիւն Տարօնոյ («Մատենագիրք Հայոց», հ. Դ-Ե, Է դար), ԺԱ.25-37, էջ 1123-1124), որը պատմագրութեան մէջ աւանդաբար վերագրւում է աւելի ուշ ժամանակների:
23. ՍՄ թիւ 1343 պատառիկում ամբողջ տողը ցաւալիօրէն մաշուած է թերթի ընդլայնակի ծալման հետեւանքով, ուստի հնարաւոր չէ ստուգել հնագոյն ամբողջական գրչագրի ընթերցումը ո՛չ գլխատառի հարցում, ո՛չ էլ՝ Կոստանդի տարուայ թուահամարի:
24. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԳ, էջ 119 (146):
25. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԳ, էջ 119-120 (146-147):

26. *Յ. Մանանդեան*, Արաբական արշաւանքները Հայաստանում (Ժամանակագրական դիտողութիւններ). Երկեր. հ. Բ, Երեւան, 1978 (արտատպուած՝ *Յ. Մանանդեան*, Մանր հետազօտութիւններ, Երեւան, 1932), էջ 528-536: Ը-Բ վրիպակի յաճախութեան մասին տե՛ս *Նորայր Ն. Բիւզանդացի*, Նախնիք. Հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեան. Ժնեւ. 1996, էջ 43; *Ա. Յակոբեան*, Աղուանից իշխանների ժամանակագրութիւնը, էջ 289, ծան. 36; Պատմութիւն *Սեբէոսի*, էջ 219, ծան. 103:

27. *Յ. Մանանդեան*, Արաբական արշաւանքները Հայաստանում, էջ 531-533: Ուսումնասիրողը նշում է, որ 649 թուականի ընդունման դէպքում («յամին *Ը-երորդի* Կոստանդնի») ճիշտ կը լինէր ենթադրել գրչական վրիպակ հոռի ամսուայ օրահամարի ընթերցման մէջ. այդ տարուայ հոռիի *ԻԴ*-ն (փոխանակ՝ *ԻԳ*) օգոստոսի 9-ին էր եւ կիրակի: Այսպիսի լուծումը հանգամանօրէն հիմնաւորել է նաեւ Աբրահամ Զամինեանը, որի՝ Սեբիոսի երկին նուիրուած անտիպ ուսումնասիրութիւնը պահւում է Մաշտոցի անուան Մատենադարանում եւ օգտագործուել է Գեւորդ Աբգարեանի կողմից (տե՛ս Պատմութիւն *Սեբէոսի*, էջ 316, ծան. 520):

28. Տե՛ս *Նորայր Ն. Բիւզանդացի*, Նախնիք, էջ 50: Նշենք, որ հէնց Սեբիոսի բնագրի վաղ ընդօրինակողների գրչի տակ տեղի են ունեցել այդ տառերի ակնյայտ վրիպումներ, որոնց հետեւանքով մեզ հասած *Ա* գրչագրում ունենք (իսկ այդպէս՝ նաեւ Թ. Միհրդատեանցի հրատարակութեան մէջ՝ առանց նրա ծանօթագրութեան, հետեւաբար, անկասկած, նոյն ընթերցումն է եղել նաեւ հնագոյն Հ գրչագրում) «Մո*գ*իստոս» *փխ* «Մո*ղ*եստոս» (ԼԲ, էջ 83 (116)), «դրուն*դ*ար» *փխ* «դրուն*գ*ար» (ԽԲ, էջ 118 (144)), «Մար*դ*ոտ» *փխ* «Մար*գ*ոտ» (ԻՁ, էջ 68 (103). այս տեղում Թ. Միհրդատեանցի բնագիրն ունի «Մար*դ*առոտ» եւ ծանօթագրութիւն՝ «Ի միւսում օրինակի՝ *Մարգոտ*»):

29. *Հ. Ս. Բաղալեան*, Օրացոյցի պատմութիւն, էջ 322, 437: Էդուարդ Դանիէլեանը փորձել է այլ տրամաբանական լուծում տալ գրչական սխալների արդիւնքում ի յայտ եկած հակասութիւններին. նա հակուած է արաբների արշաւանքը վերագրել Կոստանդի «յամին հինգերորդի» յիշատակութեան յաջորդ տարուան (647), Արծափի գրաւման «յամին Բ-երորդի» վրիպակի փոխարէն ենթադրել «յամին [Զ]», իսկ «աւր ԻԳ» վրիպակի փոխարէն՝ «աւր Ի[Զ]» սկզբնօրինակային ընթերցումներ, որից յետոյ ստացուող 647 թ. օգոստոսի 12-ը իրօք կիրակի էր (*Է. Լ. Դանիէլեան*, Հայաստանի քաղաքական պատմութիւնը, էջ 174-175): Սակայն, կարծում ենք, որ Թումաս զօրավարի նշանակումից մինչեւ Թէոդորոս Ռշտունուն Հայաստան վերադարձնելը գոնէ մէկ տարուայ ժամանակահատուած ենթադրելով եւ Արծափի ճակատամարտը 650 թ. հաշտութեամբ աւարտուած արաբա-բիւզանդական եռամեայ պատերազմի աւարտական փուլին վերագրելով՝ Սեբիոսի բնօրինակում գրչական աւելի յաճախադէպ Ը-Բ եւ Դ-Գ վրիպակների ուղղում կատարելը թէ՛ բնագրագիտական, թէ՛ աղբիւրագիտական իմաստով առաւել լիարժէք լուծումը պէտք է համարել:

30. *Յ. Մանանդեան*, Արաբական արշաւանքները Հայաստանում, էջ 526-528:

31. Պատմութիւն *Ղեւոնդեայ* մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, Բ, էջ 6-8:

32. Հայ պատմագրութեան մէջ, ինչքան մեզ յայտնի է, չի ընկալուել այս փուլում բիւզանդական զօրքերի մասնակցութիւնը պատերազմական գործողութիւններին Հայաստանի տարածքում, եւ փոխարէնը՝ անարդարացիօրէն բարձրացուել է Թէոդորոս Ռշտունու ինքնուրոյնութեան աստիճանը: Իհարկէ, այլ հարց է, թէ ինչքանով էին արդարացի Մարդուցայքի դէպքերից քիչ անց Հայաստանից հեռացած (հասկանալի է՝ կնքուած զինադադարի պայմանագրի ըստ այսմ վերականգնուող մի պահանջի համաձայն) յոյն զօրականները, որոնք 2-3 տարի անց եւ 100-հազարանոց բանակով Հայաստան վերադառնալու հնարաւորութեան պահին (այսինքն, փաստօրէն՝ զրպարտանքի պէս) Մարդուցայքի ճակատամարտի անյաջողութիւնը կապում էին հայ հրամանատարի պսիուածքի հետ (զոնէ՝ ըստ Սեբիոսի պատմածի):

33. Օրինակ, Յակոբ Մանանդեանի չյաջողուած ենթադրութեան համաձայն՝ կապուելով Հիջրի թուականի հետ (*Յ. Մանանդեան*, Արաբական արշաւանքները Հայաստանում, էջ 524):

34. Իրականում՝ 632 թ.: ՊԱ-ում (իսկ նրա շարադրումից առաջ՝ անկասկած Աղուանից վեհարանի քրթուկ-տոհմամատեանում) գրեթէ բառացի արտագրութեամբ պահպանուած, ըստ Նիկողայոս Ադոնցի ուշադիր դիտարկման՝ Թ-դարի 40-ական թթ. ստեղծուած, եւ հայր Ներսէս Ակինեանի կարծիքով՝ ինչ-որ արաբական ստեղծագործութիւնից թարգմանուածի տպաւորութիւն թողնող այդ երկի աղբիւրագիտական վերլուծութիւնը տե՛ս *Ն. Ադոնց*, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 119-120; *հ. Ն. Ակինեան*, Մովսէս Դասխուրանցի, կոչուած Կաղանկատուացի եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 337-338; *А. А. Акопян*, Албания-Алуанк, էջ 209:

35. Հմմտ. *Ն. Ադոնց*, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 120-12?: Ժամանակին Անանիա Շիրակացուն կամ Է դարի Անանունի վերագրուած այդ «Ժամանակագրութեան» քննական բնագիրը վերջերս պատրաստուեց մեր կողմից «Մատենագիրք Հայոց» շարքի Է դարի երկհատորեակի համար (Անթիլիաս, 2005, էջ 898-969: Տե՛ս նախ. 384-385, էջ 967): Նախորդ հատուածում Փիլոն Տիրակացին նոյն հակիրճ, կարելի է ասել՝ հպանցիկ ոճով գրում է Պաղեստինում եւ Ասորիքում արաբների առաջխաղացման մասին. «Կոստանդին՝ *ամս* Դ [!]: Ի սորա աւուրս տիրեցին Տաճիկք Ասորւոց եւ արկին ընդ հարկաւ զեկեղեցիս սուրբ քաղաքին Երուսաղէմի» (նախ. 382-383, էջ 966):

36. Մեր կարծիքով՝ դա, ամենայն հաւանականութեամբ, ոչ այլ ինչ է, քան պարզապէս մի վաղ գրչի ստեղծագործական մօտեցման արդիւնք:

37. Խնդիր է առաջացնում միայն Սեբիոսի բնագրում նշուած շաբաթուայ օրը՝ ուրբաթ («աւր Ի էր Տրէ ամսոյն, *յաւուր ուրբաթի*»), որովհետեւ 641 թ. հոկտեմբերի 6-ը շաբաթ է եղել: Ուրբաթ եղել է նախորդ տարուայ՝ 640-ի հոկտեմբերի 6-ը, եւ դրա հիման վրայ Յակոբ Մանանդեանը Դուինի առումը արաբների կողմից ի վերջոյ թուագրում է հէնց այդ օրով (*Յ. Մանանդեան*, Արաբական արշաւանքները Հայաստանում, էջ 513-522): Եթէ ընդունելու լինէինք այդպիսի լուծումը, ապա պէտք է ենթադրէինք, որ Դուինի առումը Հերակլի մահուանից յետոյ յիշատակող Սեբիոսը («Մեռաւ Երակլոս... Եւ եկ զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ...») տուեալ դէպքում կարեւոր է համարել ոչ թէ այդ հերթականութեան ճշգրտութիւնը, այլ յարակից սիւժետային գծի մի

տարրի (Հայոց աշխարհում զօրավարի պաշտօնի թափուր լինելու) շեշտումը: Այսինքն. *Հերակլը մտադրում է* աքսորից վերադարձնել եւ «ի կարգն առաջին» (այսինքն՝ Հայոց զօրավար) հաստատել Վարազտիրոց ասպետին, սակայն չի հասցնում ու մահանում է, ուստի «ոչ ոք ընտրեցաւ զաւրավար աշխարհին Հայոց» (սիւժետային այս գիծն աւարտում է հետագայում՝ Դուինի անկումից յետոյ, նորընտիր Ներսէս կաթողիկոսի ջանքերով Թէոդորոս Ռշտունուն զօրավարութեան ու պատրկութեան պատիւ շնորհելու յիշատակութեամբ). եւ այդ «անզօրավար» փուլի՝ ստիպուած պէտք է հասկանանք՝ *սկզբում*, երբ Հերակլը դեռ կենդանի էր եւ «երդուեցնում էր» իր որդուն Վարազտիրոցին վերադարձնելու մասին, «եւ զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ...»: Թւում է, թէ այս կարգի ենթադրութիւնները չափազանց ձգուած են (թէպէտեւ՝ ոչ լրիւ բացառուած), ուստի գուցէ աւելի արդարացուած կը լինի համարել, որ «յաւուր ուրբաթի» բառերը պարզապէս Սեբիոսի բնագրինը չեն, այլ մտցուած են նրա մէջ մի «գրագէտ» ընդօրինակողի կողմից՝ մի քանի տող վերեւ նշուած «Եւ եղեւ *յաւուրն հինգերորդի* դիմեցին ի վերայ քաղաքին. մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա...» տեղեկութիւնը սխալմամբ իբրեւ շաբաթուայ օրուայ նշում ընկալելու արդիւնքում (իրականում այն վերաբերում է Դուինի *հնգօրեայ շրջապատումից* յետոյ տեղի ունեցած ներխուժմանը): Նշենք, որ Էդուարդ Դանիէլեանն առաջարկում է մէկ այլ լուծում՝ Սեբիոսի «աւր Ի էր Տրէ ամսոյն» բնագրում վերականգնել սկզբնօրինակի ենթադրեալ «Ի[Ձ]» օրահամար (*Է. Լ. Դանիէլեան*, Հայաստանի քաղաքական պատմութիւնը, էջ 159), սակայն քանի որ պահպանուած բնագիրը պակաս աւսի որեւէ նշան չի ցուցաբերում, ապա այդ կարգի վերականգնումներից պէտք է հնարաւորինս խուսափել:

38. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, Խ, էջ 109-110 (138-139): Տեղին նշենք, որ Դիոնիսիոս Թելմահարցուն հասած տուեալների համաձայն՝ արաբները գրաւել են Աղաբին, այսինքն՝ Դուին քաղաքը Յունաց 952 թ. (640/641 թ.) եւ կոտորել 12 հազար մարդու (Chronique de *Denis de Tell-Mahre*, Trad. par J. B. Chabot, Paris, 1895, էջ 6. հմմտ. *Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան*, Հայաստանը VI-VIII դարերում, էջ 47):

39. Իհարկէ, պատմիչին բնորոշ որոշ ստեղծագործական ազատութեամբ, օրինակ՝ Թէոդորոս Ռշտունուն, որն ըստ Սեբիոսի՝ Նախճաւանի կողմերում էր, դէպի Ձորապահակի կիրճը տանելու «մանրուքում»: Տե՛ս Պատմութիւն *Ղեւոնդեայ*. Գ, էջ 9:

40. Հմմտ., օրինակ. *Յ. Մանանդեան*, Արաբական արշաւանքները Հայաստանում, էջ 522-528; Հայ ժողովրդի պատմութիւն, հ. II, էջ 308-309; *Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան*, Հայաստանը VI-VIII դարերում, էջ 50-53: Կարելի է յաւելել, որ նշուած լուծումն ընդունելու դէպքում վերաքժեւորուելու է Ղեւոնդի մօտ Դուինի առման պատմութեան վերջում առկայ այն պնդումը, թէ դրանից յետոյ արաբները 10 տարի չյարձակուեցին Հայաստանի վրայ (Գ, էջ 11): Իհարկէ, 641-ից մինչեւ 648/649 թթ. ընկած ժամանակը պակաս է, քան 10 տարին, սակայն՝ ոչ այնքան, որպէսզի Ղեւոնդի աղբիւրի վերականգնման *փորձը* չհամարուի ուշադրութեան արժանի:

41. Chronique de *Denis de Tell-Mahre*, էջ 7: Թարգմանութիւնն ըստ՝ *Յ. Մանանդեան*, Արաբական արշաւանքները Հայաստանում, էջ 526-527: Հմմտ. *Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան*, Հայաստանը VI-VIII դարերում. էջ 49 (ուսումնասիրողը փորձում է էլ աւելի հնացնել ասորի պատմիչի թուագրումը՝ մինչեւ 641 թ., որը չի կարելի արդարացուած համարել):

42. Տե՛ս *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԲ. էջ 115 (143)): Տեղին նշենք, որ Վաղենտինի դաւաճանութեան մասին պատմող հատուածը (էջ 115 (142-143)) *Ա* գրչագրում կարմիր գլխատառով է սկսում («Եւ եղեւ յերկրորդում ամի Կոստանդի՝ թոռին երանելւոյն Երակլի, խորհէր [Վաղ]ենտին ի միտս իւր ճարտարութեամբ խաբել զս[ի]նկղիտոսն եւ համբառնալ զինքն ի պատիւ թագաւորութեանն...»):

43. Իբրեւ այլ տարբերակ՝ Պրոկոպիոսի եւ Թէոդորոս Ռշտունու համատեղ ներխուժումը Բասեա Սառուզ կարելի էր վերագրել մինչեւ Թումաս զօրավարի կողմից հայ իշխանի ձերբակալման ու կայսեր մօտ 646 թ. ուղարկելու ժամանակին (այդպիսով Դիոնիսիոս Թելմահարցու մօտ պահպանուած թուագրումը աւելի քիչ կը տեղաշարժէինք): Սակայն ստորեւ շարունակուող տարբերակի հաւանականութիւնն աւելի մեծ է թւում:

44. Վերջին թուականն ակնյայտ անախրոնիկ է անգամ ընդհանուր ժամանակաշրջանը շատ վատ պատկերացրած Ղեւոնդի համար, ուստի հնարատր է ենթադրել, որ մեզ հասած ձեռագրերի «ԻԵ-երորդ» ընթերցումը մի վաղ վրիպակի արդիւնք է: Չափազանց հրապուրիչ է մտածել, որ պատմիչի մօտ ասուած է հղել «ի Ե-երորդ». աւելի ճիշտ՝ «ի Է-երորդ» («Է» եւ «Ե» տառերի համատարւած շփոթութեւմբ), որը մեզ կը բերի պարզապէս 647/648-650 թթ. պատերազմի սկզբի իրական տարուան:

45. Յաջորդ պարբերութեան տեղեկութիւններն արդէն վերաբերում են 660-ական թթ. սկզբի իրադարձութիւններին. հպատակուելու պահանջով Մուաւիայի ուղարկած հրովարտակը, «շինող սրբոյն Գրիգորի» Ներսէս քահանայապետի գլխաւորութեամբ հայերի ժողովի համաձայնութիւնը եւ Գրիգոր Սամիկոնեանին ու Սմբատ Բագրատունուն պատանդ ուղարկելը: Նրանցից առաջինին իր իշխանութեան 2-րդ տարում (այսինքն՝ 662 թ.) ամիրապետն ուղարկում է հայրենիք՝ շնորհելով Հայոց իշխանի պատիւը, եւ այդպէս շարադրանքը հասնում է գլխի վերտառութեան մէջ խոստացուած սիւժէին. «Եւ եթէ զիա՛րդ յաւուրս նորա [Մուաւիայի - *Ա. Յ.*] էր իշխանն Գրիգոր, եւ որ ինչ անցք անցին ընդ աշխարհս Հայոց» (Պատմութիւն *Ղեւոնդեայ*, Դ, էջ 12, 14): Իհարկէ, իբրեւ տարբերակ՝ կարելի էր համարել, որ այս ժամանակին, այսինքն՝ Մուաւիայի իշխանութեան առաջին տարուան (661 թ.) է վերաբերում նաեւ Վարդ Ռշտունու մասնակցութեամբ բիւզանդա-արաբական ճակատամարտը, սակայն աւելի հաւանական է թւում Ղեւոնդին վերագրել մի գլխի մէջ երկու պատմութիւնների մէկտեղումը, քան, ասենք, նրան աղբիւր ծառայած պատումի հեղինակին՝ կայսէր եւ Թէոդորոս Ռշտունու միջեւ նամակագրութեան յօրինումը:

46. 649 թ. Զատիկը եղել է ապրիլի 5-ին, իսկ 650-ին՝ մարտի 28-ին: Տե՛ս *Հ. Ա. Բադալեան*, Օրացոյցի պատմութիւն, էջ 437:

47. *Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 55: Ըստ Ա. Ստրատոսի եզրայանգումների՝ բերուած Հ. Բարթիկեանի կողմից՝ արաբների ծովային արշաւանքները դէպի Կիպրոս տեղի են ունեցել հիջրի 28-րդ., այսինքն՝ 648-649 թթ., իսկ բիւզանդա-արաբական հաշտութեան պայմանագրի կնքումը՝ 650 թ. *մայիսին* (*Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 251, ծան. 324, 328, 330): Սոյն աշխատանքում մենք խուսափել ենք արաբ պատմիչների հակասական ժամանակագրական հաղորդումների քննարկումից, գիտակցելով հանդերձ, որ յատկապէս 640-ական թթ. անցուդարձերին (ինչպէս Հայաստանի, այնպէս էլ Ատրպատականի, Աղուանքի եւ Դերբենդի տարածքի) վերաբերող նրանց տուեալները էապէս ենթակայ են լուրջ ուղղումների, իհարկէ, յատուկ ուսումնասիրութեան մէջ եւ շարունակելով Արամ Տէր-Ղեւոնդեանի («Սեբէոսի երկը որպէս VII դարի Մերձաւոր Արեւելքի պատմութեան աղբիւր») սկսածը:

48. Առարկայօրէն միայն իբրեւ դիմացի կողմին արուած «առաջարկ» կարելի է գնահատել բիւզանդացիների՝ իրականում այդ համառ պահանջը: Մեզ չպէտք է շփոթութեան մէջ գցի «հրաման» բառը, քանի որ պատահական չէ, որ Սեբիոսը, որն ամենեւին չի խուսափում իր գնահատականները սուր բառերով ու ոճով արտայայտելուց (հմմտ., օրինակ, «ոչ դադարեաց վիշապն այն ապստամբ», «նեռին արբանեակն» եւ այլն), տուեալ դէպքում ընդամենը ասում է՝ «հրաման տուեց. որ գրեն» («Յայնժամ *հրաման ետ* թագաւորն հայրապետաւն հանդերձ, *եւ գրեն հրովարտակ* առ Հայս, *զի* միաբանութիւն հաւատոյ *արասցեն* ընդ Հոռոմի, *զի մի՛ խոտեսցեն* զծողովն եւ զտումարն զայն»): Քաղաքական նրբանկատութեան պատկերն ամբողջացնելու համար շեշտենք նաեւ հայերին համոզելու նպատակով փիլիսոփայ Դաւիթ Բագրաւանցուն ուղարկելու եւ մերժումից յետոյ (գոնէ՝ որքանով տեղեակ է Սեբիոսը) որեւէ պատժամիջոց չկիրառելու հանգամանքները: Տե՛ս նաեւ ստորեւ, ծան. 69:

49. Պատմութիւն *Սեբէոսի եպիսկոպոսի*, ԽԴ, էջ 122 (149): Միանգամից պէտք է նաեւ նշել, որ մեր ասածի հիման վրայ ամենեւին չի կարելի թերագնահատել այն *կործանիչ* դերը, որն իրականում ունեցաւ հերթական անգամ դաւանաբանական միասնութեան հասնելու կայսերական այդ «գաղափարը» հայ-բիւզանդական դաշնակցային յարաբերութիւնների համար՝ ուղղակի յանգեցնելով դրանց խզման եւ փոխարէնը՝ հայ-արաբական դաշինքի կնքման: Բայց (-պէտք է միջարկի պատմութեան մէջ «Եթէ»-ներից խուսափող աղբիւրագէտը-) Զուարթնոցի տաճարի հիմքերն արդէն դրուած էին եւ այլեւս չէին քանդուելու:

50. Բնականաբար, խօսք չէր կարող լինել նաեւ արաբական ուժերը Հայաստան մտցնելու իրաւունքի մասին:

51. Ասում ենք՝ «գրեթէ», որովհետեւ գոնէ «Հայոց իշխանի» եւ միւս նախարարների կողմից բիւզանդական տիտղոսներ ստանալը (կամ պահպանելը. իսկ այդպէս՝ նաեւ Աղուանքում եւ Վիրքում) ցոյց է տալիս, որ արաբաբիւզանդական ինչ-որ համաձայնութեամբ (աղբիւրներում յատուկ չարտացոլուած) կայսրութիւնը Է դարի ամբողջ երկրորդ կէսում, թերեւս, որոշ դերակատարութեան իրաւունքներ է պահպանել այսրկովկասեան երկրների կառավարման

համակարգում, փաստօրէն, դրանով նպաստելով այդ երկրների իրական ինքնավար կարգավիճակին:

52. Մանրամասն տե՛ս Յովհան Մամիկոնեանի երկի գիտաքննական հրատարակութեան առաջաբանում («Մատենագիրք Հայոց», h. Դ-Ե, Է դար, էջ 973-975): Թերեւս ուշագրաւ է, որ Տարօնի պատմիչը Է դարի 80-ական թթ. սկզբին, այսինքն՝ արաբների դէմ Հայոց «քառամեայ ապստամբութեան» ժամանակ, ի մի է բերել Հայոց իշխանների *հակապարսեան* ընդվզումներին նուիրուած պատմութիւնները, իսկ պատմագիր Ղեւոնդը Ը դարի վերջում, այսինքն՝ արաբական խոր տիրապետութեան ժամանաշրջանում, վերաշարադրել է Թէոդորոս եւ Վարդ Ռշտունիների *հակաբիւզանդական* հերոսագործութիւնների դրուագները:

53. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԴ , էջ 122-137 (148-161):

54. Նկատի ունենք «եւ եղեւ յետ այնորիկ...» ոճով անցումների բացակայութիւնը: Փոխարէնը ունենք, օրինակ, «*Յայնմ ժամանակի* արկ ի միտս իւր կաթողիկոսն Հայոց Ներսէս...», «*Այլ* ոչ դադարեաց վիշապն այն ապստամբ...», «*Եւ արդ*՝ գրեն նոքա ամբաստանութիւն առ թագաւորն Յունաց Կոստանդին եւ հայրապետն...», «*Յայնժամ* հրաման ետ թագաւորն հայրապետաւն հանդերձ, եւ գրեն...»:

55. Նշելի է, որ բիւզանդական աղբիւրները Սեբիոսի երկում 650-651 թթ. ժամանակահատուածին վերագրուող Գէորգ Մագիստրոսի եւ Մանուէլ Արշակունու դաւադրութեան մասին տեղեկութիւններ չեն պահպանել:

56. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԵ, էջ 137-139 (161-163):

57. Սեբիոսը տալիս է նաեւ «յամին ԺԹ-երորդի *Իսմայելացւոց տէրութեանն*» թուագրումը, որն արեւելագիտութեան մէջ, ինչքան մեզ յայտնի է, ցայսօր մինչեւ վերջ չի վերծանուել, սակայն ի գիտութիւն է ընդունուել՝ որպէս հայ պատմիչի կողմից օգտագործուած եւ 632/633 թուականը մեկնակէտ ունեցող տոմարական համակարգ: Հնարաւոր է, որ դրա սկիզբը եւս վերաբերում է Մահմեդի մահից յետոյ Աբու Բաքրի իշխանութեան անցնելու առաջին տարուան (632 թ.), ինչպէս որ վերը քննարկուած՝ Ղեւոնդի Բ եւ ՊԱ Գ.ա-բ գլուխներ թափանցած իւրօրինակ համակարգի դէպքում էր (տե՛ս վերը եւ ծան. 33), այն տարբերութեամբ, որ Սեբիոսի օգտագործածի մեկնակէտը շեղում չունի պատմական իրականութիւնից:

58. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԶ, էջ 139-140 (163-164): Ասում ենք «չորսհարիւրամեայ», որովհետեւ ուշ երկաթագրում համապատասխան տառերի նմանութեան հիման վրայ եւ պատմիչի կողմից ժամանակի այդ աստիճան թիւր ընկալումը բացառելով՝ գրչագրերի աւանդած «ՇԽԲ» թուականի մէջ հարիւրաւորը հաստատապէս պէտք է վերականգնել «Ն»:

59. Հետեւելով Գեւորգ Աբգարեանին (Պատմութիւն *Սեբէոսի*, էջ 357, ծան. 641)՝ պէտք է համարել, որ նշուած վերջին տարեթիւը («յերկոտասաներորդ ամի թագաւորութեանն Կոստանդնի») վերաբերում է արաբների կողմից պատերազմական գործողութիւնների իրական սկզբին (652/653 թ. ձմեռ), այլ ոչ թէ՝ դրանք սկսելու մտադրութեանը (այսինքն՝ զինադադարի պայմանագրի խախտմանը), որի թուագրումը պատմիչը տուել էր քիչ վերեւ՝ նշելով Կոս-

տսնդի 11-րդ տարին (651/652 թ.): Մի քանի հատուած յետոյ, անցնելով ս-րարների կողմից ակտիւ ռազմական գործողութիւնների նկարագրութեանը (շարադրանքի մէջ ռազմատենչութեամբ տոգորուած «Թուղթ արքային Իսմայելի առ թագաւորն Յունաց Կոստանդին, որ ունէր զայս ինչ գրեալ» վերնագրով նամակի ընդգրկմամբ)՝ Սեբիոսը նորից կրկնում է իր թուագրութիւնը. «Եւ եղեւ *յամին մետասաներորդի* Կոստանդի՝ *լուծումն լինի հաշտութեանն*, որ *ընդ Կոստանդին եւ ընդ Մաւիաս* իշխանն Իսմայելի» (ԽԷ, էջ 146-147 (169):

60. *Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 55:

61. Արամ Տէր-Ղեւոնդեանը եւս 2 տարին է համարում պայմանագրի գործողութեան պաշտօնական ժամկէտը (*Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան*, Սեբէոսի երկը որպէս VII դարի Մերձաւոր Արեւելքի պատմութեան աղբիւր, էջ 126-127 (665-666)):

62. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԶ, էջ 140 (163-164):

63. Էջ 29, ծան. 4. հմմտ. Պատմութիւն *Սեբէոսի*, էջ 343, ծան. 608, *Է. Լ. Դանիէլեան*, Հայաստանի քաղաքական պատմութիւնը, էջ 198-199, ծան. 18:

64. Տարաբախտաբար, մարերը դաւաճանեցին Յազկերտին, իսկ թիւրքիտ-թէտալացիները, ըստ հայ պատմիչի՝ սպանեցին նրան: Սեբիոսը վերջին Սասանեանի մահուան մասին այլ մանրամասներ չի յայտնում, իսկ յետսասանեան պատմական աւանդոյթի վիպական պատկերացումների համաձայն (թափանցած արաբական պատմագրութիւն եւ «Շահնամէ»)՝ Յազկերտ Գ-ն սպանուել է մի ջրաղացպանի ձեռքով (մանրամասն տե՛ս *А. И. Колесников*, Завоевание Ирана арабами (Иран при "праведных" халифах), Москва, 1982, էջ 138-145): Տաբարիի եւ Ֆիրդուսիի մօտ յիշատակւում է Յազկերտի դեգերումներին մասնակից ոմն Ֆառուխզադ (= Խոռոխազատ), որը Մերւ քաղաքում (= Մարգ) արքային թողեց տեղի մարզպանի մօտ, իսկ ինքը վերադարձաւ Իրաք (նոյն տեղում, էջ 137): Ուշագրաւ է, որ Սեբիոսը յիշատակում է Խոռոխազասփն Կադեսիայի ճակատամարտի առիթով (*Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, Խ, էջ 109 (137). «684 թ. պատմութիւնը» գիտի նրան Խոռազատ անունով. ՊԱ, Բ.ժը, էջ 175-176), սակայն վերջին դրուագներում օգտագործում է միայն «Մարաց իշխան» անունը:

65. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԶ, էջ 140-141 (164): Ըստ պատմիչի տեսակէտի՝ «ընդ մահու եւ ընդ դժոխոց» այդ ուխտ-դաշինքով Թէոդորոսը եւ միւ հայ իշխանները դեն նետեցին «զաստուածային դաշնաւորութիւնն», եւ դրա պատճառը նա համարում է բիւզանդացիների դաւանական նկրտումները («Եւ այնպէս քակեալ պատառեաց զնոսա ի Հոռոմոց նեռին արքանեակն [հասկանա՛լ իրօք սատանային, որը ստիպում է բիւզանդացիներին՝ հայերից դաւանափոխութիւն պահանջել, այլ ոչ թէ՝ ինչ-որ կոնկրետ անձնաւորութեան - *Ա. Յ.*]»): Մինչեւ իր երկի աւարտը Սեբիոսը անկոմպրոմիսային, սկսում է մերժել ե՛ւ բիւզանդացիների դաւանական նկրտումները, ե՛ւ արաբների հետ հայերի դաշնակցելու օգտակարութիւնը:

66. Թէպէտ, համադրելով տարասեռ վկայութիւնները՝ առաւել անհակասական է թւում հայ-արաբական դաշինքի կնքումը 652 թ. կէսերին վերագրելու տարբերակը: Այս շրջանի համար Թէոփանէս Խոստովանողի տուեալները համեմա-

տարար պակաս ու թերի են: Բիւզանդացի ժամանակագիրը Հայոց պատրիկի (կոչուած անհասկանալի *Պասագնաթէս* անունով, սակայն բոլոր ուսումնասիրողների կողմից իրաւացիօրէն նոյնացուած Թէոդորոս Ռշտունու հետ) ապստամբութիւնը եւ Մուաւիայի հետ դաշնակցելը թուագրում է Կոստասի 10-րդ, այսինքն՝ Պրոկոպիոսի կնքած զինադադարի յաջորդ տարով՝ 650-651 թթ., ապա յայտնում, որ կայսրը «եկաւ մինչեւ Կապադովկիայի Կեսարիան, բայց Հայաստանից յոյսը կտրած, վերադարձաւ» (ըստ այսմ՝ իրականութիւնը Կոստանդի 652 թ. աշնան - 653-ի գարնան հայաստանեան 100-հազարանոց մեծ արշաւանքի մասին ճիշտ է ներկայացուած դէպքերի ականատես Սեբիոսի մօտ): Յաջորդ՝ Կոստասի 11-րդ տարուայ համար (651-652 թթ.) Թէոփանէսը կարճ, բայց կարեւոր տուեալ ունի Հելիոպոլսում (Բաալբեկում) Հերակլիոսի զարմիկ, Պրոկոպիոսի կնքած հաշտութեան շրջանակներում արաբների մօտ պատանդ թողնուած Գրիգորիոսի մահուան մասին (*Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 55-56), որը կարող էր նախորդել (եւ պատճառներից մէկը լինել) Սեբիոսի նկարագրած մեծ արշաւանքին կամ, գուցէ՝ լինել վերջինիս հետեւանքը: Պատմական իրականութեանը ժամանակագրօրէն լրիւ մօտենում է Կոստասի 12-րդ տարուան (652-653 թթ.) վերագրուած շարադրանքը Մուաւիայի նաւատորմիղի կողմից Հռոդոս կղզին գրաւելու եւ արաբ Հաբիբ զօրավարի Հայաստան արշաւելու, կայսեր թողած Մաւրիանոսի գլխաւորութեամբ բանակին պարտութեան մատնելու եւ «մինչեւ Կովկասեան լեռները» (ըստ Սեբիոսի՝ Թէոդորոս Ռշտունու ուժերի հետ համատեղ՝ մինչեւ Պոնտոս) հալածելու մասին (*Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 56), որոնք տեղի են ունեցել 653-ի գարնան-աշնան ժամանակահատուածում (Հռոդոսի գրաւումը յաճախ թուագրւում է նաեւ 654-ով): Տեղին նշենք, որ ընդհանրապէս Կոստանդ Բ-ի հատուածի համար պէտք է նկատի ունենալ Թէոփանէսի որդեգրած ժամանակագրական զուգակշիռ համակարգի (արաբների «առաջնորդների», պատրիարքների տարիներով, աշխարհաստեղծման ու Քրիստոսի մարդեղութեան թուականութիւններով հանդերձ) առաւել խնդրառութիւնը: Այդ կայսեր իրականում 28 տարուայ իշխանութիւնը հեղինակը տեղաւորում է իր իմացած 27-ի մէջ (հայ պատմիչներից ոմանք որդեգրել են նաեւ 29 թիւը): Ուշագրաւ է նաեւ ուսումնասիրողների նկատած մէկ տարուայ ընդհանուր սխալը աշխարհաստեղծման ալեքսանդրեան համակարգի եւ ինդիկտիոնի տարիների միջեւ 609/610-725/726 թթ. ժամանակահատուածի համար (տե՛ս *И. С. Чичуров*, Византийские исторические сочинения, Тексты, перевод, комментарий, Москва, 1980, էջ 19):

67. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԶ-ԽԷ, էջ 141-146 (165-169): Ինչպէս վերը համառօտ նշեցինք, Թէոփանէսը գիտի միայն Մաւրիանոսի վերջին նահանջի մասին. «[Կոստասի 12-րդ տարում] արաբների զօրավար Հաբիբը արշաւեց Հայաստանի վրայ: Հանդիպելով հռոմայեցիների զօրավար Մաւրիանոսին, նրան հալածական արեց մինչեւ Կովկասեան լեռները, իսկ երկիրն աւարառեց» (*Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 56):

68. Այս եւ մնացեալ նմանատիպ տեղերում Թադէոս Միհրդատեանցի առաջին տպագրութեան ընթերցումները (տուեալ դէպքում՝ «Կապկո*հ*»), որոնք անցել են նաեւ հետագայ հրատարակութիւններ, չպէտք է հաշուի առնէինք, քանի

որ հեղինակային սկզբնօրինակի վերականգնման համար նշանակութիւն ունեցող հնագոյն (ներկայումս՝ կորած) Հ գրչագրում վերջին թերթերը ընկած են եղել: Սակայն մեր ենթադրութեան համաձայն՝ ՄՄ Երիցեան ֆոնդի կիսատ գրչագիրը յանգում է Հ-ին եւ կարող է փոխարինել նրան՝ *Ա* գրչագրի ընթերցումների հետ համեմատութիւններ կատարելու համար:

69. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն. ԽԷ, էջ 145 (168): Պատմիչը շարունակում է. «Եւ նա [Նիրսէսը - *Ա. Յ.*] կայր պապանձեալ: Եւ գիտացեալ թագաւոր զնենգութիւն նորա՝ *յանդիմանեաց* զնա *բանիւք* բազմաւք ի լեզու իւր», եւ թերեւս կարելի է պատկերացնել իրենց ազգերի երկու լուրջ քաղաքագէտ-դիւանագէտների՝ կայսեր ու կաթողիկոսի, իրար հասկանալը՝ պարզամիտ հոգեւորականի (որը դրանից յետոյ նոյնպէս ընդունեց հաղորդութիւնը) «ուղղախօսութեան» ֆոնի վրայ:

70. Տե՛ս վերեւում, ծան. 28:

71. Տե՛ս վերեւում, ծան. 1:

72. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, Ծ, էջ 153-154 (174-175):

73. Վերականգնումը՝ Գեւորգ Աբգարեանի (Պատմութիւն *Սեբէոսի*, էջ 359, ծան. 650):

74. Սակայն օժտուած անտեղի գլխագրերով:

75. Ըստ Սեբէոսի՝ ռազմական ընդհարումները տեղի են ունենում միայն բիւզանդական եւ արաբական բանակների միջեւ, թէպէտ վերջիններիս հրամանատար Հաբիբի (իբն Մասլամա) կողմից Արտաւազդ Դիմաքսեան իշխանին Աշնակի Արուճում մահապատժի ենթարկելու մասին պատմածը ցոյց է տալիս, որ հեղինակը տեղեակ է դիմադրութեան ինչ-ինչ օրինակների (*Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, Ծ, էջ 152 (173-174)): Սակայն ուրաք (ճիշտ է, համեմատաբար ուշ) պատմիչների, յատկապէս՝ Բալազուրիի մօտ, Մաւրիանոսի զօրքերին փախուստի մատնելու յիշատակութեամբ հանդերձ, խօսւում է հիմնականում հայերի լուրջ դիմադրութեան մասին (նաեւ՝ Վիրքի եւ Բուն Աղուանքի): Մանրամասն տե՛ս *Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան*, Հայաստանը VI-VIII դարերում, էջ 75-82:

76. Ուշագրաւ է, որ նոյն ժամանակ արաբների կողմից տարուեց, կամ, ինչպէս եւ Թէոդորոս Ռշտունին՝ նրանց հետ *գնաց* նաեւ Աղուանից իշխան Վարազ Գրիգորը: Ըստ «684 թուականի պատմութեան» վերը նշուած գլխի վերջին պարբերութեան՝ «Եւ ի քսաներորդ ամի թագաւորութեանն Յազկերտի համօրէն ի բաց բառնայր ի միջոյ տէրութիւնն Պարսից... Եւ այսպէս Տաճիկք յարձակեցան ի կողմանս հիւսիսոյ եւ արեւելից. եւ վտանգէին զտեարս տոհմից՝ տալ ի ձեռս զտեղիս ապաւինութեան եւ պատանդս առնուլ զզաւակս եւ զկանայս՝ չապստամբելոյ ի նոցանէն: Իբրեւ տեսանէր զզաւազանն խստութեան հարաւայնոյն Ջեւանշերի փոքր ինչ ժամանակ, դաւաճանեալ զնոսա՝ էանց յայնկոյս գետոյն, ուստի անվեհերն իւր սիրտ վառէր բորբոքէր՝ վերստին առնել առ նոսա պատերազմ, զի զիւր զհայրն [*bclr* զհայրն իւրեանց] ի նոցանէ եւս թափիցէ: Եւ հայր նորա արգելոյր զնա ի խորհրդոյն եւ *գնայր կամաւորաբար* ի թշնամիսն: Իսկ բազմիմաստս Ջեւանշէր ընդ զաւրավարին Հայոց դնէր ուխտ եւ քաջալերէր դառնալ ի հնազանդութիւն կայսերն Հոռոմոց...»

(Բ մթ. էջ 180-181): Վերջին միտքը վերաբերում է արդէն 657 թ. իրողութիւններին:

77. Տե՛ս *Է. Լ. Դանիէլեան*, Հայաստանի քաղաքական պատմութիւնը, էջ 222, 234, ծան. 36: Ուսումնասիրողը գտնում է, որ Ներսէսը Տայք է հեռացել Դուինի եկեղեցական ժողովից յետոյ, 650-ին, իսկ այնտեղից վերջնականապէս վերադարձել՝ 656-ին: Սակայն եթէ ընդունենք, որ Ներսէսի՝ «առաջին» անգամ Տայք գնալու պատճառն իրօք եղել է Հայոց իշխանի հետ ունեցած մի առճակատում, ապա, թերեւս, ճշգրիտ կը լինէր, հետեւելով Նիկողայոս Ադոնցին, նրանց տարաձայնութիւնները կապել քաղաքական դաշնակցութեան խնդրի հետ եւ Ներսէսի հեռանալը դնել հայ-արաբական դաշինքի կնքումից յետոյ (652 թ. առաջին կէս), որի դէպքում նրա «հալածանքների վեցերորդ տարին» կը համընկնէր 657 թուականին (*Ն. Ադոնց*, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 60, ծան. 1): Նշենք նաեւ, որ ոչնչով արդարացուած չէ աշխատանքի նոյն հատուածում (էջ 222, 234, ծան. 37, աւելի վաղ՝ *Э. Даниелян*, Армяно-византийские отношения в период заключения армяно-арабского договора, ԼՀԳ. 1988, թիւ 4, էջ 21-22, 31) Ղեւոնդի մօտ պահպանուած այն պատմութիւնը (գլուխ Դ, էջ 14) 656 թուականին վերագրելը, ըստ որի՝ Մուաւիան հրովարտակ է ուղարկել Հայաստան, որին ի պատասխան իշխաններն ու կաթողիկոսը յանձն են առել տարեկան 500 դահեկան հարկ վճարել եւ պատանդ են ուղարկել Գրիգոր Մամիկոնեանին ու Սմբատ Բագրատունուն (իր իշխանութեան երկրորդ տարում՝ 662 թ., ամիրապետը նրանց պատիւներով յետ է ուղարկել՝ առաջինին շնորհելով Հայոց իշխանի պաշտօնը): Տե՛ս վերեւում, ծան. 45:

78. *Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 57:

79. Տե՛ս *G. Ostrogorsky*, History of the Byzantine State, Translated from the German by Joan Hussey, New Brunswick, 1969, էջ 117, История Византии, Москва, 1967, т. 1, էջ 369:

80. Ըստ «684 թ. պատմութեան» ժամանակագրական տուեալներից մէկի՝ արաբների մայրաքաղաքը *Դամասկոս տեղափոխուելուց յետոյ 6-րդ տարում* Ջեւանշէր իշխանը, հերթական անգամ խորաթափանցութեամբ նկատելով Բիւզանդիայի թուլանալը՝ որոշում է հպատակուել խալիփայութեանը. «Այն *վեցերորդ ամ էր* հարաւայնոցն [*և* հարաւայինցն] փոխելոյ զթագաւորութիւնն իւրեանց յաշխարհն Ասորեստանի, զի թողեալ զերկիր աղախնոյն՝ *արկանէին զաթոռ տէրութեանն ի Դամասկոս*... Քանզի տուաւ նմա անընդդիմակաց զաւրութիւն, աշխարհավար իմաստ, ...տեսանելով զանհնարին տկարանալն կայսերն Հոռոմոց ի թագաւոր՚՚ն Հարաւայնոյ, որ իբրեւ զբոց ճարակեաց զբազմամարդ հրապարակս եւ զքաղաքս [*և* զքաղաք] նորա սրով [*և* հրով]. յայնժամ բազմահոգ վասն իւրոյ իշխանութեանն [*bclr* յաղագս իշխանութեան իւրոյ] լինէր մեծ իշխանն Արեւելից Ջեւանշէր. ...յանձն առնոյր նուաճել ընդ լծով ծառայութեան թագաւորին Հարաւայնոյ [*և* Հարաւոյ]» (տե՛ս ՊԱ, Բ-.իէ, էջ 194-195; *Անանուն*, 684 թուականի պատմութիւն, «Մատենագիրք Հայոց», հ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 840, նախ. 9-12): Այդ ժամանակի մասին հեղինակը նշում էր կատարել նախորդ գլխում՝ թուագրելով իր իշխանի տիրակալութեան (որի սկիզբը համարում էր Կաղեսիայի ճակատամարտի

տարում՝ 637 թ. սպարապետ նշանակուելը) 28-րդ տարով, այսինքն՝ 665 թ. «Եւ ահա այս *երկու ամք պակաս յերից տասներրեկաց* [30-2+637=665], յորս աշխարհակալ ասպարապետութեւմբն [*bclr* սպարապետութեամբն] իւրով ի տիոց անտի երիտասարդականաց մինչեւ ցմիջակ [*bclr* միջահասակ] արբունս ժամանակի դրուատայեղց, համաշխարհալուր կատարեաց...» (ՊԱ. Բ-.իզ. էջ 191; *Անանուն*. 684 թուականի պատմութիւն. հ. Դ–Ե, էջ 840. ծանօ. 14): Նոյն 665 թուականն է ստացւում նաեւ Կոստանդ կայսեր 19-րդ տարուայ յիշատակութիւնից (ՊԱ. Բ.իթ, էջ 183-184) յետոյ (659/660 թ.) հեղինակի թուարկած տարիների գումարը հաշուարկելիս. 2 տարի անց, այսինքն՝ 662 թ., տեղի է ունենում խազարների անյաջող արշաւանքը («Յետ այսորիկ լինելութեան եւ երկուցն հոլովելոց ամաց ելանեն Խազիրք յաշխարհս Աղուանից...». Բ.իզ, էջ 186), եւ 2 տարի անց, այսինքն՝ 664 թ., օծւում է Գարդմանի բերդի եկեղեցին («Ի յաղթահարելն Ջեւանշերի եւ երկուց ամաց անցելոց զկնի վանելոյն զզաւրսն Խազրաց կատարի գեղեցկայարմար շինումն տաճարին...որ աւր մետասան էր արաց ամսոյ [=664 թ. նոյեմբերի 20]...». Բ.իդ, էջ 187), իսկ յաջորդ տարի իշխանը խնամութիւն է հաստատում հոների հետ՝ իր անդրանիկ որդուն ամուսնացնելով Հոնաց արքայադուստրերից մէկի հետ («Մինչդեռ նստէր խաղաղացեալ ի գահոյս իւր արին Ջեւանշէր, ի միւս ամին լինէր ծմեռնային եղանակի հասարակաւորութիւն, ել թագաւորն Հոնաց յոգնահւզար հեծելովք...». Բ.իզ, էջ190-191), որը նաեւ նրա տիրակալութեան 28-րդ եւ արաբներին ենթարկուելու տարին էր՝ 665 թ.: Այսպիսով, նշելով, որ դա վերջիններիս *մայրաքաղաքը Դամասկոս տեղափոխելու տարուց* հաշուած «վեցերորդ ամ էր», «684 թ. պատմութեան» հեղինակը նկատի ունի 659 թուականը:

81. Տե՛ս *Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 59 (մեր դրած հարցականի տեղում Հրաչ Բարթիկեանը վերականգնել է «ամիրա»): Հմմտ. *G. Ostrogorsky*, History of the Byzantine State, էջ 117, История Византии, т. 1, էջ 369: Պէտք է նշել, որ բերուած բնագրի երկրորդ նախադասութեան մէջ նշուած փաստերից մէկը («...Մուաւիսն...*հաստատուեց Դամասկոսում*, որտեղ եւ կենտրոնացրեց դրամական գանձերը [=Մեդինայից տեղափոխուած գանձարանը]») իրօք վերաբերում է 659 թ.: Նախորդ ծանօթագրութեան մէջ քննուած «684 թ. պատմութեան» ժամանակագրական այն, ըստ էութեան՝ յանկարծակի պնդումը, թէ 665 թուականը խալիփայութեան մայրաքաղաքը Դամասկոս տեղափոխելու «վեցերորդ տարին էր», ցոյց է տալիս, որ 659 եւ 661 թթ. անցքերի գնահատականները (պատմագրութեան մէջ ձեւաւորուած արաբական աղբիւրների հիման վրայ) ենթակայ են որոշակի ուղղման: Ստորեւ կը տեսնենք, որ 659 թ. բիւզանդա-արաբական հաշտութեան պայմանագրի կնքումը ժամանակակից Սեբիոսի կողմից եւս գնահատուել է իբրեւ Մուաւիայի խալիփայական իշխանութեան վերջնական հաստատում (հմմտ. նաեւ Էդուարդ Դանիէլեանի իրաւացի եզրայանգումը. *Э. Даниелян*, Армяно-византийские отношения в период заключения армяно-арабского договора, էջ 30, ծան. 36): Ըստ այսմ՝ կարելի է որոշ հաւանականութեամբ համարել, որ Թէոփանէսի ձեռքի տակ եղած ենթադրական սկզբնաղբիւրներից մէկը վկայութիւն է պարունակել հէնց 659 թ. Մուաւիայի «վերջնական» յաղթանակի մասին, որի հետ Թ դարի ժամանակագիրը միախառնել է մէկ այլ աղբիւրից յայտնի տեղեկութիւնը՝ իրականում 661 թ. մայիսին տեղի ունե-

ցած (հմմտ. *Ն. Ադոնց*. Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 60) Ալիի սպանութեան վերաբերեալ:

82. Ճշգրիտ՝ 663 թ. յուլիսի 17-ին (*G. Ostrogorsky,* History of the Byzantine State, էջ 122):

83. *Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 60: Ծռազատիկների ցանկը տե՛ս *Ա. Աբրահամեան*, Հայոց գիր եւ գրչութիւն, Երեւան, 1973, էջ 148:

84. Պատմութիւն *Սեբէոսի*, էջ 175-177. 364-365, ծան. 661:

85. Գեւորգ Արգարեանին ի թիւս այլ հանգամանքների («տողեցից» եւ «հաստատեցից» բառերի երկրորդ ապառնի ձեւի միօրինակ ընկալումը եւ այլն) շփոթութեան մէջ է գցել նաեւ այստեղ եւ քիչ յետոյ հանդիպող երկու «կարգ» բառերի իմաստները նոյնացնելը: Իրականում՝ առաջին դէպքում բառը նշանակում է «չարակարգութիւն», «հերթականութիւն», իսկ միւսում՝ «կարգ», «սովորութիւն» (բայց՝ ո՛չ «ուսումնասիրողների», այլ՝ «վարդապետական ուսմունքը սիրող-ունեցողնիրի», «գիտակների»):

86. *Ա* գրչագրից կատարուած ուշ արտագրութիւններում եւ Թ. Միհրդատեւսնցից սկսած՝ բոլոր հրատարակութիւններում՝ *իմոց* փոխանակ *Ա*-ի *իմոյ* ընթերցման, որը վերաբերում է ոչ թէ նախորդող «մտացս», այլ դրանից առաջ գրուած «խորհրդոյ» բառին:

87. Ճարունակութեան մէջ Սեբիոսն ասում է, որ «թէեւ *յառաջինս* կանխաւ *կատարեալ*, այլ սակայն *եւ* ի *վերջինսս* մինչեւ յաւիտեանս *կատարեսցի*՝ ըստ բանին [*Երից.* բանին Տեառն], որ ասէ. «Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն» (հմմտ. *Մատթ.* ԻԴ.35), որից յետոյ փորձում է բիբլիական օրինակներով «հաստատել» Դանիէլ մարգարէի նշած «չորրորդ գազանի»՝ արաբների՝ չարիքներ գործելու, բայց նաեւ վերջնական կործանման անխուսափելիութիւնը:

88. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, Ծ, էջ 155 (175):

89. Կարելի է աւելացնել, որ ըստ Սեբիոսի (*Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԲ, էջ 117 (144))՝ տարիներ առաջ Կոստանդի կողմից կիւրապաղատ եւ Հայոց իշխան ճանաչուելով՝ նրանից արծաթէ գահ էր ստացել նաեւ տարաբախտ Վարազտիրոց Բագրատունին («Յայնժամ հրամայեաց թագաւորն Կոստանդին առնել զնա *կիւրապաղատ* եւ տալ նմա պսակ [*Ա.* զսակ] պատ[ո]տյն եւ *զիշխանութիւն* աշխարհին: Եւ ... ետ տանել *զգահոյս արծաթեղէնս* հանդերձ այլովք մեծամեծ ընչիւք»):

90. ՊԱ, Բ.ի-իա, էջ 181-182, *Անանուն*, 684 թուականի պատմութիւն, հ. Դ-Ե, էջ 817-818:

91. Ուշագրաւ է, որ պատանդների կոտորածից խուսափում են ոչ միայն հետագայում Հայոց իշխանի պաշտօնին նշանակուած (Մուաւիայի կողմից) Գրիգոր Մամիկոնեւանը եւ նոյնպէս մեծարանքների արժանացած ու իր տոհմի փառքի շարունակելիութիւնն ապահոված Սմբատ Բագրատունին, այլեւ Աղուանից իշխան (արդէն՝ նախկին) Վարազ Գրիգորը: «684 թ. պատմութեան» մէջ շարադրուած է Գարդմանի բերդի եկեղեցու նաւակատիքի առիթով՝ 664 թ. նոյեմբերի 20-ին («որ աւր մետասան էր արաց ամսոյ»), Ջեւանշէր իշխանի

աղօթքը (ՊԱ. Բ.իդ. էջ 188-189), որտեղ նա ողորմութիւն է խնդրում ի թիւս իր այլ հարազատների՝ նաեւ հօր համար («մանաւանդ՝ *ծաղկեալ ալեաւք* հաւր իմոյ՝ Վարազ Գրիգորի»):

92. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն. Ծ. էջ 155 (175): Հակառակ կարծիքը տե՛ս *Է. Լ. Դանիէլեան*, Հայաստանի քաղաքական պատմութիւնը. էջ 224--225:

93. Բոլոր ձեռագրերն ունեն՝ «*Երեք* Համազասպայ եղբայր մի ի պատանդի» խաթարուած բնագիրը, որտեղ հայր Ն. Ակինեանը եւ Ստ. Մալխասեանցը ընդգծուած թուանշանի փոխարէն ստիպուած վերականգնում են «Եւ էր» բառերը (*Մ. Գ. Գրիգորեան*, Դիտողութիւններ եւ սրբագրութիւններ Սեբիոսի պատմագրոց բնագրին վերայ. Յաւելուած 1, էջ 134; *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն. Ծ. էջ 155 (175)):

94. Ճիշտ ընկալումը Քերովբէ Պատկանեանի եւ Գեւորգ Աբգարեանի: Ստեփանոս Մալխասեանցը եւ հայր Ներսէս Ակինեանը համարում են, որ «լայն»-ը վերաբերում է Համազասպ Մամիկոնեանին, որն ընդունելի չէ (տե՛ս Պատմութիւն *Սեբէոսի*. էջ 366, ծան.663):

95. ՊԱ վերը նշուած գլխի (Բ.ժթ. էջ 181) վերջում Աղուանից եւ Հայոց միաբանութիւնը ներկայացուած է այսպէս. «Իսկ բազմիմաստն [*bcr* բազմիմաստս] Ջեւանշէր *ընդ զաւրավարին Հայոց* դնէր *ուխտ* եւ քաջալերէր *դառնալ ի հնազանդութիւն կայսերն Հոռոմոց*. եղեալ միականն [*b* միակամն] եղբայրութեան՝ գրէր առ թագաւորն Յունաց...»: Յաջորդ գլխում (էջ 181) «684 թ. պատմութեան» հեղինակը բերում է կայսերն ուղղուած «ասպարապետ եւ իշխան Աղուանից» Ջեւանշէրի նամակը՝ «Հաճոյ թուեսցի քրիստոսասէր տէրութեանդ ախորժելով ընդունել ի հեռաւոր անձանց *զնորընծայ հնազանդութիւնս*» խնդրանքով, որը Բիւզանդիայում ընդունւում է ուրախութեամբ, տիտղոսների, նուէրների եւ մի պատասխան նամակի (հրովարտակի) առաքումով, ուր մասնաւորապէս ասւում էր. «ուրախ եղաք, փոխանակ զի առեր յանձն հանդերձ Արեւելեաց աշխարհաւդ *նուաճել մեզ ի հնազանդութիւն*, վասն որոյ մեք եւ որդիք մեր ընդ քեզ եւ ընդ ծնունդս քո մտերմաբար, անքակ սիրով *ազգէ յազգ մինչեւ յաւիտեան* քաղցրութեամբ եղիցուք» (Բ.իա. էջ 182): Ենթադրելի է, որ մօտաւորապէս այս ձեւակերպումներով պէտք է յստակեցուած լինէին նաեւ կայսեր եւ Հայոց իշխան Համազասպ Մամիկոնեանի յարաբերութիւնները:

96. Նկատի ունենք այն, որ հասկանալի բնագիր ստանալու համար բերուած հատուածի երկրորդ մասը պէտք է ընկալել (վերականգնումներ յաւելելու փոխարէն) կլոր փակագծի մէջ՝ «...(մինչեւ բարձաւ թագաւորութիւնն ... միաբանիցան ընդ Հայոց)»: Տեղին նշենք, որ ինչպէս երեւում է վիմագիր արձանագրութիւններից, փակագծերը Հայոց մէջ սկսել են կիրառել առնուազն Է դարից, եւ քննական բնագրեր կազմելիս կէտադրական նշանների թւում նրանց օգտագործումը օգնում է ոճական բարդ հատուածներում միջնադարեան հեղինակի խօսքն առաւել համարժէք ներկայացնելու խնդրում: Հմմտ. «Մատենագիրք Հայոց», հ. Դ-Ե, էջ 978 (խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում ուսուցչիս՝ Պարոյր Մուրադեանին):

97. Այդ կարգավիճակին Սիւնիքի անցնելու մասին Սեբիոսը գրել էր իր երկի սկզբում (գլ. Ջ. էջ 27 (67-68)՝ թուագրելով այդ իրադարձութիւնը Սասանեան Սուրէն մարզպանի դէմ Վարդան Մամիկոնեանի գլխաւորած («ի ԽԱ ամի թագաւորութեւսն Խոսրովայ՝ որդւոյ Կաւատայ», այսինքն՝ 571 թ.) ապստամբութեան նախօրեակով («Յայնժամ, յառաջ քան զայս, ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ [՞] Վահան իշխան Սիւնեաց, եւ խնդրեաց ի Խոսրովայ՝ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դընայ ի Փայտակարան քաղաք, եւ կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի, զի մի եւս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա, եւ կատարէր հրամանն»): Փայտակարան քաղաքի՝ Արաքսի հին գետաբերանի աջափնեայ տարածքում (մօտաւորապէս ներկայիս Պուշկինոյ քաղաքի շրջանում) ճշգրիտ տեղորոշումից յետոյ (*Բ. Յարութիւնեան*, Փայտակարան քաղաքը եւ նրա տեղադրութիւնը, ԼՀԳ, 1981, թիւ 12, էջ 61-76; *նոյնի*՝Հայաստանի պատմութեան ատլաս, Ա մաս, Երեւան, 2004, էջ 36, 53 եւ յետոյ; *А. А. Акопян*, Албания-Алуанк, էջ 104), ոմանք, ցաւօք, դեռ անհասկանալիօրէն շարունակում են կրկնել հնացած պատմա-աշխարհագրական պատկերացումները: Սասանեան Իրանի 4 սպահպետութիւնների մասին վերջին մանրակրկիտ քննութիւնը տես *Э. Ш. Хуршудян*, Армения и Сасанидский Иран (Историко-культурологическое исследование), Алматы, 2003, էջ 170-175:

98. Տե՛ս, օրինակ, Արամ Տէր-Ղեւոնդեանի մօտ. «*Համազասպ Մամիկոնեանի իշխանութեան տարիներին* Սիւնեաց իշխանութիւնը *Արցախի հետ* վերջնականապէս միացաւ Հայաստանին» (Հայ ժողովրդի պատմութիւն, հ. II, էջ 315): Նշենք, որ անկախ Սեբիոսի միայն այս հատուածից որոշ չափով առաջ եկող տպաւորութիւնից՝ դժուար է համաձայնել նաեւ ուսումնասիրողի մօտ մեր ընդգծած ուղիղ պնդման հետ, ըստ որի կենտրոնական Հայաստանին միացել էր նաեւ Հայոց Արցախ նահանգը (Աղուանից կամ աղբիւրներում յաճախ «Արեւելից» կոչուող առանձին «աշխարհի» կազմում): Դրա հակառակ պատկերին ենք հանդիպում ե՛ւ ժամանակակից Սեբիոսի, ե՛ւ մնացեալ աղբիւրների, մասնաւորապէս՝ Արցախի գաւառներից մէկում ստեղծուած «684 թուականի պատմութեան», ընդարձակ տեղեկութիւններում:

99. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽՁ, էջ 140 (164):

100. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԷ, էջ 146 (169):

101. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, Ծ, էջ 155-156 (175-176):

102. Սեբիոսի բնագրում բազմաթի՝ անգամ յիշատակուող *Թէտալացիք* ցեղանուան տակ ներկայանում են կա՛մ վաղ շրջանում՝ միջինասիական հեփթաղները, կա՛մ ուշ շրջանում՝ քիչ աւելի հիւսիս բնակուող թիւրքիւտական ցեղախմբերը: Այս դրուագում նոյն անուան առկայութիւնը Եգիպտոսի հարեւանութեամբ, ամենայն հաւանականութեամբ, մի վաղ գրչական վրիպակի արդիւնք է, որի փոխարէն պէտք է վերականգնոփ *Եթովպացիք* կամ *Թէբայեցիք* կամ մէկ այլ յարմար ցեղանուն: Հմմտ. իր «Ժամանակագրութիւնը» 686 թ. շարադրած Փիլոն Տիրակացու մօտ. «Եւ այս են անուանք աշխարհաց նոցա [որդւոց Քամայ - *Ա. Յ.*]. Եգիպտոս. Եթիովպէ, ...Եւրիւթրա, ...Թեբայիս, Ղիւբիէ, ...Սամմարէս, Սիւրտիս, ...Սակասք, Տաստամէացիք, Լիւբէ, ...Նումիդիա,

Մեսուրիս, Մաւրիտանիա, որ ձգի մինչեւ յարձանսն Հերակղեայ...» («Մատենագիրք Հայոց», հ. Դ–Ե, Է դար, Ա.91, էջ 908):

103. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, Ծ, էջ 155-156 (176):

104. Եփրատի ափերին, Բարբալիսոսի կամ Սիֆֆինի ճակատամարտում 657 թ. կրած փաստացի պարտութիւնից յետոյ Ալին մի քանի տարի վերահսկում էր Իրանի եւ Իրաքի արեւելեան տարածքները (*G. Ostrogorsky,* History of the Byzantine State, էջ 117; *К. Э. Босворт*, Мусульманские династии, Москва, 1971, էջ 28): Ճակատամարտի մասին մանրամասն տե՛ս *Արամ Տէր-Ղեւոնդեան,* Հայաստանը VI-VIII դարերում, էջ 89, 172, ծան. 14, *Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 253, ծան. 341, 342:

105. Գուցէ պատահական չէ, որ Մուաւիայի տիրապետութեան սահմանները նշելու համար Սեբէոսը հէնց այսպիսի եզրաբանութեան է դիմում (տե՛ս ստորեւ):

106. Թ դարի ժամանակագրի մնացեալ թուագրման հնարաւորութիւն տուող տեղեկութիւնների մէջ (աշխարհաստեղծման 6150-րդ, Կոստասի 17-րդ եւ Մուաւիայի 3-րդ տարի) Ալիի պարտութեան եւ սպանութեան՝ այլ աղբիւրներից ճշգրիտ յայտնի ժամանակներից կատարուած հաշուարկներով այս տարբերակը տուեալ դէպքում պէտք է համարել ամենից վստահելին:

107. *Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 58:

108. *Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 57:

109. Իհարկէ, չափազանց հրապուրիչ կը լինէր մտածել, որ արդէն Սեբէոսը եթէ ոչ կանոնաւոր, ապա գոնէ որոշ դէպքերում, տարին հաշուարկել է Հայոց տոմարի տարուայ ընդգրկումով (այդ դէպքում խնդրոյ առարկայ «Ի նմին ամի»-ն կը համապատասխանէր Հայոց ճԶ թուականին՝ 657 թ. յունիսի 14-ից մինչեւ 658 թ. յունիսի 13-ը): Սակայն փաստերի անբաւարարութեան պատճառով նմանատիպ ենթադրութիւնը կարող է երեւան գալ միայն հարցադրման ձեւով:

110. Սեբէոսի շարադրանքի գոնէ նախադրութեան հատուածը (գլուխ Ե) 640-ական թթ. սկզբներին գրառուածի տպաւորութիւն է թողնում (տե՛ս ստորեւ, ծան. 131):

111. Հմմտ. *Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան,* Սեբէոսի երկը որպէս VII դարի Մերձաւոր Արեւելքի պատմութեան աղբիւր, էջ 122 (661)):

112. Քննական բնագիրը տե՛ս *Անանուն*, 684 թուականի պատմութիւն, «Մատենագիրք Հայոց», հ. Դ–Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 790-880: Երկի արտագրութեան հատուածներում առկայ գրեթէ բոլոր գլխագրերն արդիւնք են Մովսէս Դասխուրանցու ստեղծագործութեան, բուն վերնագիրը եւս մեզ չի հասել: Գրականութեան մէջ նաեւ «Միհրանեանների պատմութիւն», «Ջեւանշէրի եւ Վարազ Տրդատի պատմութիւն» եւ այլ պայմանական անուններով յայտնի այդ երկի մասին տե՛ս *Ն. Ադոնց*, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 43-95; *հ. Ն. Ակինեան,* Մովսէս Դասխուրանցի, էջ 242-261; *К. А. Каграманян*, Источники "Истории страны Агванк", Автореф. канд. дисс., Ереван, 1973, էջ 18-19; *А. А. Акопян*, Албания-Алуанк, էջ 196-201; *Նոյ-*

նի՝ О хронологии последних событий в "Истории 684 года", "Кавказ и Византия", выпуск 6, Ереван, 1988, էջ 24-26:

113. Համեմատութեան համար նկատենք, որ, օրինակ, Գարդման գաւառում հեղինակի կողմից նշուած է միայն մէկ տեղանուն՝ Գարդմանի բերդը:

114. Մինչեւ վերջ յաջողութեան չհասած այդ վերջին պատմական իրադարձութեանն ենք պարտական «684 թ. պատմութեան» մի հատուածում (Ժ դ. արտագրութեան վիճակով՝ սկզբում. ՊԱ, Ա.իէ-ը) հոների մի խմբի՝ աւելի վաղ ժամանակներում քրիստոնէութեանը յարելու առասպելի առկայութեամբ (Բ.իթ գլխի մի տեղեկութիւնից՝ «Եւ նորա ... զարմացեալ ընդ *զրոյցատրութիւն* եպիսկոպոսին, որ պատմէր զտեսիլ Աքասուն...» (նախ. 11), երեւում է, որ այդ հատուածը «Հոնաց լուսաւորիչ»-Իսրայէլի տեսիլի վերապատմութիւնն է): Ի դէպ. ընդգծուած *զրոյցատրութիւն* բառի մակբայական տարբերակն օգտագործուած է ՊԱ Ա.իը գլխի վերնագրում («Շարագրած յաղագս աշակերտաւցն Մաշտոցի ընդ ներգոյս *զրոյցատրաբար*»), եւ կարծում ենք՝ դա բաւարար հիմք է ենթադրելու, որ Ժ դ. երկի այդ գլխագիրը, թերեւս, յանգում է Է դարի բնագրին:

115. *Ն. Ադոնց*, Քննութիւն Սովսէս Կաղանկատուացու, էջ 54-55: Տե՛ս նաեւ *հայր Ն. Ակինեան*, Մովսէս Դասխուրանցի, էջ 242-261:

116. Հմմտ. *К. А. Каграманян*, Источники "Истории страны Агванк", із 19; *А. А. Акопян*, О хронологии последних событий в "Истории 684 года", էջ 25-26: Յաւելենք, որ «684 թ. պատմութեան» շարադրանքի մէջ հեղինակն ընդգրկել է նաեւ Հայոց վաղ միջնադարի բանաստեղծութեան մի եզակի նմուշ՝ Դաւթակ Քերթողի «Ողբք ի մահն Ջեւանշերի մեծի իշխանին» ստեղծագործութիւնը՝ գրուած ակրոստիքոսով («ըստ աղփայփէտաց գլխակարգութեանց»): Այն Մովսէս Դասխուրանցու արտագրութեամբ պահպանուել է (կամ զուցէ՝ հենց Դաւթակի կողմից շարադրուել է) մինչեւ Ճ տառի քառեակը ներառեալ: ԺԹ դարի սկզբում ՊԱ հնագոյն *a* ձեռագրից կատարուած մի ընդօրինակութեան մէջ (այդ գրչագրից առաջացել է ձեռագրերի Ab ենթախումբը) Դաւթակի Ողբքին «շարունակութիւն» է աւելացուած:

117. *Անանուն*, 684 թուականի պատմութիւն, Բ.իթ, նախ. 1-4, էջ 819-820 (ՊԱ, էջ 184-185):

118. Աղուանից կաթողիկոսների ժամանակագրական ճշտուած ցանկը տե՛ս *А. А. Акопян*, Албания-Алуанк, էջ 277 (ծան. 2): Հմմտ. *Ե. Պետրոսեան*, Աղուանից աշխարհի կաթողիկոսութեան մի քանի թուականների շուրջ, «Էջմիածին», 1984, թիւ 11-12, էջ 84:

119. 659 թ. վերջերին հիմնադրուած այդ եկեղեցու կառուցման աւարտի մասին հեղինակը յայտնում է ԻԴ գլխում՝ թուագրելով այդ իրադարձութիւնը, ինչպէս վերը նշեցինք, 664 թ. նոյեմբերի 20-ով (տե՛ս ծան. 80):

120. *Անանուն*, 684 թուականի պատմութիւն, Բ.իթ, նախ. 13-15, էջ (ՊԱ, էջ 184-185):

121. Նիկողայոս Ադոնցը եւ նրան հետեւողները իբրեւ պատմածի անհաւաստիութեան օրինակ են նշել այս «Նիկիտա *հանոյն*» ասուածը, քանի որ Հե-

րակլ կայսրը Նիկիտա անունով *տատ* չի ունեցել (*Ն. Ադոնց*, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 61; *հայր Ն. Ակինեան*. Մովսէս Դասխուրանցի. էջ 242): Սակայն Թէոփանէս Խոստովանողի. Նիկիփոր պատրիարքի եւ ուրիշների տեղեկութիւններից յայտնի է. որ Փոկաս կայսրին գահընկեց անելու կռիւներին ակտիւօրէն մասնակցել է Հերակլի հօրեղբայր Գրիգորաս պատրիկի որդի *Նիկէտասը* (տե՛ս *Թէոփանէս Խոստովանող*. Ժամանակագրութիւն. էջ 11-12. 223-224. ծան. 82). եւ դա կարելի է բաւարար հիմք համարել ենթադրելու. որ վաղ հայերէնում *հանի* բառը նշանակել է ոչ միայն *տատ*. այլեւ. գուցէ՝ *պապեղբայր*: Ըստ Հրաչեայ Աճառեանի՝ «Վրաց. ... *հանի* «նախնիք». ... այս բառը ցոյց է տալիս. որ հնագոյն հայերէնում կար նաեւ *հանի* «տատ» բառի արականը. ինչպէս է եւ գերմանականում» (*Հր. Աճառեան*. Հայերէն արմատական բառարան. h. Գ. Երեւան. 1974. էջ 33):

122. *Անանուն*. 684 թուականի պատմութիւն. Բ.իբ. նախ. 21-22. էջ (ՊԱ. էջ 185):

123. Է դարում Վաղարշապատի ոչ բարւոք դրութեան մասին տե՛ս *Թ. Թորամանեան*. Նիւթեր հայկական ճարտարապետութեան պատմութեան. Բ. Երեւան. 1948. էջ 85; *Կ. Ղաֆադարեան*, Զուարթնոց. էջ 185-186:

124. ՊԱ. Գ.ժե. էջ 317: Հմմտ. վերը. էջ 1: Թերեւս հնարաւոր է յաւելել. որ «684 թ. պատմութեան» վերը բերուած տեղեկութեան մէջ յիշատակուած «կայսերականն մարգարան»-ը. որտեղ Կոստանդը դիմաւորեց Ջեւանշէր Աղուանից իշխանին. ենթադրաբար կարող է նոյնացուել այն կաթողիկոսական պալատի հետ (գուցէ՝ մտայղացուած որպէս «կայսերակա՞ն»). որը Ներսէը կառուցեց Սուրբ Գրիգոր եկեղեցու կողքին: Պեղումներից ու մասնակի վերականգնումից յետոյ այդ բազմասրահ շինութեան հզօր հիմնապատերը փռուած են տաճարի բազմաստիճան զանգուածեղ հիմնախարսխից մի քանի մետր դէպի հարաւ-արեւմուտք:

125. Իբրեւ բացարձակ ենթադրութիւն (այդ պատճառով միայն այստեղ՝ տողատակում) մի գուցէ կարելի է առաջ քաշել հարցադրում. թէ արդեօ՞ք «Սուրբ Գրիգոր» անունով օծուած եկեղեցու նաւակատիքի օրը չի յարմարեցուել Հայոց Լուսաւորչի յիշատակի օրուայ հետ: Վերջինիս մասին. որը Հայոց եկեղեցու հնագոյն տօներից մէկն էր եւ կոչւում էր նաեւ Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ թագաւորի յիշատակի օր. Ռաֆիկ Վարդանեանը գրում է. «480-ական թուականներին ... Յովհան Մանդակունին խմբագրեց Հայոց Տօնացոյցը. այն է՝ «Կանոնք ընթերցուածոց»-ը. Գրիգոր Լուսաւորչի յիշատակի օրը կանոնից Մեծ Պահքի կամ Աղուհացից օրերում՝ հինգերորդ կիրակիից յետոյ եկող շաբաթ կամ Զատկից յետ հաշուած 16-րդ օրը: Այն Զատկի շարժական լինելու հետեւանքով ընկնում էր Մարտ 1 - Ապրիլ 10-ի ամսաթուերից մէկում» (*Ռ. Հ. Վարդանեան*, Հայոց Տօնացոյցը. էջ 592-593): 660 թուականին Սուրբ Զատիկը եղել է ապրիլի 5-ին. ուրեմն՝ Գրիգոր Լուսաւորչի յիշատակի օրը՝ մարտի 21-ին (այսպիսով՝ Հայոց ՃԹ թուականի մարերի ամսի 10-ին): Հմմտ. *Հ. Ս. Բադալեան*, Օրացոյցի պատմութիւն. էջ 322-323. 437: Ընդհանուր դատողութիւններից բացի՝ որեւէ աղբիւրագիտական փաստարկով այս հարցադրումը չի կարող լրացուցիչ հիմնաւորուել (թէպէտ. իբրեւ հարցադրում ընդունուելու դէպքում՝ նաեւ հերքուել):

126. Պարզ է, որ կա՛մ *ա* գրչագրի, կա՛մ հէնց Մովսէս Դասխուրանցու մայր ձեռագրում եղել է «իՆՆ եւ տասաՆՆ» ընթերցումը, որը դարձել է «ԺԹ ամՆ»:

127. ՊԱ. Գ.ժե, էջ 317:

128. *Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, ԽԷ, էջ 143 (166-167):

129. Նոյն տեղում, էջ 145 (168):

130. Նոյն տեղում, Խ, էջ 110-111 (139): Սկսած Թ. Միհրդատեանից՝ հրատարակիչները այս երեք նախադասութիւնը բաժանել են 3 պարբերութեան մէջ, որը միայն խանգարում է բովանդակութիւնը ճիշտ հասկանալուն: Իրականում արդարացուած է բերուած կտորն ընդունել իբրեւ մէկ առանձին պարբերութիւն:

131. Վերը նկատեցինք, որ որոշ հաւանականութեամբ հիմքեր կան ենթադրելու, որ պատմիչը ձեռնարկել է իր երկի շարադրումը եւ այն առաջին շնչով ասրտել հէնց այս տարիներին՝ 640-642 թթ.: Երկի Ե գլխի նախադրութեան եւ այս գլխի (ըստ Ստ. Մալխասեանցի՝ Խ) բնագրերի ուշադիր ընթերցման հիման վրայ կարելի է աւելացնել, որ Ներսէսի ընտրութեան պարբերութեանը յաջորդող հատուածը (*Ա* գրչագրում՝ կարմրացուած գլխատառով)՝ «Բայց յորժամ ելին յարեւելք որդիքն Իսմայելի ... Զայս լուաք յարանց գերելոց ի Խուժաստան Տաճկաստանէ, որոց ինքեանք իսկ ականատես եղեալ՝ պատմեցին մեզ զայս բան», ամենայն հաւանականութեամբ, Սեբիոսի այն վերջին տողերն են, որոնց գրառումից յետոյ նա վայր է դրել գրիչը առնուազն մի քանի տարով (եթէ՝ ոչ աւելի երկար):

132. Հմմտ. Փիլոն Տիրակացու վերը բերուած հատուածում պահպանուած՝ Կոստանդին Գ-ի իբրեւ թէ «*ամս* Դ» իշխած լինելու մասին ընթերցման հետ:

133. *Թէոփանէս Խոստովանող*. Ժամանակագրութիւն, էջ 50-51: Սեբիոսի տեղեկութիւններն այդ իրադարձութիւնների մասին համեմատաբար կցկտուր են, թէպէտ կան նաեւ ուշագրաւ մանրամասներ (*Սեբէոսի եպիսկոպոսի* Պատմութիւն, Խ, էջ 109 (138), ԽԲ, էջ 113 (140-141)):

134. Մինչեւ Փոկաս, ըստ Ա. Ստրատոսի՝ Թէոդոս Բ-ից յետոյ կայսերն ընտրում ու թագադրում էր արդէն ոչ թէ բանակը, այլ սենատը, իսկ Անաստասից սկսած՝ թագադրումը կատարում էր Կոստանդնուպոլսի պատրիարքը, բայց ոչ եկեղեցու մէջ: Տե՛ս *Թէոփանէս Խոստովանող*, Ժամանակագրութիւն, էջ 249, ծան. 317:

135. Մի զուցէ եւ հնարաւոր է զուտ ենթադրական հարցադրման ձեւով լուծումն առաջարկել առանց մեր նշած վերապահման: Մայրաքաղաքի նախկին պատրիարք Պիւռոսը, ըստ Թէոփանէսի՝ կարգալոյծ էր արուել Հերակլեոնասին ու Մարտինէին «ամենաանօրինական» ձեւով թագադրելու մեղադրանքով, իսկ յաջորդ՝ Պաւղոս պատրիարքի ձեռնադրումը Ժամանակագիրը թուագրում է ինդիկտիոնի 15-րդ տարուայ հոկտեմբեր ամսով: Այդ դէպքում՝ զուցէ կայսեր թագադրումը կատարուել է նոր պատրիարքի ձեռնադրումից առա՞ջ, իսկ այդ արարողութեանը մասնակցած Հայոց կաթողիկոսի կարգավիճակը զուցէ եղել է աւելի՞ն, *քան* ենթադրական «հայրագրերից» *մէկը*: Տեղին նշենք, որ ըստ յոյն բիւզանդագէտ Ա. Ստրատոսի «ուսումնասիրութեան արդիւնքների», որոնք մէջբերում է Հրաչ Բարթիկեանը՝ «Հերակլեոնասին

(Հերակլիոս II) եւ Դաւիթ-Տիբերիոսին գահընկէց արեցին 642 թ. յունուարին: Մարտինէն գահընկէց չարուեց. քանզի կայսրուհի (աւգուստայ) չէր, այլ պարզապէս կայսերամայր: Պիւրրոսին կարգալոյծ չարեցին. նա պարզապէս հեռացաւ: Վալենտինոսը չհեռացուեց, այլ նշանակուեց էքսկուբիտորների կոմէս եւ ուղարկուեց ընդդէմ արաբների: *Կոստանդինը* (Կոստաս) *սենատի կողմից կայսր չհռչակուեց, քանի որ արդէն կայսր էր թագադրուել 641 թ. սեպտեմբերին,* իր հօրեղբայր Հերակլիոս II-ի (Հերակլեոնասի) կողմից» (տես *Թէոփանէս Խոստովանող,* Ժամանակագրութիւն, էջ 249, ծան. 318): Մեր կողմից ընդգծուած միտքը, սակայն, թերեւս պէտք է ենթակայ համարել ուղղման, եւ այնուամենայնիւ պնդել, որ Կոստանդ Բ-ի թագադրման արարողութիւն եղել է նաեւ 642 թ. սկզբներին: Ժամանակային համապատասխանութեան տեսանկիւնից միայն դրան կարող էր մասնակցած լինել Հայոց Ներսէս Գ կաթողիկոսը, ինչպէս որ երեւում է հայկական աղբիւրների քննութեան պատկերից:

136. *Ս. Բարխուդարեան,* Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, էջ 27-29; *Վ. Յարութիւնեան,* Հայկական ճարտարապետութեան պատմութիւն, էջ 153:

137. Զուարթնոցի այդ եզակի առանձնայատկութիւնների մասին տե՛ս *С. Х. Мнацаканян,* Звартноц, էջ 39-58; *Վ. Յարութիւնեան,* Հայկական ճարտարապետութեան պատմութիւն, էջ 149: Վերջում նշենք, որ ըստ Նիկողայոս Ադոնցի՝ Կոստանդ Բ-ի միկենասութեան, Զուարթնոցի տաճարի նաւակատիքին մասնակցելու եւ ճարտարապետին Բիզանդիա հրաւիրելու մասին վկայութիւնները լոկ «զրոյցներ են, առանց որեւէ հաւաստիութեան» (*Ն. Ադոնց.* Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 123): Սակայն պարզ է, որ հետազօտողին չի յաջողուել ընկալել Մովսէս Դասխուրանցու երկու աղբիւրների՝ «684 թ. պատմութեան» եւ տոհմամատեանային ժամանակագրական գրառումների հաւաստիութեան իրական ցուցանիշը:

138. Հմմտ., օրինակ, Ասողիկի մօտ, Անաստաս կաթողիկոսի առիթով. «Իսկ Ներսէսի կացեալ ամս Ժ [!]՝ յաջորդէ զաթոռն Անաստաս *ի ճԻ թուականին»* (*Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան* Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, Բ, էջ 99): Պարզ է, որ Ասողիկի սկզբնաղբիւրում Հայոց ճԻ թուականով (671/672 թ.) նշուած է եղել Անաստաս Ակոռեցու աթոռակալութեան աւարտի տարին (ոչ մեծ սխալով): ՊԱ նշուած թուագրումը Ներսէս Շինողի մահուան տարեթուի հետ է կապում նաեւ Նիկողայոս Ադոնցը (*Ն. Ադոնց,* Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 123):

139. *Մ. արքեպ. Օրմանեան,* Ազգապատում, Ա հատոր, Վաղարշապատ - Ս. Էջմիածին, 2001, սիւն. 865-866:

140. *Է. Լ. Դանիէլեան,* Հայաստանի քաղաքական պատմութիւնը, էջ 225-226:

141. *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ* Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 89: Հմմտ. *Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան* Պատմութիւն տիեզերական, էջ 99:

142. Հմմտ. Պատմութիւն *Ղեւոնդեայ,* գլ. Է, էջ 14:

143. Տե՛ս *А. А. Акопян*, О хронологии последних событий в “Истории 684 года”, էջ 34, ծան. 50: Տեղին նշենք, որ ի տարբերութիւն Սահակ Ձորափորեցու, որի հայրապետութեան տարիների մասին կան մի քանի կոնկրետ աղբիւրագիտական տեղեկութիւններ (այդ թւում՝ նրա մահուան ժամկէտին վերաբերող, որի հիման վրայ այդ թուականը մնում է անփոփոխ՝ 703 թ.), նրա երկու նախորդների՝ Անաստասի եւ Իսրայէլի մասին յայտնի են միայն աթոռակալութեան տարիների թուերը՝ 6 եւ 10 (հմմտ. *Մ. արքեպ. Օրմանեան*, Ազգապատում, Ա հատոր, սիւն. 867, 873, 877-878; *Ա. Յակոբեան*, Աղուանից իշխանների ժամանակագրութիւնը Է. դարի վերջին - Ը. դարի սկզբին, էջ 282, 290, ծան. 43): Նշենք նաեւ, որ Սահակ Ձորափորեցու կաթողիկոսութեան սկզբի տարին 678 թուականն էր համարում արդէն Նիկողայոս Ադոնցը, տե՛ս *Ն. Ադոնց*, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, Յաւելուած 2 («Խորենացիական հարցն ու հայր Վարդան Հացունի»), էջ 160:

ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ

ՄԱՆԿԱՀԱՎԱՔԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑ

Օժյե դե Բուսբեքը, որը երկու անգամ եղել է Կառլ V-ի դեսպանը Սուլեյման II Քանունիի (Փառահեղի) արքունիքում[1], առաջինն էր, որն անձամբ ուսումնասիրել էր Օսմանյան պետությունը: Նա տարբերակել է եվրոպացի ղեկավարներին, որոնք կախված են իրենց ազնվականությունից, ու օսմանյան սուլթանին, որը տերն է իր հասարակական կառույցներում աշխատող ստրուկների: Բուսբեքը մեկնաբանել է, թե համակարգում ազնիվ արյան պակասը թույլ էր տալիս սուլթանին ընտրել իր ստրուկներին ու առաջ քաշել համաձայն իրենց կարողությունների[2]: Թերևս առաջին հայացքից մերիտոկրատիա[*] թվացող համակարգը հիացնում էր եվրոպացի դիտորդներին: Վերածննդի ժամանակակիցները հիանում էին հեքիաթային սցենարով, երբ հովիվը տեսականորեն կարող էր դառնալ վեհաշուք մեծ վեզիր: Իրականում, սակայն, պատկերն այլ էր: Մեծ վեզիրի պաշտոնին հասնում էին միայն հատուկենտ երիտասարդներ:

Փենջիքով ու մանկահավաքով հավաքված երիտասարդների թիվն ավելի քան գերազանցում էր պետության պահանջները, մարդուժի ավելցուկն ուղղվում էր աշխատանքի շուկա: Մահմեդականացված երիտասարդները վաճառվում էին ստրկական շուկաներում, ուղարկվում աշխատելու կայսրության այն հեռավոր տարածքներ, ուր ոչ ոք չէր գնա իր կամքով:

Փենջիք համակարգով հարկվում էին պատերազմի ժամանակ գերի վերցրած զորահրամանատարները և զինվորները. գանձվում էր ռազմագերու արժեքի 1/5-ը[3]: Արժեքը պետության կողմից նշանակված էր 125 աքչե[*]՝ այսինքն գանձվում էր 25 աքչե գումար[4]: Ավելի հաճախ, սակայն, զինվորները գերադասում էին հարկը վճարել գերիներով: Փենջիքը կիրառվում էր նաև գերի ընկած քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ. գերյալ քրիստոնյաները պարտավոր էին թյուրքերին հանձնել կա՛մ իրենց յուրաքանչյուր հինգ հոգուց մեկին՝ թյուրքական բանակի շարքերը լրացնելու նպատակով, կա՛մ համապատասխան փրկագին[5]: Սա սկիզբ էր առնում Ղուրանից ու շարիաթի հարկային համակարգում

մահմեդականներից գանձվող ամենակարևոր հարկերից մեկն էր. «Եվ իմացեք, եթե դուք վերցրել եք ավար, ապա Ալլահինն է հինգերորդ մասը... Այն, ինչ նախատեսված է Ալլահի ու իր մարգարեի համար, ուղղվում է հասարակական կարիքների բավարարմանը, որոնք սահմանել է մարգարեն իր կյանքի ընթացքում ու որոնք սահմանում է իմամը նրա մահվանից հետո[6]»: Այսպիսով, սուլթաններն օգտագործում էին այդ իրավունքը ու պահանջում ավարի մեկ հինգերորդ մասը[7]:

Փենջիքով սուլթանին հասած գերիները ոչ միայն համալրում էին ենիչերիական զորաբանակն, այլև դառնում էին սուլթանի անձնական ստրուկները, նրա թիկնազորի անդամները և այլն:

Սկզբնական փուլում բանակի համար հավաքվող գերիների տարիքին ուշադրություն չէին դարձնում: Ճակատամարտի ժամանակ սպիտանի լինելու համար մի կարճ նախապատրաստական աշխատանք էին անցկացնում ու ընդունում զորաբանակ: Այս մեթոդը սակայն հետագայում փոխվեց. օրենք ընդունվեց պիտանի համարել միայն 10-20 տարեկան գերի տղաների[8]:

Նվաճումների ընդարձակման հետևանքով ստացված մեծաքանակ փենջիք օղլանները արդեն ավելի շատ էին, քան պահանջվում էր, և այսուհետ նրանց սկսեցին ուղարկել Անատոլիա՝ ցածր վարձավճարով ծառայելու օսմանյան տերության սահմաններում գտնվող հողատերերին: Կարծիք կար, որ այսպիսով Անատոլիայում մահմեդական ու թյուրքական մշակույթին ավելի մերձենալով՝ փենջիք օղլանները բանակում ավելի վստահելի կլինեին: Եվրոպական արշավանքներից ստացված այս ռազմագերիներին ուղարկում էին Անատոլիա, քանի որ, նախ, օսմանցիները Ռումելիում* դեռ այդքան էլ լավ չէին հաստատվել, երկրորդ, ավելի էր բարդանում գերիների փախուստը, քանի որ այս դեպքում պետք է նրանք անցնեին նաև ջրային արգելքը՝ Մարմարա ծովն ու նեղուցները: Չնայած գործնականում նույնիսկ այստեղից փախուստներ էին գրանցվում[9]: Հետագայում նման պրակտիկան կիրառվում էր նաև դևշիրմեով հավաքված տղաների դեպքում:

Փաստորեն, եթե ընդունենք, որ փենջիքը գանձվում էր միայն գրավված տարածքներից, ապա ենթադրվում է, որ գրավյալ տարածքներից փենջիք գանձվել է միայն մեկ անգամ՝ նվաճման ժամանակ: Սակայն սա ամենևին էլ չի նշանակում, որ դրանով ստրուկների հոսքը կայսրություն դադարեց[10]:

Փենջիքը չէր բավարարում օսմանցիների մարդկային ռեսուրսների պահանջը[11]: Պատճառն անընդհատ ընդլայնվող զավթումների քաղաքականությունն էր, որը ռազմական ուժի անընդհատ աճ էր պահանջում: Չնայած օսմանյան անվիճելի հաջողություններին, հնարավոր չէր անսահմանափակ գերել գրավյալ տարածքների ազգաբնակչությանը: Օսմանյան ագրեսիան, որը տարվում էր «արդար կրոնի տարածման»

նշանաբանով, նոր հողեր գրավելու նպատակ էր հետապնդում, որոնք այնուհետև բաժանվում էին որպես պայմանական կամ մշտական տիրույթներ՝ ձևավորելով ավատատիրական նոր դասակարգ: Նոր նվաճված շրջանում ընտրյալները ստանում էին վիթխարի հողային տիրույթներ՝ խասեր* կամ մյուլքեր*, իսկ սիպահիները*, որոնք հիմնական ռազմական ուժն էին հանդիսանում, մասնակցում էին ռազմական գործողություններին համաձայն այն պայմանների, որոնցով նրանց էին տրամադրվել իրենց հողակտորները՝ թիմարները* կամ զեամեթները*[12]: Սա բերեց այն բանի, որ այլևս անհնարին դարձավ զանգվածաբար ստրկացնել գրավյալ տարածքի ժողովրդին այնպես, ինչպես դա անհրաժեշտ էր օսմանյան բանակին՝ իր զավթողագործությունը շարունակելու համար: Դա կնշանակեր ավատատիրական տիրույթները զրկել աշխատավոր ձեռքից, առանց որի դրանք այլևս գոյություն չէին ունենա: Հողերի ամայացումը հակասում էր նաև կենտրոնական իշխանության շահերին: Այդ ժամանակաշրջանում հիմնվում էր վարչական ապարատը, ձևավորվում սուլթանի արքունիքը, որն արդեն մեծապես տարբերվում էր հին ժամանակների բեյլիքի բարբարոսական ճամբարից: Այդքան ծախսերի համար բավարար չէր կարող լինել գերիների վաճառքից եկող անկայուն եկամուտը: Ինչպես և բոլոր պետություն կազմող հասարակություններում, այստեղ ևս պետք էր ապահովել կայուն եկամուտ հարկերի միջոցով, որոնք հավաքվելու էին հպատակ ժողովուրդներից: Այսպես, հակառակ ռազմական հաջողությունների ու տարածքային ընդարձակմանը, ռազմագերիների ներհոսքը զգալիորեն պակասեց, ինչի հետևանքով աղքատացավ ռոճիկ ստացող օսմանյան հետևակի համալրումը:

Այս իրավիճակում, ելնելով պետական ու ռազմական ապարատում մարդկային ռեսուրսների խիստ կարիքից, օսմանյան իշխանությունն սկսեց բռնությամբ հավաքել հպատակ քրիստոնյա բնակչության երեխաներին, որպեսզի մահմեդականացնի և դարձնի իր համար զինվորներ, վարչական աշխատողներ ու ստրուկներ: Սկզբնապես քրիստոնյա երիտասարդության հազվադեպ և վտքրաքանակ հավաքները դարձան հաճախակի ու զանգվածային և ի վերջո օրինականացվեցին որպես պարտադիր հարկ: Այս ինստիտուտը կոչվեց դևշիրմե, իսկ հայկական աղբյուրներում՝ մանկահավաք, տղայաժողով:

Ինչպես պարզ է դառնում մեզ հասած փաստաթղթերից, մանկահավաքի հայտարարումը տեղի էր ունենում ենիչերիական զորաբանակի աղայի պահանջով[13], որը հատուկ նամակով խնդրում էր սկսել դևշիրմեի նախապատրաստումը: Դրա հիման վրա սուլթանի գրասենյակը հրապարակում էր համապատասխան հրովարտակ՝ հյուքմ, որը զորահավաք հռչակող փաստաթղթին համարժեք նշանակություն ուներ:

Հավաքի նախապատրաստությունը լայն էր ու ընդգրկուն, դրա անցակցման համար կենտրոնական իշխանությունը մոբիլիզացնում էր ինչպես նահանգային զինված ուժերը, այդպես էլ տեղական վարչական մարմինները: Նրանց խնդիրներն ունեին օժանդակ բնույթ. ապահովել հավաքի ենթակա երիտասարդների առավելագույն ներկայությունը ու նրանց անարգել ուղևորությունը մինչև ենիչերիական զորանոցներ: Իսկ տղաների բուն ընտրությունն ու բռնի հավաքը ամբողջապես տրամադրված էր ենիչերիական զորաբանակին:

Տղաների ընտրությունն անց էր կացնում անձնապես հրամանատար սպան, որը բացի սուլթանական հրովարտակից իր մոտ ուներ նաև ենիչերիական աղայի կնիքով հատուկ նամակ, որտեղ գրված էր, թե որ շրջանից քանի աղա է պետք հավաքագրել: Սպայի մոտ առաջին հերթին ներկայանում էր բնակավայրի քահանան՝ իր հետ բերելով գրանցամատյանը[14]:

Ընտրության ու հավաքի մեխանիզմի մեջ կա երկու կարևոր կետ: Առաջինը հավաքվող տղաների տարիքն է: Եվրոպական աղբյուրները ընդհանրապես տեղեկացնում են 7-12 տարեկան մանուկներին հավաքելու մասին, իսկ սուլթանական հրովարտակները խոսում են ավելի շատ պատանիների՝ 15-20 տարեկանների մասին: Հակասությունը բացատրելի է: Իշխանության հրահանգները ցույց են տալիս նորմը, իսկ եվրոպական աղբյուրները՝ կիրառությունը, պրակտիկան, որը նշանակալիորեն տարբերվում էր: Նախընտրում էին արդեն մեծացած տղաներին, սակայն համաձայն կարիքների հավաքագրում էին նաև վոքրերին: Կարևորություն էր տրվում ոչ թե իրական, այլ կենսաբանական տարիքին՝ 14-20 ընկած հատվածում, որն ընդհանուր առմամբ կարող ենք սահմանել որպես պատանեկություն[15]: Սա նշանակում է, որ հավաքում էին տղաներին արդեն ամուր ֆիզիկական տվյալներով, որոնց հոգեբանությունը միաժամանակ դեռ ճկուն էր ու համեմատաբար հեշտ էր ենթարկվում ազդեցության, դեռ չէր ձևավորվել բարոյական արժեքների համակարգը:

Նույն սկզբունքով էին գործում նաև վաղ ժամանակներում մամլուքների հավաքագրման գործընթացում: Այսպես, որպես մամլուքստրուկ հավաքագրելու տարիք սեռական հասունության տարիքը թվում է ամենից հարմարը, որովհետև այդ տարիքում պատանիները արդեն ունեն իրենց առանձնահատուկ որակները, սակայն դեռ նրանց կարելի է ուսուցանել ու վարժեցնել այնպես, ինչպես դա պետք է իրենց տերերին[16]:

Հենց այս յուրահատկություններն էին օգտագործում օսմանցիները՝ քրիստոնյա զավակներին իրենց զենքը դարձնելու ժամանակ: Կարող ենք նաև պատկերացնել դևշիրմեի ժամանակ ծնողների էմոցիոնալ վիճակը իրենց որդիներին հանձնելիս, հիշենք այն դժվարությունները, ո-

րոնք նրանք հաղթահարել էին ծնունդից մինչև պատանեկություն նրանց հասցնելու համար:

Միջնադարի կենսապայմաններում մինչև մեկ տարեկան հասակը մահանում էր նորածինների քառորդ մասը: Հետագա տարիներին մանուկների մահերի թիվը նվազում էր, սակայն մահանում էր մնացածի ևս մեկ երրորդը[17]: Մահացածության բարձր աստիճանը պայմանավորված էր համաճարակներով, որոնք արագորեն անմարդաբնակ էին դարձնում մեծ տարածություններ, և սովով, որը ևս մեկ ազդեցիկ գործոն էր, որ ազդում էր մահացածության ցուցանիշի աշխարհագրության վրա: Չնայած մեծ քաղաքները մատակարարման մեջ կախում ունեին լայնատարած գյուղատնտեսական հինտերլանդից, սակայն նախաինդուստրիալ ժամանակաշրջանում նրանք սովի ենթարկվելուց համեմատաբար ավելի պաշտպանված էին, քանի որ գործում էր բնամթերքների ժողովման ազդեցիկ համակարգ: Եթե մեկ տարածաշրջանում վատ բերք էր հավաքվում, ապա դրա պակասորդը քաղաքը լրացնում էր մեկ այլ տարածաշրջանից բերված բնամթերքի հաշվին: Վատ բերքից ավելի շատ տուժում էին գյուղերը[18]: Միայն տասնհինգ տարեկանից հետո մարդ կարող էր հույս ունենալ, որ իր որդին համեմատաբար զերծ է հիվանդություններից մահանալու վտանգից: Եվ այս ժամանակ, երբ որդին դիմացել էր օսպային, ժանտախտին, դժբախտ պատահարներին, սովին, հայրը պարտավոր էր հանձնել նրան ենիչերիական զորամասին, զրկվել բերքահավաքի ժամանակ օգնական ձեռքից: Շատերը նախընտրում էին կրոնավախվել ընտանյոք հանդերձ, քան հանձնել իրենց երբեմն միակ որդուն ենիչերիներին:

Հավաքի ժամանակ երկրորդ կարևոր կետը տղայաժողովի որակական ասպեկտն է: Սուլթանական հրովարտակներում սա ձևակերպված է ածականների գերադրական աստիճանի օգնությամբ. ամենաառողջ, ամենապիտանի, ամենագեղեցիկ: Տարվում էր սերնդի սերուցքը:

Պետական անհրաժեշտության դեպքում ժամանակավորապես տղայահավաքներից ազատվում էին բնակչության փոքրաթիվ կատեգորիաներ, որոնք ունեին հատուկ պարտավորություններ: Մաքսավորները, հանքավաբները, կամուրջների ու ամրոցների վերանորոգման վրա աշխատողները ու նման բոլոր պետական ծառայության մեջ գտնվողները ժամանակ առ ժամանակ ազատվում էին դեվշիրմեից[19]:

Այսպես, հրամաններից մեկում (1578թ.) ասվում է Սիրեմ սանջաքի քաղաքներից մեկի շրջակա տարածքի ռայաթների՝ դեվշիրմեից ազատման մասին, քանի որ վերջիններս զբաղված էին կամրջի վերանորոգման աշխատանքներով[20], իսկ մեկ այլ հրամանով (1578թ.) ազատվում են հավաքից Բիգա սանջաքի ռայաթները, պոնք պետական նավերի վրա թիավարություն էին անում:

1569թ. սուլթանական հրամանով դևշիրմեից ազատվում են Շարքը Քարահիսար քաղաքի շրջակայքի չորս հանքավայրերում աշխատող քսաներեք գյուղի գյուղացիները, որոնք նաև ազատվում են այլ հարկերից[21]:

Հանքափորերի բնակավայրերի ռայաթների ազատումը դևշիրմեից կապված էր աշխատուժի ապահովման հետ, որը բխում էր արդեն կենտրոնական իշխանությունների հատուկ շահերից: Մետաղների, մասնավորապես երկաթի հանույթը XV դարից սկսած հատկապես մեծ նշանակություն ուներ օսմանյան տնտեսության մեջ, քանի որ ծախսվում էր տարբեր տեսակի հրազենի պատրաստման վրա: Երկաթի արտադրությունը մենատիրություն էր պետության ձեռքում, որով նա ապահովում էր հրանոթների ու թեթև հրազենի արտադրությանը անհրաժեշտ մետաղը: Երկաթի հանույթի ոլորտում անհրաժեշտ որակավորման պահպանման համար պետության կողմից կիրառվում էին հատուկ կարգավիճակներ: Դա ֆիքսված է դևշիրմեից ազատման մասին 1536թ. սուլթանական հատուկ հրովարտակով: Սակայն դրա երկարաժամկետ ուժը հույժ կասկածելի է: 1621թ. սուլթանական հրովարտակը վկայում է, որ կենտրոնական իշխանությունը հակասում էր սեփական ընդունած որոշումներին ու պահանջում էր հավաք անցկացնել նաև հանքավորների միջև: Այնտեղ հստակորեն ու կատեգորիկ կերպով նշվում է, որ եթե որոշ վաքուֆների* ռայաթներ* և կամ հանքավորությամբ զբաղվող բնակչությունը ցույց տան փաստաթուղթ, որով նրանք ազատված էին դևշիրմեից, ապա դա այլևս պետք չէ համարել վավեր: Ավելին, հրամայվում էր այդ փաստաթուղթը վերցնել ու ուղարկել Սաամբուլ, իսկ տղաներին հավաքել ընդհանուր հիմունքներով[22]:

Դևշիրմեով ընտրված երիտասարդներին հավաքում էին խմբերի մեջ: Տղաները ցուցակագրվում էին ու նկարագրվում լիարժեք անհատական նկարագրությամբ՝ անուն, ծնողների տվյալներ, գյուղի, որտեղից որ վերցվել են, աչքերի ու մազերի գույնը, հատուկ նշանները, ունակությունները և կարողությունները: Սա ուղղված էր նրան, որ ճանապարհի ընթացքում անհնարին լիներ փախուստը կամ փոխումն այլ տղաներով: Ցուցակը կոչվում էր էշքալ դեֆթերի, որը հետագայում ծառայում էր որպես հիմնական փաստաթուղթ և որի հիման վրա ստուգում էին ծառայության մտնող աջեմի օղլաններին[23]: Փաստաթուղթը կազմվում էր երկու օրինակով. մի օրինակը մնում էր մանկահավաքի պաշտոնակատարի մոտ, իսկ մյուսը՝ «սյուրյուջյու»-ի մոտ, որը նոր հավաքած երեխաներին տանում էր Սաամբուլ, երբ տղաների խումբը հասնում էր 100-200 հոգու: Ենիչերիական զորամասերում, ուր քշում-բերում էին քրիստոնյա տղաներին բոլոր շրջաններից, տեղի էր ունենում կրոնափոխության ծիսակատարությունը:

Օսմանյան սիրույթներում կրոնափոխությունը վերին աստիճանի պարզ գործողություն էր: Տղաները ասում էին անհրաժեշտ բանաձևը՝ «Չկա Աստված, բացի Ալլահից, ու Մուհամեդն է նրա մարգարեն». թլպատվում և ստանում էին նոր անուն՝ դառնում էին Մեհմեդ, Ահմեդ, Հասան, Հալիլ և այլն[24]:

Մահմեդականացված տղաներին ցրում էին Անատոլիայի գյուղերով ու քաղաքներով մեկ: Օսմանյան ժամանակագիրները պնդում են, որ պահանջվում էր նրանց սովորեցնել թյուրքերեն լեզուն ու ավանդույթները: Մ. ֆոն Զայդլիցը տեղեկացնում է, որ անատոլիական գյուղեր ուղարկված երեխաները օգտագործվում էին ծանր ֆիզիկական աշխատանքներում: Փաստորեն, նրանք տրվում էին ժամանակավոր օգտագործման՝ մասնավոր անձանց: Իսկ եթե երեխաներից մեկը չէր դիմանում ու մահանում էր, այդ դեպքում այդ անձի միակ պարտավորությունն էր տեղեկացնել այդ փաստը տեղական քադիին: Այլապես նա պետք է վճարեր դրա գինը[25]:

Դևշիրմե համակարգով հավաքված քրիստոնյա երեխաները մի քանի անգամ ավելի շատ էին, քան պահանջվում էր ենիչերիական զորաբանակը համալրելու համար: Ըստ պաշտոնական տվյալների Ստամբուլում աջեմի օղլանների զորամասը սկզբում ուներ 3 հազար, իսկ XVI դարի կեսերին մոտ 4 հազար անդամ: Ադրիանապոլսի (Էդիռնե) ու Գելիբոլուի հետ միասին նրանց թիվը հասնում էր 6 հազարի: XVI դարի վերջին մայրաքաղաքում կար 8900 աջեմի օղլան, իսկ XVII դարի սկզբին՝ համաձայն աղբյուրներից մեկի՝ 9400, մյուսի՝ 12 000: Հետագայում մի շարք պատճառների հետևանքով նրանց թիվը գնալով նվազում է[26]:

Այսպիսով, այն ժամանակ, երբ աջեմի օղլանների զորամասը XVI դարի երկրորդ կեսին ու XVII դարի սկրին գտնվում էր իր զարգացման գագաթնակետում, այն հաշվում էր միայն 12 հազար մարդ: Պարզ է, որ նոր հավաքների դեպքում այն լիովին չէր թարմացվում: Չնայած XVI դարի վերջին պաշտոնական ցուցակներով զորամասում հաշվում էր 48 հազար մարդ, սակայն այդ ժամանակ արդեն այնտեղ կային բազում կեղծ ենիչերիներ (մահացած ենիչերիների անունները ցուցակներից դուրս չէին հանվում, որպեսզի պետությունից նրանց անունով աշխատավարձ ստացվի): Բացի այդ պետք է ի նկատի ունենալ նաև հետևյալ մանրամասները. ենիչերիական զորաբանակը թարմացվում էր ամեն յոթ տարին մեկ, իսկ ենիչերիներն այնտեղ ծառայում էին մինչև ծերություն: Մինչդեռ XVI դարում դևշիրմե հավաքը անց էր կացվում երեք տարին մեկ կամ ավելի հաճախ:

Ուստի, ակնհայտ է, որ դևշիրմեով հավաքվածների թիվը քանիցս գերազանցում էր ենիչերիական զորաբանակի կարիքները: Այս կապակցությամբ դևշիրմե համակարգի ուսումնասիրողների առջև մի հարց է ծառանում. «Ի՞նչ ճակատագրի են արժանացել այդ քրիստոնյա երիտա-

սարդները»: Պատասխանը հստակ է. նրանք օգտագործվում էին որպես ծրի, ստրկական աշխատանքային ուժ[27]:

Այսպիսով, իչ օղլաններից ու աջեմի օղլաններից բացի կար նաև երրորդ խումբ, որն անհայտանում էր պետական բարձր պաշտոնյաների կամ սպաների ավատական տիրույթներում, թիմարներում, չիֆթլիքներում: Եվրոպացի ճանապարհորդ Դերնշվամը հայտնում է. «Ինչպես սուլթանական աջեմի օղլաններն են սրածայր գլխարկ դնում, այդպիսի գդակ են կրում նաև տղաները, որոնք ապրում են փաշաների, թյուրք հոգևորականների, արհեստավորների, բոլոր իրեն ստրուկ գնել թույլ տվող մարդկանց մոտ... Իսկ եթե որևէ մեկը երեխա է ունենում, վերջինս նույնպես ստրուկ ու գերի է համարվում: Եթե տերը կարիքի մեջ է ընկնում, ապա վաճառում է նրան: Սուլթանն ու փաշաներն ունեն իրենց մոտ այնպիսի տղաներ, որոնք իրենց են հասել դևշիրմեի միջոցով»[28]: Հավաքվածների երրորդ մասը, որոնց քանակը թվապես հնարավոր չէ սահմանել, ստրկացվում էր: Սակայն ի տարբերություն իչ օղլանների և աջեմի օղլանների նրանց ստրկությունը իրենց արտոնություն չէր բերում: Նույն ժամանակ էլ նրանք ամենևին տնային ստրուկներ չէին[29]: Հավաքված երիտասարդության մեծ մասը ուղարկվում էր աշխատելու այն անմարդաբնակ տարածքները, պոռնք տրվել էին իրենց ավատատերին որպես պայմանական կամ այլ տիպի տիրույթներ: Այնտեղ նրանք վերադառնում էին իրենց նախկին կարգավիճակին՝ աշխատանքային ուժ, սակայն այլևս ոչ որպես ռայաթ: Դևշիրմեն փաստորեն նաև աշխատուժի վերաբաշխման հարմար եղանակ էր կառավարող վերնախավի համար: Կար նաև այլ տարբերություն. դևշիրմեով անցածներն արդեն մահմեդական էին: Եվս մեկ անգամ օսմանյան կայսրության կողմից ոտնահարվում է շարիաթը, քանի որ ըստ դրա մահմեդականը չի կարող լինել ստրուկ:

Այսպես, դևշիրմեով հավաքված տղաների ոչ փոքր մասը չէր մտցվում օսմանյան ղեկավար դասակարգի շարքերը, ինչպես մեզ փորձում են համոզել որոշ պատմաբաններ, այլ ընկնում օսմանյան հասարակության ամենաստորին խավի մեջ: Սա նշանակում էր, որ իրենք ստանում էին ավելի ծանր կարգավիճակ, քան քրիստոնյա ժամանակ:

Դևշիրմեն ստեղծված էր, որպեսզի բավարարեր հիմնականում բանակի ու բյուրոկրատական համակարգի մարդկային ռեսուրսների պահանջարկը: Սակայն ինչպես տեսնում ենք, այն նաև աշխատուժի տարածքային վերաբաշխման գործառույթ ուներ:

Մեծավ մասամբ քրիստոնյա տղաներն օգտագործվում էին գյուղատնտեսությունում: Թուրք պատմաբան Ի. Ուզունչարշըլըն նշում է, որ նրանց տալիս էին հիմնականում անասունական գյուղացիներին[30]: Ենիչերի ղեկավարները սակայն ոչ թե տալիս էին, այլ ժամանակավոր վա-

ճառում էին չնչին գումարով գյուղացիներին՝ վերջիններիս տնտեսություններում աշխատուժի պահանջը բավարարելու համար[31]:

Ֆրանսիացի ճանապարհորդ Դյուրամոնը նույնպես տեղեկացնում է, որ դևշիրմեով հավաքած տղաներից ամենագեղեցկատեսներին ընտրելուց հետո, մնացածին ուղարկում են Բուրսայի ու Քարամանի հողագործների ու հովիվների մոտ՝ դաշտեր մշակելու, անասուն պահպանելու կամ այլ աշխատանքներ կատարելու[32]: Գյուղացիներից հավաքվող գումարը մեկ անձի հաշվով չնչին էր, սակայն մեծ գումար էր կազմում՝ հաշվի առնելով տղաների բազմաքանակությունը: Այս վճարը վկայում էր նրա մասին, որ թյուրքերին վաճառվող քրիստոնյա երիտասարդները դիտվում էին որպես սուլթանի սեփականություն: Դրա մասին է վկայում նաև օրենքով սահմանված կարգը, համաձայն որի բոլոր այդ երիտասարդները գտնվում էին ենիչերիների գլխավոր աղայի ու նրա երկու օգնականների ենթակայության ներքո, որոնք կառավարում էին իրենց գործերը հատուկ պաշտոնյաների՝ քեթխուդաների միջոցով[33]:

Սուլթանական տնտեսություններում աջեմի օղլանների ստրկական աշխատանքի լայն կիրառման մասին են խոսում սուլթանի հրամանները:

Այսպես, 1558-1560թթ. հրամանագրքում կարդում ենք մի հրաման ենիչերի աղային, որ դեպի Ստամբուլ տանող ջրի ճանապարհի վրա աշխատող 23 աջեմի օղլաններին ծառայության նշանակեն պալատում[34]; 1565-1566թթ. հրամանագրքում՝ հրաման ենիչերիի աղային պարտեզներում աշխատող աջեմի օղլաններից 500 հոգու պալատ ուղարկելու վերաբերյալ[35]; 1570-1572թթ.՝ հրաման Էդիռնեի բոսթանջըբաշըին (գլխավոր այգեպան) առ այն, որ Էդիռնեի սուլթանապատկան այգիներում վաղուց ծառայող աջեմի օղլաններից 50 հոգի ուղարկել ենիչերի աղային, որը նրանց պետք է ուղարկի պալատ՝ ծառայության[36]:

Իսկ ի՞նչ էր տեղի ունենում այն ժամանակ, երբ սուլթանական տնտեսություններում էր պակասում աշխատողների քանակը: Դիմենք նույն հրամանագրքերին:

1564թ. հրաման[37], որտեղ ենիչերի աղային հրամայվում է թյուրք գյուղացիների մոտ գտնվող (Türk üzerinde olan) աջեմի օղլաններից 25 հոգու ուղարկել որպես օգնական-աշակերտ հրետանավորների ղեկավարի մոտ; հրաման համար 479, որտեղ սուլթանը հրամայում է ենիչերի աղային թյուրք գյուղացիների մոտ գտնվող աջեմի օղլաններից ընտրել հյուսելու ընդունակություն ունեցողներին և ուղարկել 8 հոգու իր անձնական մազ հյուսողի մոտ որպես աշակերտ[38]:

1570-1572թթ. հրամանագրքից պարզ է դառնում, որ Էդիռնեի բոսթանջըբաշըն նամակ է գրել, թե Էդիռնեի սուլթանական պարտեզում 57 հոգու պակասորդ ունի: Հրաման է տրվել ենիչերի աղային լրացնել պակասորդը թյուրքերի ընտանիքներում գտնվողներից[39]:

Թյուրքական ընտանիքներ ուղարկված աջեմի օղլաններն, այսպիսով, սուլթանի համար մարդուժի պաշար էին հանդիսանում[40], որտեղից նա պարբերաբար բավարարում էր էժան աշխատուժի իր պահանջները:

Դեվշիրմեների ստրկական աշխատանքից լայնորեն օգտվում էին նաև բարձրաստիճան պաշտոնյաները, ենիչերիական զորքի բարձր հրամանատարները և այլք: Այսպես, ենիչերիական աղաներն ու այլ սպաները տղաներին ուղարկում էին իրենց խոշոր ավատներ, որտեղ նրանց աշխատեցնում էին ինչպես ստրուկների:

Դեվշիրմեների ստրկական աշխատանքն իր լայն կիրառումն էր գտել մասնավորապես տարբեր տեսակի պետական արհեստանոցներում, շինարարություններում և այլուր: Հիշեցնենք, որ եթե Ստամբուլում ստուգման ժամանակ սյուրյույում գտնվում էին երիտասարդներ, որոնք չէին համապատասխանում դեվշիրմե հավաքի օրենքին, ապա ամբողջ հոտը որպես պատիժ ուղարկվում էր մշտական աշխատանքի Թոփհանե, Ջեբեհանե (զինագործարաններ) ու Թերսհանե (նավաշինարան):

Աջեմի օղլանների ստրկական աշխատանքն օգտագործվում էր ոչ միայն սուլթանական ձեռնարկություններում, այլ նաև արհեստավորների կողմից:

Տեղեկություններ ենք քաղում Դերնշվամի մոտից. «Եթե որևէ արհեստավորի պետք է ծառա կամ օգնական, նա դիմում է աջեմի օղլանների աղային, խնդրելով տրամադրել իրեն 1, 2 կամ 3 նոր աջեմի օղլան, այսինքն թլպատված տղա, վճարում է 25-ական աքչե, իսկ աղան գրանցում է նրանց անունները արհեստավորի վրա: ...Այս աջեմի օղլանները դեռ երկար տարիներ պետք է տանջվեն արհեստավորների մոտ, ...և ոչ ոք նրանց չի վճարի դրա համար: ...Այսպիսի աջեմի օղլաններին բաժանում են ամենուր նաև սիպահիներին, չաուշներին, գյուղացիներին և ամենքին, ում նման մարդիկ են պետք աշխատանքի համար»[41]:

5-8 տարի նման կյանքից հետո ենիչերիական աղայի պահանջով ու ըստ նրա կողմից նշված քանակի աջեմի օղլաններից մի որոշ մաս, ընդ որում ամենաավագները, ուղարկվում էին Ստամբուլ[42]: Չնայած 30 տարեկան աջեմի օղլանների առկայությունը ցույց է տալիս, որ ութ տարին ամենևին էլ առավելագույն ժամանակահատվածը չէր[43]: Այստեղ նրանց կրկին ենթարկում էին բժշկական զննման, ստուգում նրանց թյուրքացման ու մահմեդականացման աստիճանը ու նշում նրանց անունները համապատասխան մատյանում: Ստուգումն անցածներին գրանցում էին աջեմի օղլանների զորաբանակ՝ աջեմի օջաղը, որտեղ նրանց ուսուցանվում էր ռազմական արվեստ, ինչպես նաև մշակում էին մահմեդական մոլեռանդության ու սուլթանին կույր նվիրվածության ոգով:

Թվում է, թե աջեմի օղլանների աշխատանքային տաժանակրությունը սրանով ավարտին է հասնում: Սակայն թուրք պատմաբան Ի. Ուզունչարշըլըն գրում է. «Թյուրքերի մոտ ծառայությունից հետո աջեմի օղլանների զորաքանակ մտած անձինք ուղարկվում են աշխատանքի ինիչերիական զորամասերում, նավերում, շինարարություններում ու այլուր, իսկ նրանց մի մասը երկարատև ժամկետով հանձնվում էր աշխատանքի թնդանոթաձիգներին, զինագործներին և այլն»[44]:

Թուրք պատմաբան Հալիլ Ինալջիքը մահմեդական տարածքներում ստրկական առևտրի երկարատև ծաղկումը վերագրում է մահմեդական մշակույթին ներհատուկ պայմաններին: Նախ և առաջ միջնադարում Աբբասյան խալիֆները ժամանակ առ ժամանակ մեծաքանակ ստրուկներ էին պահում մահմեդական կառվարիչների զորքերում: Ստրուկները նաև օգտագործվել են որպես աշխատուժ քաղաքային արհեստանոցներում և մեծ ագարակներում, որոնք պատկանում էին պետությանը կամ մեծ հողատերերին: Ավելին, պալատի օրինակին հետևելով՝ վերին խավը և նույնիսկ բարեկեցիկ ոչ մահմեդականները ունեին մեծ տնային տնտեսություններ՝ մեծաքանակ ստրուկներով[45]:

Ընդհանուր առմամբ ստրուկները ուսումնասիրվող դարաշրջանում կազմում էին ներկայսերական, տարածաշրջանային, ինչպես նաև միջազգային առևտրի կարևոր «ապրանքներից» մեկը: Այդ առևտուրը մեծապես կարևորվում էր նաև օսմանցիների կողմից: Այսպես, 1260-1390 թթ. ընկած ժամանակաշրջանում, որի ընթացքում փոքրասիական թյուրքերը մեծապես ներթափանցեցին Փոքր Ասիայի արևմտյան մասի ու Թրակիայի բյուզանդական տարածքներ, Մակեդոնիա ու Բուլղարիա, բազմաքանակ գերիներ հոսեցին օսմանյան տարածքներ: Կարելի է նույնիսկ ավելացնել, որ այս ժամանակաշրջանի ընթացքում մահմեդական հինտերլանդում ստրուկների մեծ պահանջարկն ու աճող գները մեծ դեր խաղացին արշավանքների ընդարձակման ու Փոքր Ասիայի արևմտյան մասում ղազիների* հարուստ իշխանությունների հետագա աճի գործում: Տարօրինակ է, բայց այս իշխանությունների կանոնավոր հաճախորդները դարձան վենետիկցիներն ու ջենովացիները՝ ստրուկ գնելով ոչ միայն Իտալիայի ստրկական շուկաների, այլև լևանտյան իրենց գաղութներում գյուղատնտեսական աշխատուժը համալրելու համար:

Պատմաբաններն ավելի հաճախ են գրում այն մասին, թե ինչ մեծ դեր էր խաղում ստրկավաճառությունը ուշ միջնադարի թյուրք հասարակության համար*. «Իրենց (թյուրքերի) շուկաները հայտնի են միայն այս ապրանքով, որ մշտապես առկա է իրենց մոտ՝ թե՛ իրենց, թե՛ վաճառք, թե՛ որպես երաշխիք թողնելու, թե՛ նվերի համար»,- գրում էր մի լիտվացի դիվանագետ Ղբիմում[46]:

Հատկապես սրընթաց աճի ժամանակաշրջաններում, ինչպես օրինակ Բայազեդ I-ի ու Մեհմեդ II-ի օրոք, ինչպես նաև այն ժամանակ, երբ ներքին ճգնաժամերի պատճառով ստրուկների ներհոսքը դանդաղում էր, օսմանյան պետությունը զգում էր ստրուկների պակաս: Ուստի այդժամ վերջինս դիմում էր օրինակ այնպիսի միջոցի, ինչպես նոր գրաված տարածքներից ազգաբնակչության զանգվածային ստրկացումն ու տարագրումը և ոչ մահմեդական ռայա բնակչությունից «տղաների հարկի» գանձումը[47]: Ընդ որում վերջին դեպքն ամենից շահավետն էր, քանի որ երիտասարդ, հատուկ ընտրված, իրենց սերնդի լավագույն ներկայացուցիչ այս տղաները ստրկական շուկաներում պետք է որ համարվեին լավագույն, ամենից թանկարժեք, հետևաբար ամենաշահավետ ապրանքը: Հիշենք նաև, որ օսմանյան պետությունը ո՛չ մի ներդրում, ո՛չ մի ծախս չի արել այդ «ապրանքն» արտադրելու համար՝ որպես ծախս կարելի է համարել միայն հավաքի կազմակերպումը: Ուստի, պետական մակարդակի հասնող այս բիզնեսը մեծ եկամուտներ էր բերում սուլթանական գանձարանին, ինչը չէր կարող չշահագրգռել օսմանցիներին բերել դևշիրմե համակարգը կանոնակարգված տեսքի, իսկ այն խախտողներին ենթարկել տույժերի, որպես պետական շահերը ոտնահարող անձանց:

Այսպիսով, կարող ենք հետևություն անել, որ որպես նորանոր արշավանքների խթան օսմանյան պետության համար հանդիսանում էր նաև այս յուրահատուկ ռազմավարի առկայությունը. մարդկային ռեսուրս, որն իր ժամանակի ամենից թանկարժեք ու ամենից շուտ վաճառվող ապրանքն էր: Վերջին հանգամանքն էլ մեծ նշանակություն ունեցավ դրդելու օսմանյան պետությանը սահմանել «արյան» կամ «տղաների հարկ»՝ դևշիրմե, նախ որպես ծրի մարդուժ իր կարիքներն ապահովելու համար, ապա որպես եկամտաբեր առևտրի պարագա՝ ստրկական շուկայում վաճառքի հանելու համար:

Սույն ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ դևշիրմեով հավաքվածների թիվը քանիցս գերազանցում էր ենիչերիական զորաբանակի, ինչպես նաև վարչական ապարատի կարիքները: Ավելորդ մարդկային ռեսուրսները օգտագործվում էին հիմնականում որպես ծրի, ստրկական աշխատանքային ուժ. հավաքված երիտասարդության մեծ մասը ուղարկվում էր աշխատելու այն անմարդաբնակ տարածքները, որոնք տրվել էին իրենց ավատատերին որպես պայմանական կամ այլ տիպի տիրույթներ: Այնտեղ նրանք վերադառնում էին իրենց նախկին կարգավիճակին՝ աշխատանքային ուժ, սակայն այլևս ոչ որպես հարկատու գյուղացի, այլ՝ ստրուկ: Դևշիրմեն փաստորեն նաև աշխատուժի վերաբաշխման մեկ այլ հարմար եղանակ էր կառավարող վերնախավի համար: Մաքրուժով առավել հարուստ տարածքներից հավաքում էին որոշ քանակությամբ աշխատուժ և այն ուղարկում մաքրուժով համեմա-

տաբար աղքատ, հետևաբար թույլ գյուղատնտեսություն ունեցող վայրեր՝ այսպիսով ջանալով ապահովել պետության ողջ տարածքում համեմատաբար հավասար զարգացում, ինչը կատարում էր նաև իր ստաբիլիզացիոն գործառույթը տնտեսության, ինչպես նաև ընդհանուր առմամբ ներքին քաղաքական իրավիճակի վրա:

Դևշիրմեն բացի վերոշարադրյալ անտեսական օգուտներից պետության գանձարանը (ինչպես նաև պաշտոնյաների գրպանները) լցնում էր դրամով, ինչը ևս կարևոր նախապայման էր այդ համակարգի երկարատև կյանքի համար:

Տղաներին գյուղեր աշխատելու ուղարկելիս պետությունը ոչ միայն վաճառում էր նրանց ավատատերերին, այլ շատ հաճախ նրանց պարզապես վարձով էր տալիս: Տղաների համար հավաքվող գումարը մեկ անձի հաշվով չնչին էր, սակայն մեծ գումար էր կազմում՝ հաշվի առնելով նրանց բազմաքանակությունը: Այսպիսով, եկամուտի առաջին ուղին էր հավաքված տղաների վարձակալումը:

Եկամուտի երկրորդ աղբյուրը դևշիրմեների ուղղակի վաճառքն էր որպես ստրուկներ օսմանյան մայրաքաղաքի կամ այլ քաղաքների ստրկական շուկաներում: Ստրուկներն այդ ժամանակաշրջանում թերևս ամենից լավ վաճառվող ապրանքատեսակն էր: Ուստի, դևշիրմեն կամ «արյան հարկը», ինչպես այն անվանում են սլավոն հետազոտողները, կարելի է դիտարկել նաև որպես պետության գանձարանը լցնող հսրկատեսակ, ինչպես օրինակ ընկույզով հարուստ Զնիզլի գյուղից հարկվող ընկույզը:

Այսպիսով, հարկ է նշել, որ մանկաժողովն ամենևին այն փայլուն հնարավորությունը չէր քրիստոնյա երիտասարդների համար, ինչի մասին հիացմունքով խոսում են որոշ մասնագետներ: Մանկաժողովն ուղղված էր հպատակ քրիստոնյաների առավելագույն շահագործման, և հավաքված երիտասարդների մեծ մասը եթե անիմաստ կերպով չէր սպանվում ռազմի դաշտում, ապա ստրկացվում էր բառի բուն իմաստով և աշխատեցվում Օսմանյան կայսրության գյուղերում:

ARTAK SHAKARYAN

DEVSHIRME IN THE OTTOMAN EMPIRE AS A TOOL OF LABOR FORCE REORGANIZATION

The shepherd who rose to become an illustriuos grand vezir was a figure that never ceased to fascinate European observers. However, in reality that picture was very seldom to occure: only very fews were getting posts at the central administration. Most of the boys levied by devshirme were lost at the battle-fields or uscd as labor force. Actually, the number of the levied boys was too large to be uscd by administration or even army. Large numbers of that manpower were forcibly

transfered to the least cultivated areas of the Empire reorganizing and stabilizing the labor force markets or sold at slave-markets. Thus, devshirme, or boy-tribute, was not only a tool to raise wise administrators. fanatic venicheris. but also to provide slaves: cheap labor force to manage and merchandise for slave-markets that were very widespread, especially within the territory of the Ottoman Empire.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես՝ The Turkish letters of Ogier Ghiselin de Busbeq, imperial ambassador at Constantinople. 1554-1562. translated from Latin of the Elzevior edition of 1633 by Forster, Oxford. 1968;
2. Kunt, I. Metin. The sultan's servants, the transformation of Ottoman provincial government. 1550-1650, New York, 1983, p.32;

* Մերիտոկրատիա՝ կառավարման ձև, որտեղ ղեկավարները ընտրվում են ոչ թե ըստ արյան ազնվության, այլ ըստ կարողությունների;

3. Փենջիք բառը հենց առաջացել է պարսկերեն "pandj yak"-ից՝ 1/5: Այն համապատասխան է արաբական khums-ին (Pendjik, The Encycopedia of Islam, edited by B.Lewis, Ch. Pellat and J. Schacht, Leiden, 1995, Vol. VIII, p. 293-294);

* Աքչե՝ դրամական միավոր Օսմանյան կայսրությունում;

4. Шамсутдинов А., Проблема становления османского государства по турецким источникам XIV-XV вв., Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы, (сборник статей), под ред. Орешковой С., Москва, 1986, с. 35;
5. Զուլալյան Մ., «Դեվշիրմե»-ն (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական ու հայկական աղբյուրների, Պատմա-բանասիրական հանդես. 1959, N°2-3, էջ 248;
6. Толкованние священного корана на арабском и русском языках, Каир, 2000г., Аль Анфаль, 41-42;
7. Vryonis S.. Seljuk Gulams and Ottoman Devshirmes, Der Islam, Band 41, 1964, p.227-228;
8. Uzunçarşıh, İ., Osmanlı devlet teşkilâtından kapıkulu ocakları, I, Ankara, 1943, s. 10-11 (Այսուհետ՝ Uzunçarşılı, İ., Kapıkulu ocakları);

* Ռումելի – Օսմանյան կայսրության՝ Եվրոպա աշխարհամասում գտնվող տարածքների անվանումը: Բառացիորեն «հույների երկիր»;

9. Uzunçarşıh İ., Kapıkulu ocakları, s. 11;
10. Željazkova A.L., Social aspects of the process of islamization in the Balkan possessions of the Ottoman Empire. Études balkaniques, 3, 1985, Sofia, p. 109;
11. Ercan Y., Devşirme sorunu, devşirmenin Anadolu ve Balkanlardaki türkleşme ve islamlaşma etkisi, Belletten, Arahk, 1986, s.712;

* խաս – 100 000-ից ավել եկամուտ բերող ավատ;

* մյուլք - ավատ, որի տերն այն կարող է վաճառել, թողնել որպես ժառանգություն կամ նվիրել մեկ այլի;

* սիպահի – Օսմանյան զինվորական համակարգում հեծյալ զինվորների դաս, որոնք ի պատասխան իրենց տրված ավատների պատերազմների ժամանակ

պարտավորվում էին հանդես բերել իրենց մասնակցությունը՝ անասուններով ու զինյալ ջոկատներով հանդերձ՝ համապատասխան ավատի չափի (աղբյուրը՝ Pakalin M.Z., Osmanlı Tarih Deyimleri ve Terimleri Sözlüğü. Istanbul, 1971, c.1,2,3);

* թիմար – մինչև 20 000 աքչե եկամուտ բերող ավատ;
* զեամեթ – 20 000-ից մինչև 100 000 աքչե եկամուտ բերող ավատ;

12. Мутафчиева, В., Аграрните отношения в Османската империя през 15-16в., София, 1962., стр.33-35;
13. Uzunçarşılı, İ., Kapıkulu ocakları, s.14;
14. Նույն տեղը, էջ 16;
15. Георгиева, Ц., Еничарите в българските земи, София, 1988, с. 83;
16. Ayaion David, Preliminary remarks on the Mamlûk Military Institution in Islam. War, Technology and Society in the Middle East, Ed. Parry V.J. and Yapp M.E., London, 1975, p. 56, n. 1;
17. Георгиева, Цв., Развитие и характер на кръвния данък в болгарските земи. ГСУ – ФИФ, 61, 1967, с.53;
18. Erder L., The measurement of preindustrial population changes: the Ottoman Empire from the 15th to the 17th century, Middle East Studies. Vol. XI, #3, 1975, London, p. 287;
19. Ercan, Y., Devşirme sorunu, Belleten, 1986 Aralık, 1987, Ankara, s. 716;
20. Uzunçarşılı, İ., Kapıkulu ocakları, s.110, 113;
21. Նույն տեղը, s.110;

* Վաքուֆ – Սեփականություն, որ տրվել է սեփականատիրոջ կողմից կրոնական կամ բարեգործական կարիքների համար համայնքին, պետությանը կամ մասնավոր անձին: Որպես վաքուֆ կարող էին տրվել դպրոց, մզկիթ, հող, շարժական գույք: Վաքաֆ տվողի ժառանգները կարող էին թոշակ ստանալ փոխանցված գույքի եկամուտներից: Վաքուֆները ազատվում էին հարկերից և ծառայում որպես մահմեդական հոգևորականության գոյատևման կարևոր աղբյուր (Ислам, краткий справочник, М., 1983, с. 44);
* Ռայաթ - Գերազանցապես գյուղացի հարկատու բնակչություն;

22. По следите на насилието, Документи иматериали за налагане на исляма, Съставител Петър Петров, Част първа, София, 1987, с. 240;
23. Мебде-и-канун-и йеничери оджагы тарихи, Издание текста, перевод, комментарий Петросян И., М., 1987, с. 221;
24. Георгиева, Ц. Еничарите в българските земи, с. 88;
25. Նույն տեղը, с. 89;
26. Uzunçarşılı İ., Kapıkulu ocakları, 79-81;
27. Мутафчиева, Аграрните.. с.153;
28. Дневникът на Х.Дерншвам за едно пътуване....с. 80-81/ или 88;
29. Георгиева, Ц. Еничарите в българските земи, с. 91;
30. Uzunçarşılı İ., Kapıkulu ocakları, s. 6-7; Osmanli tarihi…c.1, s.509;
31. Uzunçarşılı, İ., Kapıkulu ocakları, s. 29;
32. Նույն տեղը, s. 17, 26;
33. Նույն տնղը, s. 29;

34. 3 numaralı mühimme defteri (966-968 / 1558-1560), c.I, Ankara, 1993, Osmanlı Arşiv Dairc Başkanlıgı, s. 684;
35. 5 numaralı mühimme defteri (973 / 1565-1566), c.I, Ankara, 1994, Osmanlı Arşiv Daire Başkanlığı, s. 138;
36. 12 numaralı mühimme defteri (978-979 / 1570-1572), c.3, Ankara, 1996, Osmanlı Arşiv Daire Başkanlığı, s. 375, 798;
37. 6 numaralı mühimme defteri (972 / 1564-1565), c.I, Ankara, 1995, Osmanlı Arşiv Daire Başkanhğı, s. 212;
38. Նույն տեղը, s. 261;
39. 12 numaralı mühimme defteri, s. 293.
40. Ավելի շատ փաստաթղթերի թարգմանությունների համար տես՝ Uzunçarşılı İ.. Kapıkulu Ocakları, s.115-125;

* Սյուրյու - քառացիորեն՝ հոտ; հավաքված տղաներից կազմված 100-200 հոգանոց խմբեր;

41. Дневникът на Х.Дерншвам за едно пътуване....с. 86-87; Новичев А., К истории рабства в Османской империи, Тюркологический сборник 1976, М., 1978, с. 101;
42. Uzunçarşılı İ., Kapıkulu ocakları, 151.
43. Новичев А., К истории рабства..., с. 108
44. Uzunçarşılı İ.. Kapıkulu ocakları, 57
45. Inalcik H., Servile Labor in the Ottoman Empire, Studies in Ottoman Social and Economic History, VII, London, 1985, p. 25-26;

* Ղազի – Սրբազան պատերազմի՝ ղազավաթի, մասնակից, մարտիկ;

* Ստրկավաճառության մասին հայ հետազոտողների հոդվածներից տես՝ Խառատյան Ա.Ա., Գերության համակարգը Օսմանյան կայսրությունում (XV-XVIII դդ.), «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2001, N1, էջ 25-40; Ղլիչյան Վ.Գ., Ստրկավաճառությունը Օսմանյան կայսրությունում, 19-րդ դարում, «Արևելագիտության հարցեր», միջբուհական ժողովածու, պր. 3-4, Ե., 1987, էջ 107-120;

46. Новичев А., Рабство в Османской империи в средние века. — Проблемы социальной структуры и идеологии средневекового общества. Вып. 2, Л., 1978, с. 70 цит. по Фрейденберг М., Дубровник и Османская империя, М., 1989, с. 214;
47. Inalcik H., Servile Labor...p. 35;

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍԱՅԻ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ (KUB XXVI 39)

Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների շարքում Հայասան իր ուրույն տեղն ունի առաջին հերթին «հայ» էթնոնիմի հետ առնչակցության տեսանկյունից: Ոչ պակաս կարևոր է նաև Հայասայի մոտավոր տեղադրությունը Բարձր Հայքում, որը հին հայոց հեթանոսական դիցարանի աստվածությունների պաշտամունքի գլխավոր և նախնական կենտրոններից էր: Հայագիտության այս կարևոր բնագավառի հետագա հետազոտությունը կարիք ունի առկա աղբյուրագիտական հենքի ներկայացման, որն էլ տրվում է առաջարկվող հոդվածում:

Հայասական դիցաբանի վերաբերյալ համաժամանակյա սկզբնաղբյուրները պահպանվել են մ.թ.ա.XV-XIII դդ. խեթական սեպագիր տեքստերում: Դրանց շարքում առանձնանում է մ.թ.ա.XIV դարով թվագրվող խեթական KUB XXVI 39 սեպագիր արձանագրությունը[1]: Այն Խեթական տերության և Հայասայի միջև կնքված պայմանագրի բեկոր է, որտեղ պահպանվել է երկու հատված՝ 1) պայմանագրի վկա-աստվածների ցանկը (ՀԿ = Հակառակ կողմ) և 2) պայմանագրի խիստ տուժած կետերից մեկը (ԴԿ = Դիմային կողմ): Վկա-աստվածների ցանկը հրատարակված է տարբեր մասնագետների կողմից[2]: Ստորև կներկայացվի տեքստի ամբողջական գիտական հրատարակությունը՝ կից տեքստաբանական և բովանդակային մեկնաբանություններով:

KUB XXVI 39

Գիտական տառադարձում

Դիմային կողմ I

1) [....]x na-aš-šu pa-ra-a ḫu-it-ti-ya-ši [.......
2) na-aš-ma-mu x[.......] a-pí-ni-iš-[u-w]a-a[n ....
3) ša-an-na-at-t[i] n[u-k]án? im-[ma ....
4) *Ú-UL* zi-ik-ma? [............
5) *Ú-UL* [........] x [........

Հավելված կողմ IV

1) [..]-li-[........
2) [..]-nu-un n[a-..........
3) [...................... iš-ḫi-u-la-aš *TUP-PU*] i-ya-nu-u[n.........
4) [...................... nu ka-a-š]a ké-e-d[a-ni ud-da-ni-i]
5) [*LI-IM* DINGIR^{MEŠ} tu-li-ya] ḫal-zi-ú-[en]

---

6) [^{d}UTU *ŠA-ME-E* ^{d}UTU ^{URU}A]-ri-in-na [^{d}IM ^{URU}Ḫa-at-ti]
7) [^{d}IM ^{URU}Ḫa-la-ap ^{d}IM ^{URU}Z]i-ip-pa-l[a-an-da (..?..)]
8) [^{d}IM ^{URU}.........^{d}]IM ^{URU}Pít-t[e-ya-ri-ga ^{d}IM ^{URU}Ša-mu-ḫa(?)]
9) [^{d}IM ^{URU}..............] ^{d}IM ^{URU}Ša-p[í-nu-wa ^{d}IM ^{URU}..........]
10) [^{d}IM ^{URU}............... ^{d}IM ^{URU}]Li-iḫ-zi-na ^{d}[IM ^{URU}............]

---

11) [^{d}LAMMA ^{d}LAMMA ^{URU}Ḫa-at-ti ^{d}LAM]MA ^{URU}Ga-ra-aḫ-[na ^{d}LAMMA ^{URU}....]
12) [^{d}............................] ^{d}E-a-aš ^{d}[DAM.K]I.N[A(?)]
13) [^{d}Iš-ḫa-ra-aš MUNUS.LUGAL *NI-IŠ* DING]IR^{LIM} ^{d}Y[a-a]r-ri-iš
14) [^{d}Za-ap-pa-na(?) ^{d}]Aš-ka-še-pa-a[š MUN]US.LUGAL-aš (.?.)]
15) [^{d}...........................] ^{d}Te-l[i-p]í-nu-uš

---

16) [^{d}Pí-ir-wa(?) ^{d}*SIN*(?)] li-in-ki-ya-[aš EN-aš] ^{d}*IŠTAR*
17) [^{d}.......................] ^{d}NIN.GAL DINGIR^{MEŠ} l[u-la-aḫ-ḫi-y]a-aš
18) [DINGIR^{MEŠ} ḫa-pí-ri-]ya-aš ^{d}Li-il-[wa-ni-i]š tak-na-aš ^{d}UTU-u[š]
19) [^{URU}An-ku-wa-aš] ^{d}Ga-at-taḫ-ḫa-aš [^{URU}Ka-t]a-pa-aš MUNUS.LUGAL-aš
20) [^{URU}Ša-mu]-u-ḫa-as ^{d}A-a-pa-ra-aš ^{U}[^{RU}Ḫur-m]a-aš ^{d}Ḫa-an-te-ta-[aš-su-us]
21) [^{URU}Ta-ḫur]-pa-as ^{d}Am-ma-am-ma-aš ^{URU}[Du-un-na-aš ^{d}Ḫal-la-ra-[aš]
22) [^{URU}Ḫu-u-p]í-iš-na-aš ^{d}Ḫu-u-wa-aš-ša-an-n[a-aš ^{URU}Š/T]a-am-ni-wa-a[š ^{d}......]

---

23) [DINGIR^{MEŠ} L]Ú^{MEŠ} DINGIR^{MEŠ} MUNUS^{MEŠ} ḫu-u-ma-an-te-eš ^{U}[^{RU}Ḫa-at-ti]
24) [ḫu-u-m]a-an-te-eš ne-pí-iš te-kán HUR.SAG^{MEŠ} [Í]D^{MEŠ} PÚ^{MEŠ}
25) ^{d}KASKAL.KUR^{MEŠ} ḫu-u-ma-an-te-eš šal-li-iš a-r[u-n]a-aš

---

26) [^{d}]U-GUR ^{URU}Ḫa-ya-ša ^{d}*IŠTAR* ^{URU}Pa-a-at-te-u-[.....]
27) գրված չէ

28) [^{d}.....-š/t]a?-an-nu-uš ^{URU}La-ḫi-ir-ḫi-la ^{d}Za-ag-ga(-)[.........]
29) [^{d}U ^{UR}]^{U}Ar-ni-ya ^{d}Ta-a-ru-u-mu-uš ^{URU}Kam?-[.......-a]n?-ze?-n[a]
30) [^{d}U] ^{URU}Pa-aḫ-ḫu-u-te-ya ^{d}Te-ri-it-ti-tu-u-ni-i[š]
31) [^{UR}]^{U}Ta-ma-at-ta ^{d}U-na-ga-aš-ta-aš ^{URU}Ga-zu-u[?]
32) ^{d}U tak-ša-an-na-aš ^{URU}Ar-ḫi-ta ^{d}Ba-al-ta-ik
33) [^{UR}]^{U}Du-ug-ga-am-ma-na ^{d}U-na-ag-ga-as-ta-aš ^{URU}Pár-ra-ya
34) [^{d}....r]a(?)-ḫu-ḫu-uš ^{URU}Ga-as-mi-ya-ḫa ^{d}Si-il-l[i?-x]-l[i? ^{URU}.......]

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առ այսօր լուծված չէ այս պակասավոր տեքստի ԴԿ-ի և ՀԿ-ի հարաբերակցության խնդիրը: Տեքստի ինքնագիր հրատարակության մեջ որպես ԴԿ տրված է խիստ պակասավոր՝ վեց տուժած տողերով ներկայացված մասը, իսկ ՀԿ՝ ենթադրաբար, աղյուսակի միջնամասը և վերջը ներկայացնող հիմնական հատվածը (պայմանագրի կնքմանը վկա աստվածների ցուցակը): Եթե այս դասավորությունը ճիշտ է, ապա պետք է ենթադրել ևս մեկ աղյուսակ, քանի որ վկաներից հետո, ելնելով մյուս պայմանագրերի հետ համեմատությունից, տեքստը չի ավարտվում:

Օ.Կարրուբայի կարծիքով (Carruba, 1988, S.70), հնարավոր է տեքստի երկու բեկորների վերադասավորում, այսինքն, ԴԿ-ը դիտել որպես ՀԿ և հակառակը: Այդ դեպքում կարելի է ուսումնասիրվող տեքստին վերագրել արխայիկ կառուցվածք, այն է՝ մեկ աղյուսակից բաղկացած պայմանագիր, որտեղ աստվածային վկաների ցուցակը տրվում է տեքստի առաջին մասում (օրինակ, Սուպպիլուլիումաս I-ի և Խուկկանայի միջև կնքված պայմանագիրը): Սակայն քանի դեռ այս խնդիրը լուծված չէ, մենք ելնում ենք տեքստի նախնական դասավորությունից:

Դիմային կողմ

1-4) Վերականգնումները ըստ Օ.Կարրուբայի (Carruba, 1988, S.70):
5) *Ú-UL* վերականգնումը մերն է:

Հակառակ կողմ

3-5) Վերականգնումները պատկանում են Է.Ֆոռերին (Forrer, 1931, S.6): Չորրորդ տողի վերջին լակունայում նա առաջարկում էր վերականգնել ké-e-d[a-ni li-in-ki-ya-...]: Հարկ է նշել, որ linkiya-ի փոխարեն հնարավոր է առաջարկել նաև ké-e-d[a-ni ud-da-ni-i] «այս գործի/բանի համար», ինչպես ստկա է, օրինակ, Խուկկանայի պայմանագրում (I 39f.,

hյուտ.՝ Friedrich, 1930, S.103ff.): Ընդ որում, uddar-ից հետո լակունայում այլևս ոչինչ հնարավոր չէ ակնկալել:

6-34) Պայմանագրի կնքմանը վկա աստվածների ցուցակն ընդգրկում է աստվածների երկու խումբ՝ 1) Խաթթիի աստվածներ (6-25 տողեր), 2) Հայասայի աստվածներ (26-34): Առաջին խումբը ներառնում է աստվածների հետևյալ կատեգորիաները՝ 1) Ամպրոպի աստվածներ (6-10 + մեկ Արևի աստվածուհի), 2) Պահապան աստվածներ (11-15), 3) անվանապես հիշատակվող այլ աստվածներ՝ առանց կից տեղանվան և ըստ տեղանունների (16-22), 4) աստվածներ, որոնք հիշատակվում են ոչ անվանապես, այլ ըստ սեռի և բնության երևույթների (23-25): Հայասայի աստվածները, բացառությամբ ^{d}U.GUR-ի, տրված են միայն ըստ բնակավայրերի:

Վերոհիշյալ ստորաբաժանումները միմյանցից առանձնացված են տողանջատիչ գծերով, որոնք արվել են տեքստը կազմող գրչի կողմից:

6-7) Վերականգնումները Է.Ֆոռերինն են: Հարկ է նշել, որ Ցիպպալանդա քաղաքի անվանումից հետո լակունայում ոչինչ չի ակնկալվում:

8) Սամուխա քաղաքի անվան վերականգնումը մերն է և հենվում է մյուս պայմանագրերում Պիտտիյարիգայի և Սամուխայի աստվածությունների համատեղ հիշատակության վրա: Սամուխան չէր կարող գտնվել առաջին լակունայում, քանի որ վերջինս շատ մեծ է ^{URU}Sa-mu(-u-)ha գրության համար: Այս երկու քաղաքների հայտնվելը խեթական աստվածների ցուցակում լավագույն վկայությունն է հօգուտ դրանց՝ Հայասայից դուրս՝ խեթական տարածքում գտնվելու (կարծիքները տես՝ Քոսյան, 2004, էջ.81,88-89,118-119): Դարանաղյաց գավառի Բթառիճի հետ կապի բացակայության մասին տես ստորև՝ ծանոթ.26: Որ Pittiyariga-ն և Patteu-[...]-ն նույնական չեն (Հ.Մանանդյանը և Գր.Ղափանցյանը հակված էին այս նույնացման օգտին), պարզ է մեր տեքստից:

9-10) Այս երկու տողերում պետք է հիշատակվեին Ամպրոպի աստվածները՝ ըստ բնակավայրերի (սկիզբը՝ 6-8-րդ տողերում), ընդ որում, յուրաքանչյուր տողում՝ երկուական, մեկը՝ առաջին, մյուսը՝ երկրորդ լակունայում, որը թելադրվում է լակունաների չափերով:

Ամպրոպի աստվածների քանակը բավական մեծ է: Մեր տեքստում ակնկալելի է շուրջ 12 անուն, որը կազմում է մյուս պայմանագրերում վկայված համապատասխան աստվածների մոտավորապես 50 տոկոսը:

11-12) Խաթթիի աստվածների երկրորդ և երրորդ կատեգորիաների ցուցակը միանշանակ վկայում է այն մասին, որ դա որևէ առնչություն չունի Խուկկանայի պայմանագրի հետ (համապատասխանաբար, նաև KUB XXVI 39-ը), քանի որ 1) այստեղ առկա են մի շարք աստվածներ, որոնք բացակայում են Խուկկանայի պայմանագրում (Yarri, Aškašepa, Telipinu), 2) որոշ քաղաքներ ներկայացված են այլ աստվածություննե-

բով (Katapa քաղաքի ^{d}Katahha [Խուկկանայի տեքստում՝ ^{URU}Tahurpa], Tahurpa քաղաքի ^{d}Hantitaššu [Խուկկանայի տեքստում՝ ^{URU}Ankuwa]):

8-11) Տողասկզբի լակունաների չափսը թույլ է տալիս ենթադրել ընդամենը մեկ դիցանուն՝ իր բնակավայրով:

11) Պահապան աստվածությունների շարքը պայմանագրերի համապատասխան մասում սկսվում է երկու եղանակով՝ ա) ^{d}LAMMA ^{d}LAMMA ^{URU}Hatti (օր.՝ «Պայմանագիր Սուպպիլուլիումաս 1-ի և Խուկկանայի միջև» [Friedrich, 1930, S.103ff.]), բ) ^{d}LAMMA ^{URU}Hatti («Պայմանագիր Սուպպիլուլիումաս 1-ի և Միտաննի արքա Շատտիվազայի միջև» [Weidner, 1923, S.2ff.; Beckman, 1996, N.6A, p.38ff.]): Քանի որ լակունան քիչ ավելի մեծ է, քան կպահանջվեր երկրորդ տարբերակի դեպքում, ապա գերադասել ենք առաջինը:

Կարախնա քաղաքի պահապան աստվածությանը պայմանագրերում հաջորդում կամ նախորդում են երեք աստվածներ՝ ^{d}Zithariya, ^{d}Karzi և ^{d}Hap/bantaliya (տես «Սուպպիլուլիումաս I - Շատտիվազա», «Շատտիվազա - Սուպպիլուլիումաս I» [Weidner, 1923, S.36ff.; Beckman, 1996, N.6B, p.44ff.], «Մուվատալլիս II – Վիլուսայի արքա Ալաքսանդուս» [Friedrich, 1930, S.42ff.; Beckman, 1996, N.13, p.82ff.][վերջինում ^{d}Zithariya-ն չկա] պայմանագրերը): Տողի վերջին լակունան փոքր է և հնարավոր է տեղավորել միայն ^{d}Kar-zi-iš-ը:

12) Առաջին լակունայում պետք է վերականգնել ^{d}Zithariya կամ ^{d}Hapantaliya: Հաջորդ լակունայում վերականգնումը ըստ Yoshida, 1996, S.17:

13) Վերականգնումը մերն է, որի համար տես ստորև ծանոթ.16: «Երդման տեր/հովանավոր» (աքքադագիր-շումերագիր *NIŠ* DINGIR$^{LIM/MEŠ}$) արտահայտության վերականգնման հավանականությունը որոշակիորեն կասկածելի է, քանի որ 16-րդ տողում կիրառված է դրա խեթերեն ձևը՝ linkiy[aš EN-as], սակայն ցանկալի:

14) Վերականգնումը (առաջին լակունա) ըստ Yoshida, 1996, S.17:

15) Դ.Յոշիդան առաջին լակունայում առաջարկում է վերականգնել [^{d}Pirwa]: Սակայն Պիրվա աստծո անունը ավելի շուտ սպասելի է հաջորդ տողի սկզբում՝ Սին աստծո անունից առաջ: Այս նույն հերթականությունը առկա է Մուրսիլիս II-ի և Սեխայի արքա Մանապա-Թարխունտասի միջև կնքված պայմանագրում (տես հաջորդ ծանոթագրությունը):

16) Առաջին լակունայից հետո առկա lingai- «երդում» (եզ.սեռ. հոլով) բառը ակներևաբար ինչ-որ աստվածության մակդիր է: Մի շարք պայմանագրերում հիշատակվում են միայն երկու աստվածություններ այս մակդիրով, բոլոր դեպքերում՝ միևնույն դիրքում և հերթականությամբ: Օրինակ, ^{d}Sîn bēl ma-mi-ti ^{d}Iš-h[a-ra šar]rat ma-mi-ti «Սինը՝ երդման տերը, Իշխ[արան՝] երդման տիրուհին» («Սուպպիլուլիումաս I – Շատ-

տիվազա», ՀԿ 18 [արքաղ.]), ^{d}Sîn EN *NI-IŠ* DINGIR^{LIM} ... ^{d}Iš-ḫa-ra MUNUS.LUGAL *NI-EŠ* DINGIR^{LIM} («Մուվատալլիս II – Ալաքսանդուս» IV 12,14) և այլն:

Մեր տեքստում, թվում է, այս հերթականությունը խախտված է: Իսխարայի անունը չէր կարող տեղ գտնել 16-րդ տողում. քանի որ առաջին լակունայի փոքր չափսը թույլ չի տալիս այստեղ տեղավորել նրա անունը և կարգավիճակը նշող բառը, եթե նույնիսկ ^{d}Pirwa-ն հանենք: Դ.Յոշիդան նույնպես, հարցականով, առաջարկում է վերականգնել Սին աստծո անունը:

17-18) Վերականգնումները մերն են: lulah(h)i- տերմինի տակ (խեթական, նաև սեպագրական աղբյուրներում (հին ասորեստանյան, հին բաբելոնյան և այլ) հիշատակվում է հինարևելյան երկրների լեռնային պերիֆերիայի (բարբարոսական) բնակչությունը (Klengel, 1966, S.358 Anm.53): Սրա հետ պետք է կապված լինեն Հոմերոսի (X 429, XX 96, XXI 86), Հերոդոտոսի (VII 92), Ստրաբոնի (VII 322) և այլոց կողմից հիշատակվող Αελεγες-ները (Шеворошкин, 1962, с.97), որոնց վերոհիշյալ հեղինակները տեղադրում էին Տրոադայում (Պեդասոս), Պելոպոննեսի հարավ-արևմուտքում և Լոկրիդայում (տես Гиндин, 1967, с.47): Առավել բարդ է hapiru-ի (գրվում է նաև գաղափարագիր $^{(LÚ)}$SA.GAZ) մեկնաբանությունը: Այս տերմինը տարբեր ձևերով վկայված է Առաջավոր Ասիայի տարբեր տարածաշրջաններում սկսած մ.թ.ա.XIX դարից (տես Chicago Assyrian Dictionary, 1956, p.84f.; Friedrich, 1954, p.307):

22) Այս դիրքում վստահաբար պետք է վերականգնել տեղանվան դետերմինատիվը: Հաշվի առնելով լակունայի փոքր չափերը, հավանաբար, այդ տեղանվան գրության սկիզբը հենց կիսատ պահպանված sa կամ ta նշանն է: Հարկ է նշել, որ Samniwas կամ Tamniwaš անունով տեղանուն այլևս վկայված չէ: Տարօրինակ է այս քաղաքի հանդես գալը աստվածների ցանկում, հատկապես նմանատիպ ցանկերի հետ համադրման պարագայում:

25) ^{d}KASKAL.KUR^{MEŠ} (նախկինում տառադարձվում էր որպես ^{d}ELLAT/ILLAT^{MEŠ}) գրությամբ ներկայացված է ստորգետնյա ջրերից գոյացած ինչ-որ ջրամբար, որ խեթերի մոտ աստվածացված էր, ինչպես ջրի մյուս բոլոր աղբյուրները (ծով, լիճ գետ, աղբյուր): Առաջարկված թարգմանությունը՝ "Quellbecke" (Otten, 1988, S.33f. – նախկինում արտահայտված կարծիքների տեսությամբ) դեռևս կարիք ունի ճշգրտման:

26) Դեռ 1931թ. հրատարակելով KUB XXVI 39-ը, Է.Ֆոռերը տեքստային մեկնաբանություններում նշում էր որոշ հատուկ անունների պայմանական ընթերցման պարագան: Սակայն հետագա ուսումնասիրողները, գրեթե առանց վերապահումների, որպես հիմք են ընդունել նրա առաջարկած գիտական տառադարձման մեջ առկա տարբերակները, չնայած վերջինս ընդգծում էր այլընտրական ընթերցման հնարավորությու-

նը: Համապատասխանաբար, վերոհիշյալ տեղանունների և դիցանունների լեզվական քննությունը իր մեջ պայմանականության որոշակի տոկոս է պարունակում, քանզի առկա ընթերցումները դեռ վերջնական չեն: Նկատի ունենալով այդ պարագան, մենք ներկայացված տեքստում նշել ենք բոլոր հնարավոր ընթերցումները:

Հայագետների շրջանում վաղուց ի վեր արտահայտված կարծիքը խեթական տեքստերում հաճախակի հանդիպող Pittiyariga քաղաքը Դաբանաղյաց գավառի Բքառիճի հետ նույնացման օգտին (Forrer, 1931, S.7; Капанцян, 1948, с.59; Манандян, 1956, с.90сл.; Хачатрян, 1971, с.54сл., 62слл., 1998, էջ.35,43) հիմնավորված չէ, քանի որ խեթական աղբյուրներում մշտապես որպես պայմանագրերի կնքման վկաներ հանդես են գալիս Պիտտիյարիգայի տարբեր աստվածությունները: Հայկական աղբյուրների Բքառիճի հետ ավելի նպատակահարմար է համադրել հենց այս թերի ավանդված Patteu-[]-ն, եթե համոզված լինեինք, որ լակունայում եղել են համապատասխան նշանները:

28) [^{d}.......-š]annus. Մենք հետևել ենք Է.Ֆոռերին, որևէ վերականգնում չառաջարկելով տողասկզբում հայասական դիցանվան գրության մեջ պակասող մեկ-երկու նշանի համար: Վ.Խաչատրյանը, առանց մեկնաբանության, վերականգնել է [^{d}Iz-zi-iš-ta]-an-nu-us (1971, с.148): Է.Ֆոռերն էլ էր նշում, որ տողասկզբի լակունայում սկսվող և մասնակիորեն պահպանված նշանը կարելի է ընթերցել նաև ta. Թերևս, այս վերջին վերականգնումը կասկածելի է ինչպես լակունայի փոքր չափսի, այնպես էլ այս զուտ խեթական աստվածության անվան հնչյունական գրության առկայության անհնարինության պատճառով հայասական աստվածների ցանկում: Պարզ չէ, թե ինչու խեթական աստվածության անունը պետք է զետեղվեր հայասական ցուցակում, այն էլ գրված հնչյունաբար: Նույն հեղինակը հաջորդ աստվածության անվան գրության պահպանված մասում ընթերցում է –kán (տեքստում՝ ga):

Նույն տողի վերջում Zagga(-)[...] աստծո անվանը կցված տեղանունը Է.Ֆոռերը վերականգնել է [^{URU}]Qa?-ad-ku/ma-ša/ta?: Տեքստի ինքնագիր հրատարակության մեջ աղյուսակի աջ եզրին լակունայից հետո առկա են հետևյալ նշանները:

ա) Կարճ հորիզոնական սեպ, որն ավարտվում է մեկ ուղղահայացով (կարող է լինել qa, an կամ մեկ այլ նշան, որի սկիզբը պետք է ենթադրել լակունայում: Հարկ է նշել նաև, որ հնարավոր չէ պարզել, արդյոք այս նշանով է սկսվում տեղանունը: Իսկ դա նշանակում է, որ դրա համար առաջարկված համադրություններից առայժմ անհրաժեշտ է խուսափել:

բ) Է.Ֆոռերի ad ընթերցվող նշանը կարող է ընթերցվել նաև ze (պահպանված նշանի աջ կողմում առկա քառակուսում [որը նա ընթերցում է ku կամ -ma, կարող է լինել նրա կողմից ad ընթերցվող նշանի մասը]

երևում է ինչ-որ փոքր սեպախումբ), ստ կամ ուրիշ նշան. ինչ վերաբերում է ma-ին. ապա դա կարելի է բացառել:

գ) sa-ն կամ ta-ն նույն հաջողությամբ կարելի է ընթերցել նաև -na.

Այստեղ տեղանվան գրության սկիզբը կախված է հետևյալ հարցից. արդյոք այս դիցանունը ավարտվում է ga նշանով, թե լակունայում այն դեռևս շարունակվում է: Եթե սա դիցանվան լրիվ գրությունն է, ապա մինչև տողավերջ հազիվ թե առկա լիներ ընդամենը քաղաքանվան URU դետերմինատիվը: Այդ դեպքում Է.Ֆոռերի կողմից qa-ն որպես քաղաքանվան սկիզբ դիտելը սխալ է:

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով, կարելի է առաջարկել այլընտրական [^{URU}......-a]n-zé-na վերականգնումը: Ամեն դեպքում, առայժմ անհրաժեշտ է ձեռնպահ մնալ Qadmaša կամ Qadkusa տեղանվան ստուգաբանությունից և համադրումից ավելի ուշ շրջանի աղբյուրներում վկայված տեղանունների հետ, քանի որ դրա ընթերցումը վստահելի չէ:

29) ^{URU}Kam-. Տեղանվան սկիզբն արտացոլող նշանը մեծ վերապահումներով կարելի է ընթերցել kam (Է.Ֆոռերն առաջարկում էր այն մասնատել երկու մասի (hi-w[a]): Երկու ընթերցումներն էլ ենթադրական են և վստահելի չեն: Այս տողի վերջին երեք՝ վատ պահպանված նշանների պատկանելությունը վերոհիշյալ տեղանվանը Դ.Յոշիդան կասկածի տակ է առնում իսկ տեղանվան առաջին նշանի հարցում ձեռնպահ է մնում որևէ ընթերցում առաջարկելուց (Yoshida, 1996, S.19):

30) Երկրորդ դիցանվան գրության վերջին՝ ni նշանը Դ.Յոշիդան չի տառադարձում. նույնը նաև դրանից հետո՝ հաջորդ բառի առաջին նշանի համար (Yoshida, 1996, S.19): Այդ մոտեցումը արդարացված չէ, քանի որ սույն դիցանվանը կցված տեղանունը (Tamatta) հաջորդ տալում է գրված, այսինքն, 3-րդ տողի վերջում չէր կալող որևէ բան գրվել:

31 և 33) Unagastaš. Գր.Ղափանցյանը այս դիցանունը տրոհում էր անհայտ ծագման unag- արմատի և -ašt(a) վերջածանցի. վերջինս, նրա կարծիքով, կարող էր լինել հնդեվրոպական-խեթական կամ խուրրիական (Капанцян, 1948, с.96):

Տեղանվան Gazu ձևը մի քիչ տարօրինակ է հնչում հայասական տեղանվան համար. u նշանից հետո առկա փոքր լակունայում հնարավոր է տեղավորել մեկ նշան ևս: Հայասական տեղանվանակերտ վերջածանցներն են (այս և մյուս տեքստերում վկայված)՝ - ya, ta, (ma)na, ša, na, (te)na: Այնպես որ, կարելի է այստեղ ենթադրել դրանցից որևէ մեկի առկայությունը:

32) Գր.Ղափանցյանը չէր բացառում, որ դիցանունը կարող էր ունենալ Utakšannas ձևը (Капанцян, 1948, с.96сл.), սակայն ավելի շատ հակված էր անջատ գրության օգտին: Արխիտա քաղաքի Ամպրոպի աստծո takšannaš մակդիրի համար Ա.Պետրոսյանը առաջարկել է հնդեվ-

րոպակւսն ստուգաբանություն՝ *teks's- «կւսցին» հիմքից (Петросян, 2002, с.54), որ լավ հիմնավորված է:

33) Վ.Խաչատրյանը ընթերցում է ^{URU}Pa-ra-ya, սակայն տեքստում իրականում առկա է ^{URU}Pár-ra-ya:

34) Վ.Խաչատրյանը, առանց մեկնաբանության, վերականգնել է [^{d}Ka-ar]-ḫu-hu-us: Այսպիսի աստվածություն խեթական տեքստերում վկայված չէ և նման վերականգնման համար հիմք չկա, չնայած լակունայի չափսը համապատասխանում է այնտեղ ենթադրելի երեք նշաններին: ^{d}Karhuha աստվածը բազմիցս հիշատակվում է միայն Խեթական տերության տրոհումից հետո՝ մ.թ.ա.I հազարամյակի սկզբներին՝ հիերոգլիֆային լուվիական տեքստերում (վկայությունները՝ Laroche, 1960, N.103, p.64f.; Meriggi, 1962, S.70, նաև Kalaç, 1965, S.410f.): Եթե իսկապես մեր տեքստում առկա է Կարխուխուս անունով աստվածություն, այն էլ հայասական աստվածների ցանկում, ապա հնարավոր կլիներ ենթադրել դրա պաշտամունքի ընդարձակում ետխեթական Փոքր Ասիայում և Հյուսիսային Սիրիայում: Հատկապես վերջինում, որտեղ Կարհուխա աստվածը կանոնավոր հանդես է գալիս Թարխունտաս (Ամպրոպի աստվածը) – Կուբաբա (Կարգամիսի խովանավոր աստվածուհին) – Կարխուխա բլոկում:

Տողավերջի վնասվածքը նվազեցնում է Սիլլիի աստվածության անվան ընթերցումը: Այստեղ վստահելի է միայն ^{d}Si-il- հատվածը. հմմտ. ^{d}Ši-il-[...]x[...] ընթերցումը (Yoshida, 1996, S.19): Այս դիցանվան հետ հմմտ. Վանի թագավորության պաշտոնական դիցարանի ^{d}Si-li-i-a աստվածուհու անունը (Арутюнян, 2001, н.38 I 22; II 41; նաև Капанцян, 1940, с.49-54; Հմայակյան, 1990, էջ.11-26):

*Աղյուսակի աջ եզրին, 26-27-րդ տողերին զուգահեռ պահպանվել են երեք սեպախմբեր՝ առաջինի վերջին ուղղահայացը, երկրորդը ամբողջությամբ և երրորդի վերին մասը: Սրանք ակնհայտորեն պատկանում են հայասական աստվածների անունները պարունակող տողերից որևէ մեկին: Նկատի ունենալով վերոհիշյալ տողերում պահպանված հատուկ անունների (դիցանուններ և տեղանուններ) արտաքուստ ավարտուն լինելու հանգամանքը, ավելի հավանական է թվում այս երեք սեպանշանների (հնարավոր է, և 1-2 նշանների) պատկանելությունը 29-րդ կամ 31-րդ տողերից որևէ մեկին (^{URU}Kam-[..........] կամ ^{d}Ga-zu-u-[.........]): Մեր հրատարակության մեջ նախընտրել ենք այս տարբերակներից առաջինը, քանի որ 29-րդ տողում գրված տեղանունից պահպանվել է միայն առաջին նշանը և կարելի է ենթադրել և 4-5 նշանների գրություն: Նախավերջին zé նշանի ընթերցումը հարցականի տակ է, սակայն խեթական սեպագիր նշանացանկում չկա վանկային մեկ այլ նշան, որն այդքան նման լիներ մեր տեքստի պահպանված նշանին:

Ամեն դեպքում, չի կարելի բացառել նաև այս կողային նշանների վերագրումը պահպանված տեքստի վերջի՝ 34-րդ տողին, եթե ենթադրենք, որ աղյուսակի ավարտական տողը գրելուց հետո գրիչն ավելացրել է ևս - մեկ աստվածության անվանում իր կից տեղանվան հետ:

Ավարտելով տեքստային մեկնաբանությունները, հարկ ենք համարում հղելու «Սուպպիլուլիումաս I – Խուկկանա» պայմանագրի վկաաստվածների ցանկը, որտեղ հիմնական տեքստի (KBo V 3) **KBo XIX 43** կցաբեկորը իրենից ներկայացնում է խեթական աստվածների ցանկի ավարտական մասը և հայասականի սկիզբը.

KBo V 3 + KBo XIX 43

58) DINGIR$^{\text{MEŠ}}$ *ŠA-ME-E* DINGIR$^{\text{MEŠ}}$ *IR-SI-TIM* ḪUR.SAG[$^{\text{MEŠ}}$ ÍD$^{\text{MEŠ}}$
PÚ$^{\text{MEŠ}}$ *UR-PÍ*$^{\text{ME}}$]$^{\text{Š}}$ ne-pí-iš
59) te-e-kán šal-li-iš a-a-ru-na-aš na-a[t ku-ut-ru-e-eš a-ša-an-du ....]
60) [...]-ya
61) [...]-ya
62) [...]-at-ti
63) [...]x

58) «Երկնքի աստվածները, անդրաշխարհի աստվածները, լեռն[երը, գետերը, աղբյուրները, ամպեր]ը, երկինքը,
59) երկիրը, մեծ ծովը: Եվ [սրանք վկաներ պիտի լինեն ....]»:
60) [...]-ya
61) [...]-ya
62) [...]-at-ti
63) [...]x

Բոլոր խեթական պայմանագրերում nat kutrues ašandu-ից հետո սկսվում է օտար աստվածների թվարկումը: Եթե հենվենք այդ փաստի վրա, ապա 60-63-րդ տողերում ավարտական նշանները (ya, ya, atti և անընթեռնելի x-ը) պետք է համարել հայասական դիցանունների կամ դրանք ուղեկցող բնակավայրերի անվանումների գրության վերջին նշաններ:

Թարգմանություն

ԴԿ I
1) .... Նրա մոտ եթե գնաս, [.......
2) Կամ եթե ես/ինձ [.............
3) (եթե) թաքցնե[ս]: Եվ նույն[իսկ ....
4) Դու չ[...........

5) չ[.........

ՀԿ IV

1) [.......
2) [.................. ես ....]-եցի: ....
3) [............... ես պայմանագիր] կազմեց[ի: ....]
4) [............... Եվ ահ]ա այ[ս բանի համար]
5) [1000 աստվածների խորհրդի] կանչեց[ինք]:

---

6) [Երկնային Արևի աստվածը, Ա]րինննայի [Արևի աստվածը, Խաթթիի Ամպրոպի աստվածը],
7) [Հալեպի Ամպրոպի աստվածը, Ց]իպպալ[անդայի Ամպրոպի աստվածը, ...?],
8) [...............-ի Ամպրոպի աստվածը], Պիտտ[իյարիգայի] Ամպրոպի աստվածը, [Սամուխայի Ամպրոպի աստվածը],
9) [................-ի Ամպրոպի աստվածը], Սապ[ինուվայի Ամպրոպի աստվածը, [............-ի Ամպրոպի աստվածը],
10) [...............-ի Ամպրոպի աստվածը], Լիխցինայի [Ամպրոպի աստվածը, ...-ի Ամպրոպի աստվածը]:

---

11) [Հովանավոր աստվածը, Խաթթիի հովանավոր աստվածը], Կարահ[նայի հովան]ավոր աստվածը [...........-ի հովանավոր աստվածը],
12) [......................], Էա աստվածը, [Դամկ]ին[ա] աստվածը,
13) [Իսխարան՝ թագուհին, երդմ]ան [աստվածուհին], Յ[ա]րրին,
14) [Ցապպանա աստվածը?], Ասկասեպան՝ [թագ]ուհին? .....
15) [........................], Տել[իպ]ինուս աստվածը,
16) [Պիրվա աստվածը?, Լուսնի աստվածը?]՝ պայմանագր[ի տերը], Իշտարը,
17) [.......................], Նինգալ աստվածուհին, լ[ուլախխի]ների աստվածները,
18) [խաբիր]ուների [աստվածները], Լել[վանի] աստվածուհին, անդրաշխարհի Արևի աստվածուհին,
19) [Անկուվայի] Կատախխա աստվածը, [Կատ]ապպայի «թագուհին»,
20) [Սամու]խայի Աբարա աստվածը, [Խուրմ]այի Խանտիտա[սսու] աստվածը,
21) [Տախուր]պայի Ամմամմա աստվածը, [Դուննայի Խալլարա]ս աստվածը,
22) [Խուպ]իսնայի Խուվասսանն[ա] աստվածը, Ս/Տամնիվա [քաղաքի.....աստվածը]

---

23) [արա]կան սեռի [աստվածները], իգական սեռի աստվածները, ողջ [Խաթթի] երկրի,
24) [ամբ]ողջ երկինքը, անդրաշխարհը, լեռները, [գետ]երը, աղբյուրները,
25) ողջ ^{d}KASKAL.KUR^{MES}-ը, մեծ ծ[ո]վը:

---

26) Հայասայի U.GUR [աստվածը], Պատտեու(-)[.....] քաղաքի Իշտար աստվածուհին,
27) գրված չէ
28) Լախիրխիլա քաղաքի [...–ս/]տաննուս [աստվածը], [.... քաղաքի] Յազզա(-) [......] աստվածը,
29) Արնիյա քաղաքի [Ամպրոպի աստվածը], Կամ?-[..........-ա]ն?-ցե?-ն[ա] քաղաքի Տարումուս աստվածը,
30) Պախխուտեյա քաղաքի [Ամպրոպի աստվածը], Տերիտտիտտունի[ս] աստվածը
31) Տամատաա քաղաքի, Գազու[?] քաղաքի Ունազաստաս աստվածը,
32) Արխիտա քաղաքի taksannaš Ամպրոպի աստվածը, Բալտայք աստվածը
33) Դուզզամանա քաղաքի, Պարրայա քաղաքի Ունազաստաս աստվածը,
34) Գասմիյախա քաղաքի [...ր]ա?խուխուս աստվածը,
Սիլ[ի?-x]-լ[ի? աստվածը .... քաղաքի]:

* * *

Խեթական այլ տեքստերում ևս վկայված են հայասական աստվածների անուններ՝ ^{d}U.GUR ^{URU}Hayasa «Հայասայի U.GUR աստվածը», ^{d}U ^{URU}Hayaša «Հայասայի Ամպրոպի աստվածը», ^{d}U ^{URU}Azzi «Ազզիի Ամպրոպի աստվածը»: Այս դիցանունների անունները պարունակող տեքստերի հրատարակությունը կիրականացվի առաջիկայում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Laroche, 1971, N.43.1: Է.Ֆոռերի կարծիքով այս տեքստը պատկանում էր Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի միջև կնքված պայմանագրին (Forrer, 1931, S.6f.: Götze, 1957, S.135 Anm.12; նաև Хачатрян, 1971, с.148): Գր.Ղափանցյանը առաջարկում էր այն դիտել որպես Թուդխալիյաս III-ի և Հայասայի արքա Կարաննիսի պայմանագրի մասը (Капанцян, 1948, с.88): Վերջին շրջանում Օ.Կարրուբան փաստարկներ բերեց հօգուտ Մուրսիլիս II-ի շրջանի, գտնելով, որ սա Հայասայի արքա Աննիյասի հետ կնքված և առայժմ ընդամենը երեք փոքր բեկորներով ներկայացված պայմանագրի մասն է (Carruba, 1988, S.69ff.): Որ այս բեկորը չէր կարող պատկանել Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրին, կասկածից վեր է, քանի որ խեթական աստվածների

ցուցակը զգալի տարբերություններ է դրսևորում վերոհիշյալ պայմանագրի համապատասխան ցուցակի նկատմամբ:

2. Forrer. 1931, S.6f. (գիտական տառադարձմամբ և մեկնաբանությամբ); Капанцян, 1948, с.89слл.; Манандян, 1956, с.102; Джаукян, 1964, с.47слл.; 1987, էջ.327-330; Хачатрян, 1971, с.148 (գիտ. տառադ.); Haas. 1985. S.24 (գիտ. տառադ.); Вардумян,1991, с.66слл.; Պետրոսյան. 2004/2. էջ.222-224 և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

Հմայակյան Ս.Գ.

1990 – Վանի թագավորության պետական կրոնը, Եր.

Ջահուկյան Գ.Բ. **(Джаукян Г.Б.)**

1964 - Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ер.

1987 - Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Եր.

Քոսյան Ա.

2004 – Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Եր.

Арутюнян Н.В.

2001 — Корпус урартских клинообразных надписей, Ер.

Вардумян Г.

1991 — Дохристианские культы армян. — В сб.: "Армянская этнография и фольклор" 18, с.61-146.

Гиндин Л.А.

1967 — Язык древнейшего населения юга Балканского полуострова, М.

Капанцян Гр.

1940 – Ուրարտուի պատմությունը (ԵՊՀ, գիտական աշխատություններ, հատ.XIV), Եր.

1948 - Хайаса-колыбель армян, Ер.

Манандян Я.

1956 - О некоторых спорных проблемах истории древней Армении, Ер. (= Я.Манандян, "Труды" т.5, Ер., сс.437-614)(վերջինս՝ անվանացանկերով).

Петросян А.

2002 — Армянский эпос и мифология, Ер.

2004 – Հայկական դիցարանի հնագույն ակունքները, «Պատմա-բանասիրական հանդես», 2004/2, էջ.205-233.

Хачатрян В.Н.

1971 - Восточные провинции Хеттской империи, Ер.

1998 - Հայաստանը մ.թ.ա.XV-VII դարերում, Եր.

Шеворошкин В.

1962 - Карийский вопрос, "Вопросы языкознания", 1962/5.

Beckman G.

1996 - Hittite Diplomatic Texts, Atlanta.

Carruba O.

1969 - Die Chronologie der hethitischen Texte und die Geschichte der Grossreichszeit, „ZDMG“ Suppl.1, Wiesbaden, S.226-249.
1988 - Die Hajasa-Verträge Hattis. - In: „Documenta Asiae Minoris (Fs.H.Otten)“, S.59-75.
Chicago Assyrian Dictionary, Chicago, 1956.
Forrer E.
1931 - Hajasa-Azzi, „Caucasica“ IX, S.1-24.
Friedrich J.
1930-31 – Staatsverträge der Hatti-Reiches in hethitischen Sprache, Leipzig, Bd.1-2.
1954 - Hethitisches Wörterbuch, Lief.4, Heidelberg.
Götze A.
1957 – Kleinasien, München.
Haas V.
1985 - Die ältesten Nachrichten zur Geschichte des armenischen Hochlands. – In: XENIA. "Das Reich Urartu“ (Hrsg. V.Haas), Konstanz, S.21-30.
Kalaç M.
1965 – Das Pantheon der hieroglyphenluwischen-Inschriften, „Orientalia“, vol.34, fasc.4. S.401-427.
Laroche E.
1971 - Catalogue des textes hittites, Paris.
Meriggi P.
1962 – Hieroglyphisch-hethitisches Glossar, Wiesbaden.
Otten H.
1988 - Die Bronzetafcl aus Boğazköy. Ein Staatsvertrag Tuthalijaš IV, Wiesbaden (= "StBoT", Beih.1).
Rüster Chr. – Neu E.
1989 - Hethitisches Zeichenlexikon, Wiesbaden (= „StBoT“ Beih.2).
Weidner E.
1923 – Politische Dokumente aus Kleinasien, Leipzig.
Yoshida D.
1996 – Untersuchungen zu den Sonnengottheiten bei den Hethitern, Heidelberg (= TdH 22).

ARAM KOSYAN

THE GODS OF HAYASA (KUB XXVI 39)

The article offers complete edition of the Hittite cuneiform text KUB XXVI 39 which belongs to a certain Hittite-Hayasaean treaty. This fragment contains the list of the divine-witnesses to that treaty. The lines 26-34 are of extreme importance for the Armenology since here are listed the gods of Hayasa. For some of the toponyms attached to these gods alternative treatments are offered by the author.

МАКСИМ ХАМОЯН

К РАЗРАБОТКЕ ОСНОВ СИНТАКСИСА КУРДСКОГО ЯЗЫКА

Грамматический строй курдского языка в разных диалектных проявлениях сравнительно лучше исследован в части морфологии[1]. Другая же часть — синтаксис до сих пор не был предметом специального исследования и остается наименее разработанной областью, не имеющей должного освещения в научной и учебной литературе.

Работы по синтаксису курдского языка, опубликованные на разных языках, являются небольшими разделами в составе одних книг по грамматике, учебных пособий и диалектологических описаний[2] и в целом носят эскизный, отчасти фрагментарный характер. Имеются также отдельные статьи, содержащие освещение так называемой субъектной и объектной конструкции спряжения переходного глагола[3] и две кандидатские диссертации, одна из которых представляет описание определения и способов выражения определительных отношений в сорани, другая посвящена описанию сложноподчиненного предложения с придаточным определительным в центральных диалектах курдского языка[4].

Характерной особенностью всех этих работ является отсутствие в них разработки основных понятий синтаксиса курдского языка. Они опираются на широко известные в практике синтаксической науки взгляды, основанные на материале других языков. В то же время результаты исследования курдского языкового материала убеждают в том, что эти взгляды, составляющие стержень сегодняшней синтаксической науки, не могут быть применены к курдскому синтаксису. И причина этому заключается не в национальной специфике исследуемого материала, а в том, что разные методики выделения и анализа синтаксических единиц, представленные в существующих концепциях построены на явном несоблюдении соизмеримости исследовательского направления с задачей исследова-

ния. В то время как вопрос "Что такое синтаксическая единица (словосочетание, предложение)?" требует ответа — научного определения, основанного на характеристике этой единицы в целом, придаваемые ей определения не касаются этого аспекта. Они построены на одном или нескольких частных признаках и носят частный характер. Будучи определениями частными, они являются определениями неполноценными, в реальности отвечающими на вопрос "какой является синтаксическая единица в том или ином частном отношении?". Примерами таких определений являются, в частности, характеристики, придаваемые языковедами словосочетанию и предложению: "Словосочетание — это грамматическое и смысловое объединение на основе подчинительной непредикативной связи знаменательных слов, между которыми имеются атрибутивные, объектные или обстоятельственные синтаксические отношения"[5], "Значение словосочетания — это то отношение между его компонентами, которое лежит в основе его образования"[6]; "Предложение — это наименьшая коммуникативная единица языка"[7]; "Предложение — это грамматически оформленная по законам данного языка целостная единица речи, являющаяся главным средством формирования, выражения и сообщения мысли"[8]; "Основными признаками предложения являются смысловая завершенность, интонационная оформленность и предикативность"[9] и т.д.

Из этих определений видно, что синтаксическая наука продолжает строить дефиниции, предварительно не выяснив характер основы дефиниции, метод и аспект исследования, объективно ведущих к ее выявлению. Типичными недостатками в создании определений в плане методологическом являются, например, ограниченность узкими рамками традиционно выделяемых трех аспектов исследования синтаксического материала — структурного, семантического и функционального, неспособных привести к раскрытию основы определения синтаксических единиц и определения их места в системе; несоблюдение соизмеримости исследовательского направления с задачей исследования, заключающейся в выборе аспекта исследования, несоответствующего задаче научного определения синтаксических единиц; ограниченность представлением лишь их формальной организации и т.д. Все это, несомненно, свидетельствует о явном неудовлетворительном уровне развития синтаксической науки, что не может и не могло не оказывать влияние на всю систему взглядов на проблематику синтаксиса, не препятствовать познанию ряда явлений, знание которых имеет исключительно важное значение для осмысления сущности синтаксиса как особой материальной области языка. К таким явлениям можно отнести, например, образование словосочетаний и предложений по особым структурно-семантичес-

ким моделям, система стурктурно-семантических типов предложений и словосочетаний, классификационная схема которых является объективной основой для построения теории синтаксиса; присущая только синтаксической семантеме предложения особая форма отражения действительности и т.д. В зависимости от всего этого синтаксическая наука, созданная трудом многочисленных поколений исследователей, при всей ее исключительной важности в начатии и стимулировании изучения синтаксического материала многих языков, подлежит строгому пересмотру и, в первую очередь, в отношении своих главных, исходных положений, касающихся объекта и объема синтаксиса, методов исследования, референтов и модели образования синтаксических единиц и т.д.

Учитывая ограниченность объема настоящей работы, мы будем акцентировать внимание на кардинальных вопросах курдского синтаксиса, каковыми являются объект и объем синтаксиса как особой области науки, методы исследования, лингвистическое назначение и модели образования речевых и языковых единиц, составляющих синтаксический строй языка. Разработка этих вопросов опирается на оригинальных, впервые вводимых автором принципах трактовки языкового материала, которые в общих чертах находят свое выражение в следующих отправных положениях:

I. Разработка основ синтаксиса курдского языка, являющаяся первоочередной задачей синтаксической проблематики курдского языкознания, должна осуществиться исключительно на курдском языковом материале в неразрывной связи с опытом и достижениями общей синтаксической теории. На пути построения теории синтаксиса курдского языка решение этой задачи станет отправной ступенью, определяющей собой создание необходимых предпосылок для конструктивного подхода к синтаксическому строю языка, выработки правомерной установки на его осмысление, исследование и освоение.

II. Единственно объективным методом исследования языковых образований, который соизмерим с целью их научного определения, является условно названный автором социолингвистический анализ[10], суть которого заключается в рассмотрении языковых образований в их связях с потребностью, из которой они возникают, то есть в плане их причинно-следственных отношений, при котором они подлежат исследованию в своей целости.

Этот аспект исследования является особым, глобальным, единственно в своем роде всеохватывающим аспектом, не находящимся на одном уровне с различными частными аспектами. Исследование языковых образований в этом аспекте позволяет выявить их особое, глобальное свойство, а именно свойство удовлетворения по-

родившей их потребности, условно обозначаемое автором термином "лингвистическое назначение". Впредь будем пользоваться этим термином.

Лингвистическое назначение языкового образования содержит указание на своеобразную общую закономерность: то, что возникает из потребности, обладает свойством ее удовлетворения. Оно не находится на одном уровне с остальными свойствами языкового образования, являющимися свойствами частными. Оно доминирует над частными свойствами, синтезирует их и поглощая их, представляет исчерпывающую информацию о языковом образовании. Тем самым оно выступает свойством, имеющим в качестве своего формального показателя комплексную организацию языкового образования в целом. В сущности языковое образование есть не что иное, как воплощение этого своего свойства, которое и является объективной основой его научной дефиниции.

Лингвистическое назначение языкового образования является единством его социальной и лингвистической сущностей: социальной цели и определяющегося этой целью ее лингвистического устройства, обладающего следующими тремя типами особенностей: а) всеобщих, присущих всем языковым образованиям; б) общих, свойственных только определенному кругу языковых образований; в) индивидуальных, присущих только данному конкретному языковому образованию. Эти три типа особенностей вместе с целью, которой служит языковое образование, раскрываются в результате анализа его в его связях с породившей его потребностью. Они позволяют ответить на три разных вопроса, касающиеся природы синтаксической единицы: из чего она состоит (характер материала), что она отражает (характер действительности (референты) и как она отражает (специфика отражения), и, в зависимости от этого каков характер ее организации. Однако прежде чем ответить на эти вопросы, необходимо выделить следующие два значения термина "лингвистическое назначение": а) лингвистическое назначение как совокупность всех частных признаков вместе с целью, которой служит языковое образование в системе; б) лингвистическое назначение как анализ по назначению, метод, прием установления последнего. Этот метод имеет то преимущество перед существующими в лингвистике методами определения внутренних границ языка и, в частности, различными методами определения объекта синтаксиса, что приводит к выявлению одного, единого, объективного критерия разграничения различных типов языковых образований — специфики их назначения: различные типы проявления языковой материи на наиболее общем уровне членения языковой системы отграничены друг от друга спецификой своего назначения, соответствующей характеру различ-

ных типов потребностей, из которых они образуются. Этот критерий, лежащий в основе дифференциации различных типов языковых образований, вместе с тем служит и верным критерием их интеграции. На это указывают данные, содержащиеся в ответах на вышеуказанные вопросы:

1. Все типы проявления языковой материи — языковые образования, называемыми словами, фразеологизмами, паремиологизмами, словосочетаниями и предложениями, состоят из языковой материи. Это общая для них особенность. Отличия же между ними заключаются в том, что они являются разными проявлениями языковой материи, образующимися из разных социальных потребностей и обладающими соответствующими разными свойствами удовлетворения этих потребностей.

2. Все типы проявления языковой материи отражают действительность. Это общая для них черта. Отличия же между ними заключаются в том, что они, будучи разными типами проявления языковой материи, представляют отражаемую действительность в ее разных проявлениях или, иначе говоря, выступают представителями разных проявлений этой действительности.

3. Все типы проявления языковой материи отражают действительность. Это общая их черта. Отличия же между ними заключаются в специфике отражения, в том, что они по-разному отражают действительность, выступают носителями разных по форме, объему и составу единиц мысли идеального содержания.

Разграничение и отграничение типов проявления языковой материи друг от друга по специфике их лингвистического назначения, служащей объективной основой их дифиниции, является первым и принципиально важным шагом на пути познания языка и его автономных материальных областей. Тем не менее специфика назначения не содержит указания на взаимоотношения типов проявления языковой материи, освещение которых необходимо для создания объективной картины языковой системы и установления в ней места материальных подсистем, входящих в компетенцию соответствующих разделов науки о языке. Этот факт обусловливает необходимость рассмотрения языковой материи в особом аспекте, а именно в аспекте ее проявления[11], которым обеспечивается возможность освещения взаимоотношений типов проявления языковой материи в статике и динамике и тем самым установления объективных границ внутри языка, в том числе и границ синтаксиса в нем.

III. Материальный мир, отражаемый языковой материей, существует в своих конкретных проявлениях, которые, в свою очередь, функционируют в своих проявлениях, требующих своего адекватного языкового представления через соответствующие конкрет-

ные проявления языковой материи. Это обусловило потребность в проявлении языковой материи, формировании механизма проявления и микромеханизмов образования проявлений. Так, такие типы проявления языковой материи, каковыми являются языковые и речевые единицы разных систем строения — слова, фразеологизмы, паремиологизмы, словосочетания и предложения, будучи прямыми (первычными), исходными, опорными проявлениями языковой материи, в свою очередь, имеют свои различные проявления, из которых очень важными для нас являются прежде всего те, которые образуются из потребности в реализации в языкотворческих и речетворческих целях путем их стадиального самоопределения, направленного на их приспособление к нормам и правилам построения связной речи. В частности, в плане разработки основ синтаксиса курдского языка важным представляется выделение и освещение следующих трех типов исходных, опорных проявлений языковой материи, т.е. слов, фразеологизмов, паремиологизмов, словосочетаний, предложений и текста:

а) опорное, исходное проявление, характеризующее их как виртуальные знаки;

б) морфологическое проявление, отражающее их морфологическую организацию;

в) синтаксическое проявление, характеризующее их синтаксический строй.

Заметим, что кроме этих трех типов проявлений предложение и паремиологизм имеют и свои контекстуальные проявления, отражающие их контекстуальные особенности. А текст как особый тип проявления языковой материи не самоопределяется, поскольку не нуждается в приспособлении к чему-нибудь.

Типы проявления языковой материи, за исключением текста, как правило, входят в связь друг с другом только после обязательного прохождения процедуры морфологического самоопределения в своих синтаксических проявлениях (а в случае предложения и паремиологизма — и в контекстуальных), основанных на их синтактико-сочетательных, дистрибутивных отношениях.

IV. Исходные, опорные типы проявления языковой материи — слова, фразеологизмы паремиологизмы, словосочетания и предложения находятся между собой в преемственно-эволюционных отношениях, сущность которых заключается в том, что в стадиальной классификации типов проявления языковой материи каждое предыдущее проявление полностью или в основном материальном составе выступает означающим последующего проявления и реализуется в нем в виде особого метасемиотического образования, выражение и содержание которого служат вместе, совокупно выражением нового

метасодержания. Тем самым каждый последующий тип проявления языковой материи в плане материальном оказывается проявлением предыдущего, образуясь по модели "предыдущее проявление (план выражения) + новое метосодержание (план содержания)", отражающей и акцентирующей общую закономерность: все новое возникает в форме и подобии старого, предыдущего.

В преемственно-эволюционных отношениях находятся и сами проявления каждого типа проявления языковой материи, в чем убеждаемся ниже, в частности, при описании микросистемы проявлений слова.

V. В системе проявлений языковой материи каждое проявление в стадиальной последовательности проявлений выступает автономным образованием с присущей ему спецификой назначения, представляющим совокупность однотипных единиц, образующих отдельную, самостоятельную материальную область. Это позволяет установить объективную дифференциацию проявлений языковой материи и проявлений самых этих проявлений, подлежащих рассмотрению в качестве объектов соответствующих лингвистических дисциплин:

а) Текст как особое проявление языковой материи является предметом изучения в текстологии;

б) Паремиологизмы и предложения в своих контекстологических проявлениях служат предметом изучения контекстологии;

в) Фразеологизмы языка в своем номинативно-характеризующем — виртуальном проявлении являются объектом исследования фразеологии;

Ինչպես հստակ երևում է, բերված օրինակներում տիտղոսաշարին նախորդող nunabe անանցողական և šidištuni, zaduni, aguni, kuguni, kuṭuni անցողական բայերը օրինաչափորեն արտահայտված են անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի III դեմքով: Ի դեպ ցիտված տեքստերը ամենևին կասկած չեն հարուցում, որ նրանց հաջորդող տիտղոսաշարը ևս հանդես է գալիս III դեմքով: Մի խոսքով, ուրարտական տիտղոսաշարը արձանագրություններում երբեք չի ներկայացվում անձամբ արքաների անունից՝ iese «ես» անձնական դերանունով և բայի I դեմքով: Հետևաբար, Խր. Գիրբալի և նրա համախոհների առաջարկած anaku «ես» եզակի թվի I դեմքի անձնական դերանունը ամենևին չի ներդաշնակում III դեմքով արտահայտված տիտղոսաշարին:

Նույնը պետք է ասել մեզ հետաքրքրող վերոհիշյալ istedi բառը պարունակող տեքստերի և նրանց հաջորդող արքայական տիտղոսաշարի մասին, որոնցից 7-րդ օրինակում տիտղոսաշարին նախորդող տեքստը ևս պարունակում է անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի 3-րդ դեմքի kuguni բայը: Իսկ եթե տիտղոսաշարը ներկայացվում է ոչ թե անձամբ թագավորի, այլ, թերևս, ուրարտական գրագրի կողմից, ապա Թոփրակքալայի երկլեզվյան արձանագրության ոչ ասորեստանյան տեքստի եզակի թվի I դեմքի anaku «ես» անձնական դերանունը հնարավոր է վերագրել III դեմքով արտահայտված արքայական տիտղոսաշարին, ոչ էլ ուրարտական զուգահեռ տեքստի istedi-ն, որը անհարկի վերջերս հարմարեցվում է anaku-ին:

Մյուս կողմից, մի՞թե հինարևելյան այլ երկրների արքաների տիտղոսաշարերը ևս արձանագրություններում ներկայացված են հենց իրենց՝ թագավորների անունից I դեմքով, ինչպես հանիրավի վերագրում է դա ուրարտական արքաներին Խր. Գիրբալը: Լիարժեք պատկերացում կազմելու համար բերենք, թերևս, հատվածաբար որոշ օրինակներ հարևան Ասորեստանի արքաների տիտղոսաշարերից:

1. Ադադներարի I - Ադադներարին՝ պայծառ իշխանը, հերոսը, աստվածների փոխանորդը, քաղաքների հիմնողը, բնաջնջողը հզոր ցեղերի՝ կասսիտների, կուտիների, լուլուբեյների, շուբարեյցիների..., ոտ-

նատակ տվողը երկրների՝ Լուբդուից և Ռապիկուից մինչև Էլուխատ... (АВИИУ, 1).

2. Թուկուլտի-Նինուրտա I - Թուկուլտի-Նինուրտան արքա է տիեզերքի. արքա Ասորեստանի, արքա աշխարհի չորս կողմերի. տեր բոլոր ժողովուրդների, արքա ուժեղ. արքա Կարդունիաշի. արքա Շումերի և Ակկադի, արքա Վերին և Ներքին ծովերի, արքա լեռների և լայնատարած տափաստանների, արքա շուբարեյցիների, կուտիների և Նաիրի երկրների... (АВИИУ, 3, հմմտ. АВИИУ, 5, 7).
3. Թիգլաթպալասար I – Թուկուլտի-ապալ-Էշարրան այր է խիզախ, բացողը լեռնային ուղիների, տապալողը անհնազանդների. ցած գլորողը բոլոր պարծենկոտների... (АВИИУ, 10, II, 85).

Մի խոսքով, ինչպես դա հստակ երևում է ցիտված տեքստերից. ասորեստանյան արձանագրություններում ևս արքայական տիտղոսաշարը սովորաբար արտահայտվում է կամ III դեմքով, կամ էլ, թերևս, անդեմ, սակայն բոլոր դեպքերում բնավ ոչ I դեմքով, ինչպես Թոփուզավայի երկլեզվյան արձանագրության ասորեստանյան տեքստում I դեմքի anakuես անձնական դերանունը Խր. Գիրքայը բոնազբոսիկ կցում է արքայական տիտղոսաշարին և ուրարտական զուգահեռ տեքստի ištedi-ն արհեստականորեն նույնացնելով նրա հետ՝ շինծու տպավորություն թողնում, թե իբր ուրարտական արքան ինքն է անհամեստաբար պարուրել իր տիտղոսաշարը:

Այլս կողմից, ըստ ամենայնի ակներև է, որ ուրարտական թագավորների տիտղոսաշարերում, ինչպես հայտնի է վերոհիշյալ փաստերից. նախադասության ենթական արտահայտվում է բացարձակ հոլովով, իսկ ստորոգյալը սովորաբար տրվում, սակայն գիտակցվում է: Ընդ որում բացարձակ հոլովի ենթակայով մյուս իդենտիկ նախադասություններում ստորոգյալը, որպես կանոն, արտահայտվում է անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի 3-րդ դեմքով. օրինակ՝ ^{m}Menuani ^{m}Išpuiniḫe iu ^{LU}ateini esi naḫabe ^{KUR}Šatiruni durbae manu... (КУКН, 148, տողեր 6-8). ...uštabe ^{m}Menuani ^{m}Išpuiniḫe (КУКН, 148, տող 13), ...ulustabe ^{d}Ḫaldini (КУКН, 148, տող 23), ... ustabi ^{m}Argištini ^{m}Menuaḫi ^{d}Ḫaldini uluštabi (КУКН, 174A2, տողեր 8-9), ...ustabi ^{md}Sardurini ^{m}Argištieḫi (КУКН, 241E, տողեր 39-40. 244, տող 5) և այլն:

Բերված իդենտիկ փաստերը վկայում են, որ բացարձակ հոլովի ենթակայով ուրարտական տիտղոսաշարերում տրված ստորոգյալները նույնպես ենթադրվում են հենց 3-րդ դեմքով: Հետևաբար, այս փաստերը հաստատում են, որ Թոփուզավայի երկլեզվյան արձանագրության I դեմքի անձնական դերանունը առնչվում է ոչ թե տեքստի շարունակության 3-րդ դեմքով արտահայտված արքայական տիտղոսաշարի, այլ I դեմքի անձնական դերանվանը նախորդող erebu «մտա» բայի հետ:

Այնուհետև, հանրահայտ է, որ ոչ ասորեստանյան թագավորների տիտղոսաշարերն են սկսվում I դեմքի anaku-ես անձնական դերանվամբ, ոչ էլ ուրարտական արքաների տիտղոսաշարերը՝ ieše-ես I դեմքի անձնական դերանվամբ: Ուստի, ըստ ամենայնի մտացածին է ինչպես Թոփուզավայի ուրարտա-ասորեստանյան երկլեզվյան արձանագրության ասորեստանյան տեքստի anaku-ի վերագրումը տիտղոսաշարին, այնպես էլ նրա նույնացումը ուրարտական տեքստերի ištedi-ի հետ:

Եվ, այսպես, վերոհիշյալ շարադրանքից ակներև է, որ առաջարկված համադրություններից ոչ erebu-ištedi-ն է արդարացնում իրեն տեքստում, ոչ էլ anaku-istedi-ն: Այդ դեպքում, ի վերջո, անդրադառնանք ištedi-ištini համադրությանը ևս, որը, ինչպես այդ մասին նշվեց վերևում, առաջնություն տալով հանդերձ «շտապ», «հապճեպ» թարգմանությանը, այնուամենայնիվ, մասնագիտական գրականության մեջ խիստ թեականորեն ակնարկել է Ֆ.Վ. Քյոնիգը և այս կամ այն աստիճանի վստահությամբ հիմնավորել սույն տողերիս հեղինակը:

Ի դեպ, ի տարբերություն ištedi-erebu և istedi-anaku պատահական և չհիմնավորված համադրությունների, ištedi-ištini մեկնաբանությունը առաջին հերթին շահեկան է հենց նրանով, որ ունի ըստ ամենայնի ակնառու ստուգաբանական հիմք, քանի որ նրանք երկուսն էլ ծագում են միևնույն išt- արմատից: Այնուհետև հատկանշական է, որ ištedi բառի iš-te-di, iš-ti-di և iš-ti-e-di տարբերակները, մանավանդ նրանցից վերջինը, ակամայից հղում են այն մտքին, որ այդ բառը, ամենայն հավանականությամբ, արտահայտված է ուղղորական -di, -idi, edi հոլովածևով: Այդ դեպքում նրա բացարձակ հոլովը բնականաբար պետք է լինի ištini-ն, որը ուրարտական սեպագրում հիշատակվում է բավական հաճախ, ժամանակին իրավամբ համադրվել է գրաբարյան «աստ»-ի հետ և նշանակում է «այստեղ»[15]: Ճիշտ է, տվյալ դեպքում տեղի է ունենում բացարձակ հոլովի -ni վերջավորության կորուստ (հմմտ. ^{KUR}ebani և ^{KUR}ebani-edi), սակայն նմանօրինակ տարբերակ ուղղորական հոլովածևի շատ ավելի հաճախ հանդիպում է այլ դեպքերում՝ ^{d}Haldini և ^{d}Haldi-edi, ^{KUR}Manani և ^{KUR}Mana-idi, ^{KUR}Buštuni և ^{KUR}Buštu-edi: Ելնելով ասվածից, ištedi բառին մենք տալիս ենք «դեպի այստեղ», «այս կողմը»[16] թարգմանությունը: Ի դեպ հատկանշական է, որ ուղղորական -(e)di հոլովածևը ֆունկցիոնալ նշանակությամբ ուրարտերենում հաճախ համընկնում է տրական -e հոլովածևին: Հմմտ. ^{d}Haldi-edi EN-di և ^{d}Haldie euri-e: Եվ, վերջապես, ըստ ամենայնի ակներև է, որ istini բառից են փաստորեն սերում ոչ միայն խնդրո առարկա եզակի ուղղորական հոլովածևի ištiedi-ն, այլև եզակի բացառականի ištinini-ն և հոգնակի տեղական հոլովի istiniaşi-ն:

Վերը թվարկված ištiedi-ištedi-ištidi-ն թվով 8 տեքստերից առաջինում (ištiedi ... ^{KUR}Mana-idi), երկրորդում (ištedi ... ^{KUR}Puluadi-edi), երրորդ-

դում (ištedi ... ^{KUR}ebani-edi) տպավորություն է թողնում, թե ištidi-istedi-ištiedi ուղևորական հոլովաձևը բոլոր դեպքերում կարծես ներդաշնակում է ^{KUR}Manaidi, ^{KUR}Puluadiedi և ^{KUR}ebaniedi միևնույն հոլովաձևերին: Այդ տեսակետից մենք հակված ենք մտորելու, որ հիշատակված 4-րդ օրինակում ևս (istidi ulhudi) երևի istedi-ի հետ ներդաշնակված է նաև ulhudi ուղևորական հոլովաձևը: Ի դեպ, ulhudi-ի մեջ բայ տեսնելու ձգտումը, ո-րը ժամանակին փորձել են Գ.Ա. Մելիքիշվիլին և Ֆ.Վ. Քյոնիգը[17], քերականորեն ամենևին արդարացված չէ: Մյուս կողմից, տվյալ նախադասության ստորոգյալը (բայը), ակներևաբար, qabqarulini-ն է:

Այնուհետև Թոփուզավայի արձանագրության խնդրո առարկա իդենտիկ տեքստերի թարգմանության մեջ, չգիտես ինչու, իսպառ անտեսված է ašdubi բայի առկայությունը ուրարտական հատվածում: Ուստի ռազմական արշավանքից հետո ուրարտական թագավորի մուտքը Բիայնիլի փաստորեն սովորաբար մատուցվել է սոսկ ana KUR-ia erubu anaku «երկիրն-իմ մտա ես» ասորեստանյան տեքստի հիման վրա, քանի որ erubu-ի համադրումը ուրարտական istedi-ի հետ ոչնչով հիմնավորված չէ: Դեռ ավելին, եթե նախադասության ստորոգյալի կարծեցյալ բացակայությունը ուրարտական տեքստում ձգվել է թերևս մասամբ փոխհատուցել ոչ բայական ձևավորում ունեցող ուրարտական istedi-ի ենթադրական համադրությամբ ասորեստանյան erubu-ի հետ, ապա Խր. Գիբբալին այդ բացը ընդհանրապես չի անհանգստացրել, քանի որ ուրարտական միևնույն ištedi-ն այս անգամ նա անհաջող փորձել է համադրել ասորեստանյան erubu-ին առնչվող anaku-ի հետ:

Ի դեպ այժմ կրկին անդրադառնալով Թոփուզավայի երկլեզվյան արձանագրության մեզ հետաքրքրող ուրարտական հատվածի asdubi բային, հատկանշական է, որ չնայած ուրարտական արձանագրություններում վաղուց ի վեր հիշատակվում է այն ašduni, asduli(e), ինչպես նաև ašdu պակասավոր, տարընթերցումներով, այնուամենայնիվ առայժմ մասնագիտական գրականության մեջ չունի վերջնական համոզիչ մեկնաբանություն: Մի դեպքում նրա տակ ենթադրվել է «կատարել», «կարգավորել», «հետևել»[18] իմաստները, իսկ մյուս դեպքում Խորխորյան տարեգրության asdu պակասավոր տարբերակը նույնիսկ չի դիտարկվել որպես բայ, ուստի ենթադրաբար թարգմանվել է մերթ «նման»[19], մերթ էլ «շնորհիվ»[20]:

Սակայն հարցի համակողմանի քննարկումը վկայում է, որ Թոփուզավայի երկլեզվյան արձանագրության ասորեստանյան տեքստի erubu anaku-ի տակ, ակներևաբար, պետք է տեսնել հենց ուրարտական իդենտիկ հատվածի ašdubi բայի համապատասխանությունը՝ «մտնել», «ներխուժել» իմաստներով: Ըստ որում կարծում ենք, որ դրա ըստ ամենայնի համոզիչ ապացույցը հանդիսանում են Խորխորյան տարեգրութ-

յան երկու իդենտիկ հատվածները՝ այդ բայի ašdu պակասավոր տարբերակներով: Ուստի ստորև մատուցում ենք Թովուզավայի արձանագրության ուրարտական և Խորխորյան տարեգրության իդենտիկ հատվածները.

1) ...a-ru-u-[bi $^{\text{LÚ}}$ÙKU$^{\text{MEŠ}}$] $^{\text{URU}}$Ar-di-ni-ni a-su-ni áš-du-[bi UD]$^{\text{ME}}$ KUR-ni-[ú-ki]... (КУКН, 387, ուրարտ. տեքստ, տողեր 22-24):

... Կատարեցի ժողովրդի (համար) Արդինի քաղաքի տոնախմբություն, մտա (այդ) օրը երկիրն-իմ...

2) $^{\text{m}}$Ar-[g]i-iš-ti-i-še $^{\text{m}}$Me-nu-a-hi-ni-še a-li-e $^{\text{[KUR]}}$Aš-[šur $^{\text{LÚ}}$A.]SI$^{\text{MEŠ}}$-şi-e $^{\text{KUR}}$e-ba-ni-[u]-ki áš-du (КУКН, 173, II, տողեր 55-57, III, տող 1):

Արգիշտին, Մենուայի որդին, ասում է. Ասորեստանի զորքը երկիրն-իմ ներխուժեց:

3) $^{\text{m}}$Ar-[gi]-iš-ti-še a-li-e É.GAL$^{\text{MEŠ}}$ ši-du-ú-li... $^{\text{KUR}}$Aš-šur $^{\text{LÚ}}$hu-ra-di-i-e $^{\text{KUR}}$e-[ba]-ni-ú-ki ás-du... (КУКН, 173, III, տողեր 23-25):

Արգիշտին ասում է. ամրոցներ կառուցեցի ... Ասորեստանի զորքը երկիրն-իմ ներխուժեց:

Ինչպես հստակ երևում է, այստեղ Թովուզավայի երկլեզվյան արձանագրության ուրարտական տարբերակի KUR-ni-[e-di] նախկին մասնակի անհաջող վերականգնումը Խորխորյան տարեգրության իդենտիկ տեքստերի հիման վրա մենք ճշգրտել ենք KUR-ni-[ú-ki] ձևով: Դա ըստ ամենայնի ներդաշնակում է նաև Թովուզավայի արձանագրության ասորեստանյան իդենտիկ հատվածի KUR-ia ընթերցմանը: Այնուհետև, Խորխորյան տարեգրության ցիտված հատվածներում ասորեստանյան զորքը մի դեպքում արտահայտված է գաղափարագիր $^{\text{LÚ}}$A.SI$^{\text{MEŠ}}$, իսկ մյուս դեպքում՝ վանկագիր ուրարտական $^{\text{LÚ}}$huradie տարբերակներով: Եվ, վերջապես, Խորխորյան տարեգրության մեջ երկու դեպքում էլ առկա է asd(u)- անցողական բայի asdu պակասավոր տարբերակը, որում, ի տարբերություն Թովուզավայի արձանագրության եզակի I դեմքի bi տուժած ցուցիչի, պարզապես սղված է (սակայն ենթադրվում է) այս անգամ արդեն եզակի III դեմքի ni ցուցիչը:

Ելնելով վերը թվարկված և քննարկված ակնառու փաստարկներից, նպատակահարմար ենք գտնում ստորև մատուցելու Ռուսա I-ի Թովուզավայի երկլեզվյան արձանագրության ուրարտական և ասորեստանյան տեքստերի խնդրո առարկա իդենտիկ հատվածների մասամբ վերանայված գիտական տառադարձումը և թարգմանությունը: Այստեղ, բացի istedi բառից, էական նշանակություն ունի նաև ուրարտական asd(u)- անցողական բայի նորագույն թարգմանությունը, որը, սակայն, մոտ ապագայում բնականաբար մեր առանձին հետազոտության առարկա կարող է լինել:

Թոփուզավայի երկլեզվյան արձանագրության ուրարտական հատվածը

...a-ru-u-[bi $^{\text{LU}}$ÙKU$^{\text{MEŠ}}$] $^{\text{URU}}$Ar-di-ni-ni a-su-ni áš-du-[bi UD]$^{\text{ME}}$ KUR-ni-[ú-ki] iš-te-di $^{\text{m}}$Ru-sa-ni $^{\text{d}}$Ḫal-di-e-[i $^{\text{LÚ}}$ER]UM $^{\text{LÚ}}$si-e mu-ṣi $^{\text{LÚ}}$ÙKU$^{\text{MEŠ}}$-ú-e $^{\text{d}}$Ḫal-di-[ni-ni b]a-u-ši-ni za-še-e gu-nu-ú-še u-i gu-nu-u-[se NU d]i-ra-si-ia-bi (КУКН, 387, ուրարա. տեքստ, տողեր 22-27)

...Կատարեցի ժողովրդի (համար) Արդինի քաղաքի տոնախմբություն: Մտա (այդ) օրը երկիրն-իմ: Այստեղ Ռուսան Խալդի աստծո ծառան է, հովվապետը հավատարիմ՝ ժողովրդի, (որը) Խալդի աստծո պատվիրանով (և) մարտական ուժով ճակատամարտից չի վախեցել:

Նույն արձանագրության ասորեստանյան իդենտիկ հատվածը

... [EZEN a]-na $^{\text{LÚ}}$ÙKU$^{\text{MEŠ}}$ ina SÀ $^{\text{URU}}$Mu-ṣa-ṣir áš-[ku]-un [i]-na lìb-bi UD$^{\text{ME}}$ ana KUR-ia e-ru-bu ana-ku $^{\text{m}}$Ru-[sa-a $^{\text{LÚ}}$]ERUM šá $^{\text{d}}$Ḫal-di-a $^{\text{LÚ}}$SIPA ki-e-nu [šá $^{\text{LÚ}}$ÙKU$^{\text{MEŠ}}$ ina] GISKIM $^{\text{d}}$Ḫal-di-a li-tu ZAB$^{\text{MEŠ}}$-ni la a-d[i]-r[u tu-q]u-un-tú (КУКН, 387, ասորիստ. տեքստ, տողեր 22-26)

...Տոնախմբություն ժողովրդի (համար) ներսում Մուսասիր քաղաքի կատարեցի: Այդ օրը երկիրն-իմ մտա ես: Ռուսան ծառա է Խալդի աստծո, հովվապետը հավատարիմ՝ ժողովրդի, (որը) օգնությամբ Խալդի աստծո (և) ուժով մարտական չի վախեցել ճակատամարտից:

Այսպիսով, եթե նկատի ունենանք, որ ուրարտական տեքստի arubi-ն ասորեստանյան իդենտիկ հատվածի aškun-նն է, $^{\text{URU}}$Ardini-ն՝ $^{\text{URU}}$Muṣaṣir-ը, ašdubi-ն՝ erubu anaku-ն, KUR-niuki-ն՝ KUR-ia-ն, $^{\text{LÚ}}$sie-ն՝ $^{\text{LÚ}}$SIPA-ն, musi-ն՝ kienu-ն, zaše-ն՝ litu-ն, gunuše-ն՝ tuquntu-ն, NU dirasiiabi-ն՝ la adiru-ն, $^{\text{d}}$Ḫaldinini baušini-ին փոխարինում է GISKIM $^{\text{d}}$Ḫaldia-ն, ապա ակներև է, որ ասորեստանյան հատվածը փաստորեն համարյա լիովին հանդիսանում է ուրարտական տեքստի ճշգրիտ թարգմանությունը: Ուրարտական տեքստում սոսկ ձևականորեն բացակայում է ասորեստանյան anaku-ի ուրարտական ieše համապատասխանությունը, քանի որ ուրարտական ašdubi-ն, առանց ieše-ի և, ինքնին erubu anaku է նշանակում: Ի դեպ, ըստ ամենայնի ակնառու է, որ եթե anaku-ն - բայերի հետ ասորեստանյան տեքստում հիշատակվում է եռակի, ապա ieše-ն ուրարտական հատվածում՝ երբեք: Մի խոսքով, ասորեստանյան տեքստում սոսկ անտեսված է ուրարտական իդենտիկ հատվածի խնդրո առարկա ištedi-այստեղը, որը ašdubi KUR-niuki-ի հետ միասին ազդարարում է ուրարտական արքայի հանդիսավոր մուտքը հայրենիք՝ հաղթական արշավանքից հետո:

Հոդվածի վերջում, բնականաբար, նպատակահարմար ենք գտնում խնդրո առարկա ištedi-ištidi-ištiedi-ի համար առաջարկված «(դեպի) այստեղ» բառիմաստը, բացի Թոփուզավայի արձանագրությունից, տեղադրել նաև ուրարտական մյուս սեպագրերում:

1. Սարդուրին ասում է. դեպի այստեղ (այս կողմը) արշավեցի՝ Մանա երկիրը գրավեցի (КУКН, 241B, տողեր 13-15):

2. ... Լսեցին-ինձ աստվածները, հարթեցին-ինձ (համար) ճանապարհ[18], դեպի այստեղ (ես) արշավեցի՝ (երկիրը) Պուլուադի (КУКН, 241E, տողեր 7-9):

3. ... Լսեցին-ինձ աստվածները, հարթեցին-ինձ (համար) ճանապարհ, դեպի այստեղ (ես) արշավեցի՝ Կումախա[19] երկիրը (КУКН, 241E, տողեր 47-49):

4. Սարդուրին ասում է. դեպի այստեղ (այս կողմը), դեպի ulḫudi Մելիտեա քաղաքը (ես) նվաճեցի (КУКН, 244, տողեր 21-22):

5. Խալդյան մեծությամբ այստեղ Արգիշտին, Ռուսայի որդին, թագավոր է հզոր, թագավոր Բիայնիլի (երկրի), տերը Տուշպա քաղաքի (КУКН, 411, հակ. կողմ, տողեր 14-18):

6. Խալդի աստծուն, տիրոջը, այս քարակոթողը Ռուսան, Սարդուրիի որդին, կանգնեցրեց հանուն (իր) կյանքի: Այստեղ Ռուսան, Սարդուրիի որդին, Խալդի աստծո ծառան է ... (SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 6-7, տողեր 1-6):

7. Խալդյան մեծությամբ տերունական այստեղ Ռուսան, Էրիմենայի որդին, Խալդի աստծո ծառան է... (SMEA, XLIV/1, էջ 116-117, տողեր 1-3):

Այսպիսով, ակներև է, որ խնդրո առարկա ištedi-ištidi-ištiedi «այստեղ» բառի տակ ռազմական արշավանքների պահին ցիտված տեքստերը նկատի ունեն նվաճված երկրները, իսկ արքայական տիտղոսաշարերում՝ Բիայնիլի երկիրը:

NICOLAY HAROUTHYOUNYAN

THE ETYMOLOGY OF THE URARTIAN WORD IŠTEDI

In the paper the author rejects the proposed identifications of ***ištedi*** (urart.) = ***erubu*** (ass.) and *ištedi* (urart.) = ***anaku*** (ass.) as well, based on the evidences of the parallel texts of the Assyrian-Urartian bilingual inscription of Topuzava. In the first case the Assyrian ***erubu*** is a verb while the Urartian *istedi* has not a profile of a verb. In the second case, it is well-known that against the Assyrian ***anaku*** Urartian yields ***ieše***. As to *istedi* (variants: *istidi*, *istiedi*), in the Assyrian version of the inscription of Topuzava it has not it's correspondance. For that reason, in the paper Urartian ***ištedi*** has been examined as a Directive Case of the Urartian *istini* – "here". In the inscriptions describing military campaigns the form of *istedi* means the conquered lands, but in the Royal titulary – the land of Biainili. Besides, the expression ***erubu anaku*** ("I entered") of the Assyrian version is compared with disregarded ***ašdubi*** of the parallel Urartian texts which needs to be studied later.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Г.А. Меликишвили, УКН, էջ 399:
2. F.W. König, Hchl, II, էջ 122, § 8, տող 14 և ծանոթ. 5:
3. Н.В. Арутюнян, Новая урартская надпись из Сисиана, ДВ, 4, 1983, էջ 207-208. Նույնի КУКН, 241B, տող 14 և ծանոթ. 8. 411, հակադարձ կողմ, տող 15 և ծանոթ. 18:
4. Chr. Girbal, Selbständige Pronomina der ersten Person Singular im urartäischen, "Kulturgeschichten Altorientalische Studien für Volkert Haas zum 65. Geburstag", Saarbrücken, 2001, էջ 139-144:
5. B. André-Salvini, M. Salvini, The Bilingual Stele of Rusa I from Movana, SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 10: M. Salvini, նույն տեղում, էջ 122: Ե. Գրեկյան, Գյովելերի ուրարտական արձանագրությունը, ՊԲՀ, 2004, թիվ 1, էջ 226.
6. Н.В. Арутюнян, КУКН, 241B, տողեր 13-15:
7. КУКН, 241E, տողեր 7-9:
8. КУКН, 241E, տողեր 47-49:
9. КУКН, 244, տողեր 21-22:
10. КУКН, 387, ուրարտ. տեքստ, տողեր 24-25:
11. КУКН, 406, հակադարձ կողմ, տողեր 28-32:
12. КУКН, 411, հակադարձ կողմ, տողեր 14-18:
13. SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 6-7, տողեր 1-6:
14. SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 116-117, տողեր 1-3:
15. A.D. Mordtmann, ZDMG, XXVI, 1872, էջ 528:
16. Н.В. Арутюнян, ДВ, 4, 1983, էջ 207-208. Նույնի КУКН, 241B, տող 14 և ծանոթ. 8. 411, ծանոթ. 18:
17. Г.А. Меликишвили, УКН, էջ 411. F.W. König, Hchl, II, էջ 131, ծանոթ. 16:
18. И.М. Дьяконов, КБС, VIII, էջ 65, ծանոթ. 25. էջ 68, ծանոթ. 50:
19. J. Friedrich, Caucasica, 8, Leipzig, 1931, էջ 117:
20. И.М. Дьяконов, УПД, էջ 73, 87:

Հապավումներ

ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդես (Երևան).
АВИИУ – И.М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, № 2-4.
ВДИ – Вестник древней истории (Москва).
ДВ – Древний Восток (Ереван).
КУКН – Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.
УКН – Г.А. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960.
УПД – И.М. Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963.
Hchl – F.W. Köig, Handbuch der chaldischen Inschriften, I-II, Graz, 1955-1957.
SMEA – Studi Micenei ed Egeo-Anatolici (Roma).
ZDMG – Zeitschrift der Deutscher Morgenländischen Gesellschaft (Leipzig).

ԿԱՌԼԵՆԵ ՉԱՉԱՆԻ

ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՄՇԱԿ» ԹԵՐԹՈՒՄ

Հայ մամուլն, իբրև քուրդ ժողովրդի պատմության ու մշակույթի ստույգ սկզբնաղբյուրներից մեկը, դեռևս չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա: Մենք մեր մի քանի աշխատություններում անդրադարձել ենք հայկական մամուլին այնքանով, որքանով այն առնչվել է մեր կողմից ուսումնասիրվող հարցին: Ինչ վերաբերում է հայ մամուլում քուրդ ժողովրդի վերաբերյալ նյութերին, ապա ոչ մի թերթ ու ամսագիր իր էջերում այնքան չի անդրադարձել այդ թեմային, որքան հայկական գրական-քաղաքական «Մշակ» թերթը, որը հրատարակվում էր Թիֆլիսում: Հրատարակման հենց առաջին օրվանից խմբագիրներ ու հրատարակիչներ Գրիգոր Արծրունին, հետագայում Ալեքսանդր Քալանթարը, Համբարձում Առաքելյանը, Լեոն և մյուսները ուշադրության կենտրոնում էին պահում 19-րդ և 20-րդ դարերում քրդական կյանքում տեղի ունեցող քաղաքական ու սոցիալական տեղաշարժերը:

Նշենք, որ թերթը քուրդ ժողովրդի մասին հրատարակել է 300-ից ավելի նյութեր: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ այն իր էջերում ցայտուն կերպով արտահայտել է հայ-քրդական մշակութային ու զինակցական կապերը, քրդերի սոցիալ-տնտեսական վիճակն ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Թուրքիայում և Պարսկաստանում: Թերթում, վերը նշված հարցերի արծարծումից բացի, տեղ են գտել նաև արժեքավոր այնպիսի հոդվածներ, որոնք պարզորոշ պատկերացում են տալիս քրդական ցեղերի, ցեղախմբերի, աշիրաթների ներքին կառուցվածքի, նրանց փոխհարաբերությունների, թուրքական յաթաղանից քուրդ ժողովրդի մի փոքր հատվածի ազատագրման մասին: Նրանք գաղթելով Ռուսաստան՝ հիմնականում բնակություն են հաստատում Արևելյան Հայաստանում, որտեղ հայ ժողովուրդը բարեկամաբար է ընդունում գաղթած քրդերին:

Ճիշտ է, որոշակի թեմաներով հոդվածների լույսընծայումը պատմական տարբեր ժամանակաշրջաններում ունեցել է տարբեր նպատակներ, սակայն, ելնելով պատմական իրողություններից, պետք է նշել, որ «Մշակ» թերթն իր ուրույն դերակատարումն ունի քուրդ ժողովրդի պատ-

մության, նրա բանավոր գրականության, լեզվի, ազգային սովորությունների լավագույն նմուշները ոչնչացումից փրկելու և պահպանելու գործում:

Իհարկե, այս փոքրածավալ հոդվածով չենք նպատակադրվել անդրադառնալ այդ բազմաշերտ ու ընդգրկուն թեմային, սակայն անհրաժեշտ ենք համարում վեր հանել այն կարևորագույն հարցերը, որոնք առնչվում են մեր կողմից ուսումնասիրվող հարցին: Թերթի 1872 թ. հենց առաջին համարներից մեկում թղթակիցը «Ուղևորություն Պարսկաստանում» հոդվածում անդրադառնում է Պարսկաստանի և Թուրքիայի քրդերի սոցիալ-տնտեսական վիճակին, վեր հանում այդ երկրների բիրտ քաղաքականությունը նրանց նկատմամբ: Հեղինակը նորահայտ փաստերով նաև անդրադառնում է քուրդ ժողովրդի ազգային սովորություններին, հայ-քրդական հարաբերություններին:[1]

Նման հարցերը արտացոլվել են այն հոդվածներում, որոնք ոչ միայն հետաքրքիր են բովանդակությամբ, այլև կարող են ծառայել որպես սկզբնաղբյուր: Հակոբ Կարապետյանի նամակներում, «Նամակ Սալմաստից», Պետրոս Աշեցու «Նամակ Վանից» և այլ նյութերում վեր են բարձրացված հայ-քրդական հարաբերություններին վերաբերող ուշագրավ հարցեր:[2]

Հետաքրքիր է այն փաստը, որ «Մշակ» թերթը, դիմելով հայ մտավորականությանը, առաջարկում էր ամենուր և առավել խորությամբ զբաղվել քրդական մշակույթի վեր հանման և ուսումնասիրման գործով՝ հատկապես ուշադրություն դարձնելով քուրդ ժողովրդի հարուստ բանահյուսությանը. «Գիր ու գրականության փոխարեն քրդերն ունեն ճոխ ժողովրդական դյուցազներգություն, առասպելներ և ավանդույթներ: Այնքան մեծ է քուրդ բանավոր գրականությունը, այնքան հարուստ և հետաքրքրական է, որ արժեր նրանով իսկապես զբաղվել և լույս աշխարհ տալ:[3]

Այսպիսի բովանդակությամբ կոչից հետո առաջին անգամ բազմաթիվ արժեքավոր նյութեր, քրդերին վերաբերող հաղորդումներ են տպագրվում «Մշակում»: Այդ տեսակետից նորահայտ տեղեկություններով են հագեցած «Երևանի նահանգի ազգաբնակչությունը» և Տեր-Պետրոսյանի «Նամակ Հին Բայազետից» նյութերը, որոնցում արտացոլված է Երևանի նահանգի և Նոր Բայազետի քրդական գյուղերի ու նրանց բնակիչների թվաքանակը:[4]

Ուշագրավ են հայ անվանի պատմաբան Լեոյի «Քրդերը», «Հայ-քրդական համագործակցությունը» ծանրակշիռ, ծավալուն հոդվածները: Հեղինակը առաջին անգամ գիտական խորը վերլուծություններով, նորահայտ փաստերով է անդրադառնում քրդերի սոցիալ-տնտեսական վիճակին, կենցաղին, սովորություններին, պաշտամունքին, լեզվին, հայ-քրդական հարաբերություններին:[5]

Վստահորեն կարող ենք նշել, որ Լեոյի կողմից նման հետաքրքիր հոդվածներով հանդես գալը ոգևորեց հայ մշակույթի բազում այլ ներկայացուցիչների ևս, որպեսզի բազմակողմանի ու խորությամբ զբաղվեն քրդագիտության հարցերով ու հանդես գան ազատաշունչ մամուլում:

Այս տեսակետից Գ. Սրվանձտյանի անվան հետ են կապված «Մշակում» տպագրված «Քրդական կյանք», Գ. Աբծրունու «Առաջին քայլերը», «Գաղթականությունը թուրքաց Հայաստանից», Ա. Ջոպանյանի «Գործենք» և տասից ավելի այլ հոդվածներ, ակնարկներ, քրդերեն լեզվին ու բանահյուսությանը, հատկապես հայ-քրդական հարաբերություններին նվիրված նյութեր, որոնցում բացահայտված են հետաքրքիր և արժեքավոր դրվագներ:[6]

Պետք է պարզորոշ նշել, որ «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարի ժամանակ թերթի էջերը ողողված էին քրդական, հատկապես հայ-քրդական բարեկամության և մշակութային հարցերին վերաբերող հոդվածներով: Հետաքրքիր են Թիֆլիսում նրա հանդիպումները քուրդ-եզդիների կրոնապետ Միր Շեյխ Իսմայիլի, քուրդ հասարակական-քաղաքական գործիչ Շեյխ Իբադուլայի որդու՝ Բադրխանի հետ: Հայ և քուրդ մտավորականների այս հանդիպումների ժամանակ հատկապես արծարծվում են քուրդ-եզդիների մեջ լուսավորություն տարածելու հարցերը: Քալանթարը ջերմորեն է անդրադառնում քրդական մշակույթի թեմային, հատկապես դրա պրոպագանդմանը: [7]

Այս հանդիպման արժեքավոր նյութերը տպագրված են «Մշակի» մի քանի համարներում: Նրա բազում հոդվածներից տեղեկանում ենք, որ ցանկացել է քրդերին վերաբերող նյութերը հավաքել և ներկայացնել առանձին գրքով, սակայն մեզ անհայտ պատճառներով դա նրան չի հաջողվել: Այնուամենայնիվ, նրա հոդվածները ինչպես հայագիտության, այնպես էլ քրդագիտության համար մեծ արժեք են ներկայացնում: Պետք է իրավամբ փաստել, որ այդ հոդվածների հրատարակմամբ կանխվում էր քրդագիտական բազմաթիվ նորահայտ նյութերի կորուստը: Նա իր թղթակիցներին քուրդ ժողովրդի պատմության, բանահյուսության և ազգագրության մասին հոդվածներով ու հաղորդումներով հանդես գալու լայն հնարավորություններ էր տրամադրում:

Ա. Քալանթարի գաղափարակիցն էր «Մշակ» թերթի հրատարակիչ, հրապարակախոս Համբարձում Առաքելյանը, որը թերթի էջերում հանդես է եկել ոչ միայն հայ-քրդական հարաբերություններին, այլև քուրդ ժողովրդի ազգագրությանն ու բանահյուսությանը վերաբերող նյութերով: Քրդագիտության համար արժեքավոր են նրա մի շարք հոդվածները, որոնք հատկապես վերաբերում են Պարսկաստանի քրդերի սոցիալ-տնտեսական վիճակին, քրդական շարժումներին, քուրդ-պարսկական հարաբերություններին, որոնց նյութերը հիմնականում քաղել է 1880-81թթ. Ատրպատականում ուղևորվելիս: Ճիշտ է, նա «Քրդերը իրենց

տսնը» խորագրով իր առաջին ծավալուն հոդվածը տպագրել է «Ազգագրական հանդեսի» 1898 թվականի 2-րդ համարում, սակայն հետագայում առանձին-առանձին թեմաներով հանդես է եկել «Մշակում»:[8]

Տեղին է նշել, որ «Մշակում» տպագրված նրա հոդվածների արժեքը հիմնականում կայանում էր նրանում, որ դրանք մեկ ընդհանուր ուղղություն ունեին՝ մերձեցնել երկու եղբայրական ժողովուրդներին, վեր հանել հայ-քրդական գժտությունների հիմնական պատճառները, ոյտնք, ըստ նրա, թուրքական ու պարսկական կառավարությունների ննձգամիտ քաղաքականության և քուրդ վերնախավի՝ աղաների, բեկերի ու հոգևորականների գործունեության արդյունքն էր: Հ. Առաքելյանն իր թերթի էջերում հաճախակի է անդրադառնում քրդերի մեջ լուսավորություն տարածելու խնդրին: Նա այն կարծիքին էր, որ կրթության գործը պետք է ընթանա ազգային լեզվով, որ քրդերի համար պետք է բացել առանձին ազգային դպրոցներ, որպեսզի քուրդ երեխաները մայրենի լեզվով ծանոթանային իրենց ժողովրդի պատմությանն ու մշակույթին: Նա խիստ քննադատում էր այն հայ մտավորականներին, ովքեր գտնում էին, որ քուրդ երեխաներին պետք է ընդունել հայկական դպրոցներ և նրանց ուսուցումը տանել հայերեն լեզվով: Նա իր «Վանեցեք շովինիստական մտքերը» ծավալուն արժեքավոր հոդվածում խստագույնս քննադատում է նման մտավորականներին և հատկապես հայկական կազմակերպություններից «Միացյալ ընկերությանը»:[9]

Ինչպես նշեցինք, նա լավատեղյակ էր ոչ միայն Թուրքիայի, Անդրկովկասի քրդերի կյանքից, այլ և Պարսկաստանի քրդերի վիճակից, որը երևում է նրա «Պարսկաստանը ալեկոծված», «Կոմեդիան վերսկսված է», «Քրդական ապստամբության շարժառիթը և նպատակը», «Քուրդիստանի գաղափարը» և այլ հոդվածներում:[10]

Պետք է նշել մի կարևոր հանգամանք ևս: Առաքելյանը, լինելով շնորհալի քրդագետ, 1900 թվականին Փարիզում կայացած Արևելագետների միջազգային կոնֆերանսում հանդես է եկել Պարսկաստանի քրդերի, իսկ 1902 թվականին՝ Համբուրգում, դարձյալ Արևելագետների միջազգային կոնֆերանսում, քուրդ ժողովրդի ազգագրության մասին զեկուցումներով, որոնք արժանացել են Եվրոպայի խոշոր գիտնականների ուշադրությանը:[11]

Նրա գրչին են պատկանում «Զեյթուն» արժեքավոր աշխատությունը, որում բազում նորահայտ փաստերով վեր են հանված հայ-քրդական հարաբերությունները:[12]

Նշենք, որ Համբարձում Առաքելյանի ֆոնդում, որը գտնվում է հանրապետության գրականության և արվեստի թանգարանի արխիվում, պահպանվում են քրդերի, այդ թվում՝ քուրդ-եզդիների պատմությանը, ցեղերի ու ցեղախմբերի, դավանանքների, հարսանիքների, քուրդ եզդիների պաշտամունքին վերաբերող մի շարք անտիպ արժեքավոր նյութեր:[13]

Հաջորդ տասնամյակներին թերթը առավել մեծ ուշադրություն էր դարձնում Թուրքիայի, հատկապես Պարսկաստանի քրդերի շարժումներին, կոչ անում ամրապնդել հայ-քրդական դաշինքը: Այս հարցերն առավելևս արտահայտվել են Ա. Քալանթարի մի շարք հոդվածներում: Դրանցից հատկապես արժեքավորում ենք «Հայ-քրդական հարաբերությունները» խորագրով հոդվածը, որում բացահայտվում են հայ-քրդական համերաշխության, քրդական շարժումների մասին կարևոր հարցադրումներ:[14]

Ամփոփելով քրդական մշակույթի և պատմության բնագավառում Հ. Առաքելյանի գործունեությունը, պետք է իրավամբ նշել, որ նա մեծ ու գնահատելի ներդրում ունի այդ բնագավառում:

«Մշակ» թերթը նաև հնարավորին չափով անդրադարձել է Թիֆլիսի քրդական համայնքի մշակութային կյանքին: Այդ հսբցը առավելապես արտացոլված է Լ. Լազեյանցի «Եզդիական Շամս որբանոցը», Լազոյի (Հակոբ Ղազարյան) «Եզդիների կրոնապետ Միր Իսմայիլ բաբան», Ռ. Օհանջանյանի «Եզդիների համագումարը» և մյուս հոդվածներում:[15]

Պետք է իրավամբ նշենք, որ «Մշակ» թերթը բացահայտ դրական ներգործություն է ունեցել ողջ քրդական մշակույթի ու պատմության հարցերի բացահայտման ու վերհանման գործում: Իսկ նրա խմբագիրները ամենայն ջանասիրությամբ լայն հնարավորություններ էին ընձեռում հայ մտավորականությանը հանդես գալու քուրդ ժողովրդի մասին նորանոր նյութերով ու հրապարակումներով: Թերթի լայնածավալ գործունեության շնորհիվ աստիճանաբար է՛լ ավելի ամրապնդվեցին հայ-քրդական պատմամշակութային կապերը, իսկ քրդագիտությունը հարստացավ բազում նորահայտ էջերով: «Մշակում» հրատարակված հոդվածներն այսօր էլ կարող են ոչ միայն հարուստ նյութ տրամադրել մեր պատմաբաններին, բանասերներին, ազգագրագետներին և լեզվաբաններին, այլև ծառայել հայագիտության ու քրդագիտության ուսումնասիրման շնորհակալ գործին:

KARLENE CHACHANI

REFLECTION OF ISSUES OF KURDISH HISTORY AND CULTURE IN "MSHAK" NEWSPAPER

In the article with brief scientific analysis are reflected the role and elucidation of "Mshak" newspaper in the issues of Kurdish history and culture.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Մշակ», 1872, N29:
2. «Մշակ», 1873, N8, 18, 44:

3. «Մշակ», 1915, N21:
4. «Մշակ», 1877, N 76, 1878 N714 124, 125:
5. «Մշակ», 1879, N98-101, 1920, N2:
6. «Մշակ», 1880, N176-188, 1881, N48, 1882, N103, 1915, N36:
7. «Մշակ», 1909, N36, 237, 1913, N111, 113:
8. «Մշակ», 1907, N104-106:
9. «Մշակ», 1908, N202:
10. «Մշակ», 1910 N204, 1914, NN80, 82, 85:
11. «Կոչնակ», 1911, N115:
12. Հ. Առաքելյան, «Ձեյթուն», Թիֆլիս, 1896:
13. ՀՀ ԳԱԹ արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թղթ. 14, էջ 158ա:
14. «Մշակ», 1913, N160, 162:
15. «Մշակ», 1920, NN5, 74, 104, 105, 110:

ԼԻԼԻԹ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՖԵՄԻՆԻԶՄԻ ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՐԱՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ. ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞ ԴԻՍԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ֆեմինիստական շարժումը ժամանակակից Իրանի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում գոյություն ունեցող արդիականացման գործընթացի կարևոր արտահայտումներից մեկն է: Այն միատարր չէ և բնորոշվում է սուր գաղափարական բանավեճերի դրսևորումներով, որոնք իրենց արձագանքն են ստանում հիմնականում հրապարակախոսական գրականության մեջ:

Ֆեմինիզմի տեսաբանների աշխատությունների ուսումնասիրումը հնարավորություն է տալիս առանձնացնելու արդի իրանական ֆեմինիզմի *իսլամական, աշխարհիկ* և այսպես կոչված *անկախ* երեք հիմնական ուղղությունները: Սույն հոդվածում՝ առաջին անգամ հայրենական իրանագիտական գրականության մեջ քննության են առնվում այդ ուղղությունների հիմնական խնդիրները: Քանի որ վերը նշված *աշխարհիկ* և *անկախ* ֆեմինիստական ուղղությունները համաբնույթ են գլոբալ ֆեմինիզմի տեսությանն ու գործելակերպին, անհրաժեշտ ենք համարում առավել մանրամասն ներկայացնել *իսլամական* ֆեմինիզմ երևույթը, որը իր բնույթով ավանդականի և արդիականի որոշակի սինթեզ է:

Իսլամական ֆեմինիզմ կամ վտիխամամաձայնություն

Այսօր մահմեդական աշխարհում և նրա սահմաններից դուրս կանանց իրավահավասարության խնդիրներով զբաղվող շատ գիտնականների, հասարակագետների, ֆեմինիստ տեսաբանների հետազոտություններում առաջնային են մնում *իսլամական ֆեմինիզմ* հասկացության շուրջ բանավեճերն ու քննարկումները: Իրականում ի՞նչ է իսլամական ֆեմինիզմը, արդյո՞ք իսլամը և ֆեմինիզմը համատեղելի են, ո՞րն է գլոբալ ֆեմինիստական շարժման մեջ իսլամական ֆեմինիզմի դերն ու նշանակությունը:

Իսլամական ֆեմինիզմը նոր երևույթ չէ մահմեդական աշխարհում: Այն սկզբնավորվել է դեռևս 19-րդ դարում[1]: Իսլամական ֆեմինիզմի սկզբնավորման գործընթացում մեծ դեր ունի ֆեմինիզմի եգիպտական

մոդելը[2], որի վառ ապացույցն են եգիպտացի հայտնի բարեփոխիչներ Մոհամմեդ Աբդուի, Ջամալ ալ Դին ալ Աֆղանիի, հետագայում մեծ հռչակ վայելող, ազգայնական, կանանց իրավունքների պաշտպան Քասըմ Ամինի աշխատությունները, որոնք փորձում էին իսլամի համատեքստում ներկայացնել կնոջ ազատագրման խնդիրներին ուղղված լիբերալ, բարեփոխական և ֆեմինիստական յուրովի վերամեկնաբանումները[3]: Նրանց շատ հայեցակետեր ցայսօր իսլամական որևէ երկրում դեռևս իրական գործընթացի չեն վերածվել:

Այսօր իսլամական ֆեմինիզմ երևույթը շատ հետազոտողների կողմից ստորադասվում է գաղափարաքաղաքական այս կամ այն գործընթացներին: Այսպես օրինակ, ճանաչված ամերիկացի հետազոտողներ Մարգոտ Բադրանը և Էլիզ Սանասարյանը իրենց "Ֆեմինիզմի նպատակները Իրանում և Եգիպտոսում 1920-30 թթ." համատեղ զեկուցման մեջ նշում են, որ երկու երկրներում էլ իսլամական ֆեմինիզմը ձևավորվել է որպես իսլամի արդիականացման հայեցակարգի մի մաս[4]: Ըստ այլ հետազոտողների, իսլամական ֆեմինիզմը ուղղակիորեն պետական ֆեմինիզմ է կամ ֆանդամենտալիստական, կրոնական շարժման մի մաս[5]: Մի շարք ֆեմինիստ տեսաբաններ էլ հակված են այն մտքին, թե իսլամական ֆեմինիզը որպես շարժում գոյություն չունի, կա ուղղակի քաղաքական վերնախավը ներկայացնող կանանց մի ստվար խումբ, ո-րոնք համագործակցում են իշխանական լծակներ ունեցող բարեփոխականների հետ[6]:

Մեր կարծիքով, ավելի հիմնավոր է այն մոտեցումը, համաձայն որի, վերջին տասնամյակում Իրանի պետական, հասարակական ու մշակութային ոլորտներում առկա իսլամական ֆեմինիզմ երևույթը հանդիսանում է իսլամի արդիականացման գործընթացի և բարեփոխական շարժման կարևոր հիմնաղբյուրներից մեկը: Այդ կարծիքը մանրամասն հիմնավորվում է ստորև:

Այսօր Աբևելքում ակնհայտ են "եգիպտական, ալժիրյան, թունիսյան, թուրքական, իրանական" ֆեմինիստական շարժման տարաբնույթ դրսևորումներ[7]: Սակայն իսլամական որևէ երկրում կնոջ *էմանսիպացիայի* (ազատագրման) խնդիրը երբևէ այնքան ինտենսիվ, դրամատիկ և պայքարունակ չի եղել, ինչպիսին Իրանում է: Այդ բազմաշերտ երևույթի մասին հստակ եզրահանգումների կարելի է հանգել ներկայացնելով ֆեմինիզմի իրանական հեահեղափոխական մոդելը, որն ի տարբերություն իսլամական այլ երկրների ավելի կենսունակ է:

Իրանի իսլամական հեղափոխությունից հետո արմատապես փոխվեց կնոջ սոցիալական և իրավական կարգավիճակը հասարակության մեջ: Երկրում իշխող հոգևորական դասի կողմից իրականացվող գենդերային քաղաքականության համար գաղափարական հիմք կազմեցին իսլամական հանրապետության երկու հայտնի գաղափարախոս-

ներ, իսլամի մոդեռնիստական դպրոցի ներկայացուցիչներ՝ Մորթեզա Մոթահարիի և Ալի Շարիաթի Իրանի կանանց իրավունքների վերաբերյալ մեկնաբանությունները, որոնք ամբողջովին զետեղված էին հեղինակների "Կանանց իրավունքները իսլամի մեջ" և "Ֆաթիման Ֆաթիմա է" աշխատություններում[8]:

Ի տարբերություն եգիպտացի բարեկտխականների, իրանցի այդ տեսաբանները իսլամական օրենքների և փիլիսոփայության շրջանակներում մշակեցին իրանական հասարակության մեջ կնոջ ավանդական կարգավիճակը վերահաստատելու առավել պահպանողական կոնցեպտ[9]: Հատկապես որոշիչ էին Մորթեզա Մոթահարիի մեկնաբանությունները՝ հարեմի, բազմամուսնության, սեռերի միջև իրավահավասարության, հիջաբի, սիրո, ամուսնալուծության մասին, որոնք ժամանակակից իրանական հասարակության մեջ կնոջ իրավական և սոցիալական կարգավիճակի իրական արտացոլումն են[10]:

Մինչև 1990-ական թթ. կեսերը, չունենալով իրավական և քաղաքական դաշտում դրսևորվելու հնարավորություն, ֆեմինիզմը որպես գաղափարախոսություն հիմնականում հանդես եկավ կանանց հինախնդիրներին նվիրված հրապարակախոսական ու գեղարվեստական գրականության մեջ[11]:

1997թ. փբերալ հոգևորական Մոհամմադ Ռեզա Խաթամիի նախագահ ընտրվելուց հետո Իրանի սահմանադրական քաղաքականության մեջ սկսվեց բարեփոխական շարժման նոր գործընթաց: Բարեկտխականների սոցիալական հենարանը կազմում էին ուսանողներին, մտավորականներին և կանանց ներկայացնող լայն շրջանակաները, ոյանք հանդես էին գալիս քաղաքացիական ազատագրման, քաղաքական անկախության, կանանց իրավունքները պաշտպանելու, հասարակական և մշակութային ոլորտներում վերահսկողությունը սահմանափակելու կոչերով[12]:

Երկրի նորընտիր նախագահ Մ. Խաթամիի վարչակարգի գենդերային քաղաքականության առաջին դրսևորումներից էր իսլամական մահմեդական կանանց ներգրավումը կառավարական բարձրաստիճան տարբեր պաշտոններում: Այսպես օրինակ, ԱՄՆ- ում կրթություն ստացած դասախոս ու կանանց խնդիրները լուսաբանող «Ֆարզանե» գիտական ամսագրի խմբագիր Մասումե Էբթեքարը նշանակվեց միջավայրի պաշտպանության գծով փոխնախագահ, իսկ Ազամ Նուրին նշանակվեց իրավական և խորհրդարանական հարաբերություններով զբաղվող մշակույթի փոխնախարար: Այնուհետև, կանանց իրավունքների պաշտպան և Թեհրանի ալ-Զահրա համալսարանի պրոֆեսոր Զահրա Շոջային նշանակվեց ներքին գործերի գերատեսչությանը կից Կանանց հանձնաժողովի առաջին համանախագահ[13]:

Վերը նշված բարձրաստիճան կանանցից հատկապես Շոջային էր վստահված վերահսկելու կանանց սոցիալական իրավիճակի բարելավման և նրանց նկատմամբ իրագործվող բռնությունները կանխելու հրատապ խնդիրները: Քաղաքական վերնախավը ներկայացնող կանանց այս խմբին հետագայում միացան 2000-2004թթ. իրանական վեցերորդ մեջլիսի տասներեք կին խորհրդարանական բարեփոխիչները, որոնք ձևավորեցին իսլամական ֆեմինիստական շարժման առավել ազդեցիկ հատվածը: Այդ շարժման հայտնի ներկայացուցիչներից են նաև նախկին խորհրդարանականներ՝ Ա. Թալեղանին, Մ. Բեհրուզին, Փ. Մարուֆին, Ֆ. Ռաֆսանջանին (Իրանի իսլամական հանրապետության նախկին նախագահ Ա. Հ. Ռաֆսանջանիի դուստրը):

Ակադեմիկան շրջանակներում իսլամական ֆեմինիզմի գաղափարական թևը ներկայացնում են Արևմուտքում և Իրանում կրթություն ստացած երեք հասարակագետ ֆեմինիստ հետազոտողներ՝ Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր Աֆսանե Նաջմաբադին, Կալիֆորնիայի համալսարանի կանանց իրավունքների հիմնահարցերով զբաղվող պրոֆեսոր Նայերե Թոհիդին, ինչպես նաև Լոնդոնում բնակվող հասարակագետ մարդաբան Զիբա Միր-Հոսեյնին: Նաջմաբադին և Թոհիդին եղել են հակաշահական ձախակողմյան ուսանողական շարժման և հետագայում հակաֆունդամենտալիստական շարժումների մասնակիցներ: Ա. Նաջմադադին եղել է նաև "Նիմեյե Դիգյար" վտարանդի ֆեմինիստական ամսագրի հիմնադիր խմբագիրը: Զ. Միր-Հոսեյնին հայտնի է նա իր փորձարարական կինոռեժիսորությամբ: 1998–ին նա բրիտանացի կինոռեժիսոր Կ. Լինգինոտոյի հետ նկարահանեց մեծ ճանաչում ստացած «Ամուսնալուծություն իրանական ձևով» փաստավավերագրական կինոնկարը[14]:

Նշված երեք կին հետազոտողները իսլամական ֆեմինիզմին աջակցող իրենց գիտական հոդվածներով և քննարկումներով հանդես եկան հատկապես 1990-ականների կեսերից: Մասնավորապես, Ա. Նաջմաբադին Լոնդոնի համալսարանի արևելագիտության և աֆրիկյան հետազոտությունների դպրոցում կարդացած իր զեկուցման մեջ առաջին անգամ ձևակերպեց իսլամական ֆեմինիզմի հիմնախնդիրների շուրջ բանավեճ սկսելու անհրաժեշտության մասին թեզը[15]: Նա բնութագրեց իսլամական ֆեմինիզմը, որպես բարեփոխական շարժման մի հատված, որը երկխոսություն է բացում մահմեդական կին ակտիվիստների, բարեփոխականների և աշխարհիկ ֆեմինիստների միջև՝ վերջ դնելով աշխարհիկ և կրոնական մաքի ավանդական թշնամանքին: Իր զեկուցման մեջ Նաջմաբադին մեծ կարևորություն է տալիս Իրանում տպագրվող ֆեմինիստական մամուլին, նշելով հատկապես երկու պարբերական հրատարակությունների՝ "Զանանի" և "Ֆարզանեի" դերը: Ըստ նրա, ֆեմինիստական առաջատար մամուլը կարող է երկխոսության աղբյուր

հանդիսանալ մահմեդական և կրոնական փոքրամասնությունները ներկայացնող կանանց կազմակերպությունների միջև[16]:

«Զանան» պարբերականը հիմնադրվել է 1991թ. հոգեբան, իսլամական ֆեմինիստական շարժման հայտնի գաղափարախոս Շահլա Շերքաթի կողմից, որը 1980-1990թթ. զբաղեցրել է «Զանե Ռուզ» ամսագրի խմբագիր պաշտոնը[17]: Այն հետագայում դարձավ իսլամական ֆեմինիզմի գաղափարական հիմնակետը և Իրանում կանանց իրավական ու սոցիալական կարգավիճակի բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը ազդարարող ձայնը[18]: 1997թ. Զանան պարբերականի կողմից կազմակերպվեց քննարկումների կլոր սեղան, որի նյութերը հրապարակվեցին «Որն է կանանց ամենահրատապ խնդիրը Իրանում» խորագրի ներքո: Քննարկմանը մասնակցում էին գիտնական Ֆաբիդե Ֆարհին, իրավաբան Մեհրանգիզ Քարը և բարեփոխիչ Աբաս Աբդին[19]: "Զանանը" Շերքաթի խմբագիր լինելու օրոք քննության ենթարկեց նաև պետության վարած գենդերային քաղաքականության հրատապ խնդիրները, հատուկ ուշադրություն դարձնելով Շարիաթի մի շարք արդի մեկնաբանությունների վրա և նրա գործառությանը քաղաքացիական օրենսգրքում[20]:

Միևնույն ժամանակահատվածում իր հրապարակումներով կարևոր դեր էր կատարում նաև կանանց հիմնահարցերը գիտականորեն արծարծող «Ֆարզանե» ակադեմիական ամսագիրը, որի մոտեցումները իսլամական ֆեմինիզմի հիմնախնդիրների նկատմամբ ավելի չափավոր էին, քան թե "Զանանինը":

Իսլամական ֆեմինիզմի հիմնախնդիրները իրենց հետագա իմաստավորումը ստացան Զիբա Միր-Հոսեյնիի աշխատություններում: "Իսլամը և գենդերը" մենագրության մեջ նա մանրամասն քննության է առնում կնոջ և երկու սեռերի մասին իսլամում գոյություն ունեցող մոտեցումները և հիմվելով երկրի առաջատար հոգևորականների հետ վարած իր հարցազրույցների վրա, հիմնավորում է այն տեսակետը, որ դրանք կարելի է բաժանել երեք հիմնական ուղղությունների. պահպանողական, նեոպահպանողական և մոդեռնիստական[21]: Ըստ Միր-Հոսեյնիի, Իրանում սեռերի իրավահավասարության մասին բանավեճերը նպաստում են ոչ միայն իրավագիտության նոր դպրոցի, որը դանդաղ փորձում է արձագանքել սոցիալական իրականությանը, այլ նաև նոր գեդերային գիտակցության կայացմանը[22]: Միր-Հոսեյնին բազմիցս անդրադարձել է նաև ճանաչված հոգևորական Մ. Սաիդզադեի հոդվածների շարքին, որոնք նվիրված էին կին-տղամարդ իրավահավասարության և շարիաթի օրենքների բարեփոխման խնդիրներին[23]:

Հասարակագետ-մարդաբան Նայերե Թոհիդին սկսած 1990թ. իր հետազոտությունների առանցքն է դարձրել սեռերի միջև անհավասարության ու կանանց դեմ իրագործվող ճնշման խնդիրները, ինչպես նաև

Իրանում գործող իսլամական վարչակարգի որդեգրած բարեփոխումների քաղաքականության հիմնահարցերը: Նա նշում է, որ մահմեդական աշխարհում կանայք պայքարում են երկու տիպի ճնշման դեմ. առաջինի արդյունքը է երկրի ներսում գերակշռող պատրիարխալ համակարգի, իսկ երկրորդի աղբյուրը արտաքին, հիմնականում արևմտյան ուժերի կողմից իրականացվող ներխուժումն է մահմեդական աշխարհ[24]:

Իսլամական ֆեմինիզմը Թոհիդին դիտարկում է որպես լայն տարածում ստացած մահմեդական կանանց շարժում: Կանայք, ըստ Թոհիդիի, պաշտպանում են իրենց կրոնական հավատամքը, փորձելով աջակցել իսլամի էգալիտար բարոյականության սկզբունքներին: Իսլամական ֆեմինիստական շարժման մասնակիցները կանանց իրավահավասարության ու կրթության իրավունքի համար մղվող պայքարում օգտագործում են Ղուրանի՝ կնոջն աջակցող դրույթները[25]: Թոհիդին համաձայնվում է հայտնի ֆեմինիստ իրավաբան Մ. Քարի այն տեսակետի հետ, ըստ որի կրոնական օրենքի՝ կնոջ իրավական կարգավիճակի բարեփոխումներին ուղղված մեկնաբանությունները ոչ թե արդյունք են աշխարհիկ կամ դեմոկրատ ուժերի պահանջների, այլ մաս են կազմում ավելի ամբողջական ու լայնածավալ հասարակական զարգացումների:

Այսպիսով, իսլամական ֆեմինիստները առաջարկում են կանանց հիմնախնդիրները լուծելու լավ մշակված ռազմավարություն. վերափոխելով կանանց հասարակական, սոցիալ-տնտեսական և իրավական կարգավիճակը, միաժամանակ պահպանել նրանց մշակութային և ազգային ինքնությունը: Եվ քանի որ ժամանակակից Իրանում և մշակույթը, և ազգային ավանդույթները, և ազգային ինքնագիտակցությունը անքակտելիորեն կապված են իսլամի հետ, այդ իսկ պատճառով այդ կրոնի տեսանկյունից էլ պետք է վերանայել ու լուծել կնոջ խնդիրները: Ըստ էության, իսլամական ֆեմիզմի կողմնակիցները հանդես են գալիս Իրանում իշխող իսլամամետ ուժերի հետ փոխհամաձայնության եզրեր գտնելու օգտին:

Աշխարհիկ ֆեմինիզմ կամ դիմակայություն

Իսլամական ֆեմինիզմի ընդիմադիր գաղափարական թևին են պատկանում Իրանից դուրս, վտարանդիության մեջ ապրող աշխարհիկ կամ լիբերալ կոչվող ֆեմինիստները: Աշխարհիկ ֆեմինիստական շարժման գաղափարները մասնավորապես զետեղված են “Հոդուդե Զանան”, “Նեզահե Զանան”, “Ջենսե Դովոմ” պարբերականների էջերում:

Աշխարհիկ ֆեմինիստական ուղղության տեսաբան Հայդե Մողիսին նշում է, որ այսօր ընդունված է խոսել մահմեդական կանանց բարեփոխական գործունեության մասին, սակայն Իրանի նման թեոկրատական երկրում, որտեղ իսլամը քաղաքական և իրավական համակարգերի հիմքն է կազմում, դա ըստ էության, անհնարին է, քանի որ այդ պայման-

ներում կանայք զրկված են անհատական, հոգևոր ընտրություն կատարելու հնարավորությունից[26]:

Քննադատելով իսլամական ֆեմինիստական շարժումը, Հ. Մողիսին նշում է, թե այն ներառնում է իր մեջ միայն քաղաքական ընտրանու կին ներկայացուցիչներին, որոնք իրենց Ղուրանի չհիմնավորված վերամեկնաբանումներով, անորոշություն և քաղաքական, գաղափարական ու կրոնական տարբերակումներ են ստեղծում իրանցի կանանց շարժման մեջ՝ խոչընդոտելով դեմոկրատական ուղղվածության ֆեմինիստ ուժերի առաջընթացը դեպի աշխարհիկություն[27]:

Իրանի ձախակողմյան շրջանակների այլ ներկայացուցիչներ բացասաբար արտահայտվելով իսլամական ֆեմինիզմի վերջին տարիներին նշմարվող զարգացման սահմանափակ միտումների մասին, նշում են, որ դրանք ժամանակակից աշխարհում ապագա չունեն: Նրանք գտնում են, որ սխալ է Միջին Արևելքի երկրներում կանանց խնդիրների լուծումները փնտրել իսլամական օրենքների շրջանակներում[28]:

Աշխարհիկ ֆեմիզմի կողմնակիցները շարունակում են պնդել, որ Իրանի քաղաքական և պետական համակարգում բացառվում է որևէ բարեփոխում ի օգուտ կանանց, քանի որ ուժային կառույցները ամբողջովին հիմնված են անդրոցենտրիստական հիմունքների վրա[29]:

Իսլամական ֆեմինիզմի իրանական մոդելի վերաբերյալ քննադատությունները չեն սահմանափակվում միայն ձախակողմայն շրջանակներով: Լիբերալ ֆեմինիստ Մահնազ Ավքամին, որը նախքան հեղափոխությունը "Իրանի կանանց կազմակերպության" նախագահն էր և ներկայումս Իրանի սահմաններից դուրս զբաղվում է ակտիվ ֆեմինիստական գործունեությամբ, խոսելով իր և այլ լիբեբսղ կանանց անունից նշում է, որ իրենց, լիբերալ ֆեմինիստների և իսլամական ֆեմինիստների տարբերությունը կայանում է նրանում, որ աշխարհիկ շրջանակներում ֆեմինիստական հիմնահարցերը չեն հարմարեցվում Ղուրանի մեկնաբանություններին: Կանայք ունեն որոշակի անդրժելի իրավունքներ՝ անկախ այդ մեկնաբանություններից, ընդգծում է նա: "Մենք և մահմեդական, և ֆեմինիստ կանայք ենք, սակայն մենք իսլամական ֆեմինիստներ չենք". - գրում է Մ. Ավքամին[30]:

Վերլուծելով հետհեղափոխական Իրանի ներքաղաքական զարգացումները, պետական իսլամական գաղափարախոսության, իշխող հոգևորական դասի և ֆեմինիստական աշխարհընկալման հետ երկխոսության տարբերակները, քաղաքագետ Էլիզ Սանասարյանը իր «Իսլամական ինքնությունը և քաղաքական գործունեությունը» աշխատության մեջ նշում է, թե ժամանակակից Իրանում գոյություն ունեն կանանց միավորող երկու գաղափարական խմբեր՝ պահպանողականներ և բարեփոխականներ: Նա մերժում է շատ տեսաբանների կողմից առաջ քաշված մուսուլմանական ֆեմինիզմ հասկացությունը և ավելի տրամաբանական

է համարում *իսլամական ֆեմինիզմը*, որը, ըստ գիտնականի, մանրազննին ուսումնասիրման կարիք ունի[31]:

Այսպիսով՝ ժամանակակից Իրանի ֆեմինիստական շարժման աշխարհիկ ուղղության գերակշիռ խումբն են կազմում երկրի կանանց վտարանդի, ծախակողմյան հատվածները: Այսօր էլ նրանք պահպանում են իրենց կոշտ դիրքորոշումը իսլամական ֆեմինիզմ երևույթի հանդեպ, այդպիսով ակամայից հիմնավորելով հետազոտողների շրջանում լայն տարածում ստացած այն թեզը, թե իսլամը և ֆեմինիզմը անհամատեղելի են:

Անկախ ֆեմինիստներ

Այսօր Իրանում առկա է կանանց ևս մի խումբ, որի անդամները իրենց անվանում են *անկախ ֆեմինիստներ*[32]: Նրանք իրենց պայքարի և ուսումնասիրությունների նպատակն են համարում իսլամական հասարակության մեջ մարդու իրավունքների պահպանումը: Իրավագետ կանանց այս խումբը հիմնականում համագործակցում է աշխարհիկ ֆեմինիստական շրջանակների ներկայացուցիչների հետ:

Այդ շարժման հայտնի մասնակիցներից է միջազգային համբավ ունեցող իրավաբան, Նոբելյան մրցանակակիր Շիրին Էբադին: Էբադին մինչ Իրանի իսլամական հեղափոխությունը եղել է երկրի առաջին կին դատավորներից մեկը: Հետագայում նա պաշտոնաթող է արվել և այժմ հասարակական ակտիվ գործունեություն է ծավալում մուսուլմանական հասարակության մեջ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: 1994թ. Շ. Էբադին իրավագետ այլ կանանց հետ հիմնում է Երեխաների իրավունքների պաշտպանության միությունը[33]: Հասարակական լայնածավալ աշխատանքներից զատ ճանաչված իրավաբանը վերը նշված հիմնահարցերի մասին հանդես է գալիս նաև դասախոսություններով ու գիտական հոդվածներով, որոնք զետեղված են երկրի առաջատար ֆեմինիստական ու մտավորական մամուլի էջերում:

1999թ. լույս է տեսնում Էբադիի «Իրանում մարդու իրավունքների պատմությունը և փաստագրությունը» խորագրով աշխատությունը, որտեղ արհեստավարժ իրավաբանը Մարդու իրավունքների համընդհանուր հայտարարագրի համատեքստում տալիս է իսլամական հեղափոխությունից առաջ և հետո Իրանի իրավական համակարգի վերաբերյալ իր գնահատականը: Իսլամական հասարակության մեջ իրականացվող մարդու իրավունքների պաշտպանության գործընթացում Շ. Էդիբին առաջնային է համարում գենդերային, էթնիկական ու կրոնական համահավասարության խնդիրներին վերաբերող օրենքի գերակայությունը: Հաջորդիվ անդրադառնալով Իրանի իրավական համակարգում գործող կանանց իրավունքներին, նա քննության է առնում ներկա Քաղաքացիական օրենսգիրքը, ըստ որի ամուսնալուծության, երեխայի խնամակա-

լության, նրա ազգության, ժառանգության, երեխայի ամուսնության մեջ ծնողների իրավունքի հարցերում նախապատվությունը արվում է հորը և ամուսնուն: Այսպիսով, ըստ Էբադիի, ժամանակակից Իրանի Քաղաքացիական օրենսգրքում կնոջ ամուսնական իրավունքներ, փաստորեն, գոյություն չունեն[34]:

1999թ. մայիսին Ստոկհոլմում տված իր հարցազրույցում նա Շ. Էբադին բարձաձայնում է ներկայիս Իրանի օրենսդրական դաշտում, քաղաքական, սոցիալական, անհատական, կրոնական ոլորտների մեջ մարդու ազատության դեմ ուղղված օրենքները բարեփոխելու հրատապությունը[35]:

Իսլամական հասարակության մեջ մարդու և հատկապես երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում ակտիվ գործունեության և մեծ վաստակի համար 2003թ Էբադիին շնորհվեց Խաղաղության Նոբելյան մրցանակ: Էբադին պատմության մեջ առաջին պարսկուհին էր և երրորդ մահմեդականը, Պաղեստինի առաջնորդ Յ. Արաֆատից (1994) և Եգիպտոսի նախագահ Ա. Սադաթից (1978) հետո, ոյանց շնորհվել է այդ պատվավոր մրցանակը[36]:

* * *

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ իսլամական ֆեմինիզմը՝ ժամանակակից Իրանի կրոնապետական համակարգում առկա ֆեմինիստական շարժման առավել կիրառական բնույթ ունեցող ուղղությունն է: Սահմանները ֆեմինիզմի իսլամական, արևմտյան, աֆրիկյան լատիանամերիկյան և այլ ուղղությունների, ինչպես նաև նրա լիբերալ, սոցիալիստական, մարքսիսական, մշակութային, պոստ-մոդեռն գաղափարական մոտեցումների միջև խիստ պայմանական են: Բոլոր այդ մոտեցումները ու գաղափարական ուղղությունները կազմում են համընդհանուր ֆեմինիսական ավանդույթի և նրա շրջանակներում զարգացող քաղաքական փիլիսոփայության մի ուրույն մասը:

Ժամանակակից Իրանում կանանց հիմնահարցերի լուծումը հնարավոր կլինի միմիայն ֆեմինիզմի հակադիր գաղափարական թևերի միջև երկխոսության, փոխհամաձայնության ու համատեղ գործողությունների պայմաններում:

SAFRASTYAN LILIT

THE POSTREVOLUTIONARY MODEL OF IRANIAN FEMINIZM: MUTUAL AGREEMENT OR CONFRONTATION?

This article is an analysis of the encounter between feminist and reformist political thought during the first reformist presidency in the Islamic Republic of Iran

(May 1997 to June 2004). It places feminism and reformism in their historical context, discusses the complex forces that have facilitated their development, and analyses the interaction between these two movements.

Article focuses on the characteristics and internal debates of the post revolutionary Iranian feminist movement itself. The positions of the two such broad movements, as they are secularist feminism and Islamic feminism are presented, and the emergence of a new movement - independent feminism discussed.

One of the most important questions for the sociology of gender and feminist research is the relationship between Islam and women's situation in the Islamic Republic of Iran. Islamic feminists and their expatriate academic supporters described Islamic feminism as a reform movement that has opened up a new space for dialogue between Islamic women activists and reformers as well as secular feminists, thereby breaking down the old hostile divide between secular and religious thought.

